
Ս. Գ. ԱԲՐԱՀԱՄՅԱՆ

ԱՐԴԻ ՀԱՅԵՐԵՆԻ ԴԵՐԱՆՈՒՆՆԵՐԸ







АКАДЕМИЯ НАУК АРМЯНСКОЙ ССР
ИНСТИТУТ ЯЗЫКА

С. Г. АБРААМЯН

МЕСТОИМЕНИЯ СОВРЕМЕННОГО АРМЯНСКОГО ЯЗЫКА

ИЗДАТЕЛЬСТВО АКАДЕМИИ НАУК АРМЯНСКОЙ ССР
ЕРЕВАН 1956

ՀԱՅԿԱԿԱՆ ՍՍՌ ԳԻՏՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԱԿԱԴԵՄԻԱ

ԼԵԶՎԻ ԻՆՍՏԻՏՈՒՏ

491.99-2
Q-16

Ս. Գ. ԱԲՐԱՀԱՄՅԱՆ

ՍՏՈՒԳՎԱԾ Է 1961 թ.

ԱՐԴԻ ՀԱՅԵՐԵՆԻ ԴԵՐԱՆՈՒՆՆԵՐԸ

ՀԱՅԿ. ԳԻՏՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ
ԳՐԱԴԱՐԱՆ
ԱԿԱԴԵՄԻԱ

ՀԱՅԿԱԿԱՆ ՍՍՌ ԳԻՏՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԱԿԱԴԵՄԻԱՅԻ ՀՐԱՏԱՐԱԿՉՈՒԹՅՈՒՆ

ԵՐԵՎԱՆ 1956

Տպագրվում է Հայկական ՍՍՌ Գիտությունների
ակադեմիայի խմբագրական-հրատարակչական
խորհրդի որոշմամբ

Ա II
13156

Ն Ա Խ Ա Բ Ա Ն

ՍՍՌՄ ժողովուրդների լեզուների քերականական կառուցվածքի, ինչպես և բառային կազմի ուսումնասիրումը սովետական լեզվաբանության կարևորագույն ու հեռահար խնդիրներից մեկն է։ Քիչ գործ չի կատարված հայերենի քերականական կառուցվածքի ուսումնասիրման ուղղությամբ։ Սակայն ժամանակակից հայերենի քերականության շատ հարցեր, ինչպես և խոսքի մասեր, որոնց թվում՝ դերանունները, տակավին կարոտ են հանդամանալից ուսումնասիրման՝ սովետական լեզվաբանության նոր նվաճումներին ու խնդիրներին համապատասխան։

Դերանունը խոսքի մասերի շարքում յուրահատուկ տեղ է գրավում։ Այդ յուրահատկությունը դրսևորվում է հանձին դերանունների՝ այլ խոսքի մասերի հարաբերակից լինելու, նրանց քերականական անմիջորինակ բնույթի և այլ հատկանիշների։ Այդ պատճառով էլ դերանունն, ավելի քան որևէ խոսքի մաս, բազմաթիվ ու իրարամերժ տարակարծությունների տեղիք է տվել և մասամբ դեռ շարունակում է տիպիք տալ։

Դերանունների վերաբերյալ կարծիքների տարբերությունն ունի նաև, այսպես ասած, սուբյեկտիվ պատճառներ, որոնք հիմնականում երկուսն են։ Առաջին պատճառն այն է, որ լեզվաբանները հարցին հաճախ մոտեցել են տարբեր տեսանկյուններով, առաջնորդվել են տեսական տարբեր սկզբունքներով։ Երկրորդ՝ արդի հայերենի դերանունները տակավին

առանձին ուսումնասիրության առարկա չեն դարձել[1]: Շատ լեզվաբաններ դերանունների և դերանվանական հոդերի վերաբերյալ կարծիք հայտնելիս հիմնվել են ոչ թե լեզվական փաստերի հանգամանալից ուսումնասիրման և դրանց օբյեկտիվ դնահատման վրա, այլ տրադիցիոն որևէ տեսակետի վրա, կամ նոր կարծիք են հայտնել առաջին իսկ տպավորության տակ՝ առանց խորամուխ լինելու դերանունների, նրանց տեսակների էության մեջ: Բավական է նշել, որ մինչև օրս դեռ չի որոշված այնպիսի մի կարևոր հարց, ինչպիսին դերանունների դասդասման հիմունքն է: Ավելին. մեկ հիմունքով դերանունների դասակարգումը նույնիսկ քննության առարկա չի էլ դարձել: Նշված օբյեկտիվ ու սուբյեկտիվ պատճառները բնականաբար բացատրաբար են ազդել դերանունների դիտական ուսումնասիրման վրա: Դրա հետևանքը եղել է այն, որ ոմանք դերանունը դիտել են իբրև ինքնուրույն խոսքի մաս, ոմանք այն առանձին խոսքի մաս չեն համարել: Ըստ որում՝ առանձին խոսքի մաս համարողներից

[1] Լուրջ է տեսնել անվանի լեզվաբան պրոֆ. Հ. Աճառյանի «Վիճակաւոր քերականութիւն հայերէն լեզուի» արժեքավոր աշխատության երկրորդ հատորը, որտեղ քննարկվում են հայերենի դերանունները 562 լեզուների համեմատությամբ: Իբրև դերանունների պատմա-համեմատական ուսումնասիրություն, ինչպես և տարբեր լեզուներից հավաքած ու զուգադրած փաստական հարուստ նյութի տեսակետից, աշխատությունը մեծ արժեք ունի: Բայց քանի որ պրոֆ. Հ. Աճառյանը ա) կանգնած է դերանվան, իբրև խոսքի մասի, ոչ-հիշող և մերժված տեսակետի վրա, բ) որի հետևանքով էլ դերանունների քանակը նրա մոտ շատ սահմանափակ է, գ) այդ դերանուններն էլ քննարկում է ոչ թե ըստ ամենայնի, այլ հատկապես նրանց ծագումն ու ձևաբանական կողմը պատմա-համեմատական տեսակետից և չի ուսումնասիրում նրանց շարահյուսական, ոճական, բառակազմական նշանակությունը, դ) առանձնակի ուշադրություն չի դարձնում արդի հայերենի դերանունների վրա, այլ քննարկում է դերանուններն ընդհանրապես հայերենում (գրաբար, միջին հայերեն, բարբառներ, արդի հայերեն) համեմատելով հարյուրավոր լեզուների հետ, ուստի արդի հայերենի դերանունների ուսումնասիրումը բազմակողմանիորեն և սովետական լեզվաբանության նվաճումներին համապատասխան մնում է որպես հերթական խնդիր:

ամանք հիմք են ընդունել վոխարինման ֆունկցիան, ուրիշները՝ իմաստը, երրորդները՝ և՛ ֆունկցիան, և՛ իմաստը: Հարցին տարբեր տեսանկյուններից են մոտեցել նաև դերանունը առանձին խոսքի մաս չհամարողները: Նշենք, որ դերանունների վերաբերյալ տարբեր և հակասական կարծիքների հանդիպում ենք երբեմն նույնիսկ միևնույն լեզվաբանի մոտ: Զգալի տարակարծություններ են եղել նաև դերանունների տեսակների հարցում: Այսպես, հայերենում տարբեր քերականներ ընդունել են երկուսից մինչև ինն տեսակ դերանուններ:

Դերանունների ուսումնասիրման կարևորությունն ընդգծվում է ոչ միայն այդ, այլև այն պատճառով, որ դրանք իրենց ոչ մեծ ծավալով հանդերձ, մեծ կշիռ ունեն ժամանակակից հայերենում: Այս կապակցությամբ պետք է ասել, որ եթե դերանունների տեսակները և որոշ այլ հարցեր այսպես թե այնպես ուսումնասիրված են (լավ է ուսումնասիրված համակապես հոլովումը), ապա նրանց շարահյուսական առանձնահատկությունները, ոճական զարմանալի հարուստ կիրառությունները և բառակազմական յուրահատկությունները դուրս են մնացել մեր լեզվաբանների ուշադրության կենտրոնից:

Նկատի ունենալով այս ամենը՝ մենք ձեռնամուխ եղանք ժամանակակից հայերենի դերանունների ուսումնասիրմանը, նպատակ ունենալով, որ վերջինս հնարավորին չափ լինի ամբողջական. քննել ենք դերանունները՝ իմաստային, ձևաբանական, շարահյուսական, ոճական և բառակազմական տեսակետից:

Աշխատության առաջին երկու գլուխներում քննել ենք «Դերանունը որպես խոսքի մաս» և «Արդի հայերենի դերանունները հայ քերականների դնահատմամբ» հարցերը: «Դերանունը որպես խոսքի մաս» գլխում քննարկված են ոչ միայն հայ, այլև ռուս ու եվրոպական մի շարք լեզվաբանների տեսակետները դերանվան, որպես խոսքի մասի, վերաբերյալ: Այս դեպքում նկատի է առնվել այն հանգամանքը,

որ, նախ, դերանունը, որպես խոսքի մաս, շատ լեզուներում, ինչպես և հայերենում, իր որոշ առանձնահատկություններով հանդերձ, ունի զգալի ընդհանրություններ այլ լեզուների դերանունների հետ, և, երկրորդ, որ հայ շատ քերականներ դերանունների որոշման հարցում հաճախ օգտագործել են այլ, մասնավորապես ռուս լեզվաբանների տեսակետները:

Հաջորդ գլուխում քննել ենք ժամանակակից հայերենի դերանունների դասդասումը և տեսակները: Այստեղ փորձել ենք որոշել դերանունների դասակարգման հիմունքը, ըստ որի և դասակարգել դերանունները՝ ձգտելով բացահայտել դերանվան յուրաքանչյուր տեսակի յուրահատկությունը: Աշխատության հաջորդ գլուխներում քննարկված են արդի հայերենի դերանունների ձևաբանական առանձնահատկությունները (հոլովումը և թիվը), շարահյուսական կիրառությունները, ոճական ու երկրորդական կիրառությունները և վերջապես նրանց կազմությունն ու բառակազմական նշանակությունը: Աշխատության այս մասը թերևս կարելի էր կառուցել նաև այլ սխեմով՝ ըստ դերանունների տեսակների, այսինքն՝ դերանվան յուրաքանչյուր տեսակը ներկայացնել իբրև մեկ առանձին գլուխ, որի մեջ էլ քննել նրանց տեսակային, ձևաբանական, շարահյուսական և այլ հատկանիշները: Սակայն մենք նպատակահարմար չգտանք այդպիսի կառուցվածքը՝ հիմնվելով դերանունների ու նրանց տեսակների քերականական անմիջականության: Բանն այն է, որ շատ դերանուններ (նույնիսկ միևնույն տեսակի) ունեն քերականական միանգամայն տարբեր հատկանիշներ, և, ընդհակառակը, տարբեր տեսակի շատ դերանուններ ունեն նույն կամ նման քերականական հատկանիշներ: Ուստի՝ եթե դերանունները, նրանց քերականական առանձնահատկությունները քննեինք ըստ դերանունների առանձին տեսակների, ապա հնարավոր չէր լինի բացահայտել ընդհանուր օրինաչափություններ՝ տարբեր տեսակի պատկանող, բայց նույն կամ նման քերականական առանձնահատկություններն ունեցող դերանունների մեջ: Բացի դրանից, այդպիսի կառուցվածքը տեղիք կտար ավելորդ

կրկնություններից: Այդ պատճառով նպատակահարմար գտանք բուն դերանուններին վերաբերող մասը ներկայացնել հետևյալ սխեմով. նախ քննել դերանունների դասդասումը, տեսակները, բնութագրել յուրաքանչյուր տեսակը, ապա նրանց ձևաբանական, շարահյուսական առանձնահատկությունները և ոճական կիրառությունները: Դերանունների ձևաբանական և շարահյուսական հատկանիշների շարադրման սխեմի համար հիմք ենք ընդունել դերանունների քերականական հատկանիշների ընդհանրությունները, ուստի՝ նույնիսկ տարբեր տեսակի, բայց նման քերականական հատկանիշներ ունեցող դերանունները քննարկել ենք միասին: Միաժամանակ, հատկապես շարահյուսության բաժնում, աշխատել ենք ամփոփ կերպով ներկայացնել դերանվան այս կամ այն տեսակին հատուկ, տեսակային յուրահատկությամբ պայմանավորված շարահյուսական որոշ ընդհանուր հատկանիշները: Ինչ վերաբերում է դերանունների ոճական կիրառություններին, ապա դրանք քննարկված են հիմնականում ըստ առանձին տեսակների՝ վերջիններիս ոճական կիրառությունների զգալի տարբերությունների պատճառով:

Ուսումնասիրությունը կատարել ենք հիմնականում գրավոր աղբյուրներից քաղած փաստական նյութի հիման վրա: Այդ նպատակով դերազանցապես օգտագործել ենք սովետահայ և հայ կլասիկ հեղինակների երկերը:

Անհրաժեշտ ենք համարում նշել, որ մեր կողմից արված որոշ նոր սահմանումներ չեն ներկայացված դպրոցական ուսուցման համար մեթոդապես մշակված ձևով: Սահմանումները ձևակերպելիս հաճախ հաշվի ենք առել ոչ այնքան դպրոցում դրանց ուսուցման մատչելիությունը, որքան գիտականությունը, այլ բան է, թե այդ մեզ որքանով է հաջողվել:

Ինչպես ասվեց վերևում, դերանունների և նրանց տեսակների վերաբերյալ եղել են բազմաթիվ և տարբեր կարծիքներ, որոնց մի զգալի մասը ճիշտ և հիմնավորված չէ: Այդպիսի մի շարք կարծիքներ շարունակում են պահպանվել

մինչև օրս։ Այժմ, երբ մարքսիստական լեզվաբանությունն ապրում է իր աննախընթաց վերելքի շրջանը, և դրված է հատկապես ժամանակակից լեզուների քերականական կառուցվածքի ուսումնասիրության անհրաժեշտությունը, պետք է գիտականորեն լուծել ոչ ճիշտ լուծված և դեռևս չլուծված կոնկրետ հարցերը։ Բանն այն է, որ քերականական տրադիցիան չափազանց ուժեղ տրադիցիա է։ Հաճախ առանց խորանալու տվյալ քերականական կատեգորիայի կամ հարցի մեջ, այնքան ենք լսում և կարդում նրա տրադիցիոն ճանաչումը, որ կրկնվող ոչ ճիշտ ճանաչումը դառնում է սովորական, տարածված ու բնական և, որպես այդպիսին, բանականի տպավորություն է թողնում։ Հենց քերականական տրադիցիայի այսպիսի ուժեղությունը, նրա կաշկանդիչ զորությունը նկատի ուներ պրոֆ. Մ. Աբեղյանը, որ դրել է. որպեսզի լեզվաբանը կարողանա քերականական տվյալ հարցին տալ ճիշտ պատասխան, նա պետք է մոռանա իր սովորած քերականությունը։ Հասկանալի է, որ խոսքը վերաբերում է ոչ թե առհասարակ քերականական դիտելիքները մոռանալուն, այլ՝ ուսումնասիրվող քերականական կատեգորիայի տրադիցիոն ճանաչումը մոռանալուն, ավելի ճիշտ՝ այն մի կողմ թողնելուն, նրա շրջանակներում չկաշկանդվելուն, քանի որ կանխակալ կարծիքը կարող է կաշկանդել ուսումնասիրողին և խանգարել խնդրի օբյեկտիվ, ճիշտ լուծմանը։

Այդ պատճառով էլ մեր ուսումնասիրությունը կատարելիս մենք աշխատել ենք անհրաժեշտ չափով մեզ ազատ պահել տրադիցիայի կաշկանդումներից և քերականական տրադիցիան պահպանել միայն այն դեպքում, երբ նա ճիշտ է։ Քերականական տրադիցիայի նկատմամբ ամեն մի ավելորդ դիջում միայն վնաս կարող է բերել դիտությանը։ Ուստի և մեր եղրակացություններն անելիս մենք ունկնդրել ենք ուսումնասիրվող լեզվական փաստերի ձայնին։ Կարծում ենք, որ իրավունք ունենք նույնը խնդրելու մեր ընթերցողներին։

ԳԼՈՒԽ Ա. ՌԱՋԻՆ

ԴԵՐԱՆՈՒՆԸ ՈՐՊԵՍ ԽՈՍՔԻ ՄԱՍ

«Դերանուն» տերմինը կազմված է «դեր» և «անուն» բառերից և նշանակում է «անվան դեր կատարող», «անվան փոխարեն դրվող»։ Այդպես են անվանել այդ խոսքի մասը հին հունական քերականները (antonymia), և այդ անունը պատճենավորումով անցել է ուրիշ շատ լեզուների նույն խոսքի մասին (местоимение, pronomen)։ Այս անունը ոչ թե պատահական անվանում է, այլ իր մեջ արտացոլում է դերանվան, որպես խոսքի մասի, նախնական ճանաչումը, ըստ որի՝ դերանունը դրվում է անվան փոխարեն։ Դիոնիսիոս Թրակացին դերանունը սահմանում է այսպես. «Դերանունությունն է բառ փոխանակ անուան առնել, որոշեալ դիմաց յայտական»[1]։ Ինչո՞ւ անվան փոխարինելը հին հույների կողմից դիտվել է որպես դերանվան հիմնական հատկանիշ։ Դ. Թրակացու քերականության նպատակն ու բնույթը այլ էր, քան ժամանակակից քերականների կազմած քերականությունների նպատակն ու բնույթը։ «Դ. Թրակացին քերականությունը բնորոշում է որպես գիտություն բանաստեղծական և պատմական ստեղծագործությունների մասին՝ նրանց էմպիրիկ և գործնական ճանաչման իմաստով»[2]։

Նրա քերականության հիմնական նպատակներից մեկը,

---

[1] Н Адонц, Дионисий Фракийский и армянские толкователи, Петроград, 1915, стр 27.

[2] Նույն տեղում, էջ LXXI։

եթե ոչ ամենահիմնականը, տեքստերի վերլուծումն ու մեկնաբանումն էր։ Ուրեմն՝ նա ուներ տեքստաբանական նպատակ, որպիսի հանգամանքը չէր կարող չազդել նրա բնույթի վրա։

Քանի որ բառի՝ խոսքի մեջ ունեցած դերի, ֆունկցիայի որոշումը ավյալ տեքստի ճիշտ ըմբռնման և մեկնաբանման համար կարևոր նշանակություն ունի, ուստի հին հույների կազմած քերականության նպատակի հետ անհարիր չէր դերանվան ճանաչումն իր ֆունկցիայով՝ խոսքի մեջ։ Դերանվան՝ ժամանակի դիտության պահանջներից բխող այդպիսի մոտեցման արդյունք հանդիսացող ճանաչումը բավական երկար ժամանակ պահպանեց իր դոյությունը։

Դերանվան տրադիցիոն ճանաչման վերանայման փորձ կատարվեց XVIII դարի վերջերին և XIX դարի սկիզբներին։ Այդ վերանայման ելակետը իդեալիստական փիլիսոփայությունն էր Եվրոպայում, որը զգալի չափով բացատական դեր կատարեց այդ հարցում։ Համառոտակի ծանոթանանք այս շրջանի իդեալիստական փիլիսոփայության ներկայացուցիչներից մեկի հայացքներին։ Գերմանական իդեալիստ փիլիսոփա Ֆիխտեն թե՛ գիտության և թե՛ աշխարհի ելակետը, սկիզբը համարում էր Ես-ը։ Ֆիխտեն նույնիսկ քննադատում էր Կանտին այն բանի համար, որ նա Ես-ից դուրս ինքնին իր է ընդունում[1]։ Ելնելով սուբյեկտիվ իդեալիստական նման դրույթից, «Հումբոլդտը գտնում էր, որ լեզվի զարգացման մեջ առաջին ակտը հանդիսանում է խոսողի ինքնուրյան գիտակցումը, որն արտահայտվել է դերանվանական բառերով»[2] (ընդգծումն իմն է — Ս. Ա.)։ Այսպես ուրեմն, լեզվի մեջ նախ առաջացել է դերանունը, քանի որ միայն նրանով կարող է արտահայտվել խոսողի ինքնությունը (Ես), որի գիտակցումը լեզվի մեջ առաջին ակտն էր։ Համարյա նույն բանն է գրում մի այլ լեզվաբան՝ Ֆիկը. «Վրա-

---

1 Վ. Ի. Լենին, երկեր, հատ. 14, Հայպետհրատ, 1950 թ., էջ 255—256։

2 Виноградов В. В., Русский язык, 1947, стр. 321.

տահութեամբ նրանց (դերանունների — Ս. Ա.) մեջ կարելի է տեսնել իսկական ինն անուններ, այնպես որ, ընդհակառակը, հետագա անունները կարելի է համարել դերանուններին փոխարինողներ» [1]:

Վերոհիշյալ փիլիսոփայական իդեալիստական կոնցեպցիան անցյալ դարի առաջին կեսում տեղ գտավ ռուս լեզվաբանության մեջ մասնավորապես դերանունների հարցում: Գ. Պավսկին իր «Филологические наблюдения над составом русского языка» *աշխատության մեջ դերանունները միացնում է անուններին, որպես առաջին անուններ, որպես անվան և հատկանիշի նախնական ու «մաքուր գաղափար» արտահայտող բառեր, որոնք, իբր թե, հիմք են հանդիսացել մյուս անունների առաջացման համար: Այդ տեսակետն էին պաշտպանում Ի. Դավիդովը, Կ. Ակսակովը:* Վերջինս գրել է. «Դերանունը բոլորովին առանձին խոսքի մաս չի հանդիսանում» [2]: Թեև այդ լեզվաբանները դերանվան ծագման մասին ունեին ոչ-դիտական տեսակետ, որով և պայմանավորված է դերանունը ինքնուրույն խոսքի մաս չհամարելը նրանց կողմից, սակայն նրանց դերը մեծ է նրանով, որ խիստ կերպով քննադատեցին դերանվան տրադիցիոն ըմբռնումը, ըստ որի՝ դերանվան էությունը փոխարինման ֆունկցիան է: Գ. Պավսկին այդ մասին գրում է. «Դերանուններին տրված անունը բոլորովին չի արտահայտում լեզվի մեջ նրանց ունեցած նշանակությունը: Դերանունները չեն փոխարինում անվանը, այլ հանդիսանում են լոկ որպես ցույցում, ակնարկություն նրանց մասին՝ առանց արտահայտելու առարկաների որակը, սեռը, թիվը... Դերանունը ոչ միայն չի փոխարինում անվանը, այլև ուղղակի հակադիր է նրան:

Անունը ինչպիսին էլ լինի՝ դոյական, ածական կամ թվական, ուղղակի ցույց է տալիս առարկան կամ նրա որակը

---

[1] Նույն տեղում, էջ 322:

[2] К. С. Аксаков, Полное собрание сочинений, т. II, Сочинения филологические, ч. I, Москва, 1875. стр. 7.

կամ որոշակիորեն նշում է կոնկրետ, որոշակի թիվ և, հետևաբար, կրում է իր մեջ ակնթարթ, շոշափելի ներքին բովանդակություն, իսկ դերանունը մտահայեցողության համար և առարկաների տարբեր կատեգորիաների բաժանման համար ծառայում է իբրև ձև»[1]: Լեզվաբան Պավսկին եղրակացության մեջ տեղի է տալիս փիլիսոփա Պավսկուն, և դրա հետևանքով դերանունն ու անունը արդեն ռելյեֆ կերպով հակադրող գիտնականը վերջին հաշվով նույնացնում է դրանք՝ դասելով նույն խոսքի մասի մեջ, գտնելով, որ «դերանունը մտահայեցողության համար և առարկաների տարբեր կատեգորիաների ըմբռնման համար ծառայում է իբրև ձև», որ դերանունները նախնական «մաքուր» անուններ են:

Դերանվան ծագման հարցով այստեղ մենք չենք զբաղվի. դա անմիջապես չի վերաբերում մեր այս աշխատանքին: Բայց քանի որ այդ հարցի սխալ լուծումից բխում է ժամանակակից լեզուների դերանվան, որպես խոսքի մասի, սխալ ճանաչումը որոշ լեզվաբանների մոտ, ուստի կարևոր ենք համարում գոնե համառոտակի կանգ առնել այդ հարցի վրա:

Դերանվան մասին վերոհիշյալ տեսակետը պատահական տեսակետ չէ, այլ բխում է լեզվի ծագման և զարգացման մասին եղած իդեալիստական կոնցեպցիայից: Այսպես, Հումբոլդտի կարծիքով «Լեզուն առաջանում է մարդկային ներքին պահանջի հետևանքով և ոչ թե հասարակական փոխհարաբերությունները պահպանելու արտաքին կարիքից միայն: Այդ պահանջն ընկած է մարդկային ոգու բնության մեջ և անհրաժեշտ պայմանն է ոգու ուժերի զարգացման համար»[2]: Այսպիսով, Հումբոլդտը ժխտում է լեզվի ֆունկցիան և դերը հասարակության կյանքում, ժխտում է նրա հասարակական

---

1 Г. Павский, Филологические наблюдения над составом русского языка, СПБ, 1850, стр 249.

2 Гумбольдт В Ф., О различии организмов человеческого языка и о влиянии этого различия на умственное развитие человеческого рода, СПБ, 1859. стр. 11.

բնույթը, հաղորդակցական ֆունկցիան, լեզուն դիտում է որպես ինքնաբավ, ինքնամփոփ երևույթ, որպես ոգու դրսևորման անհրաժեշտ միջոց և պայման, որը (լեզուն) հենց այդ պատճառով էլ գոյություն կունենար նույնիսկ հասարակության հետ բոլորովին կապ չունեցող անհատի համար։ Այդ պատճառով էլ Համբոլդտը դերանունների առաջացումը քննելիս ելնում է ոչ թե լեզվի, որպես մարդկի հաղորդակցման միջոցի, սիստեմում նրա ունեցած դերից, այլ՝ ոգու, սուբյեկտի ինքնափիտակցման անհրաժեշտությունից, այդ ինքնափիտակցությունը դիտելով որպես ինքնանպատակ մի ակտ։ Այսպիսով, լեզվի դերը հասարակության կյանքում բոլորովին անտեսվում է։

Լեզվի ծագման անհրաժեշտության մասին Ֆ. Էնգելսը գրում է. «Աշխատանքի զարգացումն անհրաժեշտաբար նպաստում էր հասարակության անդամների ավելի սերտ համախմբմանը, որովհետև աշխատանքի շնորհիվ ավելի հաճախակի դարձան փոխադարձ աջակցության, համատեղ գործունեության դեպքերը, և ավելի պարզ դարձավ այն բանի գիտակցումը, որ այդ համատեղ գործունեությունն օգտակար է յուրաքանչյուր առանձին անհատի համար։ Կարճ ասած՝ ձևավորվող մարդիկ հասան այն բանին, որ նրանց մեջ երևան եկավ միմյանց ինչ-որ բան ասելու պահանջը»[1]։

Քանի որ լեզուն առաջացել է աշխատանքի պրոցեսում՝ ի բավարարումն այդ պրոցեսի համար անհրաժեշտ հաղորդակցման պահանջի, նշանակում է դերանվան (և մյուս խոսքի մասերի) ծագումը քննելիս պետք է ելնել ոչ թե խոսողի (որը կարող է իրրև թե նույնիսկ շփում չունենալ հասարակության հետ) անձնավորության գիտակցումից, ինքնագիտակցումից, ես-ի ճանաչումից, այլ՝ լեզվի, որպես հաղորդակցման միջոցի, սիստեմում ունեցած նրա տեղից ու դերից։ Այդ տեսակետից հարցին մոտենալով, որևէ անհրաժեշտություն չենք տեսնում, որ դերանունները ավելի շուտ առա-

---

1 Ֆ. Էնգելս, *Բնության դիալեկտիկա*, Երևան, 1950, էջ 188։

չանային, քան, օրինակ, դոյականը, բայը, ածականը, քանի որ վերջիններս լեզվի հաղորդակցական ֆունկցիայի համար պակաս կարևոր չեն, քան դերանունները: Այդ մասին պրոֆ. Էդ. Ազայանը գրում է. «Պետք է վստահ կերպով ասել, թե դերանունները իբրև խոսքի մաս, կարող են առաջանալ ոչ շուտ, քան դոյականն ու բայը» [1]:

Պրոֆ. Հ. Աճառյանը տարբեր լեզուների դերանունների ստուգաբանման հիման վրա գտնում է, որ «Կարելի է ենթադրել, թե դերանունները նախապես դոյականներ էին, որոնք հետո, գործածության մեջ շարունակ մաշվելով, դարձան կրճատ, անճանաչելի բառեր՝ դերանուններ:

Կան մի քանի լեզուներ, որոնք դերանունների այս նախավիճակը պահպանում են դեռ. այսպես, օրինակ, սումերերենում թեև դերանուններ կան, բայց դոյականներն էլ կարող են գործածվել իբրև անձնական դերանուններ. օրինակ՝

lu «մարդ»՝ գործածվում է նաև իբրև «նա»:

ka «բերան» գործածվում է նաև իբրև «դու»:

Բայց lu *նշանակում է նաև «դու», «նա», ուրեմն՝ բոլոր երեք դեմքի դերանունները:*

im «շունչ», *որից* im-zu «շունչդ» *նշանակում է նաև «դու»*

Բայց այս բառերը կարող են գործածվել ոչ միայն իբրև անձնական դերանուն, այլև իբր անորոշ կամ այլ տեսակի դերանուն. ինչպես՝

lu-na «այս մարդը» = *ոմն, մեկը* = *ո՞վ»* [2]:

Հաշվի առնելով նման բազմաթիվ փաստերը, պրոֆ. Հ. Աճառյանը ճիշտ է համարում այն կարծիքը, որ «մարդկային լեզվի մեջ ամենաուշ առաջացած խոսքի մասը դերանունն է» [2]:

Թե որքանով ճիշտ է դերանունը համարել ավելի ուշ առաջացած, քան բոլոր մյուս խոսքի մասերը, այդ հարցը

---

[1] Պրոֆ. Է. Բ. Աղայան, *Լեզվաբանության ներածություն*, Երևան, 1952 թ., էջ 373:

[2] Հ. Աճառյան, *Լիակատար քերականություն հայոց լեզվի*, հ. II, Երևան, 1954, էջ 1:

կարոտ է դեռ պատմական հանգամանալից ուսումնասիրության, բայց, որ նա առաջացել է ավելի ուշ, քան, օրինակ, գոյականը, բայը, ածականը, մեզ թվում է, որ պետք է տրամաբանական ու ճիշտ համարել։ Այսպիսով՝ այն տեսակետը, թե դերանուններն առաջին «մաքուր» անուններն են, որոնց հիման վրա առաջացել են մյուս անունները, զուրկ է գիտական հիմքից։ Հետևապես և ճիշտ չէ դրանից արված այն հետևությունը, թե դերանունները պետք է դասել գոյականների շարքը և չհամարել առանձին խոսքի մաս։

Դերանունն առանձին խոսքի մաս չհամարելու և ուրիշ խոսքի մասերի միացնելու տեսակետը հետագայում լայն տարածում գտավ։ Նա տեղ գտավ նաև հայ իրականության մեջ։ Սակայն դերանունների այդպիսի մասնատման վատատարկը հետագայում մի շարք լեզվաբանների մոտ (օր. Ա. Մ. Պեշկովսկի) հանդիսացավ ոչ այնքան, իսկ ոմանց մոտ էլ (օր. Մ. Աբեղյան) ոչ թե նրանց ծագումնային կողմը, որը քննարկվեց վերևում, որքան նրանց ժամանակակից իմաստային հարաբերակցությունը կամ հենց միայն այդ հարաբերակցությունը այլ խոսքի մասերի հետ։ Ելնելով դրանից՝ դերանունները մասնատեցին և միացրին գոյականին, ածականին, մակբային (իսկ թվականն առանձին խոսքի մաս համարողները՝ նաև թվականին)։ Դրանով դերանունն իբրև առանձին խոսքի մաս մերժվեց։

Քերականության նկատմամբ ունեցած արհամարհանքի պատճառով ակադ. Ն. Մառը գիտական ուսումնասիրության չի ենթարկել քերականական կատեգորիաները, խոսքի մասերը, այդ թվում և դերանունները։ Սակայն, ինչպես այլ խոսքի մասերի, այնպես էլ դերանունների մասին Ն. Մառը արտահայտել է ոչ քիչ մտքեր։

Դերանունների վերաբերյալ Ն. Մառի ուսումնասիրությունները վերաբերում են լեզվի պատմության ամենավաղ շրջանին, իր տերմինով ասած, «նախապատմական» շրջանին։ Նա առհասարակ շատ էր սիրված այդ շրջանով։ Օգտվելով այդ շրջանի լեզվական փաստերը ուսումնասիրելու անո-

№ 13156

հնարինությունից, նա իրեն թույլատրում էր անելու ոչ միայն դերանունների, մասին: Դերանունը Ն. Մարը համարում է ամենաառաջին խոսքի մասը և միաժամանակ դերանվան առաջացումը կապում է սեփականատիրության առաջացման հետ: «Դերանուններն առաջանում են սեփականատիրական պատկերացումից, դրանք ամենից առաջ սեփականատիրական անուններ են, քան անձնավորության արտահայտող անուններ: ...Ուստի առաջին դերանունները սեփականատիրական դերանուններ են, երբ խոսում էլ են դեմքի (անձի) մասին, ապա այս ժամանակաշրջանների համար խոսք կարող է լինել միայն կոլեկտիվ անձի, հատկապես կոնկրետ — տնտեսական կոլեկտիվ անձի, հասարակական խմբավորման կամ ցեղի մասին, իսկ իդեոլոգիապես կամ աբստրակտ աշխարհայեցողաբար՝ նաև կոլեկտիվի, հետագայում ցեղի տոտեմի, կոլեկտիվի սիմվոլի, աստծու մասին, որը և ավելի հասարակական խմբի սեփականության իրավունքների պահպանողն է» [1]:

Դերանունների առաջացման այսպիսի բացատրությունը զուրկ է որևէ պիտական հիմքից: Դա հետևանք է այն բանի, որ Ն. Մարը, լեզուն համարելով վերնաշենքային կատեգորիա, չէր հասկանում նրա սպեցիֆիկումը:

Եթե Ն. Մարը ելներ լեզվի հասարակական ֆունկցիայից, ապա նրա համար պարզ կլիներ, որ դերանունների անհրաժեշտությունը կար նախքան սեփականատիրության առաջացումը: Կանդնած լինելով լեզվի դասակարգայնության սխալ ֆորմուլայի վրա, Ն. Մարը լեզվի բոլոր իրողությունները տալիս էր սոցիալական, դասակարգային գնահատության: Պրոֆ. Էդ. Աղայանը հիմնավոր կերպով հերքում է Ն. Մարի այդ իդեալիստական տեսակետը: «Ես-ի, դու-ի, այս-ի, այդ-ի և այլ դերանունների գաղափարը կապված չէ սեփականության հետ, մարդու համար ես-ի գաղափարը

---

1 Ն. Մ ա ր, Ընտիր երկերի ժողովածու, հ. I, Երևան, 1949, էջ 160—161:

դոյութիւն է առնում այն պահից, երբ նա անջատում է իրեն մի կողմից բնութիւնից, մյուս կողմից՝ իր նմաններից» [1]:

Ն. Մառը խոսելով դերանվան փոխարինման ֆունկցիայի մասին, գրում է. «Իսկ սա (դերանունը — Ս. Ա.) ի՞նչ տեղակալ է: Ո՞ւմ տեղակալն է սա: Դերանունը փոխարինում է անվան, բայց անուն, իրրև վերնաշենքային կատեգորիա, չկար: Սա փոխարինեց վերնաշենքային կերպարին՝ տոտեմին: Դարձավ տոտեմի տեղապահը, տոտեմի տեղակալը» [2]:

Այստեղ ևս Ն. Մառը ճիշտ չի հանդիսանում իր ուսումնասիրության օբյեկտը, ուստի ոչ թե իր դրույթներն է բխեցնում փաստերից, այլ փաստերն է հարմարեցնում իր մտացածին դրույթներին: Այդպիսի մեթոդ ունեցող ուսումնասիրողի համար բոլորովին տարօրինակ չէ, երբ գրում է, որ դերանունները ծագում են այնպիսի անուններից, որոնք «հնէաբանորեն ծագում են ցեղային անունից, ուստի և ատածուց» [3]:

Անհրաժեշտություն չենք զգում մանրամասն քննել Ն. Մառի բոլոր մտքերն ու դրույթները դերանունների մասին: Այսքանից էլ երևում է, որ դերանունների վերաբերյալ նրա դրույթները զուրկ են որևէ հիմքից և գտնիկ սոցիոլոգիզմի արդյունք են:

Ն. Մառի հայ հետևորդները ժամանակին ընդունել են նրա սխալ դրույթները դերանունների վերաբերյալ: Պրոֆ. Ա. Ղաբիբյանը հայերենի դերանունների ատուգաբանության նպատակով դիմել է Մառի ստեղծած տարրերի օգնությանը [4]: Պրոֆ. Գ. Սևակը ընդունում է դերանունների ծագման մառյան կոնցեպցիան [5]: Այդ կոնցեպցիան էր պաշտպանում նաև

---

1 Պրոֆ. Է. Բ. Աղայան, *Լեզվաբանության ներածություն, Երևան, 1953 թ., էջ 374:*

2 Н. Я. Марр. Избранные работы. т. III. 1934, стр. 99.

3 Ն. Յա. Մառ, *Ընտիր երկերի ժողովածու, հ. I, Երևան, 1949, էջ 160:*

4 Ա. Ղաբիբյան, *Հայոց լեզվի պատմության ուսումնասիրության ներածություն, Երևան, 1937, էջ 128:*

5 *Տե՛ս Գ. Սևակի «Խոսքի մասերի ուսմունքը»:*

պրոֆ. Էդ. Աղայանը [1]։ 1953 թ. հրատարակած իր «Լեզվաբանության ներածության» աշխատության մեջ պրոֆ. Էդ. Աղայանը քննադատում է Մառի ստեղծած և իր կողմից ընդունված այդ սխալը և տալիս հարցի ճիշտ լուծումը։ Դերանունների ծագման մառյան կոնցեպցիայից հրաժարվել է նաև պրոֆ. Գ. Սեվակը յուր «Ժամանակակից հայոց լեզվի դասընթաց»-ի մեջ (1955 թ.) *։

Պրոֆ. Գ. Սեվակը, թեև իր հիշյալ աշխատության մեջ դերանվան ծագման հարցում հետևել է Ն. Մառին, բայց դերանվան խոսքի մասային առանձնահատկության մասին հայտնել է ուշագրավ տեսակետ. «Դերանուն կոչվում են այն բառերը, որոնք ցույց են տալիս առարկա, հատկանիշ, թիվ և թվական կարգ առանց տարբերակման իբրև նրանց ընդհանուր անուն»։ Դերանվան՝ ընդհանուր իմաստ ունենալը հայտնի էր գիտությանը, ինչպես տեսանք վերևում. բայց եթե անցյալում այդ հատկանիշն ընդունելով հանդերձ դերանունը առանձին խոսքի մաս չէին համարում, ապա պրոֆ. Գ. Սեվակը դերանունը համարում է առանձին խոսքի մաս, որի իմաստային հիշյալ յուրահատկությունը վերլուծելիս նա հենում է Վ. Ի. Լենինի հայտնի դիտողությունից (տե՛ս էջ 48)։

Մարքսիստական լեզվաբանության նոր նվաճումների լույսի տակ սովետական լեզվաբանները վերանայեցին դերանվան իրենց ոչ-ճիշտ ըմբռնումը։ Նույնիսկ այնպիսի ականավոր լեզվաբան, ինչպիսին ակադ. Վ. Վ. Վինոգրադովն է, դերանունը մի ժամանակ դիտում էր իբրև քայքայվող և այլ խոսքի մասերին միացող խոսքի մաս [2]։ «Պրավդա»-ում 1950 թ. ծավալված լեզվաբանական դիսկուսիայից հետո ակադ. Վ. Վ. Վինոգրադովը հրաժարվեց իր այդ տեսակետից։ Ավելին. «Չի կարելի չընդգծել,—գրում է նա,—որ ժամանա-

---

1 Էդ. Աղայան, Լեզվաբանության ներածություն, Երևան, 1944։

* Կարծում ենք, որ պրոֆ. Ա. Ղարիբյանը ևս այժմ մերժում է այդ կոնցեպցիան, թեև այդ մասին դրելու առիթ դեռևս չի ունեցել։

2 В. В. Виноградов, Русский язык, Москва, 1947, стр. 317.

կակից դերանվանական բառերի որոշ խմբեր շարունակում են լրացվել ձևաբանական, բառակազմական նոր ձևերով, որոնք բոլորովին չեն մտնում ռուսերենի հին դերանվանական իմաստաբանական արմատ-բառերի կազմի մեջ» [1]։

Այժմ ռուսերենի քերականության դրքերում լեզվաբանները դերանունը բնորոշում են հատկապես նրանց *իմաստային* կողմով։ «Դերանունը խոսքի մաս է, որի մեջ մտնում են այնպիսի բառեր, որոնց միջոցով խոսողը կամ ցույց է տալիս անձ, առարկա, հատկանիշ, քանակ, կամ հարցնում է անձի, առարկայի, հատկանիշի, քանակի մասին, կամ ընդհանրացնում է դրանք, բայց չի անվանում» [2]։ «Նյութական *իմաստ ունեցող* (знаменательные) բառերի մեջ առանձնանում է դերանունների մի ոչ մեծ խումբ, այսինքն այնպիսի գոյականներ, ածականներ, մասամբ և թվականներ, որոնք ըստ էության չեն անվանում անձերի, առարկաների, հատկանիշների կամ թվերի ոչ մի կատեգորիա, այլ միայն այս կամ այն ձևով ցույց են տալիս դրանք» [3]։

Նույն ժամանակաշրջանում լույս տեսած հայերենի քերականության դպրոցական դասագրքում դերանունը բնորոշվում է այսպես. «Դերանուն են կոչվում գոյականին, ածականին, թվականին կամ մակբային փոխարինող մի շարք բառեր, որոնք ցույց են տալիս առարկա, որակություն, թիվ և գործողության պարագա ընդհանուր առումով» [4]։

Նախ նշենք, որ ռուս լեզվաբանների կողմից դերանվան այդ նոր ըմբռնումը նշանակալից նվաճում է սովետական քե-

---

[1] В. В. Виноградов, Содержание и задачи курсов по языковедческим дисциплинам („Вопросы языкознания в свете трудов И. В Сталина". МГУ, 1950, стр. 216).

[2] Земский А. М. и др., Русский язык, ч первая, для педучилищ, Москва. 1950, стр. 185.

[3] Грамматика русского языка, т. I, под редакцией академика В. Виноградова и др., Москва, 1952, стр. 27.

[4] Ա. Ղաբիբյան, *Հայոց լեզու, դասագիրք միջնակարգ դպրոցի V—VI դասարանների համար, Երևան, 1951, էջ 211։*

րականագիտության մեջ: Սակայն ինչպես երևում է այդ երեք սահմանումներից, դերանվան ճանաչման հարցում դեռևս առկա են կարծիքների տարբերություններ, տարբեր մոտեցումներ: Եթե առաջին երկու սահմանումների մեջ շատ ընդհանուրի հետ միասին կան և որոշ տարբերություններ, ապա պրոֆ. Ա. Դարիբյանի տված սահմանումը ավելի լուրջ տարբերություն ունի դրանցից. նա դերանվան, որպես խոսքի մասի, կարևոր հատկանիշներ է համարում և՛ փոխարինման ֆունկցիան, և՛ իմաստը: Նույն դատողության հաջորդ հրատարակություններում պրոֆ. Դարիբյանը դերանվան բնորոշման հիմքում դնում է մեկ փոխարինման ֆունկցիան, մեկ՝ իմաստը:

Այսպիսով՝ դերանունների մասին եղել են և՛ ոչ գիտական, և՛ ուշադրության արժանի տեսակետներ: Վերջիններիս մասին պետք է ասել, որ դրանք կամ այս կամ այն չափով թերի են, կամ էլ հեղինակները ելնելով դասագրքի պահանջներից, չեն հիմնավորել իրենց տեսակետը: Եթե սրա հետ միասին նկատի ունենանք նաև այն, որ այժմ էլ տարակարծություններ (թեև ոչ առաջվա խստությամբ) շարունակվում են, ապա պարզ կլինի, որ դերանունների խոսքի մասային առանձնահատկությունները դեռևս կարոտ են հանգամանալից քննարկման:

Դերանունների մասին եղած տարբեր կարծիքներին համառոտակի ծանոթացումից որոշակի երևում է, որ այդ կարծիքները վերջին հաշվով և հիմնականում դերանվան փոխարինման ֆունկցիայի և այլ խոսքի մասերի հետ ունեցած հարաբերակցության նկատմամբ տարբեր մոտեցման հետևանք են: Ուստի՝ դերանունը որպես խոսքի մաս ավելի ճիշտ ճանաչելու համար անհրաժեշտ է քննել այդ երկու հարցերը:

Նախ՝ դերանունների փոխարինման ֆունկցիայի մասին: Վերևում տեսանք, որ դերանունը, որպես խոսքի մաս, նախապես ճանաչվել է հենց այդ ֆունկցիայով: Սրան ավելացնենք, որ այդ տեսակետը դերանունների վերաբերյալ ամենատարածված տեսակետն էր, որ մասամբ պահպանվում է նաև այժմ: Այն իշխում էր հատկապես դպրոցական քերա-

կանության մեջ։ Բերենք դերանունը փոխարինման ֆունկցիայով բնորոշող մի քանի սահմանումներ։

«Դերանուն կոչվում է խոսքի մասը, որը գործածվում է գոյականի, ածականի և թվականի փոխարեն» [1]։

«Դերանուն ասվում են այն բառերը, որոնք դրվում են անունների տեղ» [2]։

«Դերանուն կոչվում են այն բառերը, որոնք գործածվում են գոյականի, ածականի, թվականի և մակբայի փոխարեն» [3]։

«Դերանունը այն բառն է, որ գործ է ածվում նախապես հիշված մի գոյականի փոխարեն, նույնը չկրկնելու նպատակով» [4]։

Այս բոլոր սահմանումների էությունը նույնն է։ Տարբերությունը միայն դերանվան ծավալի մեջ է։ Այսպես, առաջին սահմանման մեջ դերանունները դիտվում են որպես գոյականին, ածականին և թվականին փոխարինող, երկրորդ սահմանման մեջ՝ որպես անուններին (այստեղ՝ գոյականներին) փոխարինող, երրորդ սահմանման մեջ՝ որպես գոյականին, ածականին, թվականին և մակբային փոխարինող բառեր։

Մի կողմ թողնելով դերանունների ծավալի այս տարբերությունները, տեսնենք, թե արդյո՞ք դերանվան էական հատկանիշը փոխարինման ֆունկցիան է։ Իսկ ի՞նչ է փոխարինման ֆունկցիան, կամ ի՞նչ է նշանակում մի բառի փոխարեն մի այլ բառի՝ տվյալ դեպքում դերանվան գործածությունը։ Թվում է, թե այս հարցի պատասխանն այնքան հասկա-

---

[1] Грамматика русского языка, ч. I, под. ред. Л. Щербы, Москва, 1948, стр. 18. *Ինչպես և նույնի այլ հրատ.*։

[2] Մ. Աբեղյան, *Աշխարհաբարի քերականություն, Վաղարշապատ, 1906, էջ 52*։

[3] Ա. Ղարիբյան, *Հայոց լեզվի քերականության դասագիրք, Երևան, 1938, էջ 59, ինչպես և նույնի այլ հրատ.*։

[4] Հ. Աճառյան, *Լիակատար քերականություն հայոց լեզվի, հ. II, Երևան, 1954, էջ 4*։

նալի է, որ բացատրության կարիքը չի զգացվում: Բայց անհրաժեշտ ենք համարում դոնե երկու խոսքով կանգ առնել դրա վրա հետևյալ պատճառով: Բանն այն է, որ երբ առաջին անգամ դերանունը դիտվեց իբրև խոսքի մաս, և փոխարինման ֆունկցիան համարվեց նրա էական հատկանիշը, ճանաչված էր դերանունների շատ սահմանափակ քանակ, այն է՝ անձնական և մի երկու ցուցական դերանուններ: Սակայն հետագայում դերանունների այդ քանակը բազմապատկեցին մի քանի անգամ, բայց և այնպես շարունակվեց նույն ֆունկցիան դիտվել իբրև դերանվան էական հատկանիշը. այդպիսով՝ փոխարինման ֆունկցիան մեխանիկորեն տարածվեց նաև նոր ճանաչված դերանունների վրա, թեև վերջիններս այդ տեսակետից մեծ տարբերություններ ունեին առաջիններից:

Դերանվան փոխարինման ֆունկցիայի մասին Ա. Բագրատունին գրում է, որ դերանունները «ի տեղի անուանց դնին առ ի չկրկնելոյ զայն»[1]: Նույն բանն է գրում նաև Մ. Աբեղյանը. «Դերանունները գործ են ածվում մի անգամ արդեն ասված, կամ հայտնի, ծանոթ անունները չկրկնելու համար» (ընդգծումները մերն են — Ս. Ա.)[2]: Ուրեմն՝ դերանվան փոխարինման ֆունկցիայի տակ հասկացվում է բառի հնարավոր գործածությունը դերանունով փոխարինելը՝ այն չկրկնելու նպատակով:

Հետագայում, ինչպես ասվեց, դերանունների շարքը համալրվեց բազմաթիվ բառերով, որոնք սակայն չէին գործածվում «արդեն ասված կամ ծանոթ անունները չկրկնելու համար»: Սակայն մի շարք լեզվաբաններ, առանց տարակուսելու, փոխարինման ֆունկցիան վերագրեցին և վերագրում են նաև դրանց և ահա թե ինչպես.

«—Ո՞ր մատիան ես ուզում:

---

1 Ա. Բագրատունի, *Հայերէն քերականութիւն ի պէտս զարգացեալց վենետիկ, 1852, էջ 85:*

2 Մ. Աբեղյան, *Աշխարհաբարի քերականություն, 1906, էջ 53:*

— Կարմիր *մատիտը*։

Այս խոսքում ո՞ր *դերանունը դրված է կարմիր ածականի տեղ*։

— *Տղաներից* որի՞ց *ես ստացել մատիտը*։

— *Սրանից, այս* ընկերոջից։

Այստեղ ո՞ր *դերանունը դրված է գոյականի տեղ*»[1]։

«— Որա՞ն *սեղան կա այստեղ*։

— *Այստեղ կա հինգ սեղան*։

Որան *դերանունը գործածված է հինգ թվականի փոխարեն*»[2]։

Սա արդեն փոխարինման ֆունկցիայի բոլորովին այլ ըմբռնում է։ Բայց չէ՞ որ, օրինակ, եթե վերջին օրինակում որան *դերանունը խոսողը գործածած լիներ «հինգ» թվականի փոխարեն, ապա «*որա՞ն *սեղան կա այստեղ» նախադասությունը բոլորովին աննպատակ կլիներ։ Սակայն նա իրականում աննպատակ չէ։ Այդ նախադասության մեջ արտահայտված է խոսողի՝ առարկաների քանակը չիմանալը և հարցում՝ այն իմանալու համար։ Ուրեմն *խոսողը անորոշ իմաստ ունեցող ու հարցում արտահայտող* որա՞ն *դերանունը չի գործածել որևէ որոշակի թվի, տվյալ դեպքում հինգի փոխարեն։ Նույնը վերաբերում է նաև մյուս օրինակներին։ Ուրեմն՝ եթե տվյալ նախադասության մեջ բացառվում է այն բառի գործածությունը, որին, կարծես, փոխարինում է դերանունը, եթե տվյալ դերանվան արտահայտած իմաստը, նրա առարկայական վերաբերությունը միայն դերանունով կարելի է արտահայտել և ոչ այլ բառով, նշանակում է ինքնին վերանում է փոխարինման հարցը։ Փոխարինում ասելով հասկացվում է մի բան մի այլ բանի փոխարեն գործածելը. բայց եթե այնտեղ, որտեղ գործածված է դերանունը, չի եղել, չկա և չի կարող լինել մի այլ բան, ուրեմն էլ ինչի՞ փոխարեն է գործածվում այդ դերանունը։*

---

[1] Աբաբատ Ղարիբյան, *Հայոց լեզվի դասավանդման մեթոդիկա*, Երևան, 1954, էջ 249—250։

[2] *Նույն տեղում, էջ 245։*

Այժմ անցնենք բուն հարցին։

Առաջին և երկրորդ դեմքի անձնական դերանունները սովորաբար չեն գործածվում անվան՝ խոսողի և խոսակցի անվան փոխարեն[1]։ Այդ ցույց տանք օրինակների վրա։ Նար-Դոսի «Աննա Սարոյանը» սկսվում է այսպես. «Իմ սիրելի Հռիփսիմե։ Իմ անգին քույրիկ, անսպասելի նամակդ ինձ շատ տխրեցրեց և միևնույն ժամանակ շատ բարկացրեց։ Մի՞թե կարծում ես, որ ես երբևիցե կարող կլինեմ քեզ մոռանալ» (Ն.-Դ., I, էջ 20)։ Այս օրինակի մեջ խոսողը առաջին դեմքի անձնական դերանունը գործածում է առանց նախապես նշելու իր անունը։ Ուրեմն՝ անվան կրկնությունից խուսափելու համար չէ, որ այստեղ գործածված է առաջին դեմքի անձնական դերանուն, հետևապես և նա չի գրված անվան փոխարեն։

Այլ օրինակներ.

«Անպայման ինձնից բարև գրեք ձեր մորը» (ՀՔ, ՄՏՋ, էջ 215)։ «Ինչ որ ինձ հրամայվում է, կատարում եմ» (ն. տ., էջ 222) «Հոգեբանորեն ազդում է ինձ վրա... գիշերը» (ն. տ., էջ 227)։

Այս օրինակներում առաջին դեմքի անձնական դերանունը չի կարելի դիտել որպես խոսողի անվան փոխարեն գործածվող բառ, քանի որ այդ և նման նախադասություններում սովորաբար չի գործածվում և չի կարող գործածվել խոսողի անունը, որի փոխարեն գրվեր առաջին դեմքի անձնական դերանուն։

Նույնը պետք է ասել նաև երկրորդ դեմքի անձնական դերանվան մասին։ Սովորաբար խոսողը խոսակցին կարող է դիմել և՛ անունով, և՛ դերանունով (երկրորդ դեմքի), ըստ որում՝ դերանունով նա կարող է դիմել առանց նախապես նրա անունը տվյալ խոսքի մեջ տալու։

Օր. «Մինչ այդ, մայրը կարծես չէր նկատել Տիգրանին։ Շուռ եկավ ու զարմացած նայեց նրան.

---

[1] Տե՛ս Современный русский язык, Морфология. М., 1952, стр. 233, 237.

— Դու ինչո՞ւ եկար...» (ՀՔ, ՄՏՋ, էջ 16)։

«Եվ ահա այսօր կրկին հայտնվեց այդ Բենո Շառոյանը։ Նա հայտնվեց այնպիսի ժամանակ, երբ Կարոն ամենևին մոռացել էր նրա գոյությունը։

— Ուրեմն դո՞ւ էիր քարեր գցում,— հարցրեց Կարոն» (Ն. տ., էջ 29)։

Հասկանալի է, որ հաճախ անհրաժեշտ էլ չի լինում մեկին դիմելիս անպայման նրա անունը տալ։

Վերևում տեսանք, որ մարդ խոսելիս սովորաբար իր անունը չի տալիս, իր մասին խոսելիս սովորաբար իրեն չի անվանում, այլ ցույց է տալիս առաջին դեմքի անձնական դերանունով։ Բայց հաճախ է պատահում, որ մարդ խոսակցին դիմում է նրա անունով։

(Ա) 1. «Նատիր, Լուսիկ, քո վիճակում չի կարելի այդքան երկար կանգնած մնալ ոտքի վրա» (ՀՔ, ՄՏՋ, էջ 6)։

2. «Գիտե՞ս ինչ, Լուսիկ, ես ինքս էլ հաճախ նկատում եմ իմ գործի թերությունները» (Ն. տ., էջ 8)։

3. «Արի այստեղ, Տիգրան» (Ն. տ., էջ 13)։

Այս նախադասությունները կարելի է գործածել նաև այլ կերպ։ Կարելի է չգործածել խոսակցի անունը և նրան դիմել դու դերանունով։ Արդյո՞ք այս հանգամանքը նշանակում է, թե դերանունը գործածվում է անվան փոխարեն։ Ոչ, չի նշանակում։ Կատարենք այդ փոփոխությունը։

(Բ) 1. Նատիր դու, քո վիճակում չի կարելի այդքան երկար կանգնած մնալ ոտքի վրա։

2. Դու գիտե՞ս ինչ, ես ինքս էլ հաճախ նկատում եմ իմ գործի թերությունները։

3. Դու արի այստեղ։

Ակնհայտ է, որ այս օրինակներում դու դերանունը չի գործածված 1-ին շարքի օրինակների հատուկ անունների փոխարեն։ Ոչ այդ հատուկ անունները կարող են փոխարինվել որևէ դերանունով, ոչ էլ երկրորդ շարքի օրինակների դերանունները՝ հատուկ անուններով։ Առաջին շարքի օրինակներում Լուսիկ, Տիգրան անունները կոչականներ են,

որոնք ոչ թե փոխարինվել են դերանունով, այլ պարզապես չեն գործածվել երկրորդ օրինակներում, դուրս են թողնվել։ Երկրորդ շարքի օրինակներում դու դերանունը Լուսիկ և Տիգրան անուններին չի փոխարինում, նախադասության պլխավոր անդամ է՝ ենթակա, իսկ հատուկ անունները, ինչպես տեսանք, կոչականներ են, ուրեմն և նախադասության անդամ չեն։ Կարելի է նույնիսկ այդ կոչականները գործածել երկրորդ շարքի նախադասություններում, կամ դու դերանունը գործածել առաջին շարքի նախադասություններում.

(Գ) 1. Դու նստիր, Լուսի՛կ, քո վիճակում չի կարելի այդքան երկար կանգնած մնալ ոտքի վրա։

2. Դու գիտե՞ս ինչ, Լուսի՛կ, ես ինքս էլ հաճախ նկատում եմ իմ գործի թերությունները։

3. Դու արի այստեղ, Տիգրա՛ն։

Բ շարքի օրինակների տարբերությունը Ա շարքի օրինակներից այն է, որ առաջին շարքի նախադասությունների ղեկցված ենթականերն այստեղ արտահայտված են դերանունով, այսինքն՝ դիմավոր բայի դեմքը բացահայտված է դերանունով, իսկ կոչականները հանված են, թեև կարող էին և չհանվել։ Այս նշանակում է, որ դու դերանունը չի դործածված դոյականի փոխարեն։

Որ իսկապես Բ շարքի օրինակներում դերանունը ոչ թե Ա շարքի օրինակների հատուկ անունների փոխարեն է դործածված, այլ՝ բայի դեմքի բացահայտումն է համապատասխան դեմքի դերանունով, վկայում են հետևյալ օրինակները։

«Զարգարյան, չգիտեմ ինչու, այսօր կարծես օդը խեղդում է ինձ» (Շիրվ., IV, էջ 119)։ «Վատ չէր լինի, պարոն Սմբատ, վատ չէր լինի» (ն. տ.)։

«Այսպես, Տիգրա՛ն... լինելու է այն, ինչ որ պետք է լիներ» (ՀՔ, ՄՏՋ, էջ 43)։

Այս նախադասություններով խոսողը դիմում է խոսակցին, բայց քանի որ դրանց մեջ երկրորդ դեմք ունեցող բայ չկա, այդ պատճառով էլ երկրորդ դեմքի անձնական դերա-

նուն գործածել չի կարելի, իսկ կոչականներ կարելի է գործածել և գործածվում են։

Հասկանալի է, որ գոյականներին չեն փոխարինում նաև երկրորդ դեմքի անձնական դերանունների թեք հոլովաձևերը։

Օրինակներ. «Դու ես գործի թերությունների մասին էիր խոսում» (ՀՔ, ՄՏՋ, էջ 8)։ «Ես կգայի և վազելով կհասնեի քեզ օդնության» (ն. տ., էջ 7)։ Այդ նախադասություններում ընդգծված ես և քեզ ձևերը գործածված են ցույց տալու համար մի անձ, որի անունն է Տիգրան։ Սակայն նրանք չեն գործածված Տիգրան անվան փոխարեն. Տիգրան անունը չէր կարելի գործածել այնտեղ, որտեղ գործածված են դու դերանվան հոլովաձևերը։ Նման գործածության դեպքում նախադասությունների իմաստը կփոխվեր. Տիգրանի գործի թերությունների մասին էիր խոսում։ Ես կգայի և վազելով կհասնեի Տիգրանին օդնության։ Տիգրանին վերաբերող այս նախադասությունները, որպես օրինակ, կարելի է արտահայտել ոչ թե դիմելով Տիգրանին, իրեն խոսակցի, այլ դիմելով մեկ ուրիշի և Տիգրանի մասին խոսելով, որպես երրորդ անձի։

Տեսականորեն էլ կարելի է ցույց տալ, որ առաջին և երկրորդ դեմքի անձնական դերանունները չեն գործածվում և չեն կարող գործածվել գոյականների փոխարեն։ Դրա պատճառն այն է, որ գոյականները ունեն երրորդ դեմքի իմաստ, իսկ երրորդ դեմքի իմաստ ունեցող բառով սովորաբար չի կարելի ցույց տալ ոչ խոսողին (առաջին դեմք) և ոչ էլ խոսակցին (երկրորդ դեմք)։ Սա վերաբերում է, իհարկե, սովորական, հիմնական գործածություններին. այլ բան է, որ ոճական նկատառումներով խոսողը իրեն կարող է դիտել իբրև իր խոսակիցը և իրեն դիմել երկրորդ դեմքի անձնական դերանունով կամ կոչականով և այլն։

Գոյականի փոխարեն սովորաբար չեն գործածվում նաև ինքը դերանվան թեք հոլովաձևերը, հաճախ նաև ուղիղ ձևը։ Նրանք, ինչպես և առաջին, երկրորդ դեմքի անձնական դերանունները, այնպիսի իմաստ ունեն, որ ուրիշ որևէ բառով արտահայտել սովորաբար չի կարելի. նրանց գործածության

տեղում գոյականը սովորաբար հանդես գալ չի կարող, և քանի որ տվյալ տեղում գործածությունը հատուկ է միայն այդ դերանվանը և նրա հոլովաձևերին, նշանակում է մի այլ բառի փոխարեն գործածվելու հարցը միջտեղից վերանում է։

Օրինակներ. «Համբարձումյան հասնելով՝ Արշակյանը խըմ. բագրին առաջարկեց, որ իմը դրի առնի պեկուցումը» (ՀՔ, ՄՏՋ, էջ 315)։ «Տհանում ու հասկանում էր այդ մաերմության բնույթը, բարկանում էր իմն իր մեջ» (ն. տ., էջ 356)։ «Այդ հոգեկան չերմությունից նրան թվում էր, թե իմը քառասունին մոտ տղամարդ չէ, այլ երջանիկ մի տղա» (ն. տ., էջ 424)։ «Արշակյանին նույնպես իր խոսքերն անպատշաճ թվացին» (ն. տ., էջ 153)։ «Տղաները միշտ հպարտանում էին իրենց մայրերի քաջությամբ» (ն. տ., էջ 56)։ «Եկել է ուրեմն Աննիկենց տան կողմերը, եկել է, թեև Արամին ասել է, որ Աննիկի կարծիքն իրեն չի հետաքրքրում» (ն. տ., էջ 67)։

Կարելի է բերել տարբեր տեսակի դերանունների՝ այլ խոսքի մասերի փոխարեն չգործածվելու բազմաթիվ օրինակներ։

Յուցական դերանուններ։ օրինակներ։ «Իսկական ուսուցչուհի, այն էլ այդիսի լավիշ, շնական ձևով,—համբերելով լսացրեց ծերունին» (ՀՔ, ՄՏՋ, էջ 55)։ «Ինձ շնորհավորեցեք, ի՛նձ... իսկական մայրը և ամենաերջանիկն այս րոպեին ես եմ» (ն. տ., էջ 66)։ «Սա մեր դիրքերն են» (ՆՋՀ, էջ 53)։ «Շմավոնը շատ շուտով նկատեց այդ նշանավոր մեղրաճորցու համակրելի կողմերը» (ն. տ., էջ 66)։ «Միևնույն է, եթե ինքը չհայտնի, վաղ թե ուշ Պետրոսը պիտի իմանա» (Շիրվ., IV, էջ 143)։ «Նա զայրացած մոտածում էր, թե ինչը կարող էր խոսեցնել այս համառ տղային» (ՀՀ, Բ, էջ 24)։ «Իմ դարդը հերիք չի, դու էլ մյուս կողմից ես կատաղած շան պես վրա պրծնում» (Ն.-Դ., I, էջ 164)։

Որոշյալ դերանուններ. «Քայլերդի հնչյունները տարածվում էին քաղաքով մեկ։ Բոլորն էլ լսում էին հիմա այդ երգը ամբողջ Սովետական Միության մեջ» (ՀՔ, ՄՏՋ,

էջ 68)։ «Հայրենիքի համար ամեն զոհողություն կարելի է անել» (Ար., էջ 452)։ «Գյուտը կշտապեցնի ամեն կերպ» (Ն. ա., էջ 455)։ «Եվ ամենքը կամենում են ապրել, և յուրաքանչյուրը կամենում է ապրել» (Իս., էջ 335)։ «Թուխ, հեռացիր բոլոր-բոլորից» (Ն. ա., էջ 197)։ «Կկողոպտեն ամեն պալատ, ամեն խրճիթ կխառնեն» (ՆՋ, Հատ., էջ 309)։ «Ամբողջ օրը լալիս էի» (ԱՀՍ, էջ 66)։

Անորոշ դերանուններ. «*Եթե որևէ բան լինի, հեռախոսով զանգ տուր մեզ*» (ՀՔ, ՄՏՋ, էջ 57)։ «*Սպասեցեք, ինչ-որ լուր է հաղորդվում*» (Ն. ա.)։ «*Այս անգամ ևս նա ախորժ ավելի սաստիկ, քան երբևէ*» (Շիրվ., IV, էջ 158)։ «*Հանեսի վախը մի ուրիշ տեսակ էր*» (Ար., էջ 153)։ «—*Խելոքացավ,—ձայն տվին մի քանիսը բազմության միջից*» (ՆՋՀ, էջ 15)։ «*Սերգեյ Ավետիչը... ինչ-որ բղավում էր*» (Ն.-Դ., IV, էջ 99)։ «*Մեզմ նախաստական եղանակով մի բանի հորդորներ կարդաց հորը*» (Ն. ա., էջ 100)։ «*Ուրիշ մի բանի հարցեր էլ տվից Մարությանը*» (ՆԴՄ, էջ 14)։ «*Վազվզում էին բազմաթիվ երեխաներ, ոմանց հագին միայն մի վարտիկ*» (Ն.-Դ., I, էջ 118)։

Հարցական—ուսարաբերական դերանուններ. «*Հիսլերը ո՞վ է, որ կարողանա հաղթել մեզ*» (ՀՔ, ՄՏՋ, էջ 92)։ «—*Ո՞վ է նա, ո՞վ է,—հարցնում է Անուշը հետաքրքրված*» (Շիրվ., IV, էջ 129)։ «*Ի՞նչ եք անում*» (Ն. ա., էջ 128)։ «*Ոչ ոք չնկատեց, ինչպես փոխվեց Շուշանիկի դեմքի գույնը, ինչպես նա նախ կարմրեց, ապա դունատվեց, ինչպես մի թույլ հառաչանք թռավ նրա կրծքից*» (Ն. ա., էջ 158)։ «*Ո՞ւր է Հուսիկը*» (ԱՀՍ, էջ 98)։ «*Ինչպե՞ս եղավ, Սարգիս Գրիգորիչ, որ դուք էլ այստեղ ընկաք*» (Ն. ա., էջ 114)։ «*Որտե՞ղ են տանելու*» (Ն. ա., էջ 112)։ «*Այս թերթի համար քանի՞ անգամ փող եք հավաքել*» (ՀՀ, Բլ, էջ 23)։

Ժխտական դերանուններ. «*Ոչ մի միտք ու ենթադրություն չէին ծնվում նրա մեջ*» (ՀՔ, ՄՏՋ, էջ 55)։ «*Նա ոչինչ չգիտեր*» (Ն. ա., էջ 58)։ «*Եվ այլևս ոչ մի խոսք չարտասանեց Լիպարիտը*» (ՆՋՀ, էջ 41)։ «*Ես ոչ ոքի չեմ*

պատմել դրությունս» (Ն.-Դ., I, էջ 87)։ «Ոչ մի պիղծ թշնամի չի շեղի մեզ մեր ճամփից» (Ա.Վ.Բ, էջ 90)։ «Ընկեր Շամավոնից զատ ոչ ոքի մոտ չի թողնում» (ՆԶՀ, էջ 71)։

Փոխադարձ դերանուններն օրինակներ. *«Երկինքը լցված էր սպիտակ լուսատիտիկներով, որ շարժուն այուների պես խաղացնում էին իրար, ձուլվում միմյանց» (ՀՔ, ՄՏՋ, էջ 26)։ «Խաղը ճղճղալով իրար խառնվեց» (ՀՔ, III, էջ 53)։ «Պատմեցեք, ընկեր Աբգարյան, պատմեցեք մեզ Կոմիտասի մասին, անմիջապես իրար էին անցնում երիտասարդ ուսուցչուհիները» (Ա.Ս, ՈՄ, էջ 102)։*

Այս ընդգծված դերանուններից ոչ մեկը չի դործածված այլ խոսքի մասի փոխարեն։ Ի՞նչ բառի փոխարեն կարող է գործածված լինել, ասենք, «ե՞րբ ես գալու» նախադասության մեջ ե՞րբ դերանունը։ Այդ դերանունով խոսողը հարցում է անում խոսակցի դնալու ժամանակի մասին, որը անհայտ է խոսողին, կարող է անհայտ լինել նաև խոսակցին։ Երբ բառն այս նախադասության մեջ չի կարող փոխարինվել որևէ բառով, հետևապես և ինքը չի փոխարինում որևէ բառի, քանի որ նրա իմաստը ամբողջ դեպքում ուրիշ որևէ բառով արտահայտվել չի կարող։ Այլ բան է և փոխարինման հետ որևէ կապ չունի այն, որ երբ դերանունը ժամանակ է ցույց տալիս, և մյուս կողմից լեզվի մեջ կան ժամանակ ցույց տվող ուրիշ բառեր (վաղը, այսօր, շաբաթ օրը, ժամի 6-ին և այլն)։ Այլ բան է և փոխարինման հետ որևէ կապ չունի այն, որ խոսակիցը այդ հարցին կարող է պատասխանել մակբայով (օր. հիմա), դոյականով (օր. վաղը), չպետք է մոռանալ, որ նաև այլ ձևերով (օր. մինչև ո՞ր գնալը)։ Նշենք նաև, որ խոսակիցը այդ հարցին կարող է բացասական պատասխան տալ (օր. չգիտեմ) կամ բոլորովին չպատասխանել։ Բայց խոսակիցը պատասխանո՞ւմ է, թե՞ չի պատասխանում, բացասակա՞ն, թե՞ դրական պատասխան է տալիս, պատասխանը դոյականով կամ մակբայով է արտահայտված, թե՞ բառակապակցությամբ կամ նախադասությամբ,— այս բոլորը հնարավոր են, սակայն սրանք կապ չունեն երբ բառի,

որպես խոսքի մասի, ճանաչման հետ: Երբ–ը մնում է երբ և՛ իր իմաստով, և՛ իր ֆունկցիայով, և՛ իր ձևով, անկախ այդ բոլորից:

Սակայն բոլոր դերանունները չէ, որ զուրկ են այդ ֆունկցիայից: Մի շարք դերանուններ ի վիճակի են գործածվելու այլ բառերի փոխարեն: Բայց նույնիսկ այդ դերանունները միշտ չէ, որ գործածվում են փոխարինման ֆունկցիայով: Այսպիսով՝ չկա նույնիսկ մեկ դերանուն, որը միշտ կատարի այդ ֆունկցիան: Այդ դերը համեմատաբար շատ են կատարում սա, դա, նա, այս, այդ, այն դերանունները (վերջիններս՝ հատկապես անկախ գործածության ժամանակ):

Փորձենք քննել այդ դերանունների կատարած փոխարինման ֆունկցիայի էությունը: Վերցնենք նա դերանվան գործածությունը երկու տարբեր նախադասություններում:

1. «Տիգրանն ապատ շունչ քաշեց: Կես ժամ չկար, որ հիվանդանոցից վերադարձավ տուն: Նա սպասում էր մորը» (ՀՔ, ՄՏՋ, էջ 53):

2. Նա ո՞վ է: (Մենք կարող ենք այս նախադասությունը գործածել առանց նա դերանունով ցույց տրված անձի անունը նախապես տալու և նույնիսկ առանց նրա անունն իմանալու ու նրան ճանաչելու):

Ո՞րն է նա դերանվան ֆունկցիան, ի՞նչի համար է գործածված նա այս երկու նախադասություններում: Այդ դերանունը երկու դեպքում էլ գործածված է անձ ցույց տալու, անձ մատնացույց անելու համար: Սակայն միաժամանակ առաջին նախադասության մեջ նա դերանունը փոխարինում է գոյականին, իսկ երկրորդ նախադասության մեջ՝ ոչ: Ի՞նչն է դրա պատճառը, նրա փոխարինման ֆունկցիան դերանունների կամ էլ նույնիսկ որոշ դերանունների, տվյալ դեպքում՝ նա դերանվան բնորոշ հատկանիշն է, ինչո՞ւ նա միշտ չի կատարում այդ ֆունկցիան, այլ երբեմն կատարում է, երբեմն՝ ոչ:

Առաջին նախադասության մեջ նա դերանվան՝ փոխարինման ֆունկցիա կատարելը բխում է այն բանից, որ նրա

ցույց տված առարկան նախապես անվանված է, խոսողը ավելորդ է համարում կրկնել արդեն գործածված այդ անունը և նրան ցույց է տալիս դերանունով։ Տեսանք, որ երկրորդ նախադասության մեջ նա դերանունը նշված պարագայում փոխարինման ֆունկցիա չի կատարում, բայց այդ նույն դերանունը նույն նախադասության մեջ, այլ պարագայում (եթե նրա ցույց տված անձը նախապես անվանված է) կարող է կատարել այդ ֆունկցիան։ Այսպես՝

— Երեկ մեզ մոտ էր Վահանյանը. հիանալի մարդ է և լավագույն մասնագետ։

— Նա ո՞վ է, որ ես չեմ ճանաչում, երեկ էլ լսեցի նրա մասին։

Նա դերանունն այստեղ արդեն դրված է Վահանյան բառի փոխարեն։

Այսպիսով՝ նա դերանունը որոշ պարագաներում կարող է դրված լինել ուրիշ բառի փոխարեն, իսկ այլ պարագաներում՝ ոչ։ Նա այդ ֆունկցիան կատարում է, ինչպես տեսանք, երբ նրա ցույց տված առարկան նախապես անվանված է, եթե այդ առարկայի անունը հայտնի է խոսողին, իսկ այլ դեպքերում չի կատարում։ Ուրեմն, փոխարինման ֆունկցիան այստեղ պարզապես բխում է նշված պարագաներից, հետևապես և դա նրանից անբաժան, նրա համար հիմնական հատկանիշ չէ։ Հատկանշականն ու ավելի կարևորը նրա իմաստի և գործածության մեջ այն է, որ նա մատնացույց է անում առարկա, առանց կոնկրետ կերպով անվանելու վերջինս։

Այնուհետև, պետք է նկատի ունենալ, որ դերանունը կարող է դրվել ոչ միայն այս կամ այն բառի փոխարեն, այլև հաճախ բառակապակցությունների, նախադասության, նույնիսկ միասին վերցրած բազմաթիվ նախադասությունների փոխարեն։ Բերենք միայն մեկ օրինակ՝ «Զինվորը և ժողովուրդ Գառնո. այս մանկամարդ իշխանուհին ձեր ամենքի հանցանքը բավեց. հայրենիքի փրկության համար նա յուր անձն է առաջարկում ողջակեզ... Անշուշտ դուք էլ ինձ նման չեք կամենա, որ այդ զոհն ընդունեք, բայց նրա քույրերին

խրախուսելու համար մենք նրան պիտի վարձատրենք։ Նա ապացուցեց, որ հարապատ ժառանգ է Սյունյաց դյուցազն արի նախարարաց. մենք էլ պիտի ապացուցանենք, որ գիտենք մեծարել հայկազանց հարապատ նախարարաղնի անձնավիրութիւնը։ Արքայի հրամանով ես Գառնո տերն ու բերդակալն եմ։ Իմ բացակայութեան ժամանակ այդ պաշտօնը հանձնեցի Մուշեղին, իսկ Մուշեղը, որովհետև մեր ախտի մեջ մտած արդեն, ուժի բերդակալութեան պաշտօնը հանձնում եմ այժմ Սյունյաց դյուցազնասիրտ օրիորդ Շահանդուխտին... Գառնո այն պինդը կամ բնակիչը, որ կհամարձակվի նրա հրամանին անսաստել՝ այս սրին պատասխանատու կլինի...

Այս ասելով՝ իշխանը յուր սուրը կամարաձև բռնեց օրիորդի դիմին» (Մուր., III, էջ 293)։

Այս հատվածում, ուրեմն, ընդգծված այս դերանունը դրված է նախորդ մարի փոխարեն։ Բայց ինչպե՞ս է, որ առարկա ցույց տվող այդ մեկ բառը փոխարինում է շուրջ տասն նախադասութիւնների՝ միասին վերցրած (նկատենք, որ նա կարող է փոխարինել նույնիսկ տասնյակ նախադասութիւնների)։

Բանն այն է, որ վերոհիշյալ հատվածում ընդգծված այս դերանունը իր էական հատկանիշով նույնն է, ինչ որ, օրինակ, «այս իմ դիրքն է» նախադասութեան մեջ այս դերանունը, որի ցույց տված օբյեկտը նախապես անվանված չէ, և որը դործածվում է խոսողի մոտ գտնվող առարկան մատնացույց անելու համար ու իր էութեամբ մի ցուցական բառ է, որի փոխարեն մենք հաճախ ավելի առարկան մատով ենք ցույց տալիս։ Դրանց տարբերութիւնը պարզապես այն է, որ, այս-ը մատնացույց է անում մի դեպքում նախապես ասված միտքը, մյուս դեպքում նախապես չհիշատակված առարկան։ Այսպիսով, դերանունների փոխարինման ֆունկցիայի էութիւնը ճիշտ հասկանալու համար անհրաժեշտ է նկատի ունենալ ոչ միայն այն, որ դերանունների միայն մի մասն է կատարում այդ ֆունկցիան, ոչ միայն այն, որ այդ դերա-

նուններն էլ միայն որոշ դեպքերում, որոշ պարագաներում են կատարում այդ ֆունկցիան, այլև այն, որ նույնիսկ նման դեպքերում փոխարինման ֆունկցիան հենց նետևանք է այդ պարագաների, այդ պայմանների, ուրեմն՝ փոխարինելը նույնիսկ որևէ մեկ դերանունից անբաժան հատկանիշ չէ, այլ միայն պայմանական, որ բխում է գործածության տվյալ պայմաններից:

Սակայն փոխարինման ֆունկցիա կարող են կատարել ոչ միայն դերանունները, այլև ուրիշ խոսքի մասեր:

Գոյականների օրինակներ. «— Այդպես է. ես պնդում եմ, նրանք օգնության կատանան, կազատվեն և դուք, հոռետեսներդ, կամաչեք այն ժամանակ... Օրիորդ Սեհիկյանի բացագանչությունը... ոչ միայն ցանկալի ազդեցություն չարավ պաշտոնյանների վրա, այլև շատերի ծիծաղը շարժեց» (Մուր., IV, էջ 80): Որքանով վերևում քննարկված հատվածում է այս դերանունը փոխարինում նախորդ մարին, նույնքան էլ այստեղ է բացագանչությունը գոյականը փոխարինում նախորդ մարին: «Երևելյավ իսկույն մի նորատի սպասուհի, որ շնորհաշուք կերպով ողջունելով օրիորդին, լսեց նրա վեհությունը՝ թե կամենում է տեսնել տիկին Փիլարյանին: Առաջնորդելով հյուրին դեպի ընդունարանը սպասուհին շոշափեց տիրուհու մոտ» (Ն. ս., էջ 14):

«...Միևնույն ազգի տարբեր սոցիալական խմբեր ունեն իրենց «լեզուները»: Այդ տեսակետը հիմնավորելու համար նա (Ա. Մեյեն — Ս. Ա.) հիշում է երկու «փաստ» (ԷԲՄ, ԼՆ, էջ 70):

«Չկար այժմ ավելի կարևոր ու գրավիչ բան, քան ընկեր Աբգարյանի դասը, իսկ նա սրտին կանգնել և բացատրում էր: Ինչ զարմանալի կերպարանափոխվել պիտի այդ մարդը» (ԱՄ, ՈՄ, էջ 27):

Եթե հետևելու լինենք տրադիցիային, պետք է ասենք, թե այս օրինակում այդ դերանունն է փոխարինում Աբգարյան անվանը, որպեսզի վերջինս չկրկնվի, մինչդեռ փոխարինման ֆունկցիա այստեղ կատարում է մարդը բառը կամ ավելի

ճիշտ՝ այդ մարդը կապակցությունը (դիտե այդ Աբգարյանը, կամ՝ դիտե Աբգարյանը)։

Թվականների օրինակներ. «Կան լեզուներ, որոնք քերականական իմաստներ արտահայտում են առանձին բառերի հարադրությամբ, ուրիշ լեզուներ նույն բանը կատարում են բառերին մասնիկներ ավելացնելով, վերջապես՝ ուրիշ լեզուներ էլ բառիմաստի հնչյունների փոփոխությամբ... Առաջին կարգի լեզուները կոչվում են անջատական, երկրորդ կարգի լեզուները՝ կցական, երրորդ կարգի լեզուները՝ թեքական» (ԷԲԱ, Ի՛Ն, էջ 89)։

«Իր այդ տեսակետը հիմնավորելու համար նա հիշում էր երկու «փաստ». ա) տարբեր սոցիալական խմբերի «լեզուներում» եղած բառապաշարի տարբերությունը. բ) ազգային բուրժուազիայի կողմից ուրիշ լեզու օգտագործելը... Առաջին փաստարկը չի հաստատում տարբեր դասակարգերի տարբեր լեզուների գոյությունը. նա միայն ցույց է տալիս, որ տարբեր դասակարգեր կարող են ունենալ որոշ քանակով տարբեր բառեր... Ինչ վերաբերում է երկրորդ փաստարկին. ապա նա իրականությանը չի համապատասխանում» (Ն. տ., էջ 70)։ Մենք այս հատվածում դիտմամբ չկրճատեցինք նա դերանունն ունեցող նախադասությունը, որպեսզի ընթերցողը տեսնի, թե ինչպես և՛ դերանունը, և՛ դասական թվականը կարող են գործածվել միևնույն օբյեկտը, միտքը ցույց տալու համար, ուրեմն և ավելյալ դեպքում հավասարապես փոխարինման ֆունկցիա կատարել։

Գոյականների փոխարեն կարող են դրվել նաև քանակական թվականները՝ գործածվելով գոյականաբար։ Աշտար և Անահիտ չորրորդ դասարանի առաջավոր աշակերտներ են. երկուսն էլ սկսած առաջին դասարանից միշտ գերազանցիկ են եղել։ «Կիևից դեպի Վարշավ տանող ճանապարհի վրա, կայարաններից մեկում, իմ նստած կուպեն մտան երկու երիտասարդներ... Երիտասարդներից մեկը... ռուս էր, մյուսը՝ լեհացի... Երբ սովորական հարց ու պատասխանից պարզվեցավ, որ երեխս էլ գնում ենք Վարշավ, ուրեմն և

երկար պիտի ուղեկցենք իրար, լեհացին դառնալով ընկերին՝ ասաց...» (Մուր., IV, էջ 323):

Այլ խոսքի մասերի օրինակներ. «Նախորդ (—«Լեզու և մտածողություն» կամ՝ 9-րդ — Ս. Ա.) գլխում մենք տեսանք, որ լեզուն ու մտածողությունը մի միասնություն են կազմում» (ԼԲԱ, ԼՆ, էջ 89): «Հնդեվրոպական լեզուները մեծ մասամբ ունեն 7 հոլով, մինչդեռ կան լեզուներ... որոնք ունեն մինչև 40 հոլով: Այդ բազմաթիվ հոլովների ուսումնասիրությունը ցույց է տալիս, որ...» (Ն. տ., էջ 332): Համմիկը գնել էր երկու քանոն. մեկը հիսուն սանտիմետրանոց, իսկ մյուսը հարյուրհինգ սանտիմետրանոց: Երկարը նվիրեց Նվարդին, իսկ կարճը պահեց իր համար:

Կարելի է, իհարկե, բազմապատկել այլ խոսքի մասերի փոխարինման ֆունկցիայի անառարկելի փաստը հաստատող օրինակների քանակը: Սակայն այսքանն էլ բավական է ցույց տալու համար, որ այդ ֆունկցիան կարող են կատարել ոչ միայն դերանունները, այլև ուրիշ խոսքի մասեր: Վերևի օրինակներից միաժամանակ երևում է, որ այդ գործածությունները ոչ թե պատահական կամ եզակի գործածություններ են, այլ սովորական ու տարածված: Գո՞ւցե սա, դա և մի քանի այլ դերանուններ ավելի հաճախակի են գրվում այլ բառերի կամ կապակցությունների փոխարեն, քան մյուս խոսքի մասերը, բայց պետք է նկատի ունենալ, որ եթե դերանունների մեծ մասը այդ ֆունկցիան բոլորովին չի կատարում, ասես, օրինակ, բոլոր որակական ածականները, սեռի, տեսակի անունները և բազմաթիվ այլ բառեր, հատկապես առավել ընդհանուր իմաստ ունեցող բառերը, կարող են կատարել այդ ֆունկցիան. ձյուրիմայության տեղիք չտալու համար կրկնում ենք, որ գործածության հաճախականությամբ դրանք զիջում են մի քանի դերանունների:

Այս իրողությունը կարևոր է ոչ միայն այն տեսակետից, որ դրանով վերանում է դերանունների կարծեցյալ սպեցիֆիկումը՝ հանձին փոխարինման ֆունկցիայի, ի տարբերություն մյուս խոսքի մասերի, այլև դա կարևոր է մի ուրիշ տեսա-

կեսից։ Արդյո՞ք վերևում բերված փոխարինման ֆունկցիա կատարող գոյականները, ածականները, թվականները կատարելով այդ ֆունկցիան զրկվում են իրենց հիմնական իմաստից, կամ վերջինս դառնում է երկրորդական, իսկ այդ դերը՝ նրանց էական հատկանիշը։ Այստեղ երկու կարծիք լինել չի կարող։ Այդ բառերի իմաստը, խոսքի մասային հիմնական հատկանիշը միշտ մնում է նույնը, անկախ այն բանից՝ նրանք զրվում են այլ բառերի կամ կապակցություննների փոխարեն, թե՛ ոչ։ Ավելին. նրանց իմաստն է հենց պայմանավորում այդպիսի ֆունկցիա կատարելու հնարավորությունը, այլապես ինչո՞ւ մի բառ կարող է տվյալ դեպքում զրվել մի ուրիշ բառի կամ կապակցության փոխարեն, իսկ մեկ ուրիշ բառ չի կարող։ Սա վերաբերում է նաև դերանուններին։ Այսպես, ինչո՞ւ, օրինակ, խոսողի մոտ գոնվող կամ արդեն այդպիսին մատնված առարկան ցույց տալու համար գործածում ենք սա կամ այս դերանունը և ոչ թե, ասենք, նա, ինչը դերանուններ։ Որովհետև դրանցից յուրաքանչյուրն ունի իր իմաստը, ըստ որի էլ գործածվում է։ Նախքան դերանունների իմաստին անցնելը, ամփոփենք նրանց փոխարինման ֆունկցիայի՝ վերևում կատարված քննարկումը.

1. Դերանունների մեծ մասը զուրկ է փոխարինման ֆունկցիայից։ Տրադիցիոն քերականության մեջ ճանաչված դերանուններին վերագրված և ոչ ճիշտ կերպով որպես նրանց խոսքի մասային հիմնական հատկանիշ դիտված այդ ֆունկցիան մինչև վերջերս էլ նոր ճանաչված դերանուններին, որով և ավելի է տարածվել ու մասամբ խորացել այդ խոսքի մասի ոչ ճիշտ ճանաչումը։

2. Փոխարինման ֆունկցիա կատարում է դերանունների միայն մի մասը, այն էլ ոչ միշտ։

3. Նույնիսկ նման դեպքերում այլ բառերի փոխարեն դրվելը բխում է նրանց գործածության որոշ պայմաններից, այն բանից, որ այդ դեպքում նրանք ցույց են տալիս խոսողին հայտնի, անվանված առարկա, օբյեկտ։ Այդ ֆունկցիան դե-

բանունների ոչ թե էությունն է հանդիսանում, այլ այդ էությունից ու գործածության յուրահատուկ պայմաններից բխող հետևանք, ուրեմն և պայմանական ֆունկցիա է:

4. Այդ նույն իմաստով փոխարինման ֆունկցիա հաճախ կատարում են նաև այլ խոսքի մասեր:

5. Նշանակում է փոխարինման ֆունկցիան դերանունների, որպես խոսքի մասի, հիմնական հատկանիշը չէ:

Այժմ անցնենք մյուս հարցին, այն է՝ դերանունների և այլ խոսքի մասերի հարաբերակցության քննարկմանը:

Ինչպես արդեն ասվել է, որոշ լեզվաբաններ դերանունն ինքնուրույն խոսքի մաս չէին համարում: Նրանք հիմնվելով այլ խոսքի մասերին հարաբերակից լինելու վրա, դերանունները մասնատում էին այդ խոսքի մասերի՝ գոյականի, ածականի [1] և մակբայի միջև: Պրոֆ. Ա. Մ. Պեշկովսկին դերանվան մասին գրում է. «դա... խոսքի մաս չէ»: Նա դերանունները մասնատում է և միացնում այլ խոսքի մասերի, իբրև նրանց տեսակ՝ դերանվանական գոյականներ (ես, դու, նա, ով, ինչ), դերանվանական ածականներ (իմ, ես, այլ, այն և այլն), դերանվանական մակբայներ (ինչպես, այսպես, այստեղ, ուր և այլն) [2]:

Միևնույն բանը տեսնում ենք նաև պրոֆ. Մ. Աբեղյանի մոտ [3]: Նա ևս դերանունները միացնում է հարաբերակից խոսքի մասերին, իբրև նրանց տեսակ՝ դերանուն-գոյական, դերանուն-ածական, դերանվանական մակբայ:

---

[1] Այս կարծիքն ունեցող լեզվաբանները ածականների շարքն էին դասում նաև թվականները, քանի որ նրանք էլ ածվում, դրվում են գոյականի վրա:

[2] А. М. Пешковский, Русский синтаксис в научном освещении, Москва, 1938, стр. 163.

[3] Մ. Աբեղյանը «Աշխարհաբարի քերականության» մեջ դերանունը համարում է ինքնուրույն խոսքի մաս, իսկ «Ժամանակակից հայոց լեզվի տեսության» և «Աշխարհաբարի շարահյուսության» աշխատություններում այն մասնատում և բաժանում է հարաբերակից խոսքի մասերի միջև:

Այսպիսով, առարկա ցույց տվող դերանունները (ես, դու, նա, սա, դա և այլն) մոտվեցին դոյականների շարքը, առարկայի անվան վրա դրվող և նրա հատկանիշը ցույց տվող դերանունները (այսպիսի, այդպիսի, այնպիսի, ինչպիսի և այլն)՝ ածականների շարքը, առարկայի քանակ ցույց տվող դերանունները (այսքան, այդքան, նույնքան, այսչափ, այդչափ և այլն)՝ թվականների շարքը, գործողության հատկանիշ ցույց տվող դերանունները (այսպես, այդպես, ինչպես և այլն)՝ մակբայների շարքը: Դրանով դերանունը դիմադրվեց և մերժվեց իրրև առանձին խոսքի մաս:

Իսկապես դերանունները հարաբերակից են նշված խոսքի մասերին (դոյական, ածական, թվական, մակբայ), և դերանունների ու նրանց միջև կա որոշ ընդհանրություն: Բայց արդյո՞ք այդ ընդհանրությունը թույլ է տալիս դերանունը ենթարկելու նման մասնատման և վերացնելու իրրև առանձին խոսքի մաս:

Քննենք այս հարցը, նախ, տեսական առումով:

Ա. Մ. Պեշկովսկու, Մ. Աբեղյանի և այլ լեզվաբանների կողմից դերանունների նկատմամբ այսպիսի մոտեցումը պատահական չէ, այլ սերտորեն կապված է խոսքի մասերի որոշման նրանց սկզբունքի հետ: Դերանվան այդպիսի ճանաչումը բխում է ձևաբանության և շարահյուսության սահմանների, բնագավառների չտարբերակումից, խոսքի մաս և նախադասության անդամ քերականական տարբեր հատկությունների շփոթումից ու նույնացումից:

*Այսպես, Դ. Կուդրյավսկին իր «*Части предложения и части речи*» (տե՛ս Энциклопедический словарь Брокгауза и Ефрона, XXXVIII, 1903) հոդվածում նույնացնում է խոսքի մասը նախադասության անդամի հետ և դրանց տարբերակումը համարում է «անհնարին»:*

*Ա. Մ. Պեշկովսկին գրում է. «Դոյականի (*существительность*) կատեգորիայի հիմնական հատկանիշը հանդիսանում է ածականներին համաձայնության կարգով իրեն*

միացնելու կարողությունը, որը կա գոյականի մեջ» [1]: Ուրեմն՝ պրոֆ. Ա. Մ. Պեշկովսկին գոյականը որպես խոսքի մաս բնորոշում է ոչ թե նրա ընդհանուր իմաստի, ոչ թե լեքսիկա-ձևաբանական տեսակետից, այլ ուրիշ բառեր նրա վրա դրվելու հնարավորության, վերջիններիս իրեն համաձայնեցնելու, մի խոսքով՝ շարահյուսական տեսակետից: Գոյականի այսպիսի սահմանումը պայմանավորում է գոյականների հետ գործածվող, նրանց վրա իբրև որոշիչ դրվող բառերի (անկախ իմաստից) ածական համարելը: Հենց այդպես էլ վարվում է պրոֆ. Մ. Աբեղյանը: Նա գտնում է, որ «Ածական կոչվում են այն բառերը, որոնք դրվում են ուրիշ բառերի վրա» [2]: Այսպիսով՝ ածականը նույնացվում է որոշչի հետ, որոշիչները դիտվում են իբրև ածական, հետևապես և ածականների շարքն են դասվում այն դերանունները, որոնք կարող են որոշչի պաշտոն կատարել:

Ինչպես տեսնում ենք, դերանվան նկատմամբ այսպիսի մոտեցումը բխում է ձևաբանության և շարահյուսության օբյեկտների շփոթումից: Սովետական լեզվաբանությունը վերջին տարիների ընթացքում դիտականորեն լուծեց քերականության այդ երկու բաժինների խնդիրները և դրանց մեջ մտցրեց որոշակի պարզություն: Սովետական լեզվաբանությունը որոշակի տարբերություն է դնում ձևաբանության և շարահյուսության միջև, խոսքի մասերի և նախադասության անդամների միջև: Խոսքի մասերը ուսումնասիրվում են ձևաբանության մեջ, իսկ նախադասության անդամները՝ շարահյուսության մեջ, հետևապես խոսքի մասերի և մասնավորապես նյութական իմաստ ունեցող խոսքի մասերի որոշման հիմունքը չի կարելի համարել նրանց շարահյուսական ֆունկցիան: Բառի շարահյուսական հատկանիշը միայն առանձին

---

[1] А. М. Пешковский, Русский синтаксис в научном освещении, стр. 167.

[2] Մ. Աբեղյան, *Աշխարհաբարի քերականություն*, Վաղարշապատ, 1906, էջ 56:

դեպքերում, իհարկե, կարող է օժանդակել ձևաբանական այս կամ այն հարցի ճիշտ ըմբռնմանը, որչափով ձևաբանությունը և շարահյուսությունը քերականության տարբեր բաժիններ լինելով հանդերձ, որոշ փոխհարաբերության մեջ են գտնվում, բայց նա միայն կարող է օժանդակել և ոչ թե ձևաբանական դասակարգումների մեջ կատարել վճռական դեր կամ միակ հիմունք հանդիսանալ։ Ձևաբանական դասդասման հիմքում շարահյուսական հատկանիշ դնելու հետևանքը, ինչպես տեսնում ենք, ստացվում է այն, որ դրանով փաստորեն որոշում ենք բառերի (ավելի դեպքում դերանունների) ոչ թե խոսքի մասային պատկանելիությունը, այլ շարահյուսական հատկանիշները, պաշտոնը նախադասության մեջ։ Այսպիսով, դերանունները հարաբերակից խոսքի մասերի միջև բաշխելը և ինքնուրույն խոսքի մաս չհամարելը չի արդարացվում, նախ, տեսականորեն։

Քննենք այդ նույն հարցը քերականական տեսակետից։ Դերանունները առանձին խոսքի մաս չհամարելու փաստարկներից մեկն էլ այն է, որ նրանք՝ դերանունները իրենց քերականական հատկանիշներով ընդհանրություն չեն կազմում, ուրեմն և, իբրև թե, չի կարելի քերականական տարբեր հատկանիշներ ունեցող այդ բառերը միավորել մեկ խոսքի մասի մեջ։ Իսկապես փաստը ճիշտ է նշված, դերանունները միօրինակ քերականական հատկանիշներ չունեն. նրանց մի մասը չի հոլովվում, մյուս մասը հոլովվում է, վերջիններս էլ մեկ ընդհանուր բնույթ չունեն։ Որոշ դերանուններ ունեն դերանվանական, մյուսները՝ անվանական հոլովում։ Միօրինակ չեն նաև դերանունների շարահյուսական առանձնահատկությունները։ Սակայն ճիշտ չէ այդ փաստից արված եզրակացությունը։ Ճիշտ չէ նախ այն պատճառով, որ դերանունների քերականական բնույթի ընդհանրության բացակայության դեպքին չունենք քերականական բնույթի ընդհանրություն այլ խոսքի մասերի և նրանց համապատասխան հարաբերակից դերանունների միջև։ Ի տարբերություն մյուս խոսքի մասերի՝ դերանունների ունեցած չքերականական (ձևաբանական և

շարահյուսական) առանձնահատկությունները կքննվեն համապատասխան գլուխներում, բայց քննարկվող հարցի համար անհրաժեշտ է դրանք համառոտակի խոսել այդ մասին:

1. Առարկա և անձ ցույց տվող դերանունների մի մասը հոլովվում է դերանվանական հոլովումով, որը հատուկ է միայն դերանուններին: Գոյականները, որոնց հարաբերակից են այդ և առարկա, անձ ցույց տվող այլ դերանուններ, չունեն դերանվանական հոլովում:

2. Առարկա ցույց տվող դերանունների մեջ, ի տարբերություն դրանց հարաբերակից խոսքի մասի՝ գոյականի, կան չհոլովվող դերանուններ (ոմն, ովիեր և այլն): Չեն հոլովվում նաև այս, այդ, այն դերանունները, երբ նույնիսկ առարկա են ցույց տալիս:

3. Որոշ դերանուններ, ի տարբերություն դրանց հարաբերակից խոսքի մասի՝ գոյականի, չունեն ուղղական հոլով. իրար, մեկմեկու, մեկմեկի, միմյանց:

4. Բոլոր ածականները և թվականները կարող են դարձածվել գոյականաբար և հոլովվել: Սակայն դրանց հարաբերակից համարվող որոշ դերանուններ չունեն այդ քերականական առանձնահատկությունը. որևէ, որևիցե, ինչ-որ, ինչ-ինչ, այս, այդ, այն *և այլն:*

Իսկ այսպիսի, այդպիսի, այնպիսի, նույնպիսի դերանունները գոյականաբար գործածվելիս հոլովվում են ոչ թե ածականների պես, որոնց հարաբերակից են համարվում դրանք, այլ փոխանուն սեռականների պես:

Օր. այսպիսինը, այսպիսինի, այսպիսինից և այլն.
այդպիսինը, այդպիսինի, այդպիսինից և այլն:
Համմտ. Արամինը, Արամինի, Արամինից և. այլն:

5. Գոյականի հոդնակին կազմվում է եզակի ձևի վրա հոդնակերտ մասնիկի ավելացումով: Սակայն որոշ դերանունների հոդնակիները այդ ձևով չեն կազմվում: Այսպես, մենք չի կազմվում եզակիից՝ ես-ից: Չկան նույնիսկ բոլորը հոդնակիի (իմաստով) եզակին: Իրար, *մեկմեկու (մեկ-մեկի)*

վոխադարձ դերանունները հոգնակի թիվ ունեն առանց որևէ հոգնակերտ մասնիկի և այլն:

6. Թվականներին հարաբերակից են համարվում այսման, այդման, այնման, նույնման, այսչափ, այդչափ, այնչափ, նույնչափ, որչափ *դերանունները, որոնք չափ ու քանակ են ցույց տալիս: Սակայն հայտնի է, որ թվականները ցույց են տալիս առարկայի հատկանիշ, որ նրանք գործողության հատկանիշ ցույց տալ չեն կարող: Այս նշանակում է, որ նախադասության մեջ նրանք՝ թվականները կարող են կատարել որոշիչի պաշտոն, իսկ չափի պարագայի պաշտոն կատարել չեն կարող:*

Օր. ինձ *մարդ, բան դիրք, ոտ աշակերտ. բայց ոչ՝* ինձ *խոսել, ոտ գնալ և այլն: Սակայն վերոհիշյալ դերանունները կարող են կատարել ոչ միայն որոշիչի, այլև չափի պարագայի պաշտոն: Օր.* այսման *մարդ,* այդման *դիրքը,* այդման *աշակերտ, այլև՝* այդման *խոսել,* այսման *աշխատել,* որքա՞ն *պարապել և այլն:*

Հենց այս փաստը ցույց է տալիս, որ այդ դերանունները հարաբերակից են ոչ միայն թվականներին, այլև մակբայներին: Ուրեմն՝ միշտ չի կարելի պնդել, թե այս կամ այն դերանունը հարաբերակից է այս կամ այն խոսքի մասին:

7. Այսպիսի, այդպիսի, այնպիսի, նույնպիսի, ինչպիսի *դերանունները դասում են ածականների շարքը: Սակայն այս դերանունների և ածականների շարահյուսական կիրառություններ միջև լուրջ տարբերություն կա: Չնայած, որ ածականների հիմնական հատկանիշը, իմաստը համարվում է առարկայի որակը, որպիսությունը ցույց տալը, բայց նրանք, հատկապես որակական ածականները, հաճախ գործածվում են նաև գործողության հատկանիշ ցույց տալու համար: Օր.* լավ *դիրք, շատ մարդ,* խելոք *երեխա,* գեղեցիկ *տեսարան, այլև՝* լավ *խոսել,* շատ *պարապել,* խելոք *արտահայտվել,* գեղեցիկ *երգել և այլն: Սակայն վերոհիշյալ դերանունները գործածվում են միայն առարկայի հատկանիշ ցույց տալու համար և երբեք բայի հետ չեն գործածվում: Այս նշանա-*

կում է, որ նրանք, ի տարբերություն ածականների, ձեի պարագայի պաշտոն կատարել չեն կարող։

Օր. այսպիսի մարդ, այդպիսի երեխա, այնպիսի տեսարան, բայց ոչ՝ այսպիսի խոսել, այդպիսի պարապել, այնպիսի արտահայտվել, այլ այսպես խոսել, այդպես պարապել, այնպես արտահայտվել։

Բացի դրանից, հայտնի է, որ ածականները իրենց իմաստային և ձևաբանական յուրահատկության տեսակետից բաժանվում են երկու տեսակի՝ որակական և հարաբերական։ Սակայն այդ դերանունները չենք կարող դասել ո՛չ մեկ, ո՛չ էլ մյուս տեսակի մեջ։ Դրանք ո՛չ համեմատության աստիճաններ ունեն, ո՛չ էլ նրանց արտահայտած հատկանիշի իմաստի մեջ կա հարաբերություն որևէ առարկայի նկատմամբ։

Դերանունների և հարաբերակից խոսքի մասերի քերականական բնույթի այս թեկուզ և համառոտ համեմատությունից երևում է, որ քերականական ընդհանրություններ չկան նաև դերանունների ու հարաբերակից խոսքի մասերի միջև։ Ուրեմն, եթե դերանունները մանանանք և դասենք այդ խոսքի մասերի շարքը, ապա դրանով իսկ կառաջացնենք ձևաբանական ու շարահյուսական տարբերություններ մյուս խոսքի մասերի մեջ։ Այսպես, եթե առարկա ցույց տվող դերանունները դասելու լինենք դոյականների շարքը, ապա դրա հետևանքով դոյականների քերականական հատկանիշների կողքին պետք է տեղ գտնեն նրանց հետ այնպիսի առանձնահատկություններ՝ հանձինս դոյականների շարքը դասած դերանունների առանձնահատկությունների, ինչպիսիք են դերանվանական հոլովումը, առարկա ցույց տվող բառերի չհոլովվելը, այս կամ այն հոլովը չունենալը (փոխադարձ դերանուններ), իրև որոշիչ և որոշյալ սովորաբար չգործածվելը, ստորոգելիական վերադրի դեր չկատարելը (փոխադարձ և մի երկու այլ դերանուններ) և այլն։

Այսպիսով, չնայած որ դերանունները իրենց քերականական բնույթով միատեսակ չեն, բայց այդ հիմք չէ նրանց

մանաւանդ և հարաբերակից խոսքի մասերին միացնելու համար, քանի որ դրանով չենք նպաստում խոսքի մասերի քերականական մի օրինակութիւնն ապահովելուն: Իսկ սա նշանակում է, որ պետք է հաշուի առնել այն օբյեկտիվ փաստի հետ, որ միևնոյն խոսքի մասը, ասենք դերանունը, կարող է ունենալ քերականական տարբեր հատկանիշներ: Սա միաժամանակ նշանակում է, որ խոսքի մասերը որոշելիս չպետք է բառերի քերականական հատկանիշներին վերագրել միակ վճռական դեր և որ մանաւանդ պետք չէ դերանունը, որպես խոսքի մասի որոշման հարցում քերականական հատկանիշները երկրորդական են, և կարևորը նրանց իմաստային կողմն է, իմաստային առանձնահատկութիւններն են: Այդ մասին «Грамматика русского языка» արժեքաւոր աշխատութեան մեջ կարդում ենք, որ «դերանունները առանձնացվում են մի առանձին խմբի մեջ ոչ այնքան ձևաբանական կառուցվածքի կամ շարահիւսական կիրառութիւնների միանութեամբ, որքան ընդհանուր իմաստային հատկանիշներով»[1]:

Այսպիսի մոտեցումը ճիշտ է նաև այն պատճառով, որ խոսքի մասը ոչ թե զուտ ձևաբանական կատեգորիա է, նեղ իմաստով ասած, այլ՝ լեքսիկա-ձևաբանական, և նրա որոշման հարցում լեքսիկականը, իմաստային կողմը կարևոր դեր է կատարում: Ուրեմն և քննենք դերանունների հարաբերակցութիւնը մյուս խոսքի մասերին այդ տեսակետից՝ իմաստային տեսակետից:

Ինչպես վերևում ասվեց, իսկապես իմաստային տեսակետից որոշ հարաբերակցութիւն կա դերանունների և գոյականի, ածականի, թվականի, մակբայի միջև: Սակայն դրանց միջև կան նաև շատ էական տարբերութիւններ: Այդ տարբերութիւնները հայ իրականութեան մեջ քննարկել են պրոֆ. Գ. Սեվակը իր «Խոսքի մասերի ուսմունքը»[2],

---

[1] Грамматика русского языка, т. I, под. ред. акад. В. Виноградова, Москва 1952 стр. 29.

[2] Տե՛ս ՀՍՍՌ Գիտական համալսարանի «Գիտական աշխատութիւններ», հտ. 11, 1939:

«Ժամանակակից հայոց լեզվի դասընթաց» (Երևան, 1955 թ.) աշխատությունների մեջ, ֆիլ. գիտ. թեկնածու Բ. Վերպյանը «Դերանվան որոշման հարցի շուրջը»[1] հոդվածում՝ հետևելով պրոֆ. Գ. Սեվակին: Այդուհանդերձ անհրաժեշտ ենք համարում համառոտակի քննել այդ հարցը թե՛ նյութի ամբողջականության և թե՛ մանավանդ դերանվան ու հարաբերակից խոսքի մասերի միջև այլ տարբերություններ ևս ցույց տալու համար, որոնք տեղ-չեն գտել այդ աշխատություններում:

Երևույթների միջև եղած ընդհանուրը հաշվի առնելով հանդերձ, էլ ավելի լուրջ ուշադրություն պետք է դարձնել այդ երևույթներից յուրաքանչյուրի առանձնահատկության վրա, որը ավելի կարևոր է գիտության համար, քանի որ դրանով ավելի խորը և ճիշտ ճանաչած կլինենք տվյալ երևույթը: Արդ, ինչո՞վ են տարբերվում դերանունները հարաբերակից մյուս խոսքի մասերից:

Այդ տարբերությունը, նախ, այն է, ինչպես պրոֆ. Գ. Սեվակն է ցույց տվել հիմնավոր կերպով, որ դերանունների հարաբերակից խոսքի մասերը ունեն տարբերակված իմաստ, հանդիսանում են առարկաների կամ հատկանիշների անուններ, մինչդեռ դերանունները չեն անվանում առարկան կամ հատկանիշը, նրանք ունեն առարկայի կամ հատկանիշի ընդհանուր, չտարբերակված իմաստ:

Դերանունների այդ յուրահատկությունը բացահայտելու համար բանալի է հանդիսացել և հանդիսանում է Վ. Ի. Լենինի նշանավոր դիտողությունը Հեգելի «Փիլիսոփայության պատմության դասախոսությունների» իր կոնսպեկտում:

(«Это»? самое общее слово). Кто это? Я. Все люди я. Чувственное вообще. Это есть *общее* и т. д., и т. д. «Этот»?? Всякий есть „Этот“[2].

NB в языке есть только *общее*

[1] Տե՛ս ՀՍՍՌ ԳԱ «Տեղեկագիր» (հասարակական գիտությունների), 1953, № 8:

[2] Ленинский сборник, XII, стр. 222.

Ինչպես տեսնում ենք, այստեղ դերանունները համարված են ամենաընդհանուր բառեր։

Այսպես, դոյականները անվանում են առարկաները, որոնց տեսակի, սեռի կամ առանձին առարկաների անուններն են. խնձոր, տանձ, պտուղ, խոտ, փայտ, գրիչ և այլն։ Մինչդեռ առարկա ցույց տվող դերանունները առարկայի տեսակ կամ սեռ ցույց տալ, առարկան անվանել չեն կարող, քանի որ ունեն ընդհանուր, չտարբերակված իմաստ։ Այդ տեսնենք առարկա ցույց տվող դերանուններից մեկի վերաբերյալ։

«Սոնան *ականատես եղավ այս տեսարանին. մի վայրկյան նա կանգ առավ» (Պռ., II, էջ 51)։ «Ի պատիվ Գնթունեան պետք է ասենք, որ նա մինչև էսօր էլ գինու հոտը չի առնում» (Ն. տ., էջ 84)։ «Վասակը շատ աշխատեց մի հնարքով Մելիքի դռանը մոտենալ, բայց Մելիքի որդին շարունակ խափան դնովից նրա յանկութիւնը» (Ն. տ., էջ 100)։ «Մի՞թե Քալիի մեջ չկար ինքնուրոյնութիւն... Հապա էլ ի՞նչ բանի էր պետք նրա ստացած կրթութիւնը» (Ն.—Դ., IV, էջ 116)։ «Նա (Գառնո ամրոցը — Ս. Ա.) դոնովում էր Այրարատ նահանգի Մազազ և Ոստան գավառները միմյանցից բաժանող Գեղա լեռան մի ոստի վրա» (Մուր., III, էջ 7)։ «Դու չես ուզում հաշտվել քո ծերուբյան հետ, իսկ նա եկել արդեն տիրապետել է քեզ» (ԱՍ, ՈՄ, էջ 100)։*

Այս օրինակներից յուրաքանչյուրի մեջ միևնույն առարկան ցույց է տրված և՛ դոյականով, և՛ դերանունով։ Ինչպես տեսնում ենք, նախադասություններից յուրաքանչյուրի մեջ խոսվում է տարբեր անձանց ու առարկաների մասին, և հանձինս ընդգծված դոյականների (Սոնա, Գնթունի, Վասակ, Քալի, Գառնո ամրոց, ծերուբյուն) մենք ունենք այդ առարկաների կամ առարկայական հասկացությյան անուններ, որոնց տարբերակված որոշակի իմաստի պատճառով չի կարելի մեկը փոխարինել մյուսով։ Մինչդեռ այդ միանգամայն տարբեր առարկաները ցույց են տրված միևնույն նա դերանունով. ավելացնենք, որ այդ մեկ դերանունը կարող է ցույց

տալ ոչ միայն նշված, այլև առհասարակ բոլոր առարկաներն ու երևույթները, որոնց անվանումը, սակայն կատարվում է հազարավոր դռյականներով,

Աշխատությունն օրինակներով չծանրաբեռնելու համար անհրաժեշտ չենք համարում բերել առարկա ցույց տվող նաև մյուս դերանունների օրինակներ ու մեկնաբանել դրանք։ Վերոհիշյալից էլ որոշակի երևում է, որ առարկա ցույց տվող դերանունները, ի տարբերություն դռյականների, ունեն առարկայի ու երևույթների ընդհանուր, չտարբերակված իմաստ։

Ածականներին հարաբերակից են համարվում այս, այդ, այն (երբ գրվում են դռյականի վրա), այսպիսի, այդպիսի, այնպիսի, նույնպիսի, որպիսի, ինչպիսի, նույն, միևնույն և նման դերանունները։ Այդ հարաբերակցությամբ հանդերձ նշված և նման դերանունները էապես տարբերվում են ածականներից։ Առարկաների որպիսությունն ցույց տվող դերանունները ցույց են տալիս հատկանիշը ամենաընդհանուր կերպով, առանց դրանց տարբերակման։ Այսպես, միևնույն այսպիսի դերանունով կարելի է ցույց տալ բոլորովին տարբեր հատկանիշներ՝ մեծ, ավելի մեծ, ամենամեծ, փոքր, ավելի փոքր, ամենափոքր, ծանր, բարձր, գեղեցիկ, տգեղ, ազնիվ, նիհար, չաղ, երկաթե, փայտե, դաշտային, մարդկային և այլն։

Այս ածականներից յուրաքանչյուրը և առհասարակ յուրաքանչյուր ածական ցույց է տալիս առարկայի որևէ հատկանիշ և որոշակի հատկանիշի անուն է, որի պատճառով էլ ամեն մի ածական գործածվում է իր՝ մյուսից տարբեր իմաստով։

Մինչդեռ, ինչպես ասվել է վերևում, առարկայի հատկանիշ ցույց տվող դերանուններից յուրաքանչյուրը կարող է գործածվել ամենատարբեր հատկանիշներ ցույց տալու համար։ Այդ դերանուններից յուրաքանչյուրի իմաստն այնքան է ընդհանուր, որ դրա ցույց տված հատկանիշը կարող է արտահայտվել և՛ հարաբերական, և՛ որակական ածականներով,

ըստ որում վերջիններիս համեմատության տարբեր աստիճաններով։

Ավելին, քննարկվող դերանուններով կարող են ցույց տրվել այնպիսի հատկանիշներ, որոնք կարող են արտահայտվել ոչ միայն ածականներով, այլև ուրիշ խոսքի մասերով, բառակապակցություններով, նույնիսկ նախադասություններով։ Օր. նա խոզ բնավորություն ունի. այդպիսի բնավորության պատճառով չի սիրվում շրջապատի կողմից։

«Ինքն էլ, որ գնդի հրամանատարն է, ծանոթ է երկյուղի զգացումին։ Զինվորներից շատերի մտքով գուցե չի էլ անցնում այդպիսի բան» (ՀՔ, ՄՏՋ, էջ 320)։ «Լավ է, երբ ամեն մեկը կարծում է, թե ուրիշն ազատ է իր ունեցած թուլություններից։ Եվ իրական հերոսն այն մարդն է, որ կարողանում է կամքի լարումով լռեցնել թուլություն ծնող զգացումները և կարողանում է չմոլորվել իր պարտականությունները կատարելու ժամանակ։ Այդպիսի մարդկանց դիտակցությունը չի մթագնվի» (ն. տ.)։

Այս նախադասությունների մեջ այդպիսի դերանունը այնպիսի հատկանիշներ է ցույց տալիս, որոնք որևէ ածականով արտահայտվել չեն կարող՝ ճշտորեն և առանց ազճատման պահպանելով այն հատկանիշների իմաստը, որ մատնացույց է անում այդ դերանունը այս օրինակներում։

Սակայն, եթե համեմատենք դեպս այդպիսի և նման դերանունների ցույց տված հատկանիշները երբեմն գուցե և հաճախ կարելի է արտահայտել ածականով, ապա կան այնպիսի դերանուններ, որոնք իրենց իմաստով, լեզվի մեջ կատարած իրենց դերով բոլորովին հեռու են ածականներից։ Այդպիսի դերանուններից են՝ այս, այդ, այն, նույն, մյուս և այլն։

Օր. Այս շենքը նոր են կառուցել, իսկ մյուս շենքը՝ մի քանի տարի առաջ։ Այդ նույն բանը ես շատ եմ լսել. վերջերս էլ այդ մասին ինձ պատմեց ոմն Գրիգոր։ Այս ընդգծված դերանունները շատ հեռու են ածականների թեկուզ և ընդհանուր իմաստն արտահայտելուց։

Թվականներից տարբեր են դրանց հարաբերակից դերանունները: Եթե թվական անունը որևէ թիվ է արտահայտում, ապա համապատասխան դերանուններն արտահայտում են ֆանակի ընդհանուր գաղափար: Օրինակ, քանակ ցույց տվող յուրաքանչյուր թվականի տակ ըստ անհրաժեշտության և պահանջի կարելի է հասկանալ ամեն մի թիվ: Այսպես, «Գրիգորն այսքան գիրք գնեց» նախադասության մեջ այսքան դերանունը արտահայտում է քանակի ընդհանուր գաղափար. նա ունի քանակի չտարբերակված իմաստ: Այդ դերանունով խոսողը կարող է նկատի ունենալ 2, 3, 4..... 100..... 500..... 1000 և այլ թվեր, բայց թե հատկապես ինչ թիվ նկատի ունի, դա դերանունից չի կարելի հասկանալ: Ավելին, թվականներին հարաբերակից դերանունները միայն թվի, քանակի ընդհանուր գաղափար չեն արտահայտում, այլև չափի ընդհանուր, չտարբերակված գաղափար: Այդպիսի իմաստ նրանք ունենում են թե՛ գոյականների և թե՛ մանավանդ ածականների ու բայերի վրա դրվելիս:

Օրինակներ. «Վարերն այնքան ուժ չունեին, որ տաքացնեին Շուշանի կմախքացած մարմինը» (Ն.-Դ., I, էջ 199): «Անցյալի հիշողությունը որքան դառն, նույնքան և քաղցր է» (Ն. տ., էջ 26): «Քաղաքապետի մոլեռանդ աղջիկը չէր կարող հանդուրժել, որ մի հայ աղջիկ այսքան հարգանք վայելի և հետաքրքրության արժանանա» (ՀՀ, Բ, էջ 29): «Այդ անցքը այնքան էր նեղ... որ երկու տների վերնահարկի դեպի դուրս կարկառված պատշգամբավոր սենյակները գրեթե իրար էին կպած» (Ն. տ., էջ 32):

Ինչպես տեսնում ենք, քանակ ցույց տվող թվականները ոչ միայն հարաբերակից թվականներից տարբեր իմաստ են արտահայտում, այլև այդ հարաբերակցությունը ղժալի վերապահությամբ պետք է ընդունել:

Մակբայների համեմատությամբ նույնպիսի տարբերություններ ունեն դրանց հարաբերակից դերանունները (այսպես, այդպես և այլն): Բերենք միայն մեկ օրինակ. «Նա այսպես է քայլում» նախադասության մեջ այսպես դերանու-

նը կարող է նշանակել «արագ», «դանդաղ», «հևալով», «կաղալով», «գլուխը կախ», «օրորվելով» և այլն, որոնց մեծ մասը մակբայներ էլ չեն նույնիսկ:

Դերանունների՝ այլ խոսքի մասերի հետ ունեցած հարաբերակցության քննարկումը հանգեցնում է հետևյալ եզրակացությանը.

1. Այդ հարաբերակցությունը պետք է ընդունել պայմանական վերապահությամբ:

2. Նույնիսկ հարաբերակցության առկայության դեպքում դերանունները չի կարելի նույնացնել այլ խոսքի մասերի պատկանող բառերի հետ, դասել այդ խոսքի մասերի շարքը, քանի որ նրանք վերջիններս ունեն տարբերակված իմաստ, որի պատճառով էլ անվանում են առարկան, հատկանիշը, սակայն դերանունների իմաստը տարբերակված չէ, այլ ընդհանուր կամ համընդհանուր, որի պատճառով էլ նրանք ոչ թե անվանում, այլ ցույց են տալիս, ակնարկում են առարկան, հատկանիշը ընդհանուր կերպով:

Սակայն, իհարկե, լեզվի մեջ ընդհանուր իմաստը միայն դերանուններին չէ հատուկ: Բառերն ընդհանրապես խոսքից դուրս ունեն ընդհանուր իմաստ, որը միայն խոսքի մեջ կարող է կոնկրետանալ: Այսպես, խոսքից դուրս վերցրած գիրք, բաղամ, սեղան բառերը ցույց չեն տալիս որևէ գիրք, որևէ բաղաք, որևէ սեղան, այլ ցույց են տալիս գիրք, բաղամ, սեղան ընդհանրապես: Սակայն դրանց այդ ընդհանուր իմաստը արմատապես տարբերվում է, օրինակ, նա դերանվան ընդհանուր իմաստից: Տարբերությունն այն է, որ այդ դոյականները առարկանների տեսակների անուններ են, հետևապես և նրանց ընդհանուր իմաստը տարածվում է միայն տվյալ տեսակի առարկաների վրա: Ուրեմն՝ նրանք ունեն տարբերակված իմաստ: Իսկ նա դերանունը ունի համընդհանուր իմաստ, նա ցույց է տալիս, ինչպես տեսանք, առարկա ընդհանուր կերպով, առանց անվանելու առարկան, առանց ակնարկելու նրա որևէ տեսակը:

Դերանվան խոսքի մասային առանձնահատկությունները

ավելի խոր ըմբռնելու համար պետք է նկատի ունենալ նաև հետևյալը։ Մի կողմից՝ մի քանի դերանունների ընդհանուր իմաստը մյուս դերանունների համեմատությամբ որոշ չափով սահմանափակ է, իսկ մյուս կողմից՝ կան գոյականներ, որոնք մյուս գոյականների համեմատությամբ ավելի ընդհանուր իմաստ ունեն։ Դրա հետևանքը լինում է այն, որ մի քանի գոյականներ իրենց ընդհանուր իմաստով մրցում են որոշ դերանունների հետ։ Այսպես, օրինակ, ոմն, ոմանք դերանունների ընդհանուր իմաստը տարածվում է միայն անձանց վրա, մյուս կողմից էլ, ասենք, մարդ գոյականը ցույց է տալիս նույն օբյեկտը ընդհանուր կերպով։ Եթե այս բառերը իրենց ընդհանուր իմաստով մրցում են իրար հետ, ապա ինչո՞վ են տարբերվում իրարից։ Նախքան այս հարցի բուն պատասխանին անցնելը, նկատենք, որ, նախ, այդպիսի գոյականների քանակը շատ քիչ է, մինչդեռ այդ հատկանիշը հատուկ է բոլոր դերանուններին, առանց բացառության։ Այնուհետև, այդպիսի ընդհանուր իմաստ ունեցող գոյականները սովորաբար վերածվում են կամ ժամանակի ընթացքում կարող են վերածվել դերանունների։ Օրինակ, գերմաներենում mann «մարդ» գոյականից առաջացել է man անորոշ դերանունը։ Ռուսերենում человек [1], հայերենում մարդ [2] բառերը դործածվում են նաև անորոշ դերանվան իմաստով։

Մարդ է գալիս, գնա դուրը բաց։ Մարդ ընկավ ծովը։ Դուրը բացի, մարդ չկար։ Հայերենում բան գոյականը, որ մի ժամանակ ավելի տարբերակված իմաստ ուներ (հինգերորդ դարում գործածվում էր գերազանցապես «խոսք», «վեդու», «բարբառ», «ստեղծագործության մաս» «գլուխ», «գրվածք» իմաստներով), այժմ գրալի չափով մոտեցել է անորոշ դերանվան, այդպիսի տարբերակված իմաստներից մեծ մասամբ զրկվելու և ավելի ընդհանուր իմաստ ձեռք բերելու

[1] Грамматика русского языка, ч. I, под. ред. В. Виноградова и др., М., 1952, стр. 468

[2] Ստ. Մալխասյանց, *Հայերեն բացատրական բառարան, հտ. 3, Երևան, 1944, էջ 273։*

հետևանքով։ Օր. Այստեղ մի բան կա, չեմ հասկանում։ Բան չկա կանգնի կմոռացվի։ Մի բան ունի՞ք ուտելու։ Մի բաճի նման՞ է[1]։

Այս ամենը ցույց են տալիս, որ թեև գոյականներն էլ ունեն ընդհանուր իմաստ, բայց նրանց այդ իմաստը տարբեր է դերանուններին յուրահատուկ ընդհանուր կամ համընդհանուր իմաստից, և որ համընդհանուր իմաստը դերանվան առանձնահատկությունն է, թեև մի քանի գոյականների իմաստը մյուսների համեմատությամբ ավելի ընդհանուր է։

Այժմ անցնենք առաջադրված հարցին։

Առաջին իսկ հայացքից երևում է, որ ամն դերանունը և մարդ գոյականը, թեև հավասար չափով ունեն ընդհանուր իմաստ, բայց դրանց միջև կա նաև լուրջ տարբերություն, որ դալիս է դերանունների, ի տարբերություն գոյականների ու այլ խոսքի մասերի, ունեցած առանձնահատկություններից։ Այս հարցի մանրամասն քննարկումը թողնելով աշխատության երրորդ գլխին՝ այստեղ միայն համառոտակի կծանոթանանք նրան։ Քննենք որևէ դերանվան (դու) և որևէ գոյականի (բժիշկ) տարբերությունն այս տեսակետից։ Այս երկու բառերի իմաստային տարբերությունը ոչ միայն դերանվան չտարբերակված, ընդհանուր և գոյականի տարբերակված իմաստի մեջ է, այլև նրանում, որ դու դերանունը առարկան ցույց է տալիս որոշ հարաբերությամբ, այն է՝ երբ խոսողը դիմում է որևէ մեկին, և վերջինս դիտվում իբրև խոսակից։ Մինչդեռ բժիշկ գոյականը, ինչպես և առհասարակ գոյականները այդպիսի հատկանիշ չունեն։ Այդ մասնագիտությունն ունեցող յուրաքանչյուր մարդ, բոլոր դեպքերում (անկախ՝ խոսող է, խոսակից, թե մի երրորդ, անկախ այլ հարաբերություններից) կարող է անվանվել բժիշկ գոյականով։ Սա դերանվան տարբերությունը, ասենք, գիրք գոյականից ոչ միայն այն է, որ գիրք-ը ցույց է տալիս որոշակի առարկա, իսկ սա-ն՝ առարկա համընդհանուր կերպով, այլև այն,

[1] Ստ. Մալխասյանց, Հայերեն բացատրական բառարան, հտ. I, Երևան, 1944, էջ 324։

դրվելով գոյականի վրա, չեն ունենում ոչ առարկայի, ոչ որպիսության, ոչ չափ ու քանակի իմաստ, այլ որևէ հարաբերությամբ մատնացույց են անում այն առարկան, որի անվան վրա դրվում են դրանք։

Օրինակներ՝

«Այս հողերի մասին պիտի պատմի» (ՀՍ, ՄՏ, էջ 60)։ «Այս նոր տարին ահա մեր դալիքն էր երևակ» (Ն. տ., էջ 59)։ «Այն կողմը նայիր, այն կողմը, տեսնո՞ւմ ես տանիքն արդեն ծածկում են» (Ա.Ս, ՈՄ, էջ 32)։ «Մահից այն կողմ ահ չկա» (ՆՋ, Հատ., էջ 310)։

«Այգեգործի այս դանակովս կեռ,
Սև խաչը քերեցի Ռայխստագի պատից» (Ն. տ., էջ 103)։

Այդ գիրքը քո՞նն է։ «Այնտեղ ինձ սպասում են մեր մյուս երևիանները» (Ա.Ս, ՈՄ, էջ 105)։

Դերանունների այս կարևոր առանձնահատկության նույնիսկ համառոտ քննությունը ցույց է տալիս, թե որքան էական ու բնորոշ է այդ հատկանիշը դերանվան, որպես խոսքի մասի համար։ Այդ կարևորությունն են հաստատում վերոհիշյալ շարադրանքից բխող հետևյալ եզրակացությունները.

1. Բոլոր դերանուններին հատուկ է առարկան կամ հատկանիշը այս կամ այն հարաբերությամբ ցույց տալը. դերանվան մեջ առարկայի, հատկանիշի ընդհանուր իմաստը զուգորդված է որևէ հարաբերության իմաստի հետ և հենց վերջինիս միջոցով է, որ խոսքի մեջ կարող է կոնկրետանալ դերանվան ընդհանուր իմաստը, կամ այս կամ այն ձևով ակնարկվել դերանվան ցույց տված օբյեկտը։

2. Մի շարք դերանուններ հաճախ չեն էլ արտահայտում ո՛չ առարկայի, ո՛չ որպիսության, ո՛չ չափ ու քանակի, ո՛չ գործողության հատկանիշի իմաստ։ Հետևապես և դժվար է ասել, թե այդ դերանունները նման դեպքերում արտահայտում են դերանուններին հարաբերականից որևէ խոսքի մասի իմաստն ընդհանուր կերպով, բայց ինչպես բոլոր դերանուններին, այնպես էլ դրանց հատուկ է քննարկվող հատկանիշը, որը և

դրսևորվում է իբրև նրանց բնորոշ առանձնահատկությունն այդ դեպքում:

3. Քանի որ մի շարք դերանունների կողքին ունենք նրանց համապատասխան և նրանց չափ ընդհանուր իմաստ ունեցող գոյականներ, ուստի այս դեպքում ևս այդ դերանունների բնորոշ առանձնահատկությունը հանդիսանում է առարկան այս կամ այն հարաբերությամբ ցույց տալու հատկանիշը, ի տարբերություն համապատասխան գոյականների: Այստեղից միայն մեկ հետևություն կարելի է անել. ընդհանուր կամ չտարբերակված իմաստը դերանվան միակ առանձնահատկությունը չէ, այլ առանձնահատկություններից մեկը: Դերանվան, որպես խոսքի մասի, մյուս առանձնահատկությունը հանդիսանում է առարկան կամ հատկանիշը որևէ հարաբերությամբ ցույց տալը, այսինքն հարաբերության իմաստը:

Բայց ինչպես երևում է վերևում բերված օրինակներից և նրանց մեկնաբանություններից, դերանուններին հատուկ են ոչ թե մեկ, այլ տարբեր տիպի հարաբերություններ: Արդյո՞ք տարբեր տեսակի հարաբերություններ ունենալը չի խանգարում, որ դա համարվի դերանվան խոսքի մասային ընդհանուր հատկանիշ: Ո՛չ, չի խանգարում, և դա բնական է. ընդհակառակը շատ տարօրինակ, անբնական և անհնարին կլիներ, որ բոլոր դերանունները, դերանվան բոլոր տեսակներն ունենային մեկ տիպի հարաբերություն: Տարբեր տեսակի հարաբերություններ ունենալը դերանվան որպես խոսքի մասի ընդհանուր հատկանիշ համարելիս նկատի ունենք ոչ թե հարաբերության այս կամ այն տեսակը առանձին վերցրած, այլ՝ հարաբերության հատկանիշը բոլոր դերանուններին հատուկ լինելը: Այստեղ մենք ունենք կոնկրետի և վերացականի, մասնավորի և ընդհանուրի փոխհարաբերություն: Երբ այդ համարում ենք դերանվան ընդհանուր հատկանիշ, վերանում ենք նրա կոնկրետ դրսևորումներից, նրանց տարբերություններից, բայց, իհարկե, դերանվան այդ ընդհանուր հատկանիշը գոյություն ունի հենց նրա կոնկրետ դրսևորումներում: Չէ՞ որ այդպիսի վերացում կատարում ենք, օրինակ, մակ-

բայի վերաբերյալ, երբ այն ճիշտ կերպով բնորոշում ենք որպես հատկանիշի հատկանիշ ցույց տվող խոսքի մաս, վերանալով այդ հատկանիշների այնպիսի տարբերություններից, ինչպիսիք են դործողության ձև, գործողության տեղ, գործողության ժամանակ, գործողության չափ ու քանակ։ Եթե դա հնարավոր է, իսկ դա իհարկե հնարավոր է ու ճիշտ, եթե հնարավոր է այն, որ մենք Աշոտին, նրա կարդացած գիրքը, այդ դրքի բովանդակությունը, դրանով արտահայտած գաղափարը, վերջինիս պատճառած հուզումն ու հիացմունքը համարում ենք նույն խոսքի մասին պատկանող բառեր, վերանալով նրանց միջև եղած ոչ փոքր տարբերություններից, ապա միանգամայն հնարավոր է և տրամաբանական, որ վերանանք դերանունների ցույց տված հարաբերությունների տարբերությունից և հենց հարաբերությունն ընդհանուր կերպով, հարաբերության հատկանիշ ունենալը դիտենք որպես դերանվան ընդհանուր, կարևոր հատկանիշ։

Դերանուններից բացի, հայերենում կան մի քանի բառեր, որոնք ունեն հարաբերության որոշ իմաստ։ Օր. առաջ, վերև, ներքև, առորոտ, որոնք հատկապես տարածական հարաբերություն են ցույց տալիս։ Սակայն այս փաստի առկայությունը բոլորովին չի խանգարում, որ հարաբերության իմաստը համարվի դերանվան խոսքի մասային հատկանիշ, ինչպես մի քանի գոյականների և այլ բառերի՝ դերանուններին մոտեցող ընդհանուր իմաստը չի խանգարում, որ իմաստի ընդհանուր կամ համընդհանուր լինելը դիտվի իրրև դերանունների էական հատկանիշ։ Ինչո՞ւ։

Նախ, այս բառերի քանակը շատ փոքր է այն խոսքի մասի բառաքանակի համեմատությամբ, որի մեջ մտնում են դրանք, մինչդեռ բոլոր դերանուններին հատուկ է հարաբերության իմաստը։ Ուրեմն այդ հատկանիշը, եթե դերանունների մեջ առկա է իրրև տիպական, բնորոշ, ապա այլ խոսքի մաս կարող է ունենալ իրրև մասնակի իրողություն։

Սակայն բանը միայն մասնակիության կամ քանակական կողմի մեջ չէ, այլ իրողության բուն էության մեջ։ Հարաբե-

րության իմաստը, իր տարբեր դրսևորումներով հանդերձ, դերանունների մեջ արտահայտվում է յուրահատուկ կերպով։ Դերանունների հարաբերության իմաստը այս կամ այն կերպ կապվում է ցույց տրվող առարկայի կամ հատկանիշի նկատմամբ խոսողի ունեցած հարաբերության կամ վերաբերմունքի հետ։ Այսպես, ցուցական սա դերանվան իմաստը չի կարելի պատկերացնել առանց հաշվի առնելու նրանով ցույց տրվող առարկայի հարաբերությունը խոսողի նկատմամբ կամ վերջինիս հարաբերությունը նրա նկատմամբ, քանի որ սա-ն ցույց է տալիս խոսողի մոտ գտնվող կամ իրեն այդպիսին մտածված առարկա։ Նույնը և այստեղ, այսպիսի և այլն։ Դա դերանվան իմաստը և գործածությունը նույնպես կապ ունեն խոսողի հետ։ Այդ կապը թեև անուղղակի է, բայց շատ կարևոր է։ Նա ցույց է տալիս խոսակցի մոտ գտնվող առարկա, բայց խոսակիցը որպես այդպիսին է գիտակցվում խոսողի կողմից, իր՝ խոսողի նկատմամբ ունեցած հարաբերության տեսակետից, որը պայմանավորված է խոսողի՝ նրա նկատմամբ ունեցած հարաբերությամբ։

Նշենք, որ խոսողի այդ հարաբերությունը կամ վերաբերմունքն արտահայտվում է ոչ միայն անձնական և ցուցական դերանունների մեջ։ Առարկանները մասնական հարաբերությամբ ցույց տալը (որ հատուկ է անորոշ դերանուններին) չպայմանավորելով որոշակի իմաստ արտահայտող որևէ հարաբերության հետ, ստեղծում է խոսողի յուրահատուկ վերաբերմունք՝ դերանունով ցույց տրվող օբյեկտի նկատմամբ. խոսողն այն ցույց է տալիս անորոշ ձևով։ Սուբյեկտիվ մոմենտն այստեղ այն է, որ անորոշ է ոչ թե օբյեկտը, այլ խոսողի վերաբերմունքը։ Հանրական հարաբերությամբ արտահայտվում է այլ վերաբերմունք, այն է՝ դերանվան մեջ արտահայտվում է օբյեկտի՝ խոսողին հայտնի, ծանոթ լինելը, և այլն։ Այս տեսակետից զգալի յուրահատկություն ունեն փոխադարձ դերանունները։ Այսպիսով՝ կարելի է ասել, որ դերանունների ունեցած հարաբերության իմաստով ընդհանուր առմամբ արտահայտվում է նաև խոսողի հարաբերությունը

կամ վերաբերմունքը ցույց տվող առարկայի, հատկանիշի նկատմամբ:

Մինչդեռ վերևում բերված և մի քանի այլ բառերի հարաբերության հատկանիշը բոլորովին այլ բնույթ ունի: Օր. լեռան ստորոտում արածում է կոլտնտեսության հոտը: Ճիշտ է, ստորոտ բառի մեջ կա հարաբերության որոշ իմաստ, քանի որ ստորոտը որպես այդպիսին է դիտակցվում լեռան, բարձունքի համեմատությամբ, բայց նա աշխարհագրական դիրքի անվանում է, որի մեջ խոսողի հարաբերությունը որևէ դեր չի խաղում: Բոլոր ստորոտները (և առհասարակ առարկաները) կարող են ցույց տրվել միևնույն դերանունով, իսկ միևնույն ստորոտը կամ առարկան՝ տարբեր դերանուններով: Նվ այս ուշագրավ իրողության պատճառը դերանուններին հատուկ հարաբերության հատկանիշն է:

Այստեղ կարևոր է հաշվի առնել նաև այն, որ թեև յուրաքանչյուր խոսքի մաս ունի մյուսից տարբեր հատկանիշ, բայց հնարավոր է, որ մի խոսքի մասի որոշ բառերի մեջ լինեն մի այլ խոսքի մասի հիմնական հատկանիշի որոշ մասնակի դրսևորումներ: Բերենք միայն մեկ օրինակ. մակբայի էական հատկանիշը համարվում է գործողության կամ հատկանիշի հատկանիշ ցույց տալը: Բայց որակական ածականները ևս կարող են ցույց տալ գործողության հատկանիշ: Խոսքի մասերի միջև անանցանելի անջրպետներ չկան: Հենց դրա արտահայտությունն ու դրա ապացույցն են փոխանցումները խոսքի մասերի միջև: Ավելին, հայտնի է, որ կան բառեր, որոնք հավասարապես ունեն տարբեր խոսքի մասերի հատկանիշներ և կարող են մտնել տարբեր խոսքի մասերի մեջ: Այսպես, այլ բառը և՛ դերանուն է (նա այլ դիրք էր ընդրել), և՛ շաղկապ (սա ոչ թե տեսար է, այլ՝ դիրք): Մինչև բառը և՛ կապ է (այստեղից մինչև հյուրանոց մեկ կիլոմետր է), և՛ շաղկապ (մինչև նա եկավ, մենք տեղ էինք հասել), մանուկ, երիտասարդ, աշխատավոր բառերը կարող են համարվել և՛ գոյական, և՛ ածական և այլն: Այնպես որ, մի քանի ոչ-դերանունների ունեցած որոշ հարաբերության իմաստը, իբրև

այդ հատկանիշի մասնակի ու յուրահատուկ արտահայտությունն, չի խանգարում, որ հարաբերության իմաստը, որ հատուկ է բոլոր դերանուններին՝ համարվի նրանց էական հատկանիշը։

Դերանունների որոշ տեսակների (հատկապես անձնական, ցուցական) հարաբերության իմաստը նկատել են անցյալի մի շարք լեզվաբաններ, բայց, ըստ երևույթին, դա համարել են մասնակի և ոչ խոսքի մասային կարևոր հատկանիշ, որի պատճառով էլ դերանունը բնորոշել են փոխարինման ֆունկցիայով։ Այդ հատկանիշը որոշ ուշադրության է արժանացել «Грамматика русского языка» (հմ. 1, 1952 թ.) աշխատության մեջ, որտեղ, ինչպես տեսանք վերևում, ասվում է, որ դերանունները անձերը, առարկաները, հատկանիշները կամ թվերը ցույց են տալիս այս կամ այն ձևով։

Այս հատկանիշի կարևորությունը ընդգծվում է ոչ միայն նրանով, որ նա հատուկ է բոլոր դերանուններին, այլև նրանով, որ նա սերտորեն կապված է դերանվան մյուս հատկանիշի՝ համընդհանուր իմաստի հետ։ Եթե դերանունները չեն անվանում առարկան, հատկանիշը, այլ մատնացույց են անում կամ ակնարկում են այն, ապա այդ ակնարկումը պետք է կատարվի որևէ ձևով, այլ կերպ հնարավոր էլ չէ։ Դերանվան այս երկու հատկանիշները՝ ընդհանուր իմաստը և հարաբերության հատկանիշը, հանդես են գալիս միասնաբար, երկուսն էլ կարևոր են, ուստի՝ դերանունն իրավ խոսքի մաս պետք է բնորոշել այդ երկու հատկանիշներով։

Այսպիսով՝ դերանուն կոչվում են այն բառերը, որոնք ունենալով ընդհանուր, չտարբերակված իմաստ, ոչ թե անվանում են առարկան, հատկանիշը, այլ դրանք ցույց են տալիս կամ ակնարկում են որևէ հարաբերությամբ, որևէ ձևով։

ԳԼՈՒԽ ԵՐԿՐՈՐԴ

ԱՐԴԻ ՀԱՅԵՐԵՆԻ ԴԵՐԱՆՈՒՆՆԵՐԸ ՀԱՅ ՔԵՐԱԿԱՆՆԵՐԻ ԴՆԱՀԱՏՄԱՄԲ

Դերանունը որպես խոսքի մաս, ինչպես և դերանվան շատ տեսակների առանձնահատկությունները համարյա նույնն են թե՛ դրաբարում և թե՛ ժամանակակից հայերենում։ Ուրեմն, բնական է, որ աշխարհաբարի քերականները արդի հայերենի դերանունների ճանաչման և սահմանման ժամանակ պետք է հաշվի առնեին դրաբարյան դերանունների ճանաչումը։ Այդ պատճառով անհրաժեշտ ենք համարում համառոտակի կանգ առնել նախ դրաբարյան դերանունների ճանաչման հարցի վրա, հատկապես մինչև աշխարհաբարի քերականությունն ուսումնասիրվելը։

Հայ առաջին քերականները, որոնք հայտնի են որպես Դիոնիսիոս Թրակացու քերականության մեկնիչներ, հիմնականում հանդիսացել են վերջինիս դրույթները հայերենի վրա տարածողներ։ Սակայն, իհարկե, նրանք դրսևորել են և զգալի ինքնուրույնություն։ Այդ վերաբերում է նաև դերանունների նկատմամբ նրանց մոտեցմանը։ Դ. Թրակացին դերանունը սահմանում է այսպես. «Դերանունութիւն է բառ փոխանակ անուան առեալ, որոշեալ դիմաց յայտական»[1]։ Դերանունը նույն կերպ են սահմանում Անանունը և Մովսես Քերդողը։ «Դերանուն փոխանակ անուան ասի եւ է բառ աւրինակի դիմացն առաջնոյ ես, դու, ձա, եւ այս ըստ այսու

[1] Н. Адонц. Дионисий Фракийский и армянские толкователи. Петроград, 1915 стр. 27.

ատացեալքն իմ, fn, ընդ» [1]: *Անանունի այս սահմանումից համարյա չի տարբերվում Մովսես Քերդողի սահմանումը. «Դերանուն փոխանակ անուան ասի եւ է ըստ աւրինակի դիմացն նախկնի՝ ես դու նա. եւ երկիցս այս ատացեալքն՝ իմ, fn, ընդ»* [2]:

Բավականին հետաքրքրական է Դավթի՝ դերանվան սահմանումն ու բացատրությունը: «Ես է դերանունութիւն փոխանունութիւն եւ թերանուն, եւ հասարակ անուն. միով՝ իբր փոխանակ տիրականին, եւ միւսդ՝ զի ոչ զկուցանէ զիակն իբրև անուն, եւ երրորդն՝ հաւասարապէս ի վերայ արուի եւ իգի եւ կատարելումն եւ մանկան լինի» [3]:

Ն. Ադոնցը նկատի ունենալով, որ Դավթի այս սահմանումը նույնը չէ Դ. Թրակացու տված սահմանման հետ, գրում է. «Եթե այդ բառերը իսկապես պատկանում են Դավթին, ապա անկասկած նա չէր կարող հանդիսանալ Դիոնիսիոսի թարգմանության հեղինակ, քանի որ նա համոզված չէ դերանուն բառի ծագման հարցում և հնարավոր է համարում բխեցնել թերանուն բառից» [4]: Անհրաժեշտ ենք համարում նշել, որ, ինչպես գրում է Ն. Ադոնցը, Դավթի մեկնությունը, բացի այդ յուրահատկությունից, այլ յուրահատկություններ չունի:

Կարծում ենք, որ Ադոնցը Դավթի այդ սահմանումից ճիշտ եզրակացության չի հանգում: Նա կասկածի տակ է առնում Դավթի՝ Թրակացու թարգմանիչ լինելու իրողությունը այն բանի հիման վրա, թե Դավիթը իբր չգիտե դերանուն բառի ծագումը, այսինքն այն, որ դերանուն բառը նշանակում է անվան փոխարեն դրվող: Սակայն Ադոնցը սխալվում է: Չէ՞ որ Դավիթն ասում է. «Ես է դերանունութիւն փոխանունութիւն»... Մի՞թե սա այն չէ, ինչ որ Դ. Թրակացին էր ասում.

---

[1] Н. Адонц, Дионисий Фракийский и армянские толкователи, Петроград, 1915, стр. 150.

[2] *Նույն տեղում, էջ 175:*

[3] *Նույն տեղում, էջ 116:*

[4] *Նույն տեղում, էջ* CLXXVI:

«Դերանունութիւն է բառ փոխանակ անուան առեալ...»: Ինչպես տեսնում ենք, Դավիթը դիտեր դերանուն բառի ծագումը, այսինքն դիտեր այն, ինչ որ ասել էր Դ. Թրակացին այդ մասին, որը և նա կրկնում է համարյա բառացի: Սակայն Դավիթը դերանվան հատկանիշը դրանով չի սահմանափակում և բացի անվան փոխարեն դրվելուց, նա դերանունը համարում է նաև «բերանուն եւ հասարակ անուն»: Սա նշանակում է, որ Դավիթը բերանուն բառը ներկայացնում է ոչ թե իբրև դերանուն բառի բացատրություն՝ սատուգաբանական տեսակետից, այլ իբրև դերանուն խոսքի մասի մի այլ հատկանիշ ցույց տվող տերմին, դեր–անունից բացի:

Այսպիսով, Դավիթը դերանունը որպես խոսքի մաս բնորոշում է հետևյալ հատկանիշներով.

1. Իբրև անվան փոխարեն գործածվող.
2. Իբրև բերանուն.
3. Իբրև հասարակ անուն:

Դավիթը հանձինս դերանվան այս վերջին երկու հատկանիշների, դերանվան ճանաչումը լրացնում է նրա իմաստը բացահայտող հատկանիշներով: «Բերանուն» որակումով նա նկատի ունի, որ դերանունը «ոչ զկոչուցանէ զիսկն իբրև զանուն», այսինքն, որ դերանունը չի անվանում իրը, անձը: Դերանունը իբրև «հասարակ անուն» որակելով, նա նկատի ունի, որ դերանունը «հատասարապէս ի վերայ արուի եւ իգի եւ կատարելումն եւ մանկան առեալ լինի»: Այս հատկանիշը սերտորեն կապված է երկրորդի հետ և դերանվան ընդհանուր իմաստի նախնական ըմբռնման արտահայտություն է:

Ինչպես տեսնում ենք, Դավիթը այս հարցում չի եղել տրադիցիոն ճանաչման սոսկ կրկնողը: Նա հաշվի առնելով և ընդունելով եղածը, առաջ է մղում դերանվան, իբրև խոսքի մասի, ճանաչումը, դրանով իսկ այդ հարցում մի պլուս բարձր կանգնելով նախորդ քերականներից:

---

[1] Н. Адонц, Дионисий Фракийский и армянские толкователя, Петроград, 1915, стр. 27.

Հիմնականում Դավթի պես է սահմանում դերանունը նաև Ստեփանոս Սյունեցին. «Դերանունդ Բերանուն ասուպաբանի եւ տիրանուն որ է բառ ինչ փոխանակ անուան առնալ ի վերայ ամենայն էակացս։ Եւ են բառքն այսորիկ, ես, դու, սա, դա, ես եւ յոգնականի են այս. մեք, դուք, սոքա, դոքա, ես-քա. իմ, ք, սորա, դորա, ես-րա, եւ մեր, ձեր, սոցա, դոցա. ես-ցա. եւ այս, այդ, այն եւ այսք, այդք, այնք եւ ամենայնք այսպիսիք, որք զդէմս ուրումն յայտնեն յառնէն, այլ զիրն ոչ յայտնեն, եթէ զմարդոյ դումիբէ առնն եւ եթէ զայլոց ուրուք չէակացս» [1]։

Հետագայում ևս հայ քերականները նույնությամբ կամ հիմնականում կրկնել են Բրակացուն։ Ոստի բավականանանք միայն մի քանիսին վկայակոչելով։ «Դերանուն է մասն բանին հոլովական, առնալ փոխանակ անուանն եւ զրացուցուշնալ անձն նշանակէ» [2]։ *Կղեմէս Գալանոսի մոտ դերանունների տեսակների ճանաչման հարցում որևէ առաջընթաց չենք տեսնում։ Ավելին. նա փաստորեն ապավաղել է հայերենի դերանունների տեսակների գոյություն ունեցող ճանաչումը։ Այսպես՝ այս, այդ, այն իմն, նույն, որ դերանունները նա համարում է հարաբերական, որովհետև դրանք «զիրն նախատապակալ յարաբերեն»* [3]։ *Ես, դու, ես, սա, դա դերանունները համարում է ցուցական, մերոյն, ձերոյն և նմանները՝ սպգական* [4]։

Հայ նշանավոր քերականներ Գ. Ալիսեիքյանը, Ա. Բագրատունին և ուրիշները հետևելով արդիգիտային, դերանունները դիտել են որպես ուրիշ բառերի փոխարինող խոսքի

---

[1] Н. Адонц Дионисий Фракийский и армянские толкователи, Петроград. 1915 стр 21*.

[2] Կղեմէս Գալանոս, *Քերականական եւ տրամաբանական ներածութիւն առ իմաստասիրութիւն շահելոյ, Հռոմ, 1645, էջ 49։*

[3] *Նույն տեղում։*

[4] *Նույն տեղում, էջ 50։*

մաս: «Երկրորդ մասն բանին կոչի՝ դերանուն, այսինքն բան ինչ որ փոխանակ անուան դրուի» [1]:

Գ. Ավետիքյանը ընդունում է դերանունների հետևյալ տեսակները [2]. էական *(անձնական)*, ցուցական՝ *սա, դա, նա, այս, այդ, այն, սոյն, դոյն, նոյն*, սեռացական՝ *իմ, մեր, քո, ձեր, իւր, իւրեանց, սորա, սոցա, դորա, դոցա, նորա, նոցա*, հարաբերական՝ *որ* կամ *սորա կրճատ ձևը՝ ո*:

Արսեն Բագրատունին կրկնում է դերանվան ընդունված սահմանումը. «Դերանուն և փոխանուն են բառք, որ դէմս կամ կարգ ինչ յայտ առնեն, և ի տեղի անուանց դնին առ ի չկրկնելոյ պայնս» [3]: Նա դերանունները բաժանում է երկու մասի՝ էական կամ դոյական և ածական [4]: Անձնական դերանունները Ա. Բագրատունու մոտ համարվում են դեմք ցույց տվող դերանուններ՝ ես, մեք, դու, դուք, իմն, իւր: Ցուցականները համարում է կարգ ցույց տվող դերանուններ, որոնցից *սա, դա, նա* դասում է դոյական դերանունների, իսկ *այս, այդ, այն, սոյն, դոյն, նոյն*՝ *ածական* դերանունների շարքը: Նա ևս հարաբերական համարում է *ո* և *որ*, իսկ *սեռացական իմ, ֆո, ֆոյ, մեր, ձեր, իւր* և *այլն*:

Միքայել Չամչյանը ևս դերանունն իրրև խոսքի մաս հանում է փոխարինման ֆունկցիայով [5]: Նրա մոտ դերանունների տեսակները հիմնականում նույնն են, ինչ որ նախորդ քերականների մոտ էր: Կան հետևյալ մասնակի շեղումները. նա էական դերանունների շարքն է դասում նաև միմեանց, իրեարց *դերանունները, որոնք, սակայն, փոխադարձ դերանուններ են*:

Այնուհետև դերանունների տեսակների շարքում Մ. Չամ-

1 Գ. Ալեքիբեան, *Քերականութիւն Հայկական, 1829, Վենետիկ, էջ 34*:

2 *Նույն տեղում, էջ 34—39*:

3 Ա. Բագրատունի, *Հայերէն քերականութիւն ի պէտս դարպացելոց, Վենետիկ, 1852, էջ 85*:

4 *Նույն տեղում, էջ 85—94*:

5 Միք. Չամչեան, *Քերականութիւն Հայկազեան լեզուի, 3-րդ տպագրութիւն, Շուշի, 1859, էջ 105*:

չյանը նշում է նաև դիմորոշական դերանունները, հանձինս ս, դ, ն հոդերի, ավելացնելով. «Սոքա թէպէտ ընդ դերանուանս դասին, բայց չի՛ն յատկապէս դերանուն. դի ո՛չ դնին փոխանակ անուան. բայց քանզի որոշին զդէմս բառից և լինին ևս սկզբունք կամ վերջագաս յորոց բղխեն ցուցական դերանունք, սա, դա, ևա, սոյն, դոյն, ևոյն, այս, այդ, այն, վասն այսորիկ դերանուանս վերաբերին»[1]: Հասկանալի է, որ հոդերը, թեև ծագումաբանական տեսակետից ընդհանրություն ունեն որոշ դերանունների հետ, բայց քանի որ նրանք ոչ թե բառեր են, այլ քերականական մասնիկներ, ուստի՝ նույնիսկ վերապահությամբ չի կարելի համարել դերանվան տեսակ:

Մենք համառոտակի շարադրեցինք դրաբարի մի քանի քերականների կարծիքները դերանունների վերաբերյալ: Մենք խուսափեցինք այդ տեսակետների հանգամանալից վերլուծումից, դրա համար անհրաժեշտ էր շոշափել դրաբարի դերանունների տեսակների, կազմի հարցերը: Քանի որ դա կլիներ շեղում աշխատության նպատակից, ուստի մենք միայն նպատակ ենք ունեցել ցույց տալ, թե դերանունների վերաբերյալ ինչ դիտական ժառանգություն են ստացել աշխարհաբարի քերականները:

1711 թ. հրատարակվում է Սկրտդերի «Արամեան լեզուին դանձ» աշխատությունը, որի մեջ հեղինակը տալիս է նաև աշխարհաբարի քերականության համառոտ ակնարկ: Սկրտդերը պահպանում է դերանվան տրադիցիոն ճանաչումը: Նա առաջին անգամ նշում է դերանվան այնպիսի տեսակներ, որոնք նախորդ քերականների մոտ չենք հանդիպում: Ահա հայերենի դերանունների տեսակները ըստ Սկրտդերի՝ անձնական, ցուցական, ստացական, հարաբերական, հարցական, անորոշ, փոխադարձ:

Ն. Աբովյանը դերանվան, որպես խոսքի մասի, ճանաչման հարցում հետևում է տրադիցիային, այսինքն նա ևս

[1] Միք. Ջամշեան, *Քերականութիւն հայկազեան լեզուի, 3-րդ տպագրութիւն, Շուշի, 1859, էջ 106:*

դերանունը դիտում է որպես փոխարինման ֆունկցիա կատարող խոսքի մաս: Սակայն դերանունների տեսակների ճանաչման հարցում նրա մոտ կան մի շարք յուրահատկություններ: Նա ընդունում է դերանունների հետևյալ տեսակները. էական, գոյական, ստացական, հարաբերական, աճուրդ, փոխադարձ: Նա չի տալիս դերանվան տեսակների բնորոշումները, հատկանիշները, այլ միայն թվարկում է: Էական դերանունների շարքում նա դնում է ոչ միայն ես, դու, նա, այլև սա, դա դերանունները [1]: Գոյական նա անվանում է ցուցական դերանունները՝ այս, այդ, այն, սոյն, դոյն, նոյն: Սրանց կողքին նա տալիս է նաև ես, էդ, լն ձևերը:

XIX դարի հայ նշանավոր քերական Արսեն Այտընյանը ևս ընդունում է դերանվան սրապիյիոն ճանաչումը: Նա գրում է. «Դերանուն կըսուի երկրորդ մասն — բանի՝ որ գոյական անունը շատ անգամ չկրկնելու համար անոր տեղը կը գրուի» [2]:

Թեև Ա. Այտընյանը դերանունը դիտում է իբրև գոյականի փոխարեն գործածվող խոսքի մաս, սակայն նա փորձում է բացահայտել դերանվան, որպես խոսքի մասի, սպեցիֆիկ առանձնահատկությունը: Նա ցույց է տվել դերանունների մի էական առանձնահատկություն, որը կարևոր նշանակություն է դերանունների ճիշտ ճանաչման հարցում: Ա. Այտընյանը գրում է. «Գոյականի կամ անուան եւ դերանուան իրարմէ տարբերութիւնն այն է, որ գոյականը բանին անունը կու տայ՝ առանց յայտնելու թէ ո՛րն է. իսկ դերանունը կը ցուցնէ թէ ո՛րն է՝ առանց իրի անունը տալու: Այսպես՝ ծառ, մարդ, ղաղաք անուններն են. ես, դուն, ասիկա դերանուն են» [3]:

Եվ իսկապես, ինչպես տեսանք նախորդ պլխում, գոյա-

---

1 *Տե՛ս* Ե. Աբովյան, *Երկերի լիակատար ժողովածու, հ. V, 1950, Երևան, էջ 129:*

2 Ա. Այտընեան, *Քննական քերականութիւն աշխարհաբար կամ արդի հայերէն լեզուի, Վիեննա, 1866, Բ, էջ 38:*

3 *Նույն տեղում:*

կանները անվանում են առարկաները, վերջիններիս անունների են հանդիսանում, իսկ դերանունները, քանի որ տարբերակված իմաստ չունեն, չեն անվանում, այլ միայն ցույց են տալիս, ակնարկում են օբյեկտը:

Սակայն դժբախտաբար ո՛չ ինքը՝ Ա. Այտընյանը, ո՛չ էլ հաջորդները չզարգացրին և չխորացրին դերանվան վերաբերյալ այդ արժեքավոր դիտողությունը: Ա. Այտընյանը դերանունների այդ հատկանիշը չդրեց նրանց ճանաչման հիմքում և նա մնաց դերանունների ճանաչման տրադիցիոն սահմաններում:

Ա. Այտընյանը դերանունները բաժանում է երկու խմբի՝ 1. գոյական դերանուն, 2. ածական դերանուն: Գոյական են՝ ես, դու, իմը, ասիկա, ատիկա (սուիկա), անիկա, որն որ, ով որ: Ածական են՝ այս, այդ, այն, իմ, ըո, իւր, մեր, ձեր, իրենց, որ: *Ինչպես տեսնում ենք*, Ա. Այտընյանի մոտ դերանվան սահմանման և դասակարգման մեջ նրանց ճանաչման (նրանց կազմի ճանաչման) միջև հակասություն կա: Դերանունը նա համարում է գոյականի փոխարեն գործածվող խոսքի մաս, իսկ մյուս կողմից՝ ընդունում է և՛ գոյական դերանուններ, և՛ ածական դերանուններ:

Ա. Այտընյանն ընդունում է դերանունների հետևյալ տեսակները՝ անձնական կամ էական, ցուցական, առացական, հարաբերական: Անհրաժեշտ ենք համարում մեջ բերել դերանունների տեսակների՝ Ա. Այտընյանի սահմանումները: «Անձնական դերանունները գոյական են, եւ անձին ով ըլլալը կը ցուցընեն»[1]: Նա անձնական է համարում նաև, դուն (դու), ինքն դերանունները: «Ցուցական դերանունները շատին մեջեն որոշ մեկը կը ցուցընեն: Ցուցականները՝ թեև միշտ երբորդ դեմքի բան մը կը ցուցընեն, սակայն երեք որոշ դեմք ունին. 1. այս, որ Ա դեմքին մերձաւոր բան մը կը ցուցընէ, 2. այդ, որ Բ դէմքին մերձաւոր բան մը կը ցուցընէ, 3. այն, որ Գ դէմքին մերձաւոր բան մը կը ցուցընէ»: Ըստ այս հա-

[1] Ա. Այտընեան. *Քննական քերականութիւն, աշխարհաբար կամ արդի Հայերէն լեզուի*, Վիեննա, 1866, Բ, էջ 41:

բարերութեան էլ նա ցուցական դերանունները բաժանում է համապատասխան երեք շարքերի:

Ա. Այտընեանը և մյուս քերականները սեռական դերանունն իբրև դերանվան առանձին տեսակ են ընդունել պրաբարի քերականութեան հետեւութեամբ: Հենց ինքը Ա. Այտընեանը նշում է, որ սեռականի ձևը իբրև ուղիղ ձև, իբրև սկզբնաձև գործածելը հատուկ է ոչ միայն անձնական դերանուններին, այլև ուրիշ դերանունների ու խոսքի մասերի: Սակայն նա, ինչպես և ուրիշ շատ քերականներ չեն ըմբռնել, որ քանի որ անձնական դերանունների սեռականի ձևը իբրև հոլովվող սկզբնաձև որևէ յատկահատկութեան և առավելութեան չունի մյուս բառերի սեռականի համեմատ, ուստի և հիմք չկա աշխարհաբարում դրանք դերանվան առանձին տեսակ համարելու, ինչպես որ դոյական անունների և շատ դերանունների սեռական հոլովը չի համարվում բառի առանձին տեսակ:

Հետեւելով արտիցիային, Ա. Այտընեանը հարաբերական է համարում միայն որ դերանունը, որը «քիչ մը յառաջ բառածը կը յարաբերէ կամ մէջ կը բերէ» [1]:

Ա. Այտընեանի մոտ դերանունների շարքից դուրս են մնում անորոշ, որոշյալ, հարցական, ժխտական, փոխադարձ դերանունները: Այս դերանունները նա դասում է անունների շարքը, իբրև մասնական կամ միջակ անուններ: «Մասնական կամ միջակ անուն կըսուին այն բառերն որ քանակութիւն մը կը նշանակեն առանց թիւն որոշելու» [2]: Նա այս անունների շարքն է դասում հետևյալ բառերը՝

սին, սմանք, ուրիշ, քանի մը,
ամենը, ամենքը,
իրար, մեկը միմեկ,
ի՞նչ, քանի՞, ո՞ր, ո՞վ,
ոչ ոք, ոչինչ:

1 Ա. Այտընեան, *Քննական քերականութիւն աշխարհաբար կամ արդի Հայերէն լեզուի*, Վիեննա, 1866, էջ 51:

2 Նույն տեղում, էջ 34:

Մեր անցյալի քերականները այս բառերը չէին մոցնում դերանունների շարքը, որովհետև դրանք չէին դիտավում իբրև փոխարինման ֆունկցիա կատարող բառեր, իսկ դերանունը ճանաչվում էր հենց այդ հատկանիշով:

Հայաստանը Ռուսաստանին միացնելու պատմական նշանակավոր ակտը խթան հանդիսացավ Հայաստանի տնտեսության և կուլտուրայի զարգացման: Զարգանում էր և հայ նոր դրական լեզուն: Հայոց լեզվի հասարակական կշիռը բարձրացավ հատկապես հայ ազգի կազմավորման շնորհիվ: Զգացվում էր աշխարհաբարի քերականության դասագրքեր կազմելու անհրաժեշտությունը: 1874 թ. հրատարակվեց ռուսական տրամաբանական դպրոցի ականավոր ներկայացուցիչ Բուսլաևի հետևորդ Ստեփանոս Պալասանյանի «Քերականություն մայրենի լեզվի» աշխատությունը, որը աշխարհաբարի քերականության առաջին դասագիրքն է: Այս աշխատությունն ունեցավ հինգ հրատարակություն: 1870 թ. հրատարակվել է նույն հեղինակի «Ընդհանուր տեսություն արևելյան նոր դրավոր լեզվի հայոց» աշխատությունը: Թեև աշխարհաբարի քերականությամբ մինչև Պալասանյանն էլ են զբաղվել (Սկրոդեր, Մխիթար Աբբա, Աբովյան և ուրիշներ), բայց Պալասանյանն առաջինն էր, որ տվեց աշխարհաբարի քերականության սիստեմատիկ դասընթացը: Արդի հայերենի քերականության շատ հարցեր առաջին անգամ լուծվեցին նրա կողմից:

Ս. Պալասանյանը ևս դերանունը որպես խոսքի մաս է ճանաչում նրանց փոխարինող ֆունկցիայով: «Այն բառերը, որոնք դոյական ու ածական անունների տեղ են դրվում, ասվում են դերանուն»[1]: Նույն բանն է գրում Պալասանյանը. «Ընդհանուր տեսության...» մեջ. «Դերանունը, ինչպես հայտնի է, վարվում է դոյական կամ ածական անվան տեղ»[2]:

---

1 Ս. Պալասանյան, *Քերականություն մայրենի լեզվի*, Թիֆլիս, 1906, էջ 72:

2 Ս. Պալասանյան, *Ընդհանուր տեսություն արևելյան նոր դրավոր լեզվի հայոց*, Թիֆլիս, 1870, էջ 54:

Դերանունների տեսակների վերաբերյալ Պալասանյանը մեկ կարծիք չի ունեցել: «Ընդհանուր տեսության» մեջ նա ընդունում է դերանունների հետևյալ տեսակները՝ էական կամ աննձական, ցուցական, ստացական, հարցական, հարաբերական, որոշյալ, անորոշ [1]: *Չնայած որ նա դերանունների տեսակների մեջ չի մտցրել, իրև առանձին տեսակ չի ճանաչել փոխադարձ դերանունները, բայց նկատել է այդ դերանունների յուրահատուկ «փոխադարձական» իմաստը: Այդ մասին նա գրում է. «Էական և ցուցական դերանունների հետ գործ են դրվում միմյանց կամ մեկզմեկու և իրարու փոխադարձական հոդնակի դերանունները. մենք միմյանց կամ մեկզմեկու սիրում ենք. դուք միմյանց (իրարու) օգնում եք, սրանք, դրանք, նրանք մեկզմեկով մխիթարվում են»* [2]:

Ստեփան Պալասանյանը իր «Քերականության մայրենի լեզվի» աշխատության մեջ այլևս որոշյալ դերանունները չհամարեց իրև առանձին տեսակ և միացրեց անորոշ դերանուններին: Ուրեմն նա քերականության դասագրքում ընդունում է դերանունների հետևյալ տեսակները. հարցական, աննձական, ցուցական, ստացական, հարաբերական, անորոշ [3]:

Այժմ տեսնենք, թե դերանունների առանձին տեսակները ինչպիսի լուսաբանում են ստացել Պալասանյանի մոտ: Նախ նշենք, որ Ս. Պալասանյանը դերանունների այս հիմնական ստորաբաժանումից բացի կատարում է նաև ուրիշ ստորաբաժանում: Բոլոր դերանունները նա բաժանում է երկու տեսակի՝ գոյական դերանուններ և ածական դերանուններ: Միայն ինչ դերանունը նա համարում է և՛ գոյական-դերանուն, և՛ ածական-դերանուն, քանի որ, ըստ նրա, այն գործածվում է և՛ գոյականի, և՛ ածականի տեղ:

---

1 Ս. Պալասանյան, *Ընդհանուր տեսություն արևելյան գրավոր լեզվի հայոց, Թիֆլիս, 1870, էջ 54:*

2 *Նույն տեղում:*

3 Ստ. Պալասանյան, *Քերականություն մայրենի լեզվի, Թիֆլիս, 1874: էջ 65:*

Տանք դերանունների տեսակների համառոտ բնութագիրը ըստ Պալասանյանի: «Հարցական դերանունները գործ են ածվում իբրև հարցմունք գոյական և ածական անունների տեղ» [1]: *Հարցական դերանունները նա բաժանում է երեք տեսակի. ա) գոյական. ո՞վ, բ) ածական. ո՞ր, որպիսի՞, գ) ածական և գոյական միանգամայն. ի՞նչ*[1]: *Անձնական դերանունները համարում է անձերի անունների փոխարեն դրվող դերանուններ: Հետաքրքրական է, որ Պալասանյանը 3-րդ դեմքի անձնական դերանուն համարում է իմը, իրանի, իսկ նա դերանունը և սրա հոդնակին համարում է ցուցական դերանուն: «Ընդհանուր տեսության» մեջ էլ նույն կերպ էր մոտենում այդ դերանուններին և միաժամանակ նշում, որ «երրորդ դեմքի էականների մաքով ավելի սովորական է գործ դնել ձա, ձոհա ցուցականները»* [2]:

Ցուցական դերանունների կազմը Պալասանյանի մոտ բավականին հարուստ է: Նա ցուցական է համարում նաև այսպիսի, այդպիսի, այնպիսի, այսքան, այդքան, այնքան, այսչափ և նմանները: Նախորդ քերականների պես հարաբերական համարում է միայն որ դերանունը, որը «գործ է դրվում երկրորդական նախադասությունը գլխավորի հետ կապելու և ցույց է տալիս այն առարկան, որ մեկնվում է երկրորդական նախադասությամբ» [3]:

Ս. Պալասանյանի մոտ դերանունների համեմատաբար ոչ հիշատ ճանաչված տեսակը անորոշ դերանուններն են: Նա իբրև անորոշ է ներկայացնում ոչ միայն անորոշ, այլև այն բոլոր դերանունները, որոնք դուրս են մնում դերանվան մյուս տեսակներից:

Ահա անորոշ դերանունների ցանկը ըստ Ս. Պալասանյանի. յուրաքանչյուր, ամեն, մյուս, ուրիշ, ոմանք, նույն, ոք-

---

1 Ստ. Պալասանյան, *Քերականություն մայրենի լեզվի*, Թիֆլիս, 1874, էջ 71:

2 Ս. Պալասանյան, *Ընդհանուր տեսություն արևելյան նոր գրավոր լեզվի հայոց*, էջ 54:

3 Ս. Պալասանյան, *Քերականություն մայրենի լեզվի*, 1906, էջ 72:

մին, իմմին, ոչինչ, միմյանց, մեկզմեկու, իրարու [1]: *Ինչպես տեսնում ենք, Պալասանյանը անորոշ դերանունների շարքն է դասել ոչ միայն անորոշ, այլև որոշյալ, ցուցական, ժխտական դերանուններ:*

Ս. Պալասանյանը, ինչպես տեսանք, ընդունում է նաև ստացական դերանուններ, բացատրելով, որ դրանք «կազմվում են էական դերանունների եզակի և հոգնակի սեռականներից» [2]: «Այս ձևով երեմն ցուցական դերանունների սեռականից էլ ստացականներ են կազմվում» [3]:

Դերանվան, որպես խոսքի մասի, տարաբնիկոն ոչ ճիշտ ճանաչումը, ինչպես և դերանունների դասդասման հիմունքի բացակայությունը Պալասանյանի մոտ (և ոչ միայն Պալասանյանի) պատճառ է հանդիսացել մի շարք սխալների և անճշտությունների: Սակայն պատմական տեսակետով նայելով, որոշակի տեսնում ենք, որ Պալասանյանը դերանունների ճանաչման հարցում բարձր էր կանգնած նախորդ քերականներից, ինչպես և մի շարք հարցերում հաջորդ որոշ քերականների համեմատությամբ նա ավելի ճիշտ էր:

Ս. Պալասանյանի հետևորդներն էին՝ Գր. Վանցյանը, Հ. Բումանյանը, Դպրեվանքը և ուրիշները: Այս քերականներից համեմատաբար որոշ ինքնուրույնություն ուներ Գ. Վանցյանը: Գ. Վանցյանը, ի տարբերություն Պալասանյանի, 3-րդ դեմքի անձնական դերանուն էր համարում ոչ միայն իմը, իրանք, այլև նա, նրանք [4]: Նա դերանունների առանձին տեսակ է համարում որոշյալ դերանունը (յուրաքանչյուր, բոլոր, ամեն, ամենայն, բոլորիքյան, ամեն մեկը) [5], որը Պալասանյանը ևս իր «Ընդհանուր տեսության» մեջ առան-

---

1 Ս. Պալասանյան, *Քերականության մայրենի լեզվի, 1906, էջ 73, 135, 144:*

2 Ս. Պալասանյան, *Ընդհանուր տեսության..., էջ 54:*

3 *Նույն տեղում, էջ 64:*

4 Գ. Վանցյան, *Դպրոցական քերականության, Թիֆլիս, տպագր. 2-րդ, էջ 32:*

5 *Նույն տեղում, էջ 33:*

ձին տեսակ էր համարում, իսկ քերականության դասագրքի մեջ դասեց անորոշ դերանունների շարքը։ Գր. Վանցյանի մոտ հանդիպում ենք դերանվան մի նոր տեսակի՝ քանակական դերանվան (որքան, որչափ, նույնքան, նույնչափ, այսքան, այսչափ)[1]։ Ինչպես տեսնում ենք, նա քանակական դերանունների մեջ է մտցնում հարցական—հարաբերական և ցուցական դերանունները, հենելով այն բանից, որ դրանք քանակ են ցույց տալիս։ Այդ հիմամբ դերանվան տեսակը որոշելը հակասում է Պալասանյանի քերականական սիստեմին, որը հիմնականում ընդունվել է Վանցյանի կողմից։ Այս հարցում Վանցյանը հետանում է Պալասանյանից և մոտենում Աբեղյանին։

Մ. Աբեղյանը իր քերականական սիստեմով յուրահատուկ տեղ է գրավում հայերենի քերականության պատմության մեջ։ Այդ յուրահատկությունը իր կնիքն է դրել նաև դերանունների ճանաչման վրա։ Պրոֆ. Մ. Աբեղյանը իր տարբեր աշխատություններում դերանունների նկատմամբ տարբեր մոտեցում է ցուցաբերել։ Նա սկզբում դերանունը ընդունեց իբրև առանձին խոսքի մաս (մեծ չափերով սահմանափակելով նրա ծավալը), իսկ հետագայում ժխտեց այդ, դերանունները մասնատեց և միացրեց այլ խոսքի մասերի։

Պրոֆ. Մ. Աբեղյանի կողմից դերանունների ճանաչումը ճիշտ հասկանալու և գնահատելու համար անհրաժեշտ է գոնե համառոտակի ծանոթանալ այն տեսական դրույթներին, որոնց հիման վրա Մ. Աբեղյանը կառուցել է իր քերականական սիստեմը։ Նա եղել է երիտքերականների և հոգեբանական դպրոցի ներկայացուցիչը մեզանում և իր քերականական սիստեմը կառուցել է նրանց տեսական դրույթներին համապատասխան։ Երիտքերականները (Բրուգման, Օստհոֆ, Դելբրյուկ, Հ. Պաուլ և ուրիշներ) և հոգեբանական դպրոցի ներկայացուցիչները (Շլայխեր, Պաուներնյա, Շախմատով և ուրիշներ) լեզվի ու նրա քերականական կառուցվածքի ուսումնա-

[1] Գ. Վանցյան. Դպրոցական քերականություն, Թիֆլիս, տպագր. 2-րդ, էջ 33։

սիրության հիմքում դնում էին կոնկրետ խոսքը, հոգեբանական-ֆիլոլոգիական ակտը (որը երիտքերականների մոտ զուգակցվում էր որոշ պատմական մոտեցումով)։ Կոնկրետ խոսքը ուսումնասիրության օբյեկտ դարձնելը, լեզվական փաստերն ու իրողությունները կոնկրետ խոսքի, նախադասության մեջ քննելն ու ճանաչելը շատ լեզվաբանների հասցրեց այնպես, որ նրանք շփոթեցին ձևաբանությունը շարահյուսության հետ, խախտեցին քերականության այդ երկու բաժինների սահմանները և շփոթություն առաջացրին «խոսքի մաս» ու «նախադասության անդամ» հասկացությունների միջև։ Նրանք բառերի տեսակները (բառի խոսքի մասային պատկանելությունը) փաստորեն որոշում էին ըստ նախադասության մեջ կատարած նրանց պաշտոնի, որի հետևանքով հաճախ խոսքի մասը նույնացնում էին նախադասության անդամի հետ։ «Ստուգաբանությունը շարահյուսության հետ միաձուլումը հանդիսանում է լեզվաբանության իդեալական նպատակը, և ոչ մի տեղ այն չի հասցվել այնպիսի կատարելության, ինչպես հենց Պոտեբնյայի աշխատություններում» [1]։ *Ի բավարարումն լեզվաբանության այդ «իդեալական նպատակի» և պահանջի, Դ. Կուդրյավսկին, ինչպես տեսանք վերևում, բացարձակապես նույնացնում է խոսքի մասը նախադասության անդամի հետ և հարցը լուծում հօդուտ վերջինիս։ «Այդ երկու քերականական կատեգորիաների (խոսքի մաս և նախադասության անդամ — Ս. Ա.) տարբերակման անհնարինությունը բխում է նրանից, որ խոսքը միշտ կազմվում է նախադասություններից, և առանց նախադասությունների խոսք չկա։ Այդ պատճառով յուրաքանչյուր խոսքի մաս անպայման պետք է լինի նախադասության անդամ և ընդհակառակը»* [2]։ *Առաջնորդվելով տեսական նման դրույթներով,*

[1] Овсянико-Куликовский. А. А. Потебня как языковед-мыслитель, Киев, 1893, стр. 25.

[2] Д. Кудрявский, Части предложения и части речи (Энциклопедический словарь Брокгауза и Ефрона, т. XXXIII, 1903, стр. 407).

Մ. Աբեղյանը նույնպես չէր սահմանազատում խոսքի մասը նախադասության անդամից, որոնք նրա մոտ հաճախ նույնանում են: Այսպես, հայտնի է, որ նա ածականը նույնացնում էր որոշիչի հետ, մակբայը՝ պարագայի հետ, բայը՝ ստորոգյալի հետ և այլն:

Մ. Աբեղյանի քերականական այդպիսի սիստեմը չէր կարող չպղպել դերանունների ճանաչման և պնահատման վրա: Մ. Աբեղյանը դերանունը որպես խոսքի մաս ճանաչում է նրա փոխարինման ֆունկցիայով: «Դերանուն ասվում են այն բառերը, որոնք դրվում են անունների տեղ»[1]: «Դերանուն նշանակում է անվան փոխարեն դրվող»[2]: Քանի որ ըստ Մ. Աբեղյանի «անուն ասվում են այն գոյականները, որոնք տրվում են առարկաներին»[3], ուստի նա դերանուն է համարում նրանք, որոնք դրվում են գոյականների փոխարեն:

Նա ճանաչում էր դերանունների չորս տեսակ՝ անձնական, ցուցական, փոխադարձ, հարաբերական[4]: Մ. Աբեղյանը առաջին անգամ անձնական դերանունների շարքն է դասում ինձս, ինձդ դերանունները և սրանց հոգնակիները: Երրորդ դեմքի անձնական դերանուններ է համարում և՛ ինքը, իրենք, և՛ նա, նրանք: Նա անձնական դերանունների յուրահատկությունը համարում է դեմք ցույց տալը. «Անձնական դերանունները դրվում են բայի դեմքի լրացման, այսինքն ենթակայի անվան տեղ»[5]: Սակայն, ինչպես տեսնում ենք, Մ. Աբեղյանը նույնացնում է դերանվանական դեմքը բայի (= ստորոգյալի) դեմքի հետ: Անձնական դերանվան այդ սահմանումը փաստորեն վերաբերում է նրա ուղիղ ձևին, երբ դերանունը ենթակայի պաշտոն է կատարում, այսինքն, երբ դերանվան դեմքը համընկնում է բայի դեմքի հետ: Մինչդեռ

1 Մ. Աբեղյան, *Աշխարհաբարի քերականություն, 1906 թ., Վաղարշապատ, էջ 52:*

2 Նույն տեղում:

3 Նույն տեղում, էջ 49:

4 Նույն տեղում, էջ 53:

5 Նույն տեղում:

անձնական դերանունները դրվում են ոչ միայն «ենթակայի անվան տեղ», այսինքն, ոչ միայն որպես ենթակա են դործածվում, այլև որպես հատկացուցիչ, խնդիր, պարագա: Այս նշանակում է, որ դերանվանական դեմքը կարող է իր վերաբերությամբ և նույնը լինել բայի դեմքի հետ, և տարբեր լինել նրանից, ուստի դրանք չպետք է նույնացնել (այդ մասին տես էջ 101—102):

Մ. Աբեղյանը ցուցական հոմարում է սա, դա, ձա, այս, այդ, այն դերանունները [1]: Նա տալիս է այդ դերանունների իմաստային յուրահատկությունը՝ հետևելով նախորդ որոշ քերականների: «Երբ առարկան առաջին դեմքին մոտ է, կամ մոտ է մտածվում, դրվում է սա, այս, երբ առարկան երկրորդ դեմքին մոտ է, կամ մոտ է մտածվում դրվում է դա, այդ, իսկ երբ առարկան առաջին և երկրորդ դեմքից էլ հեռու է, կամ հեռու է մտածվում, դրվում է ձա, այն» [1]: Ցուցական դերանունների իմաստի այս բացատրությունը համեմատենք Գր. Վանցյանի տված բացատրության հետ. «Սա ցույց է տալիս մոտիկը, դա միջավորը, իսկ ձա՝ հեռուն» [2]: Ինչի՞ն մոտ, ինչի՞ց հեռու, այդ չի պարզում Գր. Վանցյանը: Իսկ Մ. Աբեղյանը ցույց է տալիս, որ այդ ցուցական դերանունների յուրահատկությունը առարկան առաջին և երկրորդ դեմքերի նկատմամբ տարածական հարաբերությամբ ցույց տալն է: Ինչպես կտեսնենք «Դերանունների դասդասումը» դլխում, ցուցական դերանուններն ունեն նաև ժամանակային հարաբերության իմաստ, որը սակայն չի նկատել Մ. Աբեղյանը:

Հիշենք, որ ցուցական դերանունների կազմը Ս. Պալասանյանի մոտ բավական հարուստ էր: Սակայն Մ. Աբեղյանը ելնելով իր քերականական սիստեմից՝ ցուցական դերանունների մեծ մասը դասում է մականունների (=ածականների)

1 Մ. Աբեղյան, *Աշխարհաբարի քերականություն*, էջ 53:

2 Գր. Վանցյան, *Դպրոցական քերականություն*, Թիֆլիս, երկրորդ տպագր., էջ 32:

շարքը, քանի որ նրանք առարկայի հատկանիշ են ցույց տալիս և դրվում են գոյականների վրա։ Այսպես, Մ. Աբեղյանը ցուցական-որակական մականուններ է համարում այսպես, այդպես, այնպես, նույնպես, այսպիսի, այդպիսի, այնպիսի, նույնպիսի բառերը [1]։ Սակայն նա այսպես, այդպես, այնպես, նույնպես դերանունները չպետք է դասեր մականունների շարքը հենց ելնելով իր սխեմից, քանի որ դրանք անվան վրա չեն դրվում, այլ դրվում են բայերի վրա։

Մ. Աբեղյանը ցուցական-քանակական մականուններ է համարում այսքան, այդքան, այնքան, նույնքան, այսչափ, այդչափ, այնչափ, նույնչափ բառերը [2]։ Ավելին, այս, այդ, այն բառերը Աբեղյանի կարծիքով միշտ չեն դերանուններ, քանի որ դրանք կարող են և՛ անկախ գործածվել, և՛ դրվել գոյականի վրա, իբրև որոշիչ։ «Ցուցական մականունները՝ այս, այդ, այն չպիտի շփոթել ցուցական այս, այդ, այն դերանունների հետ։ Դերանուններն իբրև գոյական մենակ են բանում՝ դրվելով մի անվան (երբեմն և խոսքի) տեղ, որից և ստանում են իրենց իմաստը. իսկ մականուններն իբրև ածական մենակ չեն բանում և միշտ մի անվան վրա են դրվում» [1]։ Ուրեմն՝ այս, այդ, այն բառերը, երբ գործածվում են առարկա ցույց տալու համար դերանուն են, իսկ երբ գործածվում են գոյականի հետ իբրև որոշիչ, ածական են (մականուն)։

Վերևում տեսանք, որ Ս. Պալասանյանը նկատել է մեր փոխադարձ դերանունների յուրահատուկ, «փոխադարձական» իմաստը, բայց նա դրանք չի համարել դերանվան առանձին տեսակ, այլ դասել է անորոշ դերանունների շարքը։ Մ. Աբեղյանը այդ դերանունները համարում է դերանվան առանձին տեսակ՝ փոխադարձ դերանուններ։ Նա փոխադարձ դերանունները բնորոշում է հետևյալ կերպ. «Փոխադարձ ասվում են այն դերանունները, որոնք դրվում են խոսքի մեջ եղած

[1] Մ. Աբեղյան, Աշխարհաբարի քերականություն, էջ 58։

[2] Նույն տեղում, էջ 59։

երկու կամ ավելի անունների տեղ և բայի իմաստն այնպես են արտահայտում, որ թե մեկ, և թե մյուս առարկայի համար է հասկացվում» [1]:

Վերջապես Մ. Աբեղյանի մոտ դերանունների մյուս տեսակը հարաբերական կամ շաղկապական դերանունն է (որ), *որը «բարդ ասացվածի (նախադասության — Ս. Ա.) մեջ դրվելով մի խոսքի սկզբում՝ այդ խոսքը կապում է մի ուրիշ խոսքի հետ»*:

Ինչպես տեսնում ենք, Մ. Աբեղյանի մոտ չկան անորոշ, հարցական, որոշյալ դերանունները: Անորոշ և հարցական այն դերանունները, որոնք առարկա են ցույց տալիս, Մ. Աբեղյանը համարում է անորոշ և հարցական անուններ: Ինչո՞ւ նա այդ բառերը չի մացնում դերանունների շարքը: Դա նշանակում է, որ Մ. Աբեղյանը այդ դերանունները չէր դիտում իբրև այնպիսի բառեր, որոնք «գործ են ածվում մի անդամ արդեն ասված, կամ հայտնի, կամ ծանոթ անունները չկրկնելու համար» [2]: Այսինքն՝ նա այն կարծիքին էր, որ անորոշ և հարցական դերանունները (որոնք ինքը դերանուն չի համարում) փոխարինման ֆունկցիա չեն կատարում: Հասկանալի է, որ եթե Աբեղյանը դրանք դիտեր իբրև անուններին փոխարինող բառեր, կդասեր դերանունների շարքը:

Ընդունած, որ նա անորոշ դերանունները դերանուն չէր համարում, բայց նա այդ բառերի էությունը, յուրահատկությունը ավելի ճիշտ էր ճանաչում, քան դրանք անորոշ դերանուն համարող որոշ լեզվաբաններ: «Անորոշ ասվում են այն անունները, որոնք ցույց են տալիս անձեր կամ իրեր շատ տարտամ և ընդհանուր ձևով՝ հայտնելով միայն առարկայի մարդ կամ իր լինելը, բայց առանց որոշելու, թե մարդ կամ ինչ բան լինելը» [3]:

Մ. Աբեղյանը ժխտական դերանունները ևս դասում է անորոշ դերանունների շարքը: Նա ճիշտ կերպով հասկացել

1 Մ. Աբեղյան, *Աշխարհաբարի քերականություն*, էջ 54:

2 Նույն տեղում, էջ 53:

3 Նույն տեղում, էջ 50:

է, որ «հարցական անունները (=հարցական դերանունները) իմաստով անորոշ անուն են»[1] և փոխարինման ֆունկցիա չեն կատարում:

Անորոշ և հարցական այն դերանունները, որոնք ոչ թե իր կամ անձ, այլ հատկանիշ են ցույց տալիս, Մ. Աբեղյանը համարում է ածականներ, հավատարիմ մնալով իր քերականական սիստեմին: Դրանցից որոնք առարկայի հատկանիշ են ցույց տալիս նա համարում է անորոշ մականուններ. ամեն, ամենայն, բոլորը, յուրաքանչյուրը, ամեն մի, այլ, ուրիշ, ինչ-ինչ, ինչ-որ, որևէ, մի քանի, մը (մի) և այլն[2]: Հատկանիշ ցույց տվող հարցական դերանունները նա համարում է հարցական մականուններ. ի՞նչ, ո՞ր, քանի՞, որքա՞ն, ինչքա՞ն, որչա՞փ, ինչչա՞փ, ո՞րպես, ի՞նչպես, ո՞րպիսի, ի՞նչպիսի, քանի՞երորդ: Մ. Աբեղյանի ուշադրությունից վրիպել է, որ որպե՞ս, ինչպե՞ս բառերը արդի հայերենի գոյականների հետ չեն գործածվում, հետևապես և մականուններ լինել չեն կարող:

Հետագայում Մ. Աբեղյանը ավելի հետևողական գտնվեց իր կոնցեպցիայի մեջ և դերանունը որպես խոսքի մաս խոպան վերացրեց: Այդպես է վարվել նա իր «Աշխարհաբարի շարահյուսություն» և «Հայոց լեզվի տեսություն» աշխատություններում: Առարկա ցույց տվող դերանունները նա մոցրեց գոյականների շարքը իբրև դերանուն գոյական կամ գոյական դերանուն, առարկայի հատկանիշ ցույց տվող կամ, որ միևնույնն է՝ գոյականի վրա դրվող դերանունները դասեց ածականների շարքը, իբրև դերանուն ածական կամ ածական դերանուն, իսկ գործողության հատկանիշ ցույց տվող դերանունները դասեց մակբայների շարքը, իբրև դերանվանական մակբայ»[3]:

Չնայած որ Մ. Աբեղյանը ձևաբանական կատեգորիանե-

---

[1] Նույն տեղում, էջ 59,

[2] Նույն տեղում, էջ 60—61:

[3] Տե՛ս Մ. Աբեղյան, Աշխարհաբարի շարահյուսություն, Վաղարշապատ, 1912 թ., էջ 9, և Հայոց լեզվի տեսություն, Երևան, 1931 թ., էջ 131, 132:

րը՝ խոսքի մասերը հաճախ դիտում էր շարահյուսության տեսանկյունով, քերականության այդ երկու բաժինները չէր սահմանազատում, բայց այդ չի նշանակում, թե արդի հայերենի ձևաբանությունը նա չի ուսումնասիրել։ Ձևաբանության շատ իրողություններ նա հմտորեն ուսումնասիրեց հենց շարահյուսության մեջ։ Այնպես որ, իր սխալ կոնցեպցիայով հանդերձ Մ. Աբեղյանը թե՛ ձևաբանության և թե՛ շարահյուսության բնագավառներում ունի շատ ներդրումներ, որոնք պետք է օգտագործվեն քննագատաբար։

Հատկապես ժամանակակից լեզվի քերականական կառուցվածքի ուսումնասիրման այդ լավագույն տրադիցիան գալիս է ուս առաջավոր լեզվաբաններից։ Եթե հոդերանական դպրոցի ներկայացուցիչները և երիտքերականները արևմուտքում մեծ մասամբ տարված էին լեզուների անցյալով, ցեղակցության և նման հարցերով, ապա նույն դպրոցների ուս ներկայացուցիչները, չանտեսելով լեզվի պատմության հարցերը, առանձնապես ուսումնասիրել են ժամանակակից ուսերենը։ Այդպիսին էր նաև Մ. Աբեղյանը հայ իրականության մեջ։

1954 թ. լույս տեսավ պրոֆ. Հ. Աճառյանի «Վիճակաւոր քերականութիւն հայոց լեզուի՝ համեմատությամբ 562 լեզուների» աշխատության երկրորդ հատորը։ Այս հատորում ուսումնասիրված են հայերենի (դրաբար, միջին հայերեն, բարբառներ, արդի հայերեն) դերանունները հարյուրավոր լեզուների համեմատությամբ։ Թեև աշխատությունը հրատարակված է 1954 թվականին, սակայն հեղինակը դերանվան, որպես խոսքի մասի, և նրա տեսակների ճանաչման հարցում կանգնած է տրադիցիոն, մերժված տեսակետի վրա։ Պրոֆ. Հ. Աճառյանը իր զառամյալ տարիքի, վատառողջ լինելու, դուցե և այլ պատճառներով հնարավորություն չի ունեցել վերանայելու իր հայացքները և օգտագործելու սովետական լեզվաբանության մի շարք նվաճումներ։ Այդ պատճառով մենք նրա հայացքները դերանվան մասին քննում ենք ոչ իբրև սովետահայ քերականագիտության վերջին խոսք, վեր-

չին տեսակետ, թեև վերջերս լույս տեսավ նրա վերոհիշյալ աշխատությունը։

Հետևելով տրադիցիային, պրոֆ. Հ. Աճառյանը դերանվան խոսքի մասային հատկանիշը համարում է փոխարինման ֆունկցիան։ «...Դերանունը այն բառն է,— գրում է նա,— որ գործ է ածվում նախապես հիշված մի գոյականի փոխարեն, նույնը չկրկնելու նպատակով» [1]*։ Դրա հետ միասին պրոֆ. Հ. Աճառյանը խոսում է դերանվան՝ ընդհանուր իմաստ ունենալու մասին։ «Աշխարհիս անցյալ, ներկա և ապագա միլիարդավոր բնակիչները,— գրում է նա,— կարող են ասել ես, և այս բառը կարող է նշանակել այդքան անհատ։ Բոլոր այդ միլիարդավոր բնակիչները կարող են ասել իմ կամ իմ և նշանակել իրենց մի թել մազից սկսած մինչև իրենց ամբողջ երկիրը։ Նրանք կարող են ասել այս և ցույց տալ խոտի մի թելից սկսած մինչև աստղերը, հորիզոնն ու արեգակը։*

Ըստ այսմ՝ դերանունը ամբողջապես անորոշություն է և որևէ կապակցությամբ միայն կարող է նշանակել այսինչ առարկան։ Այլ ձևով դատելով,— հեղինակը կրկնում է Ա. Այտընյանին,— գոյականը առարկայի ընդհանուր անունն է, առանց ցույց տալու, թե որն է, իսկ դերանունը ցույց է տալիս, թե որն է, առանց այդ առարկայի անունը տալու» [2]*։ Դրանից ելնելով՝ պրոֆ. Հ. Աճառյանը գրում է, թե «Դերանունը նյութական նշանակություն ունենալու հետ, և այդպիսի նշանակություն ունեն դերանունները, որի պատճառով էլ իրավամբ համարվում են նյութական իմաստ ունեցող խոսքի մաս։*

Պրոֆ. Հ. Աճառյանը խոսքի մասերի որոշման հարցում

---

1 Հ. Աճառյան, *Լիակատար քերականություն հայոց լեզվի*, հ. II, 1954, Երևան, էջ 4։

2 Նույն տեղում, էջ 5։

հիմնականում այն տեսակետին է, ինչ տեսակետի էին պրոֆ. Մ. Աբեղյանը և մի քանի այլ լեզվաբաններ։ Ուրեմն՝ Հ. Աճառյանի մոտ էլ դերանուն համարվում են միայն առարկա ցույց տվող, կամ, ինչպես ինքն է ասում, գոյականի փոխարեն դործածվող բառերը։ «Հաճախ միևնույն բառը նախադասության մեջ դառնում է մերթ դերանուն և մերթ էլ ածական։ Դերանուն է բառը՝ երբ առանձին է դործածվում կամ բայի հետ, ածական է, երբ դործածված է գոյականի հետ։

1. Այս տունը ավելի մեծ է, քան այն տունը։

2. Այս ավելի մեծ է քան այն։

Առաջին նախադասության մեջ այս և այն բառերը ցուցական ածական են, իսկ երկրորդի մեջ՝ ցուցական դերանուն»[1]։

Քանի որ դերանունը համարում է միայն գոյականի փոխարեն դրվող բառերը, այդ պատճառով էլ դերանունների քանակը պրոֆ. Աճառյանի մոտ շատ սահմանափակ է։

Պրոֆ. Աճառյանը արդի հայերենում ընդունում է դերանունների հետևյալ տեսակները՝ էական կամ անձնական, անդրադարձ, փոխադարձ, ցուցական, ստացական, հարաբերական, հարցական և անորոշ։ Անձնական դերանունների հիմնական հատկանիշը նա համարում է դեմք ունենալը։

Անձնական դերանուն է համարում ես, դու, նա դերանունները, որոնցից վերջինի մասին, ի միջի այլոց, գրում է. «երբորդ դեմքի համար դործածվում է նա ցուցականը, ճիշտ ինչպես հնդեվրոպականում»[2]։ Անձնական դերանունների շարքը չի դասում իմս, իմդ, իմը։ Այս շարքից իմս, իմդ անձնական դերանունների անտեսումը, ըստ երևույթին, պետք է բացատրել նրանով, որ դրանք հայկին դրաբարում, իսկ հայերենի բոլոր հատվածներից Հ. Աճառյանը առավել ուշադրություն է դարձնում դրաբարի վրա։ Բացի դրանից, դերանունների տարբեր տեսակների կազմը որոշելիս պրոֆ. Հ. Աճառյանը հաճախ նկատի է ունենում նաև հնդեվրոպական

[1] Հ. Աճառյան, Լիակատար քերականություն հայոց լեզվի, հ. II, 1954, Երևան, էջ 5։

[2] Նույն տեղում, էջ 55։

հիմք լեզվի համապատասխան դերանունները, իսկ ինքս, ինքդ դերանունների համապատասխանները չկային հնդեվրոպական հիմք լեզվում: Իսկ ինքն դերանունն էլ համարում է անդրադարձ դերանուն՝ նույնպես չկնելով հայերենի առանձնահատկությունից:

Փոխադարձ դերանունների կազմը պրոֆ. Աճառյանի մոտ ամբողջական է՝ իրար, միմյանց, մեկմեկի (մեկմեկու):

«Ցուցական (դերանուն կամ ածական) է կոչվում այն բառը, որով ուղղակի մատնանիշ ենք անում այն անձը կամ առարկան, որի մասին խոսում ենք»[1]: Ցուցական դերանունների կազմը արդի հայերենում ըստ Հ. Աճառյանի հետևյալն է. այս, այդ, այն, սա, դա, նա, սույն, նույն (նախաավերջին դերանվան մասին գրում է, որ այն սակավ գործածական է), ըստ որում այս, այդ, այն, սույն, նույն բառերը նա դերանուն է համարում այն դեպքում, երբ գործածվում են անկախ, իսկ երբ դրվում են գոյականի վրա, համարում է ցուցական ածական: Այսպիսի մոտեցման անճշտության մասին, որ տեսանք նաև այլ լեզվաբանների մոտ, արդեն խոսվել է վերևում:

Պրոֆ. Հ. Աճառյանը ընդունում է ստացականն իբրև դերանվան առանձին տեսակ: «Ստացական դերանուն է կոչվում այն բառը, որ ցույց է տալիս, թե այս ինչ առարկան երեք (կամ ավելի) դեմքի դերանուններից ում է պատկանում: Օր. այս ձին իմն է»[2]: Պարզ է, որ իմն դերանունը ևս դերանվան փոխանուն տեսակն է: Այդ հաստատում է նաև ինքը՝ պրոֆ. Հ. Աճառյանը: Որ ստացական կոչվող դերանունները արդի հայերենում դերանվան առանձին տեսակ չեն, այդ մասին խոսվել է վերևում, և դա երևում է հենց այդ դերանունների վերոհիշյալ սահմանումից, որը փաստորեն հանդիսանում է անձնական դերանվան տեսական հոլովի բնորոշում: Այդ պատճառով էլ դերանվան այս տեսակի գոյությունը արդի հայերենում վաղուց մերժված է քերականների կողմից:

1 Հ. Աճառյան, Լիակատար քերականություն հայոց լեզվի, հ. II, 1954, Երևան, էջ 139:

2 Նույն տեղում, էջ 178:

Պրոֆ. Աճառյանը հարցական համարում է ո՞վ, ի՞նչ, ո՞ր, ճանի՞ դերանունները, ըստ որում վերջին երեքի մասին գրում է, որ դրանք թե՛ ածական են և թե՛ դերանուն[1]:

Ավելի անճշտությունների հանդիպում ենք անորոշ դերանունների կազմում: Հ. Աճառյանը անորոշ դերանունների շարքն է դասում մեկը, ոմն, մյուս, ուրիշ, շատը, ամեն, մի ճանիսը, յուրաքանչյուր, ամեն մեկ, ոչ ոք, ոչ մեկը, ոչինչ, այսինչ, այնինչ, որևիցե, որևէ բառերը, որոնց մի մասը իսկապես անորոշ դերանուններ են, իսկ մյուսները հայտնի են իբրև որոշյալ, ժխտական, ցուցական դերանուններ: Դա հետևանք է դերանունների դասակարգման հարցում. որևէ որոշակի սկզբունք չունենալու, որպիսի հանգամանքը պատճառ է հանդիսացել ոչ-քիչ անճշտությունների նաև այլ լեզվաբանների մոտ:

Հետևելով գրաբարյան քերականության տրադիցիային՝ պրոֆ. Աճառյանը արդի հայերենում հարաբերական դերանուն է համարում միայն որ բառը:

Ավելորդ չենք համարում նշել, որ պրոֆ. Հ. Աճառյանի «Լիակատար քերականություն հայոց լեզվի» աշխատության 2-րդ հատորում արդի հայերենի դերանունների վերաբերյալ արտահայտված հայացքների այս շատ համառոտ ծանոթացումն ու գնահատումը շատ հեռու է այդ գրքի քննարկումն ու գնահատումը լինելուց: Մենք համառոտակի կանգ առանք միայն դերանվան, որպես խոսքի մասի, և արդի հայերենի դերանունների տեսակների վերաբերյալ արտահայտած նրա կարծիքների վրա: Բայց այդ աշխատությունն ավելի արժեքավոր է իբրև հայերենի բոլոր հատվածների դերանունների պատմա-համեմատական ուսումնասիրություն և իբրև հարյուրավոր լեզուներից հավաքած փաստերի հարուստ շտեմարան:

Ժամանակակից հայերենի դերանունների ճանաչումը նոր տատիճանի բարձրացավ սովետական շրջանում պրոֆ. Ա.

---

1 Հ. Աճառյան, Լիակատար քերականություն հայոց լեզվի, հ. II, 1954, Երևան, էջ 403:

Ղարիբյանի և պրոֆ. Գ. Սևակի շնորհիվ։ Նրանք օգտագործելով սովետական քերականագիտության նվաճումները, ձեռնամուխ եղան Մ. Աբեղյանի քերականական սիստեմի թերությունները վեր հանելուն։ Նրանք դերանունները ճանաչեցին իբրև առանձին խոսքի մաս, որը իր տեսակներով և կազմով ավելի հարուստ է, քան կարծում էին հայ լեզվաբաններն անցյալում։ «Դերանուն են կոչվում այն բառերը, որոնք խոսքի մեջ դրվում են գոյականի, ածականի, թվականի և մակբայի փոխարեն»[1]։ Հիշենք, որ անցյալի լեզվաբանները դերանունը համարում էին միայն գոյականի, ոմանք՝ նաև ածականի (որի մեջ որոշ լեզվաբաններ դնում էին նաև թվականները) փոխարեն գործածվող խոսքի մաս։ Պրոֆ. Ղարիբյանը ընդունում էր դերանունների հետևյալ տեսակները. անձնական, ստացական, ցուցական, փոխադարձ, հարցական, հարաբերական, անորոշ, որոշյալ և ժխտական[2]։ Դերանունների առանձին տեսակների նրա ճանաչման վրա այստեղ կանգ չենք առնի, քանի որ այդ հարցը մանրամասնորեն կքննվի հաջորդ գլխում։

Միայն նշենք, որ պրոֆ. Ա. Ղարիբյանը հետագայում ճիշտ կերպով գտնելով, որ ստացական կոչվող դերանունները ոչ այլ ինչ են, եթե ոչ անձնական դերանունների սեռականի ձևերը, դերանվան առանձին տեսակ չի համարում։

1939 թվականին հրատարակվում է Գ. Սևակի «Ժամանակակից հայոց լեզվի տեսություն» աշխատությունը։ Այդ աշխատության մեջ հեղինակը քննադատում է Մ. Աբեղյանի քերականական սիստեմը, ինչպես և խոսքի մասերի տրափիցիոն սահմանումները ու տալիս է նոր սահմանումներ։ «Դերանուն կոչվում են այն բառերը, որոնք ցույց են տալիս առարկա, հատկանիշ, թիվ և թվական կարգ առանց տարբերակման՝ իբրև նրանց ընդհանուր անուն»[3]։ Ինչպես գրում է

1 Ա. Ղարիբյան, Հայոց լեզվի քերականության դասագիրք, V և VI դասարանների համար, Երևան, 1935, էջ 54։

2 Նույն տեղում, էջ 55։

3 Գ. Սևակ, Ժամանակակից հայոց լեզվի տեսություն, Գիրք Ա, Երևան, 1939 թ., էջ 139։

Գ. Սևակը, դերանվան այս սահմանումը ինքը տալիս է՝ «ելնելով նրա ընդհանուր իմաստից» [1]։

Նկատի ունենալով այդ, պրոֆ. Ա. Ղարիբյանը վերանայել է դերանվան՝ իր նախկին սահմանումը։ «Այն բառերը, որոնք ցույց են տալիս առարկա, որպիսություն, թիվ և գործողության հատկանիշ ընդհանրապես, առանց կոնկրետության, կոչվում են դերանուն։ Դերանունները փոխարինում են գոյականներին, ածականներին, թվականներին կամ մակբայներին» [2]։

«Հայոց լեզվի դասավանդման մեթոդիկա» ձեռնարկում ևս պրոֆ. Ա. Ղարիբյանը դերանունը բնորոշում է ընդհանուր իմաստով։ «Բոլոր այն բառերը, որոնք ընդհանուր առմամբ ցույց են տալիս առարկա, որպիսություն, թիվ և գործողության հանգամանքներ, կոչվում են դերանուն» [3]։ Անցնելով դերանվան տեսակներին և դրանց ուսուցմանը, պրոֆ. Ղարիբյանը ուշադրության կենտրոնում պահում է ոչ թե դերանվան յուրաքանչյուր տեսակի մեջ արտահայտված ընդհանուր իմաստի դրսևորումներն ու յուրահատկությունները, այլ նրանց փոխարինման ֆունկցիան։ Դա այդպես է ոչ միայն պրոֆ. Ղարիբյանի, այլև մյուս հեղինակների քերականության դասագրքերում։

Դոցենտ Ա. Գրիգորյանը ևս դերանունները բնորոշում է նրանց ընդհանուր, ոչ-կոնկրետ իմաստով։ «Դերանուն խոսքի մասին պատկանող բառերը ցույց են տալիս անձեր, առարկաներ, հատկանիշներ և այլն ամենաընդհանուր ձևով։ Առանց կոնկրետության ու անվանման՝ առարկա, որպիսություն, թիվ և հատկանիշ արտահայտող բառերը կոչվում են դերանուն» [4]։

---

1 Գ. Սևակ, *Ժամանակակից հայոց լեզվի տեսություն, գիրք Ա, Երևան, 1939, էջ 132—133։*

2 Ա. Ղարիբյան, *Հայոց լեզվի դասագիրք, Երևան, 1952, էջ 209։*

3 Ա. Ղարիբյան, *Հայոց լեզվի մեթոդիկա, Երևան, 1954, էջ 239։*

4 Ա. Գրիգորյան, *Հայոց լեզու, դասագիրք միջնակարգ դպրոցի VIII—X դասարանների համար, Ե., 1954, էջ 108։*

Արդի հայերենի քերականության մեջ ընդունված են հետևյալ դերանունները [1].

1. Անձնական. *ես, դու, նա, ինքը.*

2. Ցուցական. *սա, դա, նա, այս, այդ, այն, սույն, նույն, միևնույն, այսպիսի, այդպիսի, այնպիսի, նույնպիսի, այսքան, այդքան, այնքան, նույնքան, այսչափ, այդչափ, այնչափ, նույնչափ, այստեղ, այդտեղ, այնտեղ, նույնտեղ, այսպես, այդպես, այնպես, նույնպես, մյուս.*

3. Փոխադարձ. *միմյանց, իրար, մեկմեկու.*

4. Հարցական. *ո՞վ, ի՞նչ, ո՞ր, քանի՞, որքա՞ն, որչա՞փ, ինչչա՞փ, որպե՞ս, որպիսի՞, ինչպիսի՞, ինչպե՞ս, քանի՞երորդ, ո՞րերորդ, որտե՞ղ, ո՞ւր, ե՞րբ, ինչո՞ւ.*

5. Հարաբերական. *նույն դերանունները, ինչ որ հարցականները, բայց առանց հարցական իմաստի և նշանի.*

6. Որոշյալ. *ամեն(ը), ամենք(ը), յուրաքանչյուր(ը), համայն, ողջ(ը), ամբողջ(ը), ամեն ինչ(ը), յուրաքանչյուր ոք, ամեն ոք.*

7. Անորոշ. *ինչ-որ, ինչ-ինչ, ոմն, մի, մեկը (անորոշ իմաստով), այսինչ, այնինչ, մի քանիսը, ուրիշ, այլ, ոևէ, որևէ, երբևէ, որոշ, որևիցե, երբևիցե.*

8. Ժխտական. *ոչ ոք, ոչինչ, ոչ մի, ոչ մեկը։*

1 *Տե՛ս* Ս. Գաբիբյան, *Հայոց լեզվի դասագիրք V և VI դասարաններին համար, Երևան, 1954, էջ 209—210։*

ԳԼՈՒԽ ԵՐԲՈՐԴ

Ա.ՐԴԻ ՀԱՅԵՐԵՆԻ ԴԵՐԱՆՈՒՆՆԵՐԻ ԴԱՍԴԱՍՈՒՄԸ, ՏԵՍԱԿՆԵՐԸ

1. ԴԵՐԱՆՈՒՆՆԵՐԻ ԴԱՍԴԱՍՄԱՆ ՀԻՄՈՒՆՔԸ

Գիտության ուսումնասիրման օբյեկտի ճանաչման կարևոր աստիճաններից մեկը, եթե ոչ ամենակարևորը, այդ օբյեկտի դասակարգումն է: Իհարկե, խոսքը գիտական դասակարգման մասին է: Դասակարգումը կատարելիս ամենադժվարին ու էական հարցը նրա հիմունքը որոշելն է: Եթե խոսքի մասերի ամբողջական սիստեմի, քերականության երկու բաժինների ճիշտ ճանաչման համար կարևոր էր խոսքի մասերի դասդասման հիմունքի ճիշտ որոշումը, ապա համապատասխանաբար՝ տվյալ խոսքի մասի մեջ մտնող բառերի, դրանց առանձնահատկությունների, հետևապես և ամբողջ խոսքի մասի ավելի խոր ճանաչման համար կարևոր նշանակություն ունի այդ խոսքի մասի դասակարգումը գիտական հիմունքով, այսինքն նրա տեսակների ճիշտ որոշումը:

Իսկ որո՞նք են գիտական դասակարգման պահանջները, որոնցով պետք է առաջնորդվել: Ամեն մի դասակարգում, որպեսզի գիտական լինի, ամենից առաջ պետք է հիմնված լինի առաջատար գիտության կողմից մշակված և պրակտիկայում իրեն արդարացրած հետևյալ պարտադիր օրենքների վրա: «1. Ամեն մի տվյալ բաժանում պետք է կատարվի միևնույն հիմունքով... 2. բաժանման անդամները պետք է փոխադարձաբար բացառեն միմյանց... 3. բաժանման անդամները

պետք է լինեն բաժանվող հավասարության կից տեսակները... 4. բաժանման բոլոր անդամների ծավալը պետք է հավասար լինի բաժանվող հավասարության ծավալին...» [1]:

Այս չորս պարտադիր կանոններից մենք ուզում ենք ընթերցողի ուշադրությունը հրավիրել ամենից առաջ առաջին կանոնի վրա: Բանն այն է, որ եթե դասակարգման ժամանակ նկատի է առնվում դասակարգման օբյեկտը իր ամբողջ ծավալով, և ճիշտ է որոշվում դասակարգման միակ հիմունքը, ապա բնականաբար ապահովվում են դասակարգման նաև մյուս երեք կանոնները, և դասակարգումը լինում է ճիշտ, գիտական:

Այժմ տեսնենք, թե ինչպես և ինչ հիմունքով են դասակարգված արդի հայերենի դերանունները: Այլ կերպ՝ համառոտակի քննենք դերանունների այժմյան դասակարգումը՝ ելնելով հիշյալ պահանջներից: Դերանունների դոյություն ունեցող դասակարգումը առաջին իսկ հայացքից աչքի է զարնում իր անմիօրինակությամբ, այսինքն նրանով, որ այն չի կատարված մեկ ընդհանուր հիմունքով, այլ կատարված է տարբեր հիմունքներով: Այսպես, ժխտական դերանունների էական առանձնահատկությունը համարվում է ժխտում արտահայտելը: Հարցական դերանունների առանձնահատկությունը հարցում արտահայտելն է և նրա պարտադիր դործածությունը հարցական նախադասություններում: Իսկ հարաբերական համարվում են այդ նույն դերանունները, երբ դործածվում են ոչ թե հարցական, այլ՝ բարդ ստորադասական նախադասության մեջ՝ ստորադաս նախադասությունը դերադասին հարաբերելու, կապելու համար: Ի վերջո, վերցնենք դերանվան մի տեսակ ևս՝ փոխադարձ դերանունները. սրանց առանձնահատկությունը համարվում է այն, որ ցույց են տալիս փոխադարձ դործողության կապված առարկաներ:

Այսպիսով՝ այստեղ մենք դործ ունենք երեք տարբեր բնույթի հատկանիշների հետ, որոնք արդյունք են դերանուն-

[1] Большая советская энциклопедия, том. XIII, 1952, стр. 629.

ների դասակարգման ժամանակ երեք տարբեր հիմունքներով առաջնորդվելուն։ Այդ երեք հիմունքներն են՝ դերանունների բնույթը (որով ճանաչված է մեկ տեսակի դերանուն՝ ժխտական դերանունը), շարահյուսական դերը (այս հիմունքով ճանաչված են հարցական ու հարաբերական դերանունները), արտահայտած հարաբերությունը (որով ճանաչացված են, օրինակ՝ փոխադարձ դերանունները)։

Այսպիսի դասակարգման հետևանքն ստացվել է այն, որ խախտվել է նաև դասակարգման երկրորդ սկզբունքը, և դերանունների այժմյան դասակարգման պայմաններում նրանց տեսակներից մի քանիսը չեն հակադրվում, չեն բացառում միմյանց (այդ մասին մանրամասն կխոսվի դերանունների տեսակների քննարկման ընթացքում)։ Որքա՞ն մենք կզարմանայինք, եթե մեկը, օրինակ, շաղկապները բաժաններ հետևյալ տեսակների՝ ստորադասական (եթե, որ և այլն), համադասական (և, ու և այլն), հակադրության (բայց, իսկ), ժխտական (ո՛չ... ո՛չ)։ Բայց ի՞նչն է այստեղ զարմանալի։ Չէ՞ որ իսկապես ո՛չ... ո՛չ-ը ժխտական բնույթ ունի, բայց, իսկ շաղկապները հակադրություն են ցույց տալիս, և, ու շաղկապները համադասական հարաբերություն են արտահայտում, իսկ եթե, որ և այլն ստորադասական են։ Այո՛, նշված շաղկապների համապատասխան անունները թերևս առանձին-առանձին ճիշտ են ամեն մեկը մի որևէ տեսակից, բայց այնուամենայնիվ նշվածները մեկ դասակարգման տեսակներ չեն։ Նույնը պետք է ասել նաև դերանունների դասակարգման մասին։ Իսկապես, ոչ ոք, ոչինչ ժխտում են արտահայտում, որ, ինչպես և այլն՝ հարցում, նույն դերանունները հաճախ առանց հարցման գործածվում են իբրև հարաբերականներ, փոխադարձ դերանուններին հիմնականում համապատասխանում է իրենց անվանումը։ Սակայն սրանք մեկ դասակարգումից ստացված տեսակներ չեն և որոշակիորեն մատնում են իրենց նմանությունը շաղկապների՝ վերևում բերված «դասակարգման» հետ։

Թերևս ոմանք ասեն, թե չէ՞ որ ամեն մի դրույթի կիրա-

ռում պահանջում է կոնկրետ մոտեցում, դո՞ւցն հնարավոր է դերանունների դասակարգումը պահպանել նույնությամբ՝ նույն երեք հիմունքներով: Իսկապես, ամեն մի ընդհանուր դրույթ պետք է կիրառել՝ հնչելով կոնկրետ պայմաններից, տվյալ դեպքում՝ դասակարգման օբյեկտի առանձնահատկություններից: Սակայն դրույթի կոնկրետ կիրառման չափն ու տակ չի կարելի և չպետք է ամեն մի դասակարգման համար պարտադիր մեկ հիմունքի փոխարեն անցկացնել երեք հիմունք: Մարքսիստական դիտությունը այդպիսի կոնկրետ մոտեցում չի կարող ընդունել, որովհետև դա ոչ թե դրույթի կոնկրետ կիրառումն է, այլ նրա բացարձակ անտեսումը: Այսպիսով՝ դերանունների դասակարգումը կատարելիս պետք է հնչել դիտական դասակարգման ընդհանուր պահանջներից[1]:

Ինչպես ամեն մի դասակարգման, այնպես էլ դերանունների դասակարգման հիմունքը ճիշտ որոշելը կարևոր հարց է թե՛ տեսական և թե՛ գործնական առումով: Ճիշտ որոշել այդ հիմունքը և ըստ այդմ էլ դասակարգել դերանունները նշա-

---

1 Մենք ընթերցողի ուշադրությունն ենք հրավիրում պրոֆ. Ա. Ի. Զարեցկու «Դերանունների մասին» հոդվածի վրա (տե՛ս Русский язык в школе, 1940 թ., № 6), որտեղ նա ժխտում է դերանունները իբրև խոսքի մաս, ժխտում է նրա փոխարինման ֆունկցիան և պնդում, որ դերանունները «պատկանում են այլ խոսքի մասերի» (էջ 16), որոնցից սակայն տարբերվում են իրենց ընդհանուր իմաստով: Այդ հոդվածում պրոֆ. Զարեցկին «Դերանունների կոնկրետացման միջոցները» վերնագրի տակ դասդասում է դերանունները, հիմունք ընդունելով նրանց իմաստի կոնկրետացման միջոցները: Մենք պրոֆ. Զարեցկու դասդասումը, այդ դասդասման հիմունքը չենք համարում դերանունների, որպես խոսքի մասի, դասդասման փորձ (քանի որ հեղինակը ժխտում է դերանունը որպես խոսքի մաս և այդ դասդասումը կատարում է վերևում նշված նպատակով), ուստի և չենք քննարկում այդ դասդասումն ու նրա հիմունքը: Միայն նշենք, որ այլ նպատակով օգտագործված այդ հիմունքը չի կարող դերանունների, որպես խոսքի մասի, դասդասման հիմունք հանդիսանալ այն պատճառով, որ նույն տեսակի դերանունները կարող են ունենալ իմաստի կոնկրետացման տարբեր եղանակներ, ինչպես և տարբեր դերանունները կարող են իրենց իմաստը երբեմն կոնկրետացնել նույն եղանակով:

նակում է խորը ճանաչել նրանց տեսակների էական տարբերություններն իրարից, հետևապես և ամեն մի տեսակն առանձին վերցրած։ Միաժամանակ դերանվան առանձին տեսակների ճիշտ ու խորը ճանաչումը է՛լ ավելի կխորացնի այդ խոսքի մասի ճանաչումը։ Բայց դասակարգումը այդպիսի նշանակություն չէր կարող ունենալ միայն այն դեպքում, եթե գիտական դասակարգման վերոհիշյալ կանոնների կիրառման հետ ապահովվի նրա հիմունքի որոշման հետևյալ պահանջը. «Գիտական դասակարգման մեջ որպես բաժանման հիմունք անհրաժեշտ է վերցնել ոչ թե պատահական, այլ էական հատկանիշներ, ըստ որում ոչ թե ածանցյալ, այլ՝ բնորոշ, որոնցից կախված են՝ այլ հատկանիշներ»[1]։

Ահա հենց այստեղ՝ դասակարգման հիմունքի ընտրության հարցում է, որ պետք է ցուցաբերել կոնկրետ մոտեցում՝ հաշվի առնել դասակարգվող օբյեկտի՝ դերանունների առանձնահատկությունները։ Դերանունների դասակարգման հիմունքը տարբեր է նյութական իմաստ ունեցող մյուս խոսքի մասերի դասակարգման հիմունքից։ Այսպես, ածականները երկու տեսակի բաժանելը (որակական և հարաբերական) պայմանավորված է դրանցով ցույց տրվող հատկանիշների մեկնիցս անկախ գոյություն ունեցող տարբերությամբ։ Այլ տիպի հատկանիշ են ցույց տալիս, օրինակ՝ բարձր, ցածր և նման ածականները, և այլ տիպի հատկանիշ՝ վայրայա, դաշտային ածականները։ Կամ՝ մակբայների դասակարգումը կատարվում է ըստ այն բանի, թե ինչ է ցույց տրվում մակբայի միջոցով (գործողության ժամանակ, ձև, տեղ, չափ ու քանակ)։ Այսպիսով՝ այս խոսքի մասերի տարբեր տեսակների ցույց տված հատկանիշները իրենց օբյեկտիվ գոյությամբ իսկ տարբեր են։

Ասում են, որ դերանունները դասդասվում են ըստ իրենց իմաստի կամ նշանակության։ Բայց մենք տեսանք, որ ածականները և մակբայներն էլ են դասակարգվում ըստ

[1] Большая советская энциклопедия, том. XXI, 1953, стр. 361

իրենց իմաստի կամ նշանակության։ Պարզ է, որ, օրինակ, «հաղիվ» մակբայը այլ իմաստ ունի, «բազմիցս» մակբայը՝ այլ. առաջինը գործողության ձև է ցույց տալիս, իսկ երկրորդը՝ գործողության չափ ու քանակ։ Այս բառերի իմաստային տարբերությունը գալիս է նրանց ցույց տված, մեզնից անկախ գոյություն ունեցող հատկանիշների տարբերությունից։

Դերանունների դասդասման համար, սակայն, դերանվան ինչ ցույց տալը (առարկա, որակ, քանակ և այլն) վճռական նշանակություն չունի. դերանունները չեն դասդասվում ըստ այն բանի, թե ինչ են ցույց տալիս՝ ո՞նց, առարկա՞, ժամանա՞կ, թե՞ մի այլ բան։ Այսպես օրինակ, չնայած որ ունենք անձնական կոչվող դերանուններ, բայց անձ ցույց տալը կարևոր նշանակություն չունի դերանվան այդ տեսակի համար, և դրանով չէ, որ նրանք տարբերվում են մյուս դերանուններից։ Մի կողմից՝ անձ կարող են ցույց տալ նաև որոշյալ, անորոշ, ժխտական որոշ դերանուններ (ամենքը, ամեն ոք, յուրաքանչյուր ոք, ոմանք, ոչ ոք)։ Մյուս կողմից՝ անձնական դերանունները միայն անձ չեն ցույց տալիս, այլև՝ իր։ Իր կարող են ցույց տալ դերանվան բոլոր տեսակները, չափ ու քանակ կարող են ցույց տալ ցուցական, անորոշ, որոշյալ և այլ դերանուններ (այսքան, բոլոր, մի քանի, քանի, որքան, ոչ մի)։

Որ իսկապես դերանունների տեսակների տարբերությունները չեն բխում այն բանից, թե ինչ են ցույց տալիս նրանք, երևում է նաև նրանից, որ նույնիսկ միևնույն անձը կամ իրը հաճախ կարելի է ցույց տալ դերանվան մի քանի, երբեմն էլ բոլոր տեսակներով։ Օրինակ, զերազանցիկ աշակերտներին դասղեկը կարող է ցույց տալ, ակնարկել տարբեր դերանուններով։ «Իմ դասարանում կան մի խումբ զերազանցիկներ, որոնք բոլորն էլ կոմերիտականներ են։ Նրանք օգնում են ոչ միայն դասարանի մյուս աշակերտներին, այլև՝ միմյանց»։ Կանգնելով այդ զերազանցիկների մոտ՝ դասղեկը կարող է ասել. «Սրանք են մեր զերազանցիկները։ Դուք՝ զե-

բազանցիկներդ չլեսաք է բավականանաք ձեր ձեռք բերածով»:

Քանի որ այս բոլոր դերանուններով ցույց տված օբյեկտը նույնն է, ապա ինչո՞վ են տարբերվում նրանք իրարից: Այդ դերանուններն իրարից տարբերվում են նրանով, որ մի դեպքում օբյեկտը ցույց է տրվում որպես խոսողի խոսակից (դուք), մի դեպքում որպես խոսողի մոտ գտնվող (սրանք), մյուս դեպքում այդ օբյեկտի մեջ մտնող անդամները ցույց են տրվում իբրև մի ամբողջության (բոլորը), մի այլ դեպքում՝ իբրև դասարանի աշակերտների մի մասը (մի քանիսը), կամ դրանք վերցվում են մեկը մյուսի նկատմամբ որոշ փոխհարաբերության մեջ (միմյանց) և այլն: Մի խոսքով՝ դերանունների տեսակների համար կարևոր է ոչ թե այն, թե ինչ է ցույց տրվում, այլ այն, թե այդ օբյեկտը ինչ հարաբերությամբ և ինչպես է ցույց տրվում, թե օբյեկտը ինչպես է արտահայտվում դերանվան մեջ:

Այսպես կամ այնպես, այս կամ այն հարաբերությամբ առարկան, հատկանիշը ցույց տալը դերանվան իմաստն է, թե այդ միայն գործածության առանձնահատկությունն է և կապ չունի իմաստի հետ: Բառի, տվյալ դեպքում՝ դերանվան գործածությունը ոչ միայն անկախ չէ նրա իմաստից, այլև հենց այդ իմաստի կոնկրետ դրսևորումն է: Դերանվան, ինչպես և յուրաքանչյուր բառի իմաստի և գործածության փոխհարաբերությունը վերացականի և կոնկրետի, ընդհանուրի և մասնավորի փոխհարաբերություն է: Լենինը ընդհանուրի և մասնավորի փոխհարաբերության մասին գրում է. «Մասնավորը գոյություն չունի այլ կերպ, քան այն կապակցության մեջ, որ տանում է դեպի ընդհանուրը: Ընդհանուրը գոյություն ունի միայն մասնավորի մեջ, մասնավորի միջոցով: Ամեն մի մասնավոր (այսպես թե այնպես) ընդհանուր է»[1], Ուրեմն՝ օբյեկտը այսպես կամ այնպես, այս կամ այն հարա-

[1] В. И Ленин, Философские тетради, 1938, стр. 327.

բերությամբ ցույց տալը իմաստային առանձնահատկություն է։

Այդ ցույց տանք կոնկրետ օրինակների վրա։ Սա հետաքրքիր գիրք է։ Դա հետաքրքիր գիրք է։ Ո՞րն է սա և դա դերանունների իմաստը։ Այդ դերանունների իմաստը ոչ միայն այն է, որ առարկա են ցույց տալիս, այլև այն, որ նրանք առարկան ցույց են տալիս որոշ հարաբերության մեջ։ Սա-ն ցույց է տալիս խոսողին մոտ գտնվող, իսկ դա-ն ցույց է տալիս խոսակցին մոտ գտնվող առարկա։ Դրանց իմաստային տարբերությունն է պատճառը, որ առաջին դեմքի մոտ գրտնվող առարկան չի կարելի ցույց տալ դա դերանունով և ընդհակառակը, երկրորդ դեմքի մոտ առարկան՝ սա դերանունով։ Ավելին, դերանվան այն տեսակի համար (ցուցական), որին պատկանում են այդ դերանունները, կարևոր է ոչ թե այն, թե այդ և այլ դերանունները ինչ են ցույց տալիս, այլ այն հարաբերությունը, որով ցույց է տրվում առարկան, հատկանիշը։ Ցուցական դերանուններին, որպես դերանվան տեսակի, համար հատկանշական, առանձնահատուկ է ոչ թե այն, որ նրանք ցույց են տալիս առարկա, առարկայի որպիսություն, չափ ու քանակ, գործողության տարբեր հատկանիշներ (ձև, տեղ), այլ՝ այն, որ ցուցական դերանունները առարկան և այլն ցույց են տալիս յուրահատուկ հարաբերությամբ, մի հարաբերություն, որ հատուկ է միայն ցուցական դերանուններին (այդ մասին մանրամասն խոսվում է համապատասխան տեղում)։

Այսպիսով, դերանունների դասդասման հիմքում պետք է ընկած լինի այն, թե առարկան, հատկանիշը ինչպես են արտահայտվում դերանուններ մեջ, ինչ հարաբերությամբ են վերջիններս ցույց տալիս դրանք։

Ինչպես տեսնում ենք, այս հիմունքը իրենից ներկայացնում է դերանվան խոսքի մասային երկու էական հատկանիշներից մեկը, ուրեմն և պատահական չէ, այլ՝ բնորոշ ու կարևոր։ Հենց այդ պատճառով էլ նա օգնում է դերանունների երկրորդական մի շարք առանձնահատկությունների բացա-

հայտնին ու պատճառաբանմանը։ Այս հիմունքի ճշտությունը անուղղակի կերպով հաստատվում է նաև հետևյալ փաստով։ Թեև տեսակներին որոշված չի եղել դերանունների դասակարգման հիմունքը, բայց հարաբերության իմաստն իբրև դերանունների կարևոր առանձնահատկություն այնքան որոշակիորեն զգալի է, որ մեծ մասամբ ճիշտ է կատարվել նրանց խմբավորումն ըստ առանձին տեսակների, չնայած, որ այս դեպքում էլ ոչ միշտ են ճիշտ որոշվել տեսակների առանձնահատկությունները։ Այս դիտում մեր նպատակն է կիրառել այդ հիմունքը դերանունների դասակարգման մեջ և ի հայտ բերել, քննել դերանվան տեսակների առանձնահատկությունները։

Կիրառելով դասակարգման վերոհիշյալ հիմունքը, անհրաժեշտ ենք համարում որոշ չափով վերանայել դերանունների դասակարգումը և ընդունել հետևյալ տեսակները՝ անձնական (դիմային), ցուցական, փոխադարձ, որոշյալ (հանրական), անորոշ (մասնական), հարցական-հարաբերական (բացարձակ անորոշ)։ Քննենք այս տեսակներն առանձին-առանձին։

2. ԱՆՁՆԱԿԱՆ (ԴԻՄԱՅԻՆ) ԴԵՐԱՆՈՒՆՆԵՐ

Արդի հայերենի քերականության դասագրքերում անձնական դերանունների ընդունված սահմանումը հետևյալն է՝ անձ ցույց տվող դերանունը կոչվում է անձնական դերանուն։ Անձնական դերանունը խոսքի մեջ գրվում է բոլոր անձերի անվան փոխարեն։

Անհրաժեշտ է լուրջ կերպով վերանայել այս սահմանումը։ Մենք արդեն տեսանք, որ անձնական դերանունները մեծ մասամբ չեն գրվում անձերի անվան փոխարեն։ Այժմ քննենք սահմանման մյուս մասը։ Արդյո՞ք բոլոր անձ ցույց տվող դերանունները անձնական են։ Իհարկե, ոչ։ Մի շարք դերանուններ՝ ամենքը, ամեն ոք, յուրաքանչյուր ոք, ոմանք, ոմն, ովևէ, ոչ ոք, ով անձ ցույց տվող դերանուն են, սակայն չեն կոչվում անձնական դերանուն, այլ՝ որոշյալ, անորոշ,

ժխտական, հարցական կամ հարաբերական։ Մինչդեռ անձնական դերանունների քննարկվող սահմանումն այնպիսին է, որ ընթերցողին թույլատրում է անձնական համարելու հիշյալ բոլոր ոչ անձնական, բայց անձ ցույց տվող դերանունները։

Դերանվան ամեն մի տեսակ ունի որևէ կարևոր առանձնահատկություն, որով և տարբերվում է մյուսներից։ Քանի որ ունենք անձ ցույց տվող դերանուններ, որոնք, սակայն, անձնական չեն համարվում, նշանակում է անձ ցույց տալը կամ գոնե միայն անձ ցույց տալը անձնական դերանունների էական, յուրահատուկ, տարբերիչ կողմը չէ, ի տարբերություն մյուս տեսակի դերանունների։ Իսկ սահմանումը պետք է ներկայացնի հենց այդ յուրահատուկը, տարբերիչը, հետևապես և՝ էականը։

Ինչպես ասվեց վերևում, դերանունների դասդասումը կատարվում է ոչ թե ըստ այն բանի, թե ինչ է ցույց տալիս դերանունը, այլ ըստ այն բանի, թե ինչպես է ցույց տալիս։ Անձնական դերանունը անձ է ցույց տալիս ըստ անձերի ունեցած դերի կամ հարաբերության՝ խոսակցության պրոցեսում, այսինքն՝ ովքա՞ղ անձը խոսո՞ղն է, խոսակի՞ցը, թե՞ նա, որի մասին խոսվում է։ Այդ հարաբերության առանցքը խոսողն է՝ առաջին դեմքը, իսկ մյուս դեմքերը որոշվում են ըստ այն բանի, թե ինչ հարաբերություն ունի խոսողը նրանց նկատմամբ, կամ որ միևնույնն է՝ թե ինչ հարաբերություն ունեն նրանք խոսողի նկատմամբ։ Երբ խոսողը դիմում է մեկին, վերջինիս ցույց տվող անձնական դերանունը երկրորդ դեմքի անձնական դերանուն է, իսկ այն դերանունը, որը խոսողը գործածում է ո՛չ իրեն, ո՛չ էլ խոսակցին, այլ երրորդ անձ ցույց տալու համար, երրորդ դեմքի անձնական դերանուն է։ Այսպիսով՝ անձնական դերանունների համար հատկանշական է դեմք ցույց տալը։

Պրոֆ. Մ. Աբեղյանի՝ անձնական դերանունների սահմանման մեջ հաշվի է առնված անձնական դերանվան՝ դեմք ցույց տալու առանձնահատկությունը։ Ահա Մ. Աբեղյանի սահմանու-

մը. «Անձնական դերանունները դրվում են բայի դեմքի լրացման, այսինքն ենթակայի անվան տեղ»[1]: Սակայն այս սահմանումը ևս ընդունելի չէ: Այստեղ իրար հետ շփոթված են ձևաբանական և շարահյուսական կատեգորիանները, ինչպես և նախադասության գլխավոր անդամ ենթական դիտված է որպես ստորոգյալի լրացում: Եթե սահմանումն ազատելու լիներք այս խճճվածությունից, դարձյալ նա անընդունելի կլինի, որովհետև նրանում հաշվի է առնված միայն դերանվան ուղիղ ձևը: «Ծեր ուսուցիչը հայրաբար ողջունում էր նրանց՝ աշակերտներին» նախադասության մեջ նրանց անձնական դերանունը, պրոֆ. Մ. Աբեղյանի արտահայտությամբ ասած, բայի դեմքի լրացման (ենթակայի) անվան տեղ չի դրված: Նախադասության ստորոգյալն է՝ ողջունում էր, ենթական՝ ուսուցիչը, իսկ նրանց անձնական դերանունը խնդիր է, ուրեմն բնականաբար դրված է խնդրի անվան տեղ: Ենթակայի անվան տեղ դրված դերանունը բնականաբար պետք է ենթակա լինի, մինչդեռ անձնական դերանունները նախադասության մեջ կարող են հանդես գալ ոչ միայն իբրև ենթակա, այլև որպես ամեն տեսակի խնդիր, հատկացուցիչ, ստորոգելիական վերադիր:

Գո՞ւցե Մ. Աբեղյանը գտնում էր, որ անհրաժեշտ է վերականգնել անձնական դերանվան ուղիղ ձևը և հետո որոշել նրա ինչպիսի դերանուն լինելը: Նախ, այս իրավացի պահանջ չէ: Ինչո՞ւ սահմանման մեջ նկատի ունենալ բառի միայն ուղիղ ձևը, չէ՞ որ բառի թեքման ժամանակ նա չի կորցնում, այլ պահպանում է իր խոսքի մասային, սրա տեսակային հատկանիշը:

Այնուհետև. չպետք է շփոթել միևնույն նախադասության մեջ գործածված բայի և դերանվան դեմքը, որոնց ներկայացրած անձը երբեմն կարող է նույն դեմքին պատկանել, իսկ երբեմն՝ ոչ: «Գնանք, ես լավ ինամարում եմ» նախադասության մեջ թե՛ բայը և թե՛ դերանունը պատկանում են առա-

[1] Մ. Աբեղյան, Աշխարհաբարի քերականություն, 1906, էջ 53:

չին դեմքին, իսկ՝ «կարծեմ հայտնվել է ինձ այդ մասին» նախադասության մեջ բայը պատկանում է երրորդ դեմքին, դերանունը՝ երկրորդ (քեզ)։

Բայի դեմքը ցույց է տալիս, թե ով է գործողություն կատարողը (որ կարող է խոսողը չլինել)։ Դերանվան դեմքը ցույց է տալիս խոսողին, խոսակցին և մի երրորդի, որի մասին խոսվում է (անկախ այն բանից՝ դրանք գործողությո՞ւն են կատարում, թե՞ ոչ)։ Այսպես, բայի երկրորդ դեմքը ցույց է տալիս, որ գործողություն կատարողը խոսակիցն է։ Դերանվան երկրորդ դեմքը ցույց է տալիս խոսակցին. ըստ որում նա կարող է լինել կամ գործողություն կատարող, կամ որևէ մեկի կատարած գործողության միջոցը, օբյեկտը, կամ բոլորովին կապ չունենալ գործողության հետ և այլն։

Այսպիսով, անձնական դերանունների սահմանման մեջ անտարակույս պետք է արտահայտվի այդ դերանուններով ցույց տրվող անձանց ունեցած հարաբերությունը խոսողի նկատմամբ, կամ որ միևնույնն է՝ դերանվանական դեմքը, որը, սակայն, չպետք է նույնացնել բայի դեմքի հետ։

Նախքան անձնական դերանունների սահմանումը տալը անհրաժեշտ է պարզել մի հարց ևս։ Հայտնի է, որ անձնական դերանունները գործածվում են ոչ միայն անձ ցույց տալու, այլև երբեմն առարկա ցույց տալու համար։ Օրինակ՝ «Եվ դու, հսկայական մեքենա, թափով դառնում ես առանցքիդ շուրջը տաղտուկ միօրինակությամբ, ֆո ամեն մի պտուտակը, ամեն մի անիվը շարժվում են նույն ճշտությամբ... Դու զարձրել ես ինձ ֆո կտորներից մեկը, թերևս քեզ համար ամենափոքրիկը... Այն օրից, երբ քեզ ճանաչեցի, այն օրից, երբ ընկա ֆո դուռը, լսեցի մի սարսեցնող ձայն» (Անթ., էջ 36)։ Կամ ծիտն ասում է. «Նանի ջան, Նանի, ոտիս փուշը հանի, թանկիրդ վառի, ես էլ գնամ քուջուջ անեմ, պլուխս պահեմ» (ՀԹ, III, էջ 139)։

Կարելի՞ է, արդյոք, հիմնվելով անձնական դերանունների նման գործածությունների վրա, եզրակացնել, որ նրանք

հավասարապես և՛ անձ, և՛ առարկա են ցույց տալիս։ Կարծում ենք, որ անձնական դերանունների տարբեր դեմքերի համար տարբեր չափով է սովորական առարկա ցույց տալը։ Երրորդ դեմքի համար այդ հպրակացությունը ճիշտ կլիներ. երրորդ դեմքի նա դերանունը հավասարապես գործածվում է և՛ անձ, և՛ առարկա ցույց տալու համար։ Առաջին և երկրորդ դեմքի անձնական դերանունները սովորաբար անձ են ցույց տալիս, բայց երբեմն կարող են գործածվել նաև առարկա ցույց տալու համար։ Առարկա ցույց տալը անձ ցույց տալու չափ անձնական դերանվան հիմնական ֆունկցիան չենք համարում ո՛չ թե հաշվի առնելով այդ նպատակի համար նրանց համեմատաբար սակավ գործածությունը, այլ այն, որ այդ սակավ գործածությունը նույնիսկ չի արվում որպես շատ սովորական մի բան։ Այդ կատարվում է սովորաբար առարկաներին, կենդանիներին անձնավորելու, խոսքին հռետորական երանգ տալու համար կամ որևէ այլ նպատակով։

Եթե մտնենք մի սենյակ և տեսնենք, որ մեկը խոսում է մի մարդու հետ, նրան դիմելով դու-ով, մենք ոչինչ ոչ սովորական տեսած չէինք լինի։ Բայց եթե այդ մեկը խոսելիս լիներ իր, ասենք, գրքի, վերարկուի հետ, որին դիմում է դու-ով, այդ այնքան էլ սովորական չէր լինի մեզ համար։ Մենք առանց նրա խոսքերը լսելու էլ կմտածեինք, որ այդ գրքի կամ վերարկուի հետ, ըստ երևույթին, կապված են որոշ դեպքեր, հիշողություններ, որ այդ առարկաները խոսողի մեջ առաջացրել են կամ նրան հիշեցրել են որոշ ապրումներ, զգացումներ, և խոսողը կարծեք թե ուզում է բաժանել իր խոհերն ու ապրումները նրանց հետ. մի բան, որ սովորաբար արվում է մարդկանց նկատմամբ։ Նման դեպքերում խոսողը, երբ դիմում է առարկային, նրան դիմում է երկրորդ դեմքի անձնական դերանունով, դրանով հենց անձնավորում է նրան։

Ինչո՞ւ անձնական դերանունների առաջին, երկրորդ դեմքերով առարկա ցույց տալը այնքան սովորական չէ, որքան

երրորդ դեմքով։ Քերականական կատեգորիայի մեջ մենք տեսնում ենք առարկաների (դոյական), որպիսության (ածականն), թվի (թվական), շարժման (բայ), առարկաների հարաբերության (հոլովում) և այլնի ըմբռնումը։ Այդ նշանակում է, որ քերականական կատեգորիայի հիմքում հաճախ ընկած է լինում առարկայի օբյեկտիվ ռեալության այս կամ այն կողմը։ Դեմքի, այդ թվում և դերանվանական դեմքի, կատեգորիան քերականական կատեգորիա է։ Դերանվան առաջին, երկրորդ և երրորդ դեմքերը այլ կերպ կարելի է անվանել «խոսող», «խոսակից» և «նա, որի մասին խոսվում է»։ Քանի որ առարկաները, բառիս բուն իմաստով, խոսող և խոսակից լինել չեն կարող իրականության մեջ, այլ մենք ենք նրանց որպես այդպիսին ներկայացնում պայմանականորեն, նշանակում է առաջին և երկրորդ դեմքի անձնական դերանուններով առարկա ցույց տալը որոշ պայմանականություն ունի։ Երրորդ դեմքի անձնական դերանուններով թե՛ առարկա և թե՛ անձ ցույց տալը սովորական է այն պատճառով, որ երրորդ դեմքը ցույց է տալիս նրան, որի մասին խոսվում է, իսկ որպես այդպիսին հավասարապես կարող են հանդես գալ թե՛ առարկան և թե՛ անձը։

Այսպիսով՝ անձնական դերանունների բոլոր դեմքերը սովորաբար գործածվում են անձ ցույց տալու, երրորդ դեմքը՝ հավասարապես նաև առարկա ցույց տալու համար։ Երբեմն առարկա կարելի է ցույց տալ նաև առաջին և երկրորդ դեմքի անձնական դերանուններով։

Այն հանգամանքը, որ անձնական դերանունները ավելի գործածվում են անձ ցույց տալու, քան առարկա ցույց տալու համար, չի հակասում դերանունների դասդասման սկըզբունքին (որ դերանունները դասդասվում են ոչ թե ըստ այն բանի, թե ինչ են ցույց տալիս, այլ ըստ այն բանի, թե ինչպես են ցույց տալիս)։ Չի հակասում, որովհետև, նախ, ինչպես ասվեց, անձնական դերանունները ոչ միայն անձ են ցույց տալիս, այլև երբեմն առարկա, և, երկրորդ՝ այստեղ կարևոր է նրանց ունեցած որոշակի հարաբերության իմաս-

ալը, որի պատճառով էլ անձ ցույց տվող, բայց վերոհիշյալ հարաբերության իմաստ չունեցող դերանունները անձնական դերանուն չեն հանդիսանում։ Ի վերջո, ինչպես տեսանք, անձնական դերանուններին՝ անձ ցույց տալը ավելի բնորոշ լինելը հետևանք է նրանց դիմային հարաբերության։

Ելնելով ամբողջ վերոհիշյալից, անձնական դերանունների սահմանումը կարելի է ձևակերպել այսպես. անձնական (դիմային) կոչվում են այն դերանունները, որոնք ցույց են տալիս անձ (երբեմն առարկա)՝ ըստ խոսողի նկատմամբ ունեցած հարաբերության [1]։

Ըստ այդ հարաբերության անձնական դերանունները ունեն երեք դեմք։

Առաջին դեմքի *անձնական դերանուններն են՝* ես, մենք, ինձս, ինքներս։ *Ես և ինձս դերանունները ցույց են տալիս խոսողին։ Մենք և ինքներս ցույց են տալիս խոսողին՝ յուրայինների (իր կոլեկտիվի, համախոհների և այլնի) հետ միասին։*

Երկրորդ դեմքի *անձնական դերանուններն են՝* դու, դուք, ինձդ, ինքներդ։ *Դու և ինձդ գործածվում են խոսակցին ցույց տալու, իսկ դուք և ինքներդ դերանունները՝ խոսակիցներին կամ այն անձանց ցույց տալու համար, որոնց շարքն է դասվում խոսակիցը տվյալ դեպքում։*

Երրորդ դեմքի *անձնական դերանուններն են՝* նա, նրանք, ինքը, իրենք։ *Նա և ինքը դերանունները ցույց են տալիս ոչ խոսողին և ոչ խոսակցին, այլ մի երրորդ անձի, որի մասին խոսում է խոսողը։ Նրանք և իրենք դերանունները ցույց են տալիս նրանց, որոնց մասին խոսվում է։ Անձնական դերանվան այս կամ այն դեմքը գործածվում է այս կամ այն կոնկրետ պայմաններում, խոսողական տվյալ կոնկրետ հարաբերության մեջ միայն։ Միևնույն անձը կամ իր միևնույն վայրկյանին կարող է ցույց տրվել և՛ ես, և՛ դու, և՛ նա դե-*

---

1 *Համմ.* Грамматика русского языка, т. I, под. ред. акад. В. Виноградова и др., М., 1952, стр 27.

րանուններով՝ կախված անձի կամ առարկայի հարաբերությունից՝ խոսողի նկատմամբ: Եթե խոսողը I անձն է, նա իրեն ցույց կտա ես դերանունով: Նույն մոմենտին մի II անձ կարող է դիմել I անձին. այս դեպքում վերջինս ցույց կտրվի դու դերանունով: Հնարավոր է նաև, որ այդ նույն I անձը միևնույն մոմենտին հանդիսանա մի III անձի խոսակցության օբյեկտը, հետևապես և անվանվի նա դերանունով: Ինչպես տեսանում ենք, միևնույն անձը տարբեր անձնական դերանուններով ցույց տալը, այսինքն անձնական դերանվան տարբեր դեմքերի գործածությունը պայմանավորված է ցույց տրվող անձի կամ իրի հարաբերությամբ խոսողի նկատմամբ:

Մենք տեսանք, որ անձնական դերանվան յուրաքանչյուր դեմքի համար ունենք զույգ դերանուններ և՛ եզակի, և՛ հոգնակի թվով՝ ես–իմս, դու–իմդ, նա–իմը, մենք–իմներս, դուք–իմներդ, նրանք–իրենք: Իմաստային ի՞նչ տարբերություն կա այս զուգահեռ դերանունների միջև:

Առաջին և երկրորդ դեմքերի անձնական դերանունների զուգահեռ ձևերի միջև իմաստային էական տարբերություն չկա: Դրանք արտահայտում են միևնույն անձի կամ առարկայի վերաբերության իմաստ. այդ պատճառով էլ հաճախ իմս, իմդ դերանունները կարելի է փոխարինել ես, դու դերանուններով և ընդհակառակը:

Օր. «Մի քանի անգամ իմս եմ կարդացել» (Ար., էջ 464): «Տո՛, իմդ չէիր, մատղերը վրեդ» (ՆՋ, հատ., էջ 235): «Իմս էլ, ահա, իրը անաչառ դատավոր, պատժել եմ ինձ» (Մուր., III, էջ 306): Այս նախադասությունների իմս, իմդ դերանունները կարելի է փոխարինել ես, դու դերանուններով: Այդ դեպքում նախադասությունների իմաստը կմնա նույնը, միայն այն տարբերությամբ, որ համապատասխան դեմքերը այնպես ընդգծված չեն լինի, ինչպես իմս, իմդ դերանուններն են ընդգծում: Մի քանի անգամ ես եմ կարդացել: Տո, դու չէիր, մատղերը վրեդ: Ես էլ ահա իրը անաչառ դատավոր, պատժել եմ ինձ:

Ինքս, ինքդ *դերանունների՝ դեմք ցույց տալու հետ միասին այն ընդգծելու, շեշտելու յուրահատկությունն է պատճառը, որ նրանք հաճախ են գործածվում ես, դու, իսկ նրանց հոգնակի ձևերը՝* ինքներս, ինքներդ, մենք, դուք *դերանունների հետ դեմքը ընդգծելու կամ շեշտելու նպատակով.* ես ինքս, դու ինքդ, մենք ինքներս, դուք ինքներդ:

Օր. «Ես ինքս չեմ իմանում, թե ինչ եմ միտք անում» *(ՆՋՀ, էջ 90)։* «Ընթերցող, հիմա դու ինքդ դատիր» *(ԱՄ, էջ 299)։* «Դու ինքդ համաձա՞յն ես» *(ՆՋՀ, էջ 59)։* «Ես ինքս չեմ իմացել, ինչպե՞ս կարող էի քեզ հայտնել»։ *Մի քիչ ավելի հանդամանորեն անհրաժեշտ է կանգ առնել երրորդ դեմքի* ինքը *դերանվան և նրա հոգնակիի* (իրենք) *իմաստի վրա։*

Ինքը *դերանունը ևս դեմքը ավելի ուժեղ է շեշտում, քան նա դերանունը և այդ պատճառով էլ հաճախ գործածվում է նրա հետ միասին։*

Օր. «Նա ինքն ղդում էր պահանջ...» *(Շիրվ. IV, էջ 191)։* «Ու նա ինքը երկար կակուղ ճիպոտը վրա էր բերում առաջին պատահած եզանը» *(Ն. ա., էջ 163)։* «Նա ինքը ցանկացավ կռվել իր քրոջ հետ» *(ՆՋՀ, էջ 370)։*

Ինքը *դերանունը կարող է գործածվել նաև դոյականների հետ հիշյալ իմաստով։ Օր.* «Լևոնը ինքն իր դեմ զայրացած դուրս եկավ» *(ՆՋՀ, էջ 364)։* «Կոլխոզի նախագահն ինքն է պատրաստվում բաց անել միտինգը» *(ՆՋՀ, էջ 78)։*

Վերևում տեսանք, որ ինքս, ինքդ *դերանունները առանձին գործածվելիս (այսինքն՝ ո՛չ* ես, դու *դերանունների հետ) կարելի է փոխարինել* ես, դու *դերանուններով։* Ինքը *դերանունը միայն որոշ դեպքերում կարելի է փոխարինել* նա *դերանունով. իսկ հաճախ չի կարելի՝ նրանց արտահայտած տարբեր առարկայական վերաբերության պատճառով, և նույնիսկ դրանցից մեկը մյուսով փոխարինելը կարող է աղավաղել միտքը։ Ո՞ր դեպքերում է լինում այդ։*

Հաճախ մենք անձնական դերանվան երրորդ դեմքով ցույց ենք տալիս մեկին, որը գործողության է կատարում։ Այդ գործողության օբյեկտը կարող է լինել և՛ հենց ինքը գործո-

ղութիւն կատարողը, և՛ այդ գործողութիւն կատարողին պատկանող առարկան։ Օր. Նա կարողանում է ուրիշի աչքերով նայել իր վրա։ Նա շատ է սիրում իր գրքերը։ Նա դժգոհ է իրենից։

Նման դեպքերում գործողության օբյեկտը ցույց է տրվում ինքը դերանունով։ Այդ գործողության օբյեկտը կարող է լինել մեկ ուրիշը կամ սրան պատկանող առարկան։ Օր. Նա կարողանում է ուրիշի աչքերով նայել նրա վրա։ Նա շատ է սիրում նրա գրքերը։ Նա դժգոհ է նրանից։ Այս դեպքում, ինչպես տեսնում ենք, գործողության օբյեկտը ցույց է տրվում նա դերանունով։

«Երեխային կերակրող կանանցից մեկը մոտենում է Լևոնին և մեկնում է նրան իր աշխօրերի գրքույկը» (Անթ., էջ 185)։ Այս օրինակում իր դերանունը ցույց է տալիս գործողություն կատարողին (կանանցից մեկը), իսկ նրան դերանունը՝ ուրիշին (Լևոնին)։ Չի կարելի այս դերանունները փոխարինել մեկը մյուսով. դրանով կամ նախադասության իմաստը կաղավաղվի (երեխային կերակրող կանանցից մեկը մոտենում է Լևոնին և մեկնում է իրեն նրա աշխօրերի գրքույկը), կամ էլ այլ իմաստ կստացվի (երեխային կերակրող կանանցից մեկը մոտենում է Լևոնին և մեկնում է նրան նրա աշխօրերի գրքույկը)։

Բերենք մի այլ օրինակ. «Բայց երբ ատուգեցին, դուրս եկավ ընդամենը տասներեք աշխօր։ Այնինչ իր հաշվով, ինքը պիտի ունենար տասնհինգ աշխօր։ Վասակն էլ ասում էր, թե նրա աշխօրերի թիվը տասնհինգից պակաս չպետք է լինի» (Անթ., էջ 185)։ Այս նախադասություններում ևս ինքը և նա դերանունները մեկը մյուսով փոխարինելու դեպքում կփոխվեր նախադասության միտքը։

Այսպիսով՝ նա և ինքը դերանունները, ի տարբերություն 1-ին և 2-րդ դեմքի համապատասխան զուգահեռ դերանուններին, հաճախ ունենում են տարբեր իմաստներ։

Մի քանի խոսք անձնական դերանունների երեք դեմքերի առարկայական վերաբերության որոշակի լինելու կամ չլինե-

լու մասին։ Պրոֆ. Գ. Սեվակը քննադատելով ակադ. Մեշչանինովի այն կարծիքը, թե բայի դեմքերը անհավասարարժեք են սուբյեկտի իրենց դրսևորմամբ, որ «առաջին երկու դեմքերի մեջ նա պարզ է, իսկ երրորդի մեջ կարող է պարզ չինել», գտնում է, որ թե բայի և թե անձնական դերանվան բոլոր դեմքերը սուբյեկտի դրսևորման տեսակետից հավասարարժեք են։ Պրոֆ. Գ. Սևակը ցույց է տալիս, թե ինչպես ամբողջական կոնտեքստից անջատ վերցրած նախադասության մեջ անորոշ կարող է լինել ինչպես երրորդ, այնպես էլ առաջին ու երկրորդ դեմքերի առարկայական վերաբերությունը [1]։

Մ. Գորկին իր հոդվածներից մեկում, խոսելով սկսնակ գրողների լեզվական թերությունների մասին, այլ տիպի լեզվական սխալների հետ միասին նշում է անձնական դերանվան 3-րդ դեմքի սխալ գործածության օրինակ. «Հայրը մեռավ, երբ նա ինը տարեկան էր» [2]։ Նույնպիսի օրինակ կարելի է բերել և 1-ին ու 2-րդ դեմքի անձնական դերանունների համար։ «Աշոտը հանդիպեց Արամին։— Դու պետք է շատ աշխատես, մինչդեռ ծուլանում ես,—ասաց նա»։ Այս օրինակում չի հասկացվում ինչպես երրորդ, այնպես էլ երկրորդ դեմքի անձնական դերանվան վերաբերությունը։ Ճիշտ կառուցված խոսքի մեջ (իսկ խոսքը պետք է ճիշտ կառուցել) որոշակի հասկացվում է դերանվան բոլոր դեմքերի առարկայական վերաբերությունը, այլապես ինչպես 3-րդ, այնպես էլ 1-ին և 2-րդ դեմքերի առարկայական վերաբերությունը կարող է ճիշտ չհասկացվել։

Բայց այստեղ կա մեկ ուրիշ, ուշադրության արժանի մոմենտ։ Դա այն է, որ երրորդ դեմքի դերանվան միջոցով անձը կամ առարկան ոչ հասկանալի և ոչ որոշակի արտահայ-

---

[1] Տե՛ս ՀՍՍՌ ԳԱ-ի Լեզվի ինստիտուտի «Աշխատությունների ժողովածու», հտ. 4-րդ, 1949 թ., էջ 17—19։

[2] Մ. Գորկի, Գրական հրապարակախոսական հոդվածներ, էջ 95, Հայպետհրատ, 1949 թ.։

տելու ավելի շատ հնարավորություն կա, քան առաջին ու երկրորդ դեմքի դերանունների համար։ Դա բխում է այն բանից, որ երրորդ դեմքով ցույց տրվող անձը կամ իրը կարող են խոսակցության մոմենտին ներկա չլինել։ Այս հանգամանքը եթե զուգակցվում է խոսողի միտումնավոր վերաբերմունքի, խոսքը ճիշտ չկառուցելու կամ այլ հանգամանքների հետ, կարող է պարզ չլինել երրորդ դեմքի անձնական դերանվան ցույց տված առարկայի ով կամ ինչ լինելը։ Բայց, կրկնում ենք, ճիշտ կառուցված խոսքի մեջ բոլոր դեմքերի առարկայական վերաբերությունը միշտ էլ հասկանալի է լինում։

Հենց դրանով, այսինքն անձնական դերանունների ունեցած որոշակի հարաբերության իմաստով է պայմանավորված այն, որ նրանց, իբրև դերանվան մեկ տեսակի, թեև բնականաբար հատուկ է չտարբերակված, ընդհանուր իմաստը, բայց խորթ է անորոշ առումը։

3. ՑՈՒՑԱԿԱՆ ԴԵՐԱՆՈՒՆՆԵՐ

Ո՞րն է այն առանձնահատկությունը, որով ցուցական դերանունները տարբերվում են մյուս դերանուններից։ Իրենց բնորոշ առանձնահատկության դրսևորման բնույթի տեսակետից ցուցական դերանունները կարելի է բաժանել երկու խմբի. 1) սա, դա, նա, այս, այդ, այն, սույն, այսպես, այդպես, այնպես, այսպիսի, այդպիսի, այնպիսի, այսքան, այդքան, այնքան, այսչափ, այդչափ, այնչափ, այստեղ, այդտեղ, այնտեղ. 2)նույն, միևնույն, նույնպես, նույնպիսի, նույնքան, նույնչափ, մյուս։

Ցուցական դերանուններով առարկա ցույց տալու առանձնահատկության մասին Մ. Աբեղյանը գրում է. «Երբ առարկան առաջին դեմքին մոտ է, կամ մոտ է մտածվում, դրվում է սա, այս. երբ երկրորդ դեմքին մոտ է, կամ մոտ է մտածվում, դրվում է դա, այդ. իսկ երբ առարկան առաջին և երկրորդ դեմքից էլ հեռու է, կամ հեռու է մտածվում, դրվում է

ձա, այն»[1]։ *Այս բացատրությունից հետևում է, որ առարկան և այլն ցուցական դերանունով ցույց են տրվում առաջին և երկրորդ դեմքերի նկատմամբ ունեցած տարածական հարաբերությամբ։*

Այս տեսակետից ցուցական դերանունների առաջին խումբը կարելի է բաժանել հետևյալ երեք շարքերի.

սա	*դա*	*նա*
այս	*այդ*	*այն*
սույն	—	—
այսպես	*այդպես*	*այնպես*
այսպիսի	*այդպիսի*	*այնպիսի*
այսքան	*այդքան*	*այնքան*
այսչափ	*այդչափ*	*այնչափ*
այստեղ	*այդտեղ*	*այնտեղ*

(Պայմանական կերպով այս շարքերն անվանենք առաջին շարք *(սա և այլն),* երկրորդ շարք *(դա և այլն),* երրորդ շարք *(ձա և այլն)։* Սա, դա, ձա և այս, այդ այն *դերանունների իմաստի մասին վերևում ասվածը պետք է վերաբերել նաև համապատասխան շարքերի մյուս դերանուններին, որոնք ցույց են տալիս առաջին և երկրորդ դեմքերի մոտ կամ դրանցից հեռու գտնվող առարկայի կամ էլ առաջին և երկրորդ դեմքերի մոտ կամ դրանցից հեռու կատարվող գործողության, եղելության հատկանիշ։*

Այսպիսի *դրքեր ես շատ եմ կարդացել։* Այդպիսի *դրքեր ես շատ եմ կարդացել։* Այնպիսի *դրքեր ես շատ եմ կարդացել։* Այսքան (այսչափ) *դրքեր ո՞վ ունի։* Այդքան (այդչափ) *դրքեր ո՞վ ունի։* Այնքան (այնչափ) *դրքեր ո՞վ ունի։ Այս նախադասություններում* այսպիսի, այսքան, այսչափ *դերանունները ցույց են տալիս 1-ին դեմքի մոտ եղած առարկաների հատկանիշը.* այդպիսի, այդքան, այդչափ *դերանունները՝ երկրորդ դեմքի մոտ գտնվող առարկաների հատկանիշը.*

---

1 Մ. Աբեղյան, *Աշխարհաբարի քերականություն, դասագիրք ստորին դասարանների համար, 1906, Վաղարշապատ, էջ 53։*

այնպիսի, այնման, այնչափ դերանունները՝ 1-ին և 2-րդ դեմքերից հետու գտնվող առարկաների հատկանիշ:

Այսպես-ը ցույց է տալիս խոսողի մոտ կատարված կամ խոսողի կատարած, այդպես-ը՝ խոսակցի մոտ կատարված կամ խոսակցի կատարած, այնպես-ը՝ առաջին և երկրորդ դեմքերից հետու կատարված գործողության հատկանիշ: Նա այսպես է սովորում: Նա այդպես է սովորում: Նա այնպես է սովորում:

Այստեղ դերանունը ցույց է տալիս առաջին դեմքի մոտ կամ առաջին դեմքի գտնված տեղը, որտեղ կատարվում է գործողությունը, կամ գտնվում է առարկան: Այստեղ ամեն ինչ նոտատ է: Այս օրինակում այստեղ ցույց է տալիս այն տեղը, որտեղ գտնվում է առաջին դեմքը: Արի այստեղ: Այս օրինակում այստեղ դերանունը ցույց է տալիս առաջին դեմքի մոտ գտնվող տեղ կամ նրա գտնված տեղը: Նույնի համապատասխան իմաստներն ունեն այդտեղ, այնտեղ դերանունները: Այդտեղ ցույց է տալիս երկրորդ դեմքին մոտ կամ նրա գտնված տեղը, այնտեղ՝ առաջին և երկրորդ դեմքերից հետու տեղ:

Պետք է նկատի ունենալ, որ առարկան միշտ չէ, որ կարող է գտնվել կամ միայն 1-ին, կամ միայն 2-րդ դեմքի մոտ: Հնարավոր է, որ առարկան գտնվի և՛ 1-ին, և՛ 2-րդ դեմքերի մոտ:

Այսպես՝ ենթադրենք խոսողը և խոսակիցը գտնվում են միևնույն գետի կամ ճանապարհի մոտ կամ մեջ. այդ դեպքում խոսողը գետը, ճանապարհը ցույց կտա ոչ թե դա, այդ, այլ սովորաբար սա, այս դերանուններով: Սա (այս, այս գետը) գալիս է հեռվից: Սա (այս, այս ճանապարհը) նոր են կառուցել: Նման դեպքերում առարկայի հատկանիշը ևս ցույց է տրվում առաջին շարքի դերանուններով *:

* Հետաքրքրական է, որ 1-ին և 2-րդ դեմքի անձնական դերանուններով արտահայտված բազմակի ենթակա ունեցող նախադասության առարկայական դեմքով համապատասխանում է նույնպես ոչ թե երկրորդ, այլ առաջին դեմքին, այսինքն՝ այն արտահայտվում է առաջին դեմքով: Օր.

Սակայն երբեմն խոսողը ցուցական դերանունը գործածում է ոչ թե առաջին և երկրորդ դեմքերին մոտ կամ դրանցից հեռու եղող առարկան, այլ՝ խոսքի մեջ նշված, անվանված առարկան ցույց տալու, երբեմն նույնիսկ որևէ նախադասություն, արտահայտություն ցույց տալու համար։

Այսպես. Ն. Զարյանը «Հայրավան»-ում խոսելով Մ. Ավագյանի աղավնիների մասին՝ ավելացնում է. «Այդ աղավնիների երամում կան իրոք ընտանի ղույգեր։ Եվ այդ ընտանի ղույգերի վրա է հենվում Ավագյանը» (ՆՋՀ, էջ 19)։

Խոսքի մեջ նշված առարկան ցուցական դերանունով ցույց տալու հիմքում ընկած է ցուցական դերանունների՝ վերևում բացատրված տարածական հարաբերությունը, սակայն, որոշ յուրահատկությամբ։ Նման դեպքերում հեղինակը կամ խոսողը նկատի է առնում ոչ թե այն, որ այդ առարկան գտնվում է 1-ին և 2-րդ դեմքերից հեռու կամ նրանց մոտ, այլ՝ այն, որ առարկան նշվել, անվանվել է խոսքի մեջ, և ցուցական դերանունը գործածում է խոսքի մեջ նշված առարկան ցույց տալու համար։ Հեղինակը կամ խոսողը խոսելով դեպքերի, անձանց, առարկաների մասին, որանք ներկայացնում է ընթերցողին այնպես, որ իբրև թե ընթերցողը (որը որոշ իմաստով հեղինակի խոսակիցն է) տեսնում է այդ դեպքերը, իրերը, անձանց, իբրև թե դրանք գտնվում, դեպքերը կատարվում են խոսակցի մոտ։ Այս հանգամանքը թույլատրում է հեղինակին՝ վերևի օրինակում աղավնիների անվան հետ գործածել այդ դերանունը։

Այս դեպքում (խոսքի մեջ նշված առարկան և այլն ցուցական դերանունով ցույց տալու դեպքում) ցուցական դերանունները չունեն կայուն կիրառություն։ Պատճառն այն է, որ խոսքի մեջ գործածված առարկան, հատկանիշը, որպես այդպիսին վերցրած, միատորեն չեն գտնվում ո՛չ 1-ին, ո՛չ էլ 2-րդ դեմքի մոտ, և ինչպես խոսողն այն կարող է պատկե-

---

ես և դու գնում ենք (ոչ թե գնում եք)։ Մենք և դուք շատ անեկդոտներ ունենք (ոչ թե՝ ունեք), և այլն։

բացնել իբրև 2-րդ դեմքի մոտ դնելով, այնպես էլ կարող է պատկերացնել իբրև 1-ին դեմքի մոտ դնելով։ Այդ է պատճառը, որ վերոհիշյալ օրինակի այդ դերանունը կարելի է փոխարինել այս դերանունով։ Այս աղավնիների երամում կան իրոք ընտանի ղույգեր։ Եվ հենց այս ընտանի ղույգերի վրա է հենվում Ավազյանը։ Այս դեպքում աղավնիները պատկերացվում են իբրև խոսողի մոտ դնելով։

Բերենք մի այլ օրինակ.

«Սովետական քաղաքացի
Ու կոմունիստ եմ ես։
Մի՞թե սրանից վսեմ ու բարձր
Բախտ կա մարդկային» (ՆՋ, Հատ., էջ 117)։

Սրանից դերանունով ցույց է տրվում առաջին նախադասությամբ արտահայտված իրողությունը։ Այստեղ հեղինակը նկատի ունի, որ այդ միտքը ինքն է հայտնում և իր ցույց տված իրողությունը մտածում է որպես իր մոտ դնելով։ Բայց նա կարող է նաև արդեն խոսակցին հայտնի այդ իրողությունը պատկերացնել, մտածել իբրև խոսակցի մոտ դնելով և այն ցույց տալ դրանից դերանունով։

Սովետական քաղաքացի
Ու կոմունիստ եմ ես։
Մի՞թե դրանից վսեմ ու բարձր
Բախտ կա մարդկային։

Խոսքի մեջ նշված առարկան, հատկանիշը այս ցուցական դերանուններով ցույց տալու այդ առանձնահատկությունն է պատճառը, որ հաճախ միևնույն նախադասության մեջ կարող են հենց նույն առարկան, հատկանիշը ցույց տրվել տարբեր շարքերի դերանուններով։ «Մարդկային կենդանաձայներին խառնվեց հարյուրավոր նժույգների... սուր վրնջյուն և մարդ վիրավորների կենդանաձայն ոռնոց։ Հազարավոր մարդիկ իրենց կյանքում դեռ չէին լսել այդպիսի մարդկային որոտ... Դեռ չէին տեսել մարդիկ այսպիսի այլակերպված, աչքերի բիբերը ակնախառոչում կորած հրազարհուռ դեմքեր» (Անթ., էջ 94)։

Այսպիսով՝ որոշ չափով պետք է տարբերել ցուցական դերանվան գործածությունը՝

1. Առարկան և այլն որպես իրականության մեջ եղած ցույց տալու դեպքում։

2. Առարկան և այլն որպես խոսքի մեջ նշված ցույց տալու դեպքում։

Այս երկու դեպքում էլ ցուցական դերանունների գործածությունների միջև սկզբունքային տարբերություն չկա, երկուսի հիմքում էլ ընկած է միևնույն հարաբերությունը։ Տարբերությունն այն է, որ առաջին դեպքում առարկան ինքը դանվում է առաջին կամ երկրորդ դեմքին մոտ կամ նրանցից հեռու և այդպես էլ ցույց է տրվում։ Իսկ երկրորդ դեպքում անկախ այն բանից, թե առարկան իրականում որ դեմքին մոտ և որից հեռու է դանվում, մատնանշում է իբրև 1-ին ու 2-րդ դեմքերին մոտ գտնվող։ Այդ առարկան կամ նրա հատկանիշը սովորաբար ցույց են տրվում 1-ին և 2-րդ շարքի դերանուններով։ Դրա պատճառն այն է, որ քանի որ առարկան, հատկանիշը նշված են խոսքի մեջ, կարող են պատկերացվել իբրև խոսողի մոտ գտնվող, և քանի որ խոսքը հայտնվում է խոսակցին, ուրեմն կարող են նաև պատկերացվել իբրև խոսակցի մոտ գտնվող։ Ցուցական դերանունների այդ երկու դեպքի գործածությունների մյուս տարբերությունն, ինչպես նշվեց, այն է, որ առաջին դեպքում ցուցական դերանունն ունի կայուն գործածություն, մի շարքի դերանունը չի կարելի փոխարինել մի այլ շարքի դերանունով, իսկ երկրորդ դեպքում ցուցական դերանունը չունի կայուն գործածություն. դրանք կարելի է ցույց տալ և՛ 1-ին, և՛ 2-րդ շարքի ցուցական դերանուններով։

Սակայն լինում են նաև այնպիսի դեպքեր, երբ խոսքի մեջ առարկան և այլն, որը խոսողը ցանկանում է ցույց տալ դերանունով, ոչ թե արդեն նշվել, ներկայացվել է ընթերցողին կամ խոսակցին, այլ պիտի ներկայացվի դերանունից հետո։ Այդպիսի դեպքերում գործածվում են սովորաբար առաջին շարքի ցուցական դերանունները։ Օր. «Հայ ժողովրդի համար

սուրբ է այս պատգամը. ավելի լավ է մեռնել, քան թե ծառայել բռնակալներին» (Խս., էջ 451)։ Այստեղ այս դերանունը չի կարելի փոխարինել այդ դերանունով։ Պատճառը դարձյալ այս և այդ դերանունների ունեցած հարաբերության իմաստն է։ Այսպիսի դեպքերում քանի որ առարկան և այլն դերանունից հետո պիտի ներկայացվեն ընթերցողին, խոսակցին, նշանակում է դերանվան գործածության պահին այդ օբյեկտը չի կարելի, թեկուզ և մտովի պատկերացնել որպես խոսակցի մոտ գտնվող։ Այն մտածվում է և կարող է մտածվել միայն իբրև խոսողի մոտ գտնվող, ուստի ցույց է տրվում առաջին շարքի դերանունով։ Եթե շրջենք այդ նախադասությունը և պատգամը տանենք դերանունից առաջ, ապա այս դերանունը ոչպես կերպով կարելի կլինի փոխարինել այդ դերանունով, քանի որ այս դեպքում դերանունով ցույց տրվող պատգամը արդեն հայտնի կլինի խոսակցին, ուրեմն կարելի կլինի մտածել այն իբրև խոսակցի մոտ գտնվող։ Այսպես՝ «Ավելի լավ է մեռնել, քան թե ծառայել բռնակալներին. հայ ժողովրդի համար սուրբ է այդ (այս) պատգամը»։

Այսպիսով՝ առանձին դեպքերում դրսևորման որոշ յուրահատկություններով հանդերձ՝ տարածական հարաբերությունը ցուցական դերանունների համար բնորոշ հատկանիշ է։

***

Ցուցական դերանունները, բացի տարածական հարաբերության իմաստից, ունեն նաև ժամանակային հարաբերության իմաստ։ Նրանք միայն ժամանակի հարաբերության իմաստ են արտահայտում ժամանակ ցույց տվող բառերի հետ գործածվելիս։ Այդ բառերն են՝

1. Ժամանակի միավորների անունները. վայրկյան, րոպե, ժամ, օր, շաբաթ, ամիս, տարի, դար և այլն.

2. Օրվա հատվածների կամ մասերի անունները. գիշեր,

ցերեկ, առավոտ, կեսօր, երեկո, կեսգիշեր, իրիկնամուտ, ծեգ և այլն.

3. Տարվա եղանակների անունները. գարուն, ամառ, աշուն, ձմեռ.

4. Շաբաթվա օրերի անունները. երկուշաբթի, երեքշաբթի և այլն.

5. Ամիսների անունները. հունվար, փետրվար, մարտ և այլն.

6. Ժամանակ ցույց տվող այլ բառեր. ժամանակ, պահ, մոմենտ, տարեվերջ, տարեսկիզբ, գարավերջ, գարասկիզբ, կիսամյակ, հնգամյակ, տասնամյակ, հարյուրամյակ և նմանները. գասամիջոց, ընդմիջում, արձակուրդ, քառորդ (ուսումնական տարվա) և նմանները. շրջան (ժամանակի իմաստով), ժամանակաշրջան, գարաշրջան և այլն:

Օրինակներ՝ «Այս գիշեր իսկ սուրհանդակներ ուղարկենք մեր զորագնդերին» (Դվ, էջ 345)։ «Այդ գիշեր ինձ վիճակված էր չորս անգամ միևնույն ձևով հասնել Դնեպրի աջ ափին անցած մեր մի զորամասին» (ԱՄ, ՈՄ, էջ 92)։ «Իսկ դուք այն ժամանակ չէի՞ք ճանաչում նրանցից որևէ մեկին» (Ն. ս., էջ 142)։ «Մենք հնարավորություն կտանք նրան պատրաստվել և հենց այս աշնանը մտնել ասպիրանտուրա» (Ն. ս., էջ 190)։

Հասկանալի է, որ այս օրինակներում այս, այդ, այն դերանունները ցույց են տալիս ոչ թե տարածական, այլ ժամանակային հարաբերություն։

Մենք ուզում ենք համեմատաբար ավելի հանգամանորեն քննել ցուցական դերանունների ժամանակային հարաբերությունը և մտնել որոշ մանրամասնությունների մեջ, նկատի ունենալով այն հանգամանքը, որ այդ հարցի մասին, որքան մեզ հայտնի է, խոսվում է առաջին անգամ և թե այն, որ ցուցական դերանունների ժամանակային հարաբերության իմաստը տարածական հարաբերության համեմատությամբ ունի շատ նրբերանգներ։

Ցուցական դերանուններով ժամանակ կամ ժամանակի

միավոր ցույց տալու իմաստի և գործածությունների մեջ դարձյալ պետք է տարբերել՝ 1) երբ ցուցական դերանունը գործածում ենք ժամանակը իբրև իրականության մեջ եղող հատկանիշ ցույց տալու համար, 2) երբ ժամանակը ցույց ենք տալիս իբրև խոսքի մեջ նշված։

Նախ քննենք ցուցական դերանունների իմաստը, գործածությունները առաջին դեպքում։ Այդ դերանունների ժամանակային հարաբերության իմաստն ունի որոշ յուրահատկություններ ի տարբերություն նրանց տարածական հարաբերության իմաստի, չնայած որ հարաբերություն ցույց տալու սկզբունքը նույնն է։ Ի տարբերություն ցուցական դերանունների ցույց տված տարածական հարաբերության, այսպես ասած, համեմատության օբյեկտների (որոնք, ինչպես տեսանք, երեքն են՝ 1) առաջին դեմք, որի մոտ գտնվող առարկան, հատկանիշը ցույց է տրվում 1-ին շարքի ցուցական դերանուններով. 2) երկրորդ դեմք, որի մոտ գտնվող առարկան, հատկանիշը ցույց է տրվում երկրորդ շարքի ցուցական դերանուններով. 3) առաջին և երկրորդ դեմք, որոնցից հեռու գտնվող առարկան, հատկանիշը ցույց է տրվում երրորդ շարքի դերանուններով), ժամանակային հարաբերության օբյեկտն այն ժամանակն է, որում գտնվում են առաջին և երկրորդ դեմքերը։ Սովորաբար այն ժամանակը, որում խոսում է կամ գտնվում է առաջին դեմքը, որպես այդպիսին, բնականաբար նույնն է նաև խոսակցի կամ երկրորդ դեմքի համար, քանի որ խոսակիցը կամ երկրորդ դեմքը որպես խոսակից է հանդես գալիս այն ժամանակ, երբ մեկը (1-ին դեմք) նրա հետ խոսում է, դիմում է նրան։ Այսպիսով ստացվում է, որ առաջին և երկրորդ դեմքերի դոյության ժամանակը նույնն է, ընդհանուր է այդ երկուսի համար։ Իսկ մենք ցուցական դերանունների տարածական հարաբերության իմաստը քննելիս տեսանք, որ այն, ինչ որ ընդհանուր է առաջին և երկրորդ դեմքերի համար (երբ ցույց տրվող օբյեկտը մոտ է առաջին և երկրորդ դեմքերին), ցույց է տրվում 1-ին շարքի դերանուններով։ Օրինակ՝ Դուք այս տարի ղեկալի

հաջողություններ ևք ձեռք բերել: Այն տարին, որը ցույց է տրվում այս դերանունով ներկա, ընթացիկ տարի է թե՛ առաջին և թե՛ երկրորդ դեմքերի համար, ուստի և ցույց է տրվում առաջին շարքի դերանունով:

Սակայն երբեմն (հաղվագյուտ դեպքերում) խոսողը կարող է երկրորդ դեմքով դիմել անցյալում եղած կամ ապագայում լինելիք անձանց, անցյալի և ապագայի սերունդներին: Պարզ է, որ այս դեպքում առաջին դեմքի գոյության ժամանակը չի նույնանում երկրորդ դեմքի գոյության ժամանակի հետ: Նման դեպքերում երկրորդ դեմքի գոյության ժամանակը, ժամանակի միավորը կարելի է ցույց տալ 2-րդ և 3-րդ շարքերի ցուցական դերանուններով: Սակայն առաջին և երկրորդ դեմքերի ժամանակների այս տարբերությունը լինում է սակավ դեպքերում. սովորականն այն է, որ այդ երկու դեմքերի, որպես այդպիսիների, գոյության ժամանակը ընդհանուր է: Երբ այս սովորականը նկատի ենք ունենում, ասացվում է, որ վերջին հաշվով ցուցական դերանուններով ժամանակ ցույց տալու համար որպես համեմատության կետ առաջին դեմքի գոյության, այսինքն խոսելու ժամանակն է հանդիսանում: Խոսելու ժամանակը և դրան մոտ ժամանակը ցույց են տրվում 1-ին շարքի ցուցական դերանուններով, իսկ խոսելու մոմենտից հետու ժամանակները՝ երրորդ շարքի ցուցական դերանուններով:

Նախ քննենք առաջին շարքի ցուցական դերանունների ժամանակի հարաբերության իմաստը և այդ իմաստով նրանց գործածությունների յուրահատկությունները: «Այս շաբթում լավ ենք աշխատում» նախադասության մեջ այս դերանունով ցույց է տրվում ժամանակի ներկա միավորը՝ այն շաբաթը, որի մեջ է մտնում խոսելու մոմենտը: «Այս շաբթում լավ աշխատեցինք» նախադասության մեջ այս դերանունով ցույց տրված ժամանակը կարող է լինել և ընթացիկ, և մոտ անցյալ (նախորդ շաբաթ): «Այս շաբթում լավ կաշխատենք» նախադասության մեջ այս դերանունը կարող է ցույց տալ և՛ ընթացիկ, ներկա շաբաթ, և՛ գալիք, հաջորդ շաբաթ: Դժվար

չէ նկատել, որ միևնույն դերանունով այս կամ այն շաբաթը ցույց տալու գործում որոշ դեր է կատարում բայի ժամանակը [1]։ Բայի տարբեր ժամանակների մոցրած որոշ նրբերանգներով հանդերձ՝ առաջին շարքի ցուցական դերանուններով ցույց է տրվում ընթացիկ կամ խոսելու մոմենտին մոտ ժամանակ։

Այժմ քննենք երրորդ շարքի դերանունների ժամանակի հարաբերության իմաստը։ Այդ դերանունները ցույց են տալիս խոսելու մոմենտից հեռու (անցյալ կամ ապագա) ժա-

---

1 Սովորաբար բայի ներկա ժամանակով արտահայտված սաորոդյալ ունեցող նախադասության մեջ առաջին շարքի ցուցական դերանունը ցույց է տալիս ընթացիկ ժամանակ։ Օր. «Դարմանացանի նախապատրաստման այս պատասխանատու օրերին, ընկեր Շամախյանը... առավոտից մինչև երեկո ուսուցչուհիների հետ կանգնած, պատերի տակ պատմում է նրանց իր ձիու քաջագործությունների մասին» (ՆՁՀ, էջ 14)։ «Հայրենական պատերազմի այս ահեղ օրերում մենք առնում ենք սովետական իշխանության իրականացման 25-ամյակը» (Իս., էջ 301)։

Անցյալ ժամանակներով արտահայտված սաորոդյալ ունեցող նախադասության մեջ առաջին շարքի ցուցական դերանունը կարող է ցույց տալ ընթացիկ ժամանակ և նախորդ (ամենամոտ) ժամանակ։ «Հանդիսատես եղանք այս երեկո» (Ն.-Դ., IV, էջ 121)։ «Այս տարի մեր կոլտնտեսականներն ավելի ճերեկել են ու ցանել, քան խաղաղության տարիներին» (Իս., էջ 507—508)։ Իսկ երբ առաջին շարքի ցուցական դերանունը գործածվում է, այսպես ասած, որոշ ժամանակամիջոցներով պայմանականորեն ընդմիջվող ժամանակահատվածներ (օր. ուսումնական տարի, սակատեմիական ժամ և այլն) ցույց տալու համար, եթե սաորոդյալն արտահայտված է բայի անցյալ ժամանակով, ապա ցույց է տրվում ժամանակի նախորդ միավորը։ Եթե մեկը դասամիջոցին ասում է՝ «այս ժամը հետաքրքիր անցավ», կամ արձակուրդներին ասում է՝ «այս ուսումնական տարին հաջող փակեցի», նկատի ունի նախորդ ժամը, նախորդ ուսումնական տարին։

Եթե նախադասության սաորոդյալն արտահայտված է բայի ապառնի ժամանակով, ապա այդ նախադասության մեջ առաջին շարքի ցուցական դերանունով կարող են ցույց տրվել ընթացիկ և հաջորդ ժամանակի միավորներ։ Օր. «Եթե դպրերն սկսվեն այս ամառ, մինչև ձմեռ թերևս կսովրեմ» (Դվ, էջ 140)։ «Հետևից երևում է Դ... գյուղը, ուր մենք այս գիշեր պիտի իջևանենք» (Մուրացան)։ «Թույլ ավեք, որ Աննան այս գիշեր ինձ

մանակ, ժամանակի միավոր. «Բայց ես չեմ մոռանա այն դարնան իրիկունը» (ՀՔ, III, էջ 73)։ Այն դերանունը ցույց է տալիս, որ իրիկունը ոչ թե խոսելու ժամանակին մոտ է, այլ հեռու։ Խոսելու ժամանակին մոտ իրիկուն ցույց տալու համար պետք է ասվեր. բայց ես չեմ մոռանա այս իրիկունը։ Այլ օրինակներ. «Բայց անցան այն օրից շատ տարիներ» (Անթ., էջ 36)։ «Այն ժամանակ էլ տխուր չես լինի» (ՀՔ, III, էջ 132)։

«Բռունցքի մեջ հավաքելով հոգին՝
Վաչեն հրամայեց.
— Մարտի՛ց, կրա՛կ...։

մոտ մնա» (Շերվ., IV, էջ 184)։ Այսպես ասած, ընդմիջվող ժամանակի միավորների միջանկյալ ժամանակահատվածներում, որը առաջին շարքի ցուցական դերանունները դործածվում են բայի ապառնի ժամանակով արտահայտված ստորոգյալ ունեցող նախադասության մեջ, նրանք ցույց են տալիս ժամանակի հաջորդ միավորը։ Եթե մեկը դասամիջոցին ասում է «Այս ժամը հետաքրքիր կանցնի», կամ արձակուրդին ասում է «Այս ուսումնական տարում լավ պիտի աշխատեմ», նկատի ունի հաջորդ ժամը, հաջորդ ուսումնական տարին։

Եթե նախադասության ստորոգյալն արտահայտված է հրամայական եղանակի բայով, ապա այդ նախադասության մեջ քննարկվող դերանուններով ցույց է տրվում ընթացիկ կամ հաջորդ ժամանակի միավոր։ Օր. «Իշխան, չդնա՛ս, մնա՛ այս գիշեր» (Դվ, էջ 199)։ «Հենց էս րոպեիս վե՛ր կաց և դնա՛ քարտուղարի մոտ» (ՆՋՀ, էջ 199)։

Առաջին շարքի ցուցական դերանունների ժամանակային հարաբերության այս իմաստը և այդ իմաստով նրա գործածությունները վերաբերում են հատկապես այն դեպքերին, երբ ցույց տրվող ժամանակի անունները նախադասության մեջ կատարում են ժամանակի պարագայի և ենթակայի պաշտոն։ Իսկ երբ այդ բառերը նախադասության մեջ հանդես են գալիս ոչ որպես պարագա կամ ենթակա, այլ որպես խնդիր, այդ դեպքում հաճախ բայի ժամանակով հնարավոր չէ որոշել ցուցական դերանունով ցույց տված ժամանակի ներկա, անցյալ կամ ապառնի լինելը։ Օր. այս տարուց մենք շատ դոհ ենք։ Հաջորդ ժամը այս ժամից ավելի հետաքրքիր կլինի։ Այսպիսի բովանդակությից տարիներ մենք շատ անց կկացնենք։ Այս օրինակներում այս, այսպիսի դերանուններով ցույց տրված ժամանակի միավորները կարող են լինել թե ներկա, թե նախորդ, իսկ երբեմն նաև հաջորդ։

Նրա երկյուղն անցավ այն ժամանակ» (ՆՋ, III, էջ 258):

Խոսքի մեջ նշված ժամանակը, որպես այդպիսին, ցույց է տրվում սովորաբար երկրորդ շարքի ցուցական դերանուններով: Օր. «Մութ դիշեր էր. այնպես թանձր էր խավարը, որ թվում էր, թե կարելի է սվինով խոցել... Այդ դիշեր ինձ վիճակված էր չորս անգամ միևնույն ձևով հասնել Դնեպրի աջ ափն անցած մեր մի դորամասին» (ԱՍ, ՈՄ, էջ 92): «Նրանք նույն այդ թվականին եկել էին արտասահմանից» (Իս., էջ 451): «Նա, հակառակ իր բոլոր ջանքերին, առաջին քառորդը փակեց «երկու»-ներով... Մարիամիկն այդ օրը առավոտից երեկո գլուխը չբարձրացրեց սեղանից» (ԱՍ, ՈՄ, էջ 149):

Սակայն սրանով չի սպառվում ցուցական դերանունների արտահայտած ժամանակի հարաբերության իմաստը: Ցուցական դերանունները ժամանակի հարաբերության իմաստ են արտահայտում նաև այն ժամանակ, երբ առարկա են ցույց տալիս: Այդ բացահայտ կերպով երևում է հատկապես այն դեպքում, երբ ցուցական դերանունով ցույց տրված առարկան վերցվում, նկատի է առնվում անցյալում կամ ապագայում: Օր. «Եթե դիտենայի, որ դու այդ առաիճան կասկածամիտ ես, դի՞ժ եմ, ինչ է, որ արտասանեի այն խոսքերը» (ՆԴՄ, էջ 107): «Վայ, ուրեմն այն դո՞ւ էիր» (ՆՋՀ, էջ 375): «Ատելած իմ, այն ինչ արտասուք էր... Կյանքումս դեռ այնպես լաց չէի եղել» (Ն.-Դ, I, էջ 71): «Ինչո՞ւ էլ այն չի, ինչո՞ւ էլ չի կարողանում կանդնել, փախչել» (ՀՔ, էջ 50):

«Էլ աղմկալից կյանքը աշխարհի
Նվ ոչ սերն անուշ յուր երազներով
Այն հրապույրը չունեն վաղեմի,
Այն քաղցրությունը և այն մեղմ դորով» (ՀՀ, էջ 48):

Այս և նման օրինակներում երրորդ շարքի ցուցական դերանունները ցույց են տալիս ոչ թե առաջին դեմքից տարածությամբ հեռու գտնվող առարկա, հատկանիշ, այլ խոսելու ժամանակից հեռու մի ժամանակում եղող առարկա, հատկա-

նիշ: Այսինքն՝ այդ դերանունները այստեղ ունեն ժամանակի հարաբերության իմաստ:

Արդյո՞ք առաջին և երկրորդ շարքի դերանունները առարկայի անվան հետ գործածվելիս կամ առարկա և այլն ցույց տալիս ժամանակի իմաստ չեն արտահայտում: Բանն այն է, որ խոսողը խոսող կամ առաջին դեմք է միայն խոսելու մոմենտին: Նշանակում է, որ, երբ նա ցույց է տալիս իր մոտ գտնվող առարկա և այլն, նկատի է առնվում առարկայի՝ հենց իր խոսելու ժամանակ մոտը գտնվելը: Օր. «Այս գիրքը հետաքրքրական է» նախադասության մեջ այս դերանունը ցույց է տալիս, որ այդ առարկան խոսողի մոտ է նրա խոսելու ժամանակ: Ուրեմն, առարկան նրան մոտ է ոչ միայն տարածությամբ, այլև ժամանակով: Այս երկու հատկանիշները առաջին շարքի դերանուններից անբաժան են և հանդես են գալիս միասնաբար: Եթե այդ հատկանիշներից որևէ մեկը բացակայի, առաջին շարքի դերանուն չի գործածվի առարկա, հատկանիշ ցույց տալու համար: Տարածական հարաբերության առկայությունը հասկանալի է: Ժամանակի իմաստի արտահայտությունը ցույց տալու համար վերցնենք մի օրինակ, որում ցուցական դերանունը գործածվում է խոսողի մոտ գտնվող առարկա ցույց տալու համար, բայց այդ առարկան նկատի է առնվում ոչ ներկա ժամանակում: Ենթադրենք, մեկը մի քանի օր միևնույն առանձնասենյակի միևնույն սեղանի վրա կարդում է միևնույն գիրքը: Մի օր այդ գիրքը տեղում չգտնելով՝ հարցնում է. «Որտե՞ղ կլինի այն գիրքը»:

Այստեղ այն դերանունը ցույց է տալիս, որ նկատի է առնված առարկայի ոչ թե տարածությամբ հետու, այլ ժամանակով հետու լինելը, այսինքն՝ առարկան վերցված է անցյալ ժամանակում: Այդ նույն գիրքը գտնելուց հետո կարելի է ասել. «Սա է այն գիրքը»: Հասկանալի է, որ սա և այն դերանունները վերաբերում են միևնույն առարկային, բայց սա դերանունը ցույց է տալիս, որ առարկան խոսողի մոտ է խոսելու մոմենտին, իսկ այն դերանունը ցույց է տալիս, որ

խոսողի մոտ գտնվող առարկան նկատի է առնված անցյալ ժամանակում:

Ինչ որ ասվեց առաջին շարքի դերանունների ժամանակային հարաբերության մասին (երբ դրանք իր կամ հատկանիշ են ցույց տալիս), նույնը վերաբերում է նաև երկրորդ շարքի դերանուններին: Ուստի՝ երկրորդ շարքի դերանունների ցույց տված առարկան և այլն սովորաբար նկատի են առնվում խոսելու ժամանակ, այն է՝ ներկա ժամանակում:

Երկրորդ շարքի դերանուններով ցույց տված առարկայի, հատկանիշի՝ տարածությամբ և ժամանակով խոսակցի մոտ գտնվելն է պատճառը, որ երբ առարկան գտնվում է խոսակցի մոտ, և եթե խոսողը ցանկանում է ցույց տալ այդ առարկան նկատի ունենալով նրան անցյալում, կգործածի ոչ թե երկրորդ, այլ երրորդ շարքի դերանուն:

Համմտ. Այդ դո՞ւ ես:

Այն դո՞ւ էիր:

Այսպիսով՝ քննարկվող 3 շարքերի ցուցական դերանունների իմաստը հետևյալն է.

Առաջին շարքի դերանունները ցույց են տալիս տարածությամբ խոսողին մոտ և ժամանակով խոսելու մոմենտին մոտ, կամ որպես այդպիսին մտածված առարկա, հատկանիշ:

Երկրորդ շարքի դերանունները ցույց են տալիս տարածությամբ խոսակցին մոտ և ժամանակով՝ նրա՝ խոսակից լինելու մոմենտին մոտ կամ որպես այդպիսին մտածված առարկա, հատկանիշ:

Երրորդ շարքի դերանունները ցույց են տալիս՝ ա) տարածությամբ առաջին և երկրորդ դեմքերից հեռու (անկախ ժամանակից) առարկա, հատկանիշ. բ) ժամանակով առաջին և երկրորդ դեմքերի, որպես այդպիսիների ժամանակից (անկախ տարածական հարաբերությունից) հեռու առարկա, հատկանիշ:

Ժամանակի հարաբերության իմաստ չունեն տեղ (տարածություն) ցույց տվող դերանունները (այստեղ, այդտեղ, այնտեղ), *ինչպես և տարածական հարաբերության իմաստ*

չեն արտահայտում դերանունները այն դեպքում, երբ ժամանակի անվան վրա են դրվում (այս դիշեր, այսպիսի տարի, այսման ժամանակ, սույն ամսին և այլն)։ Ժամանակային հարաբերության իմաստը որոշակիորեն երևում է նաև այն դեպքերում, երբ ցուցական դերանունները գործածվում են երևույթների, իրողությունների, գործողությունների անունների հետ (ուսուցիչ, ռեֆորմ, ժողով, նիստ, քննարկում, դաս, ներկայացում և այլն)։ Հաճախ այս երկու հարաբերությունները հանդես են գալիս միասին։

Ճիշտ չէր լինի ցուցական դերանունների ժամանակային հարաբերության իմաստը համարելով զուտ կոնտեքստային կոնկրետ իմաստ և դիտելով միայն իրրև հետևանք, ժամանակ ցույց տվող և այլ բառերի հետ ունեցած գործածության արդյունք՝ անտեսել, իսկ նրանց համար ընդհանուրն ու հիմնականը համարել միայն տարածական հարաբերության իմաստը։ Այս հարցը վերացականի ու կոնկրետի, ընդհանուրի ու մասնավորի փոխհարաբերության հարց է։ Հայտնի է, որ կոնկրետն ու վերացականը, մասնավորն ու ընդհանուրը չնայնանալով հանդերձ, իրար չեն բացառում։ Վերացականն ու ընդհանուրը կոնկրետից ու մասնավորից դուրս գոյություն չունեն, որովհետև հենց վերջիններս են տանում դեպի վերացականն ու ընդհանուրը, և սրանք գոյություն ունեն կոնկրետի ու մասնավորի հիման վրա։ Քանի որ կոնկրետը վերացականի գոյության ձևն է, ուստի և վերջինս ճիշտ ըմբռնելու համար միշտ ու անպայմանորեն պետք է հիմնվել նրա գոյության ձևի՝ կոնկրետի, կոնկրետ դրսևորումների վրա, իհարկե, անտեսելով տարբերությունները, որոնք ընդհանուր չեն այդ դրսևորումների համար։

Հայտնի է, որ բառերի, այդ թվում, իհարկե, նաև դերանունների իմաստի կոնկրետ դրսևորումը լինում է խոսքի մեջ։ Իսկ խոսքի մեջ, ինչպես տեսանք վերևում, ցուցական դերանունները կարող են ցույց տալ և՛ տարածական հարաբերություն (օր. այս դիրքը, այն դիրքը), և՛ ժամանակային հարաբերություն (օր. այս տարի, այն տարի), այս (= ըն-

թացիկ, վերջին) խորհրդակցությունը, այն (=ասենք, անցյալում տեղի ունեցած) խորհրդակցությունը: Հասկանալի է, որ հարաբերության դրսևորման այս երկու տեսակներից ոչ մեկն էլ չի կարելի դիտել իբրև ընդհանուր, անտեսելով մյուսը, մյուսի հաշվին, քանի որ ցուցական դերանունների հարաբերության իմաստը իբրև վերացական հատկանիշ դոյություն ունի ոչ թե հանձին դրանցից մեկի, այլ հանձին այդ երկուսի, որոնք երկուսն էլ այդ վերացության դոյության ձևերն են, կոնկրետ դրսևորման տեսակները: Ուրեմն և վերանալով այդ երկու ձևերից՝ կարելի է ասել, որ ցուցական դերանուններին հատուկ է մոտիկ կամ հեռու լինելու հարաբերության հատկանիշը՝ առարկան և այլն ցույց տալու համար: Իսկ եթե մենք ցանկանում ենք հարաբերության այս վերացական հատկանիշն ավելի որոշակի արտահայտել, ապա բնականաբար պետք է նկատի ունենանք այս վերացության դրսևորման ոչ թե մեկ, այլ երկու ձևերը (և՛ տարածականը, և՛ ժամանակայինը), որոնք, ինչպես տեսանք, հաճախ հանդես են գալիս միասնաբար:

***

Անցնենք նշված երեք շարքերից դուրս մնացող ցուցական դերանունների քննարկմանը: Ինչպես երևում է այդ շարքերից (էջ 111) սույն դերանունը չունի իմաստով համապատասխան դերանունները մյուս երկու շարքերում: Սույն դերանվան մյուս երկու շարքերի՝ ձևով համապատասխան դերանուններն են դույն, նույն: Սրանցից առաջինը դոյություն ուներ գրաբարում և չկա արդի հայերենում, իսկ նույն դերանունը ծագումով և ձևով երրորդ շարքի դերանուն է, իսկ իմաստով՝ այժմ ոչ: Նույն դերանունը չունի առարկան՝ խոսողից և խոսակցից հեռու լինելը ցույց տալու իմաստ: Նա ցույց է տալիս ոչ թե խոսողից և խոսակցից հեռու գտնվող առարկա, այլ՝ խոսքի մեջ նշված առարկա, անկախ այն բանից, թե այդ առարկան ո՛ր դեմքին է մոտ և ո՛ր ժամա-

նակում է նկատի առնված: Այդ դերանունով կարելի է ցույց տալ և՛ առաջին ու երկրորդ դեմքին մոտ գտնվող, և՛ դրանցից հեռու առարկա: Օր. Սա հետաքրքիր գիրք է. նույն գրքից քեզ էլ կնվիրեմ: Դա հետաքրքիր գիրք է. նույն գրքից ես էլ ունեմ: Այն գիրքը քո՞նն է: Նույն գրքից ես էլ ունեմ:

Որ իսկապես նույն դերանունը իմաստային տեսակետից չի մտնում ցուցական դերանունների վերոհիշյալ շարքերի մեջ, վկայում է նաև այն փաստը, որ նրա հետ հաճախ գործածվում են այս, այդ, այն դերանունները: այս նույն, այդ նույն, այն նույն: Բնական է, որ եթե նույն դերանունը մյուս դերանունների հարաբերության իմաստան ունենար, նրա հետ չէին գործածվի տարածական տարբեր հարաբերությունների իմաստ ունեցող այս, այդ, այն դերանունները:

«Բայց հսկեք ձեր շուրջն աչքերով անթիվ,
Որ այս նույն պահին չմուտն ախան» (էմ., էջ 60):
«Տարիներ առաջ այս նույն ափերից
Պանդուխտ հայերի նավերն հեռացան» (ն. տ., էջ 73):
«Սիրտդ քար վինի անգամ, կծալվի,
Թե այդ նույն սիրով մենք սիրենք իրար» (ն. տ., էջ 86):

Նույն *դերանունը, ինչպես և նրանով կազմված նույնպես, նույնպիսի, նույնքան, նույնչափ, միևնույն դերանունները սովորաբար գործածվում են խոսքի մեջ նշված առարկան, հատկանիշը ցույց տալու համար: Մենք տեսանք, որ վերևում քննարկված դերանունները ևս գործածվում են նաև խոսքի մեջ նշված առարկա, հատկանիշ ցույց տալու համար: Ո՞րն է նույն դերանունով և, ասենք, այս, այդ, այն դերանունով առարկա, հատկանիշ ցույց տալու տարբերությունը, միայն ա՞յն է տարբերությունը, որ վերջիններս տարբեր հարաբերությունների իմաստ ունեն, իսկ նույն դերանունը՝ ոչ: Տարբերությունը միայն այդ չէ, և միշտ չի կարելի նշված առարկան, հատկանիշը ցույց տալ նույն դերանունով: Այսպես. Արարատյան դաշտավայրը փռված է Արարատ լեռից դեպի հյուսիս: Այդ դաշտավայրը շատ հարուստ է (բայց ոչ՝*

նույն (1) դաշտավայրը շատ հարուստ է)։ Բայց՝ Արարատյան դաշտավայրում մինչև Հոկտեմբերյան ռևոլյուցիան գործում էին բահն ու արորը։ Նույն (2) դաշտավայրում այսօր գործում են տրակտորներ, կոմբայններ, շարքացաններ և այլն։ Բերենք մի այլ օրինակ։ Ես աշխատում եմ Ա. գործարանում։ Չենք կարող ասել՝ նույն (3) գործարանը շատ հարուստ է։ Բայց կարելի է ասել՝ Այսօր իմացա, որ նույն (4) գործարանում է աշխատում նաև իմ դպրոցական ընկերը։

Ինչպես տեսնում ենք, 1-ին և 3-րդ նույն դերանունը տեղին չէ գործածված, իսկ այդ դերանվան 2-րդ և 4-րդ գործածությունները տեղին են։ Դա պայմանավորված է այն նախադասությունների իմաստով, որոնցում գործածված է նույն դերանունը, ավելի ճիշտ՝ այդ նախադասությունների և նրանց նախորդ նախադասությունների իմաստային փոխհարաբերությամբ։ Նույն դերանունը սովորաբար գործածվում է այն դեպքում, երբ որևէ նախադասությամբ հակադրվում է նշված առարկայի հատկանիշին մի այլ հատկանիշ, թվարկվում են որևէ առարկայի նույն տիպի հատկանիշներ։ Առաջին նույն դերանունը (վերևի օրինակում) տեղին չէ գործածված, որովհետև նրա նախորդ նախադասության մեջ նշվում է Արարատյան դաշտավայրի՝ Արարատից հյուսիս գտնվելը, իսկ հաջորդ նախադասության մեջ՝ նրա հարուստ լինելը։ Այստեղ չկա ո՛չ նման հատկանիշների թվարկում, ո՛չ էլ հակադրություն։ Նույն պատճառով տեղին չէ գործածված երրորդ նույն դերանունը։ Երկրորդ նույն դերանունը գործածված է տեղին, որովհետև նա այնպիսի նախադասության մեջ է, որ ցույց է տալիս այլ, հակադիր հատկանիշ միևնույն առարկայի համար։ Չորրորդ նույն դերանվան գործածությունը պատճառաբանվում է առարկային նույն տիպի հատկանիշներ, եղելություններ վերագրված լինելու փաստով (Ա. գործարանում աշխատում ենք ես, դպրոցական ընկերս, կամ՝ աշխատում եմ ոչ միայն ես, այլև՝ դպրոցական ընկերս)։ Բերենք ուրիշ օրինակներ։ «Թ. Թորամանյանի հետ ծանոթացա բանասեր Կարապետ Բասմաջյանի միջո-

ցով Ալեքսանդրապոլում (Լենինական) 1903 թ. աշնանը։ Նրանք նույն այդ թվականին էին եկել արտասահմանից» (Իս., էջ 451)։

«Կենտրոնական թերթում հրապարակվեց հիացական ակնարկ Հացավանի հոկտ կռվողի մասին։ «Հացավանի օրհնակով» խոշոր տառերով տպված էր մայրաքաղաքի թերթի ճակատին։ Նույն թերթում տպագրված էին Հացավանի ղեկավար աշխատողների և հարվածայինների... նկարները» (ՆՋՀ, էջ 96)։

Միևնույն *դերանունը ունի նույն դերանվան իմաստը, միայն ավելի ընդգծված։ Նույն դերանվան վերոհիշյալ բոլոր գործածությունները կարելի է փոխարինել միևնույն դերանունով։ Այս (այդ, այն) դիրքը գնել եմ կենտրոնական դրախանութից։ Միևնույն (նույն) դրքից կան նաև այլ դրախանութներում։ Միևնույն ինչպես և նույնպես, նույնպիսի, նույնքան, նույնչափ դերանունները գործածվում են թե՛ առաջին, երկրորդ դեմքերին մոտ գտնվող և թե՛ նրանցից հեռու գտնվող առարկաների կամ կատարվող գործողության հատկանիշ ցույց տալու համար։ Դրանց ցույց տված առարկան սովորաբար անվանված է լինում նախապես։ Այս (այդ, այն) շենքը դեղեցիկ է։ Նույնպիսի շենքեր շատ կան Երևանում։ «Նա նռանդով և սիրով... կարդի ու ձևի էր դնում այդ քառսը, միևնույն ժամանակ և միջոց էր գտնում նոր պեղումների մասնակցելու» (Իս., էջ 457)։ «Զինվորները պառավին ուժգին հրեցին կախաղանի տակ, բայց նա նույնպիսի ուժեղ թափով առաջ մղվեց և իր ցնցապարով և խռպոտ ձայնով ֆշշաց զինվորների վրա» (Անթ., էջ 69)։*

Այսուս դերանունը կազմված է «մի ևս» բաղադրիչներից և այժմ նշանակում է «հաջորդ, հետևյալ» (երբ նրանով ցույց է տրվում որոշ հաջորդականությամբ դասավորված կամ բնականից հաջորդականություն ունեցող առարկաներից, ժամանակի միավորներից մեկը, կամ երկու առարկաներից երկրորդը, ինչպես և երկուսից ավել առարկաներից վերջինը)։

«Սակայն հետևյալ օրն ավելի լավ համարեց իր այցը հե-

տաճգել մյուս օրվան» (ՆԴՄ, էջ 36)։ «Մյուս առավոտ պիտի տանեի աղջկանս արևի տուն» (Ար., էջ 4)։ «Դուք կմտնեք ներս... մյուս փողոցում կմիանանք» (Անթ., էջ 465)։

Երբ մյուս դերանունը գործածվում է հոգնակի թվով դոյականի հետ որպես որոշիչ, նշանակում է «մնացած բոլորը»։ Օր. «Ժողովուրդների ազատությանը և իրավահավասարությանը հակադրեց գերման ռասայի հորինած դերադանցությունը մյուս բոլոր ժողովուրդների վրա» (Իս., էջ 502)։ «Իսկ մյուս կանայք ամոթից ծածկեցին բերանները» (Ն.-Դ., I, էջ 133)։ «Մյուս նախարարների... դիմադրությունը նա առայժմ համարում էր լոկ նախարարական ներհակություն» (Դվ, էջ 138)։ Ուրեմն՝ մյուս դերանունը ցույց է տալիս նշված մեկ առարկայի նկատմամբ մի այլ (հաջորդ, հետևյալ) առարկան կամ մնացած բոլոր առարկանները (հոգնակի թվով դոյականի հետ)։ Այդ հանգամանքն էլ նրա իմաստը դարձնում է որոշյալ (ոչ թե առարկան անվանելու, այլ ցույց տալու հարաբերության իմաստով), որը և հիմք է նրա՝ ցուցական դերանուն համարելու։ Մյուս դերանվան միջոցով առարկան, ժամանակը որոշակի կերպով ցույց տալը պարզ պատկերացնելու համար կարելի է նրա գործածությունը համեմատել անորոշ դերանվան, ասենք, ուրիշ դերանվան հետ։

Համմտ. Վաղը չեմ գա, մի ուրիշ օր կգամ։

Վաղը չեմ գա, մյուս օրը կգամ։

Առաջին օրինակում ուրիշ դերանունը անորոշ կերպով ցույց է տալիս որևէ օր, մինչդեռ երկրորդ օրինակում մյուս դերանվան ցույց տված ժամանակը շատ որոշակի է, նա մատնացույց է անում վաղվան հաջորդող օրը։ Մյուս դերանունը իր իմաստային այդ յուրահատկության պատճառով, ի տարբերություն միևնույն, նույնպես, նույնպիսի, նույնիսկ դերանունների, կարող է գործածվել ոչ միայն խոսքի մեջ նշված առարկան ցույց տալու համար, այլև ավելի հաճախ՝ առարկան, հատկանիշը իրականության մեջ ցույց տալու համար, երբ դրանք խոսքի մեջ չեն անվանված նախապես։

Ինչպես տեսնում ենք, եթե ցուցական դերանունների՝ քա-

նակական ու որակական տեսակետից ավելի բնորոշ առաջին խմբում, այն է՝ նաստաՀեան կամ նաշարք խմբում տարածական ու ժամանակային հարաբերությյան դրսևորման գործում բերականական դեմքը դեր կատարում է, ապա երկրորդ խմբում այդ նույն հարաբերությունը դրսևորվում է որոշ յուրահատկությամբ: Նույն դերանունը հայտնի է իբրև նույնություն ցույց տվող դերանուն և նա մեծ մասամբ գործածվում է նշված, անվանված առարկան կամ հատկանիշը ցույց տալու համար: Նույն դերանվան այդ յուրահատկությունը հատուկ է նաև նրանով կազմված բարդ դերանուններին՝ միևնույն, նույնպես, նույնիսկ և այլն: Մյուս դերանվան իմաստային յուրահատկությունը ևս բացատրվում է կազմությամբ՝ բաղադրիչների իմաստով՝ մի+ևս:

Այսպիսով, դրսևորման որոշ տարբերություններով հանդերձ, ցուցական դերանունների ընդհանուր հատկանշական առանձնահատկությունը առարկան կամ հատկանիշը տարածական ու ժամանակային հարաբերությամբ մատնացույց անելն է, որով նրանք տարբերվում են մյուս բոլոր դերանուններից: Ցուցական դերանունների սահմանումը կարելի է ձևակերպել այսպես. ցուցական կոչվում են այն դերանունները, որոնք առարկա կամ հատկանիշ են մատնացույց անում տարածական ու ժամանակային հարաբերությամբ:

4. ՓՈԽԱԴԱՐՁ ԴԵՐԱՆՈՒՆՆԵՐ

Արդի հայերենի քերականության դասագրքերում այս դերանունները բնորոշված են փոխադարձ գործողությամբ կապված առարկաներ ցույց տալու հատկանիշով: Այս մոտեցման մեջ կա որոշ միակողմանիություն: Այդ միակողմանիությունը ցույց տալու և սահմանումը ճշտելու նպատակով ստիպված ենք մանել որոշ մանրամասնությունների մեջ, ընդհուպ մինչև «փոխադարձ» բառի բացատրությունը և այդ դերանուններով ցույց տված առարկաների հարաբերության առարկայական նկարագրությունը:

«Փոխադարձ — *1. Փոխարինը դարձնելը, հատուցանելը, հատուցում:*

2. ած. երկկողմանի, ինչ որ երկու կողմից էլ հավասարապես կատարվում է:

3. (քերակ.) նախադասության մեջ նույն գործողությամբ միմյանց հետ կապված երկու կամ ավելի առարկաների փոխարեն գործածվող դերանուններ: Օր. Կաղն ու կույրը իրար օգնեցին, «իրար» բառը փոխադարձ դերանուն է և դրված է կաղի և կույրի փոխարեն, որոնք փոխադարձաբար միմյանց օգնել են» [1]:

Բացատրություններն ավելորդ են: Երբեմն հենց նախադասության մեջ բացահայտվում է այդ դերանունների ցույց տված առարկաների փոխադարձ գործողությամբ կապված լինելու իմաստը: Օր. «Պետի մաշենք իրար, պարսիկը մեզ, մենք պարսիկին» (ԴՎ, էջ 140): «Մաղրում էինք իրար, ջքրացնում, նա ինձ «քնձռոտ վարժապետ» էր անվանում, ես նրան «Քալո խաբարդիան» (Ն.-Դ., I, էջ 225):

Փոխադարձ դերանվան՝ փոխադարձ գործողությամբ կապված առարկաներ ցույց տալու իմաստը որոշակի է հատկապես այն դեպքում, երբ նրանով ցույց է տրվում երկու առարկա, ինչպես վերևի օրինակներում է: Իսկ երբ փոխադարձ դերանունը ցույց է տալիս երկուսից ավելի առարկա (երբեմն նույնիսկ երկու առարկա), այդ առարկաները միշտ չեն լինում փոխադարձ գործողությամբ կապված, այսինքն միշտ չէ, որ նրանք «փոխադարձաբար» կապված են «նույն գործողությամբ», որը «երկկողմանի... երկու կողմից էլ հավասարապես կատարվում է «փոխադարձաբար»:

Օրինակներ՝

«Իրար *հետևից անցնում են կենսուրախ վագոնները» (ՆՋՀ, էջ 11):*

«Եվ *ահա եղբայրները մեկ մեկու հետևից գնում են այդ հրեղեն թռչունը փնտրելու» (Ար., էջ 93):*

[1] Ա. Մալխասյանց, «Հայերեն բացատրական բառարան», հ. 4, 1945. էջ 507:

«...Թաղի կանայք իրար ձեն տալով վազվզում են» (Ն.-Դ, I, էջ 94)։

Ըստ առաջին օրինակի վազդոններից յուրաքանչյուրը մյուսի նկատմամբ այն դիրքում չէ, կամ այն գործողությունը չի կատարում, ինչ որ վերջինս իր նկատմամբ։

Փոխադարձ գործողությամբ կապված առարկաների փոխադարձ իմաստը կարելի է հնչուրյամբ ցույց տալ դերանվան փոխարեն առարկանների անունները ներկայացնելով։ Հիշենք, օրինակ, «Պիտի մաշենք իրար» արտահայտության մեջ իրար դերանվան իմաստը հեղինակը բացահայտում է և նրա փոխարեն տեղադրում անունները՝ «պարսիկը մեզ, մենք պարսիկին»։ Բայց «Արամը և Աշոտը իրար հետևից վազելով ներս մտան», չի նշանակում, թե Արամը Աշոտի հետևից, Աշոտը Արամի հետևից վազելով ներս մտան։ Իհարկե, դրանց միջև (վազդոնների և Արամի ու Աշոտի) կապ կա, բայց այդ կապը փոխադարձ չէ։ Նույն տիպի օրինակ է երկրորդ օրինակը։

Քննենք երրորդ օրինակի փոխադարձ դերանունը՝ իրար։

«Իրար ձեն տալ կամ կանչել» կարող է նշանակել՝

1) Ա-ն կանչում է Բ-ին, Բ-ն Ա-ին, Գ-ն Դ-ին, Դ-ն Գ-ին և այլն։

2) Ա-ն կանչում է Բ-ին, Բ-ն Գ-ին, Գ-ն Դ-ին և այլն։

3) Ա-ն կանչում է Բ-ին, Գ-ն Դ-ին, Ե-ն Զ-ին և այլն։

Այս երեք իմաստներն էլ հավասարապես սովորական և գործածական են։ Բայց սրանցից միայն առաջին իմաստի դեպքում է իրար դերանունը ցույց տալիս փոխադարձ գործողությամբ կապված առարկաներ։ Երկրորդ դեպքում բոլոր անձանց միջև կա կապ. կանչելու գործողությամբ կապված են Ա, Բ, Գ, Դ անձերը, բայց նրանց գործողությունը փոխադարձ չէ. Ա-ն գործողության մեջ է մտնում Բ-ի հետ, իսկ վերջինս նրա հետ ոչ մի գործողության մեջ չի մտնում, նույն գործողությունը կատարում է մի ուրիշի՝ Գ-ի նկատմամբ, որն իր հերթին ոչ մի գործողություն չի կատարում Բ-ի նկատմամբ և այլն։ Իրար դերանվան երրորդ իմաստի մեջ չի

արտահայտված փոխադարձ կապ դերանվան ցույց տված առարկաների միջև. այս իմաստը ոչ-փոխադարձ կապ է արտահայտում առանձին երկու առարկաների միջև:

Փոխադարձ դերանունների ոչ-փոխադարձ իմաստը ցույց տալու համար կարելի է բերել բազմաթիվ օրինակներ: «Աշակերտներն իրարից արտագրում են», չի նշանակում միայն, որ աշակերտների արտագրելը կատարվում է փոխադարձաբար, այլև՝ որ որոշ աշակերտներ արտագրում են ուրիշներից: «Աշակերտներն իրար օգնում են» նշանակում է ոչ միայն, որ այդ օգնությունը փոխադարձ է, այսինքն, որ օգնություն ստացողը փոխադարձաբար օգնում է իրեն օգնողին, այլև, որ մի շարք աշակերտներ օգնում են մյուսներին:

Այսպիսով՝ փոխադարձ դերանունների ցույց տված առարկաների գործողությունը կարող է լինել փոխադարձ և ոչ-փոխադարձ: Ոչ-փոխադարձ գործողության իմաստը, ինչպես տեսանք վերևում, ոչ թե եղակի դեպքերում կամ ոճական կիրառություններուն ժամանակ է արտահայտվում, այլ շատ սովորական իմաստ է, ինչպես և նրանց փոխադարձության իմաստը: Այս նշանակում է, որ քննարկվող դերանունների ցույց տված առարկաների կապի կամ գործողության փոխադարձ լինելը, թեև էական է, բայց նրանց միակ էական հատկանիշը կամ իմաստը չէ: Ուրեմն փոխադարձ դերանունների համար էական է այն, որ նրանց ցույց տված առարկաները գտնվում են որոշ կապի, հարաբերության մեջ, ըստ որում՝ դրանք կարող են լինել փոխադարձ և ոչ-փոխադարձ:

Այնուհետև. փոխադարձ դերանունների ցույց տված առարկաները միշտ չէ, որ գործողություն են կատարում և կապված են գործողությամբ: Այդ առարկաների հարաբերությունը կարող է լինել վիճակի, դրության, եղելության հարաբերություն:

Օր. «Բարեկամնե՛ր, լայն է մեր երկիրը, անծայր,
Եվ իրարից հեռու, հեռու ենք մենք» (Սկ, էջ 116):

«Հիմա նրանց հեռավորությունը միմյանցից տասը քայլ

էր» (ՀՀ, ԲԼ, էջ 79)։ Նրանք իրար ընդառաջ են։ Մենք իրար բարեկամ ենք։ Այս և նման օրինակներում փոխադարձ դերանունների ցույց տված առարկաների հարաբերությունը վիճակի կամ եղելության հարաբերություն է։

Ելնելով այս ամենից՝ փոխադարձ դերանունների սահմանումը կարելի է տալ հետևյալ կերպ. Փոխադարձ կոչվում են այն դերանունները, որոնք ցույց են տալիս իրենց եղելությամբ կամ գործողությամբ որոշ հարաբերության մեջ գտնվող առարկաներ։ Արդի հայերենի փոխադարձ դերանուններն են՝ իրար, միմյանց, մեկմեկու, մեկմեկի։

Ծանոթություն.—*Իրարու ձևը բարբառային է, խորթ մեր գրական լեզվին, ուստի և պետք է խուսափել նրա գործածությունից։*

5. ՈՐՈՇՅԱԼ ԴԵՐԱՆՈՒՆՆԵՐ

Որոշյալ դերանունները դիտվում են իբրև առարկայի որոշյալ քանակ և ամբողջության արտահայտող դերանուններ։ Սակայն որոշյալ քանակ կարող են ցույց տալ միայն թվականները, իսկ քննարկվող դերանունները և առհասարակ դերանունները որոշյալ քանակ ցույց տալ չեն կարող։ Դիմենք փաստերի՝

1. Լենան հարյուր դիրք ունի, նրա բոլոր դրքերը խնամքով են պահվում և նորի տպավորություն են թողնում։

2. — Ո՞ւր են ուսանողները։

— Բոլորը գնացին։

Ո՞րն է բերված օրինակներում բոլոր դերանվան արտահայտած իմաստը։ Այդ դերանվան իմաստը, նրա ցույց տված քանակը որոշյալ է դառնում առաջին նախադասության մեջ եղած թվականի միջոցով։ Այդ նախադասության մեջ թվականն է հարյուր, մի այլ տեղ կարող է լինել երկու, հիսուն, հազար և այլն։ Այսպիսով՝ առաջին օրինակում առարկաների որոշյալ քանակը արտահայտված է, ավելի ճիշտ, փոխարինվող թվականով և ոչ թե այն փոխարինող դերանունով։

Իսկ ո՞րն է բոլոր դերանվան իմաստն այստեղ: Բոլոր դերանունը ցույց է տալիս գրքերի ընդհանուր քանակը, քանակական ամբողջությունը, անկախ նրանց որոշյալ քանակից և առանց որոշյալ քանակի: Խոսողը բոլոր դերանունը կարող է գործ ածել անկախ այն բանից, թե հայտնի՞ է նրան այդ դերանունով ցույց տված առարկաների «որոշյալ քանակը», թե՞ ոչ:

Այսպես. երկրորդ օրինակի բոլորը դերանունը ոչ միայն որոշյալ քանակ չի ցույց տալիս, այլև չի էլ ենթադրում, թե խոսողին անպայման հայտնի է ուսանողների քանակը: «Բոլոր աստղերը լուսատու մարմիններ են»: «Բոլոր նախադասություններն ունեն առարկա». «Յուրաքանչյուր բառ իմաստ ունի» նախադասությունների որոշյալ դերանունները «որոշյալ քանակ» չեն ցույց տալիս: Աստղերի, նախադասությունների, բառերի քանակը հայտնի չէ ոչ ոքի, և որևէ թվականով նույնիսկ արտահայտել չենք կարող, ո՛ւր մնաց դերանունով արտահայտվեր այն: Այս օրինակներում դերանունները ցույց են տալիս աստղերի, նախադասությունների, բառերի ընդհանուր ամբողջությունը, ցույց են տալիս, որ խոսքը վերաբերում է աստղերին, նախադասություններին, բառերին (մեզ հայտնի թե անհայտ, անկախ նրանց քանակից) առանց բացառության: Ուրեմն՝ այս որոշյալ դերանունները որոշյալ են ոչ թե այն պատճառով, որ ցույց են տալիս «որոշյալ քանակ», այլ որովհետև ցույց են տալիս, որ խոսքը վերաբերում է խոսքի օբյեկտ առարկաներին ամբողջապես վերցրած, ցույց են տալիս առարկաների ընդհանուր քանակական ամբողջությունը անկախ նրանց քանակից: Եվ իսկապես, ասենք «բոլորը եկան» նախադասությունից չի հետևում, թե ովքեր և քանիսն են եկողները. այդուհանդերձ բոլորը որոշյալ է. դրա պատճառն այն է, որ անկախ եկողների ով և քանիսը լինելուց, խոսքը վերաբերում է նրանց ամբողջապես վերցրած: Նշանակում է, որ այս դերանունների հիմնական առանձնահատկությունը հանրական հարաբերությունն է:

Կարծում ենք, որ ելնելով վերոհիշյալից, որոշյալ դերանունների սահմանումը կարելի է ձևակերպել այսպես. առարկաների բանակական ամբողջությունը կամ առանձին առարկայի ամբողջությունը ցույց տվող դերանուններ կոչվում են որոշյալ (հաճարական) դերանուններ:

Արդի հայերենի որոշյալ դերանուններն են ամեն(ը), ամեն մի (ամեն մեկը), ամենքը, բոլոր(ը), յուրաքանչյուր(ը), համայն, ամեն ինչ(ը), յուրաքանչյուր ոք, ողջ(ը), ամբողջ(ը), ամենայն:

Ծանոթություն.— *Ամենայն բառը գործածվում է մասնավորապես հռետորական, վերամբարձ ոճ ստեղծելու համար:*

«Չի հողն է ծնում այս արևի տակ
Ամենայն բարիք և պեղեցկություն» (ՆՉ, Հատ., էջ 96):

Հ. Սիրասը այդ բառը դնում է գրքացի բերանը՝ նրանով ստեղծված ճոռոմությամբ խորհրդավորություն առաջացնելու համար: «Դե, հիմի երեխին հանդիստ թող, էս Բլխումը կպահպանի նրան ամենայն չարե» (ՍՀՎ, էջ 17):

Ամենայն դերանվան այս գործածությունը շատ տարածված չէ. այն միայն հատուկ ոճական նպատակով է գործածվում: Բայց ամենայն բառը ձեռք է բերել մի այլ կիրառություն ևս, որը բավական տարածված և սովորական է: Այդ նրա գործածությունն է որոշ բառերի դրծիական հոլովի հետ. ամենայն մանրամասնությամբ, ամենայն պատասխանատվությամբ, ամենայն սիրով, ամենայն լրջությամբ, ամենայն խստությամբ և այլն:

Որոշյալ դերանունները ըստ իրենց իմաստի, այսինքն՝ ըստ այն բանի, թե ինչպես են ցույց տալիս առարկաների և նրանց քանակի ամբողջություն, կարելի է բաժանել երեք մասի՝

Ա) Դերանուններ, որոնք ցույց են տալիս առարկաների կամ նրանց քանակի ընդհանուր ամբողջությունը՝ չնշելով այդ ամբողջության մեջ մտնող առարկաներն առանձին-առանձին: Այդ դերանուններն են՝ ամենը, բոլոր(ը):

«Բոլոր կենդանիները դուրս էին թափվել. տղամարդ չկար մեջները: Բոլորը կանայք, աղջիկներ և երեխաներ: Ամենքը խոսում էին միանգամից» (Ն.-Դ., IV, էջ 78): Բոլոր (ը), ամենքը դերանուններով ցույց են տրվում կենդանիները (հարեվան) ամբողջությամբ վերցրած և չեն նշում նրանցից յուրաքանչյուրին առանձին-առանձին: Այդ պատճառով էլ այս դերանուններն ունեն հոգնակի իմաստ:

Բ) Դերանուններ, որոնք առարկաների կամ նրանց քանակի ամբողջությունը ցույց են տալիս՝ շեշտելով ամբողջության մեջ մտնող առարկաներն առանձին-առանձին: Դրանք են՝ յուրաքանչյուր(ը), յուրաքանչյուր ոք, ամեն, ամեն ոք, ամեն ինչ, ամեն մի (ամեն մեկը):

«Յուրաքանչյուր մարդ պարտավոր է լինել ճշտապահ և պարտաճանաչ» ասելով, այդ պարտականությունը դնում ենք բոլոր մարդկանց վրա. այդ նշանակում է. «բոլոր մարդիկ պարտավոր են լինել ճշտապահ և պարտաճանաչ»: Բայց եթե երկրորդ նախադասության մեջ չենք շեշտում մարդկանց առանձին-առանձին, և բոլոր դերանունը վերաբերում է մարդկանց ընդհանրապես, ապա առաջին նախադասության մեջ բոլոր մարդկանց մասին խոսում ենք՝ նշելով նրանց առանձին-առանձին, նրանցից յուրաքանչյուրին: Ուրեմն՝ այս դերանունները առարկաների և քանակի ամբողջությունը ցույց են տալիս առանձինների միջոցով: Այդ պատճառով էլ, ի տարբերություն նախորդների, սրանց իմաստը եզակի է: Երբ այդ դերանունները իրրև ենթակա են գործածվում, նախադասության առորոգյալը դրվում է եզակի թվով: Օր. Յուրաքանչյուր (յուրաքանչյուր ոք) պարտավորվեց օգնել իր հետ մնացող ընկերներին: Ամեն ոք պետք է ունենա պատասխանատվության զգացում: Այժմ ամեն ինչ լավ է գնում: Ամեն ինչը կանոնավոր է: Ամեն մեկը իր հետ մի փոքր էր բերել:

Այդ դերանունների իրրև որոշիչների հետ գործածվող գոյականները նույնպես դրվում են եզակի թվով: Օր. յուրաքանչյուր մարդ, ամեն մարդ, ամեն մի մարդ:

Գ) Դերանուններ, որոնք ցույց են տալիս առանձին մի

առարկայի (հավաքական կամ ոչ հավաքական) ամբողջությունը: Այդ դերանուններն են ողջ, ամբողջ, համայն, ամենայն:

«Ողջ ջոկատը հետևից նրան» (Դվ, էջ 349): «Ողջ ժողովուրդը վինովորադրված է (ն.տ., էջ 136): «Մինչև այսօր շրջապատում են ամբողջ բլուրը» (ՀՀ, Բլ, էջ 31): «Վահեի մասին էր մտածում նաև հաջորդ ամբողջ օրը» (ԱԱՊ, էջ 102): Ընդգծված դերանունները ցույց են տալիս մի առարկայի ամբողջությունը:

Ծանոթություն.— Ողջ դերանունը անկախ գործածվելիս, սակայն, երբեմն նշանակում է «բոլորը», այսինքն առարկաների քանակական ամբողջություն է ցույց տալիս:

«Աստված, չեմ խնդրում քեզնից դափնիներ,
Ճառեր, հորելյան, ուղերձ, հեռադիր,
Փառավոր թաղում, մահից հետո սեր —
Այդ ողջն ինձ կտա հայրենի երկիր» (Ա.Մ, էջ 314):

Սակայն ողջ դերանունը գոյականաբար քիչ է գործածվում: Արդեն ասվեց, որ որոշյալ դերանունները կարող են ցույց տալ և՛ հատկանիշ, և՛ առարկա:

Բոլոր, յուրաքանչյուր, ողջ, ամբողջ, ամեն, ամեն մի *դերանունները գործածվում են գոյականների հետ և ցույց են տալիս հատկանիշ: Հատկանիշ ասելով այստեղ պետք է հասկանալ ոչ թե որակ, այլ՝ առարկաների կամ առարկայի ամբողջություն:* «Ամբողջ աշխարհը հևիհև սպասում է այդ վիթխարի գտեմարտի ելքին» (Խ., էջ 303): «Բոլոր *ոտնահարված ժողովուրդները կյանք կառնեն նորից» (ն.տ., էջ 600): «Նա իշխում էր ողջ քաղաքի և հատկապես Մարինյան դեպի վրա» (ՀՀ, Բլ, էջ 31): «Սրբությամբ կատարում էր յուրաքանչյուր կետը» (ՆՋՀ, էջ 388): «Ամեն օր տեսնելու եմ նրան» (Ն.-Դ., IV, էջ 78):*

Այդ դերանունները առարկա են/ցույց տալիս որոշյալ հոդ ընդունելով. բոլորը, յուրաքանչյուրը, ամբողջը, ողջը:

Օր. «Ես ձեզ կպատմեմ բոլորը սկզբից» (Ար., էջ 3)։ «Յուրաքանչյուրը թողրեց հացի առաջին կտորը» (Ն.-Դ., I, էջ 145)։ «Չորս տարի առաջ ամբողջը այնպես ներդաշնակ կապված էր թվում Գոհարիկի հետ» (Ար., էջ 472)։

Ամենը *անկախ դարձյալ քիչ է գործածվում, այն էլ այս, այդ, այն ցուցական դերանունների հետ։ Օր. «Այս ամենը կատարվեց սոցիալիզմի կառուցման դրոշի տակ» (Իս., էջ 501)։* Ամեն մի *դերանվան անկախ գործածության ժամանակ երկրորդ բաղադրիչը դառնում է մեկը՝ ամեն մեկը։ «Ամեն մեկն ուզում էր ինքն արժանանալ այդ պատվին» (ՀՀ, ԲԼ, էջ 41)։ «Ամեն մեկը իր տակը մի խուրձ քաշելով, բոլորաձև նստուեցին շուրջը» (ՆՋՀ, էջ 357)։*

Համայն *դերանունը հոդ չի առանում և անկախ չի գործածվում. այն գործածվում է դոյականի հետ։*

«Առ իմ երգն ու իմ սիրտը նվեր
Հանուն քո վաղքի հողում համայն» (Էմ., էջ 16)։

Ամենքը, *յուրաքանչյուր ոք, ամեն ոք, ամեն ինչ(ը) դերանունները գործածվում են միայն անկախ։ Օր. «Ամենքն էլ իմ որդիքն են» (Դվ, էջ 32)։ «Ես ամենքին կպատմեմ» (ՆՋՀ, էջ 375)։ «Ամեն ոք շտապում էր դեպի կուլիս» (Ն.-Դ., I, էջ 84)։*

Որոշյալ դերանուններին հատուկ հանրական հարաբերության ծավալը բավական առաձգական է, և նրա սահմանների որոշման համար խոսքը կարևոր նշանակություն ունի։ Օր. «Ուզում էի մոռանալ ամենքին, ամեն ինչ» (Ն.-Դ., I, էջ 47), ասում է Աննա Սարոյանը հուսալքության մոմենտներից մեկում։ «Ամեն ինչ ունի իր պատմությունը»։ Այս նախադասությունների մեջ ամեն ինչ դերանունով ցույց են տրվում իրականության մեջ գոյություն ունեցող ամեն մի առարկա, իրողություն, երևույթ և այլն։

Սակայն երբեմն նման դեպքերում դերանունների ցույց տված առարկաների ծավալը որևէ կերպ սահմանափակվում

է: Այդ սահմանափակումը կարող է կատարվել տարբեր միջոցներով.

1. Նախադասության սահմանադրությամբ. նա ամեն ինչ չէր կատարում: Նա ամեն ինչ չէր ուտում, հիվանդ էր: Պարզ է, որ այս նախադասություններում ամեն ինչ դերանունը ցույց է տալիս ոչ թե ամեն ինչ առհասարակ, այլ՝ առաջին օրինակում՝ այն ամենը, ինչ որ կարելի է կարդալ, իսկ երկրորդ օրինակում՝ այն ամենը, ինչ որ կարելի է ուտել:

2. Դերանվան իմաստը (այն ընդգրկող առարկաների ծավալի տեսակետից) կարող է սահմանափակվել դերանվանը ուղղակի կամ անուղղակի վերաբերող բառով կամ բառերով: Մեր կուրսում ամեն ոք բարեխղճորեն է կատարում իր պարտականությունները: Նրա գրած ամեն ինչը հետաքրքիր է: Այս օրինակներում ամեն ոք և ամեն ինչ դերանունների իմաստը սահմանափակվում է նրանց վերաբերող բառերի միջոցով:

3. Երկրորդական նախադասությամբ. Այդ վեսը խոր տպավորություն է գործում ամենքի վրա, ովքեր կարդում են այն: Հասկանալի է, որ ամենքը դերանունը վերաբերում է միայն վեսը կարդացողներին: Որոշյալ դերանունների ցույց տված առարկաների ծավալի այս և նման սահմանափակումները, իհարկե, բոլորովին կասկածի տակ չեն առնում այդ դերանունների՝ հանրական հարաբերության իմաստ արտահայտելու ճշմարտությունը: Վերոհիշյալը միաժամանակ ցույց է տալիս, որ հանրական հարաբերությունը միշտ չափազանց է հասկանալ բացարձակ իմաստով, իսկ այդպիսի կոնկրետացումը խոսքի մեջ որոշակիորեն հասկացվում է:

Հանրական հարաբերությունը այնքան է բնորոշ քննարկվող դերանունների համար, որ դրանք կարելի է կոչել հանրական: Իսկ եթե նպատակահարմար չի համարվում ընդունված անվան փոփոխումը, ապա որոշյալ անունը կարելի է պահպանել միայն պայմանականորեն, քանի որ, նախ, այդ դերանունների որոշյալ լինելը արդյունք կամ ածանցյալ հատկանիշ է հանրական հարաբերության, ուրեմն և վերջինս

է էականն ու կարևորը. և, երկրորդ, որոշյալ են նաև անձնական ու ցուցական դերանունները, նույնիսկ ավելի, քան որոշյալ կոչվող դերանունները (իհարկե, խոսքը հարաբերության իմաստի մասին է):

***

Ժամանակակից հայերենի դերանունների ճանաչված տեսակներից մեկն է ժխտական դերանունը, որի մեջ մտնում են ոչ մի (ոչ մեկը), ոչ ոք, ոչինչ դերանունները: Դերանվան այս տեսակը բնորոշում են ժխտման հատկանիշով, այսինքն նրանով, որ նրանք առարկա կամ թիվ են ժխտում: Որ այս դերանունները ժխտում են արտահայտում, իհարկե, կասկածի ենթակա չէ: Բայց ճի՞շտ է արդյոք այդ հատկանիշի հիման վրա ընդունել դերանվան առանձին տեսակ: Հաշվի առնելով և՛ դերանունների դասդասման հիմունքը, և՛ դիտական դասակարգման պահանջները, և՛ ժխտական համարվող դերանունների էական առանձնահատկությունները՝ իմաստի ու կազմության տեսակետից՝ մենք այս հարցին տալիս ենք բացասական պատասխան:

Ինչպես տեսանք վերևում (էջ 98 և շար.), յուրաքանչյուր դասակարգում պետք է կատարվի մեկ հիմունքով: Տեսանք նաև, որ դերանվան դասդասման հիմունքը նրանց արտահայտած հարաբերության իմաստն է, առարկան կամ հատկանիշը այս կամ այն հարաբերությամբ, այս կամ այն ձևով ցույց տալը: Մինչդեռ ժխտական համարվող դերանվան ժամանակակից ճանաչումը չի պատասխանում այս հարցին, այսինքն՝ թե օբյեկտը ի՛նչ հարաբերությամբ, ի՛նչ ձևով է արտահայտվում նրանց մեջ, ժխտում ցույց տվող այդ բառերի մեջ:

× Ժխտական դերանունն իբրև դերանվան առանձին տեսակ ընդունել կարելի է միայն այն դեպքում, եթե ժխտում չարտահայտող մյուս բոլոր դերանունները համարվեին մեկ ընդհանուր տեսակ, իբրև հատատատական դերանուններ, ի հակա-

կշիռ ժխտականների։ Բայց ի տարբերություն ժխտականի, ընդունված են ոչ թե մեկ տեսակի հատատատական դերանուններ, այլ անձնական (դիմորոշ), ցուցական ու այլ դերանուններ, և այս տեսակները բնորոշվը հատատատականության մոմենտը չէ, այլ հարաբերության իմաստը։ Իսկ թե ինչու հարաբերության իմաստն է, ինչպես տեսանք վերևում, դա բխում է դերանուն խոսքի մասի յուրահատկությունից։ Ոչնչով չի կարող արդարացվել այն, որ դերանվան խոսքի մասային յուրահատկությունից բխող դասակարգման այդ հիմունքը կիրառվի հատատատական տիպի դերանունների նկատմամբ, իսկ ժխտական տիպի դերանունների համար անտեսվի։ Ուստի՝ որոշել ժխտական տիպի դերանունների (ինչպես և մյուս բոլոր դերանունների) տեսակային հատկանիշը նշանակում է պարզել, թե ինչ հարաբերությամբ են նրանք ցույց տալիս առարկան կամ հատկանիշը՝ կամ որ միևնույնն է, թե ի՛նչ հարաբերությամբ ցույց տված առարկան կամ հատկանիշն են ժխտում։

Ժխտական դերանունների իմաստը տարածվում է առհասարակ բոլոր առարկաների կամ խոսքի մեջ նշված բոլոր առարկաների վրա. մի բան, որ հատուկ է որոշյալ դերանուններին։ Օր. «Եվ այս գործում ոչ ոք իրավունք չունի բրնանալու ոչ ոքի։ Ամեն ոք ինքն է վճռում ապրե՞լ, թե մեռնել» (Դվ, էջ 344)։ Այս օրինակում ինչպես ամեն ոք, այնպես էլ ոչ ոք դերանունները ցույց են տալիս բոլոր մարդկանց, դրանք երկուսն էլ ունեն հանրական, հետևապես և որոշյալ իմաստ։

Համմ. 1. «Ոչ ոք չի կարող հաստատել» (ՆՋՀ, էջ 49)։

2. «Ոչ ոքի չեմ պատմել դրությունս, ոչ ոքի չեմ դանդատվել (Ն.-Դ., IV, էջ 57)։

3. «Ոչ մեկը նրան չդավաճանեց» (ՀՍ, Հվ, էջ 186)։

1. Ամեն ոք կարող է հաստատել։

2. Ամենքիս պատմել եմ դրությունս, ամենքիս դանդատվել եմ։

3. Բոլորը նրան դավաճանեցին։

Ընդգծված որոշյալ (հանրական) դերանունների և դրանց համապատասխան ժխտական դերանունների ցույց տված հարաբերության իմաստի միջև տարբերություն չկա. դրանք բոլորն ունեն հանրական իմաստ: Տարբերությունն այն է, որ միևնույն իմաստը որոշյալ դերանունների մեջ հաստատական ձևով է արտահայտված, իսկ ժխտական կոչվող դերանունների մեջ՝ ժխտական ձևով. մի դեպքում հաստատվում է, մյուս դեպքում՝ ժխտվում:

Գուցե մեզ առարկեն նրանով, որ ոչ բառը գործածվելով դերանունների մեծ մասի հետ, ժխտում է նրանց իմաստը, բայց այդ ժխտումից որոշ չափով տարբերվում է ժխտական դերանուններով արտահայտված ժխտումը, ուրեմն և իբր թե այդ յուրահատկության պատճառով ժխտական դերանունները պետք է դիտվեն որպես դերանվան առանձին տեսակ: Այսպես, ժխտական ոչ բառը կարող է գործածվել ես, դու, սրանք և այլ դերանունների հետ՝ ոչ ես, ոչ դու, ոչ սրանք, ոչ ուրիշը, ոչ բոլորը և այլն: Վերջինս վերցնենք նախադասության մեջ և համեմատենք ժխտական դերանվան հետ:

Ոչ բոլորն են թերակատարել իրենց պլանները:

Ոչ ոք չի թերակատարել իր պլանները:

Իսկապես որ երկու ժխտումները նույնացնել չի կարելի: Առաջին նախադասությունից իմանում ենք, որ բոլորը չէ, որ թերակատարել են պլանները, այսինքն՝ կան պլանները կատարողներ և թերակատարողներ, իսկ երկրորդ նախադասության մեջ ժխտվում է որևէ մեկի կողմից պլանների թերակատարման փաստը. ցույց է տրվում, որ բոլորը կատարել են պլանները:

Սակայն բանն այն է, որ ոչ բոլորը, ինչպես և նմանները դերանունների ժխտական ձևեր չեն: Ոչ ես, ոչ դու, ոչ սրանք, ոչ ուրիշը, ոչ բոլորը և նման կապակցությունների մեջ դերանուն են միայն ես, դու, սրանք և այլն: Այդ դերանունները հաստատական ձևեր են: Իսկ ժխտական դերանունները որպես այդպիսիք են հանդես գալիս ժխտական ոչ բաղադրիչի

հետ միասին, ուրեմն նրանք որոշ հատուցականների ժխտական ձևեր են:

Ահա ժխտական դերանունները և նրանց համապատասխան հատուցական ձևերը՝ ոչ ոք — ամեն ոք, ոչինչ — ամեն ինչ, ոչ մի — ամեն մի, ոչ մեկը — ամեն մեկը:

Մի քանի խոսք ժխտական դերանունների ձևի մասին:

Չպետք է կարծել, թե բառի ժխտական ձևը միշտ կազմվում է նույն բառի (ամբողջական ձևի) հատուցական ձևի վրա ավելացվելով ժխտական մասնիկ կամ բառ, ինչպես, գրեմ — չգրեմ, գրես — չգրես, պիտի գրեմ — չպիտի գրեմ *և այլն: Քերականական ձևերի ժխտականը կարող է կազմվել ժխտող մասը (մասնիկ, բառ) ավելացվելով ոչ միայն նույն բառի հատուցական ձևի վրա, այլև մի այլ ձևի վրա: Այսպես, արդի հայերենի պայմանական եղանակի ժխտական ձևերը կազմվում են ժխտական օժանդակ բայը ավելացվելով ոչ թե պայմանականի հատուցական ձևի, այլ ըղձական դերբայի վրա:*

Կգամ — *չեմ գա*
Կգաս — *չես գա*
Կգա — *չի գա*

Այնպես որ, այն հանգամանքը, որ քննարկվող դերանունները որպես ժխտական ձևեր չեն կազմվում համապատասխան հատուցական դերանունների ամբողջական ձևից (ասենք՝ ամեն ինչ — ոչ ամեն ինչ), չի խանգարում ժխտական համարվող դերանունները ժխտական ձևեր համարելուն:

Ամբողջ վերահիշյալից բխում է, որ արդի հայերենի ժխտական համարվող դերանունները առարկա և հատկանիշ են ցույց տալիս որոշյալ դերանուններին հատուկ հարաբերությամբ, ունեն նրանց հանրական իմաստը, հանդիսանում են նրանցից մի քանիսի ժխտական ձևերը, հետևապես դրանք պետք է դասել որոշյալ դերանունների շարքը, որպես ժխտական ձևի որոշյալ դերանուններ:

Գիտական դասակարգման պահանջից, դերանունների դասակարգման հիմունքից, ժխտական կոչվող դերանունների իմաստի և ձևի վերլուծությունից բխող այդ միակ եզրակացությունը մի անգամ ևս հաստատվում է այն բնական ու բանական անհրաժեշտությամբ, որ լեզվի մեջ ժխտական բառերն ու բառաձևերը համապատասխան հաստատական բառերի ու բառաձևերի հետ միասին մտնում են բառերի միևնույն տեսակի, կատեգորիայի մեջ (համմտ. գրեցի — չգրեցի, կգամ — չեմ գա, կարդում եմ — չեմ կարդում, վերջացած — չվերջացած և այլն)։

Ժխտական կոչվող դերանունները մտնում են որոշյալ դերանունների երկրորդ տեսակի մեջ. այսինքն՝ այն տեսակի մեջ, որը ցույց է տալիս բոլոր առարկաները, նշելով այդ բոլորի մեջ մտնող առարկաներն առանձին-առանձին։

Քննարկվող դերանունների տեսակը ճիշտ չորոշելուն նպաստել է ոչ միայն այն հանգամանքը, որ դոյությունն չուներ դերանունների դասդասման որևէ սկզբունք, այլև այն, որ բոլոր դերանունները չէ, որ ունեն ժխտական ձևեր։ Եթե բոլոր դերանունները ունենային ժխտական ձևեր, ապա շատ հեշտ կլիներ նկատել, որ ժխտական ձևերը, այդ թվում և քննարկվող ժխտական ձևերը, դերանվան առանձին տեսակ չեն հանդիսանում, ինչպես բայի ժխտական խոնարհումը։ Բայց եթե բոլոր դերանունները ժխտական ձևեր չունեն, այդ նշանակո՞ւմ է, թե մի քանի ժխտական ձևերը չպետք է ընդունել որպես այդպիսիք։ Իհարկե, ո՛չ։

Գո՞ւցե ոմանք կարծեն, թե ժխտական դերանունները որոշյալների շարքը դասելով՝ կդժվարացնենք ուսուցումը։ Նախ, մենք չենք կարծում, որ եթե աշակերտներին բացատրվի, թե որոշյալ (հանրական) դերանուններից մի քանիսը, ի տարբերություն մյուս դերանունների, ունեն նաև ժխտական ձևեր, և անհրաժեշտ բացատրություններով ներկայացվեն այդ ձևերը, աշակերտները չեն կարող սովորել այդ դերանունները։ Այնուհետև, քերականական կատեգորիաները, քե-

բականական իրողութիւնները նախ պետք է ճիշտ ճանաչված ձևով ներկայացվեն քերականութեան դասագրքերում, և ապա մեթոդներ մշակվեն դրանց ուսուցումը հեշտացնելու համար։

6. ԱՆՈՐՈՇ ԴԵՐԱՆՈՒՆՆԵՐ

Տեսանք, որ որոշյալ դերանունների մեծ մասը ցույց է տալիս առարկաների քանակական ամբողջութիւնը, ուստի և ունի հանրական իմաստ (իհարկե, հանրական իմաստ ունեն բոլոր որոշյալ դերանունները)։ Անորոշ դերանունները, ի տարբերութիւն որոշյալների, ոչ թե հանրական, այլ մասնական իմաստ ունեն, այսինքն՝ ցույց են տալիս առարկաներից մեկը կամ մի քանիսը։ Հայ նշանավոր քերական Գ. Ալեքսիքյանը գրում է. «Են բառք ինչ՝ որք յարեալք յանուանս, ցուցանեն զմասն ինչ իրին, կամ զիրն զատանեն յայլմէ և այսպիսիք կոչին մասնական անուն։ Այսպիսի են ոմն, ոք, մի, իմն, ինչ, իք, մեւս, այլ, միմեանց, իւրեաց, իւրաքանչիւր, անձնիւր»[1]։ Իհարկե, Գ. Ալեքսիքյանը այս բառերը չի ճանաչում որպես դերանուններ, իրար է միացնում և մի շարքում դասում որոշյալ, փոխադարձ, անորոշ դերանուններ։ Բայց անժխտելի է, որ իսկապես անորոշ դերանունները, որոնցից մի քանիսը հիշատակված են այդ շարքում իբրև անուններ, ունեն մասնական իմաստ։

Առանց մասնական բառը գործածելու, փաստորեն որպես այդպիսիք են ներկայացված անորոշ դերանունները հետևյալ բնորոշման մեջ։ «Ոմանք (անորոշ դերանունները — Ս. Ա.) որպես գոյականներ (некто, нечто и др.) ցույց են տալիս անձերից կամ առարկաներից մեկը ընդհանրապես, չդրոշելով սակայն նրա կատեգորիանները։ Որպես ածականներ (некий, некоторый, какой-нибудь и др.) ցույց են տալիս մեկն այն անձերից կամ առարկաներից, որոնք անվանված

1 Գ. Ալեքսիեան, Քերականութիւն հայկական, ի Վենետիկ, 1823, էջ 31։

են գոյականով և որոնց վերաբերում են նրանք, բայց չեն որոշում» [1]: *Սակայն մեր բոլոր անորոշ դերանունները չէ, որ առարկաներից մեկին են ցույց տալիս: Մի շարք անորոշ դերանուններ ցույց են տալիս առարկաներից կամ անձերից մի քանիսը* (*մի բանի, մի շարք, ոմանք և այլն*):

Այնուհետև. առարկաներից մեկը կամ մի քանիսը կարելի է ցույց տալ նաև այլ դերանուններով կամ այլ բառերով: Օր. Իմ գրքերից սա քեզ կնվիրեմ: Այս նախադասության մեջ սա դերանունը ցույց է տալիս գրքերից մեկը, ուրեմն և ամբողջի նկատմամբ մասնական իմաստ ունի: Սակայն սա դերանունը այդ մեկ առարկան ցույց է տալիս որոշակի հարաբերությամբ, իբրև խոսողի մոտ գտնվող: Մինչդեռ անորոշ դերանունների մասնական իմաստը որևէ այլ հարաբերությամբ որոշյալ չի դառնում: Օրինակ, Իմ գրքերից որևէ մեկը քեզ կնվիրեմ: Այնպես որ եթե սա, այս և նման դերանունների իմաստի մեջ մասնականություն կա, ապա դա սոսկ հետևանք է նրանց բնորոշ հատկանիշի՝ տարածական, ժամանակային հարաբերության, մինչդեռ անորոշ դերանունների համար մասնական հարաբերությունը միակն է, բնորոշը:

Ելնելով վերոհիշյալից, անորոշ դերանունները կարել է սահմանել այսպես. անորոշ (մասնական) կոչվում են այն դերանունները, որոնք դրվելով գոյականի կամ գոյականաբար գործածված բառի վրա կամ գործածվելով անկախ, ակնարկում են առարկաներից մեկը կամ մի բանիսը, առանց որոշակի հարաբերության: *Այլ կերպ՝* անորոշ այն դերանուններն են, որոնք առարկա, հատկանիշ են ցույց տալիս մասնական հարաբերությամբ:

Իբրև անորոշ դերանուն ճանաչված են հետևյալները. ինչ-որ, ինչ-ինչ, ոմն, մեկը, այսինչ, այնինչ, մի բանիսը, ուրիշ,

---

[1] Грамматика русского языка, т. I, под. ред. акад. В. Виноградова и др., М., 1952, стр. 28.

այլ, ովևէ, երբևէ, ուր որ է, ինչ որ է, ինչպես որ է, որքան որ է *:

Մեր կարծիքով ուր որ է, ինչ որ է, ինչպես որ է, որքան որ է *չի կարելի համարել անորոշ դերանուններ։ Չի կարելի, որովհետև թեև դրանք անորոշ իմաստ ունեն, բայց դրանցից ամեն մեկը որպես մեկ բառ չի դիտակցվում. դրանք ոչ թե բառեր են, այլ բառակապակցություններ։ Այդպիսի բառակապակցություններ են նաև որտեղ որ է, ինչքան որ է, որչափ որ է, ով որ է և այլն, որոնք քերականորեն ոչնչով չեն տարբերվում վերևում նշված բառակապակցություններից։ Իհարկե, բառակապակցությունները ժամանակի ընթացքում կարող են վերածվել մեկ բառի։ Բայց արդյո՞ք քննարկվող բառակապակցությունների՝ մեկ բառի վերածվելու պրոցեսը ավարտված է։ Կարծում ենք, որ՝ ոչ։ Այդ շարահյուսական կապակցությունները թեև որոշ չափով կորցրել են իրենց բառացի իմաստը, այսինքն՝ թեև նրանց բաղադրիչները որոշ չափով կորցրել են իրենց բառային ինքնուրույնությունը, բայց դեռ լրիվ չեն զրկվել դրանից։ Եվ այստեղ տարօրինակ ոչինչ չկա։ Շարահյուսական կապակցության՝ մեկ բառի վերածումը կարող է նույնիսկ դարեր տևել։ Եթե վերոհիշյալ շարահյուսական կապակցությունները դանվում են բառի վերածման պրոցեսում, ապա այդ պրոցեսը շատ է հեռու իր ավարտման ստադիանից։*

Այժմ անդրադառնանք այդ բառակապակցությունների ձևի և իմաստի քննությանը։ Դրանց բառացի իմաստը կարելի է տեսնել հետևյալ նախադասություններում։ Վազը հերթապահ կլինի նա, ով որ է այսօր։ Նա վազը կլինի այնտեղ, որտեղ

* *Անորոշ դերանունների այս ցանկը ամբողջությամբ տեղ է գտել հայոց լեզվի քերականության դասագրքերում մինչև 1952 թ.։ Հետագա հրատարակություններում որոշ չափով հաշվի է առնվել «Սովետական մանկավարժ» ամսագրի 1953 թ. № 8-ում տպագրված մեր «Արդի հայերենի անորոշ դերանունները և նրանց ուսուցումը» հոդվածը, որը և որոշ փոփոխություններով օգտագործում ենք այստեղ՝ նյութի շարադրանքի ամբողջականության համար։*

որ է այժմ։ Դու էլ այնպես կլինես, ինչպես որ է նա։ Այս ընդգծված բառակապակցությունները նշանակում են «ով որ կա», «որտեղ որ կա (գտնվում է)», «ինչպես որ կա», այսինքն՝ դրանք գործածվում էին, այժմ էլ երբեմն գործածվում են իրենց բառացի իմաստով։

Հետևյալ նախադասություններում այդ բառակապակցությունների բաղադրիչները լրիվ չեն պահպանում իրենց բառային ինքնուրույնությունը և միաժամանակ լրիվ չեն կորցրել այն։

1. — Ո՞վ է նա։
   — Ով որ է, պիտի մտածենամ և հարցնեմ։
2. Որտեղ որ է, նա կգա։
3. Ինչպես որ է, քիչ դժգոհիր։

Հայտնի է, որ արդի հայերենում մեկից ավելի բաղադրիչներից բաղկացած բառի սովորաբար վերջին բաղադրիչն է հոլովվում։ Երբեմն նման բառերի վերջին բաղադրիչի հետ միասին կարող է հոլովվել նաև առաջին բաղադրիչը։ Բայց եթե բառի վերջին բաղադրիչը չի հոլովվում, ապա այդ բառը չի հոլովվում առհասարակ, այսինքն առաջին բաղադրիչը չի կարող հոլովվել։ Օր. յուրաքանչյուր nf, ամեն nf, ինչ-որ։ Մինչդեռ քննարկվող բառակապակցությունների առաջին բաղադրիչը կարող է հոլովվել (եթե այն անկախ, այդ կապակցությունից դուրս հոլովվում է)։

Օր. 1. Որտեղից որ է, հիմա դուրս կգա։
2. Սա ո՞ւմն է։
   — Ում (ումը) որ է, կարևորն այն է, որ լավն է։
3. Որքանով որ է, շատով կգնես և կգաս։

Այս բառակապակցությունների առաջին բաղադրիչների հոլովվելը վկայում է, որ վերջիններս, թեկուզ և որոշ չափով, պահպանում են իրենց բառային անկախությունը։

Այնուհետև. դերանունները կա՛մ առարկա են ցույց տալիս, կա՛մ հատկանիշ (որակ, չափ, ձև և այլն), և վերջին

դեպքում նրանք գործածվում են գոյականի, որոշ դերանուններ՝ բայի հետ։ Հիշյալ բառակապակցությունների մի մասը, չնայած որ առարկայի հատկանիշ է ցույց տալիս, բայց չի գործածվում և չի կարող գործածվել գոյականի հետ։ Չի կարելի ասել, «որքան որ է մարդ», «ինչպես որ է գիրք», «ինչ որ է հարց», և այլն։ Եթե դրանք հատկանիշի իմաստ ունեն, ինչո՞ւ որպես որոշիչ չեն գործածվում։ Պատճառն այն է, որ այդ բառակապակցությունների մեջ կա ստորոգման իմաստ, թեև զգալի չափով մթագնված։ Այդ իմաստն արտահայտվում է է-ի միջոցով։ Սա նշանակում է, որ այդ բառակապակցություններում իր անկախ բառային իմաստը և ինքնուրույնությունը լրիվ չի կորցրել, բացի առաջին բաղադրիչից, նաև վերջին՝ է բաղադրիչը։ Հիշենք որևէ բառը, որի է բաղադրիչի ինքնուրույնության կորուստը բառին հնարավորություն է տալիս գործածվելու գոյականների հետ՝ որևէ գիրք։

Այսպիսով՝ չնայած քննարկվող բառակապակցությունները որոշ չափով կորցրել են իրենց բառային իմաստը, ինչպես և դրանց բաղադրիչները՝ իրենց բառային ինքնուրույնությունը, բայց քանի որ այդ բառակապակցություններից յուրաքանչյուրը դեռ չի դիտակցվում որպես մեկ բառ, հետևապես՝ դրանք չի կարելի վերցնել որպես ինքնուրույն ամբողջություններ և որոշել նրանց խոսքի մասային պատկանելությունը. դրանք պետք է դիտել իբրև բառակապակցություններ։

Արդի հայերենում կան հիշյալ բառաշարքից դուրս մնացած այլ անորոշ դերանուններ։ Անորոշ դերանուն պետք է համարել հետևյալ բառերը.

1. Որոշ, որը գործածվում է գոյականի հետ և ցույց է տալիս առարկաների քանակը անորոշ կերպով։ Նա ևս ունի մասնական իմաստ, ինչպես և մյուս անորոշ դերանունները։ Այս և ներքոհիշյալ այլ բառերի, որպես անորոշ դերանունների, գործածությունների բազմաթիվ օրինակներ կարելի է բերել թե՛ գիտական և թե՛ գեղարվեստական գրականությունից։ Օր. «Հասարակության որոշ խմբեր ձգտում են մեկուսանալ ժողովրդական մասսաներից» (ԼԲԱ, ԼՆ, Չ 52)։ «Որոշ պա-

հանջների համաձայն չափում, ձևում, մշակում ենք մեր բանավոր խոսքը» (ն. տ., էջ 55)։ «Որոշ բառեր թեև ձևով նույնն են..., բայց իրենց իմաստային երանգավորումով տարբեր են (ն. տ., էջ 75)։ Այս օրինակները որոշակի ցույց են տալիս, որ որոշ բառը անորոշ դերանուն է և ունի «մի քանի» անորոշ դերանվան իմաստը։

2. Մի շարք բառը ունի «մի քանի», «որոշ» անորոշ դերանունների իմաստ։ Նրա բաղադրիչները կորցրել են իրենց բառային ինքնուրույնությունը և երկուսը միասին գիտակցվում են որպես մեկ բառ։ Մի-ի անորոշ իմաստը ակնհայտ է։ Շարք բառը, որ առանձին գիտակցվում է որպես գոյական, հոլովվում է (շարքը, շարքի, շարքից և այլն), առանում է հոդնակի վերջավորություն (շարքեր) և հոդ (շարքս, շարքդ, շարքը), այս կապակցության մեջ կորցրել է իր այդ բոլոր հատկանիշները, ինչպես և իր այդ իմաստը։

Մի շարք անորոշ դերանվան օրինակները բերենք պրոֆ. Ա. Ղարիբյանի V—VI դասարանների «Հայոց լեզվի դասագիրք»-ից (1952). «Մի շարք ածանցներ... պահպանում են բառի գոյական լինելը՝ տալով նրան նոր իմաստ կամ իմաստային երանգ» (էջ 175)։ «Մի շարք ածանցներ կցվելով բառին կամ արմատին, այն վերածում են ածականի» (էջ 196)։ «Ք ածանց ունեցող մի շարք գոյականներ... գործ են ածվում որպես եզակի» (էջ 155)։

3. Մի երկու բառը ևս բաղկացած է երկու բաղադրիչներից։ Մի-ի մասին պետք է ասել այն, ինչ որ նրա մասին ասվեց վերևում՝ «մի շարք» բառի կապակցությամբ։ Երկու բառը, որը այս կապակցությունից դուրս թվական է, այստեղ այլևս «երկու» թիվը չի ցույց տալիս, հետևապես և թվական չէ։ Մի երկու բառը ցույց է տալիս առարկաների անորոշ քանակ և ունի «մի քանի» անորոշ դերանվան իմաստը։ «Մի երկու անգամ փորձեցի այցելել այն տեղերը» (ՀԹ, V, էջ 252)։ «Մի երկու վրացի ծանոթներ» (ն. տ., էջ 254)։ «Մի երկու հոդի կանչված էինք Հովհաննիսյանների մոտ» (ն. տ., էջ 373)։

«Ուզում եմ... մի երկու խոսք ասել Գրիմմի հնթիաթների մասին» (ն. տ., էջ 391)։ «Նժույգը ոտի տակ գցեց մի երկուսին» (Դվ,

Բայց հայտնի է, որ մի բառը կարող է գործածվել բոլոր թվականների հետ։ Օր. մի երեք (ուր, տասնմեկ) օրից հետո կգամ։ Մի հարյուր գիրք պիտի գնեմ։ Այս օրինակներում երեք, ուր, տասնմեկ, հարյուր բառերը թվականներ են։ Մի բառը այստեղ արտահայտում է մոտավորության իմաստ. մի երեք, մի ուր, մի հարյուր նշանակում են «մոտավորապես երեք», «մոտավորապես ութ», «մոտավորապես հարյուր»։ Իսկ «մի երկու» բառը չի նշանակում «մոտավորապես երկու». այն իր սովորական գործածության ժամանակ կարող է նշանակել նույնիսկ երկուսի քառապատիկը, հնգապատիկը։ Վերցնենք Դ. Դեմիրճյանի «Վարպանանք»-ից բերված վերևի օրինակը. «Նժույգը ոտի տակ գցեց մի երկուսին»։ Մի երկուսին բառով կարող է նկատի առնվել, ասենք, ութ հոգի։ Բայց այդ քանակը ցույց տալու համար կարելի՞ կլիներ գործածել մի երեք, մի շորս, մի հինգ բառակապակցությունները։ Իհարկե, ո՛չ։

Սա նշանակում է, որ թեև մի բառը կարող է գործածվել բոլոր թվականների հետ, նրա այս գործածությունից տարբերվում է «մի երկու» բառը, որը նշանակում է ոչ թե «մոտավորապես երկու», այլ «քիչ քանակություն», «մի քանի», «որոշ»։

4. Երբևիցե բառը ունի երբևէ անորոշ դերանվան իմաստը, ցույց է տալիս ժամանակ, ժամանակի անորոշ պատկեր է արտահայտում։

Օր. «Դու երբևիցե, քո կյանքում, առաջ կամ հիմա... Այսինքն քո պաշտոնի բերումով կամ... Այսինքն մարդ սպանած կա՞ս» (Անթ., էջ 108)։

«Ամերիկյան «թռչող բերդի» վիճակը թող հիշե
Ռազմածարավ ամեն մի տերություն,
Ով ախորժակ ունի այսօր, էգուց, երբևիցե
Իր քիթն ատոմային՝ խցկել ուրիշի տուն» (Ավ. էջ 131)։

5. Որևիցե *բառը ևս անորոշ դերանուն է. նա ունի* որևէ *դերանվան իմաստը, բայց համեմատաբար սակավ գործածական է։*

Օր. Որևիցե *գիրք,* որևիցե *մարդ,* որևիցե *բառ։*

Այսպիսով, անորոշ դերանունների ամբողջական կազմն է. ինչ–որ, ինչ–ինչ, ոմն, մի (մեկը), այսինչ, այնինչ, մի բանի (մի բանիսը), ուրիշ, այլ, ովևէ *(հազվագյուտ գործածական),* որոշ, մի շարք, մի երկու (մի երկուսը), երբևէ, երբևիցե, որևէ, որևիցե։

Վերևում տեսանք, որ քննարկվող դերանունների բնորոշ առանձնահատկությունը առարկան կամ հատկանիշը յուրահատուկ մասնական հարաբերությամբ ցույց տալն է, որի հետևանքով նրանք ունեն անորոշ իմաստ։ Սակայն դա չի նշանակում, թե անորոշ դերանուններով միշտ ցույց են տրվում խոսողին անհայտ, նրա համար անորոշ առարկա, հատկանիշ։ Անորոշ դերանունները կարող են ցույց տալ ոչ միայն խոսողին անհայտ, այլև նրան հայտնի առարկա, հատկանիշ։

Օրինակներ. Մեր դասարանում անցյալ տարվա մեկ դասալանցիկի դիմաց այս տարի կան մի բանիսը։ Ես այժմ զբաղված եմ այլ հարցով։

Չի կարելի պնդել, թե այս նախադասություններում ընդգծված անորոշ դերանունները խոսողին անհայտ կամ անծանոթ առարկա, հատկանիշ են ցույց տալիս։

Անորոշ դերանունով հաճախ են ցույց տրվում, ավելի ճիշտ՝ ակնարկվում խոսողին հայտնի առարկա, հատկանիշ, և դա կարող է ունենալ տարբեր պատճառներ՝ խոսքի նպատակը, խոսելու պայմանները և այլն։

Այնուհետև, իմաստի անորոշությունը տարբեր դերանունների մեջ տարբեր չափով է առկա։ Համեմատաբար առավել անորոշ իմաստ ունեն որևէ, որևիցե, երբևէ, երբևիցե *դերանունները։*

7. ՀԱՐՑԱԿԱՆ-ՀԱԲԱԲԵՐԱԿԱՆ ԴԵՐԱՆՈՒՆՆԵՐ

Հայտնի է, որ հարցական և հարաբերական դերանունները միևնույն բառերն են, որոնք մի դեպքում համարվում են հարցական, մի այլ դեպքում՝ հարաբերական: Այդ բառերն են՝ ով, ինչ, որ, ոմանք, որհան, որչափ, ինչչափ, որպիսի, ինչպիսի, ոմանիերորդ, որերորդ, որտեղ, ուր, երբ, ինչքան, ինչպես: Ի՞նչ հիմունքով են այդ միևնույն ձևն ունեցող դերանունները անցյալի ու ներկայի քերականների կողմից համարվել և համարվում տարբեր տեսակի դերանուններ: Այս հարցի պատասխանը արված է հետևյալ սահմանումներում:

Այն դերանունը, որն արտահայտում է հարցում գոյականի, ածականի, թվականի և մակբայի մասին, կոչվում է հարցական դերանուն:

Երբ հարցական դերանունը մեկ նախադասությունը հարաբերում, կապում է մյուսին առանց հարցման, կոչվում է հարաբերական:

Նախքան այս սահմանումների բուն էությունը քննարկելը, անհրաժեշտ ենք համարում մի դիտողություն անել առաջին սահմանման, այսինքն՝ հարցական դերանունների սահմանման վերաբերյալ: Ինչպես տեսնում ենք, այդ սահմանման մեջ ասված է, թե հարցական դերանունները հարցում են արտահայտում գոյականի, ածականի, թվականի և մակբայի մասին: Այս միտքը խմբագրման կարիք է զգում անճշտությունը վերացնելու համար: Այս տեսակետից քննենք հետևյալ օրինակները:

Ո՞վ էր կանչում մեզ:
Ինչպիսի՞ գիրք ես առել:
Քանի՞ հոգի ես:

Արդյո՞ք այս օրինակներում ո՞վ, ինչպիսի՞, քանի՞ դերանուններով հարցում է արտահայտվում գոյականի, ածականի, թվականի մասին: Գոյականը, ածականը, թվականը, ինչպես

և մակբայը, խոսքի մասեր են, բառերի տեսակներ, այսինքն՝ բառեր: Բայց այս օրինակներում ոչ մի հարցում չկա և ոչ մի բառի մասին: Առաջին օրինակում հարցում է արտահայտված անձի՝ կանչողի մասին. հարցնողը ցանկանում է իմանալ նրա անձնավորությունը (բառի մասին չի կարելի ո՞վ հարցը տալ): Երկրորդ օրինակում հարցը վերաբերում է ոչ թե ածականին, այլ առարկայի՝ դրքի որակին, երրորդ օրինակի հարցը՝ մարդկանց քանակին: Ակնհայտ է, որ քննարկվող սահմանման մեջ առարկան, նրա հատկանիշը (որակ, քանակ, տեղ) և գործողության հատկանիշը շփոթված են դրանց անունների (գոյական, թվական, ածական, մակբայ) հետ:

Այնուհետև. սահմանումից երևում է, թե իբր հարցական դերանվան պահանջով ցույց տրվելիք առարկան կամ հատկանիշը կարող է արտահայտվել միայն գոյականով, ածականով, թվականով և մակրայով: Այս ևս ճիշտ չէ: Բերենք մի օրինակ՝

— Որտե՞ղ է դանվում խոստացածդ նկարը:

— 1. Տանը:

2. Այստեղ, այդտեղ այնտեղ:

3. Ինձ մոտ, քեզ մոտ:

4. Դեմառդեմդ է, չե՞ս տեսնում:

5. Փակցրել եմ քո դրասեղանից քիչ վերև:

Ինչպես տեսնում ենք, հարցական որտե՞ղ դերանվան ցույց տված օբյեկտը (տեղը) կարող է արտահայտվել գոյականով, ցուցական դերանունով, անձնական դերանունով ու կապով, մի ամբողջ նախադասությամբ, բառակապակցությամբ և այլն: Այսպիսով՝ որտե՞ղ դերանունը հարցում է արտահայտում ոչ թե որևէ խոսքի մասի վերաբերյալ, այլ առարկայի գործողության կամ եղելության տեղի մասին, անկախ այն բանից, թե ինչ խոսքի մասով կամ ինչ միջոցներով է արտահայտվում այդ տեղը:

Բերենք մի օրինակ ևս: «Ո՞վ է ասել» հարցի պատասխանը կարող է արտահայտվել ոչ անպայման գոյականով,

այլև դերանվան տարբեր տեսակներով (ես, ոչ ոք, բոլորը, մեկը), դերբայով (եկողը), նախադասությամբ (ով եկել էր երեկ) և այլն: Այսպիսով՝ միանգամայն հասկանալի է, որ հարցական դերանունների մեջ արտահայտված հարցումը ոչ թե դոյականի, ածականի, թվականի, մակրայի մասին է, այլ՝ առարկայի, նրա հատկանիշի կամ գործողության հատկանիշի մասին:

Այժմ անցնենք այդ սահմանումների բուն էության քննարկմանը: Ինչպես արդեն նշվել է, քննարկվող դերանունները երկու տեսակի բաժանելու հիմքում ընկած է շարահյուսական մոմենտը. այսինքն այդ դերանունները, երբ գործածվում են հարցական նախադասության մեջ, հարցում են արտահայտում՝ հարցական են, իսկ, երբ գործածվում են բարդ ստորադասական նախադասության մեջ ստորադաս նախադասությունը գերադասի հետ կապելու համար՝ հարաբերական են:

Այս հիմունքով բառերի բաժանումը տարբեր տեսակների չի կարող արդարացվել: Ինչո՞ւ: Նախ՝ քննենք այս բաժանման անընդունելի լինելը տեսական առումով: Դերանունը խոսքի մաս է, այն էլ նյութական իմաստ ունեցող խոսքի մաս: Իսկ խոսքի մասը ձևաբանական կատեգորիա է և ոչ թե շարահյուսական: Հետևապես, բառերի և մասնավորապես նյութական իմաստ ունեցող խոսքի մասերի, տվյալ դեպքում՝ դերանունների դասակարգումը, կարծում ենք, չի կարելի կատարել շարահյուսական հատկանիշով: Շարահյուսական հատկանիշը կարող է վճռական դեր կատարել միայն շարահյուսության մեջ, շարահյուսական կատեգորիաների դասակարգման, տեսակների որոշման ժամանակ:

Այսպիսով՝ ձևաբանական կատեգորիայի դասակարգումը շարահյուսական հիմունքով, տվյալ դեպքում՝ քննարկվող դերանունները շարահյուսական կիրառություններ հիման վրա երկու տեսակների բաժանելը տեսականորեն չի արդարացվում:

Այդ բաժանումը չի արդարացվում նաև գործնական,

փաստական տեսակետից։ Ընդունված կարծիքի համաձայն, քննարկվող դերանունները կարող են կատարել միայն հարցականի կամ միայն հարաբերականի ֆունկցիա, որի պատճառով էլ նրանք կոչվում են կամ հարցական, կամ հարաբերական։ Սակայն այդ դերանունների կիրառությունների քննությունից պարզվում է, որ դրանցով չեն սահմանափակվում նրանց կիրառությունները։

Հարաբերական դերանունները, ինչպես տեսանք, նույն հարցական դերանուններն են, այն տարբերությամբ, որ նրանք կատարում են մեկ նախադասությունը մյուսին կապելու, հարաբերելու դեր և հարցում չեն արտահայտում։

Հարաբերական կոչվող դերանունների այդ երկու հատկանիշները ճանաչված են իբրև անբաժան հատկանիշներ, այսինքն՝ որ հարցական դերանուններն առանց հարցի հանդես են գալիս իբրև հարաբերական։ Քննենք դպրոցական դասագրքերից մեկում հարաբերական դերանունների համար բերված օրինակները։

Թող նա գա, ով ուզում է։
Ես քեզ կարող եմ ասել, թե ֆանիսն են եկել։
Ընկերդ կասի, թե ինչպիսի աշակերտ եմ ես։
Ավարտեցին այն աշակերտները, որոնք լավ էին աշխատում։

Այս օրինակներում ընդգծված բոլոր դերանունները համարվում են հարաբերական դերանուններ. նրանք բոլորն էլ հարցական նշան չունեն, հարցում չեն արտահայտում, բայց արդյո՞ք նրանք բոլորն են հարաբերում, կապում մի նախադասություն մյուսին, ուրեմն և՝ բոլո՞րն են հարաբերական։ Ո՛չ։ Դրանցից հարաբերականի դեր են կատարում առաջին և վերջին օրինակների ընդգծված դերանունները, և այդպիսի դեր չեն կատարում երկրորդ ու երրորդ օրինակների դերանունները (ֆանիսը, ինչպիսի)։ Երկրորդ և երրորդ բարդ նախադասությունների երկրորդական նախադասությունները պիտավորի հետ կապվում են թե շաղկապով և ոչ թե ֆանիսն, ինչպիսի դերանուններով։ Դրանում է՛լ ավելի

Համոզվելու համար կարելի է այդ դերանունները փոխարինել այլ բառերով՝ թվականով, ածականով։

Ես քեզ կարող եմ ասել, որ հինգն են եկել։
Ընկերդ կասի, որ ես լավ աշակերտ եմ։

Միանգամայն հասկանալի է, որ այս նախադասություններում հինգ և լավ բառերը հարաբերության կամ կապելու դեր չեն կատարում։ Այստեղ երկրորդական նախադասությունը գլխավորի հետ կապվում է որ շաղկապով (նախորդ նախադասությունների թե շաղկապը փոխվեց որ շաղկապի, որովհետև առաջինների մեջ արտահայտված թեական իմաստը այստեղ փոխարինված է հաստատական իմաստով)։ Վերևի նախադասությունների ֆանիսն, ինչպիսին բառերը որևէ ավելի ֆունկցիա չունեն վերջին նախադասությունների հինգ, լավ բառերի համեմատությամբ։ Ուրեմն՝ քննարկվող նախադասություններում ֆանիսն, ինչպիսին հարաբերականի դեր չեն կատարում, հարաբերական չեն։

Այդ եղրակացության օգտին է խոսում նաև հետևյալ իրողությունը։ Հայտնի է, որ բարդ ստորադասական նախադասության կրճատման ժամանակ հարաբերական բառերը վերանում են և պարզված նախադասության մեջ հանդես չեն գալիս։ Կրճատենք այդ նախադասությունները։

Թող գա գալ ուզողը։
Ես քեզ կարող եմ ասել եկողների ֆանիսը լինելը։
Ընկերդ կասի իմ ինչպիսի աշակերտ լինելը։
Ավարտեցին լավ աշխատող աշակերտները։

Ինչպես տեսնում ենք, բարդ նախադասությունների կրճատումը ևս հաստատում է վերևում ասվածը. առաջին և վերջին նախադասություններում քննարկվող դերանունները իրրև հարաբերականներ վերանում են, իսկ երկրորդ և երրորդ նախադասությունների ֆանիսը և ինչպիսի դերանունները պահպանվում են, քանի որ դրանք հարաբերական չեն։ Այսպիսով՝ հարցական դերանունը առանց հարցման դործածվելիս միշտ չէ, որ հարաբերականի ֆունկցիա է կատարում։

Հարցական և հարաբերական դերանունների ընդունված հիմնական հատկանիշներից և սահմանումներից ելնելով՝ դրանք չի կարելի դասել ո՛չ առաջինների, ո՛չ էլ վերջինների շարքը, քանի որ դրանք ո՛չ հարցում են արտահայտում, ո՛չ հարաբերում են մի նախադասություն մյուսին: Բերենք այդպիսի դործածությունների մի շարք օրինակներ:

«Նա այնտեղ աշխատելու է իբրև... էլուշը չի հիշում, թե իբրև ինչ» (ՆՋՀ, էջ 37): «Մի՞թե չէիր նկատում, թե ինչպես արագ էր կարդում, թե ինչպես ճարպկորեն էր գործածում բիլն ու ասեղը» (Անթ. էջ 308): «Ու՞ր ով է աջ, ով է ձախ, այդ կտեսնենք հետո» (ՆՋ, Հատ., էջ 190): «Նրան օտար այս կռվի մեջ մեկ չէ՞ արդյոք, թե ով ում, թե ինչ գույնի դրոշակներ կփոդփոդան փողոցում» (ն. տ., էջ 293): «Խորհուրդ են անում, թե ինչպես փրկել» (ն. տ., էջ 318):

Նշենք, որ առանց հարցման և առանց հարաբերության դերի կարող են դործածվել քննարկվող բոլոր դերանունները, ըստ որում այդ դործածությունները ոչ թե հազվագյուտ կամ բացառության կարգի գործածություններ են, այլ շատ սովորական և դործածության հաճախականությամբ չեն զիջում, եթե չեն գերազանցում, նույն դերանունների հարաբերականի դերով դործածություններին:

Այսպիսով՝ հարաբերական դերանունների ճանաչման հիմքում ընկած է նրանց շարահյուսական ֆունկցիան: Նույն դերանունները առանց հարցումի միայն որպես հարաբերական չեն հանդես գալիս: Հարաբերականի դեր նրանք կատարում են միայն որոշ տիպի բարդ նախադասություններում և նախադասության կառուցվածքը փոխելիս դադարում են հարաբերական լինելուց:

Համմա. 1. Մենք խոսում էինք այնպես, ինչպես խոսեցին նրանք:

2. Մենք խոսեցինք այն մասին, ինչի մասին խոսեցին նրանք:

3. Մենք խոսեցինք այնտեղ, որտեղ խոսեցին նրանք:

4. Մենք իմացանք, թե ինչպես խոսեցին նրանք:

2. *Մենք իմացանք, թե ինչի մասին խոսեցին նրանք։*

3. *Մենք իմացանք, թե ուրեղ խոսեցին նրանք։*

Ինչպես տեսնում ենք, հարաբերական դերանունների ճանաչման հիմունքը շատ նեղ և որոշ իմաստով պայմանական շարահյուսական ֆունկցիա է։ Պայմանական է այն իմաստով, որ նախադասության կառուցվածքը փոփոխության ենթարկելիս այդ դերանունները կարող են դադարել մի նախադասությունը մյուսին հարաբերելուց, այսինքն հարաբերական լինելուց։

Միևնույն դերանունները գործածության որոշ յուրահատկության հիման վրա երկու տարբեր տեսակների բաժանելուց հետևում է, որ այդ երկու տեսակներից դուրս մնացող և գործածության հաճախականությամբ դրանց չղիջող կիրառությունները համարվեն դերանվան մեկ այլ տեսակ։

Բայց սրանով չեն վերջանում այդ դերանունների (հարցական-հարաբերական) կիրառությունները։ Դրանք ունեն մի ուրիշ, շատ սովորական կիրառություն ևս, որը տարբերվում է նույն դերանունների վերոհիշյալ կիրառություններից։ Խոսքը վերաբերում է բացահայտչական նախադասություններում նրանց սովորական և հաճախակի գործածությանը։ Օր. «Քանի՞ բանի՞ անդամ եղել են վտանգավոր դեպքեր, ասենք, վերահաս կատաստրոֆներ» (ՍՋ, III, էջ 75)։ «Ով գիտի ի՞նչ հնարքներ, ի՞նչ վատ բաներ է սովորել» (ն. տ., էջ 159)։ «Դատարկ բաներ են, ի՞նչ նախազգացում, ի՞նչ զժբախտություն» (Շիրվ., VI, էջ 341)։ «Ի՞նչ հազվադյուտ իր է, ի՞նչ պայծառ գույն ունի և ի՞նչ աննման գործ է» (ն. տ., էջ 350)։ «Դեռ ինչքա՞ն կյանք կար առջևում, դեռ ինչքա՞ն պետք է ապրել՝ տեսնելու մարդկանց խառնվածքների տարբեր երանգները» (ՀՔ, ՄՏՋ, էջ 67)։ «Ինչպե՞ս թե հայ չեն ուզում ուտել» (ՍՋ, III, էջ 39)։

Հարցական՞ են, թե՞ հարաբերական համարենք այս ընդգրծված դերանունները, դրանցից որի՞ մեջ կարելի է մտցնել սրանք։ Հասկանալի է, որ ոչ մեկին, քանի որ դրանք ո՛չ հարցում են արտահայտում, ո՛չ էլ հարաբերում, կապում մի

նախադասությունը մյուսին։ Եթե քննարկվող դերանունները հարցական նախադասության մեջ դործածվելու և հարցում արտահայտելու պատճառով կոչվում են հարցական, ապա դրանց վերոհիշյալ կիրառությունները նույն հիմունքով կարելի է համարել բացականչական, քանի որ նրանք դործածված են բացականչական նախադասություններում և բացականչում են արտահայտում։

Ծանոթություն.— Քննարկվող դերանուններից երկուսը (որպես, ինչպես) ունեն մի այլ՝ հինդերորդ կիրառություն ևս, որ տարբեր է թվարկված կիրառություններից։

Օրինակներ. «Որպես հաղթանդամ մի ծերուկ հսկա,
Կախված էր ժայռը ջրերի վրա» (ՀՀ, էջ 34)։
«Սիրուն մանուկ, քո աչեր
Վառ են ինչպես այդ ծագիկ» (ն. տ., էջ 27)։
«Քո ժըպիտն էլ անմեղ է
Ինչպես չքնաղ մանիշակ» (ն. տ.)։
«Անցած բերկրանքը անմիտ օրերի
Ինձ ծանր է որպես ըմպելյաց շոդի» (ն. տ., էջ 32)։
«Ընկած եմ որպես մի ծերուկ մաշված» (ն. տ., էջ 48)։

Դերանունների այսպիսի կիրառությունները որոշ վերապահությամբ կարելի է համարել կապական կիրառություններ, քանի որ այս դեպքում նրանք իրենց դերով մոտենում են կապերին։

Այսպիսով, քննարկվող դերանուններն ունեն ոչ թե երկու, այլ չորս հիմնական տիպի կիրառություններ, որոնք բոլորն էլ տարածված են ու հաճախակի դործածականն, իսկ նրանցից մի քանիսն ունեն նաև այլ կիրառություններ։ Եթե այդ դերանունների տեսակային հատկանիշն ու պատկանելությունը որոշելու լինենք կոնկրետ կիրառություններով, ապա նրանց համար պետք կլիներ ճանաչել ոչ թե երկու, այլ չորս կամ հինգ տեսակ։ Սակայն այսպիսի մոտեցումը, այսինքն՝ դերանունների՝ դործածության որոշ յուրահատկության հիման վրա տարբեր տեսակների բաժանելը մեզ շատ հեռուն

կատներ և, ինչպես ասում են, ծառերի նաև անտառը չէինք տեսնի: Այս բաժանումով, ինչպես և հարցականն ու հարաբերականը դերանվան տարբեր տեսակներ համարելով, փաստորեն որոշում ենք ոչ թե դերանվան տեսակները, այլ միևնույն տեսակի դերանվան տարբեր կիրառությունները: Այսքանի պարզ եղրակացությունն այն է, որ հարցական և հարաբերական կոչված դերանունները դերանվան տարբեր տեսակներ չեն, այլ միևնույն տեսակի դերանուններ, իսկ վերջում քննարկված կիրառությունները, որոնց մեջ հարցականի ու հարաբերականի ֆունկցիաները, հանդիսանում են նրանց տարբեր կիրառությունները:

Իսկ ո՞րն է հարցական ու հարաբերական կոչված դերանունների էական հատկանիշը, առանձնահատկությունը, որով նրանք տարբերվում են դերանվան մյուս տեսակներից, կամ ինչպե՞ս, ի՞նչ հարաբերությամբ են նրանք ցույց տալիս առարկա, հատկանիշ: Այս տեսակետից այդ դերանունները համեմատաբար մոտ են անորոշ դերանուններին, ունեն անորոշ իմաստ: Սակայն նրանք չեն նույնանում անորոշ դերանունների հետ և ղգալի չափով տարբերվում են նրանցից: Տարբերությունն այն է, որ անորոշ դերանունները իրենց մտանական հարաբերության շնորհիվ դուրս մոտավոր գաղափար են արտահայտում հատկապես քանակի վերաբերյալ: Այսպես, մի բանի, որոշ, մի շարք անորոշ դերանունները, թեև որոշակի քանակ կամ թիվ չեն արտահայտում, բայց քանակ են ցույց տալիս մոտավոր ճշտությամբ. դրանցից հասկացվում է, որ խոսվում է ոչ մեծ քանակի մասին: Օրինակ, «մի բանի մարդ» ասելով՝ չենք կարող հասկանալ հարյուր, հազար մարդ, այլ քիչ քանակությամբ մարդիկ: Իսկ դրանց համապատասխան որքան, ինչքան, ինչչափ դերանունները քանակի զգալափար են արտահայտում բոլորովին անորոշ կերպով, առանց որևէ չափով մասնավորելու: Պատահական չէ, որ հաճախ հարցական դերանուններով բան հարցնողը բավարարվում է անորոշ դերանունով արտահայտված պատասխանով:

Օրինակ՝— Քանի՞ ուսանող ակադեմիական պարտք ունի ինստիտուտում.

— Մի քանի, մի երկու:

Այս օրինակում մի քանի, մի երկու անորոշ դերանուններով արտահայտված պատասխանը կարող է բավարար պատասխան լինել հարցնողի համար այն պատճառով, որ, թեև դրանք որոշակի քանակ չեն արտահայտում, բայց համենայն դեպս այդ բառերից որոշակի հասկացվում է, որ պարտք ունեցող ուսանողների քանակը ինստիտուտում քիչ է:

Կատարենք մի այլ համեմատություն: Ինչ դերանվան իմաստն այն է, որ սովորաբար ցույց է տալիս առարկա առանց որևէ կոնկրետության և որոշակիության, այսինքն բոլորովին անորոշ ձևով: Մինչդեռ, օրինակ, այսինչ, այնինչ անորոշ դերանունները, թեև որոշակիորեն որևէ առարկա չեն ցույց տալիս, բայց դրանք հասկացվում է, որ վերաբերում են մեկ առարկայի. այսինչ մարդը, այնինչը եկավ և այլն:

Այս մի երկու համեմատություններն իսկ բավական են համոզվելու համար այն բանում, որ քննարկվող դերանունների տարբերությունը մյուս բոլոր, այդ թվում նաև անորոշ դերանուններից այն է, որ նրանք առարկա կամ հատկանիշ են ցույց տալիս միանգամայն անորոշ ձևով, առանց իրենց իմաստը որևէ չափով որոշակի դարձնող հարաբերության: Նկատի ունենալով և՛ այս էական ու ընդհանուր հատկանիշը, և՛ այն, որ այդ դերանունները միայն հարցականի ու հարաբերականի ֆունկցիա չեն կատարում, ավելի ճիշտ կլիներ դրանք կոչել բացարձակ անորոշ դերանուններ: Կարելի է դրանք կոչել նաև ճարցական-հարաբերական դերանուններ՝ հատկապես տրադիցիոն անվանումը պահպանած լինելու նպատակով: Բայց որ դա կլինի պայմանական անվանում, միանգամայն հասկանալի է նրանց տարբեր կիրառություններից՝ վերևում կատարված համառոտ քննարկումից:

Բացարձակ անորոշ իմաստը հատուկ է այդ դերանուններից՝ վերևում քննարկված կիրառությունների բոլոր տեսակնե-

րին։ Դիտենք հետևյալ օրինակներում ինչ դերանունը իր տարբեր կիրառություններով։

Ի՞նչ կբերի նա։
Ինձ ասացին, թե ինչ կբերի։
Նա կտեսնեմ այն, ինչ կբերի։
Ի՞նչ կբերի նա։

Ընդգծված դերանունները (ի՞նչ, ինչ, ի՞նչ) ունեն նույն իմաստը, առարկա են ցույց տալիս միանգամայն անորոշ կերպով։ Այլ բան է, որ տեքստում տարբեր ձևերով (տրված հարցի պատասխանի միջոցով և այլն) կարող է առանձին դեպքերում անվանվել այն առարկան, հատկանիշը, որին վերաբերում է դերանունը։ Բայց սա չէ այդ դերանունների իմաստը. բառի իմաստն ու իմաստային առանձնահատկությունները ավելի բառի մեջ են և ոչ թե նրանից դուրս։

Հարցական-հարաբերական կամ բացարձակ անորոշ դերանունների էության բացահայտումն անհրաժեշտ և կարևոր է ոչ միայն այն պատճառով, որ դրանով մենք ճիշտ ենք ճանաչում այդ դերանունները, իրրև դերանվան մի տեսակ, այլև այն պատճառով, որ այդ հարցի լուծումը կարևոր պայման է կամ միակ պայմանն է հասկանալու և պատճառաբանելու նրանց յուրահատուկ կիրառությունները։

Քննենք այդ պատճառաբանությունը բացարձակ անորոշ դերանունների էական կիրառություններից երկուսի վերաբերյալ։ Հայտնի է, որ այդ դերանունները հաճախ են գործածվում հարցում արտահայտելու համար։ Եվ դրա պատճառը հենց նրանց բացարձակ անորոշ իմաստն է։ Եթե ես գիտեմ, որ իմ ընկերը գրախանութից դրքեր է գնել, որոնց քանակը ինձ բոլորովին հայտնի չէ, ապա բնականաբար այդ դրքերի քանակի մասին արտահայտվելու համար պետք է ընտրեմ այնպիսի բառ, որը ցույց տա ոչ թե որևէ որոշակի քանակ (երկու, վեց և այլն), կամ մոտավոր քանակ (մի քանի, մի երկու և այլն), այլ այնպիսի բառ, որն արտահայտի իմ բո-

լորովին չիմանալը։ Հենց այդպիսի բառեր են բացարձակ անորոշ դերանունները (օր. քանի, որքան)։

Բացարձակ անորոշ իմաստով պետք է բացատրել նաև այդ դերանունների՝ հարաբերականի ֆունկցիա կատարելը, որ հատուկ է նրանց, ի տարբերություն մյուս բոլոր դերանունների։ Այդ ֆունկցիայով նրանք մոտենում են շաղկապներին, որոնք նույնպես կապում կամ հարաբերում են նախադասություններն (ու բառերը) իրար։ Շաղկապների այդ ֆունկցիան, որը պարզապես քերականական ֆունկցիա է, հետևանք է այն բանի, որ նրանք չունեն նյութական իմաստ, որի կորուստի պատճառով վերածվել են հարաբերություններ ցույց տվող բառերի։

Իսկ ինչպե՞ս է, որ բացարձակ անորոշ դերանունները, որոնք ունեն նյութական իմաստ, ի վիճակի են նման հարաբերություններ արտահայտելու, իհարկե, որոշ առանձնահատկություններով։ Դա, ինչպես ասվեց, բացատրվում է նրանց իմաստի, հենց այդ նյութական իմաստի յուրահատկությամբ։ Բանն այն է, որ բառերը նյութական իմաստից դրկվում են ո՛չ թե միանգամից, ա՛յլ պատմական զարգացման երկարատև ժամանակաշրջանում։ Նրանք նախ կորցնում են իրենց կոնկրետ առարկայական իմաստը, ապա աստիճանաբար վերացականություն ու անորոշություն նրանց մեջ դառնում է տիրապետող, որի հետևանքով էլ՝ զնալով դրկվում են նյութական իմաստից։

Բացարձակ անորոշ դերանունները, թեև նյութական իմաստ ունեն, բայց այդ իմաստը լինելով միանգամայն վերացական ու անորոշ՝ չի խանգարում, այլ պայմանավորում է, որ նրանք արտահայտեն հարաբերություն, կատարեն հարաբերականի ֆունկցիա։ Բոլորովին պատահական չէ, որ այդ դերանուններից մի երկուսը արդեն մոտում են նաև շաղկապների շարքը՝ դրկվելով նյութական իմաստից։

Օրինակներ. «Ես կցանկանայի, որ դու չհանդիպեիր ինձ այստեղ» (Մուր., III, էջ 249)։ «Նա պահանջում էր, որ յուր Գոռը փեսացու լինելուց առաջ, լինի գեռ զինվոր, հայրենիքի

ծառա, հետևապես և օրինավոր մարդ» (ն. տ., էջ 247)։ «Ահա մի քանի օր է, ինչ տևանում եմ, որ դու կկրճերից վերադառնալով՝ քարձրանում ես ժայռերը» (ն. տ., էջ 250)։

Այսպիսով, քննարկվող դերանունների յուրահատուկ կիրառություններն բացատրվում ու պատճառաբանվում են նրանց էությունը հանդիսացող բացարձակ անորոշ իմաստով, որն ընկած է նրանց այդ բոլոր կիրառությունների հիմքում։ Հենց բացարձակ անորոշ իմաստն էլ պետք է համարել նրանց էական ու բնորոշ հատկանիշը, իսկ տարբեր կիրառությունները՝ այդ էության դրսևորումներ։ Այստեղից էլ բխում է քննարկվող դերանունների հետևյալ բնորոշումը.

Հարցական-հարաբերական (բացարձակ անորոշ) կոչվում են այն դերանունները, որոնք ցույց են տալիս առարկա և հատկանիշ բացարձակ անորոշ կերպով։

ԳԼՈՒԽ ՉՈՐՐՈՐԴ

ԱՐԴԻ ՀԱՅԵՐԵՆԻ ԴԵՐԱՆՈՒՆՆԵՐԻ ԶԵՎԱԲԱՆԱԿԱՆ ԱՌԱՆՁՆԱՀԱՏԿՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

Իբրև դերանունների ձևաբանական կատեգորիաներ այս տեղ քննում ենք նրանց հոլովումը և թիվը։ Հայտնի է, որ այդ կատեգորիաները հատուկ են նաև հատկապես գոյականներին, ինչպես և այլ խոսքի մասերի, օրինակ, ածականներին, թվականին՝ գոյականաբար գործածվելիս։ Հոլովի և թվի քերականական կատեգորիաների տեսակետից դերանունները հարաբերակից խոսքի մասերի համեմատությամբ ունեն և՛ պակաս յուրահատկություններ, և՛ նմանություններ։

Իբրև ընդհանուր առանձնահատկություն պետք է նշել, որ դերանունները ձևաբանական հատկանիշների տեսակետից մեկ ընդհանուր բնույթ չունեն, ի տարբերություն, օրինակ, գոյականների, որոնք հոլովվում են, թիվ ունեն, ի տարբերություն մակբայների, որոնք չեն թեքվում և այլն։

Դերանուններն այս տեսակետից անմիօրինակ են։ Դրա պատճառը հիմնականում դերանունների իմաստային բազմազանությունն է, այսինքն, որ նրանց մի մասը առարկա է ցույց տալիս, մյուս մասը՝ առարկայի հատկանիշ, երրորդ մասը՝ գործողության հատկանիշ և այլն։ Եվ քանի որ բառերի ձևաբանական առանձնահատկությունների գործում նրանց իմաստը ընդհանրապես կարևոր դեր է կատարում, ուստի՝ իմաստային բազմազանությունը տվյալ դեպքում պայմանավորում է ձևաբանական հատկանիշների անմիօրինակությունն։

Սակայն սրանով չի սպառվում դերանունների ձևաբանական անմիօրինակությունը։ Ինչպես ասվել է, հարաբերակից խոսքի մասերի և համապատասխան դերանունների միջև չկա քերականական լիակատար ընդհանրություն։ Այսպես, սպասելի էր, որ հոլովվելին առարկա ցույց տվող, ինչպես և առարկայի հատկանիշ ցույց տվող բոլոր դերանունները (վերջիններս գոյականաբար գործածվելիս)։ Սակայն ոչ միայն առարկայի հատկանիշ ցույց տվող դերանունների մի մասը գոյականաբար չի գործածվում ու չի հոլովվում, այլև չեն հոլովվում առարկա ցույց տվող մի շարք դերանուններ։ Ոչ քիչ յուրահատկություններ կարելի է նշել նաև դերանունների թվի կատեգորիայի վերաբերյալ՝ թե՛ իմաստային, և թե՛ ձևային տեսակետից։ Այս բնույթի առանձնահատկությունները, իհարկե, չի կարելի բացատրել բառերի իմաստով, այսինքն, թե ինչ են ցույց տալիս նրանք՝ առարկա՞, թե՞ հատկանիշ։ Այդպիսի առանձնահատկությունների պատճառները բազմազան են, և յուրաքանչյուր դերանվան նկատմամբ պետք է ունենալ կոնկրետ մոտեցում։

Նախ քննենք դերանունների հոլովումը։

1. ՀՈԼՈՎՈՒՄԸ

Արդի հայերենի դերանունների մի զգալի մասը, ինչպես ասվել է, հոլովվում է։ Այդ դերանունները հոլովման առանձնահատկությունների տեսակետից բաժանվում են երկու մասի։ Նրանց մի մասը հոլովվում է գոյականների պես, սրանց հոլովման սկզբունքով և մտնում է անվանական հոլովման մեջ, իսկ մյուս մասը հոլովվում է գոյականների (և հատկանիշ ցույց տվող, բայց հոլովվող բառերի) հոլովումից տարբեր ձևով։ Այդ դերանունների հոլովումը կոչվում է դերանվանական հոլովում։ Գրաբարում դերանվանական հոլովման մասին Ստ. Մալխասյանցը գրում է. «Դերանվանական հոլովումը հետևյալ տարբերություններն ունի անվանական հոլովումից.

ա) Գործածում է եզակի սեռականում և արականում հոլովական ձևեր։

բ) Բառը հոլովվում է մեջտեղից և ոչ վերջից։

գ) Բառը ունենում է մի քանի հոլովական արմատներ։

դ) Գործիական և բացառական հոլովներում առանում է կրկնակ գործիականացուցիչ և կրկնակ հոդնականացուցիչներ։

ե) Հոլովիչ ձայնավորը երբեմն գործածվում է և երբեմն ոչ (սղումով)» [1]։

Այս հատկանիշները, իհարկե, ընդհանուր հատկանիշներ չեն դրաբարում դերանվանական հոլովմամբ հոլովվող բոլոր դերանունների համար։ Այսպես, 1-ին և 2-րդ դեմքի անձնական դերանունների եզակի սեռականը և արականը հոլովական ձևեր չունեն, չունեն նաև հոլովիչներ։ Այս, այդ, այն դերանունների կարճ հոլովմանը (Ուզդ. այս, Ս. այսր, Տ. այսմ, Հ. դայս, Բ. յայսմ, Գ. այսու) վերաբերում են միայն ա և դ կետերը, և այլն։

Ստ. Մալխասյանցի նպատակն է եղել, ըստ երևույթին, տալ դերանվանական հոլովման ոչ թե ընդհանուր հատկանիշը (որ հատուկ է դերանվանական հոլովումով հոլովվող բոլոր դերանուններին), այլ տարբեր դերանունների հոլովման առանձնահատկությունները։ Այնուհետև, այդ առանձնահատկությունները նշված են դրաբարի դերանունների վերաբերյալ, ու արդի հայերենի դերանունների վրա անվերապահ տարածել չի կարելի։ Այսպես, արդի հայերենի իրար փոխադարձ դերանվան հոլովմանը չի վերաբերում այդ առանձնահատկություններից և ոչ մեկը։ Կամ՝ գործիական հոլովում կրկնակ հոդնականացուցիչ ունենալը հատուկ չէ արդի հայերենի դերանուններին։

Արդ, ո՞րն է արդի հայերենում, ինչպես և դրաբարում, դերանվանական հոլովման ընդհանուր տարբերիչ գիծը անվանական հոլովումից։ Այդ այն է, որ դերանվանական հո-

[1] Ստ. Մալխասյանց, *Դրաբարի հոլովումը, խոնարհումը և նախդիրները*, Թիֆլիս, 1910 թ., էջ 38։

լումման ենթարկվող դերանունները չեն հոլովվում հոլովիչով, չեն ունենում որոշակի վերջավորություններ:

Ուրեմն՝ հոլովիչ չունենալը, հոլովիչով չհոլովվելը դերանվանական հոլովման ընդհանուր, ամենահատկանշական առանձնահատկությունն է, ի տարբերություն անվանական հոլովման:

Ասացինք, որ արդի հայերենում հոլովվող դերանունների մի մասը հոլովվում է դերանվանական, մյուս մասը՝ անվանական հոլովումով:

Դերանվանական հոլովումով հոլովվում են անձնական դերանուններից ես, դու, ևա, իմ՛ը հղակիները, մենք, դուք հոգնակիները, սա, դա, ևա ցուցական դերանունները, իրար փոխադարձ դերանունը, ով հարցական-հարաբերական դերանունը:

Անձնական դերանվան առաջին և երկրորդ դեմքերը ունեն երրորդ դեմքի հոլովումից որոշ տարբերություններ, ուստի նախ քննենք անձնական դերանունների առաջին և երկրորդ դեմքի հոլովումը: Գրաբարում ես, դու դերանունների և սրանց հոգնակիների թեք հոլովաձևերից արդի հայերենում գտնում ենք սեռականն ու տրականը և դու դերանվան հայցականը առանց զ նախդրի: Ես դերանվան հայցականը (գրաբարում զիս) արդի հայերենում մյուս դեմքերի պես ձևով նման է տրականին՝ ինձ: Նույն երկու դեմքերի բացառական, դործիական և ներգոյական հոլովները կազմվում են գրաբարյան ձևերից բոլորովին տարբեր սկզբունքով. այն է՝ տրականի ձևից՝ անվանական հոլովման –ից, –ով, –ում վերջավորություններով: Տրականի ձևի և այդ վերջավորությունների միջև ընկած է ան մասնիկը, կամ դրա կրճատ ձևը՝ ն:

Անձնական դերանվան 3-րդ դեմքի ևա դերանունը մի քիչ այլ կերպ է հոլովվում: Սեռականի մեջ (ևրա) առկա է ուղղականի արմատական ե-ն, ինչպես գրաբարում (ևորա): Գրաբարի տրականը (եմա) արդի հայերենում չկա: Արդի հայերենում տրականը կազմվում է սեռականի ձևից (ևրա) ե հոդի հավելումով (ևրան):

Մ. Աբեղյանը ենթադրում է, որ ոչ թե նրան ձևն է առաջացել հին նրա ձևից և հոդի ավելացումով, այլ նրա ձևն է առաջացել հին նրան ձևից և-ի անկումով։ Մ. Աբեղյանի կարծիքով, սրան, դրան, նրան կրկին հոլովված ձևեր են. նախնական սեռականի վրա ավելացել է անվանական հոլովման սեռական-տրականի նոր—նան հոլովակերտը, հետագայում ենթարկվել ձևափոխությունների՝ -ան, ապա՝ -ա (յ), ճիշտ այնպես, ինչպես նույն ձևով կրկին հոլովված է իրեան, որը դարձել է իրան, ապա՝ իրա[1]։

Սակայն Մ. Աբեղյանի այս կարծիքը դուրս չի գալիս ենթադրության սահմաններից, քանի որ մենք նրան ձևի, որպես սեռականի, գործածության որևէ փաստ չունենք։ Թե ինչպես իրեան ձևը կարող էր դառնալ իրա, հասկանալի է։ Մենք հայերենում կարող ենք ցույց տալ յուրյան, իրան ձևերի, որպես սեռականի ձևերի, կիրառության բազմաթիվ փաստեր, իսկ նրան ձևի, իբրև սեռականի, փաստ ցույց տալ չենք կարող։ Ուրեմն՝ որևէ փաստ չունենք պնդելու, թե նա դերանվան սեռականը իճը դերանվան սեռականի պես ունեցել և հետագայում կորցրել է և-ն։ Թե՛ առաջին տեսակետը, որին հակադրվում է Մ. Աբեղյանը և թե՛ իր՝ Աբեղյանի տեսակետը կարող են լուրջ ուսումնասիրման հատկապես համեմատական լեզվաբանության տվյալներով։ Այդ երկու կարծիքներն էլ ենթադրություններ են և միմյանց նկատմամբ, կարելի է ասել, առավելություններ չունեն, քանի որ կոնկրետ փաստերով չեն ապացուցվում։

Նա դերանվան հայցականը սովորաբար նման է տրականին, բայց երբեմն կարող է նման լինել ուղղականին։ Բացառական, գործիական և ներգոյական հոլովները կազմվում են տրականի ձևից (նրան) անվանական -ից, -ով, -ում վերջավորություններով։

Իճը դերանունը հոլովվում է այսպես. իճը, իր կամ

---

[1] Մ. Աբեղյան, *Աշխարհաբարի հոլովները*, Վաղարշապատ, 1908 թ., էջ 83։

յուր, իրեն, իրեն [1]. մյուս ձևերը կազմվում են նա դերանվան համապատասխան հոլովների կազմության սկզբունքով. այսինքն՝ տրականի ձևի վրա ավելացվում են –ից, –ով, –ում վերջավորությունները:

Ի մի բերենք անձնական դերանունների հոլովման առանձնահատկությունները: Ի տարբերություն անվանական հոլովման, որը կազմվում է վերջավորությունների կցումով բառի հիմքին, կամ նրբին թեքման միջոցով, անձնական դերանունների սեռական, տրական և հայցական հոլովները կազմվում են այլ կերպ: Առաջին և երկրորդ դեմքի անձնական դերանունների սեռականը (իմ, ի, մեր, ձեր) չի կազմվում ուղղականից (ես, դու, մենք, դուք): Ուղղականի ձևը կամ ուղիղ ձևը այլևս ոչ մի հոլովում հանդես չի գալիս:

Տրականը ևս նոր ձև է (ինձ, ինձ, մեզ, ձեզ). այն չի կազմվում նախորդ հոլովներից որևէ վերջավորության միջոցով: Քանի որ այս ձևերից յուրաքանչյուրը մյուսից տարբեր է իր հիմքով, հասկանալի է, որ այստեղ հիմքի և վերջավորության մասին խոսք լինել չի կարող:

Ուղղ.	ես	մենք	դու	դուք
Ս.	իմ	մեր	քո	ձեր
Տ.	ինձ	մեզ	քեզ	ձեզ

Տեսանք, որ նա և ինքը դերանունների տրականի և սեռականի հիմքը նույնն է, ի տարբերություն առաջին և երկրորդ դեմքերի: Նա դերանվան տրականը կազմվում է սեռականից -ն-ի հավելումով, իսկ ինքը դերանվան տրականը (իրեն) կազմվում է սեռականի վրա եան հոլովակերտի հավելումով, որը վերածվել է ե-ի՝ իր-իրեան-իրեն:

[1] Գրաբարյան դերանունների սխեմայում տարբեր դերանուններ են համարվում ինքն և իր (>իր), որոնք հոլովվում էին տարբեր ձևերով: Իր՝ Սեռ. Տր. իր, Բաց. յիւրմէ, Դործ. իւրեաւ, իւրև, իւրեամբ. Ուղղ. և Հայց. չունի: Ինքն՝ Ուղղ. ինքն, Սեռ. Տր. ինքեան, Հայց. զինքն, Բաց. յինքենէ, Դործ. ինքեամբ: Հետագայում ինքն դերանվան ինչ հոլովաձևերը անգործածական են դարձել, դուրս են ընկել կենդանի լեզվից, և ինքն ուղիղ ձևը դիտակցվել ու դիտակցվում է որպես իր դերանվան ուղղական:

Առաջին և երկրորդ դեմքի անձնական դերանունների հայցականը, ի տարբերություն դոյականների հայցականի, միշտ նման է սրականին: Հիմնականում այդպիսին է նաև երրորդ դեմքի հայցականը: Այդ մասին պրոֆ. Ա. Ղարիբյանը գրում է. «Անձնական դերանունները ինքնին միշտ որոշյալ են, թեև որոշյալ հոդ չեն ստանում. այդ պատճառով էլ նրանց հայցականը միշտ նման է սրականին» [1]:

Սակայն, ինչպես հայտնի է, անունների հայցական հոլովը որոշյալ առումով կարող է նման լինել նաև ուղղականին: Օր. նա ջարդից սեղաը: Սեղաը բառը որոշյալ առում ունի, բայց նման է ոչ թե սրականին, այլ՝ ուղղականին: Անձնական դերանունների հայցականը սրականին նման է, որովհետև նրանք անձ են ցույց տալիս և գործածվում են անձի առումով: Իսկ հայտնի է, որ դոյականների հայցական հոլովը անձի առման դեպքում նման է լինում սրականին: Այդ կարելի է ցույց տալ նաև երրորդ դեմքի անձնական դերանվան գործածությամբ: Վերցնենք երկու նախադասություններ.

Աշակերտը սիրում է ուսուցչին, որովհետև ուսուցիչը նրան գիտություն է տալիս:

Աշակերտը սիրում է գիրը, որովհետև գիրը նրան գիտություն է տալիս:

Առաջին նախադասության մեջ ուսուցչին բառը անձի անուն է անձի առումով, երկրորդ նախադասության գիրը բառը իրի անուն է իրի առումով: Ընդգծված բառերը, որոնք դրված են հայցական հոլովով, եթե փոխարինենք դերանուններով՝ պահպանելով համապատասխան առումները, կստանանք.

Աշակերտը սիրում է նրան, որովհետև...

Աշակերտը սիրում է այն (նա), որովհետև...

Այսպիսով՝ անձնական դերանունների հայցական հոլովը նման է սրականին անձի առում ունենալու պատճառով, թեև

---

[1] Ա. Ղարիբյան, *Հայոց լեզվի դասագիրք V և VI դասարանների համար, Ե., 1954, էջ 177:*

ճիշտ է, որ նրանք միաժամանակ նաև որոշյալ են։ Որոշյալ առումը այս նմանութեան մեջ դեր չի կատարում։

Մենք տեսանք, որ անձնական դերանունների բացառական, գործիական և ներգոյական հոլովները կազմվում են սրականից՝ անվանական հոլովման վերջավորութիւններով։ Տեսանք նաև, որ 1-ին և 2-րդ դեմքերի եզակի և հոգնակի ձևերի մեջ այդ հիմքի և վերջավորութեան միջև գոյութիւն ունի —աե կամ և մասնիկ։ Տեսնենք, թե որտեղից է այդ մասնիկը։

Պետք է ենթադրել, որ այդ -աե (և) մասնիկը անձնական դերանունների առաջին և երկրորդ դեմքերի հոլովման մեջ է մտել անձնական դերանվան երրորդ դեմքի հոլովման (որ նույնն է ցուցական ևա դերանվան հոլովման հետ) և ցուցական սա, դա դերանունների համապատասխան հոլովաձևերի անալոգիայով։ Սա, դա, ևա դերանունների բացառական, գործիական, ներգոյական հոլովները կազմվում են սրականի վրա —ից, –ով, –ում վերջավորութիւնների ավելացումով.

Տր.	*սրան*	*դրան*	*նրան*
Բ.	*սրան-ից*	*դրան-ից*	*նրան-ից*
Գ.	*սրան-ով*	*դրան-ով*	*նրան-ով*
Ն.	*սրան-ում*	*դրան-ում*	*նրան-ում*

Սրանց նմանութեամբ էլ առաջին և երկրորդ դեմքի դերանունները ունեն աե մասնիկ, որի կրճատ ձևն է և։ Այս անալոգիայի մեջ տարօրինակ ոչինչ չկա։ Հայտնի է, որ լեզվի մեջ անալոգիայի ուժը բավական մեծ է, և լեզուն հակում ունի հնարավորութեան սահմաններում, անհրաժեշտ պայմանների առկայութեան դեպքում ստեղծել միօրինակութիւններ։ Անձնական դերանունների առաջին և երկրորդ դեմքերը հաճախակի գործածվում են երրորդ դեմքի, ինչպես և ցուցական հիշյալ դերանունների հետ, ուստի բնական է, որ դրանց միջև ստեղծվեր ձևային ընդհանրութիւն։ Այդ անալոգիային անկասկած նպաստել է այն հանգամանքը, որ սա, դա, ևա դերանունների հոգնակիների բոլոր հոլովաձևերն

իրենց մեջ ունեն ան հնչյունակոմպլեքսը. սրանիք, սրանց, սրանցից և այլն. դրանիք, դրանց, դրանցից և այլն. նրանիք, նրանց, նրանցից և այլն:

Դերանվանական հոլովման պատկանող անձնական դերանունների հոլովման տախտակը.

Եզակի

Ուղղ.	*ես*	*դու*	*նա*	*ինքը*
Սեռ.	*իմ*	*քո*	*նրա*	*իր, յուր*
Տր.	*ինձ*	*քեզ*	*նրան*	*իրեն*
Հայց.	*ինձ*	*քեզ*	*նրան*	*իրեն*
Բաց.	*ինձանից*	*քեզանից*	*նրանից*	*իրենից*
	ինձնից	*քեզնից*		
Գործ.	*ինձանով*	*քեզանով*	*նրանով*	*իրենով*
	ինձնով	*քեզնով*		
Ներ.	*ինձանում*	*քեզանում*	*նրանում*	*իրենում*
	ինձնում	*քեզնում*		

Հոգնակի

Ուղղ.	*մենք*	*դուք*
Սեռ.	*մեր*	*ձեր*
Տր.	*մեզ*	*ձեզ*
Հայց.	*մեզ*	*ձեզ*
Բաց.	*մեզանից*	*ձեզանից*
	մեզնից	*ձեզնից*
Գործ.	*մեզանով*	*ձեզանով*
	մեզնով	*ձեզնով*
Ներ.	*մեզանում*	*ձեզանում*
	մեզնում	*ձեզնում*

Վերևում ասվեց, որ ցուցական դերանուններից դերանվանական հոլովումով հոլովվում են սա, դա, ձա դերանունները: Այդ դերանունները հոլովվում են անձնական ձա դերանվան հոլովման նման:

Գոյություն ունի այն կարծիքը, թե իբր հոլովվում են նաև այս, այդ, այն դերանունները, որոնք իբր թե ունեն հոգնակիներ, որոնք ևս հոլովվում են։ Ահա ցուցական դերանունների հոլովման տախտակը քերականության դասագրքերից մեկում [1]։

Սգակի

Հոլով	Անձ			Իր		
Ուղղ.	*սա*	*դա*	*նա*	*այս*	*այդ*	*այն*
Մ.	*սրա*	*դրա*	*նրա*	*սրա*	*դրա*	*նրա*
Տ.	*սրան*	*դրան*	*նրան*	*սրան*	*դրան*	*նրան*
Հ.	*սրան*	*դրան*	*նրան*	*այս*	*այդ*	*այն*
Բ.	*սրանից*	*դրանից*	*նրանից*	*սրանից*	*դրանից*	*նրանից*
Գ.	*սրանով*	*դրանով*	*նրանով*	*սրանով*	*դրանով*	*նրանով*
Ն.	*սրա մեջ*	*դրա մեջ*	*նրա մեջ*	*սրանում*	*դրանում*	*նրանում*

Հոգնակի

Հոլով	Անձ			Իր		
Ուղղ.	*սրանք*	*դրանք*	*նրանք*	*սրանք*	*դրանք*	*նրանք*
Մ.	*սրանց*	*դրանց*	*նրանց*	*սրանց*	*դրանց*	*նրանց*
Տ.	*սրանց*	*դրանց*	*նրանց*	*սրանց*	*դրանց*	*նրանց*
Հ.	*սրանց*	*դրանց*	*նրանց*	*սրանք*	*դրանք*	*նրանք*
Բ.	*սրանցից*	*դրանցից*	*նրանցից*	*սրանցից*	*դրանցից*	*նրանցից*
Գ.	*սրանցով*	*դրանցով*	*նրանցով*	*սրանցով*	*դրանցով*	*նրանցով*
Ն.	*սրանց մեջ*	*դրանց մեջ*	*նրանց մեջ*	*սրանցում*	*դրանցում*	*նրանցում*

Դեռևս Ստ. Պալասանյանը, Մ. Աբեղյանը և ուրիշ քերականներ դռնում էին, որ արդի հայերենում այս, այդ, այն

[1] Ա. Ղաբիբյան, *Հայոց լեզվի դասագիրք, միջն. դպրոցի V—VI դասարանների համար*, Ե., 1952, էջ 214։

դերանունները չեն հոլովվում։ Ստ. Պալասանյանը իր «Քերականություն մայրենի լեզվի» դասագրքում ցուցական դերանուններից ներկայացնում է սա, դա, նա դերանունների հոլովումը, իսկ այս, այդ, այն դերանունների մասին գրում է. «Այս, այդ, այն շատ անգամ մենակ էլ են վարվում իբրև գոյական, բայց միշտ անփոփոխ են մնում (ընդգծումն իմն է — Ս. Ա.)»[1]։ Նույն բանն է ասում նաև Մ. Աբեղյանը. «Այս, այդ, այն ցուցականները արևելյան աշխարհաբարում չեն հոլովվում. հարկավոր դեպքում գործ են ածվում համապատասխան սա, դա, նա ցուցականների հոլովները» (ընդգծումն իմն է — Ս. Ա.)[2]։

Այս հարցում, ըստ երևույթին, շփոթության տեղիք է տվել հենց այդ հանգամանքը, այսինքն, որ, Մ. Աբեղյանի բառերով ասած, այս, այդ, այն դերանունների համար «հարկավոր դեպքում գործ են ածվում համապատասխան սա, դա, նա ցուցականների հոլովները»։ Այսպես օրինակ՝

Այս (սա) հետաքրքիր գիրք է։

Սրա հերոսները անմոռաց են։

Ուրեմն՝ քանի որ այս և սա դերանունների ուղղականով ցույց տրված առարկան կարելի է ցույց տալ սրա սեռականով, այդ հիմունքով էլ, ինչպես տեսանք, սրա ձևը համարում են և՛ այս, և՛ սա դերանունների սեռական։ Նույնը վերաբերում է նաև դա, նա դերանուններին։ Ըստ որում այդ վերաբերում է ոչ միայն սեռական, այլև մյուս հոլովներին։

Քանի որ արդի հայերենում սրա, դրա, նրա սեռականներով և դրանց այլ հոլովաձևերով ցույց տված առարկան կարող է ցույց տրվել սա, դա, նա և այս, այդ, այն ուղղականներով, ուստի՝ պարզելու համար, թե սրա, դրա, նրա և այլն ձևերը սրանցից որոնց հոլովաձևերն են, անհրաժեշտ է դիմել լեզվի պատմությանը։

---

[1] Ստ. Պալասանյան։ Քերականություն մայրենի լեզվի, հինգերորդ տիպ, 1906 թ., էջ 140։

[2] Մ. Աբեղյան, Աշխարհաբարի քերականություն, Վաղարշապատ, 1906 թ., էջ 159։

Գրաբարում հոլովվում էին թե՛ սա, դա, նա և թե՛ այս, այդ, այն դերանունները ու հոլովվում էին տարբեր սկզբունքով։ Բերենք միայն նա և այն դերանունների հոլովումը, որոնց նման են հոլովվում նաև սա, դա, այս, այդ դերանունները.

Ուղղ.	*նա*	*այն*	
Ս.	*նորա*	*այնը*	*այնօրիկ*
Տ.	*նմա*	*այնմ*	*այնմիկ*
Հ.	*զնա*	*զայն*	
Բ.	*ի նմանէ*	*յայնմ*	*յայնմանէ*
Գ.	*նովաւ*	*այնու*	*այնուիկ*

Վերևում տեսանք, թե ինչպիսի փոփոխությունների է ենթարկվել սա, դա, նա դերանունների հոլովումը, տեսանք նաև, որ ետա, ետաճից և նման ձևերը նա դերանվան հոլովաձևերն են։ Բայց արդյո՞ք այդ ձևերը նաև այն դերանվան հոլովաձևերն են։

Ինչպես երևում է, գրաբարյան այն դերանվան հոլովման սիստեմը չկա արդի հայերենում. չկա նույնիսկ այդ հոլովման մնացորդը։ Արդի հայերենում կա այդ ձևը, որը գործածվում է որպես ուղղական և հայցական։ Այս, այդ, այն դերանունները և ոչ էլ նրանց հոլովաձևերը չկան ո՛չ Արարատյան, ո՛չ էլ Ում ճյուղի այլ բարբառներում։ Արարատյան բարբառում ունենք էս, էտ, էն ձևերը, որոնք անկախ գործածության դեպքում հոլովվում են այսպես. էս, էստուր (ըստուր), էստուց (ըստուց), էստով (ըստով) և այլն։ Հոլովական այս ձևերը չեն մտել արդի հայերենի մեջ։ Նույնը պետք է ասել Թիֆլիսի բարբառի և մեր մյուս բարբառների մասին։ Իսկ որտեղի՞ց են արդի հայերենի մեջ մտել այս, այդ, այն դերանունները։

Գրի և գրականության գոյության և զարգացման ընթացում ուժեղանում է անհատների ակտիվ վերաբերմունքը լեզվի նկատմամբ, և դա այս կամ այն չափով ազդում է լեզվի

դարդացման վրա։ Այդ ամրողջապես վերաբերում է նաև հայերենին։

Արդի հայերենի կազմավորման սկզբից դրաբարի, որպես անցյալի հայ դրական լեզվի, դերը չէ կատարել։ Բարբառային բառերի մեծ մասը արդի հայերենի մեջ է մտել դրաբարյան, երբ կարելի է ասել, բառապատկերներով, ձևով (խոսքը ոչ թե հոլովական ձևի, այլ ուղիղ ձևի մասին է)։ Արդի հայերենի այս, այդ, այն դերանունները բարբառային էս, էտ, էն դերանունների դրաբարյան ձևերն են, որոնց և առավելություն է տրվել մեր դրական լեզվում էս-ի, էտ-ի, էն-ի համեմատությամբ։

Բայց դրաբարից վերցրել ենք միայն դրանց ուղիղ ձևը և հայցականը առանց զ նախդիրի, որը ձևով նույնն է ուղղականի հետ, իսկ մյուս հոլովաձևերը չենք վերցրել։ Ստացվում է, որ արդի հայերենի մեջ չեն մտել ո՛չ այս, այդ, այն դերանունների դրաբարյան հոլովաձևերը, ո՛չ էլ բարբառային էս, էդ, էն դերանունների հոլովաձևերը։ Քանի որ այս, այդ, այն դերանունների ո՛չ դրաբարյան, ո՛չ սրանց համապատասխան բարբառային ձևերի հոլովումը արդի հայերենը չի վերցրել, այդ պատճառով էլ նրանք չեն հոլովվում արդի հայերենում։ Ցուրաքանչյուր հոլովման սիստեմ կամ բառի հոլովում ունի իր պատմությունը, իսկ այդ դերանունները արդի հայերենում չունեն ոչ մի հոլովական պատմություն։

Նշենք նաև այն, որ որևէ անհրաժեշտություն չկա, որ այդ դերանունների դրաբարյան հոլովումն անցներ արդի հայերենին։ Այդ դերանունները և նրանց հոլովաձևերը դրաբարում գործածվում էին ոչ միայն անկախ, այլև իբրև որոշիչ։ Իսկ ինչպես ածականները, այնպես էլ ուրիշ բառեր (թվականները, որոշ դերանուններ) արդի հայերենում գոյականի հետ գործածվելիս չեն հոլովվում։ Ինչ վերաբերում է այդ դերանունների անկախ գործածություններին, ապա վերջիններս ունեն սա, դա, նա դերանունների իմաստը, և սա, դա, նա դերանունների հոլովաձևերը միանդամայն բավարարում են անհրաժեշտության դեպքում նրանց հոլովաձևերի փոխարեն

դործածվելու համար։ Այսպիսով՝ լեզվի պատմության փաստերը հաստատում են, որ այս, այդ, այն դերանունները արդի հայերենում չեն հոլովվում։

Այն իրողությունը, որ այս, այդ, այն դերանունների համար անհրաժեշտության դեպքում կարող են դործածվել սա, դա, նա դերանունների հոլովաձևերը, ոչ մի չափով տարօրինակ չէ և եզակի փաստ չէ։ Հայտնի է, օրինակ, որ ովքեր դերանունը արդի հայերենում չի հոլովվում, բայց անհրաժեշտության դեպքում դործածվում են որոնք դերանվան հոլովաձևերը՝ որոնց, որոնցից և այլն։ Պարզ է, որ այս չի նշանակում, թե որոնց, որոնցից և այլն ձևերը ովքեր դերանվան հոլովաձևերն են։ Կամ՝ շատ բառերի ներդոյականի իմաստը արտահայտվում է նույն բառի սեռական հոլովով և մեջ կապով, այդ չի նշանակում, թե այդ բառակապակցությունը ներդոյական հոլով է։

Պրոֆ. Ղարիբյանը սա, դա, նա և այս, այդ, այն դերանունների հոլովման սխեմում նշում է որոշ տարբերություններ հայցական և ներդոյական հոլովներում։ Դրանով, կարծեք թե, ցանկանում է հիմնավորել այդ դերանունների հոլովվելու վերաբերյալ տեսակետը։

Որո՞նք են այդ տարբերությունները։ Նա սա, դա, նա դերանունների հայցականի համար ներկայացնում է սրան, դրան, նրան ձևերը, ապա ներքևում նշում է, որ «սա, դա, նա հազվագեպ դործ են ածվում նաև իրերի անունների փոխարեն, և այդ դեպքում հայցականը լինում է նույնպես սա, դա, նա»[1]։ Սա, դա, նա դերանունների այս զույգ ձևերը պայմանավորված են այն բանով, թե տվյալ ցուցական դերանունները դործածվում են իրի՞, թե՞ անձի առումով։ Եթե նրանք դործածվում են անձի առումով, հայցականը նման է լինում սրականին, իսկ եթե դործածվում են իրի առումով, հայցականը նման է լինում ուղղականին։ Մենք վերևում տեսանք, որ սա, դա, նա ցուցականների համար ավելի սո-

[1] Ա. Ղարիբյան, *Հայոց լեզվի դասագիրք, 1952 թ., էջ 214։*

վորական է առարկա ցույց տալը և իրի առումը, քան անձ ցույց տալը և անձի առումը, որով և պայմանավորված է սա, դա, նա հայցականների սովորական գործածությունը։

Նույնպիսի տարբերություն կա նաև այդ դերանունների հոդնակի հայցականում. սրանց, դրանց, նրանց հայցականները գործածվում են անձի առումով, սրանք, դրանք, նրանք՝ իրի առումով։ Սրանք միևնույն սա, դա, նա դերանունների հայցականներն են և տարբերվում են միայն գործածությամբ, առումով։ Ուրեմն՝ չի կարելի սրանք, դրանք, նրանք հայցականները համարել այս, այդ, այն դերանունների հոդնակի հայցականներ։

Ավելին. այս, այդ, այն դերանունները արդի հայերենում հոդնակի չունեն։ Անձնական դերանունների հոդնակին քննելիս կտեսնենք, որ ինչպես հայտնի է, նրանք հոդնակին նա դերանական հոդնակին է և կազմվում է նրան սրականից՝ ք հոդնակերտի հավելումով։ Նույն սա, դա դերանունների սրականից են կազմված նաև սրանք և դրանք հոդնակիները։ Այս, այդ, այն դերանունների դրաբարյան հոդնակիներն են այսք, այդք, այնք, որոնք, ինչպես և քարրառային էս, էտ, էն դերանունների հոդնակիները՝ էսոօնք, էտօնք, էնդօնք և այլն չեն անցել ժամանակակից հայերենին։

Այնուհետև. վերևի տախտակում նիրկայացված են ներգոյական հոլովի երկու ձև. սա, դա, նա դերանունների և դրանց հոդնակիների համար նիրկայացված են սրա մեջ, դրա մեջ, նրա մեջ, սրանց մեջ և այլն, իսկ այս, այդ, այն դերանունների և սրանց կարծեցյալ հոդնակիների համար՝ սրանում, դրանում, նրանում, սրանցում և այլն։ Մեջ կապով ձևերը (սրա մեջ, դրա մեջ և այլն) չի կարելի համարել հոլովական ձևեր։ Հոլովական ձև ասելով հասկացվում է տվյալ բառի (անվան)՝ արտաքին կամ նիրքին ինքման որևէ ձևը։ Իսկ սրա մեջ, դրա մեջ և այլն հանդիսանում են դերանվան սեռականով և մեջ կապով կազմված կապակցություններ. դրանք թեև նիրդյականի իմաստ են արտահայտում, բայց բառակապակցություններ են, իսկ բառակապակցությունը չի

կարելի դիտել իբրև մեկ հոլովաձև։ Այսպիսով՝ սրա *մեջ,* դրա *մեջ և այլն ներգոյականի ձևեր չեն, ինչպես ներգոյականի ձևեր չեն* Աոամի *մեջ,* իոար *մեջ, միմյանց մեջ և այլն։ Պարզ է, որ* սրանում, դրանում, նրանում, սրանցում *և այլն ձևերը ոչ թե այս, այդ, այն դերանունների, այլ սա, դա, նա դերանունների ներգոյականներն են։*

Ուրեմն՝ ցուցական դերանունների տախտակում մտցված այդ տարբերությունները չեն օգնում այս, այդ, այն դերանունների համար յուրահատուկ հոլովական ձևեր տեսնելուն ու նրանց հոլովվելու վերաբերյալ կարծիքի հիմնավորմանը։

Ահա սա, դա, նա *ցուցական դերանունների հոլովման տախտակը.*

Ուղղ.	*սա*	*դա*	*նա*
Սեռ.	*սրա*	*դրա*	*նրա*
Տրակ.	*սրան*	*դրան*	*նրան*
Հայց.	*սա (սրան)*	*դա (դրան)*	*նա (նրան)*
Բաց.	*սրանից*	*դրանից*	*նրանից*
Գործ.	*սրանով*	*դրանով*	*նրանով*
Ներգ.	*սրանում*	*դրանում*	*նրանում*

Այս, այդ, այն դերանունները չեն հոլովվում. անհրաժեշտության դեպքում գործածվում են սա, դա, նա *դերանունների հոլովները։ Միևնույն այս, այդ, այն ձևերը գործածվում են, բացի ուղղականից, նաև հայցականի ֆունկցիայով։*

Փոխադարձ դերանուններից *դերանվանական հոլովման պատկանում է* իոար *դերանունը։ Դերանվանական հոլովման մնացորդները երևան են գալիս նրա սեռական, տրական և հայցական հոլովներում, որոնք չունեն հոլովական վերջավորություններ։ Բացառական, գործիական հոլովներն ունեն անվանական հոլովման* –ից, –ով *վերջավորությունները։*

Իոար *դերանունը ունի նաև այնպիսի յուրահատկություններ, որոնք հատուկ են նաև մյուս փոխադարձ դերանուննե-*

[1] Սա, դա, նա *դերանունների հոդնակիների հոլովումը այստեղ չենք ներկայացնում, որովհետև նրանք պատկանում են անվանական հոլովման։*

րին։ Ոաստի՝ անտեղի շեղում կատարած չենք լինի, եթե դերանվանական հոլովման բաժնում քննենք այդ յուրահատկությունները, որ հատուկ են թե՛ դերանվանական և թե՛ անվանական հոլովումով հոլովվող փոխադարձ դերանուններին։

Սովորաբար ասում են, որ փոխադարձ դերանունները չունեն ուղղական և ներգոյական հոլովներ։ Այդ ասելով, սակայն, չպետք է հավասարության նշան դնել փոխադարձ դերանունների՝ ուղղական և ներգոյական հոլովներ չունենալու միջև։

Արդի հայերենի փոխադարձ դերանունների՝ ուղղական հոլով չունենալը բխում է նրանց յուրահատուկ իմաստից։ Փոխադարձ դերանունները ցույց են տալիս հարաբերակից առարկաներ, որոնցից մեկը մյուսի նկատմամբ տվյալ հարաբերության մեջ համազոր չէ։ Իրար, միմյանց, մեկմեկու *նշանակում են «մեկը մյուսին», կամ նաև՝ «վերջինս առաջինին», իբրև սեռական՝ «մեկը մյուսի» կամ նաև «վերջինս առաջինի»։* Իրարից, միմյանցից, մեկմեկուց *նշանակում են «մեկը մյուսից» կամ նաև՝ «վերջինս առաջինից»։ Այսպիսով՝ յուրաքանչյուր փոխադարձ դերանվան մեջ կա թեք հոլովի իմաստ։ Այդ պատճառով էլ նրանք չունեն ուղղական հոլով։*

Սակայն փոխադարձ դերանունների իմաստը չի բացառում ներգոյական հոլովի իմաստը, այդ հոլովը ունենալը։ Կարելի է կազմել իրարում, միմյանցում, մեկմեկում, *բայց այդ ձևերը գործածական չեն։ Փոխադարձ դերանունների ներգոյականի իմաստը արտահայտվում է նրանց սեռական հոլովով և մեջ կապով, ինչպես՝ իրար մեջ, միմյանց մեջ, մեկմեկու մեջ։ Ուրեմն՝ փոխադարձ դերանունների ներգոյական հոլով չունենալը պետք է հասկանալ այն իմաստով, որ նրանց ներգոյականի ձևը, ներգոյական հոլովը գործածական չէ, ինչպես գործածական չէ շատ գոյականների և դերանունների ներգոյականի ձևը։ Այսպես, գործածական չէ ոչ միայն հատուկ անունների, այլև ուրիշ գոյականների ներգոյականը.* Ֆարում, Ծառում, Ծաղիկում, Դռնում *և այլն։*

Հազվագյուտ դեպքերում իրար դերանվան սեռական,

տրական, հայցական, բացառական հոլովներում գործածվում է ու հոլովիչը (իրարու, իրարուց)։

«Մենք հասկանում ենք, ընկեր, իրարու» (Էմ., էջ 23)։

«Յաեսութիյուն ասինք,· սակայն
Չաեսանք մենք իրարու» (ՍԿ, էջ 28)։

Իրարու ձևը, որ տարածված և գործածական չէ, խորթ է արդի հայերենին, ուստի և չի խանգարում իրար դերանվան հոլովումը դերանվանական համարելուն։

Այս ձևերը գործածվում են հատկապես չափածո ստեղծագործություններում վանկերի քանակը պահպանելու նկատառումով։

Ահա փոխադարձ դերանունների հոլովման տախտակը.

Ուղղ.	—	—	—	—
Ս.	*իրար*	*միմյանց*	*մեկմեկու*	*մեկմեկի*
Տ.	*իրար*	*միմյանց*	*մեկմեկու*	*մեկմեկի*
Հ.	*իրար*	*միմյանց*	*մեկմեկու*	*մեկմեկի*
Բ.	*իրարից*	*միմյանցից*	*մեկմեկուց*	*մեկմեկից*
Գ.	*իրարով*	*միմյանցով*	*մեկմեկով*	*մեկմեկով*

Ինչպես տեսնում ենք, արդի հայերենի փոխադարձ դերանուններից յուրաքանչյուրի սեռականը, տրականը, հայցականը ձևով նույնն են։

Դերանվանական հոլովումով է հոլովվում նաև հարցական-հարաբերական ով դերանունը։

Ուղղ. ով
Ս. *ում*
Տ. *ում*
Հ. *ում*
Բ. *ումից*
Գ. *ումով*

Ով դերանվան սեռական, տրական, հայցական հոլովները ձևով նույնն են (ում), *իսկ բացառականը և գործիականը կազմվում են տրականից՝ –ից, –ով վերջավորությունների ավելացումով։ Ներգոյականը բոլորովին չի գործածվում։*

Անվանական հոլովումով հոլովվում է դերանունների մեծ

մասը։ Սրանց մի զգալի մասը հոլովվում է ի հոլովումով, մի քանիսը՝ ց հոլովումով, մեկը՝ ու հոլովումով։

Ի հոլովման պատկանում են՝

1. Անկախ գործածվող հետևյալ դերանունները.

Ցուցականներից՝ այստեղ, այդտեղ, այնտեղ[1].

Փոխադարձներից՝ մեկմեկի.

Հարցական-հարաբերականներից՝ ինչ, որտեղ.

Որոշյալներից՝ ամենքը, ամեն ինչ, ոչ ոք, ոչինչ։

2. Գոյականների հետ գործածվող, հատկանիշ ցույց տվող հետևյալ դերանունները գոյականաբար գործածվելիս.

Ցուցականներից՝ այսպիսի, այդպիսի, այնպիսի, նույնպիսի, այսքան, այդքան, այնքան, նույնքան, այսչափ, այդչափ, այնչափ, նույնչափ, սույն, նույն, միևնույն, մյուս։

Հարցական-հարաբերականներից՝ որ, քանի, որքան, որչափ, ինչչափ, որպիսի, ինչպիսի, քանիերորդ, որերորդ։

Որոշյալներից՝ ամեն, բոլոր, յուրաքանչյուր, ողջ, ամբողջ, ամեն մի (ամեն մեկը), ոչ մի (ոչ մեկը).

Անորոշներից՝ մի (մեկը), այսինչ, այնինչ, մի քանի (մի քանիսը), ուրիշ։

3 հոլովումով հոլովվում են հոդնակի թվով հետևյալ դերանունները. ևրաճ, իրեճ, ոմաճ, որոճ, այլև փոխադարձ միմյանց դերանունը։ Այս բոլոր դերանունները ուղղականում վերջանում են ք-ով (գրաբարյան հոդնակերտ), բացի վերջիններից, որը ուղղական չունի։

Ու հոլովումով հոլովվում է միայն մեկմեկու փոխադարձ դերանունը։

Դերանունների անվանական հոլովման վրա հանդամանորեն կանգ առնելու անհրաժեշտություն չկա, որովհետև նրանք հոլովվում են ոչ յուրահատուկ կերպով, այլ համապատասխան հոլովման պատկանող գոյականների պես։

Ուղղ. ամենքը ինչ(ը) այստեղ

Ս. ամենքի ինչի այստեղի

[1] Սրանք և որտեղ-ը վերապահումով ենք համարում անկախ գործածվող։

Տ.	ամենքին	ինչի(ն) այստեղի(ն)
Հ.	ամենքին	ինչ(ը) այստեղ
Բ.	ամենքից	ինչից այստեղից
Գ.	ամենքով	ինչով այստեղով
Ն.	—	ինչում

Պետք է նշել, որ դերանունների մի մասի հայցականը ունի միայն մեկ ձև, որը նման է կամ ուղղականին, կամ սեռականին: Պատճառն այն է, որ այդ դերանունների մեջ անձի և իրի առումը նույնանում է անձի և իրի անվան հետ: Որևէն որոշ դերանուններ, որոնք իր են ցույց տալիս (ինչ, այստեղ) անձի առումով գործածվել չեն կարող, հետևապես և նրանց հայցականը սեռականի ձևին նման լինել չի կարող: Իսկ ամենը դերանունը, որ գործածվում է անձ ցույց տալու համար, ունի ձևով սեռականին նման հայցական: Տեսանք, որ այդպիսիք էին նաև առաջին և երկրորդ դեմքի անձնական դերանունները:

Ինչպես ամենը դերանունը, այնպես էլ անձ ցույց տվող շատ դերանուններ չունեն ներգոյական հոլով, որի փոխարեն գործածվում է տվյալ դերանվան սեռականը մեջ կապի հետ:

Ներգոյական հոլով չունեն նաև այստեղ, այդտեղ, այնտեղ դերանունները: Այդ բացատրվում է նրանց իմաստով, այսինքն այն բանով, որ նրանք առանց ներգոյական հոլովի էլ ցույց են տալիս այն տեղը, որտեղ կատարվում է գործողությունը կամ գտնվում է առարկան:

Վերևում ասվեց, որ ի հոլովումով հոլովվում է նաև հատկանիշ ցույց տվող դերանունների մեծ մասը: Այսպես՝

Ուղղ.	յուրքանչյուրը	այսքանը	մյուսը
Ս.	յուրքանչյուրի	այսքանի	մյուսի
Տ.	յուրքանչյուրի(ն)	այսքանի(ն)	մյուսին
Հ.	յուրքանչյուրը	այսքանը	մյուսը
	յուրքանչյուրին	այսքանին	մյուսին
Բ.	յուրքանչյուրից	այսքանից	մյուսից
Գ.	յուրքանչյուրով	այսքանով	մյուսով
Ն.	յուրքանչյուրում	այսքանում	մյուսում

Այս և գոյականների հետ գործածվող մյուս դերանունները անկախ գործածվելու դեպքում հոլովվելիս կարող են ունենալ երկու ձևի հայցական՝ ձևով նման ուղղականին կամ տրականին։

Այդ դերանունների ներգոյականը գործածական է հատկապես այն դեպքում, երբ իր է ցույց տալիս, իսկ երբ անձ է ցույց տալիս, սովորաբար չի գործածվում։ Այսպես, կարելի է ասել. այս տուփերից յուրաքանչյուրում (կամ յուրաքանչյուրի մեջ) կա տասը մատիտ։ Բայց չի կարելի ասել. այս ուսանողներից յուրաքանչյուրում (այլ՝ յուրաքանչյուրի մեջ) դդում եմ ջերմ սեր դեպի ուսումը։

Ձայնավորով վերջացող դերանունների մեծ մասը հոլովվելիս որոշ փոփոխության է ենթարկվում։ Այսպիսի, այդպիսի, այնպիսի, նույնպիսի *դերանունները հոլովման ժամանակ փոխանակ սեռականի հոլովման պես՝ հոդի կամ հոլովական վերջավորության և հիմքի միջև ունենում են ն, ինչպես՝* այսպիսիք, այսպիսիի, այսպիսինից *և այլն։* Քանի, *մի քանի դերանունները գոյականաբար գործածվելիս և հոլովվելիս վերականգնում են իրենց ունեցած դրաբարյան հոգնակի հայցականի ս-ն.* քանիսը, քանիսի, քանիսին, քանիսից *և այլն։ Մի անորոշ դերանունը և դրանով բաղադրված (մի-ն որպես երկրորդ բաղադրիչ) դերանունները հոլովվելու ժամանակ մի-ի փոխարեն գործածվում է մեկը։* Ամեն մեկը, ամեն մեկի, ամեն մեկից *և այլն,* ոչ մեկը, ոչ մեկի, ոչ մեկից *և այլն։*

Դերանունների ց հոլովումը *որևէ էական տարբերություն չունի գոյականների նույն հոլովումից։*

Ուղղ.	նրանք	*ոմանք*	*որոնք*	*համա.* Գրիգորներնք
Ս.	նրանց	*ոմանց*	*որոնց*	Գրիգորներնց
Տ.	նրանց	*ոմանց*	*որոնց*	Գրիգորներնց
Հ.	նրանց	*ոմանց*	*որոնց*	Գրիգորներնց
	նրանք	—	*որոնք*	—
Բ.	նրանցից	*ոմանցից*	*որոնցից*	Գրիգորներնցից

Գ. նրանցով սրանցով Գրիգորենցով
Ն. նրանցում — սրանցում —

Ոմանք դերանվան (ինչպես և Գրիգորենք գոյականի) հայցականը նման է սրականին, քանի որ դերանունը միայն անձ է ցույց տալիս և գործածվում է անձի տառումով:

Ինչպես տեսնում ենք, և՛ գոյականների, և՛ դերանունների ց հոլովման սեռականը, սրականը և հայցականը (երբ վերջինս գործածվում է անձի տառումով) ձևով նման են իրար: Դրանք հոդ չեն առանում: Գործածական չէ ոմանք դերանվան ներգոյական, և հարվածյուռ գործածական է գործիական հոլովը:

Դերանուններից ու հոլովումով, ինչպես տեսանք, հոլովվում է միայն մեկմեկու փոխադարձ դերանունը: — ?

Աւդի հայերենի դերանունների մի զգալի մասը չի հոլովվում: Այդ դերանուններն են. իմիս, իմիդ, այս, այդ, այն, այսպես, այդպես, այնպես, նույնպես, համայն, ամենայն, որևէ, որևիցե, երբևէ, երբևիցե, ոմն (եզակի թվում), ինչ-ինչ, ինչ-որ, որոշ, մի շարք, յուրաքանչյուր ոք, ամեն ոք, ուր:

Կարևոր ենք համարում մի փոքր համեմատություն կատարել արդի հայերենի և գրաբարի դերանունների հոլովման միջև: Այդ համեմատությունը է՛լ ավելի որոշակի կդարձնի հայերենի դերանունների հոլովման պատկերը՝ նրա զարգացման արդի էտապում:

Դերանունների հոլովումը գրաբարից սկսած մինչև այժմ ենթարկվել է զգալի փոփոխությունների, որոնք կարելի է ամփոփել հետևյալ կետերում.

1. Դերանվանական հոլովումը զգալի չափով իր տեղը զիջել է անվանական հոլովման: Այդ դրսևորվել է հետևյալ կերպ.

ա) Որոշ դերանունների դերանվանական հոլովումը ամբողջապես վերածվել է անվանականի: Դրանք են սույն (գրաբարում սորին, սովին և այլն, արդի հայերենում՝ սույնի, սույնով և այլն), նույն (գրաբարում՝ նորին, նովին, արդի հայերենում՝ նույնի, նույնով և այլն). զի՞նչ (գրաբարում՝

է՞ր, ի՞ւ, արդի հայերենում՝ ինչի՞, ինչո՞վ և այլն). ինձ (գրաբարում՝ իրիք, իւիք, արդի հայերենում՝ ինչի, ինչով և այլն): Սրանց շարքը պետք է դասել նաև սոմա, դոմա, նոմա հոգնակիները:

բ) Դերանվանական հոլովումը անվանականի է վերածվել մի շարք դերանունների որոշ հոլովներում: Անձնական ես, դու դերանունների բացառական, գործիական հոլովական ձևերը դերանվանականից վերածվել են անվանականի: Այդ հոլովներն այժմ ունեն անվանական -ից, -ով, իսկ ներգոյականում՝ -ում վերջավորությունները: Եվ առհասարակ արդի հայերենում դերանունների բացառական, գործիական, ներգոյական հոլովներից դերանվանական հոլովման հատկանիշները վերացել են, և ընդհանրացել են անվանական հոլովման վերջավորությունները:

2. Արդի հայերենի դերանվանական հոլովաձևերը գրաբարի համապատասխան հոլովների համեմատությամբ ձեռք են բերել որոշ միօրինակություն և ընդհանրություն: Այսպես, անձնական դերանունների առաջին դեմքի հայցականը գրաբարում եղել է զիս (որը ձևով տարբեր է նույն դերանվան բոլոր հոլովաձևերից), իսկ արդի հայերենում այդ հայցականը ձևով նման է սրականին՝ ինձ: Դրանով որոշ միօրինակություն է ստեղծվել ես դերանվան հոլովման մեջ, իսկ այդ նշանակում է, որ արդի հայերենում հայցականի և սրականի ձևերի նմանության (անձի առման դեպքում) օրենքը տարածվել է նաև ես դերանվան վրա:

Զգալի միօրինակություն է ստեղծվել սա, դա, նա դերանունների սեռականի, սրականի, հայցականի ձևերի մեջ:

Հմմտ.	Գրաբարում			Արդի հայերենում		
Սեռ.	սորա	դորա	նորա	սրա	դրա	նրա
Տ.	սմա	դմա	նմա	սրան	դրան	նրան
Հ.	զսա	զդա	զնա	սրան(սա)	դրան(դա)	նրան (նա)

3. Գրաբարում դերանվանական հոլովումով հոլովվող որոշ դերանուններ արդի հայերենում չեն հոլովվում: Այդ դերանուններն են՝ այս, այդ, այն, ոմն, ոք:

4. Վերացել է գրաբարյան դերանունների անվանական հոլովման խայտաբղետությունը: Սա, դա, նա դերանունները բացառականում ունեին -է, գործիականում՝ -ա-ւ. իւր, դերանունը բացառականում -է, գործիականում՝ -ե, -եա-ւ, -ք: Այդ դերանունները այժմ բացառականում ունեն -ից, գործիականում՝ -ով վիճակավորությունները: Որ, այլ, միս դերանունները գրաբարում հոլովվում էին -ո հոլովիչով. եզակի տրականում ստանալով -ում, իսկ բացառականում՝ -է հոլովակերտ մասնիկը: Քանի դերանունը գրաբարում հոլովվում էր Ո—Ա խառն հոլովումով: Այս բոլոր տարաձևությունները արդի հայերենում վերածվել են միօրինակության. այդ դերանունները արդի հայերենում հոլովվում են ի հոլովումով:

Այսպիսով՝ դերանվանական հոլովման մնացորդները արդի հայերենում հանդես են գալիս միայն որոշ դերանունների սեռական, տրական, հայցական հոլովներում, քան որում՝ ամբողջապես չեն պահպանվել այդ հոլովների գրաբարյան ձևերը. այդ հոլովաձևերի մեջ կատարվել են որոշ փոփոխություններ, առաջացել են ընդհանրություններ:

Դերանունների հոլովման մեջ կատարված փոփոխությունները սերտորեն կապված են հայերենի ողջ հոլովական սիստեմի կրած փոփոխության հետ: Դերանունների հոլովումը լուրջ կերպով կրել է անվանական հոլովման ազդեցությունը, որը հանգեցրել է դերանունների և այլ անունների հոլովման միջև զգալի ընդհանրությունների առաջացմանը: Այլ կերպ լինել չէր էլ կարող: Ակադ. Վ. Վ. Վինոգրադովը գրում է. «Լեզվի, որպես մեկ ամբողջություն հանդիսացող սիստեմի մեջ, նրա բաղկացուցիչ մասերը կամ տարրերը գոնվում են միմյանց հետ օրինաչափ հարաբերությունների և օրինաչափ կապի մեջ»[1]: Խոսքը վերաբերում է լեզվի քերականական կառուցվածքի և բառային կազմի միասնությանը, կապին:

[1] Акад. В. В. Виноградов, Основные задачи советской науки о языке.., Учпедгиз, 1952, стр. 21.

Երեք լեզվի այդ երկու բաղկացուցիչ մասերը սերտորեն կապված են իրար հետ, ապա բնական է, որ այդ բաղկացուցիչ մասերից յուրաքանչյուրի, ասենք, քերականական կառուցվածքի տարրերի մեջ կապը է՛լ ավելի սերտ պետք է լինի: Այդ կապն ու հարաբերությունները առանձնապես սերտ են միևնույն քերականական կատեգորիայի ներսում: Չնայած որ հայերենի (և շատ լեզուների) հոլովումը երկու հիմնական տեսակի է բաժանվում (անվանական և դերանվանական), վերջիններս մեկուսացած չեն իրարից և դանվում են փոխադարձ հարաբերության ու կապի մեջ, դրանք ազդում են միմյանց վրա: Ինչպես տեսանք, այդ ազդեցության շնորհիվ ընդլայնվում են անվանական հոլովման սահմանները՝ ի հաշիվ դերանվանականի: Դրանից շահում է լեզվի քերականական կառուցվածքը, մասնավորապես հոլովական սիստեմն այն իմաստով, որ վերջինս ավելի միօրինակ է դառնում, այլաձևություններն իրենց տեղը զիջում են լայն տարածում ունեցող ձևերին:

2. ՀՈԳՆԱԿԻՆԵՐԸ

Դերանունների հոգնակի թիվը թե՛ ձևային և թե՛ իմաստային տեսակետից ունի որոշ յուրահատկություններ այլ խոսքի մասերի նույն կատեգորիայի համեմատությամբ: Խոսքը չի վերաբերում, իհարկե, բոլոր դերանուններին:

Հոգնակի թվի նկատմամբ ունեցած վերաբերության տեսակետից դերանունները հիմնականում կարելի է բաժանել հետևյալ խմբերի.

1. Դերանուններ, որոնք ունեն և՛ եզակի, և՛ հոգնակի թիվ:

2. Միայն հոգնակի թիվ ունեցող դերանուններ:

3. Միայն եզակի թիվ ունեցող դերանուններ:

Նախ քննենք այն դերանունների հոգնակին, որոնք ունեն և՛ եզակի, և՛ հոգնակի թիվ: Այդ դերանուններն են. ես, դու, իճես, իճէդ, իճէր, սա, դա, նա, մյուս, այսպիսի, այդպիսի,

այնպիսի, նույնպիսի, ով, ինչ, որ, որպիսի, ինչպիսի, ոմն, այսինչ, ուրիշ և այլն: Դերանունների հոգնակերտ մասնիկներն են ք, ներ, եր: Այս բոլոր մասնիկները, ինչպես հայտնի է, նաև գոյականների հոգնակերտ մասնիկներն են հանդիսանում: Տարբերությունն այն է, որ գոյականների հոգնակին մեծ մասամբ կազմվում է -ներ, -եր մասնիկներով, իսկ —ք-ն իրրև հոգնակերտ մասնիկ լայն տարածում չունի, որը սակայն դերանունների հոգնակիների կազմման մեջ ունի մեծ կշիռ:

Անձնական դերանունների առաջին դեմքի հոգնակին (մենք) չի կազմվում նույն դեմքի եզակիից (ես), այլ ուրիշ արմատից ք հոգնակերտի միջոցով: Երկրորդ դեմքի հոգնակին (դուք) կազմվում է նույն դեմքի եզակիից (դու)՝ -ք հոգնակերտի միջոցով: Անձնական դերանունների երրորդ դեմքի հոգնակիները (իրենք, նրանք) կազմվում են համապատասխան եզակիներից նույն -ք մասնիկի միջոցով: Բայց այս վերջին դեպքում ք-ն դրվում է ոչ թե եզակի ուղղականի, այլ եզակի սրտականի վրա՝ իրեն–ք, նրան–ք: Նույն սկզբունքով են կազմվում սա, դա դերանունների հոգնակիները՝ սրան–ք, դրան–ք: Ք հոգնակերտով կազմվում են նաև ոմն, որ դերանունների հոգնակիները՝ ոմանք, որոնք:

Այս խմբի մեջ կարելի է դասել ամենը դերանունը, որը ծագումով և կազմությամբ ամեն բառի հոգնակին է: Սակայն պետք է նկատել, որ ամենը բառի ք-ն ձեռք է բերել նաև այլ իմաստ, ավելի ճիշտ՝ ամենը հոգնակին է ձեռք բերել այլ իմաստ, բացի հոգնակի իմաստից: Այդ դերանունը գործածվում է անձ ցույց տալու, իսկ նրա եզակի ձևը՝ ամենը սովորաբար գործածվում է իր ցույց տալու համար:

Ով դերանվան հոգնակին կազմվում է -ք և -եր մասնիկների միջոցով՝ ովքեր:

Մյուս բոլոր դերանունների հոգնակիները կազմվում են -ներ և -եր մասնիկներով: -Ներ մասնիկով կազմվում են հետևյալ հոգնակիները. մյուսները, այսպիսիները, այդպիսի-

ները, այճպիսիները, ճույճպիսիները, ինչպիսիները, որպիսիները, այսինչները, այնինչները, ուրիշները:

Այսպիսի, այդպիսի, այճպիսի, ճույճպիսի, ինչպիսի և նման դերանունների հոդնակին կարող է կազմվել նաև *f* մասնիկով, բայց որում այդ դեպքում հոդնակին չի հոլովվում: Այս դերանունների՝ *f*-ով կազմվող հոդնակին ավելի քիչ է գործածվում. այսպիսիք, այդպիսիք, այճպիսիք, ինչպիսիք, որպիսիք և այլն:

Եր մասնիկով կազմվում են հետևյալ հոդնակիները՝ իմ ճներս, իմ ճներդ, ինչեր:

Դրանց մեջ –եր *մասնիկը դրվում է արմատի վրա: Իմ ճ և իմ ճդ դերանունների հոդնակին կազմվելու ժամանակ վերականդնվում է դրաբարյան ն վերջնահնչյունը:*

Այժմ քննենք անձնական դերանունների հոդնակիների իմաստը: Ակադ. Վ. Վինոգրադովը հիմնվելով Ֆր. Բոպպի կարծիքի վրա, գրում է, որ մենք և դուք դերանունները ես և դու հոգևիների հոդնակին չեն հանդիսանում, այսինքն՝ չեն նշանակում շատ ես, շատ դու և ունեն այլ իմաստներ: Ակադ. Վ. Վինոգրադովը գրում է. «Մենք և դուք ցույց են տալիս մարդկանց խումբ, որոնց կազմում գտնվում են առաջին և երկրորդ դեմքերը: Այդ դեպքում այս դերանունները խոսում են ոչ թե ես-ի և ուրիշ ես-ի (կամ ուրիշ ես-երի) մասին, ոչ թե դու-ի և ուրիշ դու-երի մասին, այլ ես-ի, դու-ի մասին՝ ուրիշների հետ միասին, նրանց հետ միասնության մեջ»[1]:

Կարծում ենք, որ այս տեսակետը վերանայման կարիք է ղգում:

Նախ քննենք 1-ին դեմքի հոդնակիի իմաստը: Ստ. Զորյանի «Վիկտորյանի ուսուցչուհին» պատմվածքում երկու բանվորները՝ «Բրդատը» և Անդրանիկը իրենց ուսուցչուհուն ծաղկեփունջ են նվիրում և «Բրդատն» ասում է. «Դու օգնում ես, ընկեր Մարգո, որ մենք կրթվենք և գիտությունով կռվենք սոցիալիզմի համար» (Անթ., էջ 124): Եթե Բրդատին հարց-

[1] В. В. Виноградов, Русский язык, Москва, 1947, стр. 331.

նեին, թե ովքե՞ր են մտնում այդ մենք-ի մեջ, նա կպատասխաններ՝ ես և նա (=Անդրանիկը)։ Բայց սա նշանակո՞ւմ է, թե մենք այստեղ նշանակում է ես և նա։

Վերևում տեսանք, որ դերանվան այս կամ այն դեմքը դրծածվում է տվյալ և միայն տվյալ հարաբերության մեջ, խոսողական այս կամ այն ակտի դեպքում։ Տեսանք նաև, որ միևնույն անձը, նույնիսկ միևնույն մտմենաին ըստ տարբեր հարաբերությունների կարող է ցույց տրվել տարբեր դեմքերի անձնական դերանուններով։ Նույնպիսի կոնկրետ մոտեցում պետք է ցուցաբերել նաև հոդնակի թվի նկատմամբ։ Վերևի նախադասության մեջ հենց որ մենք-ը վերածվում է «ես և նա»-ի, կամ այսպես ասած, բացահայտվում է «ես և նա»-ով, նշանակում է մենք-ի մեջ մտնող անձինք դրանով հենց վերցվում են այլ հարաբերության մեջ, հետևապես մենք-ը «ես և նա»-ի մեջ այլևս գոյություն չունի, մենք-ը դադարում է մենք լինելուց, և նրա փոխարեն հանդես է գալիս նույն անձանց մի այլ հարաբերություն՝ ես և նա, այսինքն՝ առաջին դեմքի հոդնակիի փոխարեն մենք գործ ունենք առաջին և երրորդ դեմքերի եղակիների հետ։ Մի այլ հարաբերության մեջ վերևի նախադասության մենք դերանվան առարկայական վերաբերությունը կարող էր ներկայացվել «ես և դու»-ով։ Եթե Անդրանիկը հարցներ «Բդոտին», թե ովքեր են մտնում վերջինիս ասած մենք-ի մեջ, նա կպատասխաներ՝ «ես և դու»։ Այս ևս չի նշանակում, թե մենք-ը նշանակում է «ես և դու»։ Մենք-ի փոխարեն «ես և դու» դրծածվելիս մենք-ը վերանում է որպես առաջին դեմքի հոդնակի թիվ, և նրա փոխարեն հանդես են գալիս առաջին և երրորդ դեմքերի եղակիները։ Այսպիսով՝ մենք չի նշանակում ես և դու կամ ես և նա և այլն։ Մենք-ը առաջին դեմքի դերանուն է և որպես այդպիսին է դիտակցվում ի տարբերություն երկրորդ և երրորդ դեմքերի, հետևապես և՝ չի կարող իր մեջ ներառնել այդ դեմքերը։

Բայց իսկապես այդ հոդնակին ունի մի յուրահատկություն ի տարբերություն, օրինակ, գոյականների հոդնակի

թվի։ Այդ յուրահատկությունն այն է, որ մենք-ի տակ հասկացվող անհատներից մեկը կենտրոնական է, առանցքային՝ մյուսների համեմատությամբ։ Դա խոսող ես-ն է։ Իսկ մյուսները կամ մյուսը, որոնք չեն նույնանում ո՛չ այդ, այսպես կոչված, առանցքային ես-ի, ո՛չ էլ որոշակի կերպով դու-ի, ձա-ի և այլնի հետ, խոսող ես-ի հետ վերցվում են իբրև տվյալ հարաբերության մեջ նույն կարգի անհատներ, իբրև մի ամբողջության։ Մենք դերանվան տակ հասկացվում են նույն կոլեկտիվի, խմբի անհատներ, և խոսողը մենք դերանունով ոչ թե հակադրում է այդ անդամներին իրեն (ինչպիսի որոշակի հակադրության ունեն դերանվան տարբեր դեմքերը, որոնցից մեկը բացառում է և հակադրվում է մյուսին), այլ ընդհակառակը, նրանք բոլորը մենք-ի մեջ հանդես են գալիս իբրև դիմային տեսակետից նույն կարգի մեջ մտնող խմբի անդամներ, որոնցից, սակայն, մեկը՝ խոսողը ավելի կենտրոնական է մյուսների կամ մյուսի համեմատությամբ։

Երկրորդ դեմքի հոգնակին մեծ մասամբ բացահայտ կերպով արտահայտում է համապատասխան դեմքի եզակիի հոգնակի իմաստը և նշանակում է «շատ դու»։ Այսպես օրինակ, Ն. Զարյանը «Հացավան»-ի մի հատվածում նկարագրում է, որ կոլտնտեսության հովիվները նստած զրուցում են։ Լևոն Լամբարյանը մտածում է նրանց. «բարև ձեզ, ընկերներ,— ձիուց վայր է ցատկում կոլխոզի նախագահը։— Քեֆներդ ինչպե՞ս է» (Ն. տ., էջ 187)։ Արդյո՞ք այս ձեզ-ը նշանակում է «դու և ուրիշներ»։ Պարզ է, որ ո՛չ, այլ՝ «շատ դու»։

Հ. Պողոսյանը «Հաղթողների վերադարձը» բանաստեղծության մեջ երգում է Հայրենական պատերազմից հայ մարտիկների հաղթական վերադարձը.

Բարի գալուստ են մաղթում ձեզ սար ու ձոր, հանդ ու լեռ,
Ձեզ ողջ երկիրն է ժպտում, ձեզ, հարազատ մարտիկներ,
Ամենուրեք ցնծություն և՛ շեփորներ, և՛ նվագ,
Դուք հաղթական քայլերով հայոց երկիրը դարձաք» (Անթ., էջ 251)։

Հասկանալի է, որ բանաստեղծուհին դում դերանունով նկատի ունի Հայրենական պատերազմից վերադարձած բոլոր հայ մարտիկներին, որոնցից յուրաքանչյուրը նրա համար այդ դեպքում դու է: Ուրեմն՝ նա նկատի ունի «չատ դու» և ոչ թե «դու-ի և ուրիշների»: Երկրորդ դեմքի հոգնակիի այս գործածության մեջ նույնիսկ չկա մեկ, այսպես ասած, կենտրոնական դու:

Անձնական դերանվան հոգնակիի առաջին դեմքի յուրահատկությունն ունի երկրորդ դեմքի հոգնակին այն դեպքերում, երբ որպես խոսակիից հանդես է գալիս մարդկանց խմբից, կոլեկտիվից մեկը, որին խոսողը դուք-ով դիմելով նկատի ունի այն կոլեկտիվին, որի ներկայացուցիչն է խոսակիցը: Օր. «Ո՞վ է ձեր կոլխոզի նախագահը,— ընդհատեցի ես Բայազին» (Անթ., էջ 354): «Իսկ ինչո՞ւ ձեր տանը սադաֆե ամաններից չկան,— նկատեցի ես» (Անթ., էջ 353):

Երրորդ դեմքի հոգնակին ևս հանդիսանում է իր եզակիի հոգնակին ո՛չ միայն ձևով, այլև՛ իմաստով: Այսպես օրինակ, «Նրանք դերակատարում են իրենց արտադրական նորմանները» նախադասության մեջ նրանք, իրենց դերանուններով ցույց տրվող անձինք բոլորն էլ խոսողի համար նա կամ իրենք են, ուրեմն և նրանք, իրենք նշանակում են «չատ նա», «չատ ինքն», իրև մի ամբողջություն, մի խմբի անդամներ:

Անցնենք միայն հոգնակի թվով գործածվող դերանուններին քննարկմանը:

Անեզական կամ միայն հոգնակի թիվ (երբեմն միայն իմաստով) ունեցող դերանունների քանակը մեծ չէ: Այդպիսիք են բոլոր փոխադարձ դերանունները՝ միմյանց, իրար, մեկմեկու (մեկմեկի): Փոխադարձ դերանունների հոգնակի իմաստի պատճառն այն է, որ նրանցով ցույց են տրվում որոշ հարաբերությամբ կապված մեկից ավելի առարկաներ: Դրանից էլ բխում է փոխադարձ դերանունների թվի այն առանձնահատկությունը, որ նրանք իմաստով հոգնակի են՝ անկախ այն բանից հոգնակերտ մասնիկ ունե՞ն, թե՞ ոչ: Այսպես, փոխադարձ դերանուններից միայն մեկը (միմյանց)

ունի հոգնակի ձև, թեև նրա մեջ էլ -ց հոդնակերա մասնիկն այնքան է ձուլվել հիմքին, որ առանց նրան այդ փոխադարձ դերանունը որևէ իմաստ չի արտահայտում, ուրիմն և չի գործածվում: Իսկ մյուս փոխադարձ դերանունները, թեև հոգնակերա մասնիկ չունեն, բայց նույնպես միշտ հոգնակի իմաստ ունեն: Օր. Միմյանց տեսան: Իրարից հեռացան: Իրար օգնում են: Մեկմեկով հիանում են: Պատահական չէ, որ այս և նման նախադասությունների առարկայները հոգնակի թիվ ունեն:

Իմաստով հոգնակի է նաև բոլորը դերանունը, թեև հոգնակերա մասնիկ չունի: Նա չունի նաև եզակի ձև: Բոլորը դերանվան հոգնակի իմաստը բխում է նրա արտահայտած յուրահատուկ հանրական իմաստից, որի մասին խոսվել է վերևում: Հոգնակի են նաև մի քանիսը, մի երկուսը:

Անցնենք միայն եզակի թվով գործածվող դերաճուճների քննարկմանը:

Այդ դերանունների շարքը պետք է դասել հետևյալները.

ա) Այս, այդ, այն, սույնը, նույնը ցուցականները, որոնք չունեն հոգնակի թիվ: Դերանունների հոլովումը քննելիս տեսանք, որ սրանի, դրանի, նրանի դերանունները այս, այդ, այն եզակիների հոգնակիները չեն, և որ դրանք հոգնակի թիվ չունեն:

բ) Որոշյալ դերանուններից յուրաքանչյուրը, յուրաքանչյուր ոք, ամեն ոք, ամեն ինչ և այլն:

Այս դերանունները, թեև ունեն հանրական իմաստ, բայց առարկաների քանակական ամբողջությունը ցույց են տալիս հանձին բոլոր առարկաների մեջ մտնող առարկաներից յուրաքանչյուրի (բացի վերջինից), այդ պատճառով էլ դրանք ունեն եզակի իմաստ: Իսկ վերջին դերանունը միայն մեկ առարկայի, կամ առարկաների հավաքական ամբողջություն է ցույց տալիս:

գ) Ժխտական ձևի դերանունները. ոչ ոք, ոչինչ, ոչ մեկը: Միևնույն բացատրությունը վերաբերում է նաև այս դերանուններին:

դ) Անորոշներից՝ ինչ–որ, մեկը և այլն։

Հետաքրքրական է քանակ ցույց տվող հետևյալ դերանունների թվի իմաստը. այսման, այդման, այնման, նույնման, որման, այսչափ և նմանները։ Սրանք հոդնակի մասնիկ չեն ընդունում, իսկ եզակի ձևով կարող են գործածվել թե՛ եզակի և թե՛ հոդնակի իմաստով։ Հոդնակի իմաստ են ունենում այն դեպքում, երբ գործածվում են առարկաների քանակական, թվական կողմը ցույց տալու համար, իսկ երբ խոսողի նպատակն է, ոչ թե շեշտել նրանց քանակական կողմը, այլ ընդհանուր չափը, այդ դեպքում գիտակցվում են իբրև եզակի։ Օրինակ՝ այսման պարզհատրված են։ Բայց՝ այսման (ջուրը) կնեռիի ջրելու համար և այլն։ Այս դերանունների շարքը կարելի է դասել նաև ողջը դերանունը, որը սակայն գոյականաբար շատ քիչ է գործածվում։

Ինչպես տեսնում ենք, արդի հայերենի դերանունների հոդնակին թե՛ իմաստով և թե՛ ձևով ունի և՛ ընդհանրություններ գոյականների հոդնակի թվի հետ, և՛ տարբերություններ նրանից։ Դերանունների թվի քերականական կատեգորիան ևս մեկ ընդհանուր բնույթ չունի, այլ աչքի է ընկնում անմիօրինակությամբ ու գոյականներին ոչ յուրահատուկ թե՛ իմաստային և թե՛ ձևային առանձնահատկություններով։

Արդի հայերենի դերանունների հոդնակի թվի համառոտ բնութագիրը կարելի է ձևակերպել այսպես.

1. Նկատի ունենալով դերանունների և հատկապես հոդնակի թիվ ունեցող դերանունների փոքր քանակը, պետք է ասել, որ -Ք-ն իրբև հոդնակերտ մասնիկ ավելի մեծ կշիռ ունի դերանուններին, քան գոյականների մեջ։ Այդ յուրահատկությունը գալիս է մեր լեզվի պատմական անցյալից և պահպանվել է հատկապես, այսպես կոչված, հին, արմատական դերանունների մեջ։ Սա, ի միջի այլոց, մասնիկների դիմացկունության լավագույն փաստ է։

2. Դերանունների մի մասի հոդնակին կազմվում է ոչ թե եզակի ձևից, կամ ոչ թե եզակի ուղղականից, այլ բոլորո-

վին ուրիշ արմատից կամ էլ եղակիի թեքված, փոփոխված ձևից. (ես-մենք, սա-սրանք, դու-դրանք, ոմն-ոմանք, որ-որոնք և այլն)։

3. Դերանունների փոքր քանակի համեմատ մեծ է ինչպես հոգնակի չունեցող, այնպես էլ եղակի չունեցող դերանունների քանակը։ Դրանց մեծ մասը որոշյալ (հանրական) և փոխադարձ դերանուններ են։ Դա հիմնականում բացատրվում է այդ դերանուններին հատուկ հարաբերության իմաստով, իսկ եղակի թիվ ունեցող հանրական դերանունների համար՝ հանրական հարաբերության յուրահատուկ դրսևորումով։ Ուրեմն՝ դերանվան խոսքի մասային հատկանիշը իր կնիքն է դրել որոշ դերանունների թվի կատեգորիայի վրա և պայմանավորել մի շարք յուրահատկություններ։ Դրանցից մեկն էլ անձնական դերանունների առաջին ու երկրորդ դեմքերի հոգնակի թվի իմաստային առանձնահատկությունն է, որ պայմանավորված է դիմային հարաբերությամբ։

4. Որոշ դերանուններ հետագայում ըրկվել են հոգնակի թվից. այս, այդ, այն, սույն և այլն (գրաբարում՝ այսք կամ այսոքիկ, այդք կամ այդոքիկ, այնք կամ այնոքիկ, սոյնք և այլն, իսկ արդի հայերենում չունեն)։

ԳԼՈՒԽ ՀԻՆԳԵՐՈՐԴ

ԱՐԴԻ ՀԱՅԵՐԵՆԻ ԴԵՐԱՆՈՒՆՆԵՐԻ ՇԱՐԱՀՅՈՒՍԱԿԱՆ ԿԻՐԱՌՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

Դերանունների շարահյուսական կիրառությունները ճիշտ հասկանալու համար անհրաժեշտ է պարզել, թե ինչով են պայմանավորված բառերի շարահյուսական կիրառությունները, և ինչից են բխում դրանց տարբերությունները: Այդ տեսակետից համեմատենք ովքեր *և* հազիվ *բառերը: Այս բառերը շարահյուսական նույն առանձնահատկությունները չունեն և չեն կարող ունենալ: Ովքեր բառը նախադասության մեջ կարող է հանդես գալ որպես ենթակա (ովքե՞ր եկան) և ստորոգելիական վերադիր (սրանք* ովքե՞ր են), *իսկ հազիվ բառը՝ որպես ձևի պարագա (նա հազիվ տեղ հասավ): Այդ տարբերությունը բխում է նրանց լեքսիկական իմաստից. ովքեր բառը առարկայական վերաբերություն ունի՝ անձ է ցույց տալիս, իսկ հազիվ բառը գործողության հատկանիշ՝ ձև: Ուրեմն բառի լեքսիկական իմաստը կարևոր նշանակություն ունի նրա շարահյուսական կիրառությունների համար:*

Սակայն ով-ը, որ նույն ովքեր բառի եզակին է, վերջինիս համեմատությամբ շարահյուսական ավելի լայն կիրառություններ ունի: Նա նախադասության մեջ կարող է հանդես գալ որպես ենթակա (ո՞վ ասաց), ստորոգելիական վերադիր (դա ո՞վ է), անուղղակի խնդիրներ (ո՞ւմ ես նայում և այլն): Ով բառի՝ իր հոգնակի ձևի (ովքեր) համեմատությամբ շարահյուսական լայն կիրառությունների պատճառն այն է, որ ով-ը հոլովվում է, իսկ սրա հոգնակին չի հոլով-

վում: Նշանակում է, որ բառի շարահյուսական կիրառությունների համար վճռական նշանակություն ունեն նաև նրա ձևաբանական առանձնահատկությունները:

Այսպիսով՝ բառի շարահյուսական կիրառությունների հարցում վճռական դեր են կատարում նրա թե՛ լեքսիկական իմաստը և թե՛ ձևաբանական առանձնահատկությունները:

Ի՞նչ սխեմով կամ հաջորդականությամբ քննել դերանունների շարահյուսական կիրառությունները: Նկատի ունենալով վերհիշյալը, կարծում ենք, որ նպատակահարմար չէ դերանունների շարահյուսական կիրառությունները քննել ըստ նրանց տեսակների: Մենք տեսանք, որ տարբեր տեսակի պատկանող շատ դերանուններ ունեն նույն կամ նման ձևաբանական առանձնահատկություններ, ինչպես և՝ նույն կամ նման առարկայական կամ հատկանիշի վերաբերություն: Հասկանալի է, որ այդ համապատասխան դերանունների շարահյուսական կիրառությունները նույնը կամ հիմնականում նույնը պետք է լինեն:

Այսպես, անձնական ես դերանունը, անորոշ ոմանք դերանունը, հարցական-հարաբերական ով դերանունը հիմնականում նույն շարահյուսական արժեքն ունեն: Կամ՝ ցուցական այսպես դերանունը, հարցական-հարաբերական ինչպես դերանունը հիմնականում նույն կիրառությունները (պաշտոնները) ունեն և այլն: Կրկնություններից խուսափելու և որոշ օրինաչափություններ տեսնելու համար նպատակահարմար ենք գտնում դերանունների շարահյուսական կիրառությունները քննելիս հիմք ընդունել դերանունների՝ այլ խոսքի մասերի հետ ունեցած հարաբերակցության հիման վրա ընդունված խմբավորումները: Դրանք են՝

1. Առարկա ցույց տվող դերանունների շարահյուսական կիրառությունները.

2. Առարկայի հատկանիշ ցույց տվող դերանունների շարահյուսական կիրառությունները.

3. Գործողության հատկանիշ ցույց տվող դերանունների շարահյուսական կիրառությունները:

Հարցի այս սխեմայով քննարկումը հնարավորություն կտա տեսնելու դերանունների շարահյուսական կիրառությունների և նրանց հարաբերակից խոսքի մասերի շարահյուսական կիրառությունների ընդհանրությունները ու տարբերությունները։

1. ԱՌԱՐԿԱ ՅՈՒՅՑ ՏՎՈՂ ԴԵՐԱՆՈՒՆՆԵՐԻ ՇԱՐԱՀՅՈՒՍԱԿԱՆ ԿԻՐԱՌՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

Այս դերանունների մեծ մասը հոլովվում է, իսկ մի քանիսը՝ ոչ։ Հոլովվողներն են[1] *ես, դու, իմը, սա, դա, ձա, միմյանց, մեկ–մեկու (մեկմեկի), իրար, ով, ինչ, ամեն ինչ, ամենը, ոչինչ և այլն։*

Հասկանալի է, որ այս դերանունները, քանի որ ունեն առարկայական վերաբերություն և հոլովվում են, պետք է ունենան հիմնականում դոյականների շարահյուսական կիրառությունները։ Հիմնականում ենք ասում, որովհետև դերանունները, ինչպես տեսանք, չեն նույնանում հարաբերակից խոսքի մասերի հետ, հետևապես և նրանց իմաստային և ձևաբանական տարբերությունը պետք է պայմանավորի համապատասխան տարբերություն նրանց շարահյուսական արժեքի մեջ։ Նախ քննենք այն ընդհանուրը, որ հատուկ է և՛ այդ դերանունների, և՛ դոյականների շարահյուսական կիրառություններին։

Այս դերանունները նախադասության մեջ կարող են գործածվել որպես՝

ա) ենթակա. «Մենք պիտի տանք խաղաղության ավետիս» (Անթ., էջ 493)։ «Նրանք ամառը երկուսն էլ քնում էին պատշգամբում» (ՆՋՀ, էջ 35)։ «Դա ի՞նչ դործ է» (ՆՋՀ, էջ 53)։ «Ամենքն էլ իմ որդիքն են» (Դվ, էջ 327)։ «Այլևս

[1] *Հոլովվում է նաև հատկանիշ ցույց տվող դերանունների մի մասը։ Այդպիսի դերանուններ են՝ բանի, մի բանի, մի, ամեն մի, ոչ մի և այլն, որոնց դոյականաբար գործածվող ձևերը (քանիսը, մի քանիսը, մեկը, ամեն մեկը, ոչ մեկը) չենք դասում այս դերանունների շարքը։*

ոչ ոք նոր տուն չէր շինում, ոչ ոք հատակները... ներկել չէր տալիս» (Ն.-Դ., I, էջ 127)։ «Ես երկու ընկերուհի ունեի, որոնք մի փոքր մեծ էին ինձանից» (ԴԲՊ, էջ 209)։ «Ամենքը կամենում էին ապրել» (Իս., էջ 335)։ «Դուք գնացեք, հիմա մենք կգանք» (ՀՔ, ՄՏՋ, էջ 109)։ «Բայց ո՞վ կարող է երաշխավորել» (ՍՋ, III, էջ 75)։ «Ամեն ոք ուզում էր ինքը մասնակցել այդ հարձակումին» (Ն.-Դ., IV, էջ 129)։

բ) Հատկացուցիչ. «Մեր դաշտերը ամայացած, դառան պուրակ ու պարտեզ» (Անթ., էջ 52)։ «Նրա պատմությունը մեծ չէ, բայց արժանի է ուշադրության» (Մուր., II, էջ 8)։ «Ովքե՞ր էին այս երիտասարդ մարդիկ, որոնց կյանքն ընդհատվեց թշնամու ռումբի բեկորներով» (ՀՔ, ՄՏՋ, էջ 240)։ «Սրանք վերջը իրար պլուխ են կոտրելու» (ՍՋ, III, էջ 92)։

գ) Ուղիղ խնդիր. «Հայրենիքն է ինձ կանչում» (Անթ., էջ 552)։ «Չլինի՞ մի բանով վիրավորեցի նրան» (ՍՋ, III, էջ 106)։ «Ուզում էի մոռանալ ամենքին, ամեն ինչ» (Դվ, էջ 333)։ «Իսկ նա, իհարկե, սիրում է ձեզ» (Շիրվ., VI, էջ 346)։ «Իսկ այդ օրիորդին, որին խելագար անվանեցիք, չե՞ք կարեկցում» (Ն. ա., էջ 348)։

դ) Անուղղակի խնդիրներ. «Փրկությունն ինձանից և միայն ինձանից է կախված» (Անթ., էջ 282)։ «Դրանով մենք նպաստում ենք, որ բրիգադները քայքայվեն, փոխանակ ամրանալու» (ՆՋՀ, էջ 50)։ «Մինչև գյուղի մեծ զարիթաթը նա ոչ ոքի չհանդիպեց» (ՀՀ, Բվ, էջ 120)։ «Ինձ ոո մասին պատմել են» (ՀՔ, ՄՏՋ, էջ 466)։ «Գիշերը պիտի գնար, իսկ տատը չէր քնում ու հետևում էր՝ իրեն» (Ն. ա., էջ 463)։ «Ես հավատում եմ ձեզ» (Ն. ա., էջ 106)։ «Դրանց մասին կնոջը չի պետք ոչինչ» (ՍՋ, III, էջ 75)։ «Թվում էր, վախենում է, թե ահա պիտի հարցնեն իրեն՝ ինչո՞վ է ապրում ինքը» (Ն. ա., էջ 115)։

ե) Սաորոգելիական վերադիր. «Անհամոքը դու ես» (ՍՋ, III, էջ 116)։ «Ախ, մեղավորը ես եմ, որ քեզ բռնեցին» (Ն. ա., էջ 119)։ «Մեր տունը սա է» (Ն. ա., էջ 100)։ «Ես ուզում եմ իմանալ նրանց մեղքն ի՞նչ է» (ՍՋ, III, էջ 72)։ «Ո՞վ եք

դուք» (ՀՔ, ՄՏՋ, էջ 482)։ «Իսկ դուք ովքե՞ր եք» (Ն. տ., էջ 142)։ «Իսկ ես... ես ի՞նչ եմ... մի օտար պատահական ճամփորդ» (ՆՋ, Հատ., էջ 293)։

դ) Տեղի պարագա. *Տեղի պարագայի պաշտոնով հանդես է գալիս քննարկվող դերանունների հատկապես ներգոյական հոլովը։ Օր. ևրաենում չտեսնված սեր կա դեպի ուսումը։ «Բայց սովորություն է մեզանում պարսավել բոլորը, ինչ որ մայրենի է։ Դա եվրոպականություն է համարվում։ Սնորիզմ» (Շիրվ., VI, էջ 338)։ Սակայն այդ դերանունների մի մասի ներգոյականի ձևը դործածական չէ, որի փոխարեն դործածվում է սեռական հոլովը մեջ կապի հետ։ «Միտյան... սպիտակ սավանը վերցրից իր հետ, որ փաթաթվի ևրա մեջ» (ՀՔ, ՄՏՋ, էջ 463)։ Ոչ ոքի մեջ նա չդտավ իր որոնածը։ Նա կարողանում էր իր մեջ տեսնել և՛ լավը, և՛ վատը։ Նրանք միմյանց մեջ պատվաստել էին պրակտիկ շատ դծեր։*

Այդ դերանունները հաճախ տեղի պարագայի պաշտոն են կատարում, երբ դրանց վրա դրվում են տեղ ցույց տվող մի շարք կապեր և դոյականներ։ Օր. «Թող ինձ մոտ մնա այդ նամակը» (ՀՔ, ՄՏՋ, էջ 479)։ «Մինչև լուսաբաց Մաքսիմը մնաց ինձ մոտ» (Ն. տ., էջ 476)։ «Հրամայից անմիջապես դնալ իր մոտ» (Ն. տ., էջ 483)։ «Գնում էի ևրա ետևից, մինչև հասանք քաղաքի հեռավոր մի թաղ և կիսադետնափոր մի տնակի դուռը բացվեց մեր առաջ» (Ն. տ., էջ 376)։ «Նրանց առջև՝ սեղանի վրա կային դինու շշեր ու բաժակներ» (ՍՋ, III, էջ 193).

է) Միասնության պարագա. *«Միտյան... սպիտակ սավանը վերցրից իր հետ» (ՀՔ, ՄՏՋ, էջ 463). «Նրանց հետ է, լսում է նրանց խոսակցությունը» (Ն. տ., էջ 140)։ «Կարո՞ղ է ինքը առաջվա պես դնալ կնոջ մոտ և խոսել ևրա հետ... Հնարավո՞ր բան է սպանել մեկի եղբայրներին և ապրել ևրա հետ» (ՍՋ, III, էջ 76)։*

Դոյականով արտահայտված միասնության պարագան կարող է դրվել նաև գործիական հոլովով։ Օր. Նա ընտանիքի հետ գնաց ամառանոց, կամ՝ նա ընտանիքով գնաց ամա-

ռանոց։ Բայց եթե խոսքի մեջ ընտանիքի հետ կապակցությյան, իրրև պարագայի, փոխարեն կարելի է գործածել նրա հետ (կամ նրանց հետ, այսինքն՝ ընտանիքի անդամների հետ), ապա ընտանիքով ձևի փոխարեն չի կարելի գործածել նրանով (կամ նրանցով)։ Ուրեմն դերանուններով արտահայտված միասնության պարագան սովորաբար հանդես է գալիս կապի հետ։ Միայն ամեն ինչ դերանունն է, որ իրրև միասնության պարագա կարող է գործածվել գործիական հոլովով։ Օր. Նա իր ամեն ինչով տեղափոխվեց։

բ) Նպատակի պարագա. Գոյականներով (և գոյականաբար գործածվող այլ բառերով) արտահայտված նպատակի պարագան դրվում է կամ սրտական հոլովով, կամ սեռական հոլովով ու կապով։

Այսպես՝ նա դնաց ջրի, գրի, լվացվելու։ Ընկերոջ համար (կամ՝ հանուն ընկերոջ) նա ամեն բան կանի։

Դերանունը նպատակի պարագայի պաշտոն կատարում է սովորաբար համար, հանուն կապերի հետ միասին։ Նրանց սրտական հոլովը, առանձին վերցրած, նպատակի պարագայի պաշտոն սովորաբար չի կատարում։ Այդ կապերի խնդիրը դրվում է կա՛մ սեռական, կա՛մ էլ սրտական հոլովով։

Առաջին և երկրորդ դեմքի անձնական դերանուններով արտահայտված կապի խնդիրը դրվում է սրտական հոլովով (ինձ համար, ձեզ համար, մեզ համար, հանուն ձեզ և այլն), իսկ մյուս դերանունները որպես այդ կապերի խնդիր դրվում են սեռական հոլովով։

Օր. «Մենք նվիրված ենք մեր ժողովրդի և այս սուրբ տաճարի սպասավորության և դրա համար ուժս ունինք դրած» (Մուր., III, էջ 13)։ «Էլուշը առանց սպասելու ամուսնու նամակին, իր սեփական նախաձեռնությամբ տեղափոխվեց դյուղ։ Դրա համար նա ուներ լուրջ պրպտապատճառներ» (ՆՋՀ, էջ 86)։ «Նրա համար այն էլ բավական էր» (ՀՔ, ՄՏՋ, էջ 140)։

Հաճախ սա, դա, նա դերանունները համար կապի հետ կատարում են պատճառի պարագայի պաշտոն։ Այս դեպքում

«սրա համար», «դրա համար», «նրա համար» նշանակում են «այս, այդ, այն պատճառով»: Սա, դա, նա դերանունները համար կապի հետ պատճառի, թե նպատակի պարագա լինելը իմացվում է խոսքից, երբեմն նախորդ նախադասությունից: Օր. «Օրը մինչև իրիկուն կնկա կողքը կտրած՝ նրա հետ դուրս գալիս՝ դուրս էր գնում, տուն գալիս՝ տուն գալիս: Դրա համար էլ անունը դնում են Վախկոտ Նազար» (ՀԲ, III, էջ 189): «Ինքը մի բարի մարդ է լինում, բայց ինչ գործ որ բանում է՝ ձախ է գնում: Դրա համար էլ անունը դնում են Ձախորդ Փանոս» (Ն. ա., էջ 201): Իրական փաստերին հակասող հոդվածի պատճառով քեռի Ղուկասը («Հացագործ») զայրանում է: Լևոն Համբարյանը նրան հանգստացնում է. «Քեռի Ղուկաս... չարժե դրա համար արյուն պղտորել» (ՆՀՁ, էջ 101): «Միայն Մացակ ասելն է սանձը քաշում: Դրա համար էլ նա Մացակ ասորը չի սիրում» (ՆՁՀ, էջ 57): Այս օրինակներում ընդգծված դերանունները կապի հետ միասին կատարում են պատճառի պարագայի դեր:

Նման դեպքերում երբեմն դժվար է լինում տարբերել պատճառի և նպատակի պարագան: Օր. «Մացակ Ավագյանը... մենակ չի կարող դեկավարել հսկայական ֆերման... Նրան հարկավոր է տեղակալ: Դրա համար բյուրոն առաջարկում է ընկեր Ղուկաս Տոնոյանին ուղարկել անասնապահական ֆերմա՝ իբրև Ավագյանի տեղակալ» (ՆՁՀ, էջ 52): Այս օրինակում «դրա համար» կապակցությունը կարելի է հասկանալ և՛ «այդ պատճառով», և՛ «այդ նպատակով» իմաստով, ուստի՝ կարելի է համարել և՛ պատճառի, և՛ նպատակի պարագա:

Պետք է նկատել, որ գոյականները և այլ բառեր համար կապի հետ գործածվելիս սովորաբար կատարում են նպատակի պարագայի պաշտոն, իսկ այդ նույն կապի հետ պատճառի պարագայի պաշտոն կատարելու համար ավելի հաճախ գործածվում են սա, դա, նա դերանունները:

Մենք համառոտակի քննեցինք առարկա ցույց տվող ո-

հոլովվող դերանունների այն կիրառությունները, որոնք ընդհանուր են դրանց և դոյականների համար:

Իհարկե, չանդրադարձանք այդ կարգի բոլոր կիրառություններին: Դա մեր նպատակից դուրս էր: Այդպիսի ֆունկցիաների մեծ մասի քննարկումով մեր նպատակն էր ցույց տալ, որ իրոք առարկայի իմաստ ունեցող ու հոլովվող դերանունների և դոյականների (որոնք ևս առարկա են ցույց տալիս ու հոլովվում) միջև կան կիրառությունների զգալի ընդհանրություններ:

Առիթների բերումով նշեցինք նաև այդ դերանունների շարահյուսական կիրառությունների որոշ յուրահատկություններ: Այժմ հանգամանորեն քննենք այդ հարցը:

Քննարկվող դերանունների շարահյուսական առանձնահատկությունները, ամենից առաջ, դրսևորվում են հանձին այն բանի, որ նրանք ունեն շարահյուսական ֆունկցիաների որոշ սահմանափակություն հարաբերականից խոսքի մասերի, մյուսներ դեպքում՝ դոյականների համեմատությամբ: Այդ հարցում կարևոր դեր են կատարում դերանունների իմաստի երկու կողմերը՝ և՛ չտարբերակված կամ ընդհանուր լինելը, և՛ հարաբերության իմաստը:

Այսպես, առարկա ցույց տվող դերանունները և առհասարակ դերանունները որպես կոչական չեն գործածվում: Կոչականով անվանվում է այն առարկան, որին դիմում է խոսողը: Իսկ դերանունների մեծ մասը յուրահատուկ հարաբերության իմաստի պատճառով խոսակցին ցույց տալ չի կարող, ինչպես՝ ես, ինքը, սա, դա, նա, ոչ ոք, ամեն ինչ, և այլն, և այլն:

Բայց կան այնպիսի դերանուններ, որոնցով կարելի է ցույց տալ խոսակցին: Այդպիսիք են՝ դու, ինքդ և մի քանի այլ դերանուններ Դ դիմորոշ հոդով՝ բոլորդ, ամենքդ, ամեն մեկդ, յուրաքանչյուրդ և այլն: Այս վերջինները ևս չեն գործածվում որպես կոչական: Հիշենք, որ կոչականով անվանում ենք խոսակցին, դիմում ենք նրան, կոչականը քերականական հարաբերության մեջ չի մտնում այլ բառերի հետ:

Սակայն հնարավոր չէ դերանունները դործածել այնպես, որ նրանցով դիմենք խոսակցին, և միաժամանակ հարաբերության մեջ չմտնեն (դերանունները) այլ բառերի հետ։ Քանի որ դերանունները չունեն բառի՝ կոչականի դեր կատարելու այդ անհրաժեշտ պայմանները, ուստի՝ նրանք չեն դործածվում իբրև կոչական։

Ի տարբերություն դոյականների, այդ դերանունները որոշիչի պաշտոն ևս չեն կատարում։ Ի՞նչն է պատճառը։ Որոշիչը դրվում է որևէ բառի վրա և ցույց է տալիս առարկայի որևէ հատկանիշ։ Դոյականը որպես որոշիչ դործածվելիս նկատի է առնվում կամ վերցվում է այդ դոյականի իմաստի այս կամ այն կողմը իբրև հատկանիշ, այսինքն՝ դոյականի ցույց տված առարկայի այս կամ այն հատկանիշը։ Այսպես, far սիրտ բառակապակցության մեջ far բառը ցույց է տալիս սրտի մի հատկանիշ (անղգայության, անտարբերության), որ կա քար առարկայի մեջ։ Քանի որ անկախ դործածվող կամ առարկայական վերաբերություն ունեցող դերանունները որևէ առարկա չեն ցույց տալիս, ունեն ընդհանուր, չտարբերակված իմաստ, ուստի հնարավոր չէ նրանց մեջ նկատի ունենալ որևէ առարկայի որևէ հատկանիշ։ Այդ պատճառով էլ անկախ դործածվող (առարկա ցույց տվող) դերանունները որոշիչի պաշտոն չեն կատարում։ Ուրեմն՝ այդ դերանունների՝ որոշիչի պաշտոն չկատարելը պայմանավորված է դերանվան յուրահատուկ՝ ընդհանուր, չտարբերակված իմաստով։

Այս տեսակետից բացառություն է հանդիսանում ինչ դերանունը, որը թեև հիմնականում առարկայական վերաբերության իմաստ ունի, բայց դործածվում է նաև «որ», «ինչպիսի», «ինչպես», «որքան», «ինչու» և նման իմաստներով, հետևապես նախադասության մեջ կարող է կատարել այդ դերանուններին հատուկ շարահյուսական պաշտոնները, այն է՝ հանդես դալ որպես որոշիչ, ձևի պարագա, չափի պարագա, նպատակի պարագա։

Օրինակներ՝

«Ով գիտե՞ք իգեալն ինչ բանում գտավ» (ՆՋ, Հատ., էջ 303):

«Սա ի՞նչ խայտառակություն է» (Դվ, էջ 10): «Հապա էլ ի՞նչ բանի է պետք նրա ստացած կրթությունը» (Ն.-Դ., IV, էջ 116): «Բա դու ի՞նչ նախագահ ես» (ՆՋՀ, էջ 16):

«Էս ո՞ւր ես եկել, աննամուս աղջիկ,

Ի՞նչ կարկուտ բերիր ծեր գլխիս վրա» (ՆՋ, Հատ., էջ 229):

«Ի՞նչ իրավունքով տուն մտար դու» (ն. տ., էջ 230):

Այս օրինակներում ինչ դերանունն ունի «ինչպիսի», «որ» իմաստ և կատարում է որոշիչի պաշտոն:

Հետևյալ նախադասություններում ինչ դերանունը հանդես է գալիս որպես պարագա՝ այլ իմաստներով գործածվելու շնորհիվ:

«Աստղիկ, ի՞նչ մեծացել ես» (Դվ, էջ 323): «Ի՞նչ դանդաղ է գնում» (ՀՔ, ՄՏՋ, էջ 318): «Այս ի՞նչ լավ առավոտ է» (Ն.-Դ., IV, էջ 128): «Ի՞նչ դաժան էր եղել բնությունը Հարության վերաբերյալ» (ՀՍ, Հվ, էջ 153): «Այ տղա, ի՞նչ ես վազում» (Ար., էջ 153): «Որպին ջղայնացած դռնայց նրա վրա, թե ինչ է ամբողջ բակը գլխին հավաքել» (Ն.-Դ., IV, էջ 101): «Չեն հանևք է, ի՞նչ եք կանգնել» (ՆՋ, Հատ., էջ 205): «Ի՞նչ են եկել ամեն կողմից գլուխներիս լիազոր» (ն. տ., էջ 307):

Քննարկվող դերանունների մյուս շարահյուսական առանձնահատկությունն այն է, որ նրանք որոշիչ չեն ընդունում, այսինքն՝ որպես որոշյալ հանդես չեն գալիս: Այսպես, չի կարելի ասել լավ ձա, խելոք դու, բարձր ինչ, մեծ սա և այլն: Բայց ասում ենք՝ լավ գիրք, խելոք երիտասարդ, բարձր շենք, մեծ հրապարակ և այլն: Այդ դերանունների՝ որոշիչ չընդունելու պատճառը դարձյալ նրանց յուրահատուկ, ընդհանուր, չտարբերակված իմաստն է: Քանի որ այդ դերանունները ունեն չտարբերակված իմաստ, նրանցով կարելի է ցույց տալ ամեն մի առարկա, ուրեմն և դրանք կոնկրետ որևէ հատկանիշով բնորոշվել չեն կարող:

Սակայն երբեմն նրանք *դերանվան հետ գործածվում է* բոլոր *դերանունն իբրև որոշիչ։*

Օրինակ՝ «Բոլոր նրանք, *որոնք պատրաստ են մաքառել անվընհատ,*
Բոլոր նրանք, *որոնք ունեն հաղթելու կամք ու կորով,*
Որոնց իղձերը վեհ, ազնիվ են, խնդիրները խըրթին,
Որոնք ծարավ են լենինյան անդավաճան խորհրդին,
Բոլոր նրանք *դեպի այնտեղ են գնում»։*
(ՆԶ, Հատ., էջ 274)։

Ինչո՞ւ նրանք *բառի հետ կարող է գործածվել* բոլոր *բառն իբրև որոշիչ և ո՞ր դեպքում։ Պարզ նախադասություններում սովորաբար գործածվում է ոչ թե* բոլոր նրանք, *այլ՝* նրանք բոլորը։ *Օր.* Նրանք բոլորը *ժամանակին կատարեցին պետական պլանները։* Նրանց բոլորին *ես տեսա երեկ։ Բայց ոչ՝* բոլոր նրանք *ժամանակին կատարեցին պետական պլանները։* Բոլոր նրանց *ես տեսա երեկ։*

Իսկ բարդ ստորադասական նախադասության մեջ, երբ նրանք *դերանունը, ինչպես և նրա հոլովաձևերը հանդես են գալիս իբրև հարաբերյալ, և ստորադասական նախադասությունն սկսվում է* որոնք, *ովքեր հարաբերականներով, բոլոր բառը սովորաբար գործածվում է ոչ թե* նրանք *բառից հետո, այլ նրանից առաջ, իբրև որոշիչ։ Օր.* բոլոր նրանք, *ովքեր ունեին պատասխանատվության զգացում, ժամանակին կատարեցին պետական պլանները։* Բոլոր նրանց, *ովքեր երեկ Թիֆլիսից եկան Երևան, ես տեսա։ Հենց այս տիպի օրինակներ են վերևի օրինակներից առաջին երկուսը։ Իսկ վերջին նախադասության մեջ (*բոլոր նրանք *դեպի այնտեղ են գնում), որը ազատ կերպով կարելի է վերցնել առանձին և դիտել իբրև պարզ նախադասություն, դարձյալ նույն շարադասությունն է, գործածված պոետիկական նկատառումներով։ Նույն բառերի նույն շարադասության երկու անգամ կրկնվելը մասամբ մեղմացնում է այդ բառերի վերջին գոր-*

ծածուցյան արտասովոր լինելը, որը կարելի է զգալ հենց այդ նախադասության անկախ գործածության ժամանակ։

Իսկ ինչո՞ւ նշված պայմաններում նրանք դերանունը կարող է ընդունել բոլոր բառը իբրև որոշիչ։ Այն հանգամանքը, որ նրանք դերանունն այդ որոշիչը ընդունում է ոչ թե միշտ, այլ միայն նշված պայմաններում, նշանակում է պատճառը հենց այդ նույն պայմանների մեջ պետք է որոնել։ Բարդ ստորադասական նախադասության մեջ նրանք-ը բոլոր դերանունն իբրև որոշիչ է ընդունում ոչ թե նրանք դերանվան՝ որոշիչ ընդունելու, որոշյալ դառնալու ներքին կարողությամբ. այդ իրողությունը հետևանք է այն բանի, որ նրանք հարաբերյալը պետք է դրվի իր հարաբերականին մոտ, որի հետևանքով բնականաբար բոլոր բառը ընկնում է նրանից առաջ ու գիտակցվում իբրև որոշիչ։ Ուրեմն՝ նրանք դերանվան՝ որոշիչ ընդունելը այս դեպքում անուղղակի հետևանք է մեկ ուրիշ երևույթի և ոչ թե պայմանավորված է նրանք դերանվան՝ որոշիչ ընդունելու կարողությամբ, որից նա զուրկ է։

Դերանունները շատ քիչ դեպքերում են նախադասության մեջ հանդես գալիս որպես բացահայտիչ։ Այդ պաշտոնը նրանք հաղվադեպ դեպքերում են կատարում դարձյալ իրենց յուրահատուկ իմաստի պատճառով։ «Բացահայտիչն ավելի ճշտած, մանրամասնած կրկնությունն է բացահայտյալի»[1], իսկ դերանունները, քանի որ չտարբերակված իմաստ ունեն, սովորաբար չեն կարող ճշտել և մանրամասնել բառերի իմաստը։ Սակայն, ինչպես ասացինք, չի բացառվում դերանունների գործածությունն այդ պաշտոնով։ Բանն այն է, որ որոշ դերանուններ իրենց չտարբերակված իմաստով հանդերձ, առարկան ցույց են տալիս որոշակի հարաբերությամբ։ Հենց այս որոշակի հարաբերության իմաստը թույլ է տալիս, որ նրանք երբեմն գործածվեն որպես բացահայտիչ։ Օրինակ՝ «Ձեր դասարանից երկուսը՝ դու և նա, ներկա-

1 Պրոֆ. Գ. Սեվակ, Հայոց լեզվի շարահյուսություն, 1951 թ., էջ 29։

յացվել եք պարզաւորման։ Իմ դրքերից մի քանիսը՝ սա և դրաճճ, նվեր եմ ստացել։

Քննարկվող դերանունների և առհասարակ դերանունների ճնշող մեծամասնությունը չի գործածվում որպես հատկացյալ։ Այսպես, չենք ասում՝ Աւրամի ճա–ն, Ֆո ամեճ ոճ–ը, իմ ոմաճճ–ը, Աշոտի սա–ն և այլն։ Որպես հատկացյալ կարող են գործածվել հատկապես ինչ և ամեճ ինչ դերանունները։ Օրինակ՝ Մեր ամեճ ինչը կանոնավոր է լինում։ Նրա ի՞նչն ես դու հատկապես հավանում։ Այդ կանգնածը Արամի ի՞նչն է։

Մի քանի խոսք փոխադարձ դերանունների շարահյուսական առանձնահատկությունների մասին։ Ի տարբերություն մյուս դերանունների, փոխադարձ դերանունները ենթակայի պաշտոն չեն կատարում, քանի որ նրանք ուղղական հոլով չունեն։ Սակայն չնայած որ փոխադարձ դերանունները չունեն նաև ներգոյական հոլով (ավելի ճիշտ՝ նրանց այդ ձևը գործածական չէ), բայց քանի որ փոխադարձ դերանունների իմաստը չի բացառում ներգոյականի իմաստը, որը արտահայտվում է սեռական հոլովով և մեջ կապով, ուստի նրանք կարող են գործածվել իրրև տեղի պարագա։ Օր. Աշոտը տեսրերը դրեց իրար մեջ։ Իրար մեջ դրած ամանները նա մեկ-մեկ շարեց սեղանի վրա։ Նրանք մեկմեկու մեջ նկատած բացատական դծերը բնականաբար վեր էին հանում և վերացնում։

Փոխադարձ դերանունով արտահայտված հատկացուցչի հատկացյալը ենթակա լինել չի կարող։ Մինչդեռ դոյականների և մյուս դերանունների հատկացյալների՝ ենթակայի պաշտոն կատարելը սովորական բան է։ Օրինակ՝ Արամի գիրքը նոր է։ Աշոտի գիրքը հետաքրքրական է և այլն։ Փոխադարձ դերանունների սեռական հոլովի շարահյուսական ֆունկցիայի այդ յուրահատկության պատճառը փոխադարձ դերանունների իմաստային յուրահատկությունն է։ Յուրաքանչյուր փոխադարձ դերանվան մեջ կա թեք հոլովի որոշակի իմաստ։ Դրան անհրաժեշտ է ավելացնել, որ յուրաքանչյուր

փոխադարձ դերանվան մեջ կա նաև կատարողի կամ եղողի, այսինքն սուբյեկտի անորոշ իմաստ: Այսպես՝ իրար (տրական կամ հայցական) դերանունը փոխադարձ իմաստով նշանակում է Ա-ն Բ-ին, Բ-ն Ա-ին: Այնուհետև, իրար (գիրքը) նշանակում է Ա-ն Բ-ի (գիրքը), Բ-ն Ա-ի (գիրքը): Ուրեմն՝ ամեն մի փոխադարձ դերանվան մեջ կա ոչ միայն թեք հոլովի իմաստ (Ա-ին, Բ-ին, Ա-ի, Բ-ի), այլև եղող կամ գործող սուբյեկտի մթագնված իմաստ (Ա-ն, Բ-ն): Քանի որ փոխադարձ դերանվան մեջ կա գործող սուբյեկտի դաղափար, պարզ է, որ նրանց սեռականով ցույց տրված անձանց կամ առարկաներին չեն կարող պատկանել առարկաներ կամ անձինք, որոնք իրենց հերթին գործող սուբյեկտի դեր կատարեն, և որոնց անունը նախադասության մեջ հանդես գա որպես ենթակա: Նման դեպքերում, այսինքն՝ փոխադարձ դերանունով արտահայտված հատկացուցիչ ունեցող նախադասության ենթական սովորաբար հանդիսանում է փոխադարձ դերանվան մեջ անորոշ ձևով արտահայտված գործող կամ եղող սուբյեկտի բացահայտված անունը:

** Առարկա ցույց տվող, բայց չհոլովվող դերանուններն են* ինքս, ինքդ *(որանց հոգնակիները* ինքեներս, ինքեներդ), յուրաքանչյուր ոք, ամեն ոք, ոմն, *ինչպես և* այս, այդ, այն, ինչ-որ *դերանունները անկախ գործածվելիս:*

Այս դերանունները թեև չեն հոլովվում, բայց նախադասության մեջ ունեն ուղղական հոլովի արժեք: Այդ է պատճառը, որ դրանք չեն գործածվում որպես կոչական, այլ՝ հանդես են գալիս դերազանցապես ենթակայի պաշտոնով: Օրինակ, «Ինքդ խենթին խելոքից պահիր» *(ԱԾ, էջ 292): «Դա էլ հենց քաջության է, որ կարողանում ես համոզել ուրիշներին և ինքդ քեզ» (ՀՔ, ՄՏՋ, էջ 320): «...այս խանդավառության չէ, այս անսահման սեր է, ուրիշ ոչինչ» (Նար-Դոս): «Այդ ձեզ շա՞տ է հետաքրքրում» (Նար-Դոս): «Այս ի՞նչ է» (Նար-Դոս): «Բացարձակ աքսիոմա է այն, որ իրականության մեջ ոչ մի մաքուր ուսա դոյության չունի» (Իս. էջ 561): «Իսկ այդ չափազանց դժվար էր» (ՆՋՀ, էջ 9):*

Ինքս, ինքդ, այս, այդ, այն դերանունները նախադասության մեջ գործածվում են նաև որպես սաորոդյալ կազմող բառ։ Օր. Ձեր դասարանի դերազանցիկը ի՞նքդ ես։ «Իմ սենյակն ահա այն է» (Ն.-Դ., III, էջ 17)։ «Իմ տրագեդիան հենց այդ է» (Ն.-Դ., I, էջ 183)։ «Կոնսիստորի լեզուն այս է» (Մուր., II, էջ 318)։ «Պատճառն այն է» (ՆԶՀ, էջ 50)։

Այս, այդ, այն ձևերը, բացի ուղղականի պաշտոններից, կարող են կատարել նաև ուղիղ խնդրի պաշտոն։ Օր. «Ես այն չեմ ասել, ես ա՛յն չեմ դրել» (Էմ., էջ 99)։ «Բայց եթե նրանք իսկապես սիրում են միմյանց, այդ հո մեղանից չե՞ն թաքցնել» (Ն.-Դ., III, էջ 67)։ «Բայց Թոզ ապրի այս մանուկը... Օմ, օմ, օմ... Այս ասաց Բուդուն և իրեն նետեց խոռոչի մեջ» (Խա., էջ 336)։

Այս, այդ, այն դերանունները միևնույն (միևնույ), նախադաս բառերի հետ գործածվելիս սովորաբար կատարում են ժամանակի պարագայի պաշտոն։ Օր. «Մինչ այդ նա տարված էր դյուտով» (Աբ., էջ 453)։ «Էլուշը մինչ այդ չէր մասնակցում խոսակցությանը» (ՆԶՀ, էջ 92)։ «Վաչեն, որ միևնույն մի կերպ պահում էր իր հավասարակշռությունը, հանկարծ պայթեց» (ԴՍԹ, I, էջ 32)։ «Իսկ միևնույն երկու փութ ալյուրի լուրը տարածվեց ծառայողների մեջ» (ՍՋ, III, էջ 124)։

Ինչ-որ դերանունը անկախ գործածվելիս կատարում է ուղիղ խնդրի, երբեմն էլ ենթակայի պաշտոն։ Օր. «Հայրը... ինչ-որ բղավում էր» (Ն.-Դ., IV, էջ 99)։ «Բայց նրան թվաց, թե կինն իր հասցեին ինչ-որ փնթփնթաց քթի տակ» (Ն. ա., էջ 130)։ «Գրասեղանի առաջ նստած ինչ-որ գրում է, աջ թևվի մանժետը սեղանի վրա դրած» (ՍՋ, էջ 10)։ Ինչ-որ ընկավ վերևից։ Ինչ-որ երևաց և անցավ ծառի հետը։

Այժմ քննենք ինքս, ինքդ, ինքը դերանունների շարահյուսական ֆունկցիային վերաբերող մի այլ հարց։ Հայտնի է, որ այդ դերանունները հաճախ գործածվում են համապատասխան դեմքի մյուս անձնական դերանունների հետ. ես ինքս, դու ինքդ, նա ինքը, մենք ինքներս և այլն։ Այդ մասին պրոֆ. Մ. Աբեղյանը գրում է. «ինքս, ինքդ, ինքը, ինքներս,

ինքներդ, իրենք իրև զորացման դերանուն հաճախ գրվում են անուններից, ինչպես և անձնական դերանուններից հետո, իբրև բացահայտիչ։ *Օրինակ՝ ես իմս գնացի, դու իմդ սատացիր, ձա իմն եկավ մեզ մոտ (ընդգծումներն իմն են — Ս. Ա.)*[1]։ *Ուրեմն նման դրծածություններում Մ. Աբեղյանը այդ դերանունները համարում է բացահայտիչ։ Կարծում ենք, որ այդ ճիշտ չէ։ Ի՞նչ է բացահայտիչը։ «Ենթակայի կամ նախադասության այլ անդամի ով կամ ինչ լինելը արտահայտող լրացումները կոչվում են բացահայտիչ»*[2]։ *Իսկ այս նշանակում է, որ «բացահայտիչն ավելի ճշտած, մանրամասնած կրկնությունն է բացահայտյալի (ընդգծումներն իմն են —Ս. Ա.)*[3]։ *Մ. Աբեղյանի բերած և նման օրինակներում* իմս, իմդ *և այլն դերանունները ինչո՞վ են ավելի ճշտում, մանրամասնում այն դերանվան կամ դոյականի իմաստը, որոնց հետ գործածվում են։ Ինչպես որոշակի երևում է, նրանք ոչնչով չեն ճշտում և մանրամասնում իրենց նախորդող դոյականի կամ դերանվան իմաստը։ Հասկանալի է, որ «ես իմս գնացի» նախադասության մեջ* իմը *բառը չի բացահայտում, թե ով է ես-ը, միայն շեշտում է դեմքը։ Հենց* իմս *և նման դերանունների բացահայտիչ չլինելն է պատճառը, որ նրանց նախորդող բառի վրա բութ չի դրվում, մինչդեռ բացահայտյալը բացահայտիչից անջատվում է բութով։*

Ռուսաց լեզվում դերանունների և դոյականների հետ այդ իմաստով գործածվում է сам *բառը, որը այդ դեպքում համարվում է պարզապես իմաստը սաստկացնող մասնիկ (частица)։ Օրինակ՝* вы сами знете[4] *—դուք իմիներդ գիտեք։ Քն-*

---

[1] Մ. Աբեղյան, *Աշխարհաբարի շարահյուսություն, Վաղարշապատ, 1912, էջ 174։*

[2] Պրոֆ. Գ. Սեվակ, *Հայոց լեզվի շարահյուսություն, 1951, էջ 29։*

[3] *Նույն տեղում։*

[4] Земский А. М., и др., Русский язык. ч. 1-ая, учебник для пед. училищ. 1950, стр. 190.

նարկվող դերանունները հայերենում միայն իմաստը սաստկացնելու դեր են կատարում։ Օր. «Ոտիկը իճճե է մղվում գրոհի. նա իճճե է վերցնում հատուցումը» (Անթ., էջ 22)։ «Նա իճճը շատ ուրախ էր» (ՆԴՄ, էջ 33)։ «Գործն իճճը ցույց կտա» (Ն. ա., էջ 103)։

Հաճախ իճճե դերանունը դործածվում է իր հոլովական ձևերի հետ. իճճե իր, իճճե իրեն, իճճե իրենից և այլն. ինչպես և իճմս ինձ, իճմս ինձնից, իճմդ ինձ, իճմդ ինձնով և այլն։

Օրինակ՝ «Իճճե էլ այդ օրը շատ հոգնած էր զգում իրեն» (ՆԴՄ, էջ 108)։ «Եթե մարդ չգտնեն, որ իրենց լսի, կխոսեն իրենք իրենց հետ և իրենք էլ կլսեն իրենց» (ՆԴՄ, էջ 14)։ «Կարծես թե իճմս ինձ քիչ եմ ծաղրում, կարծես թե իճմս ինձ քիչ եմ հանդիմանում» (Ն.-Դ., I, էջ 71)։ Այս օրինակներում իճմս, իճճե, իրենք դերանունները ենթակա են, իսկ իրեն, իրենց, ինձ՝ նախադասության երկրորդական անդամներ։ Այս, իհարկե, հասկանալի է։ Առաջին հայացքից կարծես թե սրանց նման, բայց փաստորեն իմաստով և շարահյուսական դերով այլ է նույն դերանունների հետևյալ կիրառությունը։

«Կարծես իճճե իրեն խոսեց Վանանդա նախարարը» (Դվ, էջ 138)։ Այստեղ չենք կարող իճճե համարել ենթակա, իրեն՝ ուղիղ խնդիր։ Նախադասության ենթական է նախարարը, ուղիղ խնդիր չկա, քանի որ խոսել բայը չեզոք սեռի բայ է։ Չենք կարող հարցնել ո՞ւմ խոսեց.— խոսեց իրեն (!)։ Այստեղ իճճե իրեն նախադասության մի անդամ է և կարելի է համարել ձևի պարագա, որովհետև ցույց է տալիս գործողության՝ խոսելու ձևը։ Ինչպե՞ս խոսեց։ Վանանդա նախարարը խոսեց ոչ թե բարձրաձայն, այլ շշուկով, ցածրաձայն, կամ այնպես, որ ուրիշները չլսեն՝ իճճե իրեն։ Մեծ մասամբ, եթե նախադասության ստորոդյալը չեզոք սեռի բայ է, իճճե իրեն, իճմս ինձ և այլն ձևի պարագայի պաշտոն են կատարում, իսկ եթե ներգործական է՝ իրեն, ինձ և այլն կատարում են խնդրի պաշտոն։ Օր. «Փայտ դնող չի եղել, իճճե

իրեն սպանել է» (Դվ, էջ 163), բայց՝ նրան չեն սպանել, իմն իրեն մեռել է:

Ինչպե՞ս կարող էին առաջանալ այս իմաստն ու շարահյուսական այս կիրառությունը: Պետք է ենթադրել, որ այդ առաջացել է հիշյալ դերանունների սրտականի ձևի որոշ կիրառություններից: Քննենք մի օրինակ: «Սիրում եմ երբեմն իմս ինձ կարդալ իմ դրվածքները» (Ն.-Դ., I, էջ 14): «Իմս ինձ կարդալ» այստեղ նշանակում է «կարդալ իմս ինձ համար»: Հայերենում նման դեպքերում հաճախ է նամար կապը բաց թողնվում: Հենց այս նախադասության ընդգծված դերանունների մեջ կա ձևի պարագայի վերածվելու հնարավորություն: Այստեղ ոչ միայն կարող ենք հարցնել, թե սիրում եմ ո՞ւմ կարդալ կամ ո՞ւմ նամար կարդալ իմ դրվածքները, այլև՝ սիրում եմ ինչպե՞ս կարդալ: Ասենք, այդ ինչպե՞ս նա կարդում, որ չեմ լսում ես. իմս ինձ եմ կարդում և ընդհանրապես սիրում եմ իմս ինձ կարդալ: Կամ ասում ենք՝ «Արամը իմը այդ պատմությունը պատմեց ինձ համար», կամ՝ «Արամը իմը այդ պատմությունը պատմեց իր նամար (որ չմոռանա)», կամ՝ «Արամը իմը այդ պատմությունը պատմեց իրեն (որ չմոռանա)»—«Արամը իմն իրեն պատմեց այդ պատմությունը»—«Արամը նույնիսկ ընկերների հետ պարապելիս, դասը բարձրաձայն պատմել չի սիրում, սովորություն չունի. նա միշտ պատմում է իմն իրեն»: Բերենք մի քանի օրինակներ ևս. «Շինականը խոսում էր իմն իրեն»: (Դվ, էջ 184): «Իրենի իրենց դարձյալ հանդստանում են, խաղաղվում» (Ն.-Դ., I, էջ 2): «Ոտներիս մկաններն իրենի իրենց լարվեցին» (Ն.-Դ., I, էջ 212):

Ջպետք է զարմանալ, որ անձնական դերանունը այստեղ կատարում է ձևի պարագայի պաշտոն: Ինչպես տեսնում ենք, այդ պաշտոնը կատարում է ոչ թե մի որևէ անձնական դերանուն առանձին վերցրած, այլ համապատասխան դիմքի երկու անձնական դերանունների կապակցությունը, այն էլ որոշ պայմաններում միայն: Կարելի է ենթադրել, որ այդ կապակցությունները հակված են վերածվելու ձևի մակրայի:

Ինչպես տեսնում ենք, առարկայական վերաբերություն ունեցող ու չհոլովվող դերանունների շարահյուսական կիրառությունները լայն չեն: Դա բացատրվում է հենց նրանով, որ այդ դերանունները չեն հոլովվում:

2. ԱՌԱՐԿԱՅԻ ՀԱՏԿԱՆԻՇ ՅՈՒՅՑ ՏՎՈՂ ԴԵՐԱՆՈՒՆՆԵՐԻ ՇԱՐԱՀՅՈՒՍԱԿԱՆ ԿԻՐԱՌՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

Այդ դերանուններն են. այս, այդ, այն [1], սույն, նույն, միևնույն, մյուս, այսպիսի, այդպիսի, այնպիսի, նույնպիսի, այսքան, այդքան, այնքան, նույնքան, այսչափ, այդչափ, այնչափ, նույնչափ, բանի, որքան, որչափ, որպիսի, ինչպիսի, բանիերորդ, ամեն, բոլոր, յուրաքանչյուր, ոմն, ամբողջ, որևէ, որևիցե, մի շարք, մի բանի, որոշ, համայն և այլն:

Այս բոլոր դերանունները կարող են դրվել գոյականի վրա, ցույց տալ առարկայի այս կամ այն հատկանիշը, հետևապես և սրանց բոլորի համար սովորական է որոշիչի պաշտոն կատարելը:

Օր. «*Եվ այդ գյուղը և այն տունը... նա չէր ուզում տեսնել*» (ԴՐՊ, էջ 226): «*Այդ տներից մեկումն էր ապրում Անահիտ Ալաջյանը*» (ՀՀ, ԲԼ, էջ 31): «*Եվ այսպիսի հմուտ մակապրություն կատարից*» (ՆՋ, Հատ., էջ 324): «*Այսպիսի պահերին մարդիկ ակամա երազում են անկարելի վիճակներ*» (ՆՋՀ, էջ 164): «*Շտապում է նույն ճանապարհով*» (ՆՋՀ, էջ 109): «*Իր ամբողջ ջանքերը կնվիրի իր սիրելի հայրենիքին*» (Դվ, էջ 459): «*Ամեն հոգի մի վիշտ ունի, ամեն մի ցավ՝ ամոթում*» (ՆՋ, Հատ., էջ 289): «*Խոստակցությունը թևից այլ ուղղությամբ*» (ՆՋՀ, էջ 385): «*Քանի՞ պլուխ ունես վրադ, որ դիտենաս ամեն բան*» (Ավ., էջ 251): «*Որևէ ձայն լսելիս նո-*

---

[1] *Այս, այդ, այն դերանունները իրենց իմաստի յուրահատկության պատճառով կարելի է դասել և դասում ենք թե՛ առարկա ցույց տվող և թե՛ հատկանիշ ցույց տվող դերանունների շարքը:*

բայրը շուռ էր գալիս» (ՀՍ, ՀՎ, էջ 146)։ «Կարծես վախենում էր, թե նա և երեխան որևէ բանով կարող են արատավորել իր պճնանքը» (ՀՍ, ՀՎ, էջ 140)։

«Դա մի բառ է, որ ինչ-որ մի քաղաքում, ինչ-որ մի անհայտ օդանավակայան ատանում է մթնոլորտից» (ԴՐՊ, էջ 216)։ «Նա ինչ-որ բան է փնտրում սենյակում» (ՀՍ, ՀՎ, էջ 150)։ «Բայց ահա ինչ-ինչ հրաշքով կապիտանի կոշում էին ուվել» (ԳՍԹ, I, էջ 54) և այլն։

Որոշիչի պաշտոնը միակ պաշտոնն է, որ հատուկ է այս բոլոր դերանուններին։ Այնուհետև սկսվում են շարահյուսական ֆունկցիայի տարբերությունները։ Այս դերանունների մի մասը չի հոլովվում և, բացի որոշիչի ֆունկցիայից, այլ ֆունկցիա չի կատարում։ Դրանք են. այս, այդ, այն [1], որևէ, որևիցե, մի շարք, որոշ, ամեն, ամենայն, ինչ-ինչ։

Մյուս դերանունները կարող են գործածվել գոյականաբար, հոլովվել, հետևապես և կատարել շարահյուսական այն պաշտոնները, ինչ որ կատարում են գոյականները, գոյականաբար գործածվող ու հոլովվող այլ բառերը, ինչպես և առարկայական վերաբերություն ունեցող ու հոլովվող դերանունները։ Ավելորդ ենք համարում կանգ առնել այդ կիրառությունների վրա առանձին-առանձին։ Բերենք միայն մի քանի օրինակներ. «Բոլորը շունչները պահել էին» (ՀՀ, ԲԼ, էջ 10)։ «Յուրաքանչյուրը կամենում է ապրել» (Իս., էջ 315)։ «Զայն ուվին մի ֆանիսը բազմության միջից» (ՆՋՀ, էջ 15)։ «Թող դա ուժ տա քիչ ընկերներիդ, սիրելի որպի, պաշտպանելու բոլորի կյանքը» (ՀՔ, ՄՏՋ, էջ 240)։ «Այդքանով էլ կերջանկանայի... իսկ մնացածը պատերազմից հետո» (Ն. տ., էջ 493)։ «Բայց մի քանի անգամ տեսել էի Մարոյին կայարանում՝ նույն բարակ, մեռաքոս շարֆը վիզը փաթաթած, որով փաթաթված էր հիմա» (ՍՋ, III, էջ 14—15)։

Քննենք այս դերանուններից մի քանիսի շարահյուսական առանձնահատկությունները։ Այսպիսի, այդպիսի, այնպիսի,

[1] *Սրանց մասին տե՛ս նաև էջ 214, 215։*

նույնպիսի, ինչպիսի, որպիսի *դերանունները իմաստով հարաբերակից են ածականներին, ցույց են տալիս առարկայի հատկությունը, որպիսությունը առանց տարբերակման, ընդհանուր կերպով։ Այս դերանունները, ինչպես և ածականները նախադասության մեջ գործածվում են որպես որոշիչ։ Սակայն ածականները հաճախ նաև գործողության հատկանիշ են ցույց տալիս, հետևապես և պարագայի պաշտոն են կատարում։ Օր.* շատ աշխատել, խելոք խոսել, լավ երգել, բարձր գոռալ, համեստ հագնվել, ուժեղ վազել, վատ պարել, ճիշտ մտածել *և այլն։ Մինչդեռ* այսպիսի, այդպիսի, այնպիսի, նույնպիսի, ինչպիսի, որպիսի *դերանունները, ի տարբերություն ածականների, գործողության հատկանիշ չեն ցույց տալիս։ Չի կարելի ասել և չենք ասում՝* այսպիսի աշխատեց, այսպիսի խոսեց, այդպիսի երգեց, այնպիսի վազեց *և այլն, այլ՝* այսպես աշխատեց, այսպես խոսեց, այդպես երգեց այնպես վազեց *և այլն։*

Ի՞նչն է պատճառը, որ քննարկվող դերանունները, ի տարբերություն ածականների (որակական ածականների), պարագայի պաշտոն չեն կատարում։ Պետք է ենթադրել, որ այսպիսի, այդպիսի, այնպիսի, նույնպիսի, ինչպիսի, որպիսի *դերանունները ծագումով* այսպես, այդպես, այնպես, ինչպես *դերանունների սեռական հոլովաձևերն են։ (Այս մասին մանրամասն խոսվում է դերանունների կազմության բաժնում)։ Իսկ սեռականը, իբրև համեմատաբար կայուն հարաբերության իմաստ ունեցող հոլով, սովորաբար չի կապվում գործողության հետ, չի դրվում բայի վրա։*

Այսման, այդման, այնման, նույնման, որման, այսչափ, այդչափ, այնչափ, նույնչափ, որչափ *դերանունները գործածվում են ոչ միայն գոյականի հետ, իբրև որոշիչ, այլև բայի հետ, իբրև չափ ու քանակի պարագա։ Օր.* «Աստղազարդ երկինքը երբեք այսման գեղեցիկ ու թովիչ չի եղել, երբեք այսման առյորոշ չի եղել կարոտն իր հոգու մեջ, չի եղել գիշերն այսման խորհրդավոր» (ՀՔ, ՄՏՋ, էջ 480)։ «Այնման էին հավանում այդ ռեֆերատները, որ ասում էին...» (Ն. ո.,

էջ 487)։ «Ո, Սառա, որ տեսնեիր ինչ[ան] սարսափելի էր նա այդ րոպեին» (Նար-Դոս)։ «Ինչ[ան] նրան պարզ պատկերացավ տեղի ունեցածը, այնքան ավելի նոր զայրույթով լցվեց Փիրուզ նանի ու Բաբելի դեմ» (ՀՍ, ՀՎ, էջ 172)։

Այս գործածությամբ վերոհիշյալ դերանունները տարբերվում են իրենց հարաբերակից համարվող խոսքի մասից՝ թվականից, որը սովորաբար առանձին վերցրած (առանց կապակցությունների) պարագայի պաշտոն չի կատարում։

Ըստ որում՝ գործողության չափ ցույց տալը, հետևապես և չափի պարագայի դեր կատարելը այդ դերանունների համար այնքան է սովորական, որ դրանք կարելի է համարել հարաբերակից ոչ միայն թվականներին, այլև մակբայներին։ Բայց որ դրանք հարաբերակից են ավելի շատ թվականներին, վկայում է այն փաստը, որ կարող են գործածվել գոյականաբար և հոլովվել, իսկ այդ հատկանիշը հատուկ չէ մակբայներին։ Հենց այդ պատճառով էլ պարագայի ֆունկցիայով հանդես գալը նրանց համար պետք է դիտել իբրև առանձնահատկություն, ի տարբերություն թվականների։

3. ԳՈՐԾՈՂՈՒԹՅԱՆ ՀԱՏԿԱՆԻՇ ՅՈՒՅՑ ՏՎՈՂ ԴԵՐԱՆՈՒՆՆԵՐԻ ՇԱՐԱՀՅՈՒՍԱԿԱՆ ԿԻՐԱՌՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

Այդ դերանուններն են՝ այսպես, այդպես, այնպես, նույնպես, ինչպես, որպես, երբևէ, երբևիցե, երբ, ուր, այստեղ, այդտեղ և այլն։

Առաջին հայացքից թվում է, թե այստեղ, այդտեղ, այնտեղ, որտեղ *դերանունները կարելի էր դասել առաջին խմբի՝ առարկայական վերաբերություն ունեցող (սրանցով ցույց տված տեղը իբրև առարկա դիտելով) ու հոլովվող դերանունների շարքը, մանավանդ, որ դրանք հոլովվում են։ Բայց մենք այս բաժանումը կատարելիս նկատի ենք ունեցել դերանվան հատկապես շարահյուսական ֆունկցիան։ Չնայած, որ այդ դերանունները հոլովվում են, բայց դրանց հոլովա-*

ձևերը սովորաբար նախադասության մեջ պարագայի (տեղի) պաշտոն են կատարում և ոչ թե խնդրի պաշտոն, ինչպես այլ դերանունների ու բառերի հոլովաձևերը: Ուրեմն՝ քանի որ այս դերանունները դրվում են բայի վրա և հիմնականում կատարում են պարագայի պաշտոն, այդ պատճառով էլ դրանք դասել ենք գործողության հատկանիշ ցույց տվող դերանունների շարքը:

Ասացինք, որ այս բոլոր դերանունների շարահյուսական պաշտոնը պարագայի պաշտոնն է:

Այսպես, այդպես, այնպես, նույնպես, ինչպես դերանունները սովորաբար կատարում են ձևի պարագայի պաշտոն: Օր. «Ինչո՞ւ է ձեզ հետ այդպես վարվում» (Ն.-Դ., IV, էջ 86): «Սակայն միայն հոգու դրությունը չի, որ նրան այդպես տանջում է» (Ն.-Դ., I, էջ 41): «Պառավը դրից գլուխը կրծքին և մնաց մի պահ այդպես» (Դվ, էջ 323): Սոխակված նրանք նստեցին խոնավ հողի վրա: Այդպես անց կացրին մինչև առավոտյան ժամը վեցը» (ՀՀ, Բվ, էջ 106):

Այս դերանունները կարող են նախադասության մեջ հանդես գալ նաև որպես սահմանակցական վերադիր: Օր. «Այդ այդպես է» (Մուր., III, էջ 128): «Նրանք այդպես չէին, նրանք հեզ էին» (Դվ, էջ 128): «Այսպես է այս հովիտը» (ՀՍ, Հվ, էջ 128): «Այդպես էր ժամանակը» (ՀՔ, ՄՏՋ, էջ 302):

Այստեղ, այդտեղ, այնտեղ, որտեղ, ուր դերանունները գործածվում են որպես տեղի պարագա: «Ի՞նչ եք անում այստեղ» (ՆՋՀ, էջ 110): «Այստեղ գրվել են սովետական իշխանության առաջին դիրեկտիվները» (Թերթերից): «Աչքիս առաջ գծագրվեցին Երևանը, գործարանը, այնտեղ աշխատող մեր առաջավորները» (Թերթերից): «Մեկ ժամից ավելի մնալու էինք այնտեղ» (Թերթերից): «Որտեղի՞ց փոքրամարմին ու փոքրաձեռն Իրակլի Միկաբերիձեի մեջ այդքան ուժ» (ՀՔ, ՄՏՋ, էջ 489): «Իսկ որտեղի՞ց գումարտակում լուսանկարիչ» (Ն. տ., էջ 445): «Որտեղի՞ց են կրակում» (Ն. տ., էջ 154): Ինչպես տեսնում ենք, այս դերանունների հայցականը հաճախ համապատասխանում է գոյականների ներգո-

յականին: Այսպես, գոնվում ենք այստեղ, բայց գոնվում ենք երևանում, համալսարանում, գործարանում, դպրոցում:

Երբ, երբևէ, երբևիցե դերանունները դործածվում են որպես ժամանակի պարագա: Օր. «ե՞րբ, ե՞րբ վերջապես մեր հերթն էլ կգա» (ՆՋ, Հատ., էջ 191): «ե՞րբ պիտի մեկ էլ էն աղավնիկի ղունղունուցդ դնես» (ՀՍ, Հվ, էջ 166): «Նա այսօր ավելի քան երբևէ դեղնած էր» (ԴՍԲ, I, էջ 33): «Սովետական երիտասարդությունը, որը ծնվել ու մեծացել է մեր դարաշրջանում, վայելում է սովետական կոնստիտուցիայի բարիքները և երբևիցե չի ղգացել կապիտալիստական աշխարհի մատուցած դառնությունները» (Թերթերից): «Ես հարբած չեմ և արթուն եմ ավելի քան երբևէ» (Շիրվ., IV, էջ 67):

4. ԴԵՐԱՆՈՒՆՆԵՐԻ ՇԱՐԱՀՅՈՒՍԱԿԱՆ ԱՅԼ ԱՌԱՆՁՆԱՀԱՏԿՈՒԹՅՈՒՆՆԵՐ

Մենք քննեցինք դերանունների շարահյուսական արժեքը այն առումով, թե նրանք նախադասության մեջ ինչ պաշտոն կարող են կատարել: Տեսանք, որ դերանունները այդ տեսակետից ունեն ղգալի յուրահատկություններ հարաբերակից խոսքի մասերի համեմատությամբ: Սակայն դրանով չեն սպառվում դերանունների շարահյուսական կիրառությունների առանձնահատկությունները: Հետաքրքրական է, որ որոշ դերանուններ չեն գործածվում բոլոր տիպի նախադասություններում, ի տարբերություն իրենց հարաբերակից խոսքի մասերի: Այդպիսի առանձնահատկություններ ունեն ժխտական բնույթի որոշյալ դերանունները, մի քանի անորոշ դերանուններ և հարցական-հարաբերական դերանունները:

Ժխտական բնույթի որոշյալ դերանունները արդի հայերենում գործածվում են միայն ժխտական նախադասություններում, քանի որ նրանց մեջ ժխտում է արտահայտվում ընդհանուր կերպով: Այդ դերանունների մեջ հատատատականի տարրի բացակայությունը պայմանավորում է միայն ժխտական նախադասություններում գործածվելու հնարավորություն:

Օր. «Հայրենական պատերազմի համար է. ոչ մի ջանք չպիտի խնայենք» (Ար., էջ 456): «Հիտլերիզմը ոչ մի առընչություն չունի սոցիալիզմի հետ» (Իս., էջ 494): «Ոչ մի մարդկային աչք ինձ չի տեսնի, չի հասնի ոչ մի մարդկային բազուկ» (Իս., էջ 201): «Ջախջախված է ռասսայական հիպոքինդը և ոչ մի քննադատության չի դիմանում» (Իս., էջ 497): «Տանը ոչ ոք չկար» (ՆՁՀ, էջ 370): «Ես Մացակ Ավագյանի դեմ ոչինչ չունեմ» (Ն. ս., էջ 52): «Ոչ մի բրիգադ տեղից շարժվից (Ն. ս., էջ 81): «Ոչ ոք չի կարող հաստատել» (Ն. ս., էջ 49):

Ամեն բնույթի և ամեն տիպի նախադասություններում չեն գործածվում նաև մի քանի անորոշ դերանուններ. Որևէ, որևիցե, երբևէ, երբևիցե: *Այս դերանունները չեն գործածվում հաստատական բնույթի այն պարզ նախադասություններում, բարդ համադասական, ինչպես և բարդ ստորադասական նախադասությունների գլխավոր նախադասություններում, որոնց ստորոդյալն արտահայտվում է բայի ապառնական եղանակով, հատկապես նրա ներկա և անցյալ ժամանակներով:*

Օրինակ, չենք ասում՝

Որևէ (որևիցե) *ուսանող* գալիս է, եկավ, եկել է, եկել էր (գալու է):

Նա երբևէ (երբևիցե) գալիս է, եկավ, եկել է, եկել էր, գալու է:

Իսկ եթե այս նախադասությունները պարզնենք հարցական, ժխտական, կարելի կլինի այդ դերանունները գործածել այնպես, ինչպես գործածված են:

Որևէ (որևիցե) *ուսանող* գալի՞ս է, եկա՞վ, եկե՞լ է, եկե՞լ էր, գալո՞ւ է:

Նա երբևէ (երբևիցե) գալի՞ս է, եկա՞վ, եկե՞լ է, եկե՞լ էր, գալո՞ւ է:

Որևէ (որևիցե) *ուսանող* չի գալիս, չեկավ, չէր գալիս, չի գալու:

Նա երբևէ (երբևիցե) չի գալիս, չեկավ, չէր գալիս, չի գալու:

Այս և նման օրինակների վերաբերյալ պետք է անել հետևյալ դիտողությունները.

1. Բայի սահմանական եղանակի ապառնի ժամանակով արտահայտված ստորոգյալ ունեցող հիշյալ տիպի նախադասություններում երբևմն կարող են գործածվել որևէ, որևիցե *դերանունները:*

Օրինակ՝ Նրանցից որևէ *մեկը գալու է:*

2. Սահմանական եղանակի ներկա ժամանակով արտահայտված ստորոգյալ ունեցող նախադասություններում (ժխտական և հարցական) երբևէ *և* երբևիցե *դերանունները գործածվում են միայն այն դեպքում, երբ այդ բայը ցույց է տալիս ոչ թե հատկապես խոսելու մոմենտին կատարվող գործողություն, այլ առհասարակ ընթացքի մեջ գտնվող գործողություն: Բանն այն է, որ ինչ բնույթի էլ լինի նախադասությունը,* երբևէ, երբևիցե *դերանունների մեջ եղած ժամանակի անորոշ իմաստը անհամատեղելի է այնպիսի մի որոշակի, կոնկրետ ժամանակի հետ, ինչպիսին ներկա ժամանակն է, որը ցույց է տալիս խոսելու մոմենտը: Իսկ, այսպես ասած, ընդհանուր ներկան որևէ կոնկրետ ժամանակակետ նկատի չի ունենում, ուստի և բայերի այդպիսի ներկա ժամանակի հետ կարող են գործածվել* երբևէ, երբևիցե *դերանունները:*

Համմ. Դու երբևէ *(առհասարակ) ղբաղվո՞ւմ ես այդ հարցով:*

Դու երբևէ *(այս րոպեին) ղբաղվո՞ւմ ես այդ հարցով:*

Հասկանալի է, որ առաջին նախադասության մեջ երբևէ *դերանունը սովորական է, որովհետև ստորոգյալը չնայած ներկա ժամանակի բայով է արտահայտված, բայց հատկապես խոսելու մոմենտին կատարվող գործողություն չի ցույց տալիս: Իսկ երկրորդ օրինակում նկատի է առնված հենց այդպիսի գործողություն (կոնկրետ, խոսելու մոմենտին կատարվող), ուստի և* երբևէ, երբևիցե *դերանունները գործածվել չեն կարող:*

Անհրաժեշտ չենք համարում այս դերանունների գործածությունները քննել նաև վերևում նշված բոլոր տիպի նախադասություններում, քանի որ թե՛ բարդ համադասական նախադասության կազմի մեջ մտնող նախադասությունները և թե՛ բարդ ստորադասական նախադասության գլխավոր նախադասությունը առանձին վերցրած որևէ էական բանով չեն տարբերվում պարզ նախադասություններից, որոնց մեջ այդ դերանունների կիրառությունը վերևում քննարկվեց:

Ի՞նչն է այդ անորոշ դերանունների սահմանափակ կիրառության պատճառը: Մենք արդեն գիտենք, որ անորոշ դերանունների իմաստի անորոշությունը բացարձակ չէ, այսինքն, որ առարկան կամ հատկանիշը անորոշ դերանունների մեջ չեն արտահայտվում բացարձակ անորոշությամբ: Այսպես, մի բանի, որոշ դերանունները թեև որոշակի քանակ չեն ցույց տալիս, բայց գոնե մոտավորապես ակնարկում են, որ խոսքը վերաբերում է ո՛չ թե մեծ, այլ՝ փոքր քանակի: Մենք նաև տեսանք, որ բոլոր անորոշ դերանունների անորոշությունը միահավասար չէ, որ նրանցից մի քանիսի իմաստը համեմատաբար ավելի անորոշ է. դրանք են՝ որևէ, որևիցե, երբևէ, երբևիցե: Հենց իմաստային այս զգալի անորոշությունն է պատճառը, որ այդ դերանունների գործածությունը սահմանական եղանակի բայերի հետ միևնույն պարզ նախադասության մեջ անհամատեղելի է դարձնում, քանի որ սահմանական եղանակի բայաձևերի մեջ արտահայտվում է խոսողի հաստատուն վերաբերմունքը ասույթ գործողության նկատմամբ:

Իսկ ինչո՞ւ հարցական և ժխտական նախադասություններում այդ դերանունները գործածվում են: Խոսողը հարցական նախադասությամբ միտքը չի հաստատում, այլ հարցում է կատարում ընդունողի, անհայտը իմանալու համար: Ուրեմն՝ չնայած, որ այս հարցական ստորոգյալն արտահայտված է նույն եղանակի բայով, ինչ որ պատմողականը, բայց հարցական նախադասության բնույթը, որի հիմքում այս դեպքում ընկած է գործողության, իրողության անհայտ

լինելը, հնարավորություն է տալիս այդ անորոշ դերանունների և սահմանական եղանակի բայաձևերի համատեղ գործածությունը նույն պարզ նախադասության մեջ: Ինչ վերաբերում է քննարկվող անորոշ դերանունների՝ ժխտական նախադասություններում գործածվելու հնարավորությանը, պետք է ասել, որ դա պայմանավորված է նրանով, որ այդ դերանունները ժխտական նախադասության մեջ ստանում են այլ իմաստ, մոտավորապես ժխտական դերանունների հանրական իմաստը: «Ոչ մի ուսանող չեկավ» նշանակում է «ոչ մի ուսանող չեկավ»: Օրինակ՝ «Լեզուն չի դրում որևէ ծանր խոսք ասել» (ՀՍ, հվ, էջ 164): «Սառափիկ պարմայով՝ չնկատելով նրանց դեմքի վրա թշնամության որևէ տվիլ» (ՆՋՀ, էջ 364):

Ուրեմն, եթե «որևէ ուսանող եկավ» նախադասությունը չի գործածվում, քանի որ եկավ բայը ցույց է տալիս ստույգ կատարված գործողություն, իսկ որևէ դերանունը նույնիսկ մոտավորապես չի նշում այդ գործողությունը կատարողին կամ նրա հատկանիշը, հետևապես և դրանք անհամատեղելի են նշված պայմաններում, ապա «որևէ ուսանող չեկավ» նախադասության գործածության համար այս կամ այն անհատ ուսանողին իմանալու հարց չի էլ առաջանում: Բավական է իմանալ, որ ուսանողներից եկող չի եղել, որ ասենք՝ «որևէ ուսանող չեկավ»՝ բավական է իմանալ, որ առհասարակ եկող չի եղել, որ ասենք «որևէ, մեկը չեկավ», որ նշանակում են՝ «ոչ մի ուսանող չեկավ», «ոչ մեկը չեկավ»: Ժխտական նախադասություններում այդպիսի նոր իմաստ կամ իմաստային նոր երանգ առանձնը վերաբերում է նաև երբևէ, երբեմն դերանուններին: «Նա երբևէ չի եկել» նշանակում է «նա երբեմ (ոչ մի ժամանակ, ոչ մի անգամ) չի եկել»:

Այժմ քննենք հարցական-հարաբերական դերանունների շարահյուսական մի քանի առանձնահատկությունները: Անորոշ դերանուններից այս մի քանիսի շարահյուսական առանձնահատկությունների և դրանց պատճառների բացահայտումը դպրի չափով օգնում է նաև հարցական-հարաբերական դերանունների շարահյուսական առանձնահատ-

կությունների ճիշտ ըմբռնմանը: Հարցական-հարաբերական դերանունները բոլոր մյուս դերանունների, այդ թվում և անորոշ դերանունների համեմատությամբ ամենաանորոշ դերանուններն են: Սա նշանակում է, որ հարցական-հարաբերական դերանունների շարահյուսական առանձնահատկությունները պետք է ընդհանրություններ ունենան անորոշների հետ և տարբերություններ նրանցից: Եվ իսկապես: Այն հանգամանքը, որ որևէ, որևիցե, երբևէ, երբևիցե դերանունները իրենց անորոշ իմաստի պատճառով հակված են որոշ դեպքերում գործածվելու ոչ թե պատմողական, այլ հարցական նախադասություններում, այդ բանը հարցական-հարաբերական դերանունների մոտ կա ավելի մեծ մասշտաբով:

Օրինակ՝ «Ինչո՞վ էր պրպտված ձեր միտքը, ավելի ճիշտ ումնո՞վ էր պրպտված, որ ինձ չնկատեցիք» (ՆՋՀ, էջ 98): «Ո՞վ է մեղավոր ավելի» (ՆՋ, Հատ., էջ 296): «Ես որտե՞ղ պտնեմ» (ՀՍ, Հվ, էջ 168): «Այժմ ինչպե՞ս վերադառնա կնոջ ու երեխայի մոտ» (Ն.-Դ., IV, էջ 153): «Սաթի՛կ, ո՞ւր է Սուրիկը» (Ն.-Դ., IV, էջ 154):

Հարցական-հարաբերական դերանունները հաճախ գործածվում են նաև բացատրչական նախադասության մեջ:

Օրինակ՝ «Ինչպե՞ս ես հանաչեմ նրան» (ՆՋ, Հատ., էջ 91): «Ի՞նչ խոսքերով ես հաղորդեմ պարծանքս անպատում» (Ն. տ., էջ 110): «Էհ, քո գյուղը... Ման՞ ժամանակ է քեզ հալումաշ է անում» (Ար., էջ 452):

«Քանի՞ հպարտ մայրեր նրա համար
Ջուրկել են դուստրերին և հառաչել,
Քանի՞ մատաղ սրտեր կարոտավառ
Շշնջացել են երազում «վաչե» (ՆՋ, Հատ., էջ 350):

«Դատարկ բաներ են, ի՞նչ նախապատրաստում, ի՞նչ դժբախտություն» (Շիրվ., VI, էջ 345): «...Ինչե՞ր չի ասում, ինչե՞ր չի դուրս տալիս երբեմն» (Ն.-Դ., IV, էջ 134): «Դեռ ինչքա՞ն կյանք կար առջևում, դեռ ինչքա՞ն պետք է ապրել՝ տեսնելու

մարդկանց խառնվածքների տարբեր երանգները» (ՀՔ, ՄՏՋ, էջ 67):

Հարցական-հարաբերական դերանունների այս վերջին գործածությունը, իհարկե, չենք դիտում որպես միայն իրենց՝ այդ դերանուններին հատուկ գործածություն, ի տարբերություն մյուս դերանունների: Բացատրական նախադասություններում այդ դերանունների գործածությունը մենք նշում և դիտում ենք, որպես բոլոր դերանունների համեմատությամբ ավելի տարածված, որպես այդ դերանուններին համեմատաբար ավելի հատուկ գործածություն:

Հարցական-հարաբերական դերանունների համար հատկանշական է նաև բարդ ստորադասական նախադասության մեջ երկրորդական նախադասությունը գլխավորին կապելու, հարաբերելու դերը, որը, ինչպես արդեն ասվել է, նույնպես պետք է բացատրել նրանց բացարձակ անորոշ իմաստով: Իրենց այս ֆունկցիայով բացարձակ անորոշ դերանունները կարևոր դեր են կատարում բարդ ստորադասական նախադասության կառուցվածքի մեջ: Սա նշանակում է, որ վերհիշյալ դերանունները այդ ֆունկցիայով մոտենում են ստորադասական շաղկապներին, բայց, իհարկե, չեն նույնանում նրանց հետ և ունեն գրալի յուրահատկություններ:

Բացարձակ անորոշ դերանունների տեսակային հատկանիշները քննելիս որոշ համեմատություն կատարեցինք այդ դերանունների և ստորադասական շաղկապների միջև, հատկապես իմաստային տեսակետից: Ինչպես տեսանք, իմաստային էական տարբերությունը դրանց միջև այն է, որ բացարձակ անորոշ դերանունները, ի տարբերություն ստորադասական շաղկապների, ունեն նյութական իմաստ: Իսկ այստեղ նրանց միջև եղած տարբերությունը քննում ենք շարահյուսական տեսակետից, որը և կապված է այդ իմաստի հետ:

Ամենից առաջ պետք է նշել, որ բացարձակ անորոշ դերանունները նյութական իմաստ ունենալու պատճառով, բացի երկրորդական նախադասությունը գլխավորին կապելու

դերից, հանդես են գալիս իբրև նախադասության այս կամ այն անդամ: Նրանք այդ դեպքում կարող են կատարել այն բոլոր պաշտոնները, որոնց հնարավորությունն ընձեռում են նրանց իմաստն ու հոլովաձևերը:

Բերենք մի քանի օրինակներ: «Այլևս ոչ մի խոսք չէր կարող արտահայտել այն զգացմունքը, որը բառ չունի իսկապես, որը խոսում է ավելի պերճ, քան մարդկային բոլոր լեզուները» (Դվ, էջ 205): «Արտադրական բարձր հաջողություններ են հասել գործարանի հիմք հանդիսացող մատակարարող ցեխի հանքագործները, որոնք հոկտեմբերի 15-ին կատարեցին ընթացիկ տարվա պլանը» (ՍՀ, 19/XII 1953, № 273 (9960)):

Այս նախադասություններում ընդգծված դերանունները ենթականեր են և միաժամանակ երկրորդական նախադասությունը կապում են գլխավոր նախադասության հետ:

Բերենք օրինակներ, երբ հարաբերականի դեր կատարող դերանունը միաժամանակ հատկացուցիչ է կամ որոշիչ: «Նրանց մեջ աչքի էր ընկնում Սրվանձտյա իշխան Գարեգինը իր կորիճ երիտասարդի թարմ դեմքով, որի սուր հայացքը և սեղմ շրթունքները ազդում էին մարդու վրա» (Դվ, էջ 279): «Այդ մարդն է Նվարդ Առաքելյանը, որի ամուսինը ռազմաճակատում է» (Անթ., էջ 527): Այդ ծերունին այնպիսի հառնդով էր աշխատում, ինչպիսի հառնդով կաշխատեր քառասմյա պատանին:

Խնդիրների օրինակներ. «Այդ մարդն է ահա, որին մայր հողը հայտնում է իր ընդերքի գաղտնիքը» (Անթ., էջ 527): «Բայց վազում էր այնպիսի մի խելահեղ դոռում-դոչոմով, որից հանդարտ նեղոսը կարող էր սարսափել» (Ն. ա., էջ 523): «Եղել են սպանություններ, պատիժներ, որոնց մասին նա չէր էլ հետաքրքրվել» (Ն. ա., էջ 108): «Ինչո՞ւ նույնը, ինչ սովորեցնում է երկուսին, չսովորեցնի և շատերին» (Ն. ա., էջ 125): «Նայեց դեմքին այնպիսի հայացքով, որով կարծես հայտնում էր. «սա որտեղից լույս ընկավ» (Ն.-Դ., IV, էջ 101):

Պարագաների օրինակներ. «Մեկ տարի առաջ... կառուցվում էր մի չտեսնված հոյակապ ապարանք, որտեղ բնակվելու ու աշխատելու էր պատանի դիտնական Անդրիանը» (Անթ., էջ 533)։ «Տիկին Վերդինեն հեղափոխությամբ, կուսակցական գործերով հետաքրքրվում էր այնքան, որքան դա կապ ուներ իր ամուսնու կյանքի ապահովության հետ» (ն. տ., էջ 106)։ «Վարդան Ղազարյանը, որի հետ մեծամեծ հույսեր էր կապել Մացակը, դարս եկավ մորթատաշտ վախկոտի մեկը» (ն. տ., էջ 186)։ «Եվ ինչքան նրան պարզ պատկերացավ տեղի ունեցածը, այնքան ավելի նա զայրույթով լցվեց Փիրուզ նանի ու Բաբելի դեմ» (ՀՍ, ՀՎ, էջ 179)։ «Սակայն հագիվ փողոցի կեսն անցել էր, երբ նրան կանգնեցրեց կարճ շալվար հագած մի իրանցի» (ԳՍԲ, II, էջ 182)։

Ինչպես տեսնում ենք, բացարձակ անորոշ դերանուններն իր՝ հարաբերականի ֆունկցիա կատարելը չի խանգարում, որ նրանք միաժամանակ լինեն նախադասության անդամ։ Մինչդեռ շաղկապները նախադասության անդամի դեր չեն կատարում. նրանք միայն ու միայն հարաբերելու, շաղկապելու դեր ունեն լեզվի մեջ։

Այնուհետև, չնայած որ և՛ ստորադասական շաղկապները, և՛ բացարձակ անորոշ դերանունները կապում են երկրորդական նախադասությունը պիտավորին, բայց այդ կապի կամ հարաբերության բնույթի ու դրսևորման ձևերի միջև կա զգալի տարբերություն։ Հարաբերականը իր նյութական իմաստի շնորհիվ դերազանցապես ցույց է տալիս կամ ակնարկում է առարկա, հատկանիշ, որն անվանված է պիտավոր նախադասության մեջ։

Օրինակներ. «Հայտնվեցին նաև այլ հոդվածներ, որոնց մեջ խիստ քննադատվում էր Սիահփուշի կառավարությունը» (ԳՍԲ, II, էջ 168)։ «Չեզ չեն բավարարում այն տառապանքները, որոնց ենթարկել եք ինձ» (ն. տ., էջ 173)։ «Օրվա ընթացքում նա պետք է դներ ընդհատակյա կազմակերպության անդամներից մեկին, որի անունը նրան հայտնել էր դոկտոր Ապպին» (ն. տ., էջ 181)։ «Թող ես էլ աշ-

խատեմ այն սրտերի համար, որոնք սիրում են և ցանկանում են սիրազուրկ չլինել» (Մուր., III, էջ 257)։ «Ասենք «տուն» կամ «սենյակ» շատ քիչ սազական էր այն հյուղակին, որ նրան առաջնորդեց սևագանգուր մի պատանի» (ԳՍՔ, II, էջ 190)։ Այստեղ երկրորդական նախադասությունների մեջ գործածված հարաբերական դերանունների առարկայական վերաբերությունները որոշակիորեն արտահայտված են գլխավոր նախադասությունների մեջ. դրանք են՝ հոգվածներ, տառապանքներ, ընդհատակյա կազմակերպության անդամներից մեկը, սրտերը, հյուղակը։

Բացարձակ անորոշ դերանունների հարաբերականի ֆունկցիայի դրսևորման այս յուրահատկությունն, ի տարբերություն շաղկապների, կարևոր է այն պատճառով, որ հաճախ, իսկապես, անհրաժեշտ է լինում գլխավոր նախադասության տեղ գործածված որևէ բառի ցույց տված առարկան, հատկանիշը երկրորդական նախադասության մեջ վերցնել որևէ, մեծ մասամբ այլ հարաբերության մեջ։ Պետք է ենթադրել, որ բացարձակ անորոշ դերանունների այդ ֆունկցիան առաջացել է շնորհիվ հենց այդ անհրաժեշտությունից բխող նրանց գործածությունների, որպիսի հնարավորություն ընձեռում է նրանց բացարձակ անորոշ իմաստը, իսկ հետագայում իր գործածության սֆերայի ընդլայնման հետ միասին ձեռք է բերել որոշ այլ յուրահատկություններ ևս։

Ավելին. գլխավոր նախադասության մեջ արտահայտված որևէ առարկա կամ հատկանիշ կարող է միևնույն բարդ ստորադասական նախադասության կազմի մեջ մտնող մեկից ավել երկրորդական նախադասություններում ցույց տրվել և վերցվել տարբեր հարաբերությունների մեջ։ Այդ տարբեր հարաբերությունները արտահայտվում են միևնույն դերանվան տարբեր հոլովների կամ տարբեր դերանունների միջոցով։

Օրինակներ. «Դու և քեզ հետ էլ շատերն այն երիտասարդներից, որոնք, իրենց ասելով, դիշեր ու ցերեկ ժողովրդի գլխերը դարմանելու վրա են մտածում, որոնց մշտական

դրույցը դիտության վերջին խոսքի, բարձր գաղափարների և ազատ մտքերի համար է լինում, չեն կարողանում հանդուրժել...» (Մուր., IV, էջ 87)։ Այդ նույն թաղամասում, ուր մի ժամանակ չկար նույնիսկ երկհարկանի մի շենք, որը ամենահետամնացն էր ամբողջ քաղաքում, և որտեղից քաղաքի կենտրոն հասնելու համար պետք էր ոտքով մի ժամ հանապարհ գնալ, այժմ բարձրանում են չորս-հինգ հարկանի հոյակապ շենքեր և արդեն գործում են տրամվայներն ու տրոլեյբուսները։ Հարաբերականների այսպիսի գործածությամբ ստեղծվում է երկրորդական նախադասությունների համաստորադասություն պլեսավոր նախադասության նկատմամբ։

Հարաբերականի ցույց աված առարկան կամ հատկանիշը կարող է արտահայտված չլինել պլեսավոր նախադասության մեջ։ Դա լինում է հատկապես այն դեպքում, երբ հարաբերյալը տրամաբանորեն կապվում է պլեսավոր նախադասության ստորոդյալի հետ։ Այս դեպքում հարաբերականները իրենց նախորդ կիրառություններ համեմատությամբ ավելի են մոտենում շաղկապներին, բայց, իհարկե, չեն նույնանում նրանց հետ։

Օրինակներ. «Ով ծարավ է, թող գա» (ԳԱՔ, II, էջ 176)։ «Բայց հաղիվ նա մի քանի քայլ էր արել դեպի հորը, երբ լսվեց մի սուլոց» (Ն. ա., էջ 187)։ «Ինչ ձևաբերն է ընկնում, հետևները բերում են» (Ն. ա., էջ 164)։ «...Ես, ուղղակի, քիչ եմ ցավ զգում, երբ դուք ինձ վրա նայում եք կարեկցությամբ» (Մուր., IV, էջ 333)։

Այստեղ պլեսավոր նախադասություններում կարելի է ավելացնել հարաբերյալներ, բայց դա չէ կարևորը հարաբերականի էությունը որոշելու համար։ Էականն այն է, որ պլեսավոր նախադասության ստորոդյալը լրացման կամ հնթակայի պակաս է զգում, որոնք արտահայտված են երկրորդական նախադասությամբ։ Իսկ հարաբերականները ոչ թե միայն պարզապես կապելու ֆունկցիա են կատարում, այլև իրենց նյութական բովանդակությամբ ակնարկում են

գլխավոր նախադասության ստորոգյալի պահանջած անդամի ինչ լինելը, ստորոդյալի ցույց տված գործողության հատկանիշը ընդհանուր, չտարբերակված կերպով:

Մոտիկությունն ավելի ակնհայտ է մի երկու հարաբերական դերանունների և այն ստորադասական շաղկապների միջև, որոնք առաջացել են առաջիններից: Այսպես, որ շաղկապը երբեմն նույնիսկ կարելի է փոխարինել որը հարաբերական դերանունով, որից և առաջացել է նա:

Օրինակներ. «Հովհաննես կաթողիկոսը, որ չորրորդ օրն էր ինչ գանվում էր այնտեղ, աղոթում էր նույնպես միաբանության հետ» (Մուր., III, էջ 258): «Մանուշները նրան մեկնեց այն գրությունը, որ նա ստացել էր Թեհրանում» (ԳՍԲ, II, էջ 187): «— Գալիս է,—գոչեց մեկը, որ ամենից թեթևաշարժը լինելով, ամենից արագ էր մոտեցել լուսամուտին» (Շիրվ., IV, էջ 12):

Այս օրինակներում որ շաղկապի փոխարեն կարել էր գործածել որը դերանունը: Սակայն որ շաղկապի գործածությունների սահմանները այնքան են նեղացել որը հարաբերականի համեմատությամբ, որ հաճախ դրանք իրար փոխարինել չեն կարող: Նա իրրև շաղկապ ձևոք է բերել մեկնական իմաստ և, զրկված լինելով նյութական բովանդակությունից՝ ցույց չի տալիս գլխավոր նախադասության մեջ անվանված այս կամ այն առարկան:

Օրինակներ. «Ուզում եմ ասել, որ այս աշխարհում մարդիկ մարդկանցով են ապրում» (ԳՍԲ, II, էջ 164): «Ագապին հայտնեց, որ մամուլը որևէ կերպ չարձագանքեց լույս տեսած համարներին» (ն. տ., էջ 167): «Արդեն պարզ է, որ միաբար Ջեկսոնը.... նրան չէր ուզում ընդունել» (ն. տ., էջ 183): «Ես կցանկանայի, որ դու չհանդիպեիր ինձ այստեղ» (Մուր., III, էջ 249): «Այդ դեպքն այնքան տարօրինակ և անակնկալ էր յուր համար, որ նա չկարողացավ հետաքրքրությունը զսպել և լսել նրանց» (ն. տ., էջ 248): «Ես կամեցա անցնել Հովանոցի մոտով այնպես, որ մայր-թագուհին ինձ չտեսնե» (ն. տ.):

Մյուս կողմից՝ որը *հարաբերականի բաղմաթիվ կիրառությունները չի կարելի արտահայտել* որ *շաղկապով։ Դա վերաբերում է* որը *դերանվան և նրա հոդնակիի թեք հոլովներին, ինչպես և հաճախ հոդնակի ուղղականին։*

Օրինակներ. «Նրա դեմքին ահավորություն էին տալիս փոս ընկած աչքերը, որոնց դեղին փայլը սարսուռ էր ազդում դիտողին» (*ՀՍ, Հվ, էջ 167*)։ «Նա ծոցից հանեց երեք հատ դույնդդույն քարեր, որոնցից մեկը նա անվանում էր սատանի եղունգ» (*ն. տ.*)։ «Ստուգելով իր առողջությունն ու ուժը, նշանակեցին այն աշխատանքին, որից նա վատառած՝ այժմ նայում էր այդ աղմկոտ փողոցին» (*ն. տ., էջ 142*)։ «Իսկ այդ պահին նա մաքում դոնե մեկին չդատավ, որի մոտ թաքցներ որդուն» (*ԳՍՓ, II, էջ 268*)։

Որը *հարաբերականի և նրանից առաջացած* որ *շաղկապի ընդհանրություններն ու տարբերությունների այս համառոտ համեմատությունն իսկ ցույց է տալիս, որ թեև երբեմն նրանք մեկը մյուսին կարող են փոխարինել, բայց ունեն էական տարբերություններ, իրենց ֆունկցիայի դրսևորման տարբեր առանձնահատկություններ։ Հենց այդ առանձնահատկություններն են պատճառը, որ թեև* որը *հարաբերականից առաջացել է* որ *շաղկապը, բայց դրա հետևանքով համապատասխան հարաբերականը ավելորդ չդարձավ և և չվերացավ։*

Բացարձակ անորոշ դերանունների հարաբերականի ֆունկցիայի քննարկումից որոշակի երևում է, որ նրանք իրենց այդ ֆունկցիայով յուրահատուկ տեղ են գրավում բարդ սորտպատասական նախադասության կառուցվածքի մեջ և այդ տեսակետից զգալի տարբերություններ ունեն սորտդասական շաղկապների համեմատությամբ։

Մեկ դիտողություն ևս դերանունների՝ նախադասության մեջ ունեցած դերի վերաբերյալ։ Մի շարք դերանուններ երբեմն նախադասության անդամի ֆունկցիա չեն կատարում։ Այդ դերանուններն են այս, այդ, այն, ինչ, ինչպես, այսպես, այդպես, ոչինչ և այլն։

Օրինակներ.

«Այդ մենք ենք գալիս՝

Մաշված բաճկոններ, յուղոտ ու մրոտ» (Անթ., էջ 45):

«Օյ, այս ինչ աննման ծաղիկներ են բացվել պուրակում» (Ա.Ս, ՈՄ, էջ 31): «Ախ, դու իմ դեղեցկուհի, հրճվանքից ծաի է տալիս ելևան.— այս ինչ հրաշալի հասակ է առել» (ն. տ., էջ 32): Ջերանք այն ո՞ւմ են ապատում: «Ելա, այդ ի՞նչ ես անում» (Ա.Ս, ՈՄ, էջ 248): «Դու այդ ո՞ւմ ես նայում» (ն. տ., էջ 321): «Դու այդ ի՞նչ ես ասում, թշնամացե՞լ ես նրա հետ, ինչ է» (ն. տ., էջ 232):

Նախադասության անդամի դեր չկատարող մյուս դերանունները դերազանցապես գործածվում են իբրև միջանկյալ բառեր և արտահայտում են խոսողի այս կամ այն վերաբերմունքը: Քանի որ այդ մասին խոսվում է դերանունների ոճական կիրառությունների բաժնում, ուստի այստեղ նրանց իմաստային կողմը չենք քննում: Նշենք, որ դերանուններն այդպես կարող են գործածվել և՛ առանձին, և՛ անկախ, և՛ կապակցությունների մեջ: Բերենք մի քանի օրինակներ:

«Ի՞նչ ես կարծում, բարեկամ, եթե Սևադան ճանաչած չլիներ քեզ, մի՞թե թույլ կտար, որ դու մնայիր այստեղ՝ այս պաշտոնում:

— Ի՞նչ, մի՞թե նա պետք, որ ես դեռ հավատարիմ եմ Բագավորին» (Մուր., III, էջ 147): «Ի՞նչ, մի՞թե նա այժմ պետք ներկայանա ինձ» (ն. տ., էջ 223): «Ինչ, ուրեմն սրանք վտասեր չէին. ուրիշ ի՞նչ եք կամենում» (Մուր., IV, էջ 46): «— Օ, երբեք, երբեք չպետք մոռանամ սրան:

— Ինչպե՞ս. մայր-Բագուհին հենց առաջին այցելության ժամանա՞կ նվիրեց այդ» (Մուր., III, էջ 63):

«— Բայց հետո չհարցրի՞ր, թե ինչպե՞ս է սկսվել այդ չարաբաստիկ սերը:

— Ինչպե՞ս չէ, հարցրի և նա հետևյալն ասաց» (ն. տ., էջ 54):

«Մի քանի վայրկյան խոսում էին միայն նրա ժպիտից կկոցած աչքերը.

— Այդպես. այս տարի մենք նորից միասին ենք» (ԱՍ, ՈՄ, էջ 26)։

«— Ահ, ես բնավ բեմ դուրս չեմ եկել։

— Ոչինչ։ Կուզես փորձենք» (Շիրվ., IV, էջ 134)։

Ինչպես տեսնում ենք, դերանունների շարահյուսական կիրառությունները, նրանց ֆունկցիաները նախադասության մեջ միօրինակ չեն, այլ բազմազան ու բավականին հարուստ։ Նրանք այդ տեսակետից զգալի յուրահատկություններ ունեն հարաբերակից խոսքի մասերի համեմատությամբ։ Այդ յուրահատկությունները արդյունք են դերանունների խոսքի մասային հատկանիշների, իմաստային բազմազանության, ինչպես և ձևաբանական հատկանիշների անմիօրինակության։

Այստեղից էլ հետևում է, որ թեև շարահյուսությունը քերականության առանձին բաժին է և ունի իր սահմանները, որով տարբերվում է ձևաբանությունից, սակայն սերտորեն կապված է նրա հետ։ Այդ է պատճառը, որ շարահյուսական շատ իրողություններ ճիշտ կարելի է հասկանալ միայն բառի ձևաբանական առանձնահատկությունները հաշվի առնելով։

Ավելին. սերտ միասնություն են կազմում ոչ միայն քերականության այդ երկու բաժինները, այլև լեզվի բառային կազմը և քերականական կառուցվածքը։ Բառի իմաստը կարևոր նշանակություն ունի նրա քերականական և մասնավորապես շարահյուսական առանձնահատկությունների համար։ Դրա պատճառն այն է, որ լեզուն հանդիսանում է մի ամբողջական սիստեմ, որի բաղադրիչ մասերը գտնվում են օրգանական սերտ կապի մեջ։ Իսկ սա նշանակում է, որ լեզվի այս կամ այն բնագավառում (տվյալ դեպքում շարահյուսության բնագավառում) չի կարելի խորը, բազմակողմանի ուսումնասիրություն կատարել և մանավանդ պատճա-

ռաբանել շարահյուսական իրողությունները՝ պարփակվելով այդ բնագավառի սահմաններում: Սա հենց մատերիալիստական դիալեկտիկայի այն կարևոր պահանջն է, ըստ որի երևույթը պետք է ուսումնասիրել ամբողջի հետ ունեցած նրա կապի մեջ: Նվ իսկապես, այդ կապը հաշվի առնելն է հնարավոր դարձնում տեսնելու և պատճառաբանելու դերանունների շարահյուսական մի շարք առանձնահատկությունները:

ԳԼՈՒԽ ՎԵՑԵՐՈՐԴ

ԱՐԴԻ ՀԱՅԵՐԵՆԻ ԴԵՐԱՆՈՒՆՆԵՐԻ ԿԱԶՄԱՎՈՐՈՒՄԸ, ԿԱԶՄՈՒԹՅՈՒՆԸ ԵՎ ԲԱՌԱԿԱԶՄԱԿԱՆ ՆՇԱՆԱԿՈՒԹՅՈՒՆԸ

Ինչպես երևում է սույն գլխի խորագրից, այստեղ մեր նպատակն է քննել արդի հայերենի դերանունները և նրանց նշանակությունը բառագիտական-բառակազմական տեսակետից։ Հասկանալի է, որ այս հարցի քննարկման համար անհրաժեշտ է որոշ չափով դիմել մեր լեզվի պատմական անցյալին։ Աշխատել ենք այդպես վարվել այն չափով, որ-չափով որ դա անհրաժեշտ է արդի հայերենի դերանունների կազմավորման ու կազմության հարցերի քննարկման համար։

Լեզուն անընդհատ փոփոխվում ու զարգանում է։ Դա վերաբերում է լեզվի թե՛ բառային կազմին և թե՛ քերականական կառուցվածքին։ Սակայն զարգացման ընթացքի ու բնույթի տեսակետից դրանց միջև կա այն տարբերությունը, որ, ինչպես հայտնի է, քերականական կառուցվածքն ավելի դանդաղ է փոփոխվում, քան թե բառային կազմը։ Բառային կազմն էլ իր հերթին միօրինակ չէ այս տեսակետից։ Բառային հիմնական ֆոնդի մեջ մտնող բառերը անհամեմատ ավելի դանդաղ են փոփոխվում, քան թե մյուս բառերը։ Դերանունների՝ բառային հիմնական ֆոնդի մեջ մտնելը ինքնին վկայում է այդ և միաժամանակ բխում է այն իրողությունից, որ նրանք՝ դերանունները հիմնականում դալիս են խոր անցյալից։

Եվ իսկապես քննությունը ցույց է տալիս, որ արդի հայերենի դերանունները, բացի մի երկուսից, գոյություն

ունեին դեռևս 5-րդ դարում: Դա են հաստատում ներքոհիշյալ վիմաոերը:

Քերականների կողմից դրաբարում ճանաչվել են հետևյալ դերանունները.

1. անձնական.— ես, դու, նա, ինքն, իւր.

2. ցուցական.— սա, դա, նա, այս, այդ, այն, սոյն, դոյն, նոյն.

3. փոխադարձ.— իրերաց, միմեանց.

4. սեռական.— իմ, քո, իւր, նորա.

5. հարաբերական.— որ.

6. հարցական.— ո՞ (ո՞վ), ի՞, ի՞նչ, քանի՞ [1].

7. անորոշ.— որ, ոմն, իմն, ինչ, այլ, միւս.

8. որոշյալ.— ամենևքին, ամեննևքեան, բոլորևքին, բոլորևքեան, ամենայն:

Ծանոթություն. *Այս դերանունների միայն մի մասը չկա արդի հայերենում: Դրանք են՝ դոյն, ո՞, ի՞, ոք, իմն, քան որում այդ բոլորը չէ, որ իսպառ անհետացել են. ո՞-ն իրև առանձին դերանուն չի պահպանվել թերևս այն պատճառով, որ նրանից վ-ի հավելումով կազմվել է նույն իմաստն ունեցող ով դերանունը: Թեև ոմ-ը այժմ որպես առանձին դերանուն չի գործածվում, բայց պահպանվում է այլ բաղադրություններում (ամեն ոք, ոչ ոք): Դրաբարի դերանուններից մի երկուսն էլ գտնում ենք արդի հայերենում հնչյունական որոշ տարբերությամբ կամ գոնե իրենց արմատական մասով (ամենևքեան — ամենքը և այլն): Իսկ մյուսները, որ կազմում են նշված դերանունների ճնշող մեծամասնությունը, պահպանվում են մինչև օրս: Նշենք նաև, որ սեռականները, ինչպես հայտնի է, արդի հայերենում դերանվան առանձին տեսակ չեն կազմում:*

Սակայն չպետք է կարծել, թե արդի հայերենի մյուս դերանունները չեն եղել 5-րդ դարում և հետո են առաջացել:

1 Քանի բառը դրաբարում դերանուն համարում են քերականներից ջները:

Բանն այն է, որ, ինչպես տեսանք վերևում, անցյալի շատ բերականներ, մասնավորապես դրաբարի քերականները դերանունները դիտում էին որպես դոյականին փոխարինող բառեր, հետևապես նրանք չէին ընդունում այնպիսի դերանուններ, որոնք ցույց են տալիս առարկայի, գործողության հատկանիշ։

Իրականում 5-րդ դարում ավելի մեծ թվով դերանուններ են եղել (դերանվան ժամանակակից, դիտական ըմբռնմամբ), քան ճանաչվել են քերականների կողմից։ Հարկ ենք համարում նշել, որ սրանով մենք բնավ չենք ցանկանում դնել դրաբարի դերանունների կազմի վերանայման հարցը, այլ դա մենք համառոտակի քննում ենք աշխատության այս պլոում առաջադրված հարցի պահանջով միայն։

Հինգերորդ դարում հայերենում կային, բացի վերոհիշյալ դերանուններից, նաև հետևյալները։

Ցուցական դերանուններից կային. այսպէս, այդպէս, այնպէս, նոյնպէս, այսպիսի, այդպիսի, այնպիսի, նոյնպիսի, այսչափ, այդչափ, այնչափ, նոյնչափ, այսքան, այդքան, այնքան, նոյնքան։

«Եւ դի այս այսպէս է՝ ամենեցուն յայտնի է որ կամին հասանել» (Եղնիկ, էջ 9)։ «Թէ արդարև այդ ա՞յդպես իցէ» (ՆԲՀ, I, էջ 80)։ «Եւ այնպէս ուսուցէ զմարդիկ» (ՆԲՀ, I, էջ 92)։ «...Նոյնպէս և չարագործն ի չարն գործելոյ առնու զանուն չարութիանն» (Եղնիկ, էջ 21)։

«Դարձեալ առ այսպիսի ճշմարիտ ասացածս անպատշաճ հարցուածս մատուցանեն. ուստի՞ իսկ բնաւ են, ասեն, այդպիսի անհարթութիւնք» (Ն. ա., էջ 14)։ «Յառաջ քան զայն ոչ եղև այնպիսի մարախ» (ՆԲՀ, I, էջ 92)։ «Ուրեմն արդասիքն ոչ նոյնպիսի մնացին՝ որպես և էինն...» (Եղնիկ, էջ 22)։ «Բաւական է այսչափ» (Խոր., էջ 9)։ «Այլ այն զի՞նչ է առ այդչափ մարդիկդ» (ՆԲՀ, I, էջ 80)։ «...այնչափ զգօնացուցանել զօձս դիտեն...» (Եղնիկ, էջ 45)։ «Այսքան անուանք» (ՆԲՀ, I, էջ 96)։ «Ընդէ՞ր այդքան զանգիտող ես» (Ն. ա., էջ 81)։

«Զերծուսցէ յայնեան վնասուց» (Ն. տ., էջ 92)։ «Նոյնքանօք ճրագարանօք» (ՆԲՀ, II, էջ 411)։

Որոշյալ դերանուններից 5-րդ դարում կային նաև. ամէն, բոլոր, իւրաքանչիւր, իւրաքանչիւր ոք. «Ամէն նմա հնազանդեսցին» (ՆԲՀ, I, էջ 69)։ «Եւ եթէ մօտ ոչ գային, զիա՞րդ միոյ միոյ ըստ իւրաքանչիւր ազգաց անուանս յօրինէր» (Եղնիկ, էջ 48)։ «Ըստ որում իւրաքանչիւր ոք պարտի քաղաքաւարիլ» (ՆԲՀ, I, էջ 875)։ «Վասն որոյ և զբոլոր իսկ զՅոյնս ոչ դանդաղիմ մայր կամ դայեակ ասել իմաստից» (Խոր., էջ 9)։

Հինգերորդ դարում կային նաև ժխտական բնույթի ոչինչ, ոչ ոք դերանունները։ «...յոչընչէ չկարեն ինչ առնել» (Եղնիկ, էջ 19)։ «Մարդասէրն ոչ յումէքէ զարշի, զի բժիշկ է, և ոչ զոք անտես առնէ» (ՆԲՀ, II, էջ 561)։

Քերականների կողմից ճանաչված անորոշ դերանուններից բացի, զրաբարում կային նաև հեռակայները. այլ, այլևայլ, ուրիշ (որիշ), այսինչ, այնինչ, որևիցէ, քանի մի (մի քանի), ինչ ինչ, մի (եառադաս կիրառության դեպքում)։

«Սկսան խօսիլ յայլ և այլ լեզուս» (ՆԲՀ, I, էջ 89)։ «Զայն ինչ բանս» (Ն. տ., էջ 91)։ «Կենդանեացն դէմքն ուրիշք էին» (ՆԲՀ, II, էջ 531)։ «Անձնաւորութեամբ միայն որիշք, իսկ բնութեամբ միացեալ է» (Ն. տ.)։ «Ամս բանի մի լռեաց երկիրն Յուդայ աւուրս բանի մի (Աճ, ԼՔ, II, էջ 413)։ «Ինչ ինչ կերակրոց» (ՆԲՀ, I, էջ 854)։

Ծանոթություն. 1. Որոշ բառն այն ժամանակ կար և նշանակում էր «զատված», «բաժանված». այն դեռևս անորոշ դերանուն չէր։

2. Մի բառը հիմնականում թվական էր, բայց երբեմն՝ հատկապես եռադաս դործածությամբ անորոշություն էր արտահայտում։ «Զօրապլուխ մի եկն առ նահանեկապետի միոյ կին. ոչ եթող մի հնարս՝ առնել նենգութիւն» (Ա. Այտընեան, «Քննական քերականութիւն...», Ա, էջ 84)։

Հարցական-հարաբերական դերանուններից 5-րդ դարում

հանդիպում ենք նաև հետևյալներին. որպիսի, որպէս, որչափ, որքան, երբ, ինչպիսի, ուր։

«Բայց թէ ո՛րպէս կամ ո՛ւր սորա իրք անցին անյիշատակելի, ես ոչ գիտեմ» (Խոր., էջ 112)։ «Ո՞ւր եղիք զնա» (ՆԲՀ, II, էջ 557)։ «Յի՞նչպիսեաց մեղ և յորպիսեաց մեղ եղեալ գոյացաւ» (ՆԲՀ, I, էջ 855)։ «Որքան էր արեգակն, էր ընդ նմա լոյսն» (ՆԲՀ, II, էջ 539)։ «Ո՛րչափ աւուրս երբեմն նստայք անդ» (ն. տ., էջ 536)։ «Ե՞րբ գարձցիս։ Զի ոչ գիտէք երբ ժամանակն իցէ» (ՆԲՀ, I, էջ 671)։

Ինչպես երևում է բերված փաստերից, արդի հայերենի դերանունների ճնշող մեծամասնությունը գոյություն է ունեցել դեռևս 5-րդ դարում։ Սակայն չպետք է կարծել, թե այդ դերանունները սկսած այդ դարից միշտ պահպանվել են ժողովրդախոսակցական լեզվի մեջ (մանավանդ իրենց այդ ձևով) և այդպիսով բնականաբար հասել արդի հայերենին։

Այդ դերանունները արդի հայերենին են անցել հետևյալ ուղիներով. 1. Նրանց մի մասը միշտ էլ պահպանվել է մեր լեզվի թե՛ գրական և թե՛ խոսակցական տարբերակներում (եղել են գրաբարում, միջին հայերենում, Աբարատյան և այլ բարբառներում), ուստի և հասել է արդի հայերենին։ Այդպիսի դերանուններ են՝ ես, դու, նա, ինքն, ամեն, քանի, ինչ, բոլոր, ով, ոչինչ, ուրիշ և այլն։

2. Արդի հայերենի դերանունների մի զգալի մասը ձևով գրաբարյան է։ Դրանք հնչյունափոխված ձևով կան այն բարբառներում, որոնք դեր են կատարել աշխարհաբար գրական լեզվի կազմավորման գործում։ Ժամանակակից հայերենը այդ դերանունները վերցրել է, սակայն ոչ թե պահպանելով բարբառային ձևը, այլ նրանց տալով գրաբարյան ձևը։ Ի միջի այլոց, այդ այդպես էր ոչ միայն դերանունների վերաբերյալ, այլև ուրիշ խոսքի մասերի (համմտ. հեր-հայր, մեր-մայր, փեսա-փայտ և այլն)։

Այդ դերանուններն են. այս, այդ, այն, այսպես, այդպես, այնպես, այսպիսի, այդպիսի, այնպիսի, այսքան, այդքան, այնքան, այսինչ, այնինչ և այլն։

3. Գրաբարյան դերանունների մի մասը ժամանակակից հայերենին է անցել գրական ճանապարհով. յուրաքանչյուր, յուրաքանչյուր ոք, ամեն ոք, երբևէ, երբևիցե, որևէ, որևիցե, սույն, նույն, ոմն, նույնպես, նույնքան, նույնչափ և այլն:

Ժամանակակից հայերենի դերանունների մի շատ փոքր մասը չկար գրաբարում: Ահա այդ դերանունների մոտավոր ցանկը. այստեղ, այդտեղ, այնտեղ, որտեղ, միևնույն, ինքս, ինքդ, մեկ մեկու, մի երկու, մի շարք, քանիերորդ, որերորդ: Սրանք կազմվել են հետագայում բառակազմական տարբեր միջոցներով, որոնց մասին կխոսվի ստորև:

Այժմ անցնենք արդի հայերենի դերանունների կազմության վերլուծությանը:

Արդի հայերենի դերանունների մի մասը արմատական դերանուններ են, որոնք գալիս են վաղ անցյալից: Դրանք են՝ ես, դու, ինքն, սա, դա, նա, որ, ոմն, այլ, ինչ, այս, այդ, այն, սույն, նույն, որ: Եթե պատմական վաղ անցյալի տեսակետից նայենք, կտեսնենք, որ սրանց մի զգալի մասը միատարր չէ (այ-ս, այ-դ, այ-ն, ս-ա, դ-ա, ն-ա, ի-նչ, ո-մն, ո-վ, և այլն): Սակայն այդուհանդերձ դրանք այժմյան լեզվամտածողությամբ չեն բաժանվում բաղադրիչների և դիտակցվում են իբրև արմատ:

Մանրություն. Արմատական կամ պարզ է նաև ողջ դերանունը, որը, սակայն, ի տարբերություն վերոհիշյալների, իբրև դերանուն հին չէ. նա եղել է ածական և վերոհիշյալների համեմատությամբ շատ ուշ է վերածվել դերանվան:

Համեմատաբար մեծ է բարդ դերանունների քանակը: Պետք է նշել, սակայն, որ դերանունների մեջ կան միայն անիսկական բարդություններ. իսկական բարդություններով կազմված դերանուններ չկան:

Այս տեսակետից առանձնապես մեծ է այս, այդ, այն, նույն, որ, ինչ դերանունների դերը, որոնք միանալով պես, բան, չափ, տեղ արմատներին՝ կազմում են անիսկական բարդություններ.

այսպես, այսպիսի, այսքան, այնչափ, այստեղ,
այդպես, այդպիսի, այդքան, այդչափ, այդտեղ,
այնպես, այնպիսի, այնքան, այնչափ, այնտեղ,
նույնպես, նույնպիսի, նույնքան, նույնչափ, նույնտեղ[1]*,*
որպես, որպիսի, որքան, որչափ, որտեղ,
ինչպես, ինչպիսի, ինչքան, ինչչափ, ինչտեղ[1]*:*

Կցականության նույն սկզբունքով են կազմված նաև այսինչ, այնինչ դերանունները: 5-րդ դարի մատենագրության մեջ այս դերանունների բաղադրիչները դեռևս չէին միացել. դրանք հետագայում են վերածվել կցական բարդությունների: Այս և նախորդ բոլոր դերանունները կազմվել են բառակապակցության անդամների սոսկ կցման միջոցով: Ինչպես երևում է, նրանց բաղադրիչներն անցյալում ունեցել են լրացման և լրացյալի հարաբերություն:

Այս բառերից առանձին ուշադրության արժանի է *այսպիսի, այդպիսի, այնպիսի, նույնպիսի, որպիսի, ինչպիսի* բառերի կազմությունը: Ամենայն հավանականությամբ սրանք ծագել են *այսպես, այդպես, այնպես, նույնպես, որպես, ինչպես* բառերի երբեմնի սեռական ձևերից: Քանի որ այս դերանունները գոյություն են ունեցել նաև դրաբարում (այլ բան է, որ չեն ճանաչվել որպես *այդպիսիք*), նշանակում է, որ նրանք որպես բարդ դերանուններ կազմվել են նախադրաբարյան շրջանում: *Այսպես, այդպես, այնպես, նույնպես, ինչպես* դերանունները արդի հայերենում *ցույց են տալիս* դործողության հատկանիշ կամ հատկանիշի հատկանիշ: Հավանաբար դրանք 5-րդ դարից առաջ *ցույց են տվել* նաև առարկայի հատկանիշ կամ միայն առարկայի հատկանիշ և որպես այդպիսիք հոլովվել են, ինչպես դրաբարում ածականներն էին հոլովվում գոյականի հետ դործածվելիս: Այդ դերանունների՝ առարկայի հատկանիշ *ցույց տալը* հայերենի

[1] *Նույնտեղ, ինչտեղ* ձևերը չեն դործածվում ժամանակակից հայերենում: *Նույնտեղ*-ի փոխարեն դործածվում է *նույն տեղ* կապակցությունը, *ինչտեղ*-ի փոխարեն *որտեղ*: Բայց մենք դրանք այստեղ նշում ենք այդ կազմությունների ամբողջությունը իրեն պատկեր *ցույց տալու* համար:

համար արտասովոր բան չէ: Այսպես, Խ. Աբովյանի «Վերք Հայաստանի» վեպում (որը համարվում է Արարատյան բարբառով կամ գոնե հիմնականում այդ բարբառով գրած երկ) առարկայի հատկանիշ ցույց տալու համար գործածված են այսպես, այդպես և նման դերանունները, իսկ այսպիսի, այդպիսի ձևերի չենք հանդիպում: «Ով էր տեսել կամ լսել էապես բաներ» (Ա., I, էջ 23): «Անգամը էապես բաներով լցնելով... ի՞նչ կընդնի մարդի ձեռքը» (ն. տ., էջ 13): «Ամա էապես բաներ՝ վարավուրդ էին արել» (ն. տ., էջ 23): Ծողիք նրանց էապես փորձանքի միջում» (ն. տ., էջ 110): «Էնպես երկնքի տակի ծնվեցիք, որ ձեր աչքը էապես բան չտեսավ» (ն. տ., էջ 111):

Նախագրաբարյան շրջանում այսպես, այդպես և այլն բառերը, առարկայի հատկանիշ ցույց տալուց բացի, հավանաբար սկսել են ցույց տալ նաև գործողության հատկանիշ, հատկանիշի հատկանիշ: Իսկ այդ իրողությունը, այսինքն՝ առարկայի հատկանիշ ցույց տվող բառերի՝ նաև գործողության հատկանիշ ցույց տալը հայերենում շատ սովորական է (օրինակ՝ որակական ածականները): Այդ բառերը ցույց տալով գործողության հատկանիշ՝ չեն հոլովվել, ինչպես չեն հոլովվում մակբայները, և գործողության հատկանիշ ցույց տալու ֆունկցիան դարձել է դրանց (ուղիղ ձևի) ֆունկցիան՝ սկզբում հիմնական, հետո՝ միակ ֆունկցիան: Իսկ առարկայի հատկանիշ ցույց տալու համար սկսել է գործածվել այդ բառերի սեռականը՝ այսպիսի, այդպիսի, այնպիսի, ինչպիսի: Ուրեմն այդ բառերը (այսպես և այլն) դադարել են հոլովվելուց, և լեզվի մեջ քարացած մնացել է նրանց հոլովական ձևերից սեռականի ձևը՝ այսպիսի, այդպիսի և այլն:

Այժմ տեսնենք, թե այսպես և նման բառերի սեռական հոլովը ինչպես կարող էր դառնալ ինքնուրույն դերանուն, դիտակցվել իբրև բառի ուղիղ ձև: Ճիշտ է, այսպես և նման բառերը գոյականի վրա դրվելով ցույց են տալիս նրա որակությունը, իսկ սեռական հոլովում ունեին հատկացուցիչի կամ համեմատյալ դեպք դրան մոտ իմաստ: Արդի հայերենում հա-

մարյա միևնույն իմաստն ունեն, օրինակ՝ «այս տեսակ մարդ» և «այս տեսակի մարդիկ», «այստեղ ջուրը *սառն է*» և «այստեղի ջուրը *սառն է*», «այսor եղանակը *լավ է*» և «այսorվա եղանակը *լավ է*» և այլն: Եթե տեսակ, այստեղ, այսor *բառերը* զրկվելին հոլովվելու հատկանիշից, տարօրինակ չէր լինի, որ դրանց սեռականի ձևերը պահպանվելին իբրև որոշիչներ, իբրև առարկայի հատկանիշ ցույց տվող բառեր, մանավանդ, եթե դրանց ուղիղ ձևերը ձեռք բերելին նոր իմաստ և կիրառություն: Հենց հայերենում հայտնի են փաստեր, երբ *բառի* սեռականի ձևը դադարում է իբրև սեռական գիտակցվելուց և գործածվում է իբրև հատկանիշ ցույց տվող բառ, իբրև որոշիչ (նախադասության մեջ): Այդպիսի բառեր են՝ փայտի *(դուռ)*, կաղնի *(ծառ)* և այլն: Նույն եղրակացության օգտին է խոսում նաև այն փաստը, որ այդ դերանուններնը հոլովվում են փոխանուն սեռականների պես, այսինքն ստանում են երկու հոդ՝ ն և ը:

Ուղղ.	*այսպիսինը*	*այդպիսինը*	*Համմտ.*	*Արամինը*
Ս.	*այսպիսինի*	*այդպիսինի*		*Արամինի*
Բ.	*այդպիսինից*	*այդպիսին'ց*		*Արամինից*

և այլն:

Այսպիսի, այդպիսի, այնպիսի, նույնպիսի, ինչպիսի *դերանունները* ծագումով այսպես, այդպես, այնպես, նույնպես, ինչպես *դերանունների* սեռականի ձևերը լինելու պատճառով պահպանում են սեռական հոլովի իմաստային յուրահատկությունը, որի հետևանքով էլ սովորաբար բայի վրա դրվել և պարագայի պաշտոն կատարել չեն կարող: Այսպիսի և նման դերանունների՝ գործողության հատկանիշ ցույց չտալու իրողությունը մի անգամ ևս հաստատում է մեր վերհիշյալ եղրակացության ճշտությունը, որ նրանք ծագումով սեռականի ձևեր են: Իսկ սեռական հոլովը ցույց է տալիս «իրենց փոխհարաբերության մեջ չշարժվող, շարժում չարտահայտող առարկաների հարաբերություն (ընդգծումն իմն է — *Ս. Ա.*)[1] այդ պատճառով սովորաբար չի դրվում բայի

[1] Գ. Սևակ, *Ժամանակակից հայոց լեզվի դասընթաց, 1955, Երևան, էջ 261:*

վյա, չի կապվում գործողության հետ (այլ է կողմնակի ենթակայի ֆունկցիան)։

Դերանունների մեջ կան այլ կցական բարդություններ ևս, ինչպես՝ երբևէ, որևէ, երբևիցե, որևիցե, միևնույն, մյուս։ Սակայն սրանք բոլորը միևնույն տիպի կապակցություններից չեն առաջացել. որևէ, որևիցե, երբևէ, երբևիցե բառերն առաջացել են որ և է, որ և իցե, երբ և է, ինչ և իցե շարահյուսական կապակցություններից։ Միևնույն դերանունն առաջացել է մի և նույն կապակցությունից, որի բաղադրիչները նույնիսկ մինչև XIX դարը դեռևս չէին կցվել։ Մյուս դերանունը կազմվել է մի ևս կապակցությունից։

Կցականների շարքը պետք է դասել նաև փոխադարձ միմյանց, մեկմեկի, մեկմեկու դերանունները։ Սրանցից առաջինը կազմված է մի, վերջին երկուսը՝ մեկ արմատի կրկնությամբ։ Միմյանց դերանունն անհամեմատ ավելի հին է, քան թե մյուսները։

Փոխադարձ դերանուններից իրար-ի կազմությունը մինչև հիմա պարզված չէ։ Ահա թե ինչ է գրում պրոֆ. Հ. Աճառյանն այդ մասին։ «Իրեարք բառի ծագումը հայտնի չէ. անշուշտ կազմված է եար մասնիկով (ինչպես որեար), բայց անծանոթ է իր։ Ոմանք իր-ը համարում են իւր ձևից, բայց իւ>ի փոփոխության ուրիշ օրինակ չունենք. ինչպես իրեար-ի ուղղականը, նույնպես և եզակի իրեար ավանդված չեն մեզ։ Հետմեսրոպյան շրջանում ազատորեն գործածվում է եզակի ձևը, ինչ. քաղաքը ընդ իրեար անկանին»[1]։

Միևնույն արմատի կրկնությամբ են կազմված նաև ինչ-ինչ, այլևայլ դերանունները։ Ինչպես տեսնում ենք, դրանց միացման եղանակները տարբեր են։ Վերջինի բաղադրիչները միանում են և շաղկապով, հետևապես՝ այդ կցականը առաջ եղել է բաղհյուսական բարդություն, իսկ մյուս դերանվան բաղադրիչները միացած են առանց այդպիսի միջոցի։

---

1 Հ. Աճառյան, Լիակատար քերականություն հայոց լեզվի, հտ. II, Երևան, 1954, էջ 119։

Ժխտական բնույթի դերանունները յուրահատուկ կազմություն ունեն. դրանք կազմվում են ոչ, ինչ, մի (մեկը) բազադրիչներից՝ սկզբից ավելացվելով ոչ՝ ոչ ոք, ոչինչ, ոչ մի (ոչ մեկը): Ինչպես երևում է, սրանցից միայն մեկի բաղադրիչներն են միացել (ոչինչ):

Ամեն ինչ, ամեն ոք, յուրաքանչյուր ոք դերանունները կազմված են երկու դերանունների (ոք-ը անորոշ դերանուն էր դրաբարում) կապակցությունից, որոնք չեն կրկնել իրար:

Դեռևս անջատ են նաև մի երկու, մի շարք դերանունների բաղադրիչները: Սրանք կազմված են մի անորոշ դերանունից և առաջինը՝ երկու թվականից, մյուսը՝ շարք գոյականից, որոնք երկուսն էլ, սակայն, այդ կապակցությունների մեջ իրենց ինքնուրույն իմաստը կորցրել են: Մի անորոշ դերանունը երբեմն կարող է դրվել թվականների վրա և արտահայտել մոտավորության իմաստ (օր. մի հատ նշանակում է՝ մոտավորապես քսան, մի հարյուր՝ մոտավորապես հարյուր): Սակայն այլ է, երբ մի-ն դրվում է երկու թվականի վրա: Ինչպես ասվել է վերևում (էջ 151—152), այս բաղադրյալը (մի երկու) չի նշանակում «մոտավորապես երկու», քանի որ երկրորդ բաղադրիչն այլևս «երկու» չի նշանակում. «մի երկու» ունի մոտավորապես «մի քանի» դերանվան իմաստ, այն տարբերությամբ միայն, որ վերջինիս համեմատությամբ ավելի փոքր քանակ է ցույց տալիս: Մի շարք կապակցությունը, որի երկրորդ բաղադրիչը կորցրել է իր հոսքի մատային հատկանիշը թե՛ իմաստային և թե՛ ձևաբանական տեսակետից (մանրամասն տես էջ 152), ձևով է բերել մեկ բառի նշանակություն. նա քանակի իմաստ արտահայտող անորոշ դերանուն է:

Վերոհիշյալ կազմություններից առանձնանում է ինչ–որ անորոշ դերանունը, որի առաջին բաղադրիչը դերանուն է, երկրորդը՝ շաղկապ: Սակայն վերջինս զրկվելով իր իմաստից ու ֆունկցիայից, միացել է նախորդ բառին՝ ինչ դերանվանը:

Դերանուններին հատուկ չէ ածականով կազմվելը: Միայն

—երորդ ածանցն է, որ դրվելով բանի, որ դերանունների վրա՝ կազմում է բանիերորդ, որերորդ: Ամբողջ դերանվան երկրորդ բաղադրիչը ողջ բառն է: Իսկ. ամբ-ի ծագումը դեռևս ճշգրիտ կերպով հայտնի չէ: Պրոֆ. Հ. Աճառյանի մեկնությամբ ամբ մասնիկը, որ հնչյունափոխված ձևով (ըմբ) կա ըմբոստ բառի մեջ, նախապես նշանակում էր «երկոքեան, երկուսն էլ» [1]:

Մենք դերանունը ծագում է մեծ ձևից՝ և աճականի ավելացումով: Ով դերանունը կազմված է ո արմատից՝ վերջից վ-ի հավելումով: «Ո՞ և ո՞վ միևնույն բառերն են. բուն ձևն է ո, որ ծագում է հնխ. KwOS ձևից՝ նախաձայն Kw-ի անկումով: Սկզբում բնականաբար ո ընդհանուր գործածություն ուներ, հետո ձայնավորի մոտ պատահած ժամանակ՝ ներդաշնակության համար (հոդանջից խուսափելու նպատակով) ավելացավ վ բաղաձայնը, իսկ ո՞ միայն բաղաձայնների մոտ: Այսպես՝ ո՞ գիտե, ո՞ գնաց, ո՞ խօսէր, բայց ով ասէ, ո՞վ արար, ո՞վ է: Այնուհետև՝ երկուսի դանազանությունը չփոթվեց, սկսեցին խառն գործածվել, մինչև որ ո՞վ ձևը հաղթանակելով ընդհանուր դարձավ» [2]: Հայտնի է, որ մինչև այժմ էլ Ղարաբաղի, Հաղրութի, Մեղրու բարբառներում կան այդ դերանվան երկու ձևերը՝ վ-ի հավելումով և առանց վ-ի, պայմանավորված նրանով՝ հաջորդ բառը ձայնավորո՞վ է սկսվում, թե՞ ոչ: Օր. հո՞ւվ ա ըսէս. հուվ էլ կյա, տուք հուվ ըք, բայց՝ հու խօ՞սից, հու կե՞րավ:

***

Դերանունների բառակազմական նշանակության հարցը կարևոր է իրրև մեր լեզվի բառային կազմի՝ դերանունների հետ անմիջականորեն կապված մի ոչ մեծ մասի ուսումնասիրություն: Այստեղ մենք փորձում ենք պարզել, թե ինչ

[1] Հ. Աճառյան, Հայերեն արմատական բառարան, հտ. Ա, էջ 204:

[2] Հ. Աճառյան, Լիակատար քերականություն հայոց լեզվի, հտ. II, Երևան, 1954, էջ 389:

նշանակություն և առանձնահատկություններ ունեն դերանունները մեր բառապաշարի հարստացման գործում: Հետաքրքրական է, որ բառակազմական դերի տեսակետից և դերանունները զարմանալի չափով անմիօրինակ են:

Այս հարցը քննենք ըստ դերանունների տարբեր տեսակների:

Անձնական դերանուններից բառերի կազմությանը մասնակցում են իմբ, ինչպես և քիչ չափով ես դերանունը: Դու, ես[1], իմս, իմդ դերանուններով բառեր չեն կազմվում:

Նույն տեսակի դերանունների մեծ մասի այդքան պասիվությունը, իսկ մյուս երկուսի մասնակցությունը (հատկապես մեկի՝ իմբ, ակտիվ մասնակցությունը) այդ հարցում, չի կարող լինել պատահականության արտահայտություն: Նշենք, որ այլ լեզուներում ևս առկա է այդպիսի անհամաչափություն: Այսպես, ռուսերենում я, ты, он դերանուններով բառեր չեն կազմվում[2], իսկ сам դերանունը շատ ակտիվ է այդ հարցում: Ուշակովի խմբագրությամբ հրատարակված «Толковый словарь русского языка» բառարանում տեղ է գտել сам արմատով կազմված 256 բառ: Գերմաներենում ich, du, er, es դերանուններով բառեր չեն կազմվում, բայց իմքն, сам բառերի իմաստն ունեցող selbst բառով կազմված են մեծ քանակությամբ բառեր:

Ինչպես ասվեց, ես դերանունով կազմվում են սահմանափակ թվով բառեր: Դրանք են՝ եսական, եսականություն, եսամոլ, եսամոլություն, եսապաշտ, եսապաշտություն, եսասեր, եսասիրություն:

---

[1] Նաև բառը կազմված է նա ցուցականից:

[2] Վ լ ա դ ի մ ի ր Դ ա լ ի „Толковый словарь живого великорусского языка" (1955. Москва, հտ. IV, էջ 670) աշխատությունում հիշատակված են якать, янькать, якала, яньк. яканье բառերը որոնք կազմված են я դերանունով, բայց սակավաթիվ են և սակավ գործածական:

Ինքն *դերանունով կազմվում են հետևյալ բառերը.*

ինքնաբար
ինքնաբավ,-ություն
ինքնաբավական,-աբար, -ություն
ինքնաբեր,- աբար,- ական, -ումն
ինքնաբնակ
ինքնաբուխ
ինքնաբողբոջ
ինքնաբորբոք
ինքնաբուխ
ինքնագիտակցություն
ինքնագիր
ինքնագյուտ
ինքնագլխություն
ինքնագլուխ
ինքնագնաց
ինքնագոհ,-աբար,-ություն
ինքնագոյ
ինքնագով,-ություն
ինքնագործ,-ունեություն, -ություն
ինքնագրություն
ինքնագամ
ինքնագամատալարտություն
ինքնագիր
ինքնաեռ
ինքնագարգացումն
ինքնագննական
ինքնագննություն
ինքնագոր,-ություն
ինքնաթիռ
ինքնալուսյա
ինքնալուր
ինքնախաբ,-եական, -եություն
ինքնախոհ
ինքնախորհուրդ
ինքնախուսի
ինքնախոս,-ություն
ինքնածին
ինքնակա
ինքնակալ,-ական, ություն,-ուհի
ինքնակամ,-որեն,- ություն
ինքնակաց,-ություն
ինքնակենսագրություն
ինքնակերալ
ինքնակիրթ
ինքնակոչ,-ություն
ինքնակործան
ինքնակրթական
ինքնակրթություն
ինքնահալած
ինքնահաճ,-ո,-ություն
ինքնահայաց
ինքնահաս
ինքնահարված
ինքնահավան,-ություն, -որեն
ինքնահիմն
ինքնահյուս
ինքնահնար
ինքնահոժար,-ություն,

ինքնահոգող
ինքնահոս
ինքնաձևադիր
ինքնաձև, -ություն
ինքնաճանաչ, -ություն, -ումն
ինքնամատույց
ինքնամոլոր, -ություն, -ումն
ինքնամոռաց, -ություն, -ումն
ինքնամուխ
ինքնամփոփ, -անալ, -ություն
ինքնաներգործություն
ինքնանման
ինքնանվեր
ինքնաշարժ, -աբար, -ական, -ություն
ինքնաշխատություն
ինքնապահություն
ինքնապահպանություն
ինքնապայթուցիկ
ինքնապանծ
ինքնապաշտպան, -ական, -ություն
ինքնապատրաստ
ինքնասաց
ինքնասեր
ինքնասիրաբար
ինքնասիրական
ինքնասիրություն
ինքնասուն
ինքնատպան
ինքնատաճեղծ
ինքնավայելուչ
ինքնավառ
ինքնավար, -ական, -ություն
ինքնավարժ, -ություն
ինքնավարտ
ինքնավիկա
ինքնավստահ, -աբար, -որեն, -ություն
ինքնատես
ինքնատիպ, -որեն-ություն
ինքնատիրումն
ինքնարժեք
ինքնարհամարհություն
ինքնարձակ
ինքնափայլ
ինքնաքննադատ, -աբար, -որեն, -ություն
ինքնին
ինքնիշխան, -աբար, -ական, -ություն
ինքնորոշում
ինքնուիություն
ինքնուս
ինքնուրույն, -աբար, — -ություն
ինքնօգնություն
ինքնօրինակ

Ան նախածայով կազմվում են անիմաստներ, անիմաստություն:

Ինքն, ես դերանուններին, ի տարբերություն մյուս անձնական դերանունների, ոչ միայն թվով բառեր կազմելու հնարավորությունը պետք է բացատրել նրանով, որ դրանք (ինքն, ես) բարդ ածանցավոր բառերի մեջ հանդես չեն գալիս իրենց դեմքի իմաստով: Այսպես՝ եսապաշտ, եսամոլ, եսասեր և նման բառերի մեջ ես դերանունը առկա չէ իբրև հատկապես առաջին դեմք ցույց տվող բառ, այլ նա այդպիսի դեպքերում ունի «սուբյեկտ», «անհատ», «անձ» իմաստը:

Նույնը վերաբերում է նաև ինքն դերանունով կազմված բառերին, որոնց մեջ ինքն արմատը հատկապես երրորդ դեմքի իմաստ չի արտահայտում: Այսպես՝ ինքնախաբեություն, ինքնազոհ, ինքնակամ, ինքնահաճո, ինքնավստահ և նման մյուս բառերը իմաստով չեն կապվում հատկապես երրորդ դեմքի հետ: Դրանք կարելի է գործածել հավասարապես բոլոր դեմքերի վերաբերմամբ, թեև դրանց մեջ մտնող ինքն դերանունը արդի հայերենում անկախ գործածվելիս երրորդ դեմքի իմաստ ունի:

Իսկ որտեղի՞ց է գալիս այդ հնարավորությունը: Բանն այն է, որ այդ բարդությունները կազմության իրենց սկզբունքով, դրանց մեջ մտած ինքն դերանվան հատուկ իմաստով, և ի վերջո, այդ բարդությունները ճնշող մեծամասնությամբ գալիս են դրբարբից: Իսկ դրբարբում ինքն դերանունն այլ իմաստ ուներ: Այն սաստկական իմաստ էր արտահայտում և կարող էր գործածվել բոլոր դեմքերի դերանունների հետ՝ դեմքը շեշտելու համար. ես ինքն, դու ինքն, նա ինքն (համմտ. ռուս. я сам, ты сам, он сам): Ստացվում է, որ ինքն, ես դերանուններով բառեր կազմելու հնարավորությունը պայմանավորված է քերականական դեմքի իմաստի բացակայությամբ՝ այդ կազմությունների մեջ: Իսկ սա նշանակում է, որ անձնական մյուս դերանունների՝ բառեր կազմելուն խանգարում է քերականական դեմքը:

Նշենք, որ կան յուր արմատով մի շարք բարդ բառեր ևս, որոնց մեջ յուր-ը նույնպես չունի երրորդ դեմքի իմաստ: Այդ բառերն են՝ յուրակերտ, յուրակերպ, յուրահնար, յուրահոգի,

յուրային, յուրանման, յուրաշեն, յուրատեսակ, յուրացնել, յուրացում, յուրովի, յուրովանն, յուրօրինակ և այլն:

Յուցական դերանուններ*ը բառակազմության տեսակետից շատ պասսիվ են: Յուցական դերանուններից, որոնք ամենամեծն են իրենց քանակով, միայն մի քանիսն են, որոնցով կարելի է կազմել բառեր, այն էլ շատ սահմանափակ թվով: Այսպես, այս, այդ, այն դերանուններով կազմվում են հետևյալ բառերը.*

այսինքն, այսօր, այսուհետև, այսուամենայնիվ.
այդուամենայնիվ, այդուհանդերձ.
այնուամենայնիվ, այնուհետև, այնուհանդերձ:

Որոշ բառարաններում հանդիպում են այսօրինակ, այդօրինակ, այնօրինակ, նույնօրինակ *ձևերը, որոնք, սակայն, արդի հայերենում համարյա չեն գործածվում:*

Նույն *դերանունով կազմված կան* նույնաբար, նույնանալ, նույնանման, նույնանիշ, նույնիսկ, նույնություն *և այլն: Յուցական դերանուններով են կազմված նաև* այստեղացի, այդտեղացի, այնտեղացի *բառերը:*

Միմյանց, մեկմեկի, մեկմեկու փոխադարձ դերանուններով *բառեր չեն կազմվում: Փոխադարձներից միայն իրար դերանունով կազմվում են* իրարամերժ, իրարանցում *բառերը:*

Հարցական-հարաբերական դերանունների *ճնշող մեծամասնությամբ բառեր չեն կազմվում: Սահմանափակ թվով բառեր են կազմվում* երբ, ինչ, բանի *դերանուններով.*

երբեմն, երբեմնապես, երբեմնի, երբեք.
ինչանոց, ինչացու, ինչավարի.
քանիական, քանիապատիկ, քանիսանոց, քանիցս:

Որ *դերանունով միայն մեկ բառ ունենք՝* որովհետև:

Որոշյալ դերանուններից *բառակազմական ակտիվ դեր է կատարում ամեն դերանունը, մի քանի բառեր կազմվում են ամբողջ և բոլոր դերանուններով: Ժխտականներից ոչինչ դերանունով է միայն, որ կարող են մի քանի բառեր կազմվել:*

Ամեն *վերջածանցով կազմված բառերն են.*

ամենաբաղձ
ամենաբաշխ
ամենաբամ
ամենաբիծ
ամենաբույժ
ամենաբույծ
ամենաբույս
ամենաբուվ
ամենաբուրյան
ամենագետ
ամենագիտակ
ամենագիտություն
ամենագլուվ
ամենագյուտ
ամենագոյ
ամենագույն
ամենագործ
ամենագրավ
ամենադավ
ամենադեմ
ամենադան
ամենադարդ
ամենադզի
ամենադնին
ամենաժողովրդ
ամենալի
ամենալիր
ամենալից
ամենախայտ
ամենախնամ
ամենածախ
ամենածաղիկ
ամենածին
ամենածնող
ամենակատար
ամենակեղ
ամենակեր
ամենակերակրիչ
ամենակերպ
ամենակերտ
ամենակեցույց
ամենակիր
ամենակործան
ամենակուլ
ամենահակառակորդ
ամենահամ
ամենահամբավ
ամենահայաց
ամենահաս
ամենահատ
ամենահավաք
ամենահնար,-ություն
ամենահուչակ
ամենաձայն
ամենաձև
ամենամիթ
ամենամուխ
ամենահաղթ
ամենանկատ
ամենաշիջույց
ամենաշնորհ
ամենաչարչար
ամենապահ
ամենապատիր

ամենապատճառ
ամենապատշաճ
ամենապարզև
ամենապարծ
ամենապարտ
ամենապետ
ամենազորություն
ամենասեր
ամենասպառ
ամենաստեղծ
ամենասփյուռ
ամենավաճառ
ամենավար
ամենատար
ամենատարած
ամենատես
ամենատունկ
ամենատուր
ամենափորձ
ամենաքնին
ամենունակ
ամենուսույց
ամենուրեք
ամենօրյա
ամենօրինակ
ընդամենը

Ծանոթություն. *Այս բառերի մեջ ամեն բազադրիչը չպետք է շփոթել ամենա — նախածանցի հետ, որը թեև ծագում է ամեն բառից, բայց իմաստով տարբերվում է նրանից. ամեն-ը այդ բարդություններում նյութական իմաստ ունի, նշանակում է «ամեն ինչ», իսկ ամենա-ն նյութական իմաստից զրկված է և կազմում է ածականի դերադրական աստիճան:*

Ինչպես ասվեց, ամբողջ *դերանունով կազմված բառերի քանակը մեծ չէ. դրանք են՝ ամբողջանալ, ամբողջապես, ամբողջացում, ամբողջացուցիչ, ամբողջովին և այլն:*

Ոչինչ *դերանունով կազմվում են հետևյալ բառերը.* ոչընչական, ոչնչանալ, ոչնչացումն, ոչնչացուցիչ, ոչնչություն. բոլոր *դերանունով են կազմված* բոլորովին, բոլորանվեր:

Ոչ *բառով հայերենում կան բարդ և ածանցավոր բառեր: Սակայն դրանց մեջ ոչ արմատը դերանուն չէ, այլ ածական՝* ոչխարություն, ոչխախոն, ոչխամիտ *և այլն:*

Անորոշ դերանուններից *բառակազմական նշանակություն ունի միայն այլ-ը և քիչ չափով՝ դրանով կազմված այլևայլ դերանունը: Այդ բառերն են՝*

այլաբան,-աբար,-ական, -ել,-ութիւն,-որեն
այլաբար
այլաբարբառ
այլաբարո
այլաբնութիւն
այլաբուժ
այլաբուժ-ական,-ութիւն
այլաբուն
այլագոյ
այլագոյն
այլագուն,-ել,-ութիւն
այլագաւան,-ութիւն
այլադեմ
այլալան,-ութիւն
այլազգ,-աբար,-ի, -ութիւն,-ուհի
այլազն
այլազգութիւն
այլալեզու
այլախոհ
այլախորհ
այլախոս
այլածին
այլածնութիւն
այլակարծիք
այլակերպ,-ել,-ութիւն -ումն
այլակրօն,-ութիւն
այլահամ,-ել
այլահաւատ
այլահնչիւն
այլաձայն
այլաձև,-ել,-ութիւն
այլաղանդ
այլամերժ,-ութիւն,-ումն
այլանալ
այլայլել
այլայլելի
այլայլութիւն
այլայլումն
այլանդակ,-աբար, -ատեսիլ,-ել,-ութիւն, -ումն,-որեն
այլանմման
այլանշան
այլանուն
այլաշարժ
այլաչյա
այլապաշտ,-ութիւն
այլապատուղ
այլասաց
այլասեռ,-ել,-ութիւն, -ումն
այլասեր,-ել,-ութիւն, -ումն
այլասիրական
այլասնունդ
այլատարազ,-ութիւն
այլատարբ
այլատեաց
այլատեսակ
այլատերև
այլատեցութիւն
այլատոհմ,-իկ

այլացեղ, -ություն	*այլընկալ*
այլափոխ, -ել, -իկ, -ություն, -ումն	*այլիմաստ*
այլև	*այլուր*
այլևայլ, -ություն	*այլօրինակ, -ապար*
այլևս	*անայլակերպ*
	անայլափոխ

Ա.ն ժխտական նախածանցը կարող է միանալ հատկապես այլայլ-ով կազմություններին. անայլայլ, անայլայլաբար, անայլայլական, անայլայլելի և այլն:

Վերոհիշյալը հանդիպնում է հետևյալին. դերանունների միայն մի փոքր մասն է, որով կարող են բառեր կազմվել: Ըստ որում դրանցից մի երկուսով (հատկապես՝ ամեն, այլ, ինքն) կազմվում են համեմատաբար մեծ թվով բառեր: Դերանունների մեծ մասով բառեր առհասարակ չեն կազմվում:

Հատկանշական է, որ բարդությունների մեջ դերանունը սովորաբար լինում է առաջին բաղադրիչը: Դա երևում է վերոհիշյալ բառաշարքերից:

Այս կապակցությամբ պետք է նկատի ունենալ, որ դերանուններով կազմված մի քանի բառերի սկզբից կարող է միանալ ան նախածանցը, ինչպես՝ անայլայլ, անայլայլելի, անինքնասեր, անինքնապաշտ և այլն: Բայց այստեղ էլ ան նախածանցն իր վրա կրող բառի առաջին բաղադրիչը դարձյալ դերանուն է: Միակ բացառությունը, որքան մեզ հաջողվեց պարզել, արդի հայերենում ընդամենը բառն է, սրա առաջին բաղադրիչն էլ նախդիր է: Այնպես որ դերանունով կազմված բարդ բառերի մեջ դերանվան՝ առաջին բաղադրիչ լինելը օրինաչափական երևույթ է:

Ուշադրության արժանի է դերանունների նաև հետևյալ առանձնահատկությունը բառակազմական տեսակետից: Զգալի թվով դերանուններ, թեև արմատական բառեր են և բազմաթիվ դարեր է, ինչ գոյություն ունեն, ինչպես տեսանք վերևում, բառակազմական դեր չեն կատարում: Այս տեսակետից նրանք տարբերվում են բառային հիմնական ֆոնդի մեջ մտնող այլ բառերից, օրինակ, գոյական արմատական

բառերից: Նշանակում է, որ բառակազմական ակտիվ դերի համար բավական չեն բառի արմատական լինելը ու դարաւոր գոյությունը:

Դերանունների բառակազմական նշանակության մասին ամբողջական պատկեր կազմելու համար անհրաժեշտ է կանգ առնել մի հարցի վրա ևս: Մի շարք դերանուններ միանալով այլ բառերի՝ կազմում են բառակապակցություններ, որոնք հաճախ այս կամ այն չափով զրկվում են իրենց բառացի իմաստից և ձեռք բերում նոր՝ ոճական նշանակություն: Այդ մասին մանրամասնորեն կխոսվի հաջորդ պրկում: Այստեղ, սակայն, ուզում ենք նշել, որ այդպիսի կապակցությունները ժամանակի ընթացքում կարող են ձեռք բերել մեկ բառի նշանակություն: Բազդդրյալ կազմությամբ բառեր կարելի է համարել հետևյանները՝ ինչ խոսք, ով գիտե, փոքր ինչ, բայց և այնպես, այնպես որ և այլն: Ծանոթանանք սրանց առանձին-առանձին: Այնպես որ կապակցության մեջ, որն արդեն վերածվել է ստորադասական շաղկապի, թե՛ դերանունը և թե՛ շաղկապը զրկվում են իրենց հիմնական իմաստից, ու երկուսը միասին ձեռք բերում հետևանքի կամ բացատրական հարաբերության իմաստ, նշանակում են «ուստի», «այդ պատճառով», «դրա հետևանքով»: «Հյուրեր շատ էին լինում և հաճախ. այնպես որ՝ Սաթոն հենց սկզբից դործից աչք չէր բաց անում» (Անթ., էջ 69): «Մարդ չէր նայում, այնպես որ եղած-չեղած մեկ էր» (Ն.-Դ., I, էջ 152): «Պատրիկյանը իբրև պարապ մարդ և իբրև ձրի աշխատակից, համարատան ամենօրյա այցելուն էր. այնպես որ քարտուղարն ու նա, որոնք մտերիմ բարեկամներ էին, այլևս չէին բարևում իրար տեսնելիս» (Ընտ. էջեր, էջ 726):

Բազադրյալ շաղկապ պետք է համարել նաև բայց և այնպես կապակցությունը, որի մեջ, դերանունից բացի, կարևոր դեր է կատարում նաև բայց շաղկապը: Այն գործածվում է հակադրությունների ժամանակ, հակադրության հարաբերություն է արտահայտում, նշանակում է «չնայած դրան», «այնուամենայնիվ», «բայց», «սակայն»: Օրինակներ՝ «Ամառային ան-

տանելի եղանակը փոքր ինչ կոտրվել էր, բայց և այնպես անշարժ օդը հագեցած էր արևից կիզված փոշու ծանր հոտով» (Ն.-Դ., I, էջ 133)։ «Օրեր ու շաբաթներ խաչերի դռանն անց կացրին... Բայց և այնպես ոչինչ, ոչինչ չօգնեց» (Ն. տ., էջ 109)։ «Նա թել էր մանում, հինա դործում... բայց և այնպես նրա վաստակածն այնքան քիչ էր, որ հազիվ բավականացնում էր տան վարձը տալու ու ցամաք հաց առնելու» (Ն. տ., էջ 193)։

Ինչ դերանունը փոfr ածականի վրա դրվելով՝ կազմել է փոfr ինչ կապակցությունը։ Օրինակներ. «Ես նայեցի ու փոfr ինչ հեռու, ճամփի վրա, սեսա մի փոքրիկ ճնճղուկ, որի կոուցի շուրջը դեղին էր» (Տուրգենև, «Ճնճղուկ»)։ «Անշուշտ դրա համար ես պարտական եմ քո զիջող, սիրող բնավորությանը և խելոք հարստությանը, որով կամենում էիր ինձ դոնե փոfr ինչ խելքի բերել» (Ն.-Դ., I, էջ 24)։ «Այդ բանը մեզ համար պարզ կլինի, եթե մենք փոfr ինչ ավելի ուշադրությամբ քննենք հիշյալ հնչյունափոխությունների յուրաքանչյուրի բովանդակությունը» (ԷՐԱ, Լն, էջ 188)։ «Վարդենի լույջ դեմքի կնճիռները փոfr ինչ բացվեցին» (Ար., էջ 457)։

Փոfr ինչ կապակցության մեջ ինչ դերանունը արտահայտում է անորոշ մի դերանվան իմաստ, և հաճախ դրանցից մեկի փոխարեն կարող է գործածվել մյուսը։ Համմտ. «Նա մի փոfr զրուցելուց հետո հրաժեշտ տվեց ծերունուն» (Ար., էջ 465)։

Ինչ–ը կապակցվելով փոfr բառի հետ՝ բացի նրան իմաստային հիշյալ երանգը տալուց, միաժամանակ զգալի դեր է կատարում նրա շարահյուսական ֆունկցիայի հարցում։ Եթե փոfr բառը առանձին վերցրած գործողության հատկանիշ ցույց տալ չի կարող, հետևապես և չի կարող դրվել բայի վրա, ապա փոfr ինչ կապակցությունը (ինչպես և՝ մի փոfr կապակցությունը փոfr ինչ իմաստով) դրվում է բայի վրա (երբեմն նաև՝ ածականի վրա) և ցույց է տալիս գործողության հատկանիշ կամ հատկանիշի հատկանիշ։ Այն արդեն չափի մակբայ է։

Ով դերանունը միանալով գիտե բայածևին՝ կազմում է ով գիտե կապակցությունը, որը, դրվելով իր բառացի իմաստից, դործածվում է իբրև եղանակավորող բառ. արտահայտում է խոսողի անհատական, երկբայական վերաբերմունքը այս կամ այն երևույթի նկատմամբ։

«Մի խումբ զվարճասերներ, ով գիտե, ինչ քեֆից հետո դուրս էին եկել մաքուր օդ շնչելու» (Շիրվ., IV, էջ 255)։ «Երեխաս դեռ չի հանգստացել... ո՞վ գիտե, քաղցած էլ է, դու խրատելու ժամանա՞կ ես գտել» (Ն. ա., էջ 270)։ «Իսկ ես նստել մտածում էի, թե, ո՞վ գիտե, ինչ է պատահել նրան» (Ա.Ս, ՈՄ, էջ 204)։ «Այդ դղրդյունի միջից լսվեց մի զիլ ձայն... ով գիտե, ուր երգում էր մի պարսիկ, իր սրտի ուրախությունը թե վիշտը բարձրաձայն հաղորդելով ամենակուլ տարածությանը» (Շիրվ., I, էջ 97)։

Ինչ խոսք-ը արտահայտում է խոսողի վճռական, հաստատական վերաբերմունքը որևէ իրողության կամ մտքի նկատմամբ, գործածվում է «իհարկե», «անշուշտ» իմաստով։ Ինչ խոսք կապակցությունը ևս գործածվում է իբրև միջանկյալ բառակապակցություն և հանդես չի գալիս իբրև նախադասության անդամ։ Սա կարելի է համարել հաստատական իմաստ ունեցող եղանակավորող բառ՝ բաղադրյալ կազմությամբ։

«Ինչ խոսք, այս ամենի մեջ դուք լինելու եք պիտավոր դերակատարը (ՀՔ, V, էջ 371)։

«—Ես արտասահմանո՞ւմ։ Կասկածո՞ւմ եք, միթե.

Ինչ խոսք, որ եղել եմ, կռվել եմ, դիտել», (Անթ., էջ 636)։

«—Շատ լավ, տանենք Լյուբայենց մոտ, խնամքն էլ, հույս ունեմ, լավ կլինի։

— Ինչ խոսք...» (Ն .ա., էջ 459)։

Ինչպես երևում է վերջին նախադասությունից, ինչ խոսք կապակցությունը երկխոսություններում կարող է դործածվել նաև առանձին, այսինքն առանց որևէ նախադասության և նույնպես արտահայտել խոսողի վերաբերմունքը խոսակցի

արտահայտած տվյալ մտքի նկատմամբ, այն է՝ հաստատել նրա միտքը:

Դերանուններով կազմված բաղադրյալ բառերի քանակը սրանցով չի սահմանափակվում: Դժվար է բոլոր դեպքերում որոշել ճշգրիտ կերպով, թե այդ կապակցություններից որոնք պետք է համարել բառակապակցություն և որոնք՝ մեկ բաղադրյալ բառ: Այնպես որ հաջորդ դիտում ընթերցողը կհանդիպի կապակցությունների, որոնք գտնվում են այդպիսի անցման շրջանում: Թերևս դրանցից մի քանիսը կարելի լիներ այս դիտում քննել, բայց դերազատում ենք անցման շրջանում գտնվող կապակցությունները քննել հաջորդ դիտում: Ինչպես երևում է այդպիսի բաղադրյալ բառերից մի քանիսի քննարկումից, այդ եղանակով առաջանում են հատկապես եղանակավորող բառեր, ինչպես նաև շաղկապներ ու մակբայներ:

ԳԼՈՒԽ ՅՈԹԵՐՈՐԴ

ԱՐԴԻ ՀԱՅԵՐԵՆԻ ԴԵՐԱՆՈՒՆՆԵՐԻ ՈՃԱԿԱՆ ԿԻՐԱՌՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

Դերանունների, ինչպես և առհասարակ յուրաքանչյուր բառի, ոճական ու երկրորդական [1] կիրառությունները պատահական կիրառություններ չեն, այլ դերազանցապես պայմանավորված են նրանց լեքսիկական ու քերականական իմաստով։ Եվ քանի որ դերանվան տեսակներն ունեն իմաստային տարբեր յուրահատկություններ՝ հանձինս առարկա և հատկանիշ ցույց տալու նրանց ունեցած տարբեր հարաբերությունների, այդ պատճառով էլ դերանունների տարբեր տեսակներն ունեն ոճական ու երկրորդական հիմնականում տարբեր կիրառություններ։ Այսպես, անձնական դերանունների այն ոճական կիրառությունները, որոնք պայմանավորված են նրանց դիմային հարաբերությամբ, չեն կարող ունենալ, ասենք, անորոշ դերանունները։ Կամ՝ հարցական-հարաբերական դերանուններն իրենց բացարձակ անորոշ իմաստի պատճառով այնպիսի ոճական կիրառություններ ունեն, որ չեն կարող ունենալ, օրինակ, անձնական կամ մյուս դերանունները։

Դերանունների, ինչպես և այլ բառերի, ոճական ու երկրորդական կիրառություններին նպաստում են մի շարք գործոններ. տվյալ խոսքն իրրև միջավայր, որտեղ գործածվում է դերանունը, առոգանություն և այլն։

---

1 Երկրորդական անվանում ենք դերանունների այն ոչ հիմնական իմաստով կիրառությունները, որոնք չունեն ոճական նշանակություն։

Սակայն դերանուններն ունեն նաև այնպիսի ոճական կիրառություններ, որոնք պայմանավորված չեն դերանվան տեսակային առանձնահատկություններով. այդ պատճառով էլ հատուկ են ոչ թե դերանվան միայն այս կամ այն տեսակին, այլ՝ բոլոր տեսակի դերանուններին կամ դերանվան մի քանի տեսակների: Նախ՝ այս կիրառությունների մասին:

Այդպիսի կիրառություններից է դերանվան կրկնությունը խոսքին էքսպրեսիվ երանգ տալու նպատակով: Նշենք, որ ոճական այս միջոցը հատուկ է ոչ միայն դերանուններին, այլև մյուս խոսքի մասերին: Դերանվան կրկնությունը ոճական նկատառումով կարող է արտահայտվել տարբեր ձևերով:

Միևնույն դերանունը միևնույն առարկայական վերաբերությամբ իրար հաջից կարող է կրկնվել մի քանի անգամ:

«Ոտքի է կանգնում և ասում զայրույթով.— Իսկ դու, դու խանգարում ես մեր ապրելուն» (Ար., էջ 11—12): «Այդ դու ես, դու, դու, իմ Երևան» (ՆՉ, Հատ., էջ 139): «Աստղիկ, այդ դո՞ւ ես, դո՞ւ, վարպանի մայրը, բա ինչո՞ւ ես այդպես» (ԱՄ, ՈՄ, էջ 105): «Ոչ ոքի, ոչ ոքի չեմ տա իմ երեխաներին, թող բոլորն իմանան, կսպանեմ, բայց չեմ տա» (Շիրվ., IV, էջ 176): «Մահամերձը ցանկանում էր դուրս թափել սրտի մեջ կուտակված դառը մաղձը, ասել բոլորը, բոլորը, ինչ որ զղացել էր ութ տարվա ընթացքում» (Շիրվ., IV, էջ 13):

«Ե՞րբ,
Ե՞րբ վերջապես տեսնեմ պիտի
Պարանոցդ արևին պարզած,
Քո հողմածուփ
Եվ շոգեկանչ նոր անապատում:
Ե՞րբ, ե՞րբ, ե՞րբ,
Սիրելի՛ս» (ԱվՔ, էջ 194):

Դերանունը կարող է կրկնվել նախադասության համապատասխան անդամներից յուրաքանչյուրի կամ բարդ նախադասության մեջ համապատասխան նախադասություններից յուրաքանչյուրի հետ:

Անձնական դերանունների օրինակներ. «Ո՞վ է Մ. Գորկին:
— Նա մեր բանաստեղծն է, մեր ընկերը, մեր փիլիսո-

փան» (Իս., էջ 491)։ «Քո երջանկությամբ, ֆո իմաստությամբ, ֆո հավերժությամբ հարբեցրու ինձ» (Իս., էջ 204)։ «Մհերի մեջ հայ ժողովուրդը դրել է իր բովանդակ հոգին, անվերջանալի պայքարով ու դառնությամբ լի իր պատմությունն ու փիլիսոփայությունը, իր անշեղ և անընկճելի հավատը լավագույն ապագայի նկատմամբ» (Իս., էջ 464)։ «Լիլի՛թ, Լիլի՛թ, դու իմ ճակատագիրը... Դու հեշտանքի պրախան ես, Լիլի՛թ, հրաշքների և հմայքների միակ պրախան ես դու, երազն ես դու, հիացքն ու դյութանքը, Լիլի՛թ։ Դու չճանաչված գաղտնիքն ես, Լիլի՛թ, Արևագրյուրն ես դու, Լիլի՛թ...» (Իս., էջ 328)։

Որոշյալ դերանունների օրինակներ. *«Իսկ որ նա մտնում է անտառը — թվում է թե ամեն մի ծառի տակից, ամեն մի թփի միջից, ամեն մի քարի հետից՝ որտեղ որ է գազան է հարձակվելու կամ ավազակ» (ՀՔ, III, էջ 190)։ «Նա կուզեր... ազատվել այս այդուց, որի ամեն մի վազը, ամեն մի ծառը կարծես սպառնում էր իրեն» (Ար., էջ 27)։ «Ոչ մի հառնդ, ոչ մի ձգտում և այդ ձգտման հասնելու կամք չի ունեցել» (ՆԴՄ, էջ 31)։ «Խաղաղություն աշխարհին, բոլոր կորածներին, բոլոր որբերին» (Ընտ. էջեր, էջ 919)։*

Դերանվան այլ տեսակների օրինակներ.

«Քանի մայրեր լացին,
Քանի մանուկ մնաց անհայր,
Քանի օջախատեր հերոս
Չեկավ էլ տուն» (ՆՋ, Հատ., էջ 103)։

«Հիմի էլ ի՞նչ վախ, ի՞նչ իրավունք, ի՞նչ տեր, ի՞նչ ծառա, կսրբենք ամեն ինչ» (Դվ, էջ 332)։ «Հիմի ո՞վ ջուր կբերի, ո՞վ հայց կբերի,— սկսեց կատաղել տիկին Աննան» (Ընտ. էջեր, էջ 93)։ «Դու գնում էիր իրրև թե նոր միջավայր որոնելու, նոր կոլեկտիվի մեջ ապացուցելու քո արժանավոր լինելը, բայց ասա՛, խնդրեմ, այստեղ էլ նույն սովետական մարդիկը չե՞ն, նույն կյանքը, նույն օրենքները չե՞ն» (ԱՍ, ՈՄ, էջ 161)։ «Այդ բոլորը... այնքան մոտիկ, այնքան ծանոթ էին Հարությին» (ՀՍ, ՀՎ, էջ 143)։ «Նրա խոսքերը հնչում էին

այնքան անմիջական, այնքան անբռնապրոսիկ, որ այդ մարդը սիրելի էր դառնում նույնիսկ» (Անթ., էջ 307)։

Դերանունների կրկնությունը կարող է որոշ չափով ազդել նախադասության կառուցվածքային յուրահատկությունների վրա։ Այդ վերաբերում է հատկապես այն դեպքերին, երբ դերանունը նախադասության մեջ կատարում է գլխավոր անդամի պաշտոն։ Այսպես, դերանունների կրկնությունը հաճախ պատճառ է դառնում, որ բարդ նախադասությունը չվերածվի միավորյալ նախադասության։

«Ես տեսնում եմ ինձ, ես լսում եմ ինձ,
Ես զգում եմ ինձ, ճանաչում եմ ինձ» (Իս., էջ 149)։

Եթե այս նախադասության մեջ ես դերանունը չկրկնվեր, մենք կունենայինք միավորյալ նախադասություն, այն է՝ ես տեսնում եմ ինձ, լսում եմ ինձ, զգում եմ ինձ, ճանաչում եմ ինձ։ Քանի որ հայերենում միավորյալ նախադասությունը կազմվում է նախադասության գլխավոր անդամներից որևէ մեկի միավորումով, այսինքն միևնույն գլխավոր անդամի մի քանի գործածությունները մեկով փոխարինելու հետևանքով (իհարկե, մյուս գլխավոր անդամը պետք է բազմակի լինի), այդ պատճառով էլ այս դեպքում խոսքը վերաբերում է նախադասության միայն գլխավոր անդամների կրկնությանը, իսկ երկրորդական անդամի կրկնությունը չի փոխում նախադասության կառուցվածքը։ Այնպես որ բարդ նախադասությունը միավորյալի չվերածելու գործում վերևի նախադասության մեջ կարևոր է ոչ թե ինձ դերանվան, այլ ես դերանվան կրկնությունը։ Իսկ զուտ ճակատային տեսակետից թե ես և թե ինձ դերանունների կրկնությունը հավասարարժեք է։

Այս իրողությունն, ի միջի այլոց, խոսում է այն մասին, որ նախադասության կառուցվածքի փոփոխությունը, նախադասության մի տեսակը մյուսով փոխարինելը հաճախ կարող է կատարվել ոճական նկատառումով, ոճավորման նպատակով։

Բերենք այլ օրինակներ.

«Աստված քեզ, արև, շյուքը բյուրավոր, դու աստծուց հղոր,
դու կյանքի աղբյուր.
Դու իմ անմահ մայր, մայրական դու դիրկ, դու միակ
բարի, դու միակ սուրբ, սուրբ» (Իս., էջ 201):
«Անմահ ես դու, հրաշագործ, հզոր ես դու
Ջքնաղ Մոսկվա, դու մեր սիրտն ես ու մեր հոգին» (Անթ.,
էջ 280):
«Մոսկվա, լույս Մոսկվա, մայր պայծառանուն,
Փառքով պսակված իմաստուն քաղաք,
Դու կյանք, դու խոյանք, դու հավերժ գարուն,
Դու երգ, դու հավատ, դու սեր ու տենչանք» (Անթ., էջ 427):

Բարդ ատորադասական նախադասության կազմի մեջ մտնող գլխավոր նախադասության ենթական կարող է կրկընվել երկրորդական նախադասություններից յուրաքանչյուրի հետ՝ խոսքին էքսպրեսիվ երանգ տալու նպատակով:

«Նա, որ Մասիսի երկնահուպ բարձունքից տեսել էր հայ աշխարհը իր լեռներով, հովիտներով, լճերով և իր մեծ հոգում դրոշմել էր նրա սրբազան պատկերը, նա, որ գիշերներ էր լուսացրել նվիրական մադաղաթների վրա և ընդգրկել էր հայ ժողովրդի հազարամյակների պատմությունը, նա, որ անձամբ իսկ ճանաչում էր ժամանակակից հայ ժողովրդին... նա միայն կարող էր դառնալ առաքյալ և ուրիշ ոչ ոք» (Իս., էջ 468):

Եթե միևնույն դերանվան կրկնությամբ շեշտվում է միտքը, ընդգծվում է առարկայի կամ հատկանիշի գաղափարը, ապա տարբեր դերանունների գործածությամբ՝ նույն նախադասության մեջ, կարող է արտահայտվել իմաստի անորոշություն, անորոշ կերպով ցույց տրվել առարկա, հատկանիշ: Այսպես գործածվում են հատկապես ցուցական և անձնական դերանունները:

Այսպես՝

— Նա թափթփված աշակերտ է, գիրքը կորցրել է:
— Բայց ո՞ւմ գրքով է սովորում դասերը:
— Մի օր՝ իմ, մի օր՝ Ռոբ: Տնային աշխա-

տանքն էլ չի կատարում. արտապրում է մի օր ինձնից, մի օր՝ ինձնից, մի օր՝ նրանից: Բամբասում է ում պատահի՝ ինձ, ինձ, նրան, ամաչել չգիտի:

«Նա մի մանուկ է պայծառ, խլրտուն,
Երազներ ունի իր վարդրիկ սրտում,
Եվ ապրում է իմ կամ ձեր քաղաքում» (Էմ., էջ 98):

Թեև անձնական դերանունների դիմային վերաբերությունը կոնկրետանում է խոսքի մեջ, բայց այս և նման օրինակներում այն չի կոնկրետանում սովորական ձևով: Բերված օրինակներում անձնական դերանունների տարբեր դեմքերը չեն հասկացվում իրենց բառացի իմաստով, նրանք ցույց չեն տալիս որևէ երեք անձանց, այլ՝ անձանց անորոշ կերպով:

Այս գործածությունն ավելի շատ հատուկ է ցուցական դերանուններին: «Եկել մնացել են սրա-նրա տանը» (Դվ., էջ 180): «Թորոսը ապուշի պես նայում էր մեկ սրան, մեկ նրան» (Ն.-Դ., I, էջ 102): «Նամակ էր գրում այս ու այն պաշտոնյայի անունով» (Ար., էջ 152): «Զայն տվին այս ու այն կողմից» (ՆՋՀ, էջ 14): «Նա նայեց այս ու այն կողմը» (ՆՋՀ, էջ 86): «Նույս էր տալիս տանտիրոջս ընտանիքի այս կամ այն անդամի հետ ինձ մոտ հանդիպելուց» (ՆԴ, IV, էջ 87):

Նկատի ունենալով, որ դերանունների այսպիսի գործածության միջոցով առարկայական վերաբերության անորոշության ստեղծումը հատկանշական է դերազանցապես ցուցական դերանունների համար, ուստի՝ ցուցական դերանունների այդ կիրառությունները հանգամանորեն կքննենք այդ դերանունների ոճական կիրառությունների բաժնում:

Այժմ քննենք դերանվան տարբեր տեսակների ոճական կիրառությունները:

1. ԱՆՁՆԱԿԱՆ ԴԵՐԱՆՈՒՆՆԵՐԻ ՈՃԱԿԱՆ ԿԻՐԱՌՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

Անձնական դերանունները ունեն հարուստ և բազմապիսի ոճական կիրառություններ: Այդ բազմապիսի ոճական կիրառությունները պայմանավորված են, բացի նրանց ընդհանուր,

չտարբորոշված իմաստից, որ հատուկ է դերանվան բոլոր տեսակներին, նաև նրանց թվի կատեգորիայի յուրահատուկությամբ, դիմքի քերականական կատեգորիայով և պարմանալի հաճախակի գործածությամբ:

Հետաքրքրական է, թե որքան հաճախակի են գործածվում անձնական դերանունները որևէ խոսքի մասի, առնչ, գոյական անվան համեմատությամբ: Դա մոտավոր չափով պարզելու համար որոշեցինք համեմատությունը կատարել որևէ գրքի որևէ հինգ էջում: Դրա համար վերցրինք Մուրացյանի «Երկերի լիակատար ժողովածուի» (1951 թ. հրատ.) երկրորդ հատորի պատահական հինգ էջ՝ 100—104:

Անձնական դերանունները, որոնց քանակը, ինչպես հայտնի է, շատ սահմանափակ է, այդտեղ գործածված են 173 անգամ: Ըստ որում, պետք է նկատի ունենալ, որ անձնական դերանունների, այսպես կոչված, երկրորդական ձևերը (ինքս, ինքդ, ինքը) քիչ են գործածվում, ինչպես և քիչ են գործածված այդ հինգ էջում (ընդամենը հինգ անգամ): Ստացվում է, որ ես, դու, նա դերանունները, ընդամենը երեք դերանուն, այդ հինգ էջում գործածված են 167 անգամ, մինչդեռ այդ նույն հինգ էջում ամենահաճախակի կրկնված երկու գոյականները գործածված են ընդամենը 9-ական անգամ: Իհարկե, այս թվերը գոյականների և անձնական դերանունների գործածության քանակական համեմատությունը ճշգրտորեն ներկայացնել չեն կարող, բայց գոնե մոտավոր գաղափար են տալիս անձնական դերանունների գործածության հաճախականության մասին [1]:

Անցնենք անձնական դերանունների ոճական կիրառությունների քուն քննարկմանը:

Նախ՝ աճձնական դերանունների դեմքերի ոճական կիրառությունների *մասին: Սովորաբար անձնական դերանվան*

[1] *Այդ կախված է տարբեր հանգամանքներից, հատկապես խոսքի բնույթից, տեսակից՝ դեղարվեստակա՞ն է, թե գիտական, երկախոսությո՞ւն է, թե ոչ և այլն:*

առաջին դեմքը ցույց է տալիս խոսողին, երկրորդ դեմքը՝ խոսակցին, երրորդ դեմքը՝ ո՛չ խոսողին, ո՛չ էլ խոսակցին, այլ՝ երրորդ անձի կամ անձանց:

Սակայն այս գործածությունները քարացած չեն, և ճանաչական նկատառումով կարող է երբեմն անձնական դերանվան մի դեմքը գործածվել մյուս դեմքի փոխարեն:

Այսպես, անձնական դերանվան հոգնակի առաջին դեմքը կարող է գործածվել երկրորդ դեմքի եզակի և հոգնակի թվի փոխարեն: Ուսուցիչը աշակերտների կամ մեկ աշակերտի հետ պարապելիս կարող է ասել. «Այժմ մենք կծանոթանանք հայերենի ուղղագրության կանոններին»: Հասկանալի է, որ տվյալ դեպքում ոչ թե ինքը՝ ուսուցիչն է ծանոթանում ուղղագրության կանոններին, այլ՝ աշակերտները կամ աշակերտը: Ուրեմն՝ տրամաբանորեն սպասելի էր, որ ուսուցիչն ասեր՝ ձեզ (կամ ֆեզ) կծանոթացնեմ..., կամ՝ դուք (կամ դու) կծանոթանաք... Սակայն անձնական դերանվան երկրորդ դեմքի փոխարեն առաջին դեմք գործածելով՝ խոսողը իրեն ևս դասում է ծանոթացողների շարքը, իրեն չի հակադրում իր ունկնդիրներին, չի առանձնացնում նրանցից: Դրանով խոսողը իրեն և իր խոսակիցներին վերաբերվում է իբրև մեկ խմբի կամ կոլեկտիվի անդամների, որով և արտահայտվում է նրա ինտիմ վերաբերմունքը խոսակիցների կամ խոսակցի նկատմամբ:

Բերենք մի այլ օրինակ: Դասարանի ավագը, որը, ասենք, ուսման գերազանցիկ է և սիստեմատիկաբար օգնում է ետ մնացող աշակերտներին, դիմելով ուսման առաջավորներին և խոսելով ետ մնացող աշակերտներին օգնելու անհրաժեշտության մասին, կարող է ասել. «Մենք, թեև մեզ արդարացնում ենք ուսման գործում, բայց թերանում ենք մի այլ բանում. մենք չենք օգնում մյուսներին, որոնք զգում են դրա կարիքը»: Քանի որ ընկերներին չօգնելու մեղադրանքը իրեն՝ խոսողին իրականում չի վերաբերում, ուստի տրամաբանորեն սպասելի էր, որ նա ասեր. «Դուք, թեև ձեզ արդարացնում եք ուսման գործում, բայց թերանում եք մի այլ բանում.

դուք չեք օգնում մյուսներին, որոնք զգում են դրա կարիքը»: Սակայն խոսողը դերադասում է երկրորդ դեմքի անձնական դերանվան փոխարեն գործածել առաջին դեմքի դերանուն վերևում բացատրված ոճական նկատառումով:

Անձնական դերանվան երկրորդ դեմքը կարող է գործածվել նաև ոչ թե կոնկրետ կերպով խոսակցին ցույց տալու համար, այլ առհասարակ մարդուն նկատի ունենալով: Դա լինում է այն դեպքում, երբ խոսողը ընդհանուր դատողություններ է անում առհասարակ մարդու մասին և հետևապես նկատի ունի ոչ թե այս կամ այն մարդուն, այլ մարդկանց ընդհանրապես: Այս դեպքում դու դերանունը գործածվում է մարդ բառի (անորոշ իմաստով) և երրորդ դեմքի փոխարեն:

Այսպես՝

«Ինչ լավ է, երբ դու տան տեր ես,
Ամեն տեղ զգում ես ֆո ձեռքը,
Երբ ամեն տեղ ունես ֆո տեղը,
Եվ ուր որ լինես, դու պետք ես» (Անթ., էջ 503):

Եթե այստեղ ոճական նկատառումով գործածված անձնական դերանվան երկրորդ դեմքը փոխարինելու լինենք մարդ բառով և դերանվան երրորդ դեմքով, ապա թեև քառատողի միտքը կմնա նույնը, բայց այդ միտքը այնքան անմիջական չի լինի, որքան որ ավյալ դեպքում: Այսպես՝

Ինչ լավ է, երբ մարդ տան տեր է,
Ամեն տեղ զգում է իր ձեռքը,
Երբ ամեն տեղ ունի իր տեղը,
Եվ ուր որ լինի, նա պետք է:

Բերենք անձնական դերանվան երկրորդ դեմքի նույն ոճական գործածության այլ օրինակներ:

«Եվ միայն նոր ես հասկանում,
Թե ինչ է ֆո գործն աշխարհում,
Եվ ֆո գործից է անկասկած
Կոմունիզմի բախտը կախված» (ՍՀ, 24/V 1952 թ.):

«Սաթոն այդպես էր նայում գործի վրա. որ գործը կա, կա ու կա — գետի պես գալիս է, լցվում, իսկ դու պիտի

կանգնես ափին, անդադար շորը քաշես։ Գործը վերջ չունի» (*Անթ., էջ 70*)։

Գոյությյուն ունի անձնական դերանվան երկրորդ դեմքի այս կիրառությյանը որոշ չափով մոտ, բայց և զգալի յուրահատկությամբ մի այլ հետաքրքրական կիրառություն ևս։ Խոսքը վերաբերում է առանձնապես լայն տարածում չգտած այն կիրառությյանը, որով խոսողը կամ հեղինակը, գործածելով երկրորդ դեմքի անձնական դերանուն (սովորաբար եզակի թվով), նկատի է ունենում ոչ թե կոնկրետ որևէ խոսակցի, որևէ մեկին, այլ բոլոր մարդկանց կամ մի ժողովրդի, մի պարտիայի բոլոր անդամներին՝ առանձին-առանձին։ Այս կիրառության մեջ հետաքրքրական է այն, որ դու դերանունով խոսողը որոշակի կերպով մեկ անձ նկատի չառնելով հանդերձ, այն չի գործածում նաև նախորդ կիրառությյանը հատուկ անորոշ իմաստով։ Այսպես, Գ. Բորյանը «Երևանյան լուսաբացը» բանաստեղծության մեջ գործածում է դու դերանունը՝ ցույց տալով ո՛չ թե մեկ անձի, դիմելով ո՛չ թե մեկին, այլ՝ մեր նոր սերնդին, բայց անհատապես, առանձին-առանձին։

«Դու ճամփա ես ընկել Ֆո տեղերին դերի,
Քո դեմ Հայրենիքիդ ուղիները բաց են,
Քեզ համար է շողում, որպես պարգև վերին
Երևանյան շռայլ լուսաբացը...

Մաքառում ես, տենչում, դու զավակն ես նորի,
Գալիքներ է ծնում փառքով մեր անցածը,
Թող Ֆո նորոդ ճամփան հավերժ լուսավորի
Երևանյան մեր նոր լուսաբացը։

Թող իմ երգն էլ դառնա ընկեր ճանապարհիդ,
Դու ձգտում ես դեպի վեհն ու երազածը,
Թող հուրհուրա, շողա գալիք սերունդներին
Երևանյան անմար լուսաբացը...» (Անթ., էջ 426)։

Դու դերանվան այս կիրառությանը համեմատաբար ավելի շատ ենք հանդիպում պլակատներում, կոչերում: Այսպես օրինակ, Հայրենական Մեծ պատերազմի տարիներին տարածված էր «Դու ինչո՞վ ես օգնել ռազմաճակատին» բովանդակությամբ պլակատը: Հայտնի է նաև «Դու ապահովագրե՞լ ես քո կյանքը» բովանդակությամբ պլակատը և այլն:

Դու դերանունը մի ասի բայի հետ կապակցվելով (դու մի ասի) հաճախ գործածվում է ոչ բառացի իմաստով, այսինքն՝ ոչ թե խոսակցի ասելու գործողությունը արգելելու նպատակով, այլ՝ արտահայտելու որևէ երևույթի նկատմամբ խոսողի որոշ վերաբերմունքը, որով խոսողը այդ երևույթը դիտում է իբրև անսպասելի, զարմանալի:

«Նապարը, որ տեսնում է չի կարողանում իր ձիու պլուխը պահի, քիչ է մնում վեր ընկնի, ձեռը գցում է, ուզում է մի ծառից փաթաթվի, դու մի ասիլ, ծառը փտած է, մի գերանաչափ ճյուղը պոկ է գալիս, մնում ձեռին» (ՀԲ, III, էջ 196): «Վազելով սկսեցի հեռը ճակատս շփել, հետո էլ նշան դնել բադերին: Դու մի ասիլ, սաստիկ զարկվելուց հրացանիս կայծաքարը վեր է ընկել» (ՀԲ, III, էջ 209): «Դու մի ասիլ հենց էս ժամանակ մի դյուղացի ձին քաշելով անտառով միամիտ գալիս է» (ՀԲ, III, էջ 190): «— Վեր կացեք գնանք մեր տունը, մարդ կանչենք, ժամ ու պատարագ անենք, կիկոսի քելեխը տանք... Դու մի ասիլ սրանց ունեցած-չունեցած չորսոտանին մի եղն է լինում, ունեցած փոշին էլ մի քթոց ալյուր» (ՀԲ, III, էջ 200):

Անձնական դերանվան երկրորդ դեմքը, ինչպես հայտնի է, գործածվում է խոսակցին ցույց տալու համար: Հայտնի է նաև, որ իբրև խոսակից հանդես է գալիս այն անձը, որին դիմում է խոսողը: Սակայն երբեմն, հատկապես բանաստեղծության մեջ իբրև խոսակից են հանդես բերվում ոչ միայն անձինք, այլև առարկաները, օրինակ՝ հայրենիքը, դետերը, լեռները, քաղաքները և այլն: Նման դեպքերում խոսողը կամ հեղինակը այդ առարկայի մասին արտահայտում

է ոչ թե իբրև մի երրորդ առարկայի մասին, այլ նրան մոտվի դարձնում է իր խոսակիցը, դիմում նրան, ուրեմն և գործածում անձնական դերանվան երկրորդ դեմքը:

«Ստալինգրադ, հերոսների երկաթաձույլ օրորոց,
Քեզ է նայում այսօր աշխարհը հույսերով ալեկոծ:
Կանգնած ես դու կուրծքդ հրին՝ որպես մրրիկ, որպես
բերդ» (ՆՉ, Հատ., էջ 94):

«Առել ենք մենք ղրահ ու զենք
Կյանքիդ համար, մեր հայրենիք,
Որ դու ծաղկես, որ դու փայլես,
Լինես դու միշտ կուռ, անառիկ» (Անթ., էջ 424):

«Իմ հայրենիք, լուսե այգի,
Ես ֆո շիվն եմ դալար.
Դու իմ մայրն ես մեծ ու անգին,
Ես ֆո աղիվ բալան» (Անթ., էջ 555):

«Եվ դու, հսկայական մեքենա, թափով դառնում ես առանցքիդ շուրջը, տաղտուկ միօրինակությամբ. ֆո՛ ամեն մի պտուտակը, ամեն մի անիվը շարժվում են նույն ճշտությամբ... Ոլորվում ես դու իշխող ու կատաղի և վաղը, և մյուս օրը, և հավիտյան...» (Անթ., էջ 36): Այստեղ անձնական դերանվան երկրորդ դեմքը գործածված է խոսքին հռետորական երանգ տալու և միաժամանակ առարկաներն անձնավորելու նպատակով:

Հաճախ է պատահում, որ անձնական դերանվան երկրորդ դեմքի նման գործածություններով կատարվում է միայն առարկաների անձնավորում առանց հռետորական երանգի:

Օրինակներ.

«Սիրուն կակաչնե՛ր, արևի զավակնե՛ր, ավելի լավ չէ՞ր, ձեզ մոտ բերեի իմ ոսկեծամիկ աղջկան:

Դուք նրան կզուգեիք կարմիր ու կանաչ... Բայց, հա, դիտեմ, դուք նրան հաց չէիք տալ... դուք սնվում եք վաղորդյան ցողով» (Ար., էջ 4): «Հզոր արև, մի մեծ դանդաո ունեմ ֆեզանից» (ն. տ.): «Ես ֆեզ վաղուց ճանաչում էի, ով սևե-

ըես կարիք, դու դիշեր-ցերեկ հետևում ես ինձ, հալածում» (Ն. ա., էջ 7)։

Առարկայի անձնավորման հետ միասին հռետորական երանգի առկայությունը պայմանավորված է անձնավորվող և անձնական դերանվան երկրորդ դեմքով ցույց տրվող առարկայի բնույթով, ինչպես և խոսքի ընդհանուր բովանդակությամբ։

Անձնական դերանվան երկրորդ դեմքով երբեմն խոսողը ցույց է տալիս իրեն, մտովի իրեն դարձնում է իր խոսակիցը, խոսում իր հետ։

«Ո՞վ ես դուն, ի՞նչ ես դուն, ի՞նչ մարդահիասքումն ես դուն, ի՞նչ անուն ունես դուն... դուն ես մարմ չես, մարմկերանց համա կերակուր է սահզծի քիչ ատուած» (Սունդ., II, էջ 45)։

Թեև սովորաբար անձնական դերանվան երրորդ դեմքով ցույց ենք տալիս երրորդ անձ կամ անձանց, սակայն երբեմն խոսողը կարող է իրեն դիտել իբրև մի երրորդ անձի և ցույց տալ անձնական դերանվան երրորդ դեմքով։ Գ. Բորյանի «Երդում» բանաստեղծությունից վերցրած հետևյալ տողերում երրորդ դեմքի դերանունը վերաբերում է իրեն իսկ խոսողին՝

«Հայրենիք, որդիդ ճակատ է դնում...
Նրան հալատաւ, հույսի, խնդության
Վարդեր են ահա ճանապարհ դնում,
Ողջադուրանքի խոսքերը հազար» (Անթ., էջ 423)։

Սակայն միևնույն բանաստեղծության կամ խոսքի մեջ իր մասին խոսելիս չի կարելի հաճախակի փոփոխել դերանվան դեմքը՝ դործածելով մեկ առաջին, մեկ երրորդ դեմքը։ Անձնական դերանվան դեմքերի այդպիսի ավելորդ ու ոչ ճիշտ փոփոխություններ են կատարված Գ. Բորյանի «Երդում» բանաստեղծության մեջ, որից մի քառատող բերվեց վերևում։ Հեղինակը դերանվան դեմքը փոխում է նույնիսկ միևնույն նախադասության մեջ։

«Հայրենի երկիր, քո որդին հպարտ,
Աչքերում արևն մեծ ազատության,
Գնում է կրծքով ևս պաշտպանելու
Սուրբ սահմանները իմ հայրենիքի» (Անթ., էջ 423):

Միևնույն նախադասության մեջ անձնական դերանվան երրորդ դեմքի կողքին առաջին դեմքի գործածությունը այստեղ ստեղծել է ոչ միայն ոճի ազնվություն, այլև տեղիք է տալիս իմաստային թյուրիմացության, կարծեք թե հայրենիքը պաշտպանողինը չէ:

Անձնական դերանունների դեմքերի ոճական կիրառությունների մեջ զգալի կշիռ ունի տարբեր դեմքերի հակադրության միջոցով խոսքին էքսպրեսիվ երանգ տալը: Դերանվան այս կիրառությունը առանձնապես լայն տարածում ստացավ Հայրենական Մեծ պատերազմի շրջանում:

«Մենք խաղալ էինք մեր լեռների պես,
Դուք հողմերի պես խուժեցիք վայրագ.
Մենք ձեր դեմ ելանք մեր լեռների պես,
Դուք հողմերի պես ոռնացիք վայրագ.
Բայց մենք հավերժ ենք մեր լեռների պես,
Դուք հողմերի պես կկորչեք վայրագ» (Անթ., էջ 418):

Անցնենք անձնական դերանունների թվի ոճական կիրառություններին: Թեև անձնական դերանվան հոգնակի թիվը ցույց է տալիս մեկից ավելի անձ կամ առարկա, բայց երբեմն հոգնակի թիվով ցույց է տրվում մեկ անձ: Դա վերաբերում է առաջին և երկրորդ դեմքերի հոգնակի թվին:

Սովորաբար խոսողը իրեն ցույց տալու համար գործածում է եզակի առաջին դեմքը՝ ես կամ ինձս: Սակայն երբեմն խոսողը կարող է իրեն ցույց տալու համար գործածել այդ դեմքի հոգնակին: Խոսողի կամ հեղինակի նպատակն է դրանով չընդգծել իր ես-ը, այլ համեմատաբար իր ես-ը որոշ չափով և որոշ իմաստով տալերի տակ թողնել: Այդ լինում է գերազանցապես գիտական, հրապարակախոսական խոսքի մեջ:

«Մեր կարծիքով հայերենի և ուրիշ լեզուների միջև եղած պատմական փոխադարձ հարաբերությունները կարելի էր հետևյալ կարգերի բաժանել» (Աճ, ՀԼՊ, էջ 10)։ «Այսպիսի բացատրությունը մեր կարծիքով ընդունելի չէ» (ն. տ., էջ 14)։ «Մինչև այժմ մենք խոսել ենք հնչյունների ու բառերի մասին» (ԼԲԱ, ԼՆ, էջ 280)։ «Այսպիսով, մեր կարծիքով քերականական արտահայտության միջոցները ինն են» (ԼԲԱ, ԼՆ, էջ 306)։ «Մենք ընդհանուր գծերով նկարագրեցինք լեզվի մեջ տեղի ունեցող որակական անցումների պատմական ընթացքը» (ԼԲԱ, ԼՆ, էջ 484)։

Անձնական դերանվան հոգնակի երկրորդ դեմքը բացի իր ուղղական հոգնակի իմաստով գործածվելուց, գործածվում է նաև մեկ անձ ցույց տալու համար, իբրև, այսպես կոչված, հարգանքի հոգնակի և գրվում է մեծատառով։ Դուք-ով և դու-ով մեկ անձ ցույց տալու այս տարբերության մասին Նար-Դոսը «Տանտիրոջս աղջիկը» վիպակում հետևյալ հետաքրքրական դիտողությունն է անում. «Մեր փոխադարձ հարաբերության մեջ քաղաքավարի «դուք»-ը ինքնըստինքյան վաղուց վերացել էր և փոխվել մտերմական «դու»-ի (Ն.-Դ., I, էջ 225)։

Բերենք օրինակներ. «Ես շատ շնորհակալ եմ Ձեր բանկային նամակի և արտատուրների համար։ Ես երբեք, երբեք չեմ կասկածել Ձեր սրտի քնքշության և հոգու ազնվության վրա» (ՀԲ, V, էջ 238)։ «Հարգելի հայրենակիից... Դուք ինձ շնք ճանաչում, թեև վաղուց է, որ հարազատ մարդ եք դարձել ինձ համար։ Դուք իմ գոյության մասին ոչինչ չգիտեք...» (Անթ., էջ 318)։ «Դուք հիվա՞նդ եք,—մի օր հարցրեց Շահումյանը, երբ վերջուշը նրան զննություն էր ինչ-որ հարցի մասին» (Անթ., էջ 441)։

Անձնական դերանվան հոգնակի թվի մասին խոսելիս տեսանք, որ նա առարկայական վերաբերության ծավալի տեսակետից շատ առաձգական է, և կարող են նրանով ցույց տրվել երկու անձից կամ առարկայից սկսած ընդհուպ մինչև բոլոր անձինք կամ առարկաները միասին վերցրած։ Ծավա-

լի այդ առաձգականությունը և ընդգրկումը պայմանավորված է, ինչպես տեսանք, դերանվան ընդհանուր, չտարբերակված իմաստով և կոնկրետացում ու բացահայտվում է միայն խոսքի մեջ: Ծավալի այդ առաձգականությունը թույլատրում է անձնական դերանվան հատկապես առաջին և երկրորդ դեմքերի հոդնակիին երբեմն գործածվելու այնպիսի իմաստով կամ առարկայական վերաբերությամբ, որի մեջ ինքը խոսողը (առաջին դեմքի գործածության դեպքում) կամ խոսակիցը (երկրորդ դեմքի գործածության դեպքում) փաստորեն անձամբ կամ, եթե կարելի է ասել, առարկայորեն չեն էլ մտնում: Առաջին դեմքի համար դա վերաբերում է այն դեպքերին, երբ մենք դերանունը գործածում ենք, օրինակ, «Սովետական կառավարության», «սովետական դելեգացիա», «Սովետական Բանակ» և նման այլ իմաստներով: Այսպես, սովետական յուրաքանչյուր քաղաքացի օրինական հպարտությամբ ասում է կամ կարող է ասել. «Մենք ՄԱԿ-ի նիստերում պայքարում ենք կայուն և երկարատև խաղաղության համար», թեև ինքը՝ խոսողը երբեք ներկա չի եղել ՄԱԿ-ի նիստերին: Կամ՝ ասում ենք՝ «Երկրորդ համաշխարհային պատերազմի ժամանակ մենք առաջինը մտանք Բեռլին», թեև այդ ասողներից ոչ բոլորն են մտել Բեռլին:

Նեղ, ֆորմալ տրամաբանական տեսակետից ՄԱԿ-ի նիստերում կայուն և երկարատև խաղաղության համար պայքարելը պետք էր վերագրել ՄԱԿ-ում սովետական դելեգացիային, իսկ երկրորդ համաշխարհային պատերազմի ժամանակ առաջին անգամ Բեռլին մտնելը՝ սովետական զորքերի մի մասին: Սակայն խոսողը այդ դեպքերում գործածելով մենք դերանունը՝ ՄԱԿ-ում կայուն և երկարատև խաղաղության համար պայքարը, որ անձնական վերաբերություն է մեր դելեգացիան, ճիշտ կերպով դիտում է իբրև մեր՝ սովետական ամբողջ ժողովրդի (այդ թվում և իր՝ խոսողի) պայքար, կամ՝ Բեռլին մտնելը, որ անձնական վերաբերում է մեր զորքերի մի մասին, դիտում է իբրև մեր՝ սովետական ամբողջ ժողովրդի (այդ թվում և իր՝ խոսողի) պայքարի արդյունքը, դեր-

մանա-ֆաշիստական զավթիչների դեմ մեր հաղթական պայքարի մի մոմենտը։

Ինչպես հեշտությամբ կարելի է ղգալ, այս ոճական կիրառությունը միայն թվի՝ հոդնակի թվի ոճական կիրառություն չէ, այլև միաժամանակ դերանվան դեմքի ոճական կիրառություն, և այս երկու մոմենտները այստեղ հանդես են գալիս միացյալ կերպով։ Այս ոճական կիրառությունը վերաբերում է նաև դերանվան դեմքին այն պատճառով, որ վերևի նախադասություններում նեղ տրամաբանական տեսակետից անձնական դերանվան երրորդ դեմքի գործածության փոխարեն մենք ունենք առաջին դեմքի գործածություն։ Փոխանակ ասելու «նա՝ սովետական դելեգացիան ՄԱԿ-ի նիստերում պայքարում է...», կամ՝ «նրանք՝ սովետական դելեգատները ՄԱԿ-ի նիստերում պայքարում են...» ասված է. «Մենք պայքարում ենք...»։ Երրորդ դեմքի փոխարեն առաջին դեմքի անձնական դերանվան գործածությունը վերաբերում է նաև երկրորդ օրինակին։ Նման դեպքերում առաջին դեմքի գործածությամբ խոսողի նպատակն է իրեն չհակադրել այդ պայքարը մղողներին, Բեռլին մտնողներին, որով և իր ջերմ վերաբերմունքն է դրսևորում նրանց նկատմամբ, նրանց գործի նկատմամբ, նրանց գործը համարում է իրենը, իրեն ներկայացնում իբրև այդ գործում իր մասն ունեցողի, այդ պայքարին մասնակցողի։

Մեկ խոսակցին անձնական դերանվան հոգնակի թվով դիմելու երևույթը վերևում համարեցինք դերանվան հոգնակի թվի ոճական կիրառություն։ Դրա պատճառն այն է, որ դրանով խոսողը իր որոշ վերաբերմունքն է դրսևորում խոսակցի նկատմամբ։ Սակայն այդ ոճական կիրառությունն այնքան է տարածվել մեր լեզվի մեջ, նման դեպքերում մեկ անձին դերանվան հոգնակի թվով դիմելը այնպիսի անհրաժեշտություն է դարձել, որ երկրորդ դեմքի անձնական դերանվան այդպիսի ոճական գործածության անհրաժեշտության պայմաններում եղակի թվի գործածությունը նույնպես ստացել է ոճական արժեք, թեև եղակի թիվը, որպես այդպիսին, այս

դեպքում համապատասխանում է իր օբյեկտիվ առարկայական վերաբերությանը։

Անձնական դերանվան եզակի երկրորդ դեմքի ոճական այս կիրառությանը հաճախ ենք հանդիպում գեղարվեստական երկերում և հատկապես չափածո գործերում։ Բանաստեղծները հաճախ են առաջնորդներին, այլ նշանավոր անձանց իրենց երկերում դիմում դու-ով և ոչ թե դուք-ով։

«Դու անմահ ես աշխարհով մեկ և արևի պես ջահել,
Քեզ միշտ որպես պատվո պահակ հավերժությունն է
կանգնել» (Հ. Շիրազ)։

«Լենին, դու ես վեհապարծ այս անդուլ աշխատանքի,
Որ ծավալվել է այս լեռներում վեհ ու վեհ» (ՍՍԲ, էջ 336)։

«Քո լույսով նորացավ իմ աշխարհի
Ամեն փողոց և ամեն ձեղուն» (ՍՍԲ, էջ 338)։

Պատմական նշանավոր անձանց դիմելիս անձնական դերանվան եզակի թվի գործածությունը պրոֆ. Ա. Ն. Գվոզդևը դիտում է որպես հին, բարձր, հանդիսավոր լիրիկայի տրադիցիայի մնացորդ[1]։ Մենք կարծում ենք, որ անձնական դերանվան քննվող գործածության մասին այս բացատրությամբ չպետք է բավականանալ։ Եթե նույնիսկ անձնական դերանվան եզակի երկրորդ դեմքի այդ գործածությունը այսօր գոյություն ունի անցյալում նման գործածության հետևությամբ, ապա նա այժմ ստացել է նոր բովանդակություն։ Վերևի օրինակներից առաջին երկուսի անձնական դերանվան եզակի թիվը փոխարինենք հոգնակի։

Դուք անմահ եք աշխարհով մեկ և արևի պես ջահել,
Ձեզ միշտ որպես պատվո պահակ հավերժությունն է
կանգնել։

Կարծում ենք, որ դերանվան եզակի թիվը հոգնակի թվով փոխարինելուց անաղարտ կերպով պահպանվեց այդ երկուս-

[1] Русский язык в школе, 1950, № 6, стр. 27.

դի հռետորականությունն ու բարձր ոճը, բայց պակասեց մի այլ բան, այն ջերմությունը, հարազատությունը, որ դրսևորված էր դու դերանվան մեջ։

Որ իսկապես դու դերանունը նման դեպքերում հռետորականության պահանջով չի գործածվում, վկայում է նաև այն փաստը, որ այդ դերանունը նույն նպատակով (պատմական խոշոր անձանց ցույց տալու նպատակով) գործածվում է նաև հռետորականությունից շատ հեռու մանկական բանաստեղծություններում։

«Դու ասել ես մեզ,
Որ լավ սովորենք,
Մեղնից մեծերին
Սիրենք ու հարգենք...
Քո ասածները
Կատարում ենք ճիշտ
Եվ միշտ ես հիշում,
Մեր մեծ ուսուցիչ»։
(Հ. Հայրապետյան, «Լենինին»)

Ինչպես տեսնում ենք, առաջնորդներին և պատմական նշանավոր անձանց դու դերանունով դիմելու հիմքում ամենից առաջ ընկած է խոսողի ջերմ, ինտիմ վերաբերմունքը։ Նման դեպքերում անձնական դերանվան եզակի թվի գործածությանը նպաստում է նաև այն հանգամանքը, որ տվյալ նշանավոր անձը ըստ էության հեղինակի խոսակիցը չի հանդիսանում, նա հեղինակի համար ավելի ճիշտ մի երրորդ անձ է, որին պետք էր ցույց տալ, իհարկե, եզակի թվով, և հեղինակը նրան մատով դարձնելով իր խոսակիցը, դիմելով նրան երկրորդ դեմքի դերանունով՝ պահպանում է այդ եզակի թիվը։ Այս հանգամանքը, ինչպես ասվեց, միայն նպաստող հանգամանք է և չի խանգարում, որ դու դերանունը ստանա ոճական երանգ։

Անձնական դերանվան եզակի երրորդ դեմքը երբեմն կա-

բող է գործածվել, հավաքական իմաստով՝ հավաքական ամբողջություն հանդիսացող մարդկանց ցույց տալու համար: Այսպես, Հայրենական Մեծ պատերազմի ժամանակ դերմանա-ֆաշիստական զավթիչների մասին խոսելիս գործածում էինք և՛ նրանք և՛ նա ձևերը, վերջինս՝ հավաքական իմաստով. նրանք նահանջում են. նա նահանջում է: Հմմտ. դերմանացիները նահանջում են. դերմանացին նահանջում է: Նրանք իրենց վերջին օրերն են ապրում. նա իր վերջին օրերն է ապրում: Այս գործածության մեջ հավասարապես առկա է ոճական մի այլ երևույթ ևս՝ սինեկդոխա, որին դերանունների մեջ շատ առկայ ենք հանդիպում:

Երբեմն անձնական դերանվան հոգնակի առաջին դեմքի փոխարեն գործածվում են բոլոր դեմքերը՝ եզակի թվով: Գ. Էմինի «Աշխարհի երգը» բանաստեղծության մեջ կարդում ենք.

«Ել նայում ես ու զարմանում
Որտեղի՞ց այս եռանդն անհուն,
Գործարաններն այս վիթխարի,
Բերրի ծովն այս ալիք-ալիք,
Այսքան երգեր զվարթ, զնդուն,
Այսքան ուժ ու հզորություն,
Միթե դո՞ւ ես, ե՞ս եմ կամ նա...
Ել... հիանում ես շարունակ» (ՍՀ, 24/V 1952 թ.):

Հեղինակը փոխանակ դրելու, որ մեր հայրենիքի վիթխարի գործարանները, ծով բերքը, ուժը, հզորությունը ստեղծողը մենք բոլորս ենք, մենք-ի փոխարեն գործածում է ես, դու, նա: Դրանով նա իր խոսքն ավելի է կոնկրետացնում, ցույց տալով սովետական յուրաքանչյուր քաղաքացու՝ մասնակցելը ու դերը այդ մեծ գործում, որով և հեղինակի խոսքը ավելի անմիջական ու ներգործող է դառնում:

Անձնական դերանունների՝ վերևում քննարկված ոճական կիրառություններն ընդհանրապես վերաբերում են, ինչպես երևում է, նրանց

թե ուղիղ և թե թևք հոլովներին: Սակայն անձնական դերանունների որոշ թևք հոլովներ ունեն ոճական ու երկրորդական մի շարք կիրառություններ, որոնք հատուկ չեն ուղիղ ձևերին, այլ միայն տվյալ հոլովին, որովհետև այդ կիրառությունների մեջ կարևոր դեր է խաղում հոլովական իմաստը:

Այժմ՝ անձնական դերանունների թեք հոլովների մի քանի ոճական կիրառությունների *մասին: Հայտնի է, որ պատկանելությունը կարելի է արտահայտել անձնական դերանվան սեռական հոլովով, ինչպես և սեռացական հոդերով: Օր.* իմ *գիրքը-գիրքս,* իմ *տեսրը-տետրս,* ի՛մ *գիրքը-գիրքդ,* ի՛մ *տետրը-տետրդ և այլն:*

Արդ՝ ե՞րբ է պատկանելությունն արտահայտվում դերանունով և ինչո՞ւ: Քերականական այս երկու միջոցներով առարկայի պատկանելություն արտահայտելու դրծածությունների միջև հաճախ որևէ տարբերություն չի լինում: Այսպես՝ կարող ենք ասել. «Գիրքս կորել է» կամ «իմ գիրքը կորել է»: Սակայն ոչ բոլոր դեպքերում է այդպես: Հաճախ է պատահում, որ տվյալ առարկայի պատկանելությունը կարելի է արտահայտել միայն դերանվան սեռական հոլովով և ոչ թե սեռացական հոդով, իսկ եթե համեմատաբար հոդով ևս կարելի է արտահայտել այդ պատկանելությունը, այնուամենայնիվ դերանունով արտահայտելն ավելի նպատակահարմար է լինում: Սա նշանակում է, որ նման դեպքերում այդ երկու քերականական միջոցներով առարկայի պատկանելություն արտահայտելու միջև կա որոշ տարբերություն: Տարբերությունն ընդհանուր առմամբ այն է, որ դերանվան սեռական հոլովով պատկանելությունն ավելի ընդգծված է արտահայտվում, քան սեռացական հոդով: Հետևապես խոսողը դերանվան սեռական հոլով և ոչ թե սեռացական հոդ է գործածում այն դեպքերում, երբ ցանկանում է շեշտել, ընդգծել տվյալ առարկայի պատկանելությունը: Քանի որ առարկայի պատկանելությունը շեշտելը ինքնին խոսողի վերաբերմունքի դրսևորումն է, ապա հասկանալի է, որ անձնական դերան-

վան այդպիսի կիրառությունները ոճական նշանակություն ունեն։

Առարկաների պատկանելությունը անձնական դերանվան սեռական հոլովով արտահայտվում է, նախ, հակադրություն-ների ժամանակ, երբ խոսքի մեջ հակադրվում են տարբեր դեմքերի պատկանելություններ։ «Էդ միայն ֆո աչքն է կա-պել, իմ աչքը չի կարող կապել» (ՆՋՀ, էջ 94)։ Հակադրու-թյունը շատ թույլ կլիներ և դիպուկ չէր լինի, եթե ասվեր. էդ միայն աչքդ է կապել, աչքս չի կարող կապել։

Առարկաների պատկանելությունը անձնական դերանվան սեռական հոլովով է արտահայտվում նաև այն ժամանակ, երբ թեև ավյալ նախադասության մեջ տարբեր դեմքերի պատկա-նելությունները իրար չեն հակադրվում, բայց շեշտվում, ընդ-գծվում է ավյալ դեմքի պատկանելությունը։ Դերանվան այս կիրառությունը առկա է հատկապես այնպիսի նախադա-սություններում, որոնց մեջ կան մի քանի համազոր անդամ-ներ, և խոսողը ցանկանում է շեշտել այդ համազոր անդամ-ների ցույց տված առարկաների՝ նույն անձին, նույն դեմքին պատկանելը։

«Դու իմ անմեղ, իմ լույս մանկիկ,
Իմ արշալույս և իմ դարման,
Քո երկնքում չկա ամպիկ,
Դեռ մահ չկա քո աշխարհում» (ՆՋ, Հատ.,
էջ 82)։

«Քո ծնողները, ֆո եղբայրները իրենց կյանքը դրին հա-րազատ քաղաքի, Լենինի քաղաքի պաշտպանության համար, նրանք երբեք անձնատուր չեղան, իսկ դո՞ւ» (ԱՍ, ՈՄ, էջ 123)։ «Ինչ ուզում է լինի, էլի իմ ամուսինն է, իմ թագն ու պսակը» (Ն.-Դ., IV, էջ 113)։

Անձնական դերանվան հատկապես առաջին դեմքի սեռա-կան հոլովը կարող է գործածվել նաև այն դեպքերում, երբ խոսողը ցանկանում է իր ջերմ վերաբերմունքն արտահայտել որևէ երևույթի, առարկայի, անձի և այլնի նկատմամբ և

Ամեն *կերանունով կազմված բառերն են.*

ամենաբաղձ
ամենաբաշխ
ամենաբավ
ամենաբիծ
ամենաբույժ
ամենաբույծ
ամենաբույս
ամենաբուխ
ամենաբուրյան
ամենագետ
ամենագիտակ
ամենագիտություն
ամենագլուխ
ամենագյուտ
ամենագոյ
ամենագույն
ամենագործ
ամենագրավ
ամենադավ
ամենադես
ամենադան
ամենադարդ
ամենադզի
ամենադնին
ամենաժողով
ամենալի
ամենալիր
ամենալից
ամենախայտ
ամենախնամ
ամենածախ
ամենածաղիկ
ամենածին
ամենածնող
ամենակատար
ամենակեղ
ամենակեր
ամենակերակրիչ
ամենակերպ
ամենակերտ
ամենակեցույց
ամենակիր
ամենակործան
ամենակուլ
ամենահակառակորդ
ամենահաճ
ամենահամբավ
ամենահայց
ամենահաս
ամենահատ
ամենահավաք
ամենահնար, -ություն
ամենահռչակ
ամենաձայն
ամենաձև
ամենամիրձ
ամենամուխ
ամենահաղթ
ամենանկատ
ամենաշխջույց
ամենաշնորհ
ամենաչարչար
ամենապահ
ամենապատիր

տալիս ոչ երկրորդ դեմք, հետևապես՝ ոչ էլ այն առարկան, որին հանդում է գործողությունը, այլ այ ինձ կապակցության միջոցով խոսողը արտահայտում է իր զարմանքը որևէ երևույթի, առարկայի նկատմամբ, որի անունը սովորաբար դրվում է այ ինձ կապակցությունից հետո:

«Այ ինձ բան, իսկապես անվանակոչությանս օրն էր, և ես ոչինչ չդիտեի» (Ն.-Դ., IV, էջ 92): «Այ ինձ բան, ինչո՞ւ հնարավոր չէ» (Ա.Ա.Պ, էջ 116): «Այ ինձ բան... պլոխը տարուբերում է Հեյդարը» (Ա.Ա.Պ, էջ 11): «Այ ինձ կնկա շառ...» (Անթ., էջ 35): «Այ ինձ անպիտան երիտասարդ, մյուսները հեղհեղի դեմ են նեռվում, իսկ սա... սպասիր դու, ավազակ» (Անթ., էջ 458): «Այ ինձ փորձանք» (ՀՔ, III, էջ 209): «Այ ինձ ճպուռ» (Ա.Ս, ՈՄ, էջ 103): «Այ ինձ բան,— բացագանչեց նա,— շաքար էլ կտայինք, ինչ կա որ» (Ընտ. էջեր, էջ 725):

«Դերանունների շարահյուսական կիրառությունները» դըլխում խոսվել է ինձ իրեն, ինձս ինձ և նման կապակցությունների շարահյուսական որոշ յուրահատուկ կիրառության մասին, բացի դրանց բառացի կիրառություններից: Այստեղ անհրաժեշտ ենք համարում համառոտակի կանդ առնել դրանց ոճական նշանակության վրա:

Այդ կապակցությունները իրենց կիրառությունների մի զգալի մասում կորցրել են իրենց բառացի իմաստը և ձեռք են բերել իմաստային նոր երանգ. դրանք հաճախ նշանակում են «ներքուստ», «ինքն իր մեջ», «լուռ», «ինքնուրույն»: Դրանից, հատկապես ինձ իրեն կապակցությունը իմաստով մոտենում է ձևի մակբայներին:

«Ինձ իրեն դժգոհ փնթփնթում էր ծերունին» (Վ.Ա., ՍՍ, էջ 27): «Ինչպե՞ս ես կարողանում ինձդ ինձ, առանց ուսուցչի օգնության, միայն դասագրքով սովորել» (Ա.Ս, ՈՄ, էջ 118):

Անձնական դերանվան այս կիրառությունը այնքան է հեռացել իր բառացի իմաստից և նոր իմաստ ձեռք բերել, որ հաճախ գրողները դրանք գրում են միասին:

«Դառնությամբ խոսից ինձնիրեն Վասակը» (Դվ, էջ 260):

«Ավագ զրահանը շշնջաց իմ ճակատին» (Ն. ա., էջ 8)։ «Կարծես բարձր մտածում էր իմ ճակատին» (Ն. ա., էջ 9)։ «Մտածում է նա իմ ճակատին» (ՆՋՀ, էջ 37)։ «Գիմնազիստը բարբաջեց իմ ճակատին» (ՆՋ, Հատ., էջ 315)։

Ճակատ իրեն կապակցության փոխարեն երբեմն որոշ հեղինակներ գործածում են իրեն–իրեն, որ վերցրել են բարբառներից։

«Իրեն սիրտ տալու համար սկսում է քթի տակին մրմռալ, իրեն–իրեն խոսել» (ՀՔ, III, էջ 889)։ «Իրեն–իրեն միտք է անում» (Ն. ա., էջ 197)։ «Իրեն–իրեն խոսելով, ներս մտավ սև շորերով բարի պառավը» (Ն. ա., էջ 39)։

Դերանունների հոլովումը քննելիս տեսանք, որ անձնական դերանվան ներգոյական հոլովաձևը գործածական չէ, և դրան փոխարինում է նույն դերանվան սեռական հոլովը մեջ կապի հետ։ Եթե նույնիսկ գործածվում էլ է, ապա այն, ինչպես և գոյականի ներգոյական հոլովը ցույց է տալիս, որ տվյալ անձի կամ առարկայի մեջ կա կամ կատարվում է մի բան։ Սակայն անձնական դերանվան հոդնակի առաջին և երկրորդ դեմքերի ներգոյականի ձևը հաճախ գործածվում է իմաստային մի այլ երանգով։ Այդ ձևը հաճախ ցույց է տալիս ոչ թե մեջ–ի կամ դուռ–ի մեջ մտնող անձանց իրրև մի տեղ, որտեղ կա կամ կատարվում է մի բան, այլ այն տեղը, որտեղ գտնվում կամ ապրում են մեջ–ի և դուռ–ի մեջ մտնող անձինք և նշանակում է «մեզ մոտ», «ձեզ մոտ» կամ «մեր (կամ ձեր) ապրած տեղում», «մեր (կամ ձեր) ապրած տեղի պայմաններում»։ «Մեզանում Պիմեն անունով մի հին ծերունի մարդ կար» (ՀՔ, III, էջ 211), նշանակում է մեզ մոտ, այնտեղ, որտեղ ես ապրում եմ (կամ մենք ապրում ենք) Պիմեն անունով մի հին ծերունի մարդ կար։

Այլ օրինակներ.

«Մեզանում բաց են արել պատուհանները. արևը շողշողում է, ծառերը ծլվլում են» (Ն.–Դ., IV, էջ 128)։ «—Ախ, ներողություն, կարծեմ ձեզանում ընդունված չէ առանց ամուսնու տնից դուրս գալ...— Ընդհակառակը, մեզանում ընդունված

չէ ամուսնու հետ տնից դուրս գալը։— Այո՛, չգիտեի, մեզանում այսպես էլ կարելի է, այնպես էլ...— Այո, ձեզանում ընդունված է, ինչո՞ւ մեզանում — ոչ» (Շերվ., IV, էջ 125)։

2. ՅՈՒՅԱԿԱՆ ԴԵՐԱՆՈՒՆՆԵՐԻ ՈՃԱԿԱՆ ԿԻՐԱՌՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

Դերանունների տեսակների էական հատկանիշները ըմբռնելիս տեսանք, որ յուրաքանչյուր դերանունների համար բնորոշ է առարկան կամ հատկանիշը տարածական ու ժամանակային հարաբերությամբ մատնացույց անելը։ Հենց այս բնորոշ դիծն էլ կարևոր դեր է կատարում յուրաքանչյուր դերանունների ոճական յուրահատուկ կիրառությունների գործում։

Թեև յուրաքանչյուր դերանունները իրենց հարաբերության շնորհիվ առարկան կամ հատկանիշը մատնացույց են անում որոշակի կերպով, սակայն երբեմն նրանք գործածվում են նաև անորոշ իմաստով։ Այսպես, օրինակ, այդ նպատակի համար կարող են գործածվել սա, նա և այս, այն դերանունների կապակցությունները, ինչպես և՝ այս, այն դերանունները որոշ յուրահատուկ կիրառությամբ։

Նախ՝ սա և նա դերանունների այդպիսի կիրառությունների մասին։ Սրանք, կապակցվելով առանց շաղկապի կամ շաղկապով, կարող են անորոշ կերպով ցույց տալ առարկա։

Օրինակներ.

«Սրա–նրա համար լվացք եմ անում» (Ն.-Դ., IV, էջ 114)։ Նա իր կյանքն անցկացրեց սրան–նրան օգնելով, որից մեծ բավականություն էր ստանում։ «Նրան տեսնում էի բակի կեռնողներից սրա կամ նրա դռանը» (ն. տ., էջ 72)։

Այս և այն դերանունների կիրառությունն այդ իմաստով ավելի բազմազան է։ Անորոշ իմաստով գործածվելիս այդ դերանունները կարող են կապակցվել և, ու, կամ շաղկապներով, քան այդի՛ էլ ունենալ իմաստային տարբերություններ։ Եվ կամ ու շաղկապներով միանալով և զրվելով գոյականի վրա, այդ դերանունները ցույց են տալիս, որ գոյակա-

նավ արտահայտված առարկաների քանակը մեկից ավելի է, որոշակի հարաբերությամբ ցույց չեն տալիս այդ առարկաները և արտահայտում են «տարրեր», «մի շարք», «բազմաթիվ» և նման իմաստներ: «Հարյուրավոր լապտերներ լուսատիեզերքների պես սկսեցին շարժվել այս ու այն ուղղությամբ» (ՆՋՀ, էջ 75): Այս ու այն այստեղ նշանակում է «տարբեր» և ոչ թե բառացի այս (խոսողին մոտ) և այն (խոսողից հեռու):

Այլ օրինակներ.

«Մի քանի հարյուրներ բողնելով՝ այս ու այն հոգաբարձության ձեռքին, վերջապես, կարողացա ուժս Թիֆլիս դցել» (Ն.-Դ., IV, էջ 67): «Վախթի՜... Մարթա՜խ, հարցրին այս ու այն կողմից»» (Ն.-Դ., I, էջ 100): «Ջոր ու դալուկ տերևները... քշվում էին այս ու այն կողմ» (Իս., էջ 334):

Մենք ասացինք, որ այսպիսի կիրառությունների ժամանակ այս ու այն կապակցությունը արտահայտում է «տարբեր», «մի շարք», «բազմաթիվ» և նման իմաստներ: Սակայն եթե այս վերջին բառերը իրրև որոշիչ գործածվելու դեպքում որոշյալը սովորաբար դրվում է հոդնակի թվով, ապա այս ու այն կապակցության՝ իրրև որոշիչի որոշյալը սովորաբար դրվում է եզակի թվով, ինչպես երևում է վերևում բերված օրինակներից: Վերցնենք հենց այդ օրինակներից առաջինը. «Հարյուրավոր լապտերներ լուսատիեզերքների պես սկսեցին շարժվել այս ու այն ուղղությամբ»: Այս նախադասության մեջ այս ու այն կապակցությունը, ինչպես ասվեց, նշանակում է «տարբեր», «բազմաթիվ», բայց եթե նրա փոխարեն գործածելու լինենք «տարբեր», «բազմաթիվ» բառերը, որոշյալը (ուղղությամբ) պետք է դրվեր ավելի շուտ հոդնակի, քան թե եզակի թվով: Այսպես, հարյուրավոր լապտերներ լուսատիեզերքների պես սկսեցին շարժվել տարբեր (կամ բազմաթիվ) ուղղություններով:

Իմաստային այլ երանգ ունի այս, այն դերանունների կապակցությունը կամ շաղկապով (այս կամ այն): Այս կապակցության համար, ի տարբերություն նախորդի, ավելի

հատկանշական է եղակի իմաստը: Բայլ դրանից, այս կամ այն կապակցությունը դրծածվում է իմաստային տարբեր երանգներով: Իմաստային այդ երանգներն այնքան նուրբ են, որ առաջին հայացքից նույնիսկ դժվար է նկատել: Սակայն, երբ հանդամանորեն համեմատում ենք նրա կիրառությունները, մանավանդ երբ փորձում ենք այս կամ այն կապակցության իմաստն արտահայտել մեկ ուրիշ բառով, այդ դեպքում երևվում են նրա նրբերանգները:

Այս կապակցության իմաստային որոշ տարբերությունների քննարկումը հետաքրքրական է ոչ միայն ինքնին վերցրած, այլև այն առումով, որ դրանով անդրադառնում ենք այդ կապակցության իմաստի ստեղծանական հետացումը իր բառացի իմաստից և նոր երանգներ առանալը:

Քննենք նրա մի քանի կիրառությունները:

Այս կամ այն կապակցությունը հաճախ ընդհանուր առմամբ անորոշություն է արտահայտում, այն առումով, որ դրկված է իր տարածական ու ժամանակային որոշակի հարաբերության իմաստից, բայց և մյուս կողմից նրա մեջ առկա է որոշյալ իմաստի մի փոքր երանգ, որպիսին հատուկ է որոշյալ դերանուններին: Այս դեպքում նա մոտավորապես ունենում է «տվյալ», «յուրաքանչյուր» բառերի իմաստը: Այսպես օրինակ, «Յուրաքանչյուր լեզու իր զարդացման այս կամ այն (=տվյալ, յուրաքանչյուր) շրջանում ունի տվյալ հնչյունական համակարգը և, հետևաբար՝ նաև հնչույթների մի որոշ համակարգ» (ԷՔԱ, Լ՝Ն, էջ 156): «Նա հատուկ է միայն այս կամ այն (=տվյալ) մարդուն, այսինքն՝ բացարձակապես անհատական է» (ն. տ., էջ 176):

Ավելի հաճախ այս կամ այն կապակցությունը կարող է նշանակել ոչ միայն «տվյալ», «յուրաքանչյուր», այլև «որևէ»: «Այս կամ այն.... հնչյունափոխության ընդհանրացման և հնչյունական օրենք դառնալու համար կարևոր նախապայման է նաև այն, որ ուրիշ որևէ պատճառ խոչընդոտ չհանդիսանա այդ ընդհանրացմանը» (ԷՔԱ, Լ՝Ն, էջ 178): «Որևէսի այս կամ այն հնչյունափոխությունն ընդհանրանա, առաջին հեր-

Ին անհրաժեշտ է, որ...» (Ն. ա., էջ 176)։ «Մենք կարող ենք խոսել այս կամ այն հնչյունափոխական օրենքի մասին այն ժամանակ միայն, երբ նա արդեն իսկ կատարված փաստ է դարձել լեզվի պարզացման տվյալ շրջանում» (Ն. ա., էջ 171)։ Այս օրինակներում այս կամ այն համապատասխան կարող է նշանակել «տվյալ», «յուրաքանչյուր», «որևէ» և փոխարինվել դրանցից որևէ մեկով։

Այս կամ այն կապակցության այս կիրառության մեջ անորոշ իմաստն ավելի ուժեղ է, այդ կապակցությունն այստեղ համեմատաբար ավելի է հեռացել (թեև առաջին տիպի կիրառություններում էլ նա արդեն հեռացած է) իր բուռացի իմաստից։ Դա հաստատվում է այն հանգամանքով, որ այս վերջին կիրառությունները արտահայտում են այնպիսի իմաստ, որը համապատասխանում է ոչ միայն «տվյալ», «յուրաքանչյուր» բառերի, այլև «որևէ» անորոշ դերանվան իմաստին։

Քննարկվող կապակցությունը որքան հեռանում է իր բուռացի իմաստից, այնքան անորոշության իմաստը նրա մեջ ավելի մեծ տեղ է գրավում։ Դրա հետևանքն առաջանում է այն, որ նա հաճախ արտահայտում է միայն «որևէ» անորոշ դերանվան իմաստը և այլևս չի կարելի «տվյալ», «ամեն մի», «յուրաքանչյուր» բառերը գործածել այդ կապակցության փոխարեն։ Այսպես՝ «Զարտաճճիները մի բոպե կորչում էին փողոցի այս կամ այն ծայրում» (Ն.-Գ., IV, էջ 118) նախադասության մեջ այս կամ այն նշանակում է ոչ թե «տվյալ» կամ «յուրաքանչյուր», որոնց մեջ տակա է իմաստի որոշյալություն, այլ նշանակում է «որևէ», այսինքն՝ ավելի անորոշ իմաստ ունի, քան նախորդ կիրառություններում։

Այլ օրինակներ՝

«Հենց այս բոպեին այս կամ այն կերոլ պիտք է որոշեք իմ վիճակը» (Ն.-Գ., IV, էջ 106)։ «Նրա անունը դեռ չի փայլում գրական հորիզոնում և եթե մերթ ընդ մերթ հնչում է այս կամ այն փոքրիկ շրջանում, միշտ հեգնությամբ» (Շիրվ., IV, էջ 508)։ «Ասում էր տալիս տանտիրոջս բնատանիքի այս

կամ այն անդամի հետ ինձ մոտ հանդիպելուց» (Ն.-Դ., IV, էջ 87)։ «Եթե կազմավորվող ազգային լեզուն անցյալից ժառանգում է պատմականորեն այս կամ այն կիրառ համաժողովրդական լեզվի բարբառներից մեկի հիման վրա կազմված պատվոր լեզու, ապա...» (ԼԲԱ, ԼՆ, էջ 473)։

Եվ վերջապես, այս կամ այն կապակցությունը որոշ դեպքերում հետացել է նաև իր եզակի իմաստից և գործածվում է «տարբեր», «շատ» իմաստով, թեև նրա որոշյալը պըրվում է եզակի թվով։ Այսպես՝ «Վերը այս կամ այն քերականական կարգի մասին խոսելիս հաճախ ասել ենք, թե այսինչ կամ այնինչ լեզվի մեջ ավյալ կարգը եղել է, բայց հետագայում անհետացել է» (ԼԲԱ, ԼՆ, էջ 339)։ Այս նախադասության մեջ այս կամ այն նշանակում է ոչ թե «որևէ», «որևէ մի», այլ նա բազմակիության իմաստ ունի և նշանակում է «մի շարք», «շատ», «բազմաթիվ», «տարբեր», խոսքը վերաբերում է ո՛չ թե մեկ, ո՛չ թե բոլոր (յուրաքանչյուր), այլ շատ քերականական կատեգորիաների։

Ինչպես տեսանում ենք, այս ու այն և այս կամ այն կապակցությունների էական տարբերությունն այն է, որ առաջինի համար հատկանշական է հոդնակի իմաստը, իսկ երկրորդի համար՝ եզակի իմաստը (թեև առանձին դեպքերում սա էլ կարող է գործածվել հոդնակի իմաստով)։ Իմաստային այդ տարբերությունը պայմանավորված է այս, այն դերանուններով մի դեպքում ու, մյուս դեպքում կամ շաղկապով կապակցվելու հանգամանքով, քանի որ ու շաղկապը միացման իմաստ ունի, իսկ կամ շաղկապը՝ բաժանման։ Իսկ այս նշանակում է, որ այդ երկու կապակցությունների իմաստների տարբերությունը գալիս է նրանց բառացի գործածության իմաստային տարբերությունից։ Համմա. Պետք է պարզաբանել այս ու այն (=այս և այն =և՛ այս, և՛ այն) աշակերտին։ Բայց՝ պետք է պարզաբանել այս կամ այն (=կա՛մ այս, կա՛մ այն) աշակերտին։

Եվ սա շատ բնական է։ Բառի կամ բառակապակցությունների ճշտական ու երկրորդական կիրառությունները չեն կա-

ըստ չպահպանել իրենց բառացի գործածության իմաստն այս կամ այն չափով, քանի որ դրանք առաջանում են բառացի գործածությունից և հենց վերջինիս ոճական ու երկրորդական կիրառություններն են:

Այս, այն դերանունները կարող են անորոշ իմաստ արտահայտել ոչ միայն իրար կապակցվելով իբրև բառակապակցություն, այլև միևնույն նախադասության մեջ գործածվելով նույն բառի հետ, որը կրկնվում է:

«Մի աղամարդ մի կնոջ մազերից բռնած... քարշ էր տալիս այս պատից այն պատը, այս անկյունից այն անկյունը» (Ն.-Դ., IV, էջ 79): «Ես ոչ մի բոլև չեմ նստի այս դյուղում, Լթև կոլխոզի նախագահը պիտի կարգադրի, թե այս բանը կեր, այն բանը մի ուտի» (ՆՋՀ, էջ 93): «Մի լեզվի մեջ այս (բեր. արտահայտության միջոցի — Ս. Ա.), մի ուրիշ լեզվի մեջ այն քերականական արտահայտության միջոցի հիմնական դառնալու համար արտմաբանական պատճառաբանություն չկա» (ԷՔԱ, ԼՆ, էջ 342):

Այս, այդ, այն, մյուս և նման դերանունները սովորաբար չեն գործածվում այնպիսի հատուկ անունների, մասնավորապես տեղանունների հետ, որոնցից միայն մեկ հատ գոյություն ունի: Եվ դա հասկանալի է: Քանի որ տվյալ անունով միայն մեկ առարկա գոյություն ունի, ուրեմն՝ տրամաբանական անհրաժեշտություն չկա դրանց հետ գործածելու նշված և այլ դերանուններ, որոնք առարկայի անվան հետ գործածվում են նման կամ նույն անունով մյուս առարկաներից տարբերելու համար: Այսպես, սովորաբար չենք ասում այս Մոսկվան, այդ Երևանը, այդ Գերմանիան և այլն: Սակայն երբեմն պատահում են յուրայական դերանունների գործածություններ նման դեպքերում՝ ոճական նկատառումով: Օրինակ, «Մենք ճանաչում էինք և սիրում կլասիկ Գերմանիան — «բանաստեղծների ու փիլիսոփաների հայրենիքը», ռոմանտիկական կապույտ ծաղիկի երկիրը, իդեալիստ և երազող այն Գերմանիան, որ, երբ էրնստ Ռենանը, 19-րդ դարի առաջին կեսին այցելից, ծունկի եկավ և համբուրից

հողը, Գյոթեի Գերմանիան։ Սակայն այդ Գերմանիան ձըգտվեց պրուսական յունկերի կրունկի տակ» (Խ., էջ 495)։

Այստեղ ընդգծված ցուցական դերանունները գործածված են ցույց տալու համար ոչ թե իսկապես մեկ Գերմանիան իր տարբերությունն մյուսի, այլ Գերմանիայի մեկ վիճակը, մի ժամանակվա էությունը իր տարբերությունն նույն Գերմանիայի մի այլ վիճակի։ Մի այլ օրինակ՝ «Այստեղ Լևոնը կարծես հաակացավ, որ կա երկու Հացավան։ Մեկ այն Հացավանը, որ այս րոպեիս հունձ է անում, կալսում է և արտադրում կոլխողական բարիք և սա է նոր Հացավանը, իսկ մյուս Հացավանը այն է, որ մնացել է դյուղում սպասկոոպի դառն առաջ կամ քարաշեն պատերի տակ շվաքում բամբասում է, պղտորում ու թունավորում» (ՆՀՀ, էջ 368)։ Այստեղ ցուցական դերանունների կիրառության հնարավորությունը գալիս է այն բանից, որ Հացավան հատուկ անունը գործածված է ոչ թե Հացավան տերիտորիալ հասկացության իմաստով, այլ որ պարունակյալի անվան փոխարեն գործածված է պարունակողի անունը. հիմնական Հացավան անվան տակ ավյալ դեպքում նկատի ունի Հացավանի բնակչությունը։

Այս, այդ, այն դերանունները սովորաբար, ինչպես հայտնի է, կամ գործածվելով անկախ՝ առարկա են ցույց տալիս և նախադասության մեջ հանդես գալիս իբրև ենթակա, խնդիր, առարկելիական վերադիր, կամ դրվելով գոյականի (երբեմն որոշ դերանունների և գոյականաբար գործածված այլ բառերի) վրա՝ կատարում են որոշչի պաշտոն։ Սակայն նրանք երբեմն գործածվում են ոչ մեկ, ոչ էլ մյուս իմաստով։ «Դերանունների շարահյուսական կիրառությունները» պիտի տեսանք, որ այս, այդ, այն դերանունները այդպիսի կիրառությունների ժամանակ նախադասության անդամի դեր չեն կատարում։ Եթե այդպես է, նշանակում է, որ այստեղ գործ ունենք այդ դերանունների ոչ թե հիմնական իմաստի դրսևորման, այլ նրանց ոճական իմաստի կամ ոճական կիրառության հետ։

Այս հետաքրքրական կիրառությունը սովորական և տա-

բածված է հատկապես ուղղակի խոսքում և մանավանդ հարցական ու բացագանչական նախադասություններում։

«— Այս ինչ շուտ սովորեց մեր դրական լեզվով խոսել,— զարմանքով նկատեց դիրեկտոր Մանուչարյանը» (ԱՍ, ՈՄ, եջ 302)։ «Այս ինչո՞ւ եք պայուսակով» (Ն. ս., էջ 204)։ «Բարև, Օֆիկ ջան, այս ի՞նչ լավ է այստեղ» (Ն. ս.)։ «Այդ ինչ սիրո մասին էր խոսքդ» (Ն.-Դ., I, էջ 16)։ «Այդ ինչ «դիտական արշավախումբ» եք կազմակերպում» (ՎԱ, ՍԱ, էջ 158)։ «Այդ ի՞նչ ծաղիկներ էին, որ քաղեցիր» (Խ., էջ 318)։ «Այդ ի՞նչ բազմակողմանի ընդունակությունների տեր մերդ ես եղել» (Ն.-Դ., I, էջ 17)։

Այս, այդ, այն դերանունները նման դեպքերում սովորաբար կոնկրետ առարկայական վերաբերությունից զուրկ են, և առանց նրանց ավելյալ նախադասության իմաստը տրամաբանական տեսակետից չի տուժի, բայց նրանց գործածությամբ խոսողը որոշ չափով երանգավորում է նախադասության իմաստը՝ շեշտում է այս կամ այն երևույթը, իրողությունը։

Այդ, այն դերանունները դեպքում, ժամանակ բառերի հետ գործածվելով (այդ դեպքում, այն ժամանակ)՝ հաճախ չեն արտահայտում իրենց հատուկ հարաբերության իմաստը։ Այդ կապակցությունները գործածվում են գործողության կատարման հիմունքը, պայմանը, պատճառը ցույց տալու համար։

«— Եթե կնիքը ճանճաքարում է գտնվել, ուրեմն Արտակ գրասվարը եղել է այնտեղ... Այստեղ վիճելու բան չկա։

— Լավ, քո կարծիքին համաձայն եմ,— վճռեց Կամոն։ Այդ դեպքում գնանք մի անգամ էլ խուզարկենք այրերը, գուցե հաջողվի գտնել գրասվարի ղենքերը կամ աճյունը» (ՎԱ, ՍԱ, էջ 184)։

«Արմենուհի.— Կգամենա՞ք, տիկին, վազն ինձ հետ բարձրանալ Կարմիր լեռան գագաթը արեգակի ծագումը տեսնելու։

Սերանույշ.— Ո՛չ, սիրելիս, անկարող եմ։

Արմենուհի.— Այն ժամանակ այս երեկո բարձրանանք արեգակի մայր մտնելը տեսնելու» (Շիրվ., VI, էջ 350)։

Մենք տեսանք, որ ցույցական դերանունները սովորաբար անձ չեն ցույց տալիս։ Իսկ առանձին դեպքերում նրանցով անձ ցույց տալը դերազանցապես ոճական նկատառումով է կատարվում։ Սա, դա *դերանունները անձ ցույց տալու համար սովորաբար գործածվում են այն ժամանակ, երբ խոսողը ցանկանում է արհամարհական վերաբերմունք արտահայտել տվյալ անձի նկատմամբ, կամ առանձնապես հաշվի չի առնում նրան, և կամ խոսողը անծանոթ է այդ անձին։ Այսպես, սա դերանունով Ն. Զարյանը ցույց տալով Հիտլերին՝ խորը արհամարհանք է արտահայտում նրա նկատմամբ։ «Բայց վճռել է սա (=Հիտլերը) լինել ավելին, քան իննի մի ներոն» (ՆՋ, I, էջ 162)։ «Չինգիզխանն անգամ մարդ էր արնախում այս հրեշի քով։ Գերմանիա, սրան քո ամոթը ան՝ կնեռե՞ս մինի» (Ն. տ., էջ 161)։ Միայն կլիներ կարծել, թե հեղինակի արհամարհանքը Հիտլերի նկատմամբ այստեղ բխում է միայն նախապատմությունների ընդհանուր իմաստից։ Այդ նախապատմությունների մեջ արտահայտված տեղեկությունն ու արհամարհանքը է՛լ ավելի է ընդգծվում սա դերանվան միջոցով, որի փոխարեն նրա գործածված լիներ ևս կամ մանավանդ իմ դերանունը, ապա հեղինակի արհամարհական վերաբերմունքն ղգալի չափով կմեղմանար։*

Այլ օրինակներ.

«Մի անգամ գնում եմ «Սան-Սուսի» և այնտեղ ումն եմ տեսնում.— հարս, Պ. Պետրոսին։ Սա, *եղբայր, նստած է մի դեզեցիկ, հազա կնոջ հետ մի փառավոր սեղանի առաջ և քեֆ է անում» (Ն.-Դ., III, էջ 24)։ «Սա՞ որտեղից լույս ընկավ» (Ն.-Դ., IV, էջ 161)։*

«Սոնա։ Ախ, իրավ, ես մոռացա, որ դուք միշտ «գործ» ունեք...

«Թորոսյան (առանձին)։ Այս ինչ է։ Սա է՞լ է *ինձ ծաղրում» (Ն.-Դ., III, էջ 15)։ Թորոսյանի վերաբերմունքի երանգը այլ կլիներ, եթե ասեր. «Դու է՞լ ես ինձ ծաղրում», իսկ եթե առանձին է խոսում, ասեր, «Սոճան է՞լ է ինձ ծաղրում», կամ՝ «Նա է՞լ է ինձ ծաղրում»։*

Այդ նույն նպատակով դործածվում են նաև այդ, երբեմն այս դերանունները անձերի անվան կամ անձ ցույց տվող բառերի հետ։

«— Այդ Զորաբի աղջիկը կոմերիտակա՞ն է։

— Նա կոմսոմոլ է, բայց անբարոյականություն է տարածում դյուղի մեջ» (ՆՋՀ, էջ 57)։

«Ո՞վ էր այդ վաշագան խոսխոսունին։ Ե՞րբ է եկել դյուղ։ Որտեղի՞ց է ստացել այդ տեղեկությունները։ Այս հարցերը տանջում էին Լևոնին» (ն. տ., էջ 96)։ «Այդ Գրիգորն էլ շարունակ ուտելու մասին է խոսում՝ իսկական հորթևարած» (ՎՄ., ՍՍ., էջ 29)։ Բայց ո՞վ է այդ Զինախտան, ո՞րտեղացի է, ի՞նչ պատուղ է» (Շիրվ., IV, էջ 268)։ «Բայց գոնե ասա. ի՞նչ շրջանի աղջիկ է այդ Զինան, ո՞վ է...» (ն. տ., էջ 269)։

Քննարկվող դերանունները ռճական նկատառումով կամ երկրորդական իմաստներով կարող են դործածվել ոչ միայն առանձին վերցրած, այլև միանալով այլևայլ բառերի հետ։ Ճիշտ է, նման դեպքերում այս կամ այն իմաստը արտահայտվում է ո՛չ թե դերանվան միջոցով առանձին վերցրած, այլ ամբողջ կապակցությամբ, սակայն քանի որ դերանունը այդպիսի կապակցություններում կարևոր դեր է կատարում, ուստի և անհրաժեշտ է պատշաճ ուշադրություն դարձնել դերանվան այդպիսի կիրառություններին վրա։

Այսպես, այն դերանվան և է օժանդակ բայի կապակցությունը (այն է) դործածվում է նախադասության որևէ անդամի իմաստի բացատրությունը շեշտելու նպատակով, ըստ որում՝ այդ բացատրությունը կարող է արտահայտվել մեկ բառով, բառակապակցությամբ կամ նախադասությամբ։ Այն է կապակցությունը, որ նման դեպքերում ռուսերենի то есть-ի համարժեքն է, դրվում է այդ բացատրությունից անմիջապես առաջ։ Իր այս դերով այն է կապակցությունը փաստորեն կապում է բացահայտիչը բացահայտյալի հետ, կամ բացատրական միտք արտահայտող երկրորդական նախադասությունը դլխավոր նախադասության հետ։ Մանավանդ վերջին դեպքում նա արտահայտում է այսինքն, որպեսզի շաղկապ-

նների իմաստը և հակված է մանելու շաղկապների շարքը: «Բայց հանդուցյալ տեր Օհաննես... կարողացավ համոզել նրան, որ յուր մոր ցանկության համեմատ շարունակեր յուր հոր Դպրարի արհեստը, այն է՝ դարբնության» (Մուր., I, էջ 17—18): Այս նախադասության մեջ այն է կապակցությունը կապում է արհեստը բացահայտյալը դարբնության բացահայտիչի հետ, որոնք սովորաբար բաժանվում են բութով: «Այժմ նա կամաց-կամաց մոռանում էր ցանկացած նպատակին, այն է՝ ազատել մորը լվացարանում օրն ի բուն շարաչար աշխատելուց» (Մուր., I, էջ 18): «Մնում էր միայն մի ճանապարհ, այն է՝ մի կերպ խոսք դուրս քաշել Կոլյայից» (Ն.-Դ., IV, էջ 19): «Թե ամբողջում եղածները և թե նորեկները բաժանեցին մի քանի խմբերի, որոնց և կարդացին զանազան տեղերում. այն է՝ ոմանց աշխարհականների մեջ, ոմանց պարիսպների վրա...» (Մուր., III, էջ 269): Այսպիսի նախադասություններում բացահայտվող կամ բացատրվող բառերի վրա կարելի է նշանակել բութ, կամ երբեմն՝ միջակետ. սակայն այդ դեպքում չի շեշտվի բացատրությունը, ինչպես որ շեշտում է այն է կապակցությունը:

Այդ նույն կապակցությունն ունի մի այլ կիրառություն ևս: Նա գործածվում է այն դեպքում, երբ խոսողը ցանկանում է շեշտել, որ միևնույն բարդ նախադասության կազմի մեջ մտնող նախադասություններից մեկի մեջ արտահայտված գործողությանը անմիջապես նախորդել է մի այլ գործողություն. ըստ որում, այդ գործողությունները կատարվել են անցյալում:

«Նա սուրը հանած դնաց դեպի թագավորին հարվածողը, որ այն է՝ շրջվել էր հեռանալու» (Անթ., էջ 130): «Երազանքով ձգեց վատակը և այն է՝ կամենում էր թուլանալ..., բայց հանկարծ զգաց, որ...» (Դվ, էջ 145): «Բայց նա շփոթված էր, մտքերը չէին կենտրոնանում, այն է՝ ուզում էր համառորեն կառչել զլուխը եկած առաջին մտքից, սակայն...» (Անթ., էջ 95):

Այն է կապակցության այդ իմաստն ավելի շեշտելու հա-

մար նրա հետ գործածվում է հենց բառը (հենց այն է)։ «*Ու հենց այն է, գրիչը թաթախեց սրվակի մեջ և գրեց մագաղաթի վրա, նրբերանդը փախավ*» (ԴԸՊ, էջ 200)։ «*Հենց այն է, կապիտանն ուզում էր շարժվել և լավ նայելով որոշել, թե ով էր այդ արարածը՝ հանկարծ սիլուետը հարձակվեց նրա վրա*» (Անթ., էջ 68)։

Վերևում տեսանք, որ այն է կապակցությունը կարող է գործածվել բացատրությունը շեշտելու, ընդգծելու նպատակով։ Հաճախ այդ նույն կապակցությանն ավելանում է բան բառը և կազմվում է բանն այն է կապակցությունը, որը գործածվում է նույնպես բացատրությունների ժամանակ։ Այս կապակցությունը իր գործածությամբ տարբերվում է այն է կապակցությունից։ Եթե վերջինս գործածվում է միևնույն նախադասության մեջ նրա որևէ անդամի մեկնաբանումը կամ բացատրականը շեշտելու համար, ապա բանն այն է կապակցությունը գործածվում է նախորդ նախադասության կամ նախադասությունների միտքը բացատրող, մեկնաբանող հաջորդ նախադասության հետ։

«*Հնչյունական այդ համակարգի սահմանափակումը չի՞ հակասում արդյոք իրականությանը։ Բոլորովին էլ ոչ. բանն այն է, որ խոսողության պրոցեսում մենք նկատի չենք առնում այդ մասնակի տարբերությունները, մանավանդ անհատականը...*» (ԷԲԱ, Լն, էջ 150)։ «*Թող այդպես լինի, բայց ես այնուամենայնիվ այսօր կասեմ այն, ինչ որ վաղուց չէի ուզում ասել և չէի համարձակվում..... Բանն այն է, բարեկամս, որ դու մի սարսափելի մոլորության մեջ ես, դրանից է առաջանում քո ընտանիքի և քո իսկ դժբախտությունը*» (Շիրվ., IV, էջ 511)։ «*Ավելին, սրանք ոչ մի կերպ չէին կարող անել, իսկ եղածն այնքան համեստ է, հիրավի, որ լավ անունդ չի ասվիլ ոչ մի կերպ... Բանն այն է, որ ամսական այդ ծախքերի համար նրանք որոշած են 30 ռուբլի, իսկ այդ 30 ռուբլուց էլ ինքը — կինը մի բան եան է դցում, որ պարտքերը վճարի*» (ՀՔ, V, էջ 248)։

Բանն այն է երբեմն գործածվում է այլ իմաստով, այն է՝

որևէ երևույթի կարևորությունը ցույց տալու, իսկ բանն այդ չէ կապակցությունը՝ երևույթի ոչ կարևորությունը ցույց տալու համար: «Է՛, սիրելիս, բանն այն չի, թե ով ո՛ր թվին է ծնվել, բանն այն է, թե ով ի՛նչ մարդ է» (ՀԹ, V, էջ 247): «Այդ չի բանը, քեռի, ես Կոդակի իսկական նպատակները, իհարկե, չդիտեմ» (Դվ., էջ 216): «Բանն էլ հենց այդ է, որ ես չէի կարող չանել» (ն. տ., էջ 308):

Այն էլ կապակցությունը, բացի իր բառացի իմաստով կիրառությունից (օր. նա միայն մեկ ակադեմիական պարագ ուներ, այն էլ վերացրեց), ունի նաև ոչ բառացի իմաստով կիրառություն, որը զգալիորեն հեռացել է իր բառացի իմաստից: Այս դեպքում խոսողը այն էլ կապակցությամբ շեշտում է որևէ առարկայի, երևույթի, գործողության այնպիսի հատկանիշը, որն անսպասելի է, զարմանալի կամ էլ ուշադրության արժանի:

«Մի՞թե նա դեռ պիտի խոսի այդ ապականված, անգութ մարդու հետ, այն էլ իր տանը» (Շիրվ., IV, էջ 288): «Հաճախ հեռագիրներ են առանում, այն էլ ինչ զվարճալի ու չնչին բանների մասին» (Ար., էջ 9): «Դժբախտությունը և այն էլ ինչպիսի՞ դժբախտություն, առաջին անգամ բաց արավ մեր տան դուռը և ներս մտավ» (Ն.-Դ., I, էջ 33—34): «Նա վճռել էր ուսուցչություն անել, այն էլ դյուղում» (ՆԴՄ, էջ 104): «Խանութ գնում էր միայն երեկոները, մութն ընկնելիս, այն էլ դրամարկղի փողերը առանալու համար» (Շիրվ., IV, էջ 165): «Ինչպես կարող է Սևանի աշխարհին հայտնի որսորդ Աստատուրից շատ բան իմացող լինի, այն էլ բնությունը ճանաչելու հարցում» (ՎՍ, ՍՍ, էջ 21):

Ինչպես երևում է բերված օրինակներից, այն էլ կապակցությունը դերազանցապես ունի մասնավորեցնող իմաստ և հաճախ կարող է փոխարինվել «մանավանդ», «մասնավորապես», «հատկապես» բառերով:

Բառացի, առարկայական իմաստից հեռանալու ուղու վրա է դտնվում առանց այն էլ կապակցությունը, որը գործածվում է ցույց տալու համար առարկայի այս կամ այն

հատկանիշն ունենալը, անկախ նախադասության մեջ նըշված այն պատճառներից, որոնք կոչված են առաջացնելու այդ նույն հատկանիշը: Եվ որովհետև վերջինս արդեն հատուկ է առարկային, ուստի այդ պատճառները կամ պատճառը ավելի են խտացնում, ղպալի դարձնում ավյալ հատկանիշը: Այսպիսով, խոսողը քննարկվող կապակցությամբ իր վերաբերմունքն է արտահայտում առարկայի կամ երևույթի ավյալ հատկանիշի նկատմամբ, նա շեշտում է առարկայի՝ ուշադրության արժանի այս կամ այն հատկանիշը, սրա խտացումը կամ բարձր աստիճանը: Այսպես, օրինակ.

«Որդու փչությունը թունավորել էր պառավ Մարանի առանց այն էլ թշվառ կյանքը» (Ն.-Դ., I, էջ 152): Հեղինակը այս նախադասության մեջ կարող էր չգործածել առանց այն էլ կապակցությունը (որդու փչությունը թունավորել էր պառավ Մարանի թշվառ կյանքը), և կպահպանվեր նախադասության նույն իմաստը: Բայց առանց այն էլ կապակցությունը ավելի է շեշտում պառավ Մարանի կյանքի թշվառությունը: Այլ օրինակներ. «Օրն արագորեն մթնում էր և առանց այն էլ մութ խրճիթը թաղվել էր մթության մեջ» (ն. տ., էջ 197): «Պառավը հապիվ նշմարեց աղջկա կերպարանքն օրորոցի կողքին... Առանց այն էլ ծերությունից խնդճացած նրա աչքերը սենյակում իրերն իրարից չէին տարբերում» (ՆՋՀ, էջ 194):

Այսպես, այդպես, այնպես *դերանունները* կարծել, ասել, խոսել, մտածել, խորհել, զգալ, հասկանալ, ըմբռնել և նման բառերի հետ գործածվելիս հաճախ ցույց են տալիս ո՛չ թե գործողության ձևը, նրա կատարման եղանակը (ինչպես սովորաբար), այլ գործողության արդյունքը, այսպես ասած, արտադրանքը և միաժամանակ սրա հատկանիշը: Օրինակ. «Այդպես չի կարելի կարդալ» նախադասության մեջ այդպես *դերանունը* կարող է նշանակել «շատ արագ», «անհարթ», «առանց շեշտադրության» և այլն, մի խոսքով՝ կարդալու ձևը: «Նա այդպես էր վազում» նախադասության մեջ այդպես *դերանունը* կարող է նշանակել «դանդաղ», «արագ», «կաղա-

լով» և այլն։ Բայց «նա այդպես էր ասում» նախադասության մեջ այդպես ավելի շուտ ցույց է տալիս ասածի բովանդակությունը, ասածը և սրա հետ միասին ասածի բովանդակության հատկանիշը։ «Նա այդպես էլ կարծում էր... ոգեմարդը չպետք է օգտվի կնոջ աշխատանքից։ Անվայել բան է։ Ամո՞ւր, այդպես ես մտածո՞ւմ։— Հենց այդպես» (Ն.-Դ., I, էջ 180)։ Այստեղ այդպես դերանունը ոչ թե կարծել, մտածել գործողությունների ձևն է ցույց տալիս, այլ հենց կարծածը, մտածածը, սրանց բովանդակությունը և վերջնիս հատկանիշը հանձին այդ բովանդակության յուրահատկության, բնույթի։

Բերենք այլ օրինակներ.

«Վահանն այսպես դիմեց նրան.
— Ես չեմ ուզում սոխից հարբած
Անտառ ու սար չափող կին» (ՆՋ, III, էջ 245)։
«Պատի պատատուին դրված է այսպես.
Աշխատում է այս դազգահին, այստեղ
Անվանի բանվոր Պոնոմարյովը» (ՍԿ, էջ 49)։

«Աշխատանքը սուրբ է— այսպես է գրած գրքում» (ԴՐՊ, էջ 208)։ «Նա (անցյալը — Ս. Ա.) միշտ գառն է լինում ներկայի համար։ Ճի՞շտ է արդյոք այդ։ Զգում եմ, որ՝ այո և զգում եմ, որ՝ ոչ։ Ինչո՞ւ։ Բացատրել չեմ կարող, բայց այդպես եմ զգում» (Ն.-Դ., I, էջ 26)։ «— Ամենքի ասելուն որ ականջ դնենք, այդ ո՞ւր կգնա։— Դու այդպես ես ասում, բայց հենց այդ ասելուն է, որ մարդու տուն է քանդում» (ՆԴՄ, էջ 105)։

Որ իսկապես այսպիսի գործածություններում այսպես, այդպես, այնպես դերանունները գործողության ձև չեն ցույց տալիս, այլ նրա արդյունքը կամ բովանդակությունը, վկայում է նաև այն փաստը, որ նման դեպքերում այդ դերանունների համար կարելի է տալ ոչ միայն ինչպե՞ս, այլև ի՞նչ հարցը։ Ի՞նչ են կարծում, ի՞նչ ես մտածում, ասում և այլն։ Իրենց այս գործածությամբ այսպես, այդպես, այնպես դերանունների իմաստը մոտենում է այս, այդ, այն դերա-

նունների իմաստին: Դա է պատճառը, որ նշված պայմաններում վերջիններս երբեմն գործածվում են այսպես, այդպես, այնպես դերանունների փոխարեն: Այսպես, «բայց Թող ապրի այս մանուկը... Այս ասաց Թչունը և իրեն նետեց խարույկի մեջ» (Իս., էջ 336): «— Գառնո այն դինվորը կամ բնակիչը, որ կհամարձակվի նրա հրամանին անսաստել՝ այս սրին պատասխանատու կլինի... Այս ասելով՝ իշխանը յուր սուրը կամարաձև բռնեց օրիորդի գլխին» (Մուր., III, էջ 293):

Այդ դերանունները երբեմն գործածվում են գործողությունը կատարողի հատկանիշը ցույց տալու համար, թեև դրվում են ոչ Թե վերջինիս, այլ՝ բայի վրա:

«Նայում եմ նրանց, խորհում եմ խորին.
— Այնպես ապրեի ես արևի տակ,
Այնպես մեռնեի, որ ինձ Թաղեին
Այս ատամնավոր պարիսպների տակ» (ՀՍ, ՄՏ, էջ 17):

Հասկանալի է, որ այստեղ այնպես դերանունը Թեև մեռնել բայի վրա է դրված, բայց մեռնելու գործողության ձևը չի ցույց տալիս, այլ փաստորեն այդ գործողությունը կատարողի հատկանիշը:

Այնպես *դերանունը առանձին, իսկ հաճախ «հետ» բառի հետ կապակցվելով գործածվում է որևէ գործողության կատարող լինելը ցույց տալու համար: Դրանով էլ պայմանավորված՝ նրանով խոսողը հաճախ արտահայտում է իր կամ որևէ մեկի անտարբեր վերաբերմունքը այս կամ այն երևույթի, գործողության նկատմամբ: Այդ կապակցությունը իմաստով մոտենում է եղանակավորող բառերին:*

«— Հը, ո՞ւմ ես սպասում:
— Ե՞ս... ինձ այնպես» (ԴՐՊ, էջ 222):

«Ատիան.— Ինչի՞ կանչեցիր:
Նաղար.— Ոչինչ, ինձ այնպես, քեֆի համար» (Անթ., էջ 78): «Դուրս է գալիս, որ Ռշտունյաց նախարարը խոսել է

առանց դիտենալու, ինձ այնպես» (Դվ., էջ 177)։ «Ուզում էի հարցնեմ, ինձ այնպես, ձևականորեն... ինչո՞ւ, լեզուս չգրեց»։ (Ն.-Դ., I, էջ 226)։ «Բայց չթողնց, որ մի անդամ կրակի, թեկուզ ինձ այնպես՝ օդի մեջ» (ՀՔ, ՄՏՋ, էջ 463)։ «— Հետաքրքրական է իմանալ ինչո՞ւ։— Ինձ այնպես, քեֆս չի տալիս» (Շիրվ., IV, էջ 223)։

Այսպես և այնպես *դերանունները հաճախ կապակցվում են թե շաղկապով, դրկվում իրենց որոշակի հարաբերության իմաստից և ձեռք բերում անորոշ իմաստ։ Այս կապակցությունը* (այսպես թե այնպես) *հաճախ գործածվում է այն դեպքերում, երբ մի առարկայի հատկանիշի, գործողության կատարման վերաբերյալ ասկա է երկբայություն, կան տարբեր կարծիքներ, կամ երբ մի երևույթի ավարտման, հարցի լուծման վերաբերյալ ենթադրվում են տարբեր ելքեր, և խոսողը որոշակի կերպով դրանցից որևէ մեկի կողմը չհակվելով հանդերձ՝ այդ բոլորից մի որոշակի հետևության է հանգում։ Այսպես օրինակ, «Ի՞նչ է նշանակում այդ. ծաղրո՞ւմ է նրան Ալիմյանը, թե՞ վախեցել է, թե՞ խելագարվել։ Այսպես թե այնպես դա մի այնպիսի քայլ էր, որին երբեք չէր կարող սպասել» (Շիրվ., IV, էջ 227)։ Այստեղ այսպես թե այնպես կապակցությամբ խոսողը մի կողմից՝ նշված երևույթների (ծաղրել, վախենալ, խելագարվել) նկատմամբ իր չկողմնորոշվելն է արտահայտում, իսկ մյուս կողմից՝ Ալիմյանի՝ իր համար անհասկանալի հոգեվիճակի ու վերաբերմունքի մասին հետևության է անում։*

Այսպես *դերանվան մի քանի երկրորդական կիրառություններ որոշ ընդհանրությամբ հանդերձ ունեն իմաստային զգալի տարբերություններ։*

Այսպես *դերանունը երբեմն գործածվում է որևէ մտքի կամ դրույթի բացատրությունից կամ կանոնի համար բերվող օրինակներից առաջ «օրինակ» բառի փոխարեն։ «...Լեզուների մեջ օգտագործվում են մասնիկները, արմատահնչյունի փոփոխությունը և այլն իբրև քերականական իմաստներ արտահայտելու միջոց... Այսպես, հայերենում... գոյականից ածա-*

կան կազմելու համար կարող ենք ավելացնել, ասենք, -ական մասնիկը...» (ԷՔԱ, ԼՆ, էջ 304)։ «Տեխնիկայի տեսակետից խիստ մեծ հնարավորություն ունի կրկնությունը։ Այսպես՝ բառը կարող է կրկնվել անփոփոխ կերպով» (Ն. տ., էջ 315)։ «...Այդ դասակարգումը կարող է արտահայտել այլևայլ կատեգորիաներ։ Այսպես՝ հայերենում այդպիսի քերականական սեռեր չկան. բայց դրա փոխարեն մենք ունենք առարկաների ու երևույթների դասակարգում ըստ անձի և իրի տարան» (Ն. տ., էջ 323)։

Նման դեպքերում հաճախ այսպես դերանվան հետ գործածվում է **օրինակ** *գոյականը։*

«Շեշտը և ինտոնացիան մեծ դեր են խաղում նաև հաղորդվածի նկատմամբ խոսողի վերաբերմունքն արտահայտելու համար։ **Այսպես, օրինակ,** *հարցումը, զարմանքը, հիացմունքը և այլն... արտահայտվում են ինտոնացիայով» (ԷՔԱ, ԼՆ, էջ 301)։ «Դրան համապատասխան էլ լեզվից անհետանում են այն բառերը, որոնք վերաբերում են այլ վերացած առարկաներին, երևույթներին, հասկացություններին։* **Այսպես, օրինակ,** *ֆեոդալական հասարակությանը և նրա լեզվին հատուկ սեպուհ, մարզպան, արքունիք, սենեկապետ, մարդպետ և նման բազմաթիվ բառեր մեր ժամանակակից լեզվում այլևս չկան...» (Ն. տ., էջ 256)։*

Այսպես *դերանվան այս վերջին կիրառությունները վերաբերում են այն դեպքերին, երբ մի երևույթի կամ հարցի մասին խոսելիս ընդհանուրից ենք գնում դեպի կոնկրետը, ասվում է ընդհանուր դրույթը, ապա տրվում է մասնավոր մեկնաբանությունը. կամ օրինակը։ Սակայն այսպես դերանունը գործածվում է նաև հակառակ պարագայում, այսինքն, երբ միտքը արտաբառնորեն զարգացնում ենք մասնավորից դեպի ընդհանուրը, երբ բերում ենք առանձին փաստեր և անում հետևություն։ Օրինակ. «Մեկը զավակներին է սիրում, կնոջն առում, մյուսի կինն է զավաճանում, երրորդը ուշադրի չի հաշտվում կնոջ բնավորության հետ։ Եվ այսպես, որ կողմ նայում ես — ընտանեկան դրամա» (Շիրվ., IV, էջ 136)։*

Այսպես *դերանվանը այդ դեպքում կարող է միանալ ուրեմն բառը։ Օրինակ, Մերսիմյանի և Նազիմյանի (Շիրվանզադե, «Ընկերները»)* բավականին երկար զրույցը *ավարտվում է Նազիմյանի հետևյալ ընդհանրացումով՝ «Այդպես ուրեմն, ծառայության փոխարեն ծառայություն, չէ՞, հաճելի ծառայություն» (Շիրվ., IV, էջ 490)։*

Այսպես *դերանունը միանալով ասած, կոչված բայերին՝ կազմում է կապակցություն, նախադասության մեջ դարձածվելով իրեև միջանկյալ բառակապակցություն, որով արտահայտվում է խոսողի վերաբերմունքը հատկապես որևէ երևույթի կամ առարկայի անվանման վերաբերյալ։ Այդ կապակցությունը գործածվում է այն դեպքերում, երբ խոսողը գործածում է կամ ոչ սովորական, չտարածված ոճերին, արտահայտություն, կամ էլ, եթե տարածված է, ինքը խոսողը հակված է ճիշտ չհամարելու այդ, կամ արհամարհական վերաբերմունք ունի դրա նկատմամբ։ «Ես պլուպացի եմ ոչ միայն, այսպես ասած, սոցիալական դրությամբ, այլև հոգով» (Անթ., էջ 313)։ «Իմ կարծիքով այդպես է, բայց դու բավականաչափ, այսպես ասած, էներժիկ չես» (Շիրվ., IV, էջ 297)։ «Միխինդն անցել է, այսպես կոչված, «անվտանգության վոխտարձ ապահովման ծրագրին» համապատասխան ամերիկյան «օգնություն» ընդունելու դեմ պայքարի նշանաբանով» (ՍՀ, 24/II, 1954 թ.)։ «Անգլիայի տերիտորիան Թեմզա գետից հյուսիս անցավ դանիացիների իշխանության տակ, կազմելով, այսպես կոչված, «Դանիական իրավունքի մարզը» (ԼՀ, էջ 274)։*

Այսպես, այդպես, այնպես *դերանունները չէ՞ օժանդակ բայի հետ գործածվում են որևէ հարցի մասին իսկությունը, խոսողի կարծիքն իմանալու համար։*

«Դուք անշուշտ Քութայիսից եք գալիս, այնպես չէ՞» (ՆԴՄ, էջ 12)։ «Իսկ շատ ձանձրալի է երկաթուղով ճանապարհորդելը... Այդպես չէ՞» (*Ն. ա.*, էջ 11)։

«— Երկար կյանքն, իհարկե, ամեն բանից լավ է, այդպես չէ՞...

— *Իհարկե...*

— *Երկար կյանքն առանց առողջության, իհարկե, մի կոպեկ չարժե, այդպես չէ՞» (Ն. ա., էջ 30)։*

«Բայց այս այրը իսկական աճաարի է նման, այնպես չէ՞» (Վ.Ա., ԱՍ, էջ 186)։

Այնպես, այնպիսի, այնման *դերանունները, գործածվելով բացատականությամբ՝ արտահայտում են խոսողի վերաբերմունքը գործողության ձևի կամ չափի, առարկայի հատկանիշի վերաբերյալ։*

Նախ՝ այնպես *դերանվան մասին։ Երբ այս դերանունը բացատականական ինտոնացիայով գործածվելիս դրվում է ածականի վրա, ասստկացնում է ածականի ցույց տված հատկանիշը և իմաստով մոտենում է* այնման *դերանվան իմաստին։ «Ամեն ինչ այնպես հանդիսավոր էր, այնպես պայծառ ու լարված...» (ԱՍ, ՈՄ, էջ 360)։* Այնպես *դերանունն այստեղ նշանակում է շատ (շատ հանդիսավոր էր, շատ պայծառ էր) և կարող է փոխարինվել* այնման *դերանունով, քանի որ ոչ թե հատկանիշի ձևն է ցույց տալիս, այլ՝ չափը, աստիճանը, ինչպես՝ «Մի խոսքով, ամեն ինչ* այնման *հետաքրքիր է հիմա, այնման հետաքրքիր...» (ԱՍ, ՈՄ, էջ 366)։ Այլ օրինակներ.*

«Կյանքը իմ տունն է, ես նրա տերը
Այս նվիրական հողի վրա,
Այնպես շքեղ են նրա պատերը,
Այնպես ամուր է հիմքը նրա» (ՀՍ, ԾՏ, էջ 18)։

«Ա՜խ, այնպես ջերմ է և այնպես խորը
Այն սերը, որով սիրում է Լորը» (Ն. ա. էջ 93)։

Այնման *դերանունը բացատականական ինտոնացիայով գործածվելիս նույնպես ասստկացնում է իր արտահայտած իմաստը, իր ցույց տված հատկանիշը։ «Դու, Եվա, կյանքում դեռ այնման լավ բաներ կտեսնես, այնման նոր բարեկամներ կունենաս» (ԱՍ, ՈՄ, էջ 365)։*

«Այս Գիլիի ավազակներն այնքան նման են իրար» (ՎԱ, ՍԱ, էջ 36)։ «Գյուտը թվում էր այնքան իրական, այնքան մոտ իր նպատակին» (Ար., էջ 451)։ «Նա այնքան կարիք էր զգում համերաշխության իր և գյուղի դեկավար աշխատողների միջև» (ՆԶՀ, էջ 75)։ «Այնքան նման ես դու նրան, մանավանդ քայլելիս» (ՆԶ, Հատ., էջ 275)։

Նույնպես դերանունը, որ առուգաբանորեն նշանակում է «նույնի պես», «նույն ձևով», «նույն եղանակով», ձեռք է բերել նաև մի այլ իմաստ, որն այժմ շատ տարածված ու սովորական է։ Խոսքը վերաբերում է նրա «ևս», «էլ» իմաստներով գործածություններին։ Այդ դեպքում նա շաղկապական կիրառություն ունի։

«Ինչպես միշտ, նույնպես այդ առավոտ մոտ նրա սենյակը» (Ն.-Դ., I, էջ 79)։ Այստեղ նույնպես նշանակում է ոչ թե «նույնի պես», կամ նույն ձևով, այլ՝ «ևս», այսինքն՝ «ինչպես միշտ, այդ առավոտ ևս մոտ նրա սենյակը»։ «Վերջապես զսպեցի ինձ, թողի նրա մեջքը և նայեցի դեմքին։ Նա նույնպես թողեց ինձ» (Ն. տ., էջ 48)։ «Վանոը նույնպես նկատում էր կանանց հաճախակի փոքրիկոցները» (ՆԶՀ, էջ 61)։

«Բրիգադները նույնպես լսել էին լուրը» (ՆԶՀ, էջ 368)։

Այստեղ, այդտեղ, այնտեղ դերանունները, ինչպես հայտնի է, ցույց են տալիս այն տեղը, որտեղ գտնվում է առարկան, կամ կատարվում է գործողությունը, այսինքն՝ ունեն տարածական իմաստ։ Սակայն նրանք երբեմն գործածվում են իմաստային այլ երանգով։ Այսպես, «Ձևական ինքնուրույնության տեսակետից նույնանալով բառերի հետ, իմաստի և ձևի տեսակետից նրանք համընկնում են մասնիկների հետ։ Հենց այստեղից ելնելով էլ, բառերը բաժանում են երկու կարգի՝ լիիմաստ բառեր և թերիմաստ բառեր» (ԷՔՍ, ԼՆ, էջ 200)։ Այս նախադասության մեջ այստեղ դերանունը տարածություն չի ցույց տալիս, այն գործածված է սա դերանվան իմաստով. ինչպես, «բառ անվանումը նրանց տրվում է միայն իրենց ձևական հատկանիշի հիման վրա...

Սրանից ելնելով էլ մեզ ավելի հարմար է թվում այդ կարգի բառերի համար հիշված անվանումներից ընտրել ձևական բառեր անվանումը». (Ն. ա., էջ 200)։ Բերենք այլ օրինակներ։ «Իսկական նույն հանրության բոլոր անդամները ճիշտ միևնույն ձևով չեն արտասանում հնչյունները... Այստեղից հետևում է, որ լեզվի մեջ խոսողության պրոցեսում դրսևորվում է հնչյունների բազմազանություն» (Ն. ա., էջ 150)։ «Նրա (Ն. Մառի— Ս. Ա.) կարծիքով բառիմաստը իր փոխհարաբերություններով արտահայտում է մտածողության սահմանները։ Այստեղից էլ ահա, նա այն դրույթն է առաջ քաշում, թե...» (Ն. ա., էջ 240)։

Այս դերանունները նշված իմաստով կարող են գործածվել ուղիղ ձևով և բացառական հոլովով միայն, իսկ նրանց մյուս հոլովաձևերը պահպանում են իրենց սովորական իմաստը։ Պետք է նկատել նաև, որ այդ իմաստով գործածվում է հատկապես այստեղ դերանունը, իսկ սակավ դեպքերում կարող են գործածվել նաև այդտեղ, այնտեղ դերանունները։

Եթե այս վերջին կիրառությունների մեջ այստեղ դերանունն ունի «այս բանը», «այս դրույթը», «սա» իմաստը, ապա սրա նմանությամբ էլ նա երբեմն գործածվում է «այս դեպքում», «այդ ժամանակ», «այն ժամանակ» իմաստով, երբեմն էլ ժամանակի իմաստ է արտահայտում։ Այսպես, «Այստեղ արդեն Հանեսը մտածեց» (Ար., էջ 152) նախադասության մեջ Արազին այստեղ դերանունը գործածում է ցույց տալու համար ոչ թե տեղ, տարածություն, այլ այն ժամանակը, այն մոմենտը, երբ Հանեսը տեսնում է, որ իր արտը վարել են։ «Այստեղ Լևոնը հասկացավ, որ կա երկու Հայաստան» (ՆՋՀ, էջ 368)։ Այստեղ դերանունով հեղինակը նկատի ունի այն մոմենտը կամ ժամանակը, երբ Լևոնը նկատում է, որ հայաստանցիների մի մասը աշխատում է դաշտում, իսկ մյուս մասը խուսափում է աշխատանքից, մնում գյուղում, զբաղվում բամբասանքներով և վնասարարությամբ։

«— Լենին,— ցածրաձայն ասում է հեխը...
Եվ հետո ինչ-որ մի քանի բառ։
Այստեղ չինացին շոյում է բեղը,
Գլխով է անում մտերմաբար» (ՀՍ, ՕՏ, էջ 9)։

3. ՈՐՈՇՅԱԼ ԴԵՐԱՆՈՒՆՆԵՐԻ ՈՃԱԿԱՆ ԿԻՐԱՌՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

Որոշյալ դերանունները անձնական և ցուցական դերանունների պես ոճական հարուստ, բազմազան կիրառություններ չունեն։ Բացի դրանից, նրանց կիրառությունները իրենց բնույթով զգալի չափով տարբերվում են դերանվան մյուս տեսակների ոճական կիրառություններից։

Այսպես, մի շարք որոշյալ դերանուններ հաճախ ոճական երանգ են տալիս խոսքին ոչ թե այն պատճառով, որ տվյալ դործածություններում նրանք ստանում են իրենց սովորական իմաստից տարբեր իմաստ կամ իմաստային երանգ, այլ այն պատճառով, որ այդ դեպքերում, որոնք, ի միջի այլոց, քիչ չեն, նախադասության մտքի կամ խոսքի տրամաբանական կողմի տեսակետից նրանք ավելորդ են, բայց ոճական տեսակետից, միտքը շեշտելու տեսակետից անհրաժեշտ են։ Այսպես, «Ամբողջ մի ժամ նա կառքով թափառում էր ծովափում հետ ու առաջ» (Շիրվ., IV, էջ 223)։ Այս նախադասությունը կարելի էր գործածել նաև առանց ամբողջ դերանվան՝ մի ժամ նա կառքով թափառում էր ծովափում հետ ու առաջ։ Ինչպես տեսնում ենք, այս երկու նախադասությունների միտքը նույնն է, բայց առաջին նախադասության մեջ ամբողջ բառի գործածությամբ շեշտվում է թափառելու ժամանակի տևողությունը։

Բերենք այլ օրինակներ։ «Դրանք բոլորը Փիրուզյանինն են» (Մուր., III, էջ 18)։ «Մի անգամ, ինչպես եղավ, որսի գնացի ու ամբողջ երեք օր առանց հանգստանալու մոն եկա» (ՀՓ, III, էջ 207)։ «Դա մի ամբողջ հեքիաթ է, ժամանակակից հեքիաթ, ոսկե խնձորներով» (Շիրվ., IV, էջ 474)։ «Այդ

ըը ամբողջ գործարանի բանվորները խոսում էին Ալեքի դյուտի մասին» (Ար., էջ 459)։ «Մեր ամբողջ ընտանիքի միակ հույսը նա էր» (Ն.-Դ., I, էջ 68)։ «Մերոնք ամենքը լավ են» (ՀՔ, III, էջ 389)։ «— Մենք բոլորս դինվորյալներ ենք, սպարապետ,— հառաչեց Առաքելը» (Դվ, էջ 250)։

«Այ մայրիկ, ո՞ւր ես,
Մի ամբողջ ավուր
Միրգ եմ բերել քեզ» (ԳՍԲ, էջ 210)։

Նույն նպատակով հաճախ է գործածվում նաև ժխտական բնույթի ոչ մի դերանունը։ «Բլագոևը... ոչ մի ջանք չէր խնայում երիտասարդ պարտիզանների մտավոր ու բարոյական զարգացման համար» (ՀՀ, ԲԼ, էջ 140)։ «Նա ոչ մի խոսք չասաց Նազիկի մասին» (ԱՍ, ՈՄ, էջ 272)։ «Լեզուների ուսումնասիրությունը ցույց է տալիս, որ ոչ մի լեզու բացարձակապես կայունացած ու կենսունակ տարրերից չի կազմված» (ԷԲԱ, ԼՆ, էջ 21)։ «Եվ այլևս ոչ մի խոսք չարտասանեց Լիպարիտը» (ՆՋՀ, էջ 41)։

Ոճական նույն նպատակով որոշ յուրահատկությամբ ու սահմանափակությամբ գործածվում են նաև մյուս ժխտական ձևի դերանունները՝ ոչ ոք, ոչ մեկը, ոչինչ։ Այդ յուրահատկությունը, նախ, այն է, որ եթե ոչ մի դերանվան հետ գործածվում է դոյական, ապա մյուս դերանունները գործածվում են հենց դոյականի տեղ։ Այնուհետև, առարկա ցույց տվող այդ դերանունների հետ երբեմն կարող է բացասական հոլովով դրվել այն դոյականը, որը ժխտվում է։ Համմա. Ոչ մի մարդ չի եկել. ոչ ոք չի եկել։ Նա ոչ մի բան չի բերել։ Նա ոչինչ չի բերել։ Նա ոչ մի ուսանողի չեմ տեսել։ Նա ուսանողներից ոչ մեկին (ոչ ոքի) չեմ տեսել։ Ոչ մի բանվոր չէր բացակայում, բանվորներից ոչ ոք (ոչ մեկը) չէր բացակայում ժողովից։ Կամ՝ բանվորներից ժողովին բացակայող չկար։ Կամ՝ «Չեք ազատվի ոչ մեկդ պատերազմից, չեք ազատվի» (Անթ., էջ 316)։

Առհասարակ պետք է նկատի ունենալ, որ ժխտական ձև-

վի որոշյալ դերանունները հաճախ են ոճական նպատակով գործածվում։ Նրանց կիրառությունների ճնշող մեծամասնությունը կարելի է արտահայտել նաև այլ բառերով՝ համապատասխան դոյականներով կամ դերանուններով՝ պահպանելով նախադասության ժխտական ձևը։ Վերջին բոլոր նախադասությունների ժխտական դերանունները փոխարինենք ոչ-ժխտական այլ բառերով՝ պահպանելով նախադասության ժխտական ձևը։ Այսպես, փոխանակ ասելու, «ոչ մի մարդ չի եկել» կամ «ոչ ոք չի եկել», կարող ենք ասել՝ «մարդ չի եկել»։ Փոխանակ ասելու «Ես ոչ մի ուսանողի չեմ տեսել» կամ «Ես ուսանողներից ոչ մեկին (ոչ ոքի) չեմ տեսել», կարող ենք ասել՝ «Ես ուսանող չեմ տեսել», կամ՝ «Ես ուսանողներին չեմ տեսել»։ Այդպես և վերջինը՝ «Բանվոր չէր բացակայում ժողովից»։ Ինչպես երևում է, ժխտական դերանունների գործածության դեպքում ժխտումն ավելի շեշտված է, քան մյուս դեպքում։

Ժխտական նախադասություններով մի բան ժխտելով՝ հաճախ խոսողը նպատակ է ունենում հաստատել մի այլ բան՝ ժխտված մտքի հակառակը (օր. Նա հիվանդ չէ, նշանակում է՝ նա առողջ է)։ Հիշենք, որ որոշյալ դերանվան ժխտական ձևը գործածվում է ժխտական նախադասություններում։ Այսպիսի նախադասությունները հաճախ հանդիսանում են հաստատական որոշյալ դերանուն ունեցող հաստատական նախադասությունների համարժեքներ, թեև բնույթով (մեկը ժխտական, մյուսը հաստատական) տարբեր են։ Սակայն դրանք համարժեքներ լինելով հանդերձ՝ ունեն ոճական նուրբ տարբերություն, տվյալ երևույթի կամ իրողության հաստատման երանգի տեսակետից։

Համեմատենք հետևյալ նախադասությունները, որոնցով խոսողը մեկ նպատակ է հետապնդում՝ հաստատել տվյալ գրքի ամբողջական լինելու փաստը։ Այդ միևնույն միտքը կարելի է արտահայտել տարբեր ձևերով.

1. Այս գրքի թերթերը լրիվ են։
2. Այս գրքի բոլոր թերթերը լրիվ են։

3. Այս դրքից բերք չի պակասում։

4. Այս դրքից ոչ մի բերք չի պակասում։

Մեր նպատակից դուրս է տալ ժխտական նախադասությունների ոճական կիրառությունները, բայց անհրաժեշտ ենք համարում դռնե համառոտակի կանդ առնել այդ հարցի վրա, քանի որ ժխտական բնույթի որոշյալ դերանունները դործածվում և նրանց ոճական առանձնահատկությունները դրսևորվում են հենց ժխտական նախադասության մեջ։ Վերոհիշյալ նախադասություններից ամեն մի հաջորդը դրքի ամբողջական լինելու միտքը ավելի ընդգծված է արտահայտում, քան նախորդը։ Առաջին և երկրորդ նախադասությունների վերաբերյալ այդ հատկանալի է։ Ինչպես տեսանք վերևում, բոլոր բառը հաճախ, ինչպես և այս երկրորդ նախադասության մեջ, գործածվում է միայն միտքը շեշտելու նպատակով։ Իսկ ինչո՞ւ երրորդ և չորրորդ նախադասություններում ավելի է ընդգծված նույն միտքը, քան երկրորդում, չէ՞ որ երրորդ նախադասության մեջ միտքն ընդգծող հատուկ որևէ բառ չկա, իսկ չորրորդ նախադասության ոչ մի բառին համապատասխանում է երկրորդ նախադասության բոլոր բառը։ Դրա պատճառները երկուսն են։ Նախ, եթե առաջին երկու նախադասություններում դրքի ամբողջականությունը հաստատվում է ընդհանուր կերպով (բերքերը, բոլոր բերքերը), ապա վերջին նախադասություններում նույն միտքը մանավանդ ձևով է արտահայտվում (բերքի, ոչ մի բերքի), որով ավելի է ընդգծվում միտքը։ Երկրորդ պատճառը, որը նախորդ պատճառին շատ մոտ է և նրա տրամաբանական շարունակությունը, այն է, որ ժխտական կառուցվածք ունեցող նախադասություններում դրքի ամբողջական լինելու միտքը հաստատվում է այդ մասին կամ դրքի ամբողջականությանը հակասող որևէ փաստի (բեկում և մեկ էջի բացակայության) բացառումով։ Այսպիսով, տվյալ դիպքում կարևոր դեր է կատարում նախադասությունների ժխտական բնույթը։ Դրանում է՛լ ավելի համոզվելու համար կարելի է համեմատել նույն միտքն արտահայտող նախադասու-

թյուններում հաստատական և ժխտական այնպիսի որոշյալ դերանունների գործածությունները, որոնք երկուսն էլ ունեն մասնավորեցնող իմաստ:

Ամեն մի ուսանող պետք է մասնակցի թերթերի և ամսագրերի բաժանորդագրմանը:

Ոչ մի ուսանող չպետք է դուրս մնա թերթերի և ամսագրերի բաժանորդագրումից:

Ինչպես տեսնում ենք, այստեղ երկու դեպքում էլ միևնույն միտքը արտահայտված է մասնավոր իմաստ ունեցող որոշյալ դերանուններով, որոնցից ժխտականը ավելի է շեշտում միտքը, քան հաստատականը: Ի միջի այլոց, այստեղ մենք ականատես ենք լինում այն հետաքրքրական երևույթին, որ այդ և նման դեպքերում ժխտական նախադասությամբ ավելի շեշտված, ընդգծված է հաստատումում նույն իրողությունը, քան հաստատական նախադասությամբ: Նման դեպքերում նախադասության ժխտական բնույթով և ժխտական որոշյալ դերանունով է, որ բացառվում է առարկաների քանակական ամբողջությանը հակասող որևէ փաստ, բացառություն, որով և շեշտվում է առարկաների քանակական ամբողջության գաղափարը, իսկ դրանով էլ՝ նախադասության միտքը:

Ընթերցողին թյուրիմացությունից զերծ պահելու նպատակով նշենք, որ այս եղրակացությունը չի կարելի տարածել ժխտական բոլոր նախադասությունների և համապատասխան միտքն արտահայտող հաստատական նախադասությունների վրա: Այստեղ խոսքը վերաբերում է մասնավորապես այնպիսի նախադասություններին, որոնց մեջ գործածված է կամ հնարավոր է գործածել ժխտական որոշյալ դերանուն: Իսկ այլ բնույթի նախադասություններին դա չի վերաբերում: Այսպես.

Արամը լավ ուսանող է.
Արամը վատ ուսանող չէ:

Հասկանալի է, որ այստեղ հաստատական նախադասությամբ ավելի է հաստատված Արամի լավ ուսանող լինելը,

քան թե ժխտական նախադասությամբ։ Մենք չենք քննարկում դրա պատճառները, քանի որ այդ մեր ուսումնասիրության սահմաններից դուրս է։

Հայտնի է, որ ոչ մի դերանունը ընդհանուր ժխտման իմաստի հետ միասին ունի նաև առարկայի թվի կամ քանակի իմաստ։ Այսպես՝ ոչ մի դիրք նրան այնքան չէր հուզել, որքան «Երիտասարդ Գվարդիան»՝ նախադասության մեջ ոչ մի դերանունը արտահայտում է թվի գաղափար։ Այդ նախադասության իմաստն այն է, որ ուրիշ որևէ մեկ դիրք նրան այնքան չէր հուզել, որքան «Երիտասարդ Գվարդիան», ուրեմն՝ այդ մեկ դիրքը մյուս բոլոր դրքերից ավելի շատ էր հուզել նրան։

Սակայն միշտ չէ, որ ոչ մի դերանունն արտահայտում է քանակի գաղափար։ Հաճախ նա արտահայտում է ժխտում ընդհանուր կերպով առանց թվի գաղափարի։ Օրինակ. «Բլոդոևը... ոչ մի ջանք չէր խնայում երիտասարդ պարտիզաններին մատավոր ու բարոյական զարդացման համար» (ՀՀ, Բ, էջ 140)։ «Ոչ մի ջանք չէր խնայում» նշանակում է «բոլորովին ջանք չէր խնայում», և հասկանալի է, որ ոչ մի դերանունը թվի գաղափար այստեղ չի արտահայտում։ Այլ օրինակներ.

«— Դուք պիտի մնաք ուսում առանալու։

— Ոչ մի ուսում հարկավոր չէ, մեզ տար,— ասաց Բաբիկը հուզված ու վախեցած» (Դվ, էջ 316)։ «Մոր փաղաքշանքները, հոր թափանցող աչքերը նրա վրա ոչ մի ազդեցություն չարին» (Անթ., էջ 31)։ «Հայրենիք չարժի ոչ մի հարստություն, փառահեղ կյանք, ոչ մի պատիվ ու փառք» (Դվ, էջ 265)։ «Պարզ և անկեղծ ասում եմ, քո գրիչը ոչ մի ազդեցություն չունի քո փոքրաթիվ ընթերցողների վրա» (Շիրվ., IV- էջ 512)։ «Ոչ մի իմաստ չուներ այժմ քնքուշ խոսքերով հորդորել, կյանքի կոչել նրան» (Ա.Ս, ՈՄ, էջ 123)։ «Կարող էր ցրտահարվել, այն ժամանակ ոչ մի օգուտ չեք բերի ոչ ոքի» (Անթ., էջ 307)։

Այս և նման օրինակներում առանց ոչ մի դերանվան կարտահայտվեին նույն մտքերը, սակայն այդ դերանունը

ավելի է շեշտում ու ընդգծում ժխտումը, խոսողի ժխտական վերաբերմունքը ավելի նկատմամբ: Հետևապես և գործածվում է ոճական նպատակով:

Այսպիսով, ինչպես երևում է, ժխտական որոշյալ դերանունները համեմատաբար ավելի ընդգծված են արտահայտում խոսողի վերաբերմունքը, քան հաստատական որոշյալ դերանունները: Սակայն խոսողի վերաբերմունքի դրսևորման երանգի տեսակետից տարբերություն կա նաև հաստատական տարբեր որոշյալ դերանունների միջև: Որոշյալ դերանունները իր տեղում մենք բաժանեցինք երեք խմբի: Հիշենք այդ խմբերը. 1. դերանուններ, որոնք ցույց են տալիս առարկաների կամ նրանց քանակի ընդհանուր ամբողջությունը՝ չնշելով այդ ամբողջության մեջ մտնող առարկաներն առանձին, 2. դերանուններ, որոնք առարկաների կամ նրանց քանակի ամբողջությունը ցույց են տալիս՝ շեշտելով ամբողջության մեջ մտնող առարկաներն առանձին-առանձին, 3. դերանուններ, որոնք ցույց են տալիս մեկ առարկայի ամբողջությունը: Որոշյալ դերանունների վերջին ենթատեսակը ունի առաջին երկու ենթատեսակներից բոլորովին տարբեր կիրառություններ, քանի որ նա գործածվում է մեկ առարկայի ամբողջությունը ցույց տալու, իսկ առաջին երկուսը գործածվում են մեկից ավելի առարկաների ամբողջությունը ցույց տալու համար: Առաջին երկու ենթատեսակներն ունեն գործածության զգալի ընդհանրություն, և հաճախ նրանցից մեկը կարելի է փոխարինել մյուսով՝ չաղճատելով նախադասության միտքը: Համմտ. Նա բոլոր հարցերին լուրջ է մոտենում՝ Եվ՝ Նա յուրաքանչյուր (ամեն մի) հարցի լուրջ է մոտենում: Այս նախադասություններում ընդգծված դերանունները առարկաների քանակական ամբողջություն են ցույց տալիս, սակայն խոսողի վերաբերմունքը դրանց մեջ տարբեր է: Թեև բոլոր դերանունով խոսողը առարկաների քանակական ամբողջությունը ցույց է տալիս ընդհանուր կերպով, առանց առանձնակի ուշադրություն դարձնելու նրանցից յուրաքանչյուրի վրա, ապա յուրաքան-

չյուր, ամեն մի (և նման դերանունները) ևս ցույց են տալիս այդ ամբողջությունը, բայց, ի տարբերություն առաջինի, շեշտելով ամբողջության մեջ մտնող առանձինները: Հենց այդ պատճառով էլ՝ երկրորդ ենթատեսակի մեջ մտնող որոշյալ դերանուններով խոսողը ավելի է ընդգծում առարկաների քանակական ամբողջությունը, ավելի է շեշտում ամբողջ հատկանիշի հատուկ կամ պարտադիր լինելը առարկաներից յուրաքանչյուրի, հետևապես և՝ բոլոր առարկաների համար, քան առաջին խմբի մեջ մտնող որոշյալ դերանուններով:

Օրինակներ՝ «Նրա ամեն մի շարժումը մի առանձին հրապույր ուներ» (ՀՍ, Հվ, էջ 185): «Մարիամի յուրաքանչյուր խոսքն արձագանքում էր նրա խռովահույզ հոգում» (ԱՍ, ՈՄ, էջ 301):

«Արդյոք գիտե՞ս դու, որ չեմ մոռացել,
Ամեն–ամեն օր կարոտում եմ ես» (ԳՍԲ, էջ 37):

Ոչինչ դերանունը ունի մյուս բոլոր որոշյալ դերանուններից տարբեր մի կիրառություն: Նա հաճախ գործածվում է խոսողի վերաբերմունքը որևէ երևույթի, վիճակի մասին արտահայտելու համար և մեծ մասամբ հանդես է գալիս իբրև միջանկյալ բառ:

Օրինակներ.

«— Ինչպե՞ս ես, Աշոտ:
— Լավ եմ, ոչինչ, դո՛ւ ինչպես ես» (Ար., էջ 473):

«Իսկ շքամուտքը, ոչի՞նչ, թող մնա,
Նրանով անցնել դեռ կհասցնենք» (Ակ, էջ 57):

«— Այս ի՞նչ է,— աչքերը մեծ բանալով հարցրեց Մարությանը:
— Դա՞, ոչինչ: Նա քեզ ճանապարհից զրկեցի և ահա քավում եմ իմ մեղքը» (Մուր., III, էջ 59):

«— Ի՞նչ էիր ուզում ասել,— հարցրեց փաստաբանը հետաքրքրությամբ:
— Ոչինչ, ուզում էի ասել թե՝ ինձ համար նշանակություն չունի հարուստների բարեկամությունը» (ն. տ., էջ 54):

Ոչինչ դերանունը այս և նման կիրառություններում ընդ-

հանուր կերպով ժխտում չի արտահայտում, ինչպես սովորաբար, այլ ցույց է տալիս, որ խոսողը առանձնապես կարևորություն չի տալիս տվյալ երևույթին, մարդին, կամ առանձնապես լավ, դրական, ինչպես և առանձնապես վատ, բացասական չի համարում առարկայի տվյալ վիճակը:

4. ԱՆՈՐՈՇ ԴԵՐԱՆՈՒՆՆԵՐԻ ՈՃԱԿԱՆ ԿԻՐԱՌՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

Նախ հիշենք ժամանակակից հայերենի անորոշ դերանունների հիմնական իմաստն ու նշանակությունը: Այդ դերանունները, ինչպես տեսանք «Ժամանակակից հայերենի դերանունների դասդասումը, տեսակները» գլխում, ունեն մասնական իմաստ և արտահայտում են առարկայի կամ նրա քանակի անորոշ դաղափար: Սակայն անորոշ դերանունները խոսքի մեջ երբեմն ստանում են այլ իմաստ: Հաճախ, օրինակ, մի (մեկը) անորոշ դերանունը գործածվում է իմաստային այլ հրանգներով, այլ իմաստաներով: Դա մեծ մասամբ պայմանավորված է լինում այն բանով, թե իրրև որոշիչ գործածվելիս ինչ իմաստ ունեցող բառի (որ խոսքի մասի) վրա է դրվում, իսկ անկախ գործածվելիս՝ նրա այդ գործածության յուրահատկությամբ: Նախ՝ առաջին դեպքի մասին:

Մի անորոշ դերանունը թվական անվան վրա դրվում է նույնպես անորոշության գաղափար արտահայտելու համար, որը, սակայն, տարբերվում է անորոշ դերանուններին հատուկ և վերևում բացատրված անորոշության գաղափարից: Եթե «Մի օր նա եկավ ինձ մոտ» նախադասության մեջ մի դերանվան պատճառով մենք չենք իմանում, թե որ օրվա մասին է խոսքը, ապա «Մի ութ օր առաջ նա եկավ ինձ մոտ» նախադասության մեջ, ոչ թե մենք չգիտենք, թե որ ութի (կամ ութ օրվա) մասին է խոսքը, այլ դրանով կասկածի տակ է առնվում այդ թվականի հենց ցույց տված թիվը, ցույց է տալիս, որ այդ թիվը խոսողը գործածում է մոտավոր ձևով («մի ութ», «մի տասը», «մի տասնհինգ» նշանակում են «մոտավորա-

պես ութ», «մոտավորապես տասը», «մոտավորապես տասնը-հինգ»): Այսպիսով, եթե այդ դերանունը գոյական անվան վրա դրվելիս սովորաբար գոյականի ցույց տված առարկայի գաղափարը կասկածի տակ չի առնում, ապա թվականի վրա դրվելիս կասկածի տակ է առնում նրա ցույց տված թվի գաղափարը, այդ թիվը:

Բերենք օրինակներ:

«Մի տասը բոլսից գնդացիրները կակտացին» (Անթ., էջ 65): «Մի երկու-երեք շաբթից հետո Պետերբուրգ է գալու նոր կաթողիկոսը» (ՀԹ, V, էջ 371): Մի չորս-հինգ հոգի կարվեցին: Առաջավորներից մի յոթ բանվորի անհրաժեշտ է ներկայացնել պարգևատրման: «Այստեղ, Թիֆլիսում, ինչպես գիտեք, ապրում են այդ նավթային կրնսոններից մի երեքը-չորսը» (Մուր., IV, էջ 11):

Քանի որ մի դերանունը մոտավորության իմաստ է տալիս թվականին, այդ պատճառով հաճախ նման դեպքերում նրա հետ գործածվում է ոչ թե մեկ թվական, այլ տարբեր (բայց իրար մոտ) թվեր ցույց տվող թվականներ, երբեմն իրարև հարադրություններ, որով նույնպես արտահայտվում է տվյալ թվի՝ մոտավոր իմաստով գործածված լինելը: Այդպիսիք են վերևի օրինակներում՝ «մի երկու-երեք շաբաթ», «մի չորս-հինգ հոգի», «մի երեքը-չորսը», ինչպես և՝ «մի տաս-տասներկու դիրք» և այլն:

Մի դերանունը դրվելով փոfr բառի վրա, կազմում է մի փոfr կապակցությունը, որը մեծ մասամբ և սովորաբար դրվում է բայի վրա, երբեմն հատկանիշ ցույց տվող այլ բառերի վրա և այդպիսով ցույց է տալիս հատկանիշի հատկանիշ, իմաստով մոտենալով մակբայներին: Օրինակներ. «Մի փոfr անց նրանք մոտեցան վանքին» (Դվ, էջ 16): «Նիզակը անցավ թևքի մոտով, ճանկռտից մի փոfr» (ն. տ., էջ 7): «Մի փոfr անց Անահիտը վեր նայեց և ախորժյամբ հարցրեց» (ն. տ., էջ 41): «Մի փոfr հոգնած վարդով նրանք առաջ ընկան» (ն. տ., էջ 7): «Ավելի լավ է մի փոfr դիմանաս, ևս մի երկու օր և ամեն բան լավ կլինի» (Անթ., էջ

686)։ «Միայն թե նախ իրավունք ունեք ինձ ծանոթացնել ձեզ մի փոքր իմ անցյալի հետ» (Մուր., IV, էջ 751)։

Հետաքրքրական է մի անորոշ դերանվան և տեսակ բառը սահմանած կապակցությունը՝ մի տեսակ։ Այստեղ ևս, իհարկե, մի դերանունը տեսակ բառին տալիս է անորոշության իմաստ, բայց դրա հետ միասին, ավելի ճիշտ՝ դրանով պայմանավորված՝ այդ կապակցությունը ձեռք է բերել իմաստային մի նոր երանգ. դա այն է, որ մի տեսակ կապակցությունը գործածվում է «ոչ սովորական» իմաստով։ Այսպես, «Գոյանան, այսօր դուք աչքիս մի տեսակ եք, ինչ է, հիվա՞նդ եք, թե սիրահարված» (Անթ., էջ 695)։ Այստեղ «մի տեսակ եք» նշանակում է «սովորականի պես չեք»։ Մենք տեսանք, որ անորոշ դերանունների իմաստը բացարձակ անորոշ չէ, նրանց մեջ անորոշության հետ միասին տակա է նաև որոշակիության որոշ տարր։ Այդ տարրը զգալի չափով ուժեղ է «մի տեսակ» կապակցության մի դերանվան մեջ։ Այն հանգամանքը, որ այդ կապակցությունը նշանակում է «ոչ սովորական», նշանակում է խոսողը որոշ չափով ճանաչում է նրանով ցույց տրված հատկանիշը։ Այդ են հաստատում նաև վերոհիշյալ նախադասության մեջ՝ «մի տեսակ եք» կապակցությունից հետո գործածված «հիվանդ եք, թե սիրահարված» բնորոշումները։ Հաճախ է պատահում նաև, որ խոսողը լրիվ կերպով ճանաչում է առարկայի տվյալ հատկանիշը, բայց դարձյալ գործածում է «մի տեսակ» բառակապակցությունը, ցույց տալու համար, որ այդ հատկանիշը սովորական չէ տվյալ առարկայի համար։ Դա է պատճառը, որ հենց այդ բառակապակցության հետ միասին հաճախ են գործածվում առարկայի տվյալ հատկանիշը լրիվ բնութագրող բառեր։

Բերենք «մի տեսակ» բառակապակցության գործածության այլ օրինակներ։

«Ծնվել եմ նավի վրա, 1932 թվին...,— սկսեց նա մի տեսակ կերկերուն, ընդհատվող ձայնով» (ԱՄ, ՈՄ, էջ 302)։ Այսօր դու մի տեսակ ես. արտասովոր ցրված, անուշադիր, հարց ես տալիս, բայց պատասխանը չես լսում. հատկանում

եմ քեզ՝ ազգված նա երեկվա դեպքից, բայց այդքան անմիջական ու այդքան զգայուն չպետք է լինել: «Նա մի տեսակ անհանգիստ նայեց դռան կողմն ու խորհրդավոր շշնջաց, շուռով կսկսվի» (Ա.Ս, ՈՄ, էջ 360):

Մեկը դերանունը երբեմն յուրահատուկ ձևով գործածվում է մեկին բացատական միտք արտահայտող նախադասությունների: Նա այդ դեպքում գործածվում է բացատական իմաստ արտահայտող *բառի տեսական հոլովաձևի հետ: Օրինակ՝ «Իսկ իմ կարծիքով, նա կեղծավոր մեկն է» (Անթ., էջ 308): Այս նախադասության մեջ արտաբանական տեսակետից մեկը դերանունը ավելորդություն է (նախադասության իմաստը նույնը կլիներ, եթե ասենք՝ իսկ իմ կարծիքով, նա կեղծավոր է), բայց նա անհրաժեշտ է սճական տեսակետից՝ շեշտում է խոսողի սրտամարհական, բացատական վերաբերմունքը այն անձի նկատմամբ, որի մասին խոսվում է, որին վերաբերում է կեղծավոր բառը: Բերենք այլ օրինակներ: «Նազարի տակի նժույգը, որ տեսնում է վրեն ինչ ապետի մեկն է նստած՝ խրխնջում է» (ՀՔ, III, էջ 196): Նա ամբարտավանի մեկն է. ոչ սրի չի լսում:*

Մեկը անորոշ դերանունը հաճախ է գործածվում առարկաների, երևույթների թվարկության ժամանակ: Նման դեպքերում նրա հետ իրեն թվարկության ցույց տվող բառեր գործածվում են մյուս, ուրիշ բառերը, դասական թվականներ: «Հարուստները... մաքով զբաղված էին իրենց գործերով և Մարկոս ազգի թոզած հարստությամբ: Մեկը նավթահոր էր փորել տալիս և երեկ խոզովակը ծակել էր հորի մեջ, մյուսի գործակատարը գողություն էր արել, մի ուրիշն էլ մտածում էր՝ արդյոք լավ չի լինիլ, որ ինքն էլ իր հանքում գետնի տակով խողովակ անցկացնելով, հարևանի նավթը գողանա» (Շիրվ., IV , էջ 27): «Մարտաը քաղաքավարի, բայց սառը սեղմից մեկի ու մյուսի ձեռքը» (Ն. տ., էջ 33): «Մեկն իրեն երեսակայում էր անուղղելի զրպարտվար, մյուսը՝ հանճարեղ հարստահարիչ, երրորդը՝ երևելի հռետոր, մի ուրիշը՝ նշանավոր գիտնական կամ գյուտարար» (Ն. տ., էջ 514):

Մեկը... մյուսը *գործածվում են ոչ միայն թվարկության, այլև հակադրությունների ժամանակ։ «Մի՞թե մանրակրկիտ չէ այն մարդը, որ այդ մռայլ հարթության տակ տեսնում է ինչ-որ խորդուբորդներ, մեկին սիրում, մյուսին արհամարհում, մեկին օգնում, մյուսին բարձիթող անում, համեմատելով իր արյանն օտար» (Շիրվ., IV, էջ 310)։ «Բայց, չնայած դրան, յուրաքանչյուրը որոշ տարբերություն ունի այդ նույն տառը (ա տառը — Ս. Ա.) դրելու մեջ. մեկը ավելի երկար կարող է անել ա-ի երեք գծերը, մյուսը՝ կարճ, մեկը գծերի միջև տարածությունը շատ լայն կարող է թողնել, մյուսը՝ նեղ, մեկը կարող է այդ գծերը թեքել դեպի ձախ, մյուսը՝ աջ, և այդպիսով կստացվեն ա տառի դրության տարբեր ձևեր» (ԷՔԱ, ԼՆ, էջ 153)։*

Մի և մյուս *դերանունները թվարկության նպատակով հաճախ գործածվում են՝ կապակցվելով կողմից բառի հետ (մի կողմից... մյուս կողմից)։ Եթե մեկը... մյուսը դերանունները վերևի և նման օրինակներում նախադասության անդամ են, ունեն նյութական իմաստ, ապա մի կողմից... մյուս կողմից բառակապակցությունները այս դեպքում զուրկ են նյութական իմաստից և նախադասության անդամի դեր չեն կատարում։ Օրինակ՝ «Մի կողմից երկյուղն ամուսնուց, մյուս կողմից ծանր հանգամանքի դիտակցությունը դրդում էին նրան փնտրել անմեղ էակների հովանավորությունը» (Շիրվ., IV, էջ 165)։ Գործածվելով թվարկության ժամանակ, այս կապակցությունները նախադասության մեջ հենց ֆունկցիայով մոտենում են շաղկապի ֆունկցիային, որի կրկնությամբ ևս հաճախ թվարկություն է արտահայտվում։ Այսպես, վերոհիշյալ նախադասության մեջ մի կողմից... մյուս կողմից բառակապակցության փոխարեն կարելի է գործածել և՛... և՛, թե՛... թե՛ շաղկապները։ Ե՛վ (թե՛) երկյուղն ամուսնուց, և՛ (թե՛) ծանր հանգամանքի դիտակցությունը դրդում էին նրան փնտրել անմեղ էակների հովանավորությունը։ Նրանց փոխարեն կարելի է գործածել նաև ինչպես... այնպես հարաբերականն ու հարաբերյալը։ Ինչպես երկյուղն ամուսնուց,*

այնպես էլ ծանր հանգամանքների գիտակցումը դրդում էին նրան փնտրել անմեղ էակների հավանավորությունը։

Ինչպես երևում է շաղկապների կապակցությունների և հարաբերականների կապակցությունների այս համեմատությունից, վերջիններս փաստորեն կատարում են շաղկապի դեր, բայց և շաղկապներից տարբերվում են իրենց որոշ յուրահատկություններով։ Այդ յուրահատկությունն այն է, որ դրանք ունեն սահմանափակ կիրառություն, այն է՝ գործածվում են հատկապես, երբ թվարկվում են միևնույն երևույթի տարրեր, հակադիր, կամ իրար լրացնող կողմերը, հատկանիշները, ավյալ իրողության առաջացման տարրեր, իրար լրացնող պատճառները, մինչդեռ շաղկապներն ունեն հարուստ ու բազմապիսի կիրառություններ։ Այսպես, հետևյալ նախադասության շաղկապների փոխարեն չի կարելի գործածել մի կողմից... մյուս կողմից։ Թե (և) Արամը, թե (և) Աշոտը դասարանում առաջիններն են բոլոր աշխատանքներում։ Չի՛ կարելի, որովհետև այստեղ չկա ո՛չ հակադրություն, ո՛չ միևնույն երևույթի տարրեր կամ իրար լրացնող կողմերի թվարկում։ Համմտ. այդ նախադասության հետ՝ Արամի հիվանդությունը մի կողմից, Աշոտի ժամանակավոր անհաջողությունները մյուս կողմից, մեծ մտահոգություն են պատճառում նրանց հոգատար ծնողներին։

Այլ օրինակներ. «Միայն այժմ էր պարզվում նրա համար իր արարքի ամենամթին խավարը, միայն այժմ էր խիղճը դատապարտում իր ամենաստոր ստեղները։ Մի կողմից՝ իր կրքերի զոհ Անուշը, մյուս կողմից՝ անսահման անկոչ դատավորի արհամարհանքով լի հերոսարանքը։ Մի կողմից՝ անսահման ղվվանք, մյուս կողմից՝ բարոյական վհհություն մի աղքատ աղջկա առջև» (Շիրվ., IV, էջ 266)։ «Մինչև այժմ ատածները երևան հանեցին, մի կողմից՝ բառիմաստի երկու մոմենտները՝ օբյեկտիվ և սուբյեկտիվ մոմենտները, իսկ մյուս կողմից՝ բառի ունեցած դերի երկու կողմերը՝ հատկացության անվանումը և առարկայական վերաբերությունը» (ԷՐԱ, ԼՆ, էջ 216)։

Մի և որևէ դերանուններն իմաստով իրար և՛ մոտ են, և՛ գծալի չափով տարբեր: Դրանց համար ընդհանուր է այն, որ երկուսն էլ ունեն «մեկ»-ի գաղափար, իհարկե, անորոշ իմաստով: Իսկ տարբերությունն այն է, որ որևէ-ն ավելի անորոշություն է արտահայտում, քան մի դերանունը: Որևէ դերանվան մեջ կա շատերից, բազմաթիվներից ուզած մեկին ակնարկելու իմաստ, անորոշ կերպով: Օրինակ՝ որևէ գիրք տուր: Այդպիսի իմաստ է առանում մի դերանունը որոշ դեպքերում: Հենց նույն նախադասության որևէ դերանունը կարելի է փոխարինել մի դերանունով, և իմաստը կմնա նույնը, թեև չնչին երանգային տարբերությամբ:

Մինչդեռ մի-ն մեծ մասամբ գործածվում է ոչ թե շատ առարկաներից ուզած որևէ մեկին (որն ուզում է լինի), այլ միայն մեկ առարկա ակնարկելու համար, որպեսի իմաստ որևէ դերանունով չէր կարելի արտահայտել: Օրինակներ՝ «Հիշում եմ, մի ուրիշ նամակում գրում էիր» (Աբ., էջ 475): «Մի սեպտեմբերի մեր գյուղացի որսկան Օսեփը ինձ գիշերակաց որսի տարավ Եղնուտի կիրճը» (ՀՔ, III, էջ 74): Հասկանալի է, որ այս և նման օրինակներում մի-ն որևէ բառի իմաստը չունի:

Երբեմն իմաստի ընդգծման համար այս երկու դերանունները գործածվում են միասին՝ մի որևէ, առանձին դեպքերում նաև՝ որևէ մի: Գոյականաբար գործածվելիս այս կապակցության մի բաղադրիչը միշտ հասարակ է լինում (որևէ մեկը, որևէ մեկի և այլն), քանի որ որևէ դերանունը չի հոլովվում, իսկ հոլովվողը պիտի գրվի վերջում: Օրինակ՝ «Նրանցից որևէ մեկի՞ն ես հիշում երևի» (ՀՔ, ՄՏՋ, էջ 493):

Որևէ մեկը կապակցության իմաստով երբեմն գործածվում է մեկն ու մեկը բաղհյուսական բարդության:

Օրինակներ՝ «Բայց թե հանկարծ տիրանաս դու այդ
դանձերից մեկն ու մեկին,
Նա քեզ կտա և իր սերը, և հուրը, և իր հոգին»
(Անթ., էջ 277):

«Նայում էր առանց կարողանալու կենտրոնանալ անցնողներից մեկն ու մեկի վրա» (ՀՍ, Հվ, էջ 177)։

«Նա... սպասում էր, որ մեկն ու մեկի չար լեզուն կտա Դուկասի անունը» (ՆՋՀ, էջ 53)։

Կարծում ենք, որ մեկն ու մեկը կապակցությունը ստացել է մեկ բառի նշանակություն և հաշվի առնելով նրա իմաստային կողմը, կարելի է համարել անորոշ դերանուն։

5. ՀԱՅԱԿԱՆ-ՀԱՐԱԲԵՐԱԿԱՆ ԴԵՐԱՆՈՒՆՆԵՐԻ ՈՃԱԿԱՆ ԿԻՐԱՌՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

Ինչպես դերանվան մյուս տեսակների, այնպես էլ այս դերանունների ոճական ու երկրորդական կիրառությունների հարցում կարևոր նշանակություն ունի նրանց իմաստը։ Սակայն հարցական-հարաբերական դերանունների ոճական կիրառությունների համար մեծ նշանակություն ունեն նաև այլ հանգամանքներ, որոնցից առանձնապես կարևոր է ինտոնացիան։ Այս ոճաբանական գործոնը, իհարկե, ոչ միայն հարցական-հարաբերական, այլև դերանվան մյուս տեսակների, ինչպես և ուրիշ խոսքի մասերի վերաբերյալ դեր կատարում է։ Բայց այս դերանունների կիրառությունների գործում ինտոնացիան ավելի կարևոր ոճաբանական տեխնիկական միջոց է, քան դերանվան մյուս տեսակների համար։ Դա պետք է բացատրել նրանց յուրահատուկ, այն է՝ բացառիկ անորոշ իմաստով։ Այդ միջոցը գործածվում է ո՛չ թե մեկ, այլ բազմաթիվ նպատակներով, իմաստային բազմապիսի, հաճախ բոլորովին տարբեր երանգներ ստեղծելու նպատակով։

Քննենք հարցական-հարաբերական դերանունների՝ ինտոնացիայի միջոցով ոճավորման դեպքերը։ Այս դերանունների՝ հարցականի ֆունկցիայով կիրառության միջոցով արտահայտվում է հարցում առարկայի, հատկանիշի վերաբերյալ։ Իրոք, հարցման նպատակը, հասկանալի է, որ սովորաբար չիմացած բանն իմանալու ցանկությունն է։ Իսկ այդ

նշանակում է, որ հարցումը արվում է չհամացածի վերաբերյալ, կամ էլ երբ հաճախ խոսողը ցանկանում է խոսակցի կարծիքն իմանալ տվյալ հարցի վերաբերյալ:

Սակայն հարցումը, որի մեջ հարցական-հարաբերական դերանունները մեծ դեր են կատարում, հաճախ արվում է ո՛չ միայն այդ նպատակներից որևէ մեկով, այլև այս կամ այն երևույթի վերաբերյալ հաստատուն վերաբերմունք արտահայտելու ժամանակ: Ըստ որում այդ հաստատուն վերաբերմունքն էլ հաճախ տարբեր է լինում կամ տարբեր երանգավորումներ է ստանում:

Քննենք դրանք առանձին-առանձին:

Հաճախ է պատահում, հատկապես խոսքին հեռատրական երանգ տալու նպատակով, որ երբ խոսողը ցանկանում է հաստատել այս կամ այն իրողությունը, իր մտքերը շարադրում է ոչ թե պատմողական բնույթի նախադասություններով, այլ՝ հարցական նախադասություններով և միայն վերջում տալիս է դրանց պատասխանը: Այսպես՝

«Էյ, Սանթրոս ապա, էդ ո՞նց ես ճառում,
Ո՞ւմ քրտինքն է ծով՝ լցրել քո առուն,
Ո՞ւմ պապն է այստեղ քո բահով ընկել,
Ո՞ւմ հերն է քո այս ծառերը տնկել,
Ո՞վ է տանջվել շոգին ու ցրտին.
Իմ պապը, իմ հերը, ես՝ նրանց որդին.
Սրանից ավել էլ ի՞նչ եք ուզում» (ՆՋ, Հատ., էջ 195):

«Դուք այդ մասին խոսում եք իբրև կոլմնակի մարդ... Իսկ ո՞վ պիտի պաշտպաներ դրանով, եթե ոչ դուք, ընկեր ուսմասվար» (ԱՍ, ՈՄ, էջ 111):

Այս օրինակներում հարցական դերանունների փոխարեն կարելի է գործածել անձնական դերանուն և միտքն արտահայտել միայն հաստատական նախադասություններով: Դրանից նախադասության միտքը չէր տուժի: Սակայն միտքը հարցումով արտահայտելը, ուրեմն և՝ հարցական դերանունների գործածությունը տվյալ դեպքում ավելի նպատակա-

հարմար է այն պատճառով, որ արտահայտվում է և՛ միևնույն միտքը, և՛ խոսողի յուրահատուկ վերաբերմունքը, որով շեշտվում, ընդգծվում է միտքը: Նկատենք, որ հարցական-հարաբերական դերանունների այս և ներքևում քննարկվող մի շարք ոճական կիրառություններ սերտորեն կապված են հարցական նախադասությունների ոճական կիրառությունների հետ, և դերանունների այդ կիրառությունների մասին խոսել ու դրանք ճիշտ հասկանալ չենք կարող վերանալով ավելի նախադասություններից, նախադասության բնույթից:

Հարցական-հարաբերական դերանունների հարցման միջոցով արտահայտված՝ խոսողի հաստատուն վերաբերմունքը հաճախ այնքան որոշակի և դերանվան առարկայական վերաբերությունն այնպես հասկանալի է լինում, որ նման դեպքերում ավելորդ է հարցումից հետո տալ պատասխանը, թեև երբեմն տրվում է: Այսպես, Ն. Զարյանը «Ցասում» բանաստեղծության մեջ նկարագրում է գերմանա-ֆաշիստական գավթիչների կողմից ավերված սովետական քաղաքը:

«Ո՞ւր են ծանոթ շենքերը,
Սյունաշարը միծարվեստ պալատների:
Ո՞ւր է փարթամ բուլվարը, լորենին այն վավ,
Որի ստվերում ես առաջին իմ սերը թաքցրի» (ՆՋ, Հատ., էջ 90):

«Կեցցես... ո՞ւմ թոռն է, որ բնության գործերը չհասկանա,— պատճեցավ ծերունին՝ իր թոռի գլուխը համբուրելով» (ՎՍ, ՍՍ, էջ 31):

Հարցական-հարաբերական դերանունները ունեն այս կիրառությանը որոշ չափով մոտ, բայց և զգալի չափով տարբեր ոճական այլ կիրառություններ ևս: Հաճախ է պատահում, որ հարցական-հարաբերական դերանունը գործածվում է ժխտում արտահայտելու համար, թեև նախադասության ստորոգյալն ունենում է հաստատական բնույթ: Այսպես՝ «Ի՞նչ կարիք կա այդ մասին խոսելու» (Դվ, էջ 474). «Ի՞նչ կարիք կա» նշանակում է «կարիք չկա», ուրեմն արտահայտ-

ման ձևը ժխտական չէ, բայց արտահայտած միտքը ժխտական է։

Բերենք այլ օրինակներ.

«Ի՞նչ ուժ (= ոչ մի ուժ)[1] կարող է խորտակել ժողովրդի
սերը հորդ,
Երբ նա ունի արդար դրոշ և իմաստուն առաջնորդ» (ՆՋ,
Հատ., էջ 319)—։

«Ի՞նչ են (=ոչինչ են) նրա հորձանքի դեմ
Գնդերը սև, սպիտակ» (ն. տ., էջ 257)։

«Նրան բռնեցին ու տարան, բայց ի՞նչ օգուտ (=ոչ մի օգուտ)» (Ն.-Դ., IV, էջ 87)։ «Ես ի՞նչ գիտեմ (=չգիտեմ)։ Նա ինձ իր գործերին ե՞րբ է խառնում (=երբեք չի խառնում) որ» (Ն.-Դ., I, էջ 167)։ «Այդքան երես տալ չի լինիլ։ Չեմ հասկանում, այդ ի՞նչ մայրական սեր է (=դա մայրական սեր չէ)» (Շիրվ., IV, էջ 270)։ «Չկարծես, թե փեսանից էի փախչում, դու ո՞վ ես (=ոչինչ ես, հաշվի առնելու արժանի չես), դու ի՞նչ իրավունք ունես (=իրավունք չունես) ինձ վրա» (ն. տ., էջ 103)։

Ինչպես երևում է այս վերջին օրինակից, հարցական-հարաբերական որոշ դերանուններ նման դեպքում կարող են գործածվել այս կամ այն անձի, առարկայի, երևույթի նկատմամբ արհամարհական, անտարբեր, քացատական վերաբերմունք արտահայտելու համար։ Այս իմաստով գործածվում են հատկապես ով, ինչ դերանունները, ըստ որում՝ դրանք նախադասության մեջ նման դեպքերում մեծ մասամբ կատարում են կամ առորոշելիական վերադրի կամ որոշիչի (ինչ դերանունը) ֆունկցիա։ Իրրև առորոշելիական վերադիր գործածվելիս արհամարհական կամ բացատական վերաբերմունք արտահայտվում է ենթակայի ցույց տված առարկայի կամ անձի նկատմամբ, իսկ ի՞նչ դերանունը իրրև որոշիչ գործածվելիս այդ վերաբերմունքն արտահայտվում է նրա որոշյալի ցույց տված առարկայի կամ անձի նկատմամբ։

[1] Փակագծերում տրվող այս և հետագա հավելում-բացատրականները իմն են — Ս. Ա.։

«Հովհան ո՞վ է, որ դիպչի իմ տղին» (ՆՉ, Հատ., էջ 235)։ «Ի՞նչ...—ծղրտաց մայրը սուր,—քա ի՞նչ իրավունքով։ Դա ո՞վ ես որ, ընչացո՞ւ» (ն. տ., էջ 246)։ «Հիմի էլ ի՞նչ վախ, ի՞նչ իրավունք, ի՞նչ տեր, ի՞նչ ծառա, կսրբինք ամեն ինչ» (ԴՎ, էջ 312)։ «Վաչառ Սոնան ի՞նչ է, որ իր պատուղն ինչ ըլի» (ՎԱ, ՍԱ, էջ 27)։ «Միանգամից ասա՝ քնձռոտ վարժապետ էի, և աղջիկը չտվին ինձ։ Թե չէ՝ էլ ի՞նչ քաղքենություն ու մաղքենություն, ի՞նչ ուսում ու մուսում»։ (Ն.-Դ., IV, էջ 121)։ «Ի՞նչ քաջություն, ի՞նչ խելք, ի՞նչ հանճար, դատարկ բաներ են բոլորը։ Բանը մարդուս բախտն է» (ՀՔ, III, էջ 196)։

Երբ ինչ դերանունը իբրև որոշիչ է գործածվում առորոշելիական վերադրի համար, այդ դեպքում արհամարհական վերաբերմունքն արտահայտվում է ո՛չ թե որոշյալի, այլ ենթակայի նյույց ունած անձի, առարկայի նկատմամբ։ Այսպես՝ «Դու ի՞նչ տղամարդ ես, առ էս շալը գցիր գլխիդ, գնա Թոնրի կողքին նստիր ալյուր մաղի, հայ թխի» (Անթ., էջ 29)։ Այստեղ վերաբերմունքն արտահայտվում է ո՛չ թե առհասարակ տղամարդու, այլ խոսակցի նկատմամբ, հանձին նրա այն հատկանիշի, որն արտահայտվում է առորոշելիական վերադրի միջոցով։

Հաճախ ինչ դերանունը դրվում է անձ նյույց ունող բառերի տրական հոլովի վրա՝ վերջից. ի՞նձ ինչ, ես՞ ինչ, մե՞զ ինչ, ձեռա՞ն ինչ, ձեռա՞նց ինչ, սրա՞ն ինչ, սրա՞նց ինչ, Աստմի՞ն ինչ և այլն։ Նա կարող է դրվել անձանց անունների, երբեմն մի երկու նյուցական դերանունների, իսկ ավելի հաճախ՝ անձնական դերանունների վրա։ Այսպիսի կապակցություններում ինչ դերանունով արտահայտվում է այս կամ այն բանը, խոսքը դերանունով, դյուցականով նյույց տրված անձին կամ անձանց չվերաբերելու դաղափար։ Այսպես, ես՞ ինչ նշանակում է «քեղ չի վերաբերում», «քո գործը չէ»։ Այս կապակցություններում հարցական (կամ երբեմն բացասական) առոգանություն ստանում է ոչ թե ինչ դերանունը, այլ այն բառը, որի վրա դրվում է այդ դերանունը։

«— Գաղթե՞լ ես...

— է, ես՞ ինչ, գաղթել եմ» (էմ., էջ 70)։

«Ես՞ ինչ կամ ի՞նձ ինչ, որ փող ունի։ Մենք օտարներ ենք» (Շիրվ., IV, էջ 212)։ Աստմի՞ն ինչ, թե դու դժգոհ ես կամ գոհ ես ինձնից։ Սրա՞ն ինչ, թե դու ինչ ես ասել ինձ։ «Ես՞ ինչ, թե որտեղ պիտի հանդիպեմ» (ՆՋՀ, էջ 100)։

«—Այդ մուրհակներից մեկի ժամկետը լրանում է վաղը չէ մյուս օրը, մյուսինը՝ հինգ օրից հետո...

— Գիտեմ, լրանում է, բայց ես՞ ինչ» (Շիրվ., IV, էջ 484)։

Ինչ դերանունը գոյականի վրա դրվելով՝ կարող է արտահայտել խոսողի արհամարհական վերաբերմունքից բացի, նաև այդ դերանվան որոշյալի ցույց տված առարկայի անծանոթ լինելը խոսողին։

«— Արի, արի, անբախտ պառավ, արի տես քո Կիկոսի գլուխն ինչ է եկել... Վայ քո Կիկոսին...

— Ի՞նչ Կիկոս, ինչ եք ասում,— զարմանում է մարդը» (ՀԹ, III, էջ 199)։

— Դու տեսա՞ր Արամին։

— Ի՞նչ Արամ, Ադամյանի մասի՞ն է խոսքդ։

Վերևում տեսանք, որ հարցում արտահայտող հարցական-հարաբերական դերանունը ձևով հատատատական նախադասության իմաստը կարող է դարձնել ժխտական։ Հետաքրքրքրական է, որ ժխտական նախադասության իմաստն էլ այդ նույն դերանունների գործածության դեպքում կարող է լինել հատատատական։ Այսպես՝ «Այժմ ո՞վ չի դաշնամուր նվագում։ Անցեք մեր փողոցներով, յուրաքանչյուր լուսամուտից կլսեք «դինգ-դրնգ, դինգ-դրնդ» (Շիրվ., VI, էջ 348)։ Թեև չի նվագում սառորդյալը արտահայտված է ժխտական խոնարհման բայով, բայց նախադասության միտքը հատատատական է, այն է՝ «այժմ բոլորը դաշնամուր են նվագում»։

Հաճախ միևնույն դերանվան միևնույն գործածության մեջ կարող են համադրվել ոճական տարբեր առանձնահատկություններ։ Այդ տեսակետից հետաքրքրական է հատկապես ինչ դերանունը, որը կարող է հաճախ գործածվել հար-

յական-հարաբերական այլ դերանվան իմաստով, և միաժամանակ դրան կարող է դումարվել խոսողի յուրահատուկ վերաբերմունքը: Օրինակ, «Ի՞նչ ես ծվծվում» (ՆՀՀ, էջ 45) նախադասության ի՞նչ դերանվան մեջ ոճական երկու առանձնահատկություններ են խաչավորվել: Առաջինն այն է, որ ի՞նչ դերանունն այստեղ գործածված է ոչ թե իր սովորական (հմմտ. ի՞նչ ես բերել, ի՞նչ ես կարդացել և այլն), այլ ինչո՞ւ իմաստով: Երկրորդն այն է, որ նրա մեջ խտացված է խոսողի բացասական վերաբերմունքը: Այսպիսով, եթե այդ նախադասության մեջ ի՞նչ դերանվան համար հատկանշական նշված երկու հատկանիշները սխեմայով արտահայտենք, կստացվի հետևյալը՝ ի՞նչ (ես ծվծվում)=ինչո՞ւ (ես ծվծվում)+մի՛ (ծվծվա): Ի՞նչ դերանվան այս, եթե կարելի է ասել, հարցական-հանդիմանական իմաստով գործածությունը շատ տարածված է թե՛ ժամանակակից գրական հայերենում և թե՛ մանավանդ բարբառներում:

«Ի՞նչ եք հոնքերը կիտում... Ես չեմ ուզում այստեղ մնալ» (ՆՀ, Հատ., էջ 329), «Ի՞նչ են եկել ամեն կողմից պուճուրիս լիապուր» (Ն. ա., էջ 307): «Ի՞նչ է ամբողջ բակը գլխին հավաքել» (Ն.-Դ., IV, էջ 101): «Ի՞նչ ես գիշերով դռներն ընկել» (Ն. ա., էջ 153): «Դո՞ւ ինչ անկվեցիր» (Անթ., էջ 76): «Ի՞նչ ես մտիկ տալիս» (ՆՀՀ, էջ 44): «Այ տղա, ի՞նչ ես վազում» (Ար., էջ 153): «Ողորմություն խնդրող աղքատի նման ի՞նչ ես վիզդ ծռել, կանգնել» (Անթ., էջ 29): «Էյ, պառավ, դու ի՞նչ ես այդպես խռմփում, լուսացավ ախր, Դաթոն չի եկել» (Ն. ա., էջ 37): Ի՞նչ դերանվան այս գործածության ժամանակ, եթե նախադասության սաորոդյալն արտահայտված է բայի բաղադրյալ ժամանակով, ապա օժանդակ բայը դրվում է դերանունից անմիջապես հետո:

Կարող է նաև ժխտական իմաստը (ոչ հանդիմանական երանգով, ինչպես վերևում էր) ի՞նչ դերանվան մեջ զուգակցվել այլ իմաստի, օրինակ, «որտեղից», «ումնից», «ինչպես» կամ նման բառերի իմաստի հետ:

«Ի՞նչ իմանայի, փսքր էի դեռ,
Որ այս խոր ձորից անդամ դիշերը
Աբևներ կելնեն լանջերն ի վեր» (ՀՍ, ՄՏ, էջ 90)։
«Ի՞նչ դիտենայի, թե դիմբյան քույր
Եվ ընկեր պիտի մարտում ինձ դառնար» (Անթ., էջ 657)։

«Ի՞նչ դիտենայի, թե դինվորական
Շինելն ուսերին իր նստրր, կանացի...
Ամեն օր կդար ինձ այցի» (Ն. ա., էջ 658)։
«Ի՞նչ իմանայի, թե դու չես ուզարկել» (ՀՔ, ՄՏՋ, էջ 49)։

Ինչ դերանունը երբեմն գործածվում է այլ դերանունների կամ այլ բառերի իմաստով, որին կարող է չմիանալ ոճական որևէ ուրիշ գործոն։ Այսպես, եթե այդ դերանունը դրվում է ածականի, որոշ մակրայների կամ ածականից կազմված բայի վրա, կարող է առանալ «որքան», «ինչքան», «շատ» բառերի իմաստ, ցույց տալ ածականի արտահայտած հատկանիշի չափը, քան որում՝ չափի բարձր աստիճան։ «Անձրև։ Ինչ դաժան էր եղել բնությունը Հարության վերաբերյալ»։ (Ն.-Դ., IV, էջ 135)։ «Ահ, ինչ վատ մեռավ, ախտոս, Հայ գործոդ» (Ա.Ծ, էջ 318)։ «Ինչ լավն ես դու այսօր, եվա» (Ա.Ս, ՈՄ, էջ 365)։ «Ինչ լավ է, ինչ լավ է» (Ն. ա., էջ 114)։ Ինչ արագ է գնում այս մեքենան։ «Ասպիկ, ինչ մեծացել ես» (Դվ, էջ 323)։

Երբ ինչ դերանունը դրվում է գոյականի վրա, կարող է առանալ «ինչպիսի», «որպիսի» և նման բառերի իմաստ։ «Ինչ ուժգնությամբ, ինչ[1] անփոխարինելի սիրով էր դաստված նա իր հարազատներին» (Ա.Ս, ՈՄ, էջ 121)։ Տես ինչ չհնք ևն կառուցել ընդամենը երեք ամսվա ընթացքում։ Օ, ինչ վիսլ է, ուղղակի գերում է ընթերցողին։ Ի՞նչ սիրտ ունես դու, մի՞թե կարելի է այդքան պղտյան լինել։ «Եվ ի՞նչ ընտրության, ամենափառավոր... Դա մի ամբողջ հեքիաթ է» (Շիրվ., IV, էջ 474)։

[1] Ինչ դերանունը, թեև դրված է անփոխարինելի ածականին կից, բայց վերաբերում է սիրով գոյականին։

Իսկ երբ ինչ դերանունը դրվում է այնպիսի գոյականի վրա, որը առարկայի կամ գործողության հատկանիշ է ցույց տալիս, այսինքն՝ նախադասության մեջ կատարում է որոշիչի կամ պարագայի պաշտոն, կարող է հավատարմացնում առանձնացնել վերջին երկու կիրառությունների իմաստը: Օրինակներ՝ «Նայի՛ր, Աստղի՛կ, նայի՛ր, ինչ շնորհքով են շինված» (ԱՍ, ՈՄ, էջ 104): Ինչ անհամբերությամբ էի սպասում քեզ:

Այս օրինակներում ինչ դերանվան փոխարեն կարող են դրվածծվել ինչպիսի, որքան, շատ (կամ մեծ) բառերը: Դրա պատճառն այն է, որ նման դեպքերում նշանակություն է ստանում ինչ դերանվան, իրրև որոշիչի, որոշյալի՝ գոյական անուն լինելը մի կողմից և հատկանիշ ցույց տալը մյուս կողմից:

Մի քանի հարցական-հարաբերական դերանուններ հաճախ գրկվում են իրենց հիմնական իմաստից և գործածվում միայն խոսողի վերաբերմունքն արտահայտելու համար այս կամ այն իրադրության, մարդի նկատմամբ: Բավականին տարածված է ինչ դերանվան այդ իմաստով գործածությունը: Այդ դեպքում ինչ դերանունը գործածվում է որպես միջանկյալ բառ, արտահայտում է խոսողի զարմանքը, հիացմունքը և այլն, գործածվում է բացագանչական կամ երբեմն հարցական ինտոնացիայով և իմաստով ու կիրառությամբ մոտենում է ձայնարկությանը:

«Ի՞նչ, ուրեմն վալենտինա Միխայլովնան և՞ս ուզում է մասնակցել «Երիտասարդ Գվարդիայի» բեմադրությանը» (ԱՍ, ՈՄ, էջ 192): «Ի՞նչ, մի՞թե ապնիլ արդեն պարտավոր չէ կատարել իր հար վերջին կամքը» (Շիրվ., IV, էջ 19): «Ի՞նչ, մի՞թե հնարավոր է դուրս գալով միտք կրծքի տակից» (ն. տ., էջ 34): «Ի՞նչ, այդքան բազմության մեջ միայն նա՞ եղավ անվհատ, միայն նա՞ վճռեց նետվել, դժոխքի մեջ ինչ-որ երկու կիսամահ մարդկային արարածներ փրկելու» (ն. տ., էջ 384):

Ինչպես տեսանում ենք, ինչ դերանունը այս դեպքում գրվում է նախադասության սկզբում և նախադասության անդամ չէ:

Հաճախ ինչ դերանվանը, այդ իմաստով գործածվելիս, միանում է է օժանդակ բայը, որը, սակայն, չի դիտակցվում որպես այդպիսին: «Միայնա՞կ ես, ինչ է, ո՞ւր է Ելենան» (Մուր., I, էջ 101): «Եվ հի՞շա ես կարծում, ինչ է, ինձ համար քեզնից բաժանվելը» (ՆԴՄ, էջ 101): «Եթե գիտենայի, որ դու այդ աստիճան կասկածամիտ ես, դի՞ժ էի, ինչ է, որ արտասանեի այն խոսքերը» (ՆԴՄ, էջ 107): «Ռուբենի սրտին կպավ այդ: Ի՞նչ է, նա մոռացե՞լ է, որ միայն երեք օր առաջ միջ-դպրոցական շախմատի առաջնությին խաղը տանելու համար Ռուբենն առաջին մրցանակ էր շահել» (ԱՄ, ՈՄ, էջ 94):

«Ի՞նչ է, չեք վերջացրել» (Դվ, էջ 162): «Ձայն չի գալիս բնա՞ծ են, ինչ է» (ն. տ., էջ 104):

Ինչ է կապակցության այս գործածությունը նմանությամբ հանդերձ ունի նաև տարբերություններ ինչ դերանվան նախորդ գործածությունից: Նախ, եթե ինչ դերանունը, ինչպես ասվեց, սովորաբար դրվում է նախադասության սկզբում, ապա ինչ է կապակցությունը կարող է դրվել նախադասության և՛ մեջտեղում, և՛ սկզբում, և՛ վերջում: Դրա պատճառն այն է, որ, եթե ինչ դերանունը երանգավորում է ամբողջ նախադասության միտքը, խոսողի վերաբերմունքն է արտահայտում վերջինիս նկատմամբ, ամբողջությամբ վերցրած, ապա ինչ է կապակցությամբ խոսողը կարող է վերաբերմունք արտահայտել թե՛ ամբողջ նախադասության մտքի և թե՛ միայն նրա որևէ մասի, որևէ անդամի վերաբերյալ: Վերջին դեպքում ինչ է կապակցությունը դրվում է նախադասության այն մասում, որի արտահայտած մտքի, իրողության նկատմամբ դրսևորվում է խոսողի վերաբերմունքը: Այնուհետև, եթե ի՞նչ դերանունը այդ դեպքում մեծ մասամբ զարմանք է արտահայտում, ապա ինչ է կապակցությունը հավասարապես կարող է նաև արտահայտել խոսողի բացասական, հանդիմանական վերաբերմունքը: Եվ վերջապես, ինչ է կապակցությունը ավելի հաճախ գործածվում է առանց հարցականի ու բացադանչության, որը, ըստ երևույթին, հենց

նրա արտահայտած իմաստային յուրահատկությամբ պետք է բացատրել: Չնայած այս ընդհանուր տարբերություններին, սակայն նրանք երբեմն իմաստով այնքան մոտ են լինում իրար, որ կարելի է մեկը փոխարինել մյուսով: Դա լինում է այն դեպքերում, երբ ինչ դերանունը ըստմանքի վերաբերմունքի հետ միասին արտահայտում է նաև զգալի չափով բացատական վերաբերմունք կամ էլ, երբ ինչ է կապակցությունը արտահայտում է միայն ըստմանք:

Ինչ դերանունը կապակցվելով անա թե կապակցության հետ (անա թե ինչ)՝ գործածվում է արտահայտելու համար խոսողի ըստմանքը տվյալ երևույթի, իրողության նկատմամբ: Այս կապակցությունը գործածվում է սովորաբար ուղղակի խոսքի մեջ իբրև միջանկյալ կապակցություն, մտաենում է եղանակավորող բառերին:

«— Քաղաքացի, ցույց տվիք ձեր փաստաթղթերը:

«— Անա թե ինչ, բայց ինչո՞ւ այդքան ուշ եք հարցնում» (Անթ., էջ 307):

«— Անա թե ինչ,— գառը ժպտաց նա,— բանից պարզվում է, որ ես կարդին բեռ եմ դարձել գյուղի համար» (ԱՍ, ՈՄ, էջ 108): «Անա թե ինչ, ուրեմն նա չի բավականանում մորից առանձին և եղբորից առանձին առացածներով» (Շիրվ., IV, էջ 73): «Անա թե ինչ, դուք արդեն բարեկամացել եք հայրիկիս հետ, իսկ ես վախենում էի, թե կձանձրանաք» (ԱՍ, ՈՄ, էջ 360):

Երբեմն այս կապակցությունը գործածվում է առանց թե բառի (անա ինչ): Այսպես՝ «Անա ինչ, ասել է Մարութխանյանը այդ տղային էլ է շեղել ճանապարհից և լարել իմ դեմ» (Շիրվ., IV, էջ 103):

Անա թե ինչ կապակցությունը կարող է գործածվել նաև առանձին, նախադասությունից դուրս: Այդ լինում է երկխոսությունների ժամանակ, երբ խոսողներից մեկը իր վերաբերմունքն է արտահայտում մյուսի մտքի վերաբերյալ:

Օրինակ՝

«— Ընկեր Դովլաթյան, բանն այն է, որ մեզնից շատերը չեն ըմբռնել էլեկտրոլիտիկ դիսոցման տեսությունը...

— Ահա թե ինչ,— Դովլաթյանը այլայլունած ու մոայլ քարացավ տեղանի առաջ» (ԱՍ, ՈՄ, էջ 116)։

Ինչ դերանունը մտնում է նաև ուրիշ կապակցությունների մեջ, ինչպես՝ ինչ էլ լինի (կամ՝ ինչ ուզում է լինի), ինչ կլինի և այլն։ Առաջին կապակցությունը արտահայտում է «այնուամենայնիվ», «այնուհանդերձ» և նման իմաստներ։ Օր. «Այժմ ամեն օր հարկ կլինի 10 կիլոմետր գնալ ու վերադառնալ։ Բայց ինչ էլ լինի, նա նորից դարձավ մարդ, բանվոր» (Ավանգարդ 26/I, 1954)։ «Ախր ինչ էլ որ լինի, էլի այն ժամանակ մի կենդանի շունչ կար մոտը» (Ն.-Դ., I, էջ 152)։ Ինչ էլ լինի, նա մնում է որպես մեր ցեխի լավագույն բանվորը։ «Պետք է կարծել նաև, որ նախնական շրջանում ավելի շատ են եղել բարդ հնչյունները, բայց ինչ էլ որ լինի, լեզվի առաջացման պրոցեսում իսկ առաջանում են տարրորոշված, հոդաբաշխ հնչյունները» (ԷՒԱ, Լն, էջ 155)։

Այսպիսով, ինչ էլ լինի կապակցությունը գործածվում է այն ժամանակ, երբ մի երևույթի, առարկայի վերաբերյալ եղած կամ ասված ճշմարտությունը (բացասական կամ դրական) ընդունելով հանդերձ՝ խոսողը տվյալ հարաբերության մեջ կարևոր չի համարում, անտեսում է այդ և հաստատում դրան հակառակ եզրակացություն կամ ցույց է տալիս այդ նույն երևույթի, առարկայի մյուս, դրան հակառակ կողմը (դրական կամ բացասական)։ Հաճախ այդ հաստատման երանգը այնքան դպալի է լինում, որ ինչ էլ լինի կապակցությունը դառնում է հիմնականում մի բան հաստատող, մի դործողության կատարման անխուսափելիությունը ընդգծող կապակցություն, սակայն մասամբ, շատ թույլ կերպով պահպանելով վերևում քննարկված իր իմաստային երանգը։

Օրինակ՝ «Լսիր, ես վճռել եմ ամուսնանալ օրիորդ Մարկոսյանի հետ և ամուսնանալու եմ... ինչ էլ լինի» (Շիրվ., IV, էջ 484)։ Ինչ էլ լինի կապակցությունը այստեղ գործած-

ված է հաստատելու համար խոսողի մտադրությունը, օրիորդ Մարկոսյանի հետ ամուսնանալու նրա ցանկությունն ու դրա հնարավորությունը և ունի մոտավորապես «անպատճառ», «անպայման» բառերի իմաստ:

Այլ իմաստ ունի. ինչ կլինի կապակցությունը. դրանով արտահայտվում է խոսողի խնդրանքը, ցանկությունը որևէ բանի վերաբերյալ: Այսպես, «Բնա՛, ինչ կլինի, որ մենք էլ իմանանք» (Անթ., էջ 39): «Սուրիկ ջան, ինչ կլինի, ինձ էլ հետդ տանես» (ն. տ., էջ 27):

«Դերանունների ձևաբանական առանձնահատկությունները» գլխում տեսանք, որ ինչ դերանունը (ինչպես և ուրիշ շատ դերանուններ) ներգոյական հոլով չունի, կամ ավելի ճիշտ՝ նրա ներգոյականի ձևը սովորաբար չի գործածվում: Սակայն, երբեմն, ինչպես օրինակ, բանն ինչումն է կապակցության մեջ անհրաժեշտաբար գործածվում է ինչ դերանվան ներգոյականը: Այս կապակցությունը կարող է գործածվել և՛ հարցումով, և՛ առանց հարցումի: Նրանով խոսողը ցույց է տալիս գործի էությունը, բանի էությունը:

Բանն ինչո՞ւմն է, ասացեք, որ իմանանք: «Մայրս, որ, ըստ երևույթին, արդեն սկսել էր հասկանալ, թե բանն ինչումն է, կատարեց նրա խնդիրը» (Ն.-Դ., I, էջ 62): «Թոմաս Գասպարիչը, որ նոր էր եկել, իմանալով, թե բանն ինչումն է, սաստիկ տխուր նայում էր մի կողմը» (ն. տ., էջ 63):

Ով դերանունը հաճախ դրվում է կոչականի հետ խոսքին հեռավորական երանգ տալու համար: Այս նպատակով նա գործածվում է հատկապես չափածո երկերում և սովորաբար բացագանչական առոգանությամբ:

Օրինակներ՝

«Ո՜վ ազատություն, դու դրախտային չքնաղ վարդերի լուսեղեն բուրմունք» (Իս., էջ 201):

«Լսեցեք, ո՜վ դուք բոռն- բոռներ,
Մենք ապավինած մեր վաստակին,
կերտել ենք զվարթ քաղաքը մեր
Ճաշակով ձեր բարձր ու խստադին» (ՀՍ, ՍՏ, էջ 77):

«Սակայն ինձ լսեք, ով ածխահատներ,
Այդ լապտերը ձեր ուղարկեք նրան» (Անթ., էջ 416):

Ինչպես երևում է բերված օրինակներից, ով դերանունը նման դեպքերում գործածվում է եղակի թվով, անկախ գոյականի թվից: Հասկանալի է, որ այդ դերանունը այսպիսի գործածություններում մոռանում է կոչականի կապմի մեջ:

Ոճական ու երկրորդական հարուստ կիրառություններ ունի նաև ինչպես դերանունը թե առանձին և թե կապակցություններում: Այս դերանունը սովորաբար գործողության հատկանիշ է ցույց տալիս, հետևապես և դրվում է բայի վրա: Այդ պատճառով էլ նրանով արտահայտված հարցի պատասխանը դրսևորվում է մեծ մասամբ մակբայով, կամ գործողության հատկանիշ ցույց տվող ուրիշ բառերով, կապակցություններով և այլն: Սակայն երբեմն նրանով արտահայտված հարցի պատասխանը կարող է արտահայտվել գոյականով: Խոսքը վերաբերում է ինչպես դերանվան այն կիրառությանը, երբ նրանով հարցնում ենք որևէ հատուկ անուն և հատկապես անձի անուն (ինչպես և ազգանուն կամ հայրանուն) իմանալու համար: «Ինչպե՞ս է նրա ազգանունը» (Անթ., էջ 33): «Ինչպե՞ս է քո ազգանունը» (ՀՔ, ՄՏՋ, էջ 300): «Ինչպե՞ս է հայրիկիդ անունը» (ն. տ., էջ 463): «Դուր է գալիս ինձ այդ կոլտնտեսականը, ինչպե՞ս է անունը» (ն. տ., էջ 144):

Այստեղ ինչպես դերանունը փաստորեն ունի ի՞նչ դերանվան իմաստ: Բայց քանի որ ի՞նչ դերանունը սովորաբար իր է ցույց տալիս, նրանով իրի մասին է հարցում արտահայտում, ըստ երևույթին, հենց այդ պատճառով հաճախ խոսափում ենք նրանով անձի մասին (անվան և այլն) հարցում արտահայտել և գործածում ենք ինչպես դերանունը: Այնուհետև նմանողությամբ նա սկսել է գործածվել նաև կենդանիների, տեղերի և այլ անուններ հարցնելիս:

Ինչպես դերանունը հաճախ գործածվում է «օրինակ» բա-

ոի փոխարեն թվարկումների ժամանակ: «Մենք ունենք բազմաթիվ բառեր, որոնք նույնպես նյութական իմաստ չունեն, ինչպես՝ դեպի, առանց, բացի, և, բայց և այլն» (ԷԲԱ, Լ՚Ն, էջ 287): «Իբրև ածանցական իմաստներ արտահայտելու միջոց են ծառայում բառակազմական երկրորդական ձևույթները (ածանցները), ինչպես՝ —արան,—ակ,—ան երկրորդական ձևույթները» (նե. ա., էջ 295): «Կցական կոչվում են այն բարդությունները, որոնց բաղադրիչները պահպանում են իրենց ինքնուրույն իմաստը, և կարող ենք անջատել դրանք իրարից առանց բարդության իմաստը փոխելու. ինչպես՝ այսօր, այդպես, հորեղբայր և այլն» (նե. ա., էջ 293):

Այս բոլոր օրինակներում ինչպես բառի փոխարեն կարելի էր գործածել օրինակ բառը: Սակայն, որովհետև օրինակ բառի հաճախակի կրկնությունը ոճական տեսակետից նպատակահարմար չէր լինի, այդ պատճառով հաճախ նրա փոխարեն գործածվում է ինչպես դերանունը:

Երբեմն այդ նույն ֆունկցիան կատարելու համար ինչպես դերանունը միանում է օրինակ բառին: Այսպես՝ «...Համեմատությունը շատ հաճախ արտահայտում են նկարագրական եղանակով, ինչպես, օրինակ, սա նրանից լավ է» (ԷԲԱ, Լ՚Ն, էջ 306): «Եթե առարկան շնչավոր է կամ դիտվում է իբրև այդպիսին, ապա հայկական հոլովը նման է տրակա-նին...ինչպես օրինակ՝ տեսա մի մարդու» (նե. ա., էջ 323):

Այսպիսի դեպքերում ինչպես դերանունը առանձին գործածվելիս ճիշտ այն դերն է կատարում, ինչ որ, երբ նրա հետ գործածվում է օրինակ բառը:

Համմա. «Այս դեպքում գործածվում է ման կապը, ինչպես՝ փիղն ավելի մեծ է, քան առյուծը» (ԷԲԱ, Լ՚Ն, էջ 337): Եվ՝ «Բաղդատական աստիճանը արտահայտում է առարկայի ավելի հատկանիշի ավելի լինելը ուրիշ առարկայի նույն հատկանիշի համեմատությամբ: Ինչպես օրինակ՝ փիղը ավելի մեծ է, քան առյուծը» (ԷԲԱ, Լ՚Ն, էջ 336):

Սակայն բոլոր դեպքերում չէ, որ օրինակ բառի փոխարեն կարելի է գործածել ինչպես: Օրինակ՝ «Ինչո՞ւ, օրինակ,

դեղ բառը մի ժամանակ նշանակել է բույս, իսկ այժմ «բուժման միջոց» (ՀԲԱ, Ա, էջ 234)։

Ինչպես դերանունը հաճախ է գործածվում ասել, տեսնել և նման բայերի որոշ դիմավոր ձևերի հետ (ինչպես ասացինք, ինչպես տեսանք, ինչպես ասվեց և այլն)։ Այս և նման կապակցությունների գործածությամբ խոսողի կամ հեղինակի հիմնական նպատակն է խոսակցի կամ ընթերցողի ուշադրությունը հրավիրել դրանից առաջ ասված նույն մտքի վրա։ Սակայն հաճախ խոսողի կամ հեղինակի այդ նպատակին ուղակցվում է մի այլ նկատառում ևս։ Այդ նկատառումն այն է, որ հեղինակը դրանով ցանկանում է, եթե կարելի է այսպես ասել, իրեն փրկել միևնույն մտքը մի քանի անգամ կրկնելու մեջ մեղադրվելուց։ Բանն այն է, որ հատկապես գիտական խոսքի մեջ հաճախ անհրաժեշտ է լինում կրկնել նախապես ասված որևէ դրույթ կամ մտք՝ այն ավելի պարզացնելու կամ մի որևէ այլ նկատառումով։ Հեղինակը կրկնելով այդ մտքը սովորաբար գործածում է հիշյալ կապակցություններից մեկը, որի նպատակը կարող է լինել՝ ցույց տալ, որ ինքն էլ գիտե, որ կրկնում է ասված մտքը և որ այդ կրկնությունը անհրաժեշտ է։ Այսպես, պրոֆ. Էդ. Աղայանը իր «Վեղվարանության ներածություն» աշխատության (1952 թ.) 228-րդ եջում գրում է «Իմաստափոխություն ըստ զուգորդության (ասոցիացիայի)... կատարվում է կամ նմանության շնորհիվ, կամ ըստ կցորդության (առընթերության)»։

Նույն աշխատության մեջ ինն էջ հետո հեղինակը գրում է. «Ասոցիատիվ փոփոխությունները, որոնք, ինչպես տեսանք, լինում են ըստ նմանության կամ ըստ առընթերության... առանձնապես առաջ են քաշվել անցյալ դարում հոգեբանական ուղղության ներկայացուցիչների կողմից»։ Մի այլ օրինակ, նույն աշխատության 157-րդ էջում կարդում ենք. «Վեղվի հնչյունական կողմն էլ անշուշտ զարգանում ու փոփոխվում է, առաջ բերելով, ինչպես ասացինք, նաև արտաառնական բազայի փոփոխություն»։ Այդ նույն մտքը, որ

արտահայտված է նախորդ էջում, անհրաժեշտաբար կրկնվում է նաև այդ էջում: Եթե այստեղ չգործածվեր ինչպես ասացինք կապակցությունը, դուցե ստացվեր այն տպավորությունը, թե հեղինակը մոռացել է, որ նույն միտքը մի անգամ արդեն ասել է: Այդ պատճառով էլ նա գործածում է այդ կապակցությունը ամենից առաջ ցույց տալու համար, որ այդ կրկնությունը իսկապես կա և այն ավելորդ չէ, այլ անհրաժեշտ:

Հատկապես դիտական խոսքի մեջ հաճախ են գործածվում նաև ինչպես հայտնի է, ինչպես գիտենք և նման կապակցությունները այն դեպքում, երբ խոսողը կամ հեղինակը մի հարցի մասին խոսելիս մեջ է բերում որևէ հայտնի ճշմարտություն:

Օրինակներ. «Իսկ այս (ոչ հարաղատ առոգանության վերացումը) երկարատև արտասանական վարժություն է պահանջում խոսողության պրոցեսում, իսկ երբեմն էլ, ինչպես գիտենք, լուվին չի հաջողվում, մանավանդ երբ նոր լեզու են սովորում բարձր տարիքում» (ԷԲԱ, ԼՆ, էջ 144): «Բացի այդ, ինչպես գիտենք, լեզվական նույն հանրության բոլոր անդամները ճիշտ միևնույն ձևով չեն արտասանում հնչյունները» (Ն. տ., էջ 150):

Վերևում տեսանք, որ ինչ, ով դերանունները հարցական-նով գործածվելիս հաճախ ժխտական իմաստ են արտահայտում: Նույն իմաստով կարող է գործածվել նաև ինչպես դերանունը:

Այսպես, դու ինչպե՞ս ես համարձակվում դասի ժամանակ ուրիշ բաներով զբաղվել: Այդ ինչպե՞ս ես կարդում, չէի՞ր կարող դասդ լավ սովորել: Այս նախադասություններում ինչպե՞ս դերանունով խոսողը ոչ միայն, ավելի ճիշտ՝ ոչ թե նպատակ ունի տվյալ երևույթի մասին իմանալ, լսել խոսակցի պատասխանը, այլ՝ բացասական, հանդիմանական վերաբերմունք արտահայտել այդ երևույթի նկատմամբ:

Ինչպե՞ս դերանունն այդ իմաստով գործածվելով հաճախ է կապակցվում կաբելի է բառի հետ՝ ինչպե՞ս կաբելի է, որը

հաճախ նշանակում է «չի կարելի»: «Քնում ես, ինչպե՞ս կարելի է, աչքդ վրան պահիր,— դուռում է տիկինը» (Անթ., էջ 70):

«— Ի՞նչ հանձնարարություն է, ինձ չե՞ս ասի:

— Ինչպե՞ս կարելի է, չէ՞ որ գաղտնիք է» (Ն. ս., էջ 27):

«... Որքա՞ն է պատշաճ արքային սպասել տալ,— հանդիմանորեն հարց տվեց խոսրովը:

— Հը, ինչպե՞ս կարելի է,— թունավորից շար ու խանձված ձայնով խոսրովը» (Դվ, էջ 57):

Եթե այս հատուցական կապակցության մեջ ինչպե՞ս դերանունը խոսքին բացասական, ժխտական երանգ է տալիս, ապա զրծածվելով ժխտական օժանդակ բայի հետ, ընդհակառակը, արտահայտում է հաստատումն, խոսողի հաստատական վերաբերմունքը:

«— Ասպղիկ, տես, ճանաչո՞ւմ ես այս ձևապիրը... Հը, չինչեցի՞ր, Ազաթաբյանինն է:

— Ինչպե՞ս չէ, դիտեմ» (ԱՍ, ՈՄ, էջ 103):

Ինչպե՞ս չէ *այստեղ նշանակում է այո, իհարկե:*

Բերենք այլ օրինակներ.

«Բայց մի՞թե դու այնքան մաերիմ ես այդ մեծատան հետ...

— Ինչպե՞ս չէ. մենք մինչև անգամ եղակի ենք խոսում իրար հետ» (Մուր., IV, էջ 58):

«...Առաջ դու ինձ ասա՝ էդ ագռավի պատմությունը վիտո՞ւմ ես, թե չէ»:

— Ինչպե՞ս չէ» (Ն. ս., էջ 99):

«Ինչպե՞ս չէ, մենք հաճախ խոսել ենք այդ մասին և վարմացել» (Ն. ս., էջ 120):

Ինչպե՞ս *թե բառակապակցությունը գործածվում է որևէ բանի նկատմամբ զարմանք արտահայտելու համար, որին հաճախ է զուգակցվում խոսողի հանդիմանական վերաբերմունքը:*

«— Ո՛ւմ համար են ուզում:

— Ինչպե՞ս թե, ո՛ւմ» (ԱՍ, ՈՄ, էջ 104):

«Ինչպե՞ս թե չենք իմացել. այդ ինչպե՞ս է, որ ապստամբության մասին իսկույն իմանում եք» (Անթ., էջ 31)։

«— վհճը նորոգվեցավ, տիկին...

— Ինչպե՞ս թե նորոգվեցավ, չէ՞ որ մենք փակեցինք այդ վհճը» (Մուր., IV, էջ 46)։

«— Հայհոյե՞լ, ինչո՞ւ,— հարցրի ես զարմանալով։

— Ինչպես թե ինչու. մի՞թե քեզ չեն զայրացնում այս առարկությունները» (Ն. ա., էջ 76)։

Քանի դերանունը երբեմն գործածվում է մի բանի դերանվան իմաստով, հատկապես այն դեպքում, երբ նրա վրա դրվում են այս, այն դերանունները, և երբ նա ցույց է տալիս ժամանակի հատկանիշ, մասնավորապես օր բառի հետ գործածվելիս։

«Այս բանի օրն այստեղ շատ խոնավ ու մառախլապատ եղանակ էր» (ՀՔ, V, էջ 241)։ Այս բանի օրը նշանակում է «այս մի քանի օրը», «վերջին մի քանի օրերը»։

Այս բանի օրը մեզ մոտ ժողովներ են կայանալու։

Այս կապակցությունը կարող է դրսևորել իմաստային տարբեր երանգներ։ Այսպես, վերջին նախադասության մեջ նկատի են առնվում, ինչպես ասվեց, խոսելու օրվան հաջորդող մի քանի օրեր (որոնց ընթացքում տեղի է ունենալու գործողությունը)։ Սակայն այս բանի օրը կարող է նշանակել նաև մի բանի օրից հետո, հմմտ. նաև՝ Այս բանի օրը նա կվերադառնա Մոսկվայից։ Այսպիսով՝ այս բանի օրը կարող է նշանակել՝ 1. խոսելուց հետո կամ առաջ մի բանի օր. գործողությունը կարող է կատարվել այդ մի քանի օրվա մեջ մտնող բոլոր օրերի ընթացքում, 2. այդ կապակցությունը կարող է գործածվել այն դեպքում, երբ խոսելուց հետո կամ առաջ մի քանի օրերից մեկում պիտի տեղի ունենա գործողությունը, 3. երբ գործողությունը պետք է տեղի ունենա մի քանի օր առաջ կամ հետո։ Պատահում է, որ նույն նախադասության մեջ հիշյալ կապակցությունը կարող է արտահայտել և՛ այս, և՛ այն իմաստը։

Իմաստային մի փոքր այլ երանգ է ստանում **բանի** *բառը հիշյալ կապակցության մեջ, երբ նրա հետ գործածվում է օժանդակ բայ: Ըստ որում պետք է նկատել, որ այդ դեպքում կարող են գործածվել ժամանակ ցույց տվող բոլոր բառերը: Օրինակ.* «Այս **բանի** ժամանակ է, ինչ ձեռքս լրագիր չեմ առել» (Ն.-Դ., I, էջ 31): *Քանի բառն այստեղ նշանակում է «շատ», «երկար».* (*Շատ ժամանակ է, երկար ժամանակ է*), *իսկ այս դերանունը դարձյալ ցույց է տալիս, որ այդ երկար ժամանակը անմիջապես նախորդում է խոսելու մոմենտին: Ի տարբերություն նախորդ գործածության,* **բանի** *բառը այս դեպքում կարող է գործածվել բացասականաձև:* Այս **բանի**՞ *տարի է քեզ չեմ տեսել:* Այս **բանի**՞ *ժամ է քեզ սպասում եմ, չես գալիս:* Այս **բանի**՞ *ամիս է, քեզնից նամակ չեմ ստանում:* Այս **բանի**՞ *րոպե է, ինչ զանգը տվել են, բայց դուք դեռ դասարան չեք մտել: Քանի դերանունը բացասականաձևով է գործածվում հատկապես այն դեպքում, երբ խոսողը ցանկանում է շեշտել ժամանակի երկար տևողությունը:*

Քանի դերանունը երբեմն կարող է ժամանակ ցույց տալ, ժամանակի հարաբերության իմաստ արտահայտել, նույնիսկ այն դեպքում, երբ նրա հետ չի գործածված ժամանակ նշանակող բառ: Օրինակներ՝ «Երբ կգա՝ կկռվենք. **բանի** չի եկել՝ դեռ կսպասենք» (Դվ, էջ 202): «Գիտեմ, որ **բանի** կենդանի ես, նրա դեմ ես» (Ն. տ., էջ 215): *Նման դեպքերում* **բանի**-*ն կարելի է համարել շաղկապ:*

Վերջին իմաստով գործածվելիս **բանի** *բառի հետ հաճախ գրվում է դեռ մակբայը (***բանի դեռ***): Այսպես՝ երբ կգա՝ կկռվենք,* **բանի դեռ** *չի եկել՝ կսպասենք: Գիտեմ, որ* **բանի դեռ** *կենդանի ես, նրա դեմ ես:*

Որը դերանունը որոշյալ առումով կարող է գործածվել մեկը դերանվան իմաստով: Սակայն որը դերանունը այս դեպքում ունի գործածության յուրահատկություն մեկը դերանվան համեմատությամբ: Որը դերանունը մեկը դերանվան իմաստը կարող է արտահայտել կրկնվելու դեպքում, այ-

սինքն, երբ նույն նախադասության մեջ դործածվում է մեկից ավել անդամ և արտահայտում է թվարկություն։

«Այդ հայց էին բերում նրանք և խմելու հալալ ջուր, որը սիրած ամուսնուն, որը որդուն անձնահուր» (ՆՋ, Հատ., էջ 318)։

«Թաղի կանայք իրար ձեն տալով վազում էին. որը ծծկեր երեխային խառած, որը ոտաբոբիկ, որը շտապելուց չուտի մեկը մոռացած, մյուսը քարշ տալով ոտին, որը գլխի աղլուխի ծայրերը շտապ կապելով, որը կուրծքը կոճկելով» (Ն.-Դ., I, էջ 94)։

***

Հիմնականում սրանք են հայերենի դերանունների ոճական կիրառությունները, որոնցից մի քանիսը, սակայն, կարող են դուրս մնացած լինել այս քննարկումից։ Այդուհանդերձ, ինչպես երևում է, դերանուններն ունեն ոճական հարուստ, բազմազան կիրառություններ։ Սակայն դա չի վերաբերում դերանունների հավասարապես բոլոր տեսակներին։ Այնպես որ դերանունների տեսակները այս հարցում իրարից տարբերվում են ո՛չ միայն ոճական առանձնահատկություններով, այլև՛ ոճական կիրառությունների չափով, բազմազանությամբ։ Այս տեսակետից շատ պասսիվ են փոխադարձ դերանունները, որոնք, որքանով թույլ են տալիս ասելու մեր պրպտումները, ոճական կիրառություններ չունեն։

ՕԳՏԱԳՈՐԾՎԱԾ ԳՐԱԿԱՆՈՒԹՅԱՆ ՑԱՆԿ

Ленинский сборник, XII, М.-Л., 1930.

Ի. Վ. Ստալին, *Մարքսիզմը և լեզվաբանության հարցերը, Երևան, 1952։*

Աբեղյան Մ., *Աշխարհաբարի քերականություն, Վաղարշապատ, 1906։*

Աբեղյան Մ., *Աշխարհաբարի շարահյուսություն, Վաղարշապատ, 1912։*

Աբեղյան Մ., *Հայոց լեզվի տեսություն, Երևան, 1931։*

Արովյան Խ., *Երկերի լիակատար ժողովածու, հտ. I, 1948, հտ. V, 1950, Երևան։*

Աբրահամյան Ա. Ս., *Գրաբարի ձեռնարկ, Երևան, 1952։*

Адонц Н, Дионисий Фракийский и армянские толкователи, Петроград, 1915.

Աղայան Է., *Լեզվաբանության ներածություն, Երևան, 1952 (այլև նույնի նախորդ հրատարակությունները)։*

Անանյան Հ., *Լիակատար քերականություն հայոց լեզվի՝ համեմատությամբ 562 լեզուների, հտ. II, Երևան, 1954։*

Անանյան Հ., *Հայերեն արմատական բառարան, Երևան, 1927—1932։*

Այտընյան Ս., *Քննական քերականություն աշխարհաբար կամ արդի հայերեն լեզվի, հանդերձ ներածությամբ և հավելվածով, Վիեննա, 1866։*

Ալեքսիեան Գ., *Քերականութիւն հայկական, Վենետիկ, 1823։*

Բագրատունի Ս., *Հայերէն քերականութիւն ի պէտս գործադրելոյ, Վենետիկ, 1852։*

Գալանոս Կ., *Քերականական եւ տրամաբանական ներածութիւն առ համատարածութիւնն շահելոյ*, (Grammaticae et logicae institutiones linguae literalis Armenicae Armenis traditae) *Հռոմ, 1645։*

Դուրեկի Մ., *Գրական-հրապարակախոսական հոդվածներ, Երևան, 1949։*

Грамматика русского языка, под. ред. акад. Л. В. Щербы, ч. I. Москва, 1948.

Грамматика русского языка, т. I. под. ред. акад. В. Виноградова, Москва, 1952.

Ղեիգարյան Ս., *Հայոց լեզու, դասագիրք միջնակարգ դպրոցի VIII—X դասարանների համար, Երևան, 1954։*

Гумбольдт В., О различии организмов человеческого языка и влиянии этого различия на умственное развитие человеческого рода, СПБ, 1859

Зарецкий А. И., О местоимении (Русский язык в школе, 1940, № 6).

Земский А. М. и др., Русский язык, ч. I, для педучилищ, Москва, 1950.

Кудрявский Д., Части предложения и части речи (Энциклопедический словарь Брокгауза и Ефрона, том XXXVIII, 1903).

Ղազարյան Ս. Գ., *Հայոց լեզվի համառոտ պատմության, Երևան, 1954:*

Վարիբյան Ա., *Հայոց լեզվի դասագիրք V—VI դասարանների համար, Երևան, 1954 (այլև նույնի նախորդ հրատարակությունները):*

Վարիբյան Ա., *Հայոց լեզվի դասավանդման մեթոդիկա, Երևան, 1954:*

Капанцян Г., К задачам строительства современного армянского языка. Ереван, 1951.

Մալխասյանց Ս., *Դրարարի հոլովումը, խոնարհումը և նախդիրները, Թիֆլիս, 1891:*

Մալխասյանց Ս., *Հայերեն իրացուցական բառարան, հտ. IV, Երևան, 1945:*

Մառ Ն., *Ընտիր երկերի ժողովածու, հտ. I, Երևան, 1949:*

Марр Н. Я., Избранные работы, т. III, IV, М.-Л., 1937.

Նոր բառադիրք հայկազեան լեզուի, Վենետիկ, 1836—1837:

Schröder, Thesaurus linguae Armenicae ant. et hod., Amstelodami 1711.

Պալասանյան Ս., *Ընդհանուր տեսության արևելյան գրավոր լեզվի հայոց, Թիֆլիս, 1870:*

Պալասանյան Ս., *Քերականության մայրենի լեզվի, Թիֆլիս, 1874, 1906:*

Пешковский А. М., Русский синтаксис в научном освещении, Москва, 1938

Պետրոսյան Հ., *Հայոց լեզվի գործնական քերականություն, Երևան, 1927:*

Потебня В. В., Из записок по русской грамматике, ч. I—II, Харьков, 1888.

Սեվակ Գ., *Ժամանակակից հայոց լեզվի դասընթաց, Երևան, 1955:*

Սեվակ Գ., *Ժամանակակից հայոց լեզվի տեսություն, Երևան, 1939:*

Սեվակ Գ., *Խորհրդային ազգերի լեզուները (Երևանի Պետհամալսարանի «Գիտական աշխատություններ», հտ. XI, 1939):*

Սեվակ Գ., *Հայոց լեզվի շարահյուսություն, դասագիրք միջնակարգ դպրոցի 7-րդ դասարանի համար, Երևան, 1951:*

Современный русский язык, Морфология, под. ред. акад. В. В. Виноградова, Москва, 1952.

Виноградов В. В., Русский язык, Москва, 1947.
Овсянко-Куликовский, А. А. Потебня как языковед-мыслитель. Киев, 1893.

ՕԳՏԱԳՈՐԾՎԱԾ ԱՂԲՅՈՒՐՆԵՐԻ ՀԱՄԱՌՈՏԱԳՐՈՒԹՅՈՒՆՆԵՐ

ԱԱՊ — *Աբիդ Ավագյան, Պատմվածքներ, Երևան, 1950։*
Աբ.— *Խ. Աբովյան, Երկերի լիակատար ժողովածու, հ. I, Երևան, 1948։*
ԱՄ և ԱՄԲ — *Ալ. Միասնյան, Երկեր, Երևան, 1948։*
ԱՃ, ԼՔ — *Հ. Աճառյան, Լիակատար քերականություն հայոց լեզվի... հ. II, 1954։*
ԱՃ, ՀԼՊ — *Հ. Աճառյան, Հայոց լեզվի պատմություն, II մաս, Երևան, 1951։*
Անք.— *Սովետահայ գրականության անթոլոգիա, Երևան, 1950։*
ԱՍ, ՈՄ — *Ա. Ստեփանյան, Ոսկի մեդալ, Երևան, 1952։*
ԱՎ և ԱՎՔ — *Ա. Վշտունի, Երկերի ժողովածու, Երևան, 1947։*
Ար.— *Արազի, Ընտիր երկեր, Երևան, 1948։*
ԴՍԲ — *Գևորգ Սարյան, Բանաստեղծություններ, Երևան, 1947։*
ԴՍԹ — *Գ. Սևունց, Թևերան, Երևան, հ. I, 1952, հ. II, 1953։*
ԴԸՊ — *Դ. Դեմիրճյան, Ընտիր պատմվածքներ, 1950։*
ԴՎ — *Դ. Դեմիրճյան, Վարպետանոց, Երևան, 1951։*
Եզնիկ — *Եզնիկայ վարդապետի Կողբացւոյ եղծ աղանդոց, Թիֆլիս, 1914։*
ԷՐԱ, ԼՆ — *Է. Բ. Ազայան, Լեզվաբանության նվաճություն, Երևան, 1952։*
Էմ. Գ. *Էմին, Նոր ճանապարհ, Երևան, 1949։*
Ընտ. Էջեր — *Ընտիր էջեր, Երևան, 1946։*
ԼՀ — *Լեզվաբանության հարցերը Ի. Վ. Ստալինի աշխատությունների լույսի տակ, Երևան, 1952։*
Խոր. — *Մովսիսի Խորենացւոյ պատմութիւն հայոց, աշխատութեամբ Մ. Աբեղեան եւ Ս. Յարութիւնեան, Տփղիս, հա. II, դիրք I, 1913։*
ՀԹ — *Հ. Թումանյան, Երկերի ժողովածու, Երևան, հ. III, 1949, հ. V, 1945։*
ՀՀ.— *Հ. Հովհաննիսյան, Բանաստեղծություններ, Երևան, 1949։*
ՀՀ, ԲԼ — *Հ. Հրահան, Բալկանների լանջերում, Երևան 1951։*
ՀՍ, ՄՏ — *Հ. Սահյան, Միածանը տափաստանում, 1953։*
ՀՍ, ՀՎ — *Հ. Սիրաս, Հայր և որդի, Երևան, 1946։*
ՀՇ — *Հ. Շիրազ, Գիրք խոզաղության և սիրո, Երևան, 1950։*
ՀՔ, ՄՏՋ — *Հ. Քոչար, Մեծ տան զավակները, Երևան, 1952։*
Մուր. — *Մուրացան, Երկերի ժողովածու, Երևան, 1951—1954։*
ՆԲՀ — *Նոր բառագիրք հայկազեան լեզուի, ի Վենետիկ, 1836 — 1837։*
Ն.-Դ.— *Նար-Դոս, Երկերի լիակատար ժողովածու, Երևան, հ. I, 1933, հ. III, IV, 1947։*
ՆԴՄ — *Նար-Դոս, Մահր, Երևան, 1934։*
ՆՋ — *Ն. Զարյան, Երկեր, հ. III, Երևան, 1947։*

ՆՋՀ — Ն. Ջարյան, Հայկավան, Երևան, 1947։
ՆՋ, Հատ. — Ն. Ջարյան, Հատընտիր, Երևան, 1951։
Շիրվ.— Ա. Շիրվանզադե, Երկերի լիակատար ժողովածու, հ. I, II, IV, VI, Երևան, 1950։
ՍՋ — Մ. Ջոբյան, Երկերի ժողովածու, Երևան, 19։
ՍԿ — Մ. Կապուտիկյան, Իմ հարազատները, Երևան, 1953։
ՍՀ — Սովետական Հայաստան, օրաթերթ, Երևան։
Սունդ.— Գ. Սունդուկյան, Երկերի լիակատար ժողովածու, հ. II, 1951։
ՎԱ, ՍԱ — Վ. Անանյան, Սևանի ափին, 1953։

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆ

Նախաբան 5

Գլուխ առաջին

Դերանունը որպես խոսքի մաս 11

Գլուխ երկրորդ

Սլոլի հայերենի դերանունները հայ բերականների դնահատմամբ 63

Գլուխ երրորդ

Սլոլի հայերենի դերանունների դասդասումը, տեսակները . 91
1. Դերանունների դասդասման հիմունքը . . . 91
2. Անձնական դերանուններ 99
3. Յուցական դերանուններ 110
4. Փոխադարձ դերանուններ 131
5. Որոշյալ դերանուններ 135
6. Անորոշ դերանուններ 147
7. Հարցական-հարաբերական դերանուններ . . 155

Գլուխ չորրորդ

Սլոլի հայերենի դերանունների ձևաբանական առանձնահատկությունները 168
1. Հոլովումը 169
2. Հոդնակիները 192

Գլուխ հինգերորդ

Սլոլի հայերենի դերանունների շարահյուսական կիրառությունները 201
1. Առարկա ցույց ավող դերանունների շարահյուսական կիրառությունները 203
2. Առարկայի հատկանիշ ցույց ավող դերանունների շարահյուսական կիրառությունները 219
3. Գործողության հատկանիշ ցույց ավող դերանունների շարահյուսական կիրառությունները . . . 222

4. Դերանունների շարահյուսական այլ առանձնահատկություններ 224

Գլուխ վեցերորդ

Արդի հայերենի դերանունների կազմավորումը, կազմությունը և բառակազմական նշանակությունը 240

Գլուխ յոթերորդ

Արդի հայերենի դերանունների ոճական կիրառությունները . 265
1. Անձնական դերանունների ոճական կիրառությունները 270
2. Ցուցական դերանունների ոճական կիրառությունները 290
3. Որոշյալ դերանունների ոճական կիրառությունները . 312
4. Անորոշ դերանունների ոճական կիրառությունները 320
5. Հարցական-հարաբերական դերանունների ոճական կիրառությունները 327
Օգտագործված գրականության ցանկ . . . 348
բառությունները 348
Օգտագործված աղբյուրների համառոտագրություններ 350



ՍԵՐԳԵՑ ԳԵՑԱՆԶՈՒՄԻ ԱԲՐԱՀԱՄՅԱՆ
«Արդի հայերենի դերանուններբ»

Գաո. խմբագիբ՝ Հ. Հ. ԿՈՍՏԱՆՅԱՆ
Հբաո. խմբագիբ՝ Ա. Ս. ԽԱԶԱՏՐՅԱՆ
Տեխ. խմբագիբ՝ Լ. Ա. ԱԶԻԶԲԵԿՅԱՆ
Վեբատուգող սբբագբիչ՝ Ս. Ի. ՇԱՀԲԱԶՅԱՆ

Վ/Ց 4958։ ԽՀՒ № 342, հբաո. № 1296։ Պատվեբ 1676։ Տիբաժ 2000։

Հանձնված է աբտադբության 29/V 1956 թ.։
Ստոբագբված է տպագբության 25/VI 1956 թ.։
Թուղթ՝ 84×108 1/32։ Տպագբ. 22,15 մամ., հբաո. 15,6 մամ.։
Գինը՝ 0 ո. 30 կ., կազմբ՝ 2 ո.։

Ln.134.

ՀՍՍՌ կուլտուբայի մինիստուբության Հբատաբակչուբյունների
և պոլիգբաֆ աբդյունաբեբուբյան գլխավոբ վաբչուբյան
№ 6 տպաբան, Եբևան, Լենինի պողոտա № 51։

ЦЕНА
Л 13156